9(395)
h

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1981 Թ.

ՏԵԱՌՆ Հ. ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԻՆՃԻՃԵԱՆ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆՆ

ԸՍՏ ՀԻՆ ԵՒ ԸՍՏ ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒ
ԱՆՈՒԱՆԵԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՑ

Համեալ ի գրոց մերոց նախնեաց և այլոց։

Տպագրեալ յառաջնորդութեան Աջապատիւ Տ՛ն Սահակայ
Արքեպիսկոպոսի և Ընդհանրական Աբբայի։

384

ՄԼՆՈ ՀԱՅՔ



Ի ՎԻԵՆՆԱ

Ի ՎԱՆՍ ՄԲՐՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1822 ԹՎԻՆ

ԲԱՆ ԸՍ ԱՅՐՈՒԹԱՆԱՑ

Ո՛չ հայաստանեայց աշխարհի վճռագրութեամբ, որպէս արդարև մերում հայրենեաց ազգի և աշխարհի՝ ընդարձակագոյն անցանել բանիւ քան զայլոց աշխարհաց՝ հարկ ի՛ վերայ առեալ ըստ օրինի հայրենասիրաց, զեղեկ իմն մոլութեամբ ձեռն ի գործ արկաք ի յառաջատատում բանից նախնեաց՝ զմեզ միայն բան աշխարհապատում տեղագրութեամբ հատընտիր ծաղկաքաղեալ, առ իւրաքանչիւր ստորագրութեամբ տեղեացն կարգել։ Ո՛չ ի այն ինձ ցանկալի հնախօսութիւն, որ իւրով հնախօսելովն՝ ընդ նմին և. ցուցանիցէ զիւրոց առաջնորդապետ մատենագրաց զաղբիւրան։

Բայց ի սկզբան անդ հարևանցիկ իմն ժողովածիւք ի սոյն յայս մեր անօրինեալ, յերկուս անկաք տարապարտ աշխատութիւնս։ և այնպէս նախ առաջին ի մոխ եղեալ որոշեալ, հանել հաւաքել ոչ որչափ բերիւր

կատարեալ հնագիտ աշխարհագրի, (արտա-
քոյ մերոյ առաջարկութեան մտայ զայն գա-
տեալ.) այլ որչափ ինչ պէտք են ասել նոր
աշխարհագրի բովանդակաբար համառօտիւքն
զհնագրութեամբ տեղեաց թէ ակոխելով,
յայնմանէ զյոլովագունիւք զանց արարաք ըզ-
նախնեաց ասացուածովք ի ժողովել, զկա-
րևորսքն միայն պատուհասով: Երկրորդ գի-
տագունի կարծեալ գործ աշխատութեան,
բուռն հարաք զհինն խառն ընդ նորոյն ստո-
րագրել: Այլ յետ մտատանջ աշխատութե-
ի նոյն մտաբերելոյ, վայրապար ուսաք լեալ
անտեսութիւն գործոյ և անհնարին, զտե-
ղեաց նոյնութիւն նորոյն ընդ հնոյն յամե-
նայնի ամենայնիւ տեղեկանալ, ստուգել,
հեշտ և ընտել համաձայնութեամբ առըն-
թեր պաշտել. և ոս առաւել անհնարին զհին
գաւառայ բաժանմունս, զյորոս, և զսահ-
մանս, ընդ նոր գաւառայ համահատուած ի
մի անօրինել:

Նոյնհետև ապա կրկին մեզ բերեալ աշ-
խատութիւն բանի, վաղվաղակի ի բայ ի
նորոյն անջատեցաք զստորագրութիւն հին
հայաստանեայց. կրկին և աշխատութիւն
յանձին կալեալ, փոքու լմն ընդարձակու-

Թեան տեղի տուեալ, անդրէն զսիտանիս ի մատենիկ նախնեայ հաւաքեցաք։ Այլ և յայնժամ հաւաքածոյ անկատար։ Վասնզի միշտ զհամառօտութիւն բանի պատուել ևեթ փութայեալ, աւելորդ զբազում բանս դատեաք հաւանական համօք, զորս զինի ուսաք կարևորս լեալ և սիտանիս ի յիմանալ։ Որոք մարդոյ նախ քան տարաձայնութեան այլևայլ մատենագրայ ի վերայ հասանել, նախ քան զտարակուսականացն իմանալ բան իւրաքանչիւր հանդիսից գրուածոց, կարծողականօքն վարեալ փաստիւք, բաւական դատին զինոյ ևեթ զվկայութիւն՝ զորս առաջի կայ գտանեն։

Վասն անկատարութիւն Թերաբանելոյ՝ և առաւել պատճառ ետ ընդ վայր ժամանակս ծախելոյ։ և այնպէս ի տարագրութեան բազմոց տեղեաց հարկեցուցիչ աճեալ եղև մեզ գործ՝ առիպ առիպ անդրէն ի ձեռին առնուլ զնախնեայ մատեանս, ճշդիւ հայել ի զանազան նոցին ձեռագիրս, առ ի գտանել վկայութիւն նոր յորոշումն երկբայականացն՝ ընդ առաջ եղելոց զինոյ միայն տեղւոյ, զաւուրս բազումս հոգոյզքն պարապածեալ անձանձիր աստ և անդ զննութեանցն եամբք

մատենից։ Ուր և ուղեալ և բացատրեալ զբազում անուանս նախնի Հեղինակաց Յունաց, Հռովմայեցւոց, նա և մատենագրաց Ասորւոց։

Այս պարտաւորութիւն ոգւոյ՝ այս տառապանք զբաղատ՝ կրկին մեզ ուսոյց մտաց ճշմարտութեան, գեղեցկապէս վարժիւքն՝ ողջախոհ խորհրդովք փորձ առեալ՝ ի վերայ հասեալ, որպէս թէ նախ՝ ի ձեռնարկս բանասիրական յայնժամ սկսցի ոք զգործն, յորժամ կատարեցէ։ Երկրորդ՝ յիւրաքանչիւր հանդէս ուսանոց՝ մինչեւ ե հանդիսացեալ գործ ընտրձակ, մի կարճեսցի թերեւս արձանագրել գործ համառօտ։

Այսպէս ահա բացատրեալ ելք մերոյ աշխատութեանն, և այսչափ ինչ ծանօթութիւն բանի տուեալ՝ ի լսելիս ընթերցողացդ ստուգապէս յայտարարութեամբքն, առ՝ի անըստգիւտ ընծայաբերել առաջի բանասիրաց յատենի գատողականին, ուր ուրեք գտցին պակասութիւնք և նուազութիւնք անտեսելոցն առ՝ի մեզ, բեր ապա այսուհետեւ անսազապէս գեղեցիկ իմն վստահութիւն կառավար ըմիտս կալեալ առ ներողականսն հնասիրին՝ հանդիսացուք՝ ի ստորագրել

զՆեձ հայս։ Աչլուսմ տեղւոյ և ժամանա-
կի զբոլորին Թողեալ զներաճուԹիւն հին
հայաստանեայց՝ ըստ կարգի և ոճոյ նոր աշ-
խարհաբարուԹեան, նաև զԲոքր հայս։ Աչ-
լուսմ տեղւոյ Թողեալ նաև զհին սուրբգրու-
Թիւն վեցեցունց աշխարհաց, որք անդ վաղ
ուրեմն երբեմն եղեն ընդ տէրուԹեամբ մե-
ծոց աշխարհակալաց։ Ոչ կարելով համօրէն
զայժմուս յամբոխ գործոյն ժամանել։



ԲԱՑՅՈՒՔ ԶԹԱՆԳԱՐԱԿԱՆ ՎԱՃԱՌՄԱՆ ՀԱՆԹԻՑ

ՎԱՃԱՌԱՍՏՅՈՒՔ ԼՍԵԼԱՑ ԶԳԻՏՏՈՒ

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՑ

ԱՌՆՈՒԼ ԶՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱԼ ԶՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ադաթանգեղոս.

ՍՏՈՐԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ՆԱԽԱՆԳ ԱՒԱՋԻՆ

ԲԱՐՁՐ ՀԱՅՔ

Ա ՅՍ անուն գրեթէ ոչ ուրեք ՚ի գործ ածի ՚ի գիրս մեր, յորմէ Թուի լինել անուն հին նախ քան զՀինուէնն քաղաքին կարծոյ. իսկ յետ Հինուէնն՝ քանզի եղև քաղաք երևելի ընդ բոլոր գաւառն, նաև ընդ բոլոր հայս, Այրէն անուամբ կոչի ոչ միայն փոքր գաւառ բարձր հայոց, այլ նաև նահանգն՝ բարձր հայք՝ գեթ ըստ մեծի մասին. նմին իրի և խորենացին յետ պնդելոյ զանունս Այրէն հայոց ՚ի բացատրութիւն յաւել. * Այսինքն (կամ ըստ ձեռագրին) որ է Արդ կարծոյ ։ Եւ յայնհանէս կաթողիկոս կոչէ Այրարատ կարծոյ ։

Վիրք սորա բարձր՝ յորմէ և ընկալաւ զիւր անուն ։ * Բատ անուանդ (ասէ խորենացին) բարձր է քան զամենայն երկիր [1]. քանզի ընդ չորս կողմունս արձակէ գետս ։ Աստվերացին (՚ի պատմուճէ իւրում գլ. ԺԹ.) ըստ դրից ընդարձակ դաշտին կարծոյ յարևմտեան կողմն նորա գնէ զնաղատեաց գաւառ, ՚ի հիւսիսակողմն՝ զսպեր, զամուրան տայոց և զարշարունեաց, իսկ ՚ի հարաւա-

(1) Արդեօք քան զամենայն հայ- զամենայն երկիր, բնաբանից և աստան բարձր է, թէ նաև քան երկրաչափից Թողցուք ՚ի խնդրել։

կողմն՝ զտարօն, զգաւառն Հաշտենից, և զանտառն խորձէնոյ։

Ունի լերինս երիս, կամ չորս՝ ըստ այլ ձեռագրաց խոշ ընեացւոյն՝ զորոց տես՛ ի նոր Հայաստան։ Այս ակունս երից երևելի գետոց, որք են Եփրատ, Երասխ, և Ծորսխ՝ զորս արձակէ ընդ երիս կողմունս. իսկ ընդ չորրորդ կողմն՝ զոր նշանակէ խորենացին, ոչ արձակէ գետ մեծ, այլ մանուսն բազումս, որք են վտակք մեծահոծանի, և խառնին ի նոսա։

Ըստ առատութեան ջուրց՝ նոյնպէս յոռւթի է այս գաւառ և բազմարգիւն, զորմէ խորենացին յաշխարհաբ գրութեան իւրում սակաւուք անցանէ ասելով։ Ունի * Այրէս բազում, և հաւս պիտանիս, և ջերմուկս (յոր ոչ վերայ անատոլիս զօրաւոր թէոդոսի կայսեր շինեաց Յարկս վիմատաշ քարանց), և աղ, և զանհնայն պարարտութեան ։ Այլոյ ի պատմութեան իւրում ։ 59. կոչէ զկարին գաւառս մի Այրգաւանդաղող, Շ ապաղ-ս, և Ներ է։ Այս Ճոխագոյն գրէ ասելով թէ այնպէս է անբաւութեան ձկանց յակունս եփրատայ, և հաւուց Ճարակաւորաց՝ զի ի ձոռոց նոցա միայն կերակրեալ լինիին բնակիչք երկրին կարնոյ։ * Դաշտքն ունին զբազմութիւն խոտոց, և զբաղաբերութեան սերմանաւոր պտղոց. և լերինքն լի են երէոք կձղակաբաշխիւք և որոնչխոտվք. նաև զանասուն պաճարս բազմացուցանեն մեծահասակս քաջամարմինս և յոյժ ցուցանեն համակեալս ի գիրուԹիւն ։

Այժմ անկանի Ճարձք հայք ի նահանգին էրզիւռում. որոյ գաւառք ըստ խորենացւոյն են կին։

Ա. Դարանաղէ·
Բ. Աւթ (1)·
Գ. Անձոր (2)·
Դ. Այնեղեաց· կամ Այնեղէց·
Ե. Անանաղէ·
Զ. Դերջան·
Է. Ապէր·
Ը. Շ աղափոխ·
Թ. Կաբին·

(1) Յերկուս ձեռագիրս գրի Աւխ։

(2) Յերկուս ձեռագիրս գրի Սչոր։

ԴԱՐԱՆԱԼԻ [1], այիմ ԿԱՄԱԽ։

Սահմանակից է եկեղեցւոյ գաւառիս. զորոյ գծիրս և գպատձառ անուանակոչութենէ ըստ այսմ դնէ Էրզնկացին՝ ի Ձառն լուսաւորչին՝ յասելն։ * Ի երամէք ծագկաւէտս. ձորովք ջրաբուղխ, եղեմնաբուղխ աղբերն եփրատայ յորդառատ գետոյն ընդունակ ... այլ և՝ ի ծործորս քո լերանց՝ ի ներքոյ երկրի աղբիւրս այլն գարմանացեալ ունիս, և՝ ի խորութենէն՝ ի վեր եկեալ՝ ի ջերմութենէ արեւ գականն՝ զհատնեալ ջուրսն առանց աղի ծծի, հրոյն զօրութեան. և յատակեալ պարզի ածն համեմիչ անուշահոտ. որով և Վաթան աղէ կոչես յայսմ ներգործութենէ»։

Յաւելու գրել անգէն՝ թէ հրաշալի ինն պատմի վասն գաւառիս, էթէև զի յամառնային եղանակի՝ ի տօթաւ ժամու յորժամ հալին ձիւնքն սառուցեալք՝ կաթուածք ջրոյն յանձաւս սորա դիզեալ պաղին, զոր յառաջին ժամանակս ի հեռաւոր տեղիս (ասէ) տանէին՝ ի պէտս թագաւորաց սակս առողջարար զօրութենն. և ընդ հալ կառնէին՝ յորժամ՝ ի ձմերնայն պաղին այլ ջուրք, սա յայնժամ ջերմացեալ թուլանայ։

Վասինի բնակիչք սորա կաթի ինն մղեալ եին՝ ի դիւթուլթես մոլորութենէ հեթանոսաց. իսկ զգիտութեն Ձրջմարտութենէ ընկալան մեծամեծ նշանօք և անմիջական քարոզութեամբ սքան գրիգորի՝ որ ըստ գրելոյ ագաթանգեղոսի՝ ի թուղթ յծն։ * Կրթեալ հասանէր՝ ի Վաթանա ղեաց գաւառն ... ձեռնարկեալ զգաւառաւն հանդերձ միամիտ սատարութեամբ թագաւորին, զերել զամենեսեան՝ ի հայրենեացն աւանդելոյ՝ ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութեն ծառայութեան քոյ մատուցաներ ... որ և յայսմի իսկ բնակչաց գաւառին՝ նշանք մեծամեծք երևեալք՝ կերպակերպ նմանութեամբ

(1) Ի յունականն ագաթանգեղոսի կոչի ազատագանձ Տարօնոյ։ Նոյն համարիւմ և զՏարանէտ յիշատակեալ՝ ի պատմագ. յն. ի կարգս քաղաքաց մեծին Հայոց առ Եփրատաւ. զի թէպէտ առ տիճանաւք նշանակեալք՝ ի նմանէ ոչ համաձայնին գրեց դարանաղեաց, բայց որպէս քննեալ է մեր՝ պատմիչոս բազում ուրեք առաւել սխալի՝ ի նշանակել գաւառիս Ձանան և զդիրան, քան թէ յայնոսանէ։ Տես տարեւ՝ ի տարագրութեն անւոյ՝ ի վերլուծութեան։ և զԱնալեղաց։

դիւացն փախստական լինելին անկանել ՚ի կողմանս խաղ տեաց ||։

Ունի զնեառն Աեղուհ. կոչեցեալ [1] վասն անհնարին սեպացեալ քարաժայռ խոժոռութեց։ Իսկ երկնակացին ՚ի շարակնոցն ՚ի Աեփհական քառէս բերել երեւի զատուածաբանութեին՝ յասելն. * Ո խորհուրդ Աեղուհոյ Աեալ հական փառաց հոգւոյն ՚որ՚ մարգարէին ծանուցեալ ||. որ է քերթողական իմն յարմարութեի։

Կոչեցաւ նաեւ Ա՚ննեայ այրէ. սակս ՚ի յայրս ինչ քառանց այսր լերին միայնանալոյ սրբասէրն մանեայ, որպէս գնեւ խորենացին էջ. 88. * Կնակեցաւ ՚ի լերինս յայսմիկ. յայրս ինչ քարանձաւաց. վասն որոյ կոչեցաւ անուն լերինն մանեայ այրք ||։ Իսկ յայսմաւուրս ՚ի հոկտեմբերի է. կոչի Կառն պարանաղեաց։ Իստ որում և եպիս. կոպոսաէնքն Ցեր Կ՚ետես և Ցեր Սարգիս ՚ի ժամանակս Ձ. գրիգորի կաթողիկոսի՝ կոչին Կաթիկոպատք Գարգ նաղեաց լերին որ է գրէիգորէ [2]։

Ո գաւառ լերինս որոշէ երկնկացին. *՚ի միջոցս սահմանի երկուց գաւառացն եկեղեաց և գարանաղից ||։ Կանգղ գոլով լեառն ՚ի վերայ փոքրիկ լերանց՝ յերկուս գաւառս եւս տարածէր նիստ նորա, նմին իսկ երկնկացին կացին վասն մանեայ գրէ. * Կնդ քաղաքաւ լերամբք և ձորօք անցեալ՝ ՚ի քեզ (՚ի սեղանդ) բարձրանայր ||։ Կայլ քանգղ ՚ի գարանաղեաց գաւառի գնեն խորենացին էջ. 88. և ասողիկ Ձ. 5. որպէս և նախանշանակեալ բան յիշատակարանին զեպիսկոպոսաց տեղւոյս, յայտ է թէ քնիկ լեառն անկաներ յայսմ գաւառի։

Աւետաւեղիք յայսմ՚ լերին ՚ի սկզբանէ անտի են նախ՝ Կաբէնէն Կարբեամ կարդացեալ. վասն զի ըստ երկնկացւոյն [3] օրհնութեի՝ որչ գրիգորի ստացաւ աղտաղտուկ ջուր սուրբ զաւրեհամութեին։ * Պատուեցաւ (ասէ նոյն երկնկացին և ՚ի շարակնոցն) լեառն Աեղուհոյ ՚ի տիպ սանիկոյ և աշխարհի, յորմէ բղխեաց աղբիւրն լուսոյ

(1) Ձէ յայտ նախկին անուն այսր լերին. քանզի Ա՚ննեայ այրէ կոչեցաւ զինի բնակելոյ ՚ի նմա սրբասէրոյն մանեայ՝ որպէս ասացաւ. իսկ անուանս Աեղուհ ոչ յիշատակի առ նախնին մատենագիրս առ խորենացւոյն, առ յովհաննու կաթողիկոսի, և առ ասողկայ, այլ առ յեսայեայ՝ առ խոսրով վոլ, և առ երկնկացւոյն ՚ի Ձառն և ՚ի շարակնոցն, և այլն։

(2) ՚ի յիշատակարանս ինչ գրոց գրելոյ ՚ի Թռուին հայոց տպի։

(3) ՚ի Ներբողական Ձառն Ցգրիգորէ։

ջուրս Աբեդնամա ... որով ցնծայ եկեղեցի՝ ի բերս արմըտեաց ։ Յաղբերէ աստի էարբեւին մբ Հայր մեր՝ որ պէս առանգէ յովհաննէս կաթուղիկոս, յասէլն. * Ջոգայ՝ ի Աբեդնամ աղբիւրին ... որ և երաստոյ վիմօք պարփակեալ շուրջանակի և դրամիք պատուեալ, և յոր բոյ տեղւոյ մատուռակեալն իսկ էր յարբեցումն իւր՝ որ և անբիծ ձեռքն գրիգորի ։

Աբրկորդն է Աբաքին, ուր Թագեցաւ ի հովուեայ որ Հայրն, զորմէ նոյն յովհաննէս կաթուղիկոս. * Ընդ (ասէ) հող օրհնութեամբ և ի փլուզեալ Աարակէն, յոր բում պատուական գանձն հոգևոր ի հովուեաց էր ծածկեալ։ յորոյ վերայ չինեալ էր եկեղեցի նախ քան զայս իսով հրամանաւ ի մահարձանայ ինչ կրով ձուլածոյ ։

Ասկ առ ստորոտով լերին առ ժամնակօք յովհաննու կաթուղիկոսի ի Թ. դարուն՝ էին բազմութիւն խստակրօն ճգնաւորաց աստ և անդ ի քարանձաւս և ի փաղարս, զորոց զվարս ստորագրէ անդէն սակաւուք. յորս զմեծ նարանն ուր լինդ ժամնակս ինչ բնակեցաւ յովհաննէս կաթուղիկոս, Աստղոյ վանդ կոչէ աստղիկ, յայտ է Թէ վանս յովհաննու կաթուղիկոսի՝ զոր ի գառնոյ գնեն ոմանք. և կի՞ Թերևս յանուն գառնուկ ճգնաւորին ։

Աբրընկացին գոլով ի սահմանակից գաւառէն՝ զլսրուե, Թէ իւրուն Նարտաստանուե յորդէ ի գովել զնէպուէ (1), և մի ի գովեստից զայս ինչ յառաջ բերէ յասելն վանս լուսաւորչին. * Ո զկնի արքայական զսպանմանն գործի՝ կենաց արքային յօրիներ ի կենաց գործիս. և կայ այժմ ի քեզ ոմ բարեբախտ և ամենագով Սեպուհ ։ Ուստ այսմ գնե և ի Ա երինք երգան շարակնոցին, զոր նոր մեկնեալ վարդանայ աշխարհագրի՝ ասէ ։ Ի լեառն սեպուհ կայ հաւհաղունի Թուրն արդատայ՝ զոր ետ նմա կոստանդիանոս Թագաւորն. քանզի յորժամ արդատ զնաց ի լեառն սեպուհ ի գտանել զերն զրիգոր, բազում բանս մարգարէականս ասացեալ առ նա՝ զի լուսաւորս չին՝ էառ զսուրն զայն, և օծեալ որպէս զնաչ եդ ի յոգն բանիւն այ. և ասաց Թէ յերանել արիական ազգին՝ յայնժամ երևեսցի նշանս այս. զայն նշան ի գլուխ անդ լերին տեսեալ զգալի այօք յովհաննու պլուզ վարդապետին (որ է նա ինքն երզնկացին), ասաց գլուսաւորչի

(1) Ի նմին Ճառի՝ զոր և ասաց նոյ լուսաւորչին, առաջի բազում ի սմին Սեպուհ լերին, ի ձեռն ժողովրդեան ։

Ընձիւքն, և զ] երիւք ամենայն։ Յայս վայր վարդան, զօրաւ չունիմք ինչ ծանօթութիւն առ այլ մատենագիրս։

Իորդան։ (1) Գաղթանդեղոս և բուզանդ ՚ի. 2. դնեն յայսմ գաւառի, զոր յաւուրս միջին տիգրանայ խորենաց ին ՚ի. 13. կոչէ Ուռան (2). իսկ յաւուրս լուսաւորչին նոյն խորենացին ՚ի. 11. և այլք կոչեն Վռէշ։

Ընդ եր ՚ի հնումն պատկեր բարշամկայ կռոյն ասորւոց ՚ի փղոսկրէ և ՚ի բիւրեղէ կազմեալ արծաթով, զոր միջինն տիգրան փոխադրեաց ՚ի միջագետս (3)։ Իսկ ՚ի ժամանակս քրիստոնէութեան առհասարակ գեօղն կարգեցաւ ՚ի կալուած եկեղեցւոյ։ * Երթեալ Հասաներ (ասէ ագաթանգեղոս ՚ի թուղթ յ՚ծ.) ՚ի գաւառն գաւառն, զի և անդ զանուանեալոց սուտ աստուածոց զբաղինն կործանեսցեն՝ որ էր ՚ի գեօղն Իորդան, մեհեանն անուանեալ Ապիտակափառ դիցն բարշամինայ, նախ զնա կործանէին ... և զգեօղն ամենայն դաստակերտօքն և գեառնովքն իւրովք հանդերձ՝ յանուն եկեղեցւոյ նուիրեալ, և զամենափրկիչ նշանին օրհնակ և անդ կանգնէին ‖։

Այս գեօղ պանծալի գտաւ՝ լինելով տեղի զբօսանաց ազգն գրիգորի։ * Ղազայ (ասէ յովհաննէս կաթողիկոս) ՚ի գեղն Իորդան ՚ի տեղի զբօսանաց պարտիզկանն ազգն գրիգորի ... և անդ ... հատ նշխար ՚ի ծառոյ անտի հայոց՝ զոր ազգ լուսաւորչին էր անկեալ իւրովք ձեռօքն ‖։

Երժանի գտաւ լինել ընդունարան նշխարաց ազգ վերջ թանիսի, և ազգ յուսկանն՝ որք յայս գեղ թագեցան։ Յետ ոչ սակաւ ամաց անդ թագեցաւ և մարմին ազգ լուսաւորչին փոխադրեալ ՚ի լեռնէն սեպուհոյ ՚ի ձեռն գաւառնուկ ձգնաւորին՝ զոր յովհաննէս կաթողիկոս դնէ թագեալ * Յիւր խակ ՚ի զբօսանաց պարտիզկանն ‖։ Իսկ վարդան՝ ՚ի ներքոյ հիման եկեղեցւոյ՝ զոր իւր խակ էր շինեալ. ըստ որում այնպէս պատուէր ընկալեալ էր գաւառնուկ ՚ի ազգն (4)։ Երժամ և կոչի այս գիւղ Իոր-

(1) Առ հերակոսի յերկուս օրինակս և գրի Թորբան։

(2) Յերկուս ձեռագիրս դնի։ * Հրամայէ տանել կանգնել Ա՚Ն. նեն (կամ Ա՚Նի՝ որպէս գնի յայլսմ ձեռագրի) Իորդան ‖։ Բայց ՚ի տպագրեալն և ՚ի միում ձեռագրի դնի՝ Ա՚Ն՚ն Իորդան։

(3) Տես ՚ի խորենացին ՚ի. 13. և ա. 13։

(4) ՚Ի Թորգանն գնեն Թագեալ ասացեալ և վարգան նաև զբնն աբրնատակէս՝ որ է ընդդէմ առաջին պատմագրաց։ Ա՚Ա և այժմեան դամբարան ազգն արգատաց որ կայ մինչև յայսօր. և բանք բուզանդ

դան [1], թէպէտ և յաչխարհագրական բառարանին [2] գրի՝ թէ Ջորդան Լճակոս վանից է։

Լճակ։ Լճականի յայսմ գաւառի։ * Լայց միայն (ասէ բուզանդ. գ. 24). մտանեցաւ ՚ի ձեռս նոցա ամուր բերդն Լճակ ՚ի դարանաղեաց գաւառին անդ ։ Յայտ է նաև ՚ի բանից ագաթանգեղոսի (յճ. և յճա.) որ դնէ թէ տէրն գրիգոր նախ ՚ի դարանաղեաց գաւառին չրջեցաւ ՚ի Ջորգան և Լճակ, և ապա էանց ՚ի սահմանակից գաւառն եկեղեաց։ Լաւ ևս՝ զի սա նոյն է ընդ կամսխայ. իսկ զկամախ վարդան աշխարհագիրք դնէ յերկրին դաւ բանաղեաց։ Ի սմն որոյ ՚ի բանին անդ բուզանդայ գ. 11. * Լաւ տարան (զմարմին ք. խոսրովու արքայի) առ իւր նախնեան Լճակ յեկեղեաց գաւառն դարանաղեաց։, աւելորդ դնի բառդ Լ՚եկեղեաց։

Ջորդան բերդ հզօր, խորհեալքն ՚ի յիշելն ՚ի վեց տեղիս ևս կոչէ Լճակոբ, կամ Լճկոյն Լճակ. որպէս և ագաթանգեղոս, Լճակոբ պեղէն Լճակ [3]։ Լայլ քաց ՚ի բերգէն՝ ունէր և աւան ըստ նորին ագաթանգեղոսի։

Լէ ուրեք գտանեմք ՚ի գիրս զչինօղ այսր անուանի բերդիս [4]. այլ զառաջին յիշատակուն սորա գտանեմք առ խորենացւոյն՝ ուր յաւուրս ա արտաշէսի՝ աստ սակ հեալ լինելին գանձքն արքունի. և աստ էին գերեզմանք թագաւորացն արշակունեաց. * Հասանէր (ասէ ագաթանգեղոս ՚ի Թուղթ յճա) յամուր տեղին Լճակ ՚ի ճա գաւառաբնակ կայանն հանդստանոցաց գերեզմանաց թագաւորացն հայոց ։ Ջուն թէ աստ պահեալ լինելին և մեհենական պատմութիւնք, զորմէ տեսցես առ խորե-

դայ և յովհաննու կաթուղիկոսի յայս առնեն թէ առ ժամանակ մի աստ փոխադրեցաւ մարմին նոցին տրգատայ, կամ գէթ մասն ինչ յոսկերաց նորա, թէ և այլք ՚ի սկզբան անդ ցուցանեն թագաւեալ յամուրն անի։

(1) Տես ՚ի նոր հայաստան. տպ. թղթ. 104։

(2) Տպագրեալ ՚ի կոստանդնու պօլիս ՚ի ՌՀՀԵ։

(3) Յայսմանէ համառօտողն պատմուԹէ քաղաքին անուոյ՝ զոյս գործածուԹէն սեփհականէ սմա յորոշումն միւս անուոյ. * Յանի՝ քաղաքի անուն է, և ամուրն Յանի՝ նէ՝ նեղքին բերդն է ։

(4) Նոյն համառօտողն պատմուԹէ անուոյ՝ օտայի գրէ նոր նորոգուԹէն բերդիս. * Ա յսպէս պարտ է գիտել (ասէ) վասն Յանուոյ, զի զմիշկ բերդն յառաջն ունէին հայոց իշխանքն, բայց ոչ էր ամուր, իսկ յաւուրս խոսրովու Թագաւորին հայոց՝ օտա նախարարն յոյժ ամրուԹեամբ և գեղեցիկ բրգօք պատեալ ամրացոյց զնա, իւրն սեպհականեալ գտեղին ։ Ա յլ զոյս ոչ կարեմք առաւգել սոսկ բանիս սորա՝ որ է վերջին ժամանակի մատենագիր, անկարգ ՚ի յարմարուԹէն պատմուԹեանց և ժամանակագրուԹեան։

նացեալն ք. 63։ Այլ գրիպոր ի ծառայուէ եկեղեցւոյ Նուիրեաց զԱՆի, կործանեալ զոլոմպիական պատկերն գիւոսի կամ արամազդայ, զոր ա. արտաշէս առեալ էր յելլադայ։

Շ ապուհ պարսից արքայ հաւ զայս բերդ ի ձեռն սպարապետին իւրոյ՝ ձեռնտու լինելով նախարարացն հայոց. և գերեաց անտի զամենայն գանձս արքունի, այլև զոսկերս Թագաւորաց բաց ի յոսկերաց սանատրըկայ՝ որպէս պատմէ բուզանդ ք. 24. * Լքանէին ի վեր (ԱՆի) և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին անտի գանձս ի բերդէն, և բանային զգերեզմանս զառաջին Թագաւորացն հայոց զարմից քաջաց զարշակունւոյ, և խաղացուցին ի գերութիւն զոսկերս Թագաւորացն հայոց, բայց միայն զգերեզմանն չլումին սանատրկայ արքային ած կարացին բանալ, վասն անչեմելի սկայագործ հաստատնուած ձարտարապետ արարածոյն [1]։ Ա.ԻԼ և յետ այսր առման տակաւին անդ պահեալ լինէին գանձք քրն արշակայ՝ որպէս և տեսանել առ խորենացւոյն ք. 45։ [2]

Ա.ԻԱ Լինի առ մատենագիրս մեր ժք. և ժբ. դարուն առ սամուէլն և առ վարդանայ ի յետագայս կոչի Կամախ, նմին իբր ուր խորենացին ք. 10. գրէ սակս խոսրովու որդւոյ տրդատայ՝ Թէ * Կարձեալ զնա Թագեցին ԱՆի առ հօրն։ վարդան պատմիչ գրէ վասն նորա. * Կատարեալ խոսրովու զկեանս՝ Թագի առ հօր իւրում ի Կամախ։ Եւ զոր խորենացին ք. 74. վասն օտայի գրէ՝ Թէ ամրացաւ յամառն ԼՆի, զնոյն վարդան աշխարհագիրն վասն կամախայ գրէ. * ի կամախ է անառիկ բերդն՝ ուր պահեաց օտա զաստիարակն։ և այլն։ Եւ յանուն սորա առհասարակ գաւառն կոչեցաւ Կամախ ըստ նորին աշխարհագրի։

Իակ առ յոյնս գտանեմք պլիշատակութիւն անուանս ի Է. դարուն. քանզի գէորգ եպիսկոպոս սորա գտաւ ի ՀԷ. ընդհանուր ժողովն՝ գումարեալ ի կոստանդնուպոլիս ի 680, և 681. որ այսպէս ստորագրեաց զնւր անուն. * Գէորգ եպիսկոպոս գարանաղեաց կամ Կամախու։ [3]

(1) Տես և ի խորենացին ք. 27։

(2) Թէպէտ յերիս ձեռագրս եւս խորենացւոյն ք. 45. գնի Յամբրոյնն Հանուոյ։

(3) Յունարէն Տարանտոս, կամ Գամախոն, յորում համօրէն գաւառն գարանաղեաց կոչի Կամախ։

Լ՚ւ այլուր ՚ի նոյն ժողովն. * Գևորգ ողբումն Թէն այ եպիսկոպոս վիճակին դարանաղեաց գաւառին մեծին Հայոց ‖ : Այն այս գևորգ ստորագրեաց և դրուագեան ժողովոյն՝ որ եղև ՚ի 692. ուր կոչի զինքն Լպիսկոպոս * Գամախու գաւառին մեծին Հայոց ‖ : Ընդունց յիշելոց զանունն Գարանաղեաց (1):

Յիշատակի և առ պերփերուժինի. գիրք կառավարու Թէ գլ. Ե. Թղթ. 135: * Գամախեան այրուձին էր ծայր գօջնիոյ, որպէս գելդգինու այրուձին՝ բալտիոյ (այս ինքն խազտեաց.) իսկ լևոն խմաստուն (կայսր) ... զայրուձին գամախու և գելդգինոյ յայնմ ժամանակի ընդ գաւառաւ (Թէմայիս) միջագետաց կացոյց ‖ : Այն այս լևոն զվամախ կարգեաց ՚ի խէ կարգի մետրապօլտաց, կոչելով * Ընթոս խէերորդ Վամախոն Հայոց ‖ : Ընմ ասպա էանց ՚ի ձեռ կարգի, որպէս է տեսանել ՚ի ծանօթու Թիս եպիսկոպոսարանաց ՚ի ժէ. Հատ. բուզանդարանին:

Ընդեօք այս անուն առեալ եղև յանուանէ մերձա կայ հին գաւառին ասորւոց, որ յունարէն կոչի Գոմմա գինէ (2). կամ Թէ նոյն գաւառ ձգեր երբեմն մինչև ցատ, չունիմք ինչ որոշել. այլ վասն գոմմագինի գաւառին տես Ալէքսրդր Հայս: Լ՚առ զվամախ ըստ սամոսէլի ՚ի 814. Ե. լևոն կայսր Հայկազուն. զայլ առումն Վամխոյ բեր դին ՚ի 1520. յիշէ շարունակօղն սամոսէլի:

Ըմ պարտ շփոթել զայս Ինի ընդ միւսոյն՝ որ է ՚ի չի բակ գաւառ այրարատոյ, որոյ հին և այժմեան գիրք՝ և առաւել ցուցանեն զզանազանութիւն. զի այս Ինի՝ որ մինչև ցայժմ կոչի Վամախ՝ է առ եփրատաւ, իսկ միւսոյն աւերակք երևին առ ախուրեան վտակաւ երասխայ (3):

(1) Վասին Թարգմանութիւնն յաւելու և զանունս Ընաւէպոյի. իբր Թէ Գարանաղի է նոյն որ առ պաղոմեայ կոչի Ընաւպոլ. այլ պաղոմէոս զԸնաղևոլա գնէ ՚ի փռիգիա հայս:

(2) Գոմմագինի անուն՝ նոյն Թուի ընդ մեր երկուց անուանցս Կոմա Ընի:

(3) Նման ՚ի բանից խորենացւոյն ե. 13. յայտնի երևի տարբերութիւն տեղւոյ այսր ամրոցին անոյ՝ ՚ի միւս անի քաղաքին, զի պատմէ անդէն՝ Թէ քուրմք եկեալք ՚ի յունաց ընդ արձանաց գից, առ ՚ի չերթալ՝ ՚ի խորագոյն հայս, պատճառեցին Թէ գիք անդէն կամին բնակել. և այնպէս մնացին յամուրն անի: Եթէ այս ամուրն անի մինչև նոյն ընդ անի բերգին որ ՚ի չերակ՝ լինէր ՚ի նոյն իսկ ՚ի խորագոյն հայս. այլ յայտ է՝ Թէ էր անի գարանաղեաց գաւառին՝ որ է յարևմտեան եզր մեծին հայոց:

Ընդամ ոչ ուշ եգեալ ոմանք ՚ի յետին և ՚ի միջին գարս մատենագրաց չփոթեն զասա ընդ ի բեռս, յորոց մատեհոս յերես

ՄՆԱՁՈՒՐ ։

ՈԱ՛նուն այսր գաւառի գտանեմք գոլ զինչ այլայլութիւնք զրոյց և առ բուզանդայ Գ· 24· ուր և գրի Ա՛ղբ· և Թէպէտ անդէն ինչ ոչ նշանակի՝ թէ իցէ՛ ի բարձր Հայս, այլ մերձակայ գաւառքն զորս յիշատակէ՝ ոչինչ ընդ աղօտ ցուցանեն նոյն գոլ ընդ Ա՛նձուր գաւառի բարձր Հայոց, քանզի գրէ նա վասն զօրացն շապ Հայ պարսից արքայի՝ թէ * Ասպատակ յաշխարհն Հայոց առնէին, զի ընդ աղնձախ, և ընդ Ծոփս մեծ, ընդ անգեղ տունն, և ընդ գաւառս անձաւոյ, ընդ Ծոփս շահու-

Աւրդ՝ յայս է թէ՛ ի հերակ գաւառի հին ժամանակաւ հնոյր բերդ՝ Աշի անուամբ, առ որով իբրև նորոգ հնեցաւ մեծ քաղաքն Աշի, հինն կոչեցաւ Ներքին բերդ ։ Ա՛յլ ընդդէմ նմանի պատմագրաց է՝ թէ յայնմ Ներքին բերդի անի քաղաքին պահեաց օտար զբոյր տրդատայ, և թէ նոյն Ներքին բերդն է՝ որ հոչէր Ամբուն Աշի տարբեր ի կամսխայ։

Ջհետ մատթէոսի և վարդանայ գնայ և համառօտողն պատմուԹիւն քաղաքին անոյ՝ շփոթելով զերկոսին ։ Ա՛յլ շիսեՓուԹիւն վարդանայ առաւել է՝ որ զկամսխ՝ զոր յայս բան այլ համարի չանի քաղաքէն հերակայ, որպէս և է իրաք, յայլ բան միացուցեալ երևի ընդ անի քաղաքին՝ յասելն վասն շահպոյ և աշտոյ մահկերի որդւոյն սմբատայ բագրատունւոյ· * Եղեալ ըզկողմամբքն հերակայ . . . առնին զհերակ և զաշտոյք և զգաւառն սայոց· և այսպէս ըստ բախտին եղեալ աշտոյ քաջի հինէ զկամսխ, և բնակեցուցանէ ի նմա զընտանիս իւր ։ Ուր ի կարդէ բանին երևի՝ Թէ աշտ հինեցաւ ոչ զկամսխ (Աշի կոչեցեալ ի հնումն՝) որ էր ի գաւառապետաց գաւառի, այլ զԱշի՝ որ էր ի հերակ ։

աեղիս ի յհշէն զանին հերակայ, անդ դնէ զգերեզմանս առաջին Թագաւորացն մերոց ։ * Ուր էին (ասէ) գերեզմանք հայոց ամենայն Թագաւորացն յառաջնոյն ։ Կամ այն՝ զոր գրէ վասն յովհաննու Թագաւորին անոյ· * Թագաւորացն հայոց զգերեզմանան առաջին Թագաւորացն հայոց ։ Զայս ասէ ոչ վասն գերեզմանացն բագրատունեաց, այլ վասն արշակունեացն. քանզի բագրատունիք, ոչ յանի, այլ ի բագրեան և այլուր Թագեցան ։

Նոյնպէս շիսեԹէ և վարդան յաւելն· * Մինչդեռ չև էր ընդաձակ շինեալ քաղաքն Աշի՝ որ կոչի Խնամք· Թէպէտ Ներքին բերդն ընդ այսու անուամբ էր, և հին ժամանակաւ շինեալ· ուր օտար նախարարն ամրացեալ պահէր ըզբոյրն տրդատայ, և զկուռս, և զանձս Թագաւորացն արշակունեաց զնոյ զհին մահուանն խոսրովու ... Կոչի Աշի և կամսին այժմ կոչեցեալ բերդ· բայց ամուրն անի Ներքին բերդն է ամրացեալ ։։ Զեռինս այս հատուած * կալ անի, մինչև ի բանն Բէրդն է ամրացեալ, պակասի յօրինակի միում գրելոյ ի Թուականիս չՁգ· այլ գտանի յայլ օրինակս, յորոց մին է հինն՝ գրեալ ի ինգրոյ սուխանոսի որպէսեան որգւոյ տարսայիճայ ։

նոց, ընդ Կիւրը գաւառն, և ընդ դարանաղէ, ընդ և հեղեաց կողմանս այնց գաւառացն. ‖ և այլն։

ԵԿԵՂԵԱՑ [1], այժմ ԵԶՆԿԱ։

Բազում ուրեք գիտ յօդի նմին բառս Կաառա, որպէս յատկէն լաստիվերացոյն գլ. ա. * Կէմ եղեալ գայ հասանել Հ Կհեղեաց գաւառ ‖ [2]։ Կայս անուն ի շ. ժողովն ընդհանուր՝ գրի Կփելէնսէն. որոյ եպիսկոպոս գաս սի անմիջապէս նախ քան զեպիսկոպոսն գարանաղեաց. և քաղաք այնր վիճակի կոչի անդէն Յոսեբիանաապոլիս, ուստի և փոխանակ միմեանց առեալ լինի. քանզի ի 16. գործ նոյն ժողովոյն այսպէս ստորագրէ եպիսկոպոս սոբա. * Կէոդորոս եպիսկոպոս Կգելէնսինեայ, կամ Յուսեբիանուպօլսոյ մեծին Հայոց ‖։ Նոյ ի 18. գործն՝ * Կէոդորոս խանարհ եպիսկոպոս Յուսեբինիանուպօլսոյ՝ քաղաքի վիճակին Կփելէնսինեայ ‖։ Ի Ե. ընդհանուր ժողովն՝ * Կէոդորգ ողորմելեացն այ եպիսկոպոս Յոսեբիանուպօլսոյ քաղաքին մեծին Հայոց ‖։

Օ այս Կգելէնսինի նոյն համարի լըբիւն ընդ Կէլէսինէն, Կէլսինէն, կամ Կէլեփինէ անուան [3]. որոյ եպիսկոպոս ստորագրեաց սիւնհոդոսական վճռոյն գէնոնատիոսի կոստանդնուպօլսեցւոյն։ Կոյնպէս մեծարապոլիտ սորա գտաւ յայն ժողովի որ գումարեցաւ վասն անգրէն դարձուցանելոյ զիտոխոս ի Թ. դարուն։ Կոստանդին պերփեւրաժէն ի գիրս գաւառաց ըբ. դնէ զԿէլեփինէ ի սահմանակցութեան խաղտեաց, ըստ որում և Հ Կհեղեաց չի այնչափ հինչ հեռի ի խաղտեաց. և ըստ վիճակի իւրում ժամանակի դնէ ի սկիզբն փոքուն Հայոց. իսկ ըստ հեղեղական թեմի Կէլեփինէ դասի ընդ կամախաւ ի ծանօթ Թուխս եպիսկոպոսարանաց լեռնի կայսեր։

Օ այն զայս Կգգլէնսինի նոյն համարի լըբիւն և ընդ Կէլէսինէն անուանն գաւառին կամ նախարարութեանէ մեծին Հայոց՝ զոր յիշեն պատմիչքն, և յատակ քան զնա տրալեն, որ ի ժբ. գիրս 555. դնէ սահմանակից պնտոց

(1) Յօրինակս լինչ աշխարհա գրուէ խորենացւոյն գրի՝ Նիհեն, որպէս և ի պատմութեէ անգ բ. 57. և գ. 2։

(2) Զնոյն ի կիր արկանէն և այլք ոմանք նախ քան զլատինս վերացին, զորոց զբանս տեսցես ի տողս։

(3) Լատիներէն գրի Ձենէնէ, կամ Ձենէնէ։

սի և փոքուն Հայոց ձգեալ առ եփրատաւ։ * Յայս վերջին ծագ թագաւորութեանն պոնտոսի փախեաւ միհրդատ Հալածեալ ՚ի պոմպէոսէ. զբեառն չատաջուր Ա՚ԳՒԼԻՍԻ նեայ գրաւեալ առ տասդիրայիւ, ոչինչ հեռի յեփրատայ՝ որ զփորը Հայս բաժանէ Ա՚ԳՒԼԻՍԻՆԵԱՅ ։ Լակ ՚ի ժա. գիրս գրէ՝ թէ յառաջ ժամանակաւ էր ընդ Սոֆէնէիւ՝ որ է ծովք, և դնէ զնա ընդ մէջ տօրոսի և եփրատայ ։ * Ի միւս կողմանէ ունելով Ա՚ԳՒԼԻՍԻՆ՝ որ անկաՆի ընդ մէջ տօրոսի և եփրատայ, մինչև է նորա ՚ի միջահետս ՚ի հարաւակողմն խոտորեալ ։ Նա ՚ի վերոյ ՚ի գրէնէն գլխոյացս եփրատայ՝ դնէ ՚ի ձախմէ նորին գետոյ, յատէնէ, թէ բղխեալ սորա ՚ի հիւսիսային կողմանէ տօրոսի՝ ընթանայ ընդ մեծ հայս յարևմուտս կայս մինչև ՚ի փորը հայս՝ զսա յաջմէ ունելով, իսկ Ա՚ԳՒԼԻՍԻՆ ՚ի ձախմէ. և ասպ ՚ի հարաւակողմն խոտորեալ, յայնմ խոտորման քերէ առ սահմանօք կապադովկիոյ, զորս թագս յաջակողմն, որպէս և զգոմաղենի. իսկ ՚ի ձախմէ Ա՚ԳՒԼԻՍԻՆ և զսոֆենի մեծին հայոց [1]։

(1) Ելթէ ոմանց ձգիւս առեալ զայսոսիկ կրկին վերջին բանս սգրավանի, ընդդէմ բերիցեն թէ տեղին Ա՚ԳՒԼԻՍԻՆԵԱՅ ոչ յարմարի եկեղեաց, այլ մանաւանդ չորրորդ հայոց, ըստ որում չորրորդ հայք է՝ որ անկանի ընդ մէջ տօրոսի և եփրատայ. և չորրորդ հայք է՝ որ անկանի ՚ի ձախմէ եփրատայ, ասելի է՝ թէ չէ պարտ ձգիւս առնուլ ըստ ամենայնի. քանզի յերկուս կուշ բանից՝ առաջինն ազաւաղել է ըստ խոստովանելոյ քաղաւպոնի և սալմասիոսի. իսկ յերկրորդումն անդ՝ ոչ դնի յերկուս տեղիս ասնուանս Ա՚ԳՒԼԻՍԻՆ, այլ նախ գնի ԼՒՓՓԻՆ, և ՚ի համառօտութեան անդ՝ Ա՚ԳՒՓՒՆ, և ապա Ա՚ԻՓՒՆ. զորս սալմասիոս ուղղէ և դնէ ըստ կամաց իւրոց Ա՚ԳՒԼԻՍԻՆ։

Թէրևս սգրավոն ասէին առնու ԶԱ՚ԳՒԼԻՍԻՆԻ ըստ որում ձգեալ ըստ մասին նաև ՚ի չորրորդ հայս. քանզի որպէս դնէ նա ինքն՝ Ա՚ԳՒԼԻՍԻՆ յառաջ ժամանակաւ էր ընդ Սոֆինիւ որ է չորրորդ հայք. սէս զընդդէմ մագրութեաս սալմասիոսի, ՚ի լե. գլ. Սոլինոսի։

Քանզի եթէ ձգիւս փոխանակ տեղւոյ չորրորդ հայոց ասցուք՝ ընդդէմ ելանէ առաջին բանն սգրավանի, որ զԱ՚ԳՒԼԻՍԻՆ դնէ սահմանակից պոնտոսի. նա զի նոյն սգրավոն այլուր զԱ՚ԳՒԼԻՍԻՆ դնէ մի ՚ի գաւառացն՝ զորս արտաքսիաս (արտաչէս) և թագաւորեաւ զորավարք մեծին անտիքոսի յաւելին ՚ի հայաստան, առեալ ՚ի գաղանօնեաց, որ ըստ նորա է գաւառ կապադովկիոյ. արդ այս առաւել յարմարի և կեղեաց՝ որ անմիջապէս կից է կապադովկիոյ։ Ընդդէմ է և գրեցի՝ զոր նշանակէ պրոկոպիոս։ Ա՚ԼԻ առ առաւելն՝ մարթ է ասել, թէ որովհետև սահմանք գաւառաց ընդ փոփոխութեամբք են, փոխեցան նաև սահմանք ագիւք սինեայ։

Այնպէս չէ մարթ ընդդէմ բերել և զգիրս պտղոմեայ՝ որ զԱ՚ԳՒԼԻՍԻՆ դնէ տօրոս կամ ՚ի հարաւոյ հիւսիսային քաղաքաց՝ որք անկանին մերձ եփրատա, և զկնի

Ընդ զԱգիլեսինին գնելով ազբաւանի ՚ի տեղւոջն՝ ուր բանօր եփրատ նախ և յառաջ սկսանի խոտորիլ և ընթանալ ՚ի հարաւ ընդ փոքր հայս, յարմարի գրեթէ ըստ ամենայնի գրից եկեղեցւոյ՝ որ սահմանակից է փոքունս հայոց, և ՚ի ծայր անդ խոտորման եփրատայ ՚ի հարաւ ակոզին, համաձայն վարդանայ աշխարհագրի՝ որ ասէ. * Վերեան եփրատ յեկեղեցւոյ գաւառին է ‖։ Իբր զի յայսմ գաւառի սկսանի եփրատ գետանալ, և զընթացս իւր ուղղել, որոյ բուն և երկար ընթացք բերի ՚ի հարաւ։

Համաձայնի այսմ և պրոկոպիոս որ գրէ՝ թէ եփրատ յետ բղխելոյ ից. ասպարիզաւք հեռի ՚ի թէոդոսիուպօլեայ՝ (որ է երզինուայ՚) անցանէ ընդ շամբին, և անտի անուի ջապէս հոսի յագիլեսինի, և ստորև՝ թէ *՚ի հայաստանեայց աշխարհին որ ՚ի տարւոս, և ՚ի գաւառին Ագիլեսինայ՝ հոսեալ ընդ աջմէ գետոն եփրատ, պատէ զերկիր բաղում յոյժ, և խառնեալ ընդ այլ գետս և ընդ արսինի բղխեալ յորդութեբ ՚ի պարսկահայոց՝ մեծանայ յոյժ, և երթեալ մտանէ յաշխարհին՝ որ ՚ի նախնեաց կոչի Ի հեաբսիբիա, և այժմ անուանի փոքր հայք ‖։

Սկ՚ի նշանացն թէ Ագիլեսինի է նոյն ընդ Ակեղեցւոյ այն է, զի ազբաւանն գիրք ժ։. գնէ անդ տաճար անահտայ՝ որպէս էր և Ակեղեցւոյ՝ յասելն, Հայք առաւել քան զայլս պաշտեն * Օ անահիտ, որում և այլ ուրեք կանգնեցին մեհեան, և Ագիլեսինի ‖։ Ընդ գնէ և պրոկոպիոս զմեհեան անահտայ, կամ որ նոյն է արտեմեայ, զորմէ ստորև։

Վանն որոյ և Ստեփէփա, որ է ասել Ընահատական, գաւառ մեծին հայոց՝ զոր յիշէ պլինիոս Ե. ձկ. համարիմ լինել նոյն իսկ գաւառն Ակեղեցւոյ, կամ Ագիլեսինի, վասն անահտական բազանին այսպէս կոչեցեալ, զի գնէ զայն սահմանակից կապադովկիոյ՝ որպէս էր Ակեղեցւոյ, և անդր հոսեցուցանէ զեփրատ փոքր ինչ ստորև քան զայն իւր, որպէս այլք ընդ ագիլեսինի։

Ագիլեսինեայ խոկ և խոկ յիշէ նոցա. զի ահա՚ի վերոյ զԱրմաւիր, զԱրտագանիգիա, որ է Հաշտեանք և զԱրտաշատ և զԵնախտ՝ ի չորրորդ հայս. զի նահ վասն դնէ ՚ի կարգս քաղաքացն՝ եկեղեցւոյ յարմարի նոյն գիրք որք են առ եփրատաւ, կամ մերձ պատմեայ։ Եւ զի նա ոչ գասէ եփրատ, որ է ընդգէմ, եթէ զքաղաքաբ և զգաւառս ձշգրտիւ ըստ կարգի մերձաւորութեբ գրէից ձշգիւ առցուք։

Եւ այսպէս նոյն պարտ է համարիլ զԱգիլեսինի գաւառ մատենագրաց յոմանց՝ ընդ մեր Ակեղեաց գաւառն, որ է սահմանակից գաւառացեաց. որպէս է տեսանել յագաթանգեղոս ի Թուղթն յԾբ։

Կաց յետքառասն՝ ընդ միջ նորա անցանել և Վասիլ գետ, որպէս յայտնի է յայն բան ագաթանգեղոսի, քանզի զնոյն զրկոր և բազմուեթն իշխանաց ի գաւառացեաց գաւառէն գնացին մերեզ աւան Ակեղեաց գաւառին, և անտի ի գնալն ի Թիլ՝ նոյնպէս որ է Ակեղեաց՝ անուանին ընդ գետն Վասիլ։

Ալիբակոս վարդապետ եղնկացի ի Թուղթն իւր ընդհանրական՝ կոչէ զսա Կաստա ըստ որբէ, քանզի անուանէ զԱգիլեսին Մարտաղաց հայոց Կոստորբէ գաւառ, ակնարկելով՝ թէ այս գաւառ ընդարձակ էր ի կալուած որոյ հօրն, կամ Ակեղեցւոյ. (Տես ստորև զՈՒիլն աւան)։ Կամ թէ վասն ասացն չարչարելոյ նորա, և ի սահմանակից լեառն Ձգնելոյ կոչէ այսպէս։ Այլն մեսրոպ զՎահան եթող վերակացու գաւառիս ի վարդապետել բըն նակաց։

Արեւք։ Յայս անուն յիշատակի ստէպ, որպէս է տեսանել առ խորենացւոյն ը. 13. և 57. և առ ագաթանգեղոսի ի Թուղթ ԺԷ. և միայն ի Թուղթ յԾբ. կոչի Արեւք, որ յաւէտ Թուի լինել բնիկ ուղղական, և ի հոլովմանէ նորին ածանցեալ անունս Արեւք։ Կոչեցաւ և Յոստինեանոպոլիս. զորմէ տես ի վերոյ։

Ընկանի յայս գաւառ ըստ վերոգրեալ մատենագրաց, հառաջեալ առ գայլ գետով, որ առ ագաթանգեղոսի ԺԷ. կոչի Կէօղ. * Հասին Ակեղեաց գաւառ ի գեօղն Արեւք ‖։ Իակ ի յԾբ. կոչի Իան։ Օձնի կոչեցաւ այս քաղաք Ընկոյ. որ Թուի լինել աղաւաղեալ Արեւք անուան. վասն որոյ մատենիկոս և յայտնի ևս Թովմաս՝ դնէ ի նմին Ակեղեաց գաւառի՝ յասելն. * Կնայ ի գաւառն Ակեղեաց ի Ալզնկայն ‖։ Իակ յայսմաւուրս ի մայիսի 11. (ի տպագրեալն.) և գաւառն Ակեղեաց կոչի յայս անուն. * Ջառանգաւոր հօրն գաւառի յերկրէն Ակեղեաց՝ որ է Ալզնկայ ‖։ Ստեփանոսիք տաճ կաց կոչեն Ըրզնկան, Ըրզնձան և Ըրզնճան, և դնեն յատորիս ի գաւառին Հոռոմոց, զորս ուղղեալ երկայայ ի մատենադարանի իւրում, գնէ ի հայս։

Ըստ էր հնչակաւոր մեհեան անահտայ կամ արտեմիդեայ. վասն որոյ գրէ ագաթանգեղոս ի յԾբ. * Ի մեծ

և ՚ի բուն մեհենացն ՚ի տեղիս պաշտամանցն հայոց Թա-
գաւորացն յանահատական մեհենին Արբիգն ասանի ։
Օ այս մեհեան շինեաց միջինն ախգրան, և ՚ի նմին կանգ-
նեաց զարձան արտեմիդայ, զոր հայր նորա ՚ն արտաշէս
Թագաւոր առեալ էր յելլադայ այսինքն ՚ի յունաստանէ,
և ՚ի կանխել մահու նորա՝ եդեալ կայր ընդ այլ արձանս
յամրոցն Կնէ ։

Այլ էր սա յարձանէն արտեմիդայ՝ զոր նոյն արտաշէս
յասիոյ եբեր ՚ի հայս. յորոյ որոշումն գրէ խորենացին
Բ. 13. * Եւ զարտեմիդայ զվիւս պատկերն (կանգնեաց
ախգրան) Արբիզայ ։ Տես և ՚ի Բ. 11 ։ Այս արձան
՚ի սկզբան անդ էր ՚ի դաշտին, ուր յերկնից իջեալ կեղ-
ծեին հեթանոսք, ապա ոմանք ատեն որդի աղամէմնոնի (1)
միանգամայն ընդ խփիգենեայ քեռ իւրոյ քրմուհւոյ ա-
ռեալ ՚ի դաշտէն՝ հաճ ՚ի յունաստան, և անտի ՚ի ձեռն
արտաշէսի ածաւ ՚ի հայս, և ՚ի ձեռն տիգրանայ եդաւ
յերիզայ՝ որպէս ասացաք ։

Յայտ առնէ զայս և պրոկոպիոս (2), որպ ՚ի յիշելն
զԱթենեսինի՝ (այն է Արկեղեաց գաւառ յորում էր Արբի-
գա,) յիշէ և զայս մեհեան յասելն. * Կնոմի (այսինքն
՚ի շամբէն), հոսի եփրատ ՚ի Ադելէսինի (ագելէսինի),
ուր էր մեհեան դաշտին արտեմիդայ՝ ուստի փախու-
ցեալ ասի խփիգենէ ընդ ոմանս և բիլատէսի, բերե-
լով զդրօշեալն արտեմիդայ ։ Այսմ իրի Թէպէտ ամենայն
ազգաց հեթանոսաց էր յարգելի այս դրօշեալ այլ և ա-
ռաւել յունաց. յոյր սակս ասէր արդատ առ Զէն գրիգոր
վասն արձանիս առ ագաթանգեղոսի ՚ի Թղթ. ԺԷ. * Արդ
ոչ առնուցուս յանձն պաշտօն մատուցանել դիցն, մանա-
ւանդ այս մեծի անահտայ տիկնոջ, որ է փառք ազգիս
մերոյ և կեցուցիչ, զոր և ամենայն Թագաւորք պատուեն,
մանաւանդ Թագաւորն յունաց ։

Աջն գրիգոր աքանչելեօք կոփծանեաց զայս մեհեան,
յորում դևք ՚ի նմանութեի վահանաւոր գօրու ժողովեալ
մատրանէին, և ջոկն պապիկեր անահտայ փշրեալ նուիրեաց
եկեղեցւոյ, յորոյ պատճառս կրեալ էր զանանահելի չար-
չարանս ՚ի տրդատայ՝ յայսմ վայրի, բայց արտաքոյ ա-

(1) Սա ինքն է Ագամէմնոն ա-
ռաջնորդ զօրացն յունաց ՚ի սկզ. գիրք ՚ա. գլ. 17 ։

(2) ՚Ի գիրս պատերազմաց պարս-
կաց ։

ւանին՝ որպէս Թուխ, ուր բանակեալ էր տրդատ հանդերձ զօրօք ։

Ի ժամանակս քրիստոնէութեան փոխանակ մնոտի բազնեացն հեթանոսաց զարդարեցաւ քաղաքն և շրջակայ սահմանքն բազմութեամբ եկեղեցեաց, վանորէից, և անապատականաց ի փառաբանութեան Հնմարտին այլ ։ Մի ի նոցունց է ոմն Տէրաշէնն, ի միւս կողմն եփրատայ՝ որ ի Ճառն յայտնութեան նշխարաց սրբոյն ներսէսի (1) կոչի Հռէականոան և գեղեցկաշէն ։

Նմ յայլ կողմն՝ եկեղեցին յանուն Փրկչին, զոր շինեաց եպիսկոպոսն եղնկայու սարգիս անուն՝ մեծարեալ յամենեցունց ի ժգ դարուն, որպէս գրի անդէն . * ի յաթքէպիսկոպոսութեան (2) մայրաքաղաքիս եղնկայ և գաւառիս եկեղեցաց Տ՚ն սարգսի՝ յորում տունկ քաջազարմ երևեալ ի վիճակիս յայս, որ է տեղի չարչարանաց և նահատակութեան լուսաւորչին մերոյ սրբոյն գրիգորի, պատուեալ յայլ, մեծարեալ յազգաց և յազանց և ի թագաւորաց մեծաց, բարեհնչեան շառաւեղ մերում ժամանակիս, և սկիզբն նորոգման եկեղեցւոյ պայծառութեան, որ և շինեաց զշրջապատել խորանն այլ՝ զգեղեցկայարմարն եկեղեցի՝ որ յանուն Փրկչին մերոյ և ոչ յոք . բարեխեր և ածապարգև զաւակաւն յովհաննիսիս ։ Այս աւագ խորան եկեղեցւոյս կոչեցաւ յանուն փրկչին . երկրորդ խորանն Կաթուղիկէ . իսկ երրորդն՝ յանուն Աստուածածնի, ուր եդ սարգիս եպիսկոպոս զաջ ձեռն մեծին ներսէսի։

Սիւնիքն շահ նախահաւն օսմանեանց զնախկին բնակութիւն իւր յետ Թողլղ զմհան՝ կալաւ յայս քաղաք ի հիճրէթի 621. (1224)։

Ուղին զոր Աղուղ կամ Աուղալ Թաթարք ի հիճրէթի 640. (1242.) նենգութեամբ հանելով զքաղաքացիս ար-

(1) Հեղինակ այսր Ճառի երևի լինել Յովհան եղնկացի։

(2) Սարգիս առաջնորդ գաւառիս ի սորագրութեան ինչ ժամանակի եղելոց ի կիւլիկիայ՝ դասի ի կարգս եպիսկոպոսաց . ուստի զԱեբբէպիսկոպոսութեդ անուն՝ զոր տայ նմա յայտ վայրի հեղինակ այսր Ճառի, Թուխ Թէ պարտ է առնուլ կամ իրրև զպատուա նուն ինչ, և ոչ ըստ կարգի եկեղեցական իշխանութեան, և կամ ասել՝ Թէ ի ժամանակի գրութեն այսր Ճառի ամբարձեալ էր նա յաթքեպիսկոպոսական պատիւ, որ յառաջ ի ժամանակս Ժողովոց էր լոկ եպիսկոպոս։ Այլ սա Սարգիս է՝ զոր յամին յունաց 1570. (քրի՝ 1259.) յիշատակէ ապուէ՛ֆարաճիոս առ ասսէմանեայ հատ. ը. Թղթ. 378. զոր Թաթարաց կացուցեալ էր ի վերայ քաղաքիս, ուրանօր եղնկայն գրէ Աբրղնան։

տաքոյ քաղաքին և կոտորելով։ Իսկ ի 1395. Լենկթիմուր յետ գրաւելոյ զԱիջազետս՝ եկն և սիրով էառ զԵրզնկայն. այլ * Օ մեծ կաթուղիկոսն գԱբէն սարդիս (ասի Թովմաս մեծոփեցի՝) ի հիմանց քակեաց, և զայլ եկեղեցիսն զամենայն կործանեաց ‖ ։ Նա ինքն Թովմաս պատմէ և զայլ և այլ առաւել քաղաքիս ի զանազան բռնաւորաց։

Իսկ եր Յովհաննէս պլուզ՝ Լենկայի անուանեալ, բազմալեզու գրառաջոյ ծաղկեալ ի ԺԴ. դարուն. որ և գրեթէ վերջինն գաւառ բանիբուն մատենագրաց մերոց։

Յայս քաղաք և ի շրջակայ սահմանս յաճախեցին երկրաշարժութիւնք, ի սկզբանէ անտի բազում աւերմանն ածելով ի վերայ, որք և պատմին ի ժամանակագրութիւն՝ զոր ասաի և անտի ժողովեալ առաքել պատմագրի, մանաւանդ ի ժամանակագրութիւն ղուկասու կեղեցւոյ՝ գնդ, գինի պատմագրութիւնք եւքոյ։ Օ ժողովեալսն նորա՝ և զոր գտաք ի յիշատակարանս այլ գրոց, ըստ կարգի Թուականաց կարգեսցուք յաւաջիկայդ։

Թուական մեր։	Ք. ամն։	Երկրաշարժութիւնք։
նղգ.	1045.	Ի հասարակ կործանեաց զքաղաքն պատահումամբ եր կրի, և սպան զբազումս ի բնակչաց։
ռժե.	1166.	. . . . .
ռժէ.	1168.	Պան ԺԲ. հազար ոգիս։
ռձե.	1236.	Կործանեաց զեկեղեցի մի։
չԻ.	1254.	. . . . .
չժէ.	1268.	Պան ԺԵ. հազար ոգիս յաւուր կիւրակէի։
չէ	1281.	Զքաղաքն եհաս մերձ ի կործանիլ։
չէզ.	1287.	Ի մայիսի. մեռան բազմութիւն մարդկան։
չէթ.	1290.	. . . . .
ռղե.	1356.	Յաւուրն Էսթհիցս և ուրբաթիցս երերայր քաղաքն։
պիգ.	1374.	Երկին անգամ շարժեալ ըզքաղաքն, յերկրորդումն անգ կործանեաց զպարիսպսնորա ի գետս. յուրբաթու։

պՃ.	1433.	Լ՚օթին անգամ շարժեցաւ քաղաքն։
ՔԷ.	1458.	Պան լԲ. հազար ոգիս։
ՔՀ.	1482.	Պան Հ. հազար ոգիս ընդ հողով ծածկեաւ։
ռԼԵ.	1576.	Ի նոյեմբերի 5. ի մէջ գիշերի, որ տեւեաց ցամիսս 4։
ռՂԳ.	1584.	Ի յունիսի 17. յերկուշաբաթի ի 3. ժամու. յան կարծ շարժմամբ առհասարակ զքաղաքն կործանեաւ՝ ԺԵ. հազար ոգիս սպան, և Ե. հազար ընդ հողով ծածկեաց, զորս կիսամահ գտին ի ներքոյ աւերակաց։
ռՈՂԳ.	1784.	Տէս զայսմանէ ի նոր հայ աստան։

Օ երկրաշարժութիւն որ ի ՆՂԳ. յիշէ և մատթէոս յաստէն՝ * Յաղուս եկեղեցիք խախտեալ փլաւ ի հիմանց ի յեկեղեցւոց գաւառին. և քաղաքն որ Կղնկան կոչի՝ փլաւ առհասարակ, և պատառեցաւ երկիրն, և աբք և կանայք ընկղմեցան ի խորս անդնդոց, և զաւտրս բազում գայր ձայն աղաղակի ի խորս անդրնդոց ։ (1)

Յաձախութիւնք այնչափ երկրաշարժութեց յայտ առնեն՝ թէ գտանին անդէն հանք՝ յորոց գոլորշեաց պատճառին. յայտ առնեն և զբազմամարդութիւն քաղաքիս, ուր ի 1458. յետ մեռանելոյ լԲ. հազարաց, զկնի իՃ. ամաց՝ գտան ի նմա տակաւին Հ. հազար ոգիք, և այն իսկ միայն թիւ մեռելոց ։

Ալէ։ Յեկեղեցւոց գաւառի դնեն զսոյն ագաթանգեղոս, բուզանդ, յովհաննէս կաթողիկոս, և այլք, Ոսկան կոչելով՝ որ ի յունականն ագաթանգեղոսի գրի Ալէպ։ Ընդ մէջ սորա և երիզայ անցանէ գետն Գայլ զորմէ տես ի վերոյ։ Ասա աւան կայր և յաւուրս քան զժամանակս մեջին տիգրանայ (2), յորում նա ինքն զա-

(1) Յշխծուածն վերաւորելոց ի ներքոյ աւերակաց կամի ցուցանել։

(2) Յշխնութիւն այսր աւանի պ՚ղոս տարոնեցին ընծայէ արխատաւ կեայ, չխոթելովընդ շինութեան

թէնասայ զպատկերն՝ զոր Հայր նորա ։ արտաշէս առեալ էր յԵլեղայ կանգնեաց անդէն մեհեան, և բազին շինեալ անդէն ։ Ա՛յլ առ իմանալ Աղբատիս զդիրս տեղեաց մեհենիցն, որպէս և գաւառին եկեղեաց, զսուն իակ զամս խորենացւոյն դիւցուք առատանօր ։ * Ի՛ քեռայր իւր միհրդատ (ասէ ի ։ 13. կամ 14.) հատ տացեալ զմաժաք, և զՀոգս մեջերկրայցն ... գառնայ յաշխարհն մեր ։ Ա՛ռաջին գործ՝ զմեհեանն շինել կամեցաւ. իակ քրմացն որ եկեալ էին ի յոտնայ՝ զմտաս ածեալ զի մի ի խորագոյն հայս վարիցին, պատճառեցան ըղձուելիս՝ իբր թէ դիքն անդէն կամին զբնակիլն. որում հաւանեալ տիգրան՝ կանգնեաց զըլոմպիական պատկերն դիտոյ յամուրն յանի, և զաթենաս ի թիլ ։

Այլ պատկեր է՝ որ առ ագաթանգեղոսի ի յծբ. կոչի Ա՛նահական, որ է նոյն աստուածուհի դիտուելիս, զոր ըստ զպատկերն ոչն գրիգոր՝ և որք ընդ նմա իշխանք՝ կործանեցին ։ * Ա՛նահիտին ձ՛անեական պատկերն (ասէ ագաթանգեղոս) գտեալն արամազդայ ի Ա՛ծիլն աւանի, և զգանձս երկուց մեհենից (յորոց միւն եր յերիզա) աւար ժողովեալ ի նուէրս սպասու եկեղեցւոյն Թողին տէր զջան հանդերձ ։ Ա՛յսորիկ ազագաւ բուզանդ գ. 2. կոչէ զԱ՛ծիլ Ա՛ծոծ։ գբէփորբ ։ Ա՛ս խորենացին գ. 88. սեպհական դնէ արիստակեայ՝ յասելն ։ * Ա՛սկ զմարմին երանելոյն (արիստակեայ) բարձեալ աշակերտացն բերին Ա՛ղեղեայ գաւառն հանգուցանել ի Ա՛ծիլն յիւրում աւանի ։ Ա՛յս թաղեալ գնեն զմարմին նորին ոչ նաև բուզանդ, և յովհաննէս կաթողիկոս. այլև զմարմին մեծին ներսէսի՝ համաձայն խորենացւոյն գ. 38. * Ա՛ստ ձեալ զմարմին նորա (այսինքն մեծին ներսէսի) արքային պապայ՝ թաղեաց ի Ա՛ծիլն [1] աւանին ։

Եկեղեցիս սորա հռչակաւոր գտաւ անուանեալն Ա՛ռաքելիկ, զոր շինեաց մեծն ներսէս՝ յորում և թաղեցաւ. բայց քակեցաւ յարշաւելն անդ ապստուռաշիմի քեռորդւոյն մահմետի ժգ. հազարաւ ի հայս՝ յամին իբր 635. [2] որոյ վասն ի Ճառն յայտնութեան նշխարաց մեծին ներ-

վանայ՝ զոր կերտեալ ասեն արիստակեայ յիւր բնակութեան ։

(1) Ա՛յսպէս գնի ըստ երից ձեռագրացս եւս, ուր ի ապագրեալն գնի թիւը ։

(2) Քանզի ի նմին Ճառի, և առ յովհաննու մամիկոնէի ի ձեռագիրն՝ գնի այս ջ. ամաւ զկնի մահմետան խոսրովու պարսից արքայի ի ժամանակս հերակլեայ կայսեր. իսկ մահ խոսրովու գնաւ ի 627։ Վասն կործանման

սէսի կոչի այնուհետև Հանգոյեալ եկեղեցի, ըստ սովորու-
թեանց ազգիս՝ որ այսպէս կոչէ զամենայն կործանեալ եկե-
ղեցիս [1]։

Յետ քակելոյ եկեղեցւոյս՝ անյայտ ինչ նշխարք սրբո
նէրսէսի, և յայտնեցաւ ի 1275. ի Հայրապետութեան
Հայոց տէն յակոբայ, և ի Թագաւորութեանն լեւոնի որդւոյ
Հեթմայ։ Վերեզմանն սրբոյն գտաւ երկայն ձ. կանգունս,
լայն իբր ա. կանգուն, խոր իբր մարդաչափ, ձ. աստղ
Ճանաչ կպմեալ էրամած *աբլ. և ի վերայ գերեզմանին՝
էրէ* էրէնի կամար* կապեալ ի երդ և ի *արձանդ։ Յարևմտեան
կողմն գերեզմանին եդեալ կայր մարմին սրբոյն բազմեալ
յաթոռ. խոկ առաջի նորին գտան այլ նշխարք՝ որք էին
մեծամեծ անգամք մարմնոյ՝ և ոչ բովանդակ մարմին,
ծածկեալք սակաւ ինչ հողով։ Այսոքիս եպիսկոպոս եկն
կայսր եդեալ յերկուս արկեղս փայտեալ խրտով մատա-
նեաւ՝ առ ակի տաճկաց՝ տարաւ յերզնկայ։

Ձկնատակի ի նոյն Ճառի և այլ վանք և եկեղեցի կա-
նուն սրբ Հայրապետաց ի Ծմբին աւանի, կայտ է՝ թէ կա-
նուն որդւոյ և Թոռանց լուսաւորչին. կամ միայն արիս-
տակեայ և ներսէսի։ Այսոքիսագն այսր եկեղեցւոյ՝ էր
պատուական անուն, որ չորեքկին տեսլեամբ յայտնու-
թեամբ ընկալեալ վանն տեղւոյ գերեզմանի սրբոյն ներսէսի՝
ծանոյց աւետեցուն, յորում ժամանակի առաջնորդ վա-
նացս էր Ներսէս ոմն։

Յայս աւան չինեաց եկեղեցի [2] ըստ գրելոյ յովհան-
նու մամիկոնէի՝ նաև իշխանն Հաբբաս՝ խրատու սատեփան-
նոսի առաջնորդի վանից գլխակ, որ յաջորդեաց զհնի
Թոմայ ի է. դարուն։ Ամիլ անուամբ գտանին և այլ
կրկին տեղիք՝ զորոց այլուր։ [3]

Ձբրե։ Ոչխան՝ որ ընդ ժամանակս ինչ եղև սրբոյս
նիստ, զորմէ խորենացին ք. 60. կամ 59. * Ոտքն (ա.

եկեղեցւոյս այսպէս գրի ի ձե-
ռագրի յովհաննու մամիկոնէի։
* Կամ ապառաժիմ անցանէ ի
հաբբ ... ի սոյն ամի քակի եկե-
ղեցին որ յաշտից վանան ... և
ներսիսի հայրապետին կամուրջ
կէ եկեղեցին ի Ծմբին Ալեկեղեաց
գաւառին ||։

(1) Ալիժամ ասմիօրէն ի հայաս-
տան կոչէն՝ Հանիծ եկեղեցի, կամ
կրճատմամբ՝ Հանիկեղեցի։

(2) Ի տպագրեալն յովհաննու
մամիկոնէի ի Թղթ. Ձ. դնի ի
բազմաւորական Լ. եկեղեցիս։

(3) Միայն նշանակեանն որ զԹոռոչ-
գան կոչեցեալ համարի Թմբլ,
յորմէ և ի Թիլ գնէ Թաղեալ
գլուսիկ, և զնոյն գրիգոր ընդդէմ
նահանի պատմագրաց։

տերան արքայ) գնաց զկողմանքը Յակեղեաց ի յաւանին Ընդրէս հաստատելով զարքունիսն ||:

Խոս: Կեօղ յայսմ գաւառի՝ ուր պատ արքայ ետ ձեզ մեծին ներսէսի դեղ մահու, և ելոյծ ի կենաց: * Փո խեալ յաշխարհէս երանելին Ներսէս (տես խորենացին էջ. 38.) ի գաւառին Յակեղեաց ի գեղն որ կոչի Խոս: Օնոյն գրէն ասողիկ. էջ. 1. յովհաննէս կաթողիկոս [1] և վարդան. զոր բուզանդ Ե. 24. կոչէ Խոսան, և ի նմա դնէ ապարանս պատպ: * Յոր կոչեցաւ (այսինքն կոչեաց զներսէս) յապարանս իւր ի Խոս աւան Յակեղեաց գաւառի ||: [2]

Վաղարշ: Ասողիկ. էջ. 11. * Յնմին յաւուրս նորա (այսինքն՝ էջ. արշակայ արքայի,) սպարապետ զօրուն Հայոց՝ վասակ որդի վասլէի, որ էր ասակերան շինեաց Յակեղեաց գաւառին ||:

Աղձնէք: Խան՝ զոր յիշատակէ լաստիվերտցին ի գլ. իէ. և երևի դնել զնոյն Յակեղեաց գաւառի, քանզի գրէ. * ի գալ ամարայնոյն՝ առաքի ի թագաւորէն գա տուզոր իրաւանց աշխարհին ... որոյ հասեալ ի գաւառն Յակեղեցայ՝ ընդ առաջ երթայ նմա ամենայնքն վրէժ, և ամբաստան լինի զմեծարգի հայրապետին սամուէլէ ... զոր իբրև լուաւ գատաւորն ... առաքէ զինուորս բե րել ասիպաւ զերանելին ... առաջի իւր ||: Յոր յետ այնց բանից. * Յոր երթեալ ժողովոյն բազմութիւն մինչև յերգ գետոյն եփրատայ՝ ուր մանանաղի ի նմա խառնի, լինի յայնմ ժամու եկք անձրևի, և ի յորդումէ անձրևին զարթեաւ եփրատն, և գայր լի գարիւ և գարիւ: Յակ զինուորքն բերեալ նաւ փութացուցանէին անցու ցանել զծերունի եպիսկոպոսն զամուէլ ... յայնկոյս Յ՝ւանն որ կոչի Կոթեր, քանզի և գատաւորն անդ իսկ էր ||: Պատճառ երկարատող վկայութեանս ի լաստէ վերացոյն, եղև առ ի ցուցանել ըստ կարի զիրս Կո թեր աւանի, միանգամայն և եկեղեցւոյ գաւառի՝ որ սահ մանակիցն է մանանաղոյ:

Աղեքսոս: Զոր՝ ուր նահատակեցաւ և թաղեցաւ ձեն Թէոդորոս յաւուրս գրիգորի լուսաւորչի, յորում ապա շինեցաւ վկայարան ի լուսաւորչէն, և եղև միայնարան.

(1) Աև որում յօրինակս ինչ դրի նաև խոս. * Տայ նմա որ բուցումն մահու ի Գեղն խոս||:

(2) Ի գեղջէ ասի ասի լինել Աաեփաննոս էջ. կաթուղիկոս ի վահճան ժէ. դարուն:

որ և կոչի Աստրբոս վանս որ Ամասիա. որոյ և գաւառ նշա-
նակի յայսմաւուրս ի մայիսի 11. * Ի յերկրին Կո-
ղեաց որ է Այնզընկա՝ ի կողմն արևելից՝ է կառուցեալ
գերեզման որ նշխարաց Նորա (որոյ Թորոսի), վանք տե-
ղի կուսակրօն Հիւպատզեաց անանց միաբնաւորաց [1]:
Ի Ժամկոչն Սերբևէս որ Ամասիա:

Աստրէն, կամ Աստրենացին: Ի նմին պատմութեանէ յայսմ
աւուրս ի մայիսի 11. կոչի ուրեք Ի՞սան, և ուրեք Ի՞ա-
նացին ի գաւառին Պալահունից, կամ որպէս այլուր գրի
Պափլագունից [2]: Կոչեցաւ Աստրէն՝ յանուն իշխանին հօր
Լիդոդորոսի:

Պարբերից գղեակ: Ձիշատակի անդէն յայսմաւուրս, և
դնի ընդ միջ գերջանաւոր և Կղզնկայ:

Սիկերացին [3]: Զոր՝ ուր եր գիւղ, և հանդիպ գեղջն
բարեհամ աղբիւր Ի՞բենոսա ձայնեալ, կամ ըստ տպա-
գրեալ յայսմաւուրսդ Սրբենոսա:

ՄԱՆԱՆԱՂ:

Պահմանակից եկեղեցւոյ և հարքայ ծանուցանել լինել
այս բան լաստիվերացոյն ի գլ. Թ. * Յարևելից կող-
մանէ եւեալ ընդ ապահունեաց և ընդ հարքայ գաւառն
անցեալ ի Մանանաղե, ինքեալ և յեկեղեցւոյ: Ասէ անուն
Նորա ցուցանել լինել ի նմին՝ հանք ապխիւ աղի, մանա-
նայի նմանեցուցեալ, ուստի և մեզ երևի Թէ այժմ ան-
կանի ի Գևքման և ի Կնեուս ուր ելանի աղ ընտիր [4]:
Ի գաւառի աստ էր այրն գժուարին՝ ուր ամրացան
երեքկին նախարարքն յափշտակողք գանձուն Ք. արշակայ,
զոր խորենացին Ք. 45. ստորագրէ յասելն: * Վախըս-
տեաց արկանէր (սամուէլ մմիկոնեան) յամուր Ի՞ստ
ի գաւառին Մանանաղոյ, յոր մնաց ոչ գտանէր, բայց
ի կողմանէ գոյն ելք էին առ ի Թաւալ. և առաջի
գրաց Ի՞սրին՝ սեպ էր ուղղորդ միապաղաղ, և ի վե-
րուստ պաղանձաւ քուաւոր, որ հայի յանդունդս խորա-
ձորոյն. և որ ինչ վերծանի յանհնարին ուխտ սաստկու-

(1) Ա՞յս պատմութեանէ ոչ գտա-
նի ի հին օրինակս յայսմաւուրաց:
(2) Ի գաւառ անծանօթ, զոր
ոչ յիշատակէ խորենացին:
(3) Թուի լինել անուն յոմնա-
կան:
(4) Տե՛ս ի նոր հայաստան, ի
Թղթ. 83:

Թէ անկանի՝ անդադար հոլովմամբ գլոբեալ, ոչ ուրեք լինել [1] ասնկոիւ ։

Օ եպիսկոպոս գաւառիս յիշատակէ զաղաւր փարպեցի մի՝ ի Թուոյ նոցա՝ որք գրեցին պատասխանի նամակին պարսից · կոչելով ի Թղթ · 75 · * Տէր Օ աւէն եպիսկոպոս Ա՝անանաղոյ ։

Ա՝մբաստէրդ ։ Ա ստիվերտցին՝ ի գլ · ժա · յայս անուն կոչէ զլեառն յասէլն · Որս պատրաստեցաւ * Ա՝նանաղոյն՝ ի լեառն որ կոչի Ա՝մբատաբերդ ։ Ա՝յլ ստորև գնէ՝ ի նմա և բերդ , և առաւել ստորև՝ ի բազմաւորաց կանն կոչէ Ա երինջ ամբաստ ։ Ա՝զուին գայն պարսիկք և սկիւթացիք՝ ի 1048 · յարձակեր հարուածս ածեալ՝ ի վերայ փախստեից անդր ամրացելոց ։

Շ էրմէ ։ Ա՝ներդաքաղաքն՝ զոր արիստակէս լաստիվերտացին՝ ի գլ · իգ · գնէ՝ ի Ա՝նանաղոյ սահմանս ։

Կաչէ · և Ա՝ղէսոյ ։ Ա՝լբկին գեօղք՝ ի նոյն սահմանի՝ որք էին կալուածք երկուց կանանց սահելոց յաղանդ թմբդրակեցոց ։ * Ա՝նկին (ասէ) գեօղս երկուս , զնոսա կաղաղս և Հանգրուան պատրաստական արարին վիշապ օձին կամակորի ։ Այս զկին կոչէ Ա՝զարակս , յասելն , * Այս զա՝զարական որ խրեանց բնական տեղիք էին՝ զորս յառաջ սակաւ մի յիշեցաք , որոց անուանքն կոչին մուշին Կաչէ , և միւսումն Ա՝ղիւսոյ · զընակիչս տեղեացն զամենեսեան ընդ ինքեանս միաբանեցին ։

Ա՝ռաջաղէօր կիւխալ Ա՝ւան , և Ա՝ղբայ Ա՝ռաքաքաղեօղ ։ Տեղիք զորս լաստիվերտացին՝ ի նոյն գլ · իգ · երևի գնել՝ ի մանանաղոյ սահմանս [2] ։ Ա՝ ասն առաջնոյն գրէ · * Ի հատուածս լերինն Պախոյ՝ որ այժմ կոչի Պայլախաղբար [3] , առաջին հարցն Ա՝ւան ինչ էր՝ զոր Ա՝ռաջաղէօր կոչեն , ուր զնծայիկն նշանն բազմապայծառ վայելչութիւն կանգնեալ էին , որ և զանուն գեղջն՝ ի նոյն փոխեալ , նոյ անուանեն մինչև ցայսօր ։ Պատմէ ապա՝ եթէ զիարդ արբանեակք երկուց կանանցն կործանեցին զեաչն՝ ի գիշերի , և փախեան՝ ի վերոյիշեալ գեօղս , և ապա

(1) Յայլ օրինակ խորենացւոյն Գոռանէ ։

(2) Ջայսոսիկ և զվերոյիշեալ տեղիս՝ ի Մանանաղի կարգեցաք , հայելով՝ ի խորագիրս իգ · գլխոյ լաստիվերտացին , ուր խոստանայ նա պատմել որ ինչ՝ ի Մանանաղոյ սահմանն եղեն . զի գրէ * Թէ որպէս և՝ ի Մանանաղոյ սահմանն , բորբոքեցաւ հրգեհ մոլորութեն՝ առելի է ։

(3) Ջգրէց լերանցս լիցի բան և՝ ի ներածուԹէ Հին հայոցառ նեայց ։

*Տիւրեանց հետացն ըմբռնեցան. քանզի գրէ յիշելով զերկրորդ տեղին՝ յասելն. * Ա եց ՚ի նոցանէն՝ զոր վարձա պետս ասէին լինել չար և պիղծ կրօնիւն, զնոսին ձերբա կալ արարեալ՝ զայ ժողովն (եպիսկոպոսաց և երիցանց հանդերձ ժողովրդովք) ՚ի Վաղաքագեօղն որ կոչի Ջերմայ ||։*

ԳԵՐՋԱՆ։

Սահմանակից է եկեղեցւոյ յարևելից կողմանէ, որպէս յայտ է յայմհետէ գրից, յոր անուն կոչի միևնոյն ցայսօր։ Այս գաւառ եղև մի ՚ի նախաշակերտեալ գաւառաց Տըրդատայ զրկիցըն (որոյ բնակիչք վայրենացեալ էին ՚ի խորին տգիտութենէ և ՚ի հեթանոսական պղծութենէ,) զորմէ այս պէս պատմէ ագաթանգեղոս (՚ի թղթ. յծգ.) * Պատ փութացեալ հասանէր ՚ի գաւառն Գերջան, զի և անդ յառաջասցի ընդ զառաքելական քարոզութեանն զա րուեստս միշակութենէ, և զերծուցանել զնոսա ՚ի գայլերէն ՚ի գիւցական սատանայակիր բարուցն Ձիւաղութենէ. զգ խուժադուժ կողմանն աշակերտեալ՝ զնոշորագոյն և զգ խեչբեկագոյն զբաս հեթանոսութենէն շրջել ՚ի զգաստու թեն ուծուացեալ խմաստութենն, ծանօթս աւետարանական աւետեաց յարդարեալ ընդելս կացուցանել ||։

Օ եպիսկոպոս գաւառիս Գերնէ, կամ Գտիթ անուն յիշատակէ խորենացին ՚ը. 57։ առ ժամանակօք մեսրոպ պայ. * Ընդեալ (զբյն սահակայ) զմեսրոպ և զվարդան տայ ցեպիսկոպոսն Գերջանու ցԳտիթ ||։ Գնէ զնոյն և կորիւն յասէն. * Ընդեալ երանելոյն (մաշթոցի) զգ պատուական եպիսկոպոսն Գերջանոյ՝ որոյ անուն կոչէր Գերնէ ... հասանէին ՚ի թադաւորակաց քաղաքն կոչ ուանդինական ||։ Կա ինքն երանելին մեսրոպ որ և մաշ թոյ՝ վերակացու եղեալ ուսմանց ՚ի Գերջան ըստ խորե նացւոյն ՚ը. 60. Օ նոցին եպիսկոպոսն Գվահէն։

Կափաւնէ։ Ընդեալ կոչի առ խորենացւոյն ՚ը. 13. կամ ըստ այլ օրինակի 14. * Կանդնեաց (միջին տիգրան) զղջմտիական պատկերն դիտոյ յամուրն յանի ... և զկ փեսատուն ՚ի Կափաւնէ||։ Իսկ առ ագաթանգեղոսի ՚ի յծգ. կոչի Կափայաւէ, կամ ըստ տպ. Կախայաւէ. առ ասողկայ ՚ը. 27. Կափաւէ։ Պարթևական համարի զա

Նունս (1) ագաթանգեղոս, որ և կոչէ զսա Վէրք, և դնէ յայս գաւառս։

Այնմէնի տիգրան կանգնեաց ՚ի սմա զպատկեր եփեստու դիցն Հրոյ, զբերեալն յելլադայ ՚ի ձեռն ա. արտաշէսի, շինեալ անգէն մեհեան, և առաջի մեհենին բա դիս. զորմէ աես ՚ի վերոյ զբանս խորենացւոյն։ Այլոյ մեհեան առ ագաթանգեղոսի կոչի Աբգհակեան մեհեան. *Վայր հասանելոյ (տգն գրիգոր) ՚ի Աբգհակեան (2) մեհեանն անուանեալ որդւոյն արամազդայ, ՚ի գիւղն զոր Խադայաւիձն կոչեն ՚ի պարթևաբերն լեզուէն. և զայն ՚ի հինգ բերեալ և զգանձս մեծերեալս աւար հարկանեն՝ և աղբատաց բաշխեն, և զտեղւոյն նուիրեն եկեղեցեաց. և զընակիչս աշխարհին հաստատեր ՚ի գիտութիւն Ճշմարտութեանն։

Ընդ ասողկայ ՟ը. 27. յիշատակի և Վաշտն յանուն տեղւոյս. Սպան ասէ՝ պոռտիլ զօրավարը ՟բ. վասլն կայսեր գլորտուանել ապստամբեն, * ՚ի Վաշտին Խագատձոյ ՚ի Վերջան գաւառի։

Խոյդրէն վանս, կամ Ա՚ Վրէիցս։ Վենատան՝ շինեալ ՚ի ՟ժ. դարուն ՚ի կրօնաւորացն հայոց հալածելոց յաշխարհէն յունաց։ *Այնպէս և ՚ի գաւառին Վերջանայ (աես ասողկ ՟ը. 7.) Խլաձորին անուանեալ վանք, որ ըստ վկայարանի նորին Ա՚ Վրիգոր կոչի, ՚ի ձեռն հօր Սիոնի հիմնացեալ։

ՍՊԵՐ։

Ադրավոն կոչէ զսա ՚ի ժա. դիրս՝ Այոբէրէրէս, և ստորև Այոբէրէրէս, զոր և յիշէ յետ Ագիլոսիոնի գաւառին՝ որ է Այկեղեաց. և որպէս թուի՝ է նոյն զոր ստորև կոչէ Խոբէրաբէս, ուր գտանի ասէ՝ հանք ոսկւոյ։ Կոստանդին պերփերոժէն ՚ի գիրս գաւառաց ՟ը. դնէ զԱյոբէրէրէս ՚ի սահմանակցութեան խաղտեաց, (ըստ որում է և Այսեր խորենացւոյն.) և դնէ զնոյն ՚ի փոքր Հայս, Հայեցուլ ՚ի վիճակ իւրոյ ժամանակի ըստ առման յունաց։ Ընդ չիչերոնի յատուկեան Ձառի կոչի Այոբէրա։

(1) Գանդի Բագին է բառ պար. (2) Թուի ելեալ բառգ ՚ի Մհր Թևական, որպէս և այլուր ՚ի նոյ բառէն պարսից՝ որ է արեգական։ րին պատմութեց յայտ է։

Օ այս գաւառ՝ բագրատունեաց սեփհական լինել ակ նարկէ խորենացին յասելն . ք. 34, կամ 35 . * | ուր առ նէլով գայեկի նորա (այսինքն ք. արտաշէսի) սմբատայ որդւոյ բիւրատայ բագրատունւոյ ՚ի Սպեր գաւառի ՚ի չէնին սմբատաւանի ‖ : Իւ ք. 43 . ՚ի գրելն վասն սահակայ բագրատունւոյ , թէ * | ղև քսուէն սուտ վնասնէ (առ ք. արշակ) յազգականաց իւրոց ՚ի Սպեր գաւառ ‖ : | ու այս և որդւոյ բագրատունի ՚ի փախչելն իւր ՚ի բակրոյ նահապետէն սիւնեաց՝ ՚ի Սպեր գնաց , իբր յիւր սեփհական գաւառ՝ ըստ գրելոյ խորենացւոյն ք. 60 . կամ 61 . * | ՚ի ձի ելեալ հանդերձ հարձիւն ՚ի Սպեր գնաց ‖ : | առաւ առ Թովմայի արծրունւոյ ք. 12. գտանելիք զմն բագրատունի՝ իշխանիկ անուն՝ բնակեալ յայս գաւառ ՚ի ժ . գաւրուն , որ էառ ՚ի յունաց զբերդն | ամանէ ‖ : * | ի գնաց գուրգէն ՚ի Սպեր գաւառ, և եր յայն ժամ առեալ (՚ի) յունաց գողաբար իշխանիկ կոչեցեալ ՚ի տոհմէ բագրատունի, զբերդն | ամանեակ [1] կոչեցեալ ‖ :

Յայսմաւուրս ՚ի մարտի 30 . յիշատակի և | էառն սուրբ՝ ուր ասի . * | ՚Ընդ իշան այն յաշակերտաց ՚որոյն սահակայ պապոն շուշանայ ... եկն եհաս ՚ի Սպեր գաւառ ... անդէն եկաց և գադաթեաց ամն է . ՚ի խորշ մի լերինն Սպերոյ ‖ :

Օ նոր յուսաբերութեն և զվարթապետութեն մեսրոպայ՝ ընկալան բնակիչք գաւառիս ՚ի ձեռն զևոնդեայ և էնոխ քայ աշակերտաց նորին երանելւոյ , զորս նա ինքն եթող վերակացուս յայս գործ : * | ղեալ (ասէ խորենացին ք. 60 .) վերակացուս յիւրոց աշակերտացն ՚ի նմին տեղւոջ զևոնդ և զէնոխ ՚ի Սպեր . . . ինքն եկեալ յայրարատ ‖ :

Սմբատաւան : խորենացին (ք. 34, կամ 35 .) կոչէ Շէն Սմբատաւանի [2] . իսկ վարդան՝ Աղբ , ՚ի գրելն վասն աշնատոյ մնակերի . * | ՚ի ինքն նմանեալ նախնւոյն իւրոյ սմբատայ որդւոյ բիւրատայ իշխանի Սմբատաւանայ՝ որ է Աղբ ՚ի Սպեր գաւառի [3] ‖ :

(1) Ըստ մարթ ստուգագոյն ինչ որոշել, եթէ արդեօք այս | ամանեակ բերդ՝ էր ՚ի սահմանին սպերոյ, եթէ արտաքոյ. քանզի որպէս զիշխանիկ բնակիչ գիտէ բանս Սպերոյ, ոչ նոյնպէս յայլ նահ. գուցանէ և զ | ամանեակ բերդ լինել ՚ի Սպեր :

(2) Տես զբանս խորենացւոյն ՚ի վեր անդր :

(3) Ա յսպէս դնեն երեք օրի. նակք . ըստ յայլ յերկուս հին օրի-

ՇՂԱԳՈՒՄՔ [1]։

Յայսմ գաւառի ըստ խորենացւոյն էին Ինապատ և Հովանաւոր տեղիք, ուր և ուսոյց Տրդն մեսրոպ զառաջինն խուժմբ աշակերտաց իւրոց։ * Մեսրոպայ (առ ՟ք. 60.) հեծեալ յԻնապատ և ՟ի Հովանաւոր տեղիսն որ Շաղ- գումբն անուանին՝ բովանդակեաց վարդապետութիւնս առաջինն առելոցն խմբից ‖։ Յիւղ զոյն և զազար յասելն ՟ի Թղթ. 253. * Կու ելթեալ յոքաղն (զօրավարն պարսից հազարաւուխտ)...լսեր ՟ի վաղիւն [ձեռ մամիկոնեանն վահան մտ է ՟ի նա ՟ի վարայր վարդն ՟ի հոռոմ տանն ՟ի գաւառին որ կոչի Շաղոմ ‖։ Սեղոնն մտ է ՟ի նա, խմնայ զՔաղեղ գաւառ տայոց՝ որում է տահմն նահիւց։

ԿԱՐԻՆ։

Պղնիոս Ե. 24. կոչէ Գաբաւնէրեա, զոր և անուանէ Նախարարութիւն մեծին Հայոց, և անդ դնէ զայն եփրատ տայ, որպէս և խորենացին ՟ի կարին։ Պտղաւմն՝ և մեր ձաւորագոյն բնիկ հնչմանն կոչէ ՟ի ժա. գիրս. Թղթ. 528. Գաբաւնէրեա, որպէս է տեսանել ՟ի ձեռագիրս ըստ վկայելոյ քաղաւպտի, և ըստ ուղղելոյ սալմասիոսի. վասն որոյ և հարտուխն սովին անուամբ բերէ ՟ի վկայութիւն. իսկ ՟ի տպագրեալն վրիպակաւ գրի Գաբինէրեա [2]։

Օսա միանգամայն ընդ քսերքսէսիի դնէ սպրալեն՝ Պանձանակէից գոտուն Հայոց, որպէս և է Ձչմարտութիւն. այլ յետ դնելոյ տահմանակից՝ դնէ, և ետուն ետրա այսինքն փո-

նակ՝ փոխանակ բառիս Բէրդ, գրի Բէբէրդ։ Տես վասն այսր զԲաբերդ ՟ի խաղտիս։

(1) Ասացեալս ունին երկու ձեռագիրք աշխարհագրութեան խորենացւոյն. ուր օրինակ մի՝ Շաղոմ. իսկ ՟ի տպագրեալն դնի Շաղոմ։ Ի պատմութեն խորենացւոյն ՟ք. 60. գրի ըստ ձեռագրացն Շաղոմ. իսկ առ զազարայ ՟ի Թղթ. 253. Շաղոմ։

(2) Ասյսմ ոչ մտադրելով մառ- դինեան՝ ՟ի բառն Գաբաւնէրեա, տա- րակուսի ընդ հարտուխն, և համա- րի՝ Թէ հարտուխն զայլ ինն տպա- գրութեն օրինակ տպրալենի կոչէ ՟ի վկայութեն, և ոչ զայն՝ որ է տուղ- բաւան. զի ՟ի Թուղթ 528. զոր նշա- նակէ հարտուխն, ոչ գաւ տաե զայն անուն։ Սխալ է նշանագրեալ առ մառգինեան նաև Թէ գրոց տպրա- վենի, զի բառս Գաբաւնէրեա ոչ է ՟ի ժա. գիրս տպրալենի, որպէս եգեալ կայ անդէն, այլ ՟ի ժք. գիրս։

քուն հայոց, որ վրիպակ Թուի գրչաց՝ զի է նեբրհական. վասն որոյ և մերժէ էլլարիոս զայն յետին քան սդրավոր նի։ Այլ ևս չէ պարտ շփոթել զայս Վարանիդիս ընդ Վարահա քաղաքին՝ յորմէ և գաւառն կոչեցաւ Վարանիդ. դիս ըստ սդրավոյն, զոր յիշատակէ ի ԺԲ. գիրս. Թուղթ 560։

Ասի դաշտ արձակ՝ որ յիշատակի առ լաստիվերտացին ի գլ. Բ. ուր ասէ վասն կայսեր վասլի. * Ի նէ. Թուաբ կանին . . . եկեալ ի քլևանս առնէ յընդարձակ Վաշան կարնոյ ։

Ազար յիշատակէ և զՕձն կարնոյ՝ յասելն Թղթ. 259.՝* Այլ զօրավարն հայոց վահան մամիկոնեան էր Թայր ընդ կոզին արևելից Օձոյն կարնոյ . . . և մնաբ շեղ ի տոհմէն մամիկոնէից, և նեբսէհ կամբարական տէրն շիրակայ ընդ կոզմանն հիւսիսոյ Օձոյն վրիպեալք առ փոյթ ժամուն ի զօրավարէն հայոց . . . և մերձեալք ի գիւղ մի կարնոյ՝ որում անուն էր արծաթի ։ Այս Ծովակ այն է՝ զորոյ խորենացին գ. 59. ստորագրէ զծաբ գումն ի գրէզն զբաղաքէն կարնոյ. քանզի ասէ. * Ի՛ կարի ի բացեայ տեղեացն՝ ուր եփրատայ մասին լինչ բղխեն աղբեւրք ականց, և հանդարտ գնացիւք յառաբ Քացեալ Ծովանան Օրաքար երևուԹիւք, յորում անբաւուԹիւք ձկանց, և զանազան հաւուց ձարակաւորաց, յորոց ի ձուոց միայն կերակրեալ լինիցէն բնակիչքն։ Այբ գեղերբ Օրին շամբք, և բազմուԹի եղէգանց ։ Տես զայսմանէ և ի Այր հայաստան. ի Թղթ. 60. 61։

Կարնոյ *աղաբ* (1)։ Յունարէն կոչեցաբ Ամֆոտոնո-ԲուԼէս,

(1) Ասացեալս կոչի ի խորագրի խորենացւոյն գ. 59. և յաշխարհագրութեան Թղթ. 33. ըստ երկուց ձեռագրաց. առ յովհաննու կաթողիկոսի և առ ստոփկայ՝ բազում ուրեք. առ սամուէլի՝ ի ձգ. Թուաբ կանին, առ լաստիվերտացին գլ. ժԵ. և առ կիրակոսի՝ որ գրէ վճ փոքուն Թէոդոսի։ * Եօտ հրամանի և աշխարհին հայոց չինել քաղաք ի կարին գաւառի, և անուանել զնա Թէոդոսուպոլիս, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք ։ Ասացեալս կոչի նաև առ յեսաղայ մատենագիրս, որպէս յայսմաւուրս մարտի 30։ * Գրիգոր առաբել զզօրս իւր քաղ արանց երբև երից հազարաց՝ վճ զօրացն յունաց որ էին ի կարնոյ քաղաքն Թէոդոսուպոլիս որ է Ասզառաբ ։ Վճ որոյ ոչ ուղիղ գրի առ ոմանս կարին *աղաբ*, որպէս տեսանելոյ է առ սահմանսն օրպէսզի անց յոտանաւորս ոմանք.

* Բագրատ և կարս՝ ը Բասենին,
Կարին քաղաք՝ Բարձրը Հային ։

Առ ասողկայ ի ը. 3. և 4. գրի Քաղաբ կարնոյ, ըստ որոյ հնչման Թերևս բնակիչն առ զաղարայ յերես. 259. կոչի՝ կարնաքի։ Թումմա արձրունի (ի գ. 4.) կոչի՝ կարնայինն *աղաբ*։

որ Հայերէն առ խորենացւոյն ՟Ը. 59. գրի ըստ ձեռագրին (Ա)ղեքսանդրիոյ, որպէս և առ յովհաննու կաթողիկոսի, և առ լաստիվերտցոյն ՟Ը: Ասէ առ ասողկայ ՟Ը. 7. առ կիրակոսի, և առ վարդանայ աշխարհագրի (Ա)ղեքսանդրիոյ:

Այս անուն Թարգմանի առ մեզ՝ (Ա)ղեքսի տղայ, նմին իրի ՝ի սոյն անուն կոչէ զսա Թովմա արծրունի յասելն. * Այլ ՝ի հասանելն ՝ի (Ա)ղեքսիոսի քաղաքն ՝ի կարին գաւառ, եհաս լուր նորա առ կայսր ||:

Պիտի՞նկ գրէ՝ Թէ կոչեցաւ նաև Վալէփալա. այլ զայս անուն յիշատակեալ յայսոցիկ եւ ՝ի եագուբայ՝ ուղղագոյն ևս կօլլիոս առ պատրանայ՝ համարի անուն Հասանգալայի, զորմէ տես ՝ի Այր հայաստան, ՝ի Թղթ. 87: Ասէ այժմ կոչի Այրզէռում:

Շ հինեցաւ ՝ի դաշտի կարնի գաւառի՝ առ ստորոտով լերին, զորոյ զտեղին այսպէս ստորագրէ խորենացին ՟Ը. 59. * Ա՛ւ կարի ՝ի բացեայ տեղեացն՝ ուր եփրատայ մանի ինչ բղխեն ակունք... և առ ստորոտով մի գեղեցկանիստ լերինն գտեալ բազում աղբիւրս ականակիստս և մանուսնս բղխեալ, անդ հետեղադրեաց [1] զքաղաքն ||:

Փոքրն Թէոդոս կայսր էտ շինել զնոյն ՝ի սկիզբն Ե. դարուն, ՝ի ժամանակս ատտիկոսի պատրիարգին կոստանդնուպօլսոյ, ՝ի լինել պատսպարան ընդդէմ պարսից, որպէս գրէ նա ինքն Թէոդոս ՝ի Թուղթն որ առ սահակ կաթուղիկոս առ խորենացւոյն ՟Ը. 57. * Հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ հայոց յապահովութիւն ձեզ մերոց զօրաց ||[2]:

Օ հրաման Թագաւորին անատոլիս զօրավար նորին եդ ՝ի գործ, և լցացոյց զշինուածքն [3], զորմէ պատմէ խորենացին ՟Ը. 59. * Օ որով (այսինքն զքաղաքաշէն) շնջափակեալ խոր փոսիւ անդնդալիր հաստատեաց զՀիմունս պատուարին, (որ է կրկնապարիսպն՝ ստորագրեալ

(1) Յայլում ձեռագրի Տէղդրեաց:

(2) Սխալին ասողկի և վարդան՝ որք գնեն ՝ի ժամանակս մեծին Թէոդոսի:

(3) Վերջացաւ այսր գործոյ շինուածքն գնէ վարդան աշխարհագիր զմուսէս քերթող, և զգաւիթ անյաղթ, յորոյ յառաւել որոշումն յաւելու հեղինակն յայսմաւուրս ՝ի փետր 19. Մուսէս խորենացի տէրաց գրէ. Ա՛ւլ չէք գտանել զայս առ նախնի մատենագիրս. և լռութիւն խորենացւոյն ՝ի պատմել կամ յիշատակել զայս, նաև անհամաձայնութիւն ժամանակին ընդ հասակի խորենացւոյն՝ ցուցանեն զստութիւն երացգ:

'ի Նոր Հայաստան (Թղթ. 66.) և 'ի վերայ բարձրաբերձ աշտարակս շինեաց աշտարակս, յորոց զառաջինն Աղեքսոս անուանեաց 'ի պատիւ Թէոդոսի. և 'ի նմանէ և անդր շինեաց աշտարակս ժայռաւորս իբրև զնաւացուցակս, և առանցս գոգաւոր խորշիւք՝ որք ընդդէմ Հային լերինն. ստպէս և ընդդէմ դաշտին հիւսիսոյ. իսկ ընդդէմ արևէ լից և արևմտից՝ կանգնեաց աշտարակս բոլորաձևս։ Եւ 'ի մէջ քաղաքին 'ի բարձրաւանդակ վայրի՝ մարթերանոցս բազմապատիկս շինեաց, և Աղեսիոն անուանեաց 'ի պատիւ Աղեսի (այսինքն՝ կայսեր)։ Եւ այլ ջուրս ածեալ ընդ յոլով տեղիս մտոյց անյայտ գնացիւք ||։

Պրոկոպիոս (1) ատորագրէ զշինուածն Աղեքսիւբոլիս քաղաքի ինչ 'ի մեծ Հայս։ * Իբրև Թէոդոս կայսր (ասէ՝ որով իմանայ ղիտքին,) գրաւեաց զԹադաւորուԹին արշակայ (այն ինքն է գ. արշակ որդի պապայ,) կառոյց բերդ 'ի բլրի ինչ՝ անուանեալ Աղեքսանդրիոն, դիւրին յառնուլ. որպէս և էառ իսկ կաւատ արքայ պարսից 'ի խաղալն իւր յամիդ։ Յետ սակաւուց անաստս կայսր շինեաց անդ քաղաք՝ պարսպաւ շրջապատեալ զբլուրն յորում էր բերդ Թէոդոսի. և Թէպէտ յիւր ա նուն կոչեաց զքաղաքն, այլ զանուն Թէոդոսի զնախկին հիմնադրի՝ ոչ կարաց խափանել... Այս պարիսպ Աղեքսանդրիոնեայ էր լայն յոյժ, այլ խոնարհ ըստ բարձրուԹեն, գոլով 30 ոտնաչափ. որով և դիւրին էր Թշնամեաց առնուլ, մանաւանդ պաշտից 'ի ժամանակս յարձակման։ Ոմանք իւր 'ի պատսպարուԹի պատուար ինչ, կամ պարիսպ փոքր, և ոչ իսկ խրամ, այլ ընդ հակառակն՝ վերամբարձ բլուր ինչ բարձրացեալ կայր 'ի մեծոյ 'ի վերոյ քան զպարիսպն։ Որոյն աղագաւ յուստինիանոս կայսր խրամ խոր առ պարսպաւ բացեալ, և զբարձրաւանդակն զայն հարթայատակ գործեալ՝ դարձոյց զտեղի նորին 'ի վիհն անմատոյցս և 'ի խոխոմն ահագինս։ Եւ առ 'ի ըզպարիսպ քաղաքին գործել բարձր յոյժ և անառիկ, եւ շինել 'ի նմա զայն ամենայն ամրուԹիս՝ զոր շինել առեալ էր 'ի տարս քաղաք։ 'Ի պարսպին անդ եՀոզ միջոցս բացեալս՝ որչափ ինչ բաւական էր 'ի ձգել զինս. շուրջ Քանակի ածեալ սրահ քարակերտ, և 'ի նմա Թողեալ այլ ևս միջոցս բացեալս, կանգնեալ արտաքուստ և այլ պարիսպ երկրորդ. զիւրաքանչիւր աշտարակս դարձոյց 'ի մի

(1) Գիրք Բ. շինուածոց. գլ. 5։

մի բերդ՝ նման պարսպին տարայն։ Այս այսպէս կարգեալ զսա զօրանիստ ամենայն զօրաց և զօրավարաց որ ի հայս՝ անքոյթ կացոյց զաղջն հայոց յարշաւանաց պարսից ||։

Վասնվի ցաստ պրոկոպիոս, յորոյ ի բանս երեք լինէ անվիաբան գտանին ստորագրութիւնք և պատմութիւնք խորհեցան. Ալան՝ ըստ խորենացին դնէ՝ Ալ ստորոտով լերին. իսկ սա՝ ի վերայ բլրոյ. Թէպէտ զայս մարթի ի համաձայնել։ Արկրորդ՝ խորենացին, որպէս և նոյն իսկ Թէոդոս կայսր ի Թղթին իւրում՝ կոչէն Վաղաք. իսկ սա՝ Աերդ, զոր նոյնպէս մարթի ի միաբանել։ Արրորդ՝ խորենացին դնէ շուրջ զքաղաքաւն վասն որ ի լերամ, Աշտարակս բարձրաբերձս, զանազան ամրութիւն. ըստ որոյ հաստատուէ կայսր ի Թէ եր և բարձրութիւն պարսպին. իսկ պրոկոպիոս՝ Աերդ փոքր՝ դիւրին յառնուլ. զոր Թէպէտ անաստաս ամրացոյց, այլ՝ի վերայ այսր աւ մինայնի՝ եր տկար, և պարիսպ նորա ցածուն։ Որով հնար ասել՝ Թէ պատմեալն աստանօր ի պրոկոպիոսէ՝ կամ է այլ՝ի Թէոդոսուպօլեայ խորենացւոյն, և կամ պրոկոպիոս զեղեալն նախ քան զյուստինիանոս՝ յորոյ ժամանակ նախ եր, հարեւանցի տեղեկութիւն ղրէ, քանզի խորենացին որ բազում ամօք յառաջ է քան զյուստինիանոս և զպրոկոպիոս, ոչ կարէր դնել զներամն և զայլ ամրութիւնն՝ զորս սա տայ յուստինիանոսի, բայց եթէ գուշակելով։

Այն պրոկոպիոս (1) յիշատակէ և զԹէոդոսուպօլիս՝ զոր և դնէ * ի հայաստան առ սահմանօք պարսկահայոց ||։ Այսինքն՝ առ սահմանօք այնր բաժնի հայաստանեայց, որ էր ընդ տերութիւն պարսից. որոյ գոլ սակ՝ զառաջինն Թէուղ լինէ, անուամբ Լեթ ունելով՝ ի Թէոդոսէ արժանապատուութիւն քաղաքի՝ յանուն Թէոդոսի կոչեր. այլ անաստաս կայսր պատեաց զայն Հզօր պարսպաւ, նման տարա քաղաքի. որով երկոքեան ևս եղեն մարտկոցք յարմար առ ի զգէմ ունել պարսից։

Ով այս մանդրնիկ համարի այլ՝ի վերոգրեալ Թէոդոս սիուրզեայ պրոկոպիոսի. և արդարև երկուս տարբերութիւնս ցուցանէ պրոկոպիոս. մի՝ զսա դնէ Թէուղ՝ յառնուն Թէոդոսի կոչեցեալ, սակս՝ի նմանել ընդունելոյ արժանապատուութիւն քաղաքի, և ոչ Թէ սակս շինութիւն լինէ առնելոյ՝ի նմա. երկրորդ՝ անաստաս պատեաց ասէ զսա Հզօր պարսպաւ. խակ վանն պարսպաց միւսոյն զոր շինեաց

(1) Գիրք ա. պատերազմին պարսից. գլ. 10։

անաստաս՝ գրէ, թէ Վիւրին էր յառնուլ։

Այլ եթէ հայեսցուք յոՀ պրոկոպիոսի՝ պարտ է զերկոսին համարիլ մի, որք յանուն Թէոդոսի կոչեցան, յա նաստասայ նորոգեցան, և ի յուստինիանոսէ ևս առաւել ամբացան։ Վասնզի պրոկոպիոս ի գիրս շինուածոց ի բարձրացուցանել զգործ յուստինիանոսի, զտկարութիւն շինուածոց առաջնոյ թագաւորաց մանրամասն պատմէ. իսկ զամրութիւնն զոր ապարին այլ թագաւորք՝ կամ ոչինչ, և կամ ի հարևանցի։ Յայտ է այս և ի վերայ տարայի գիրք ա· պատերազմին պարսից գլ· 10· ուր ի պատմելն զշինուածն անաստասայ՝ կոչէ, Վաղաք հզօր, ամուր, և հռչակաւոր· և գիրք բ· գլ· 13· ի ըստ միոջէ ստորագրէ զհաստատուածն պարսպաց նորին տարայի։ Ասէ ի բ· գիրս շինուածոց գլ· 1· ուր ունի պատմել զշինուածին յուստինիանոսի, զպարիսպ տարայի շինեալ յանաստաս սայ ցուցանէ տակաւ, ոչ առ երկարութիւն ժամանակին՝ այլ զի բուն շինուածն առ շտապելոյ չէր ասէ՝ շինեալ խնամով· և մանրամասն ստորագրէ զտկարութիւն։ Ըստ այսմ իմաստասիրելով և վասն շինուածին Թէոտոսիուպո լեայ՝ զերկոսին ևս համարիմք մի։

Ասէ զոր պրոկոպիոս ի բ· գիրս շին· գլ· 1· կոչէ զսա (այսինքն՝ զգրեալն ի ա· գիրս պատերազմին պարսից,) Ա՛ե-ա Ա՛ե-ոոսե-ե-ե-ե-ե, անդ տարբերել կամի՝ ոչ ի Ա՛ե-ո տոսիուպոլեայ՝ զորմէ խօսի զկնի ի բ· գիրս շին· գլ· 5· այլ՝ զորմէ սուղ ինչ յառաջ խօսեալ էր գիրք բ· շին· գլ· 5· որ է կառուցեալ ի միջագետս առ ամերբա գետով ի սահմանակցութիւն պարսից՝ տարբեր յերկոցունց ասէ։

Այլ թէ և զերկոսին Ա՛ե-ոտոսիուպոլիս պրոկոպիոսի որ ի հայս՝ համարեսցուք ի միմեանց այլևայլ սակայն զայն՝ զորմէ խօսի ի գիրս պատերազմին պարսից, պարտ է համարել նոյն ընդ Ա՛ե-ոդոսիուպոլեայ խորենացւոյն, որ է Արզնուում, որպէս համարի և մատթէոսեան· քանզի պրոկոպիոս ստորև ի գլ· 17· զակն եփրատայ հեռի դնէ ի Ա՛ե-ոտոսիուպոլեայ աստի 42 ասպարիզաք, որ առնէ սուղ ինչ աւելի քան զՅ մղոն, յարմար դրից Թէոդոսիու պոլեայ խորենացւոյն և Արզնուումայ։ Յորմէ և առաւել հաստատի ասացեալն մեր զպրոկոպիոսէ, զի սա ոչ յիշատակէ շինուածի ինչ արարեալ ի Թէոդոսէ յայս Թէոդոսիուպոլիս· և սակայն ի խորենացւոյն գիտեմք՝ որչափ ինչ արար նա անդ ի ձեռն անատոլեայ զօրավարին։

Յուստինիանոս կայսր ի Թէոտոսիուպոլիսն հայոց՝ շի-

նեաց և եկեղեցի յանուն Ս. Ծածկի, և մերձ ի Թէոտոս սիւնոյն նորոգեաց զմենաստան իւր. մատենագրաց, որ պէս գրէ պրոկոպիոս ի գիրս շին. Ք. 4։

Կաթողիկոսութիւնք քաղաքիս յիշատակին յայլևայլ գիրս. այսինքն՝ ի տոմարագրութիւնս Հարց Ժողովոյն Տւռմկլայու յամին 1179. Ս. Ծատուր եպիսկոպոս Թէոդոսիոպօլեայ։ Նոյն առ կիրակոսի յիշատակեալ ի ԺԲ. դարուն Սարգիս եպիսկոպոս. և ի ԺԲ դարուն՝ Աիմէոն պէպ եպիսկոպոս Կարնոյ։

Յայս քաղաք գումարեցաւ և ժողով եկեղեցական յաւուրս Եղբի կաթողիկոսի, և հերակլի կայսեր ի սկիզբն Է. դարուն, յամի 629։

Ի նմին քաղաքի նահատակեցան և երկու եղբարքն Սահակ և Յովսէփ յաւուրս ին. նիկեփորոսի կայսեր յունաց յամի 808. ի ձեռաց Հագարացւոց. որոց գէ րեզմանք կան մինչև ցայժմ կիզիհուսմ։ Տես ի նոր Հայաստան. Թղթ. 68։

Յետ կիրկուս տէրութիւն բաժանելոյ զՀայաստան՝ այս քաղաք էր ի բաժնին յունաց, և ընդ տէրութիւ նոցա. այլ ի 502. յելս օգոստոսի էառ կաւատ արքայ պարսից մանուէլ կոստանդինոսի զօրավարի՝ որ հրամանատար էր տեղւոյն [1]։ Ի յետագայ ամին՝ անդրէն առին յոյնք։

Ի սկիզբն Է. դարուն ի ժամանակս փոկասու կայսեր՝ աշտ ոմն հրամանաւ խոսրովու պարսից արքայի առնու զքաղաքն. իսկ զբնակիչս քաղաքին, և զկաթողիկոսն յո հան յետ երկուց ամաց փոխէ յահմատան. * Աշտ ոմն (ասէ յովհաննէս կաթողիկոս) հրամանաւ խոսրովայ հասեալ ի հայս, և դիմեալ ի վերայ՝ խորտակէր զզօրսն յունաց... և ինքն կալեալ զգործ պատերազմին ընդ Կարնոյ քաղաքի՝ առնոյր զնա. և յետ երկեամ ի ամաց զբնակիչս քաղաքին յահմատան փոխէ։ Եւ վասն զի ձե ռունէ կաթողիկոսն յահան կայր ի փախստականութե՛ ի նմա, ընդ նոսին և նա ևս ըմբռնեալ վարեալ ի գե րութիւն ||։

Ի 647. առաւ ի հագարացւոց կամ ի սառակինոց ասց [2]. ի նոցունց էառ կոստանդին կայսր կոպրոնիմոս ի 755. կործանեալով զպարիսպ նորա. և բացեալ զառն

(1) Գրէն զայսմանէ պրոկո պիոս, Թէոփանէս յամն 497։ Եւս դրնոս գիրք Ք. գլ. 37։ և Ցօսուէ, կամ Յեսու սիւնակեաց առ ասսեմանեայ հատ. ին. Թղթ. 272։

(2) Շարունակօղ սամուէլի։

դանձուց՝ զընակիչս քաղաքին զսառակինոսն նոցին ընչիք տարաւ յաշխարհն յունաց [1]· այլ՝ի յետագայ ամին, կամ ըստ կիրակոսի՝ զկնի երկուց (Թէրատ) ամաց, անդրէն շինեաց եղիտ, և զայլ տաճիկս բնակեցոյց ի նմա։

Ի 807· սոքա ընդհանուր՝ի քաղաքին կալսոյ՝ի միում աւուր և ևթ սպան ոգիս երեք հազար [2]։

Ի 950· կոստանդին պերփերուժն (յերկրորդ անգամ Թագաւորութեանն) առաքեաւ զօրու ծանուս զգնդիկ, պատառեաց զխանդակ (որ է խնդակ), այսինքն է՝ զներամքաղաքին· կործանեաց զբարձրաբերդ աշտարակս նորա· և այնչափ եառ զքաղաքն՝ի հագարացոց [3]։

Յետ այսց առմանց պարսից՝ի Թ· և՝ի Ժ· դարուն, վասիլ կայսրն առաքեաւ զնիկոմիդացի զոմն իշխան՝ի 1019· ակիզն առնէ վերստին շինել [4]։

Ի 1231· եառ խորազմն [5]։

Ի նմին Ժէ· դարու՝ իւանէ և զաբարիա եղբարքն հայկազունք որք զօրավարք էին Թամարայ Թագուհւոյն վրաց՝ հարկատու կացուցին Օ՞սուլանն կարնոյ տաղտկին, ըստ գրելոյ կիրակոսի։

Այլ փութով՝ի մէջ նոյն դարուն էանց՝ի ձեռս մահմադական Թաթարաց՝ի Հիճրէթէն 639· յամի 1241· որոց զօրավար բաչաղուչի անուն նախ գեղեցիկ առաքեաց տալ զքաղաքն· և զի բնակիչքն զգեստպանս անաւրդանօք արձակեալ նախատէին զնոսա՝ի պարսպաց անտի, սոցա սաստկութիւք՝ի վերայ յարձակեալ՝ առհասարակ կործանեցին գործեօք զպարիսպն· զբազումս՝ի բնակչաց կոտորեցին, և զինացեալսն գերի վարեալ՝ հրով այրեցին զքաղաքն, որ լի էր բնակչօք՝ի քրիստոնէից և՝ի տաճկաց։ Յետ ժամանակաց ինչ հրամայեաց եւտուն շինութիւն նոյն Թաթարք· կոչեցին և զեպիսկոպոս քաղաքին զՏէր Սարգիս, որ վերստին շինեաց զքաղաքն, յորում անդրէն ժողովեցան ցրուեալ և Թագուցեալ բնակիչքն։

Այիւս առումն՝ի Թաթարաց՝ի նմին դարու յիշատակ կի առ կիրակոսի, որպէս և այլ գործք՝ի ժամանակս դրութեն զոր հաւաքեաց առաքել պատմագիր։

Յակ՝ի ԺԷ դարու՝ի 1735· յայս քաղաք եղև դաշնադրութիւն օսմանեանց ընդ պարսից։

(1) Ասողիկ ք· 4· և 6։ և կիրակոս։
(2) Սամուէլ։
(3) Ասողիկ ք· 7։
(4) Լաստիվերտցի գլ· ք։
(5) Շարունակօղ սամուէլի։

Աբեթաղ ։ Կիւղ՝ ի հիւսիսակողմն Ծովակին (կամ ըստ խորենացւոյն՝ Աւօրէն) կարնոյ, զորմէ զաղար Թղթ. 259. * Աուշեղ . . . և ներսէհ . . ընդ կողմանն հիւսիսոյ ծո վուն վըիպեալք . . և մերձեալք ի Կիւղ մի կարնոյ՝ ո րում անուն էր Աբեթաղէի ։ Տես զայսմանէ և ի նոր Հայաստան . Թղթ . 77 ։

Կոլոբս ։ Կիւղ՝ զոր լաստիվերացին գԼ . ԺԸ . գնէ յայս կարին գաւառ ։ * Այս եկեալք անօրինացն՝ հասեալք ի գաւառն կարնոյ՝ մերձ ի Կեռղն որ կոչի Կոլոբս , և քանզի բնակիչք տեղւոյն չըջապատեալ (ելին) պարսպաւ զըլորն ։ , ևն ։ Այր և ընդարձակ պատմէ զառուն նորա յաստպատակաւոր պարսից ։

Հնձոյ վանք ։ Շ լինեցաւ ի մէջն անդ Ճ . դարուն ի կրօնաւորացն Հայոց՝ որք հալածեցան յաշխարհէն յու նաց ի պատճառս հակառակութեան ։ * Կոյսգունակ և նոյնօրինակ (ասէ ասողիկ ՟Բ . 7 . չինեցաւ) Ա անքն Հնձոյ ի կարին գաւառի ի ձեռն Տօրն Պարգի՝ ամենայն օրիւ նօք լցեալ ։ (1) Յայս մենաստան պայծառացաւ լեալ անդ Ճ . դարուն՝ առաջնորդ սորա Յովսէփ անուն , գո վուլթը հռչակեալ յասողկայ , և ի լաստիվերացոյն գԼ . ՟Բ ։ Տես զայսմանէ և ի նոր Հայաստան ի Թղթ . 75 ։

Աբեթաղ ։ Կիւղ՝ զորմէ բուզանդ ՟Բ . 12 (ըստ երկուց ձեռագրաց .) * Այրս այս խաղ բուն էր սա ի կարին գաւառի ի Կեղջէն Աարագայ ։ Այր ի տպագրեալն գնի Աբեթաղ ։ Այս խորենացւոյն ՟Բ . 20 . գրի Աբաթաղ . * Յանձն արար (մեծն ներսէհ զաղքատանոցսն) խաղայ , որ էր ի Աարագայ ի կարնոյ սարկաւագ իւր ։ Իսկ առ ասողկայ ՟Բ . 1 . գրեալ կայ Աբեթաղ , ուր ասի վանն նորին խաղայ . * Էաւ էր ի կարին գաւառի , ի Կեղջէն Աարգայ ։

Աբեթ ։ Յայսմ գաւառի գնէ զսա լաստիվերացին կա տեղն ի գԼ . Ժ . * Հրամայեաւ է քեզ Թագաւորն տեղի բնակութիւնէ ի կարին գաւառին Աբեթին Հանի . և ել լեալ Հայրապետին (պետրոսի) գայ ի մեծանիստ և ի շահաստան Վաղարշ մեր ։ Նոյնպէս և Հեղինակին ասո րագրութիւնէ չորից դետոց տպագրեալ գիրի աշխարհագրու թեն խորենացւոյն , զԱբեթն գնէ մօտ ի կարնոյ լերինս .

(1) Նթէ ստոյգ համարեսցուք պատիարգ նալեան համարի՝ զհետ զաւանդութեն արդի բնակչաց՝ որք երթեալ աւանդութեն , յայնժամ ի մեծէն Ներսիսէ չինեալ աստն չշինութեին պատմել յասողկայ՝ զայս մենաստան , որպէս և յակոբ պարտ է համարիլ նորոգութեն ։

Լ֊փրատ ելանել ասէ՝ ի Պարսից ներքին՝ մօտ ի Բ֊ծին հարաւ֊ կողմ լսատխվերացին՝ առեալ կոչէ զԲ֊ծն՝ Պաղաւ֊ էր. և ուրիք՝ Հրամայեաց և ախտաւոր ամենայն աշխարհին. և թէ՝ * Ա տձառականք սորա փառաւորք ... և իրրև ակն պա֊ տուական լուսազեղ պայծառութիք փայլէք Պաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց. ամենևեքին գեղեցիկ, բոլորովին զարդարուն ||:

Օ առուն նորա և զննաբարձ քանդումն ի ժա. դա֊ րուն՝ յաստպատակաւոր Թուրքաց և պարսից՝ ընդարձակ ստորագրեն մատենագիրք մեր, յորոց լսատխվերացին ի գլ. ժբ. գլխի ողջոյն՝ որովք ողջոյ զառուն և զկոտո֊ րած քաղաքին, յաւելու. * Ի֊ամենայն քաղաքն լի էր դիա֊ կամբք անկելոցն. վանառոյ փողոցք և նրբափողոցք և ընդարձակ սրահք ... Ակ գլխիւ քահանայիցն՝ որք ի տուր և ի հուր վախճանեցան՝ գտաք աւելի քան զ֊ծ, որք վիճակիւ տեառըք էին և եկեղեցւոյ || : Ակ ուռհայեցին մատենիչոս՝ կոչէ զնոյն Հռակառոր և Պաղմամբոն. * Հասա֊ նելին ի Հռչակաւորն և ի Պազմամբոն քաղաք Հայոց՝ որ կոչի Բ֊ծն, և գտեալ անպարիսպ զքաղաքն, և անդ թիւ բազմութիք լցեալ || : Օ թիւ սպանելոցն ասէ լինել իրրև բիւրս ժբ: Յիշէ՛ և զքրիստիկոսս քաղաքին Պաւեթուկ անուն. և ուր Հարիւր եկեղեցի ասէ լեալ ի քաղաքին:

Համաձայն մերոյն գրէն և մատենագիրք յունաց. յո֊ րոց կեդրենոս (1) անուանէ զնոսա քաղաքին Բ֊ծէ, և կոչէ Պիւզաքաքաղ (յն՛. Պօմբօլիս,) Թէպէտ և բիւ֊ բաւոր բազմութիք բնակչաց լցեալ ասորւոց և Հայոց, և բնիկ վաճառականաց. * Ոքը վստահացեալ (ասէ) յիւ֊ րեանց բազմութիք՝ չառին յանձն ընդ պարսպաւ լինել. այն գի և մերձ բնակեալ էին մեծի քաղաքին Թէոդոսու֊ պօլեայ՝ որ ամենապարիսպն էր և անմատոյց || : Ա֊ յս յետ պատմելոյ զառուն քաղաքին ի Թուրքաց, գԹիւ կոտո֊ րելոյն սրով և հրով՝ ասէ լինել * Իրրու Հարիւր քա֊ ռասուն Հազար արանց || : Ա֊յ այլազգ գրէ և զննաբաս ժէ. 25. զորոյ զբանս՝ քանզի Համաձայն են կեդրենոսի, և մերոց մատենագրաց՝ ոչ առնումք ի մէջ: Տես ի նոր Հայաստան. Թղթ. 83. Ա֊ռեր քաղաք:

(1) Ի մատենագրութեան բիւզան. հատ. Է. Թղթ. 604: Ակ տպ. դեան պատմագրաց, տպ. վենետ. փարիզու Թղթ. 773:

ՀՈՐՈՄՈՐԴ ՀԱՅՔ

Պահակին անուն նահանգիս՝ ի գիրս մեր՝ կոչի Ծոփք, կամ Ծոփաց աշխարհ. և՝ ի գիրս յունաց աղճատմամբ՝ Սոփքն. որպէս ունիմք ցուցանել ստորև։ Իսկ անունս Հորորդ Հայք՝ զկնի եղ յետ սահմանելոյ բաժանմանս ։ը. և ։գ. Հայք. որպէս և նոյն իսկ անունն Հորորդ Հայք ցուցանէ. զի առ ի անուանիլ Հորորդ, հարկաւ ի մէջ բերէ զերբեակ հայոյն։

Պռաջինն՝ առ որում գտանեմք յիշատակեալ զսորայս անուն՝ է գրեթէ խորենացին մեր, որ յիշէ յաշխարհս գրութիւն իւրում, նաև ի պատմութիւնն ։ւ. և ։գ. ։և։։ Մովսէսէ և յուստինիանոս ի ։։։. Նորահրամանեն իւրում՝ ակնարկէ նախ առաջին ինքեան սահմանեալ զայս նահանգ։ Այլ արդարև առ յոյնս յիշատակողք անուանս Հորորդ Հայոց՝ են զկնի յուստինիանոսի, որպիսի են գաւազանագիրք եպիսկոպոսաբանաց՝ որ յաւուրս Լեւոնի և մնասանոյ. և պերպերոժէն՝ ի գիրս կառավարութեան. գլ. 22։ Իսկ առ մեզ՝ յետ խորենացւոյն հազիւ ուրեք՝ ի գործ ածի սորայս անուն. որպէս առ ասողկայ ։գ. 36. և առ յովհաննու կաթուղիկոսի, բայց և այն՝ վն պատմելոյ զբաժանումն արամայ և մերկայ, և ոչ՝ ի գործ ածեալ ինչ՝ ի բանի։

Պնուն Հորորդ հայոց փոխեցաւ՝ ի մերկայ կայսերէն, և կոչեցաւ Յուստինեան Նախ, ըստ վկայելոյ յովհաննու կաթուղիկոսի. * Այլ զՀորորդն կոչեցեալ հայք, յաւուրս մայրաքաղաք է Մարտիրոսացպօլիս՝ այսինքն Կիրկեսա, (կոչեաց) Յուստինեան նախ ։։։ Պայլ զայս անուն ոչ այլ ուրեք գտանեմք՝ ի գործ արկեալ։

Օ գիրս սորա խորենացին գնէ՝ Պրն երի բարձր հայոց. յայտ է թէ՝ ի հարաւայ կողմանէ նորին։ Յարևմտից նորա անցանէ եփրատ գետ՝ եկեալ յԵկեղեաց գաւառէն.

զի որովհետև եփրատ բաժանէ զմեծ Հայս ի փոքր Հայոց, և Ծոր[ր]որդ Հայք՝ է վերջին արևմտեան կողմն մեծին Հայոց, ըստ ցուցանելոյ խորենացւոյն, Տարկ է եփրատայ քերել զարևմտեայ կողմամբք Ծոր[ր]որդ Հայոց։

Խորենացին ի պատմելն իւրում, և յովհաննէս կաթողիկոս՝ զԾոր[ր]որդ Հայս արտաքոյ մեծին Հայոց ցուցանել երևին. քանզի խորենացին ի ։ 13. ասէ վասն արամայ. * ի տեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանն՝ զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Եկրկրորդ՝ և Եկրրորդ՝ անուանեցան Հայք, այլ և Ծոր[ր]որդ։ Ա՛յս է առաջին և ձշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն Եկրաջին, և Եկրկրորդ, այլ և Եկրրորդ և Ծոր[ր]որդ Հայք։ Ոմն իւր սահմանն ասէլ՝ իմանայ զմեծ Հայս, յորմէ տարածքեամ կացուցանել երևի զԾոր[ր]որդ Հայս, ըստ որում կացուցանէ զմիւս եբեսին Հայս. իսկ Ա՛րևմտեան մեր կողմն կոչելով՝ իմանայ զփոքր Հայս, յորում բովանդակեալ ցուցանէ զԾոր[ր]որդ Հայս։

Որոշագոյն ևս յովհաննէս կաթողիկոս զնոյն ցուցանէ. * Ա՛ռ ի Նոտից (ասէ) մինչև ցքաղաքն մծուրիոսաց՝ և յաշխարհն աղձնեաց արևմտեայ՝ (կոչեաց արամ) Ծոր[ր]որդ Հայք, այս մինչև ցսահմանս բնիկ տէրութեանն իւրոյ։ Իսկ թէ բնիկ այն սահման՝ էր մեծ Հայք, նա ինքն յաւելու. * Իսկ զսեպհական և զբնիկ աշխարհն իւր Հայ մատուցած՝ զսա Մեծ Հայք անուանէ։

Ասացեալ յայնց բանից խորենացւոյն, և այլոց աշխարհագրաց՝ այլազգ պարտ է իմանալ զայս բան։ Ո՛ի նախ՝ նոյն ինքն խորենացին յաշխարհագրութեանն իւրում զԾոր[ր]որդ Հայս կացուցանէ ընդ. նահանգ մեծին, և ոչ փոքունն Հայոց։ Ա՛յ երկրորդ՝ որպէս խորենացին՝ նոյնպէս և այլք առհասարակ՝ զեփրատ գետ բաժանիչ դնեն մեծին և փոքունն Հայոց. և զփոքր Հայս ձգեն մինչև ցեփրատ, և ոչ երբէք յայնկոյս եփրատայ յարևելեան կողմն, ուր է Ծոր[ր]որդ Հայք։ Որոշակի քան զայլսն ազգաւոն գՈՓիլ նի՝ որ է հին անուն Ծոր[ր]որդ Հայոց՝ դնէ յայնկոյս յարևելեան կողմն եփրատայ, հանդէպ գոմոլինի գաւառին ասորւոց՝ զորս բաժանէ եփրատ գետ։

Ա՛յս այսպէս բան խորենացւոյն որ առ Ծոր[ր]որդ Հայս՝ Թուի ինձ վասն անուանակոչութեանն լինել, և ոչ վասն դրից ասացեալ. որպէս Թէ ասէլ Ա՛րամ Ա՛րաջնոյ Հայոց սկսեալ մինչև ցՄեծ Հայս՝ զանբնակ կողմանս ելից բնակ

չօք, որք Հրիփսիմեայ, և Հրիփսիմեայք անուանեցան. այլև Հայրարդ Հայքն և վասն այսր պատճառի յանուն մերոյն արամայ կոչեցան, և ոչ յանուն այլոյ ումեքէ բամայ՝ որպէս յոյնք կեղծեին, զորմէ տես ի փոքր Հայս։

Յովհաննէս կաթողիկոս ի վերոգրեալ բանիդ զՀայրարդ Հայս որպէս ցուցանէ լինել արտաքոյ մեծին Հայոց, նոյնպէս ցուցանէ ձգեալ մինչև յարևմտեայ մասն աշխ նեաց։ * Մինչև (ասէ) ցքաղաքն մարտիրոսաց՝ և յաշխարհն աղձնեաց արևմտեայ, (այսինքն՝ յարևմտեան կողմն աղձնեաց, կոչեաց արամ) Հայրարդ Հայք ։ Եւ որպէս չէ մարթ ի բաց առնուլ զքաղաքն մարտիրոսաց ի Հայրարդ Հայոց՝ քանզի ամենեքին անդ գնին, նոյնպէս չէ մարթ ի բաց առնուլ զաշխարհն աղձնեաց արևմտեայ. քանզի նովքին օրինակաւ բանի գնէ զերկոսին։ Այս արդարև ջնդիրկերպ՝ զոր խորենացին գնէ, գաւառ աղձնեաց, յովհան կաթողիկոս և այլք ոմանք համարին լինել նոյն իսկ քաղաքն մարտիրոսաց՝ որ է ի Հայրարդ Հայս. և զՄիդ՝ որ է քաղաք աղձնեաց, գաւազանագիրք եկեղեցւոյ կայսեր լեռնի խմասանց՝ գնէ ի Հայրարդ Հայս, թէպէտ և զՀայրարդ Հայս առնու անդէն ընդարձակ չափ։

Յորմէ թուի՝ թէ այն առնային սահմանն աղձնեաց՝ որ ձգէր յայսկոյս տիգրիսի, այսինքն՝ յարևմտեան կողմն կամ յաջակողմն տիգրիսի, կոչեցաւ նաև Հայրարդ Հայք, կամ շիրեզով՝ և կամ կամսուր իմն փոխոխումբ, անց մամբ ժամանակաց իբր միով անուամբ կոչել զայն ամենայն սահման Հայոց՝ որք անկանին ընդ մէջ եփրատայ և տիգրիսի ի սկիզբն միջագետաց։ Վասնզի Հայրարդ Հայք գրեթէ զամէն գետն տիգրիս՝ որ ընդհանուր ընդ մասն ինչ սահմանի սորա, և գործէ զսկիզբն կամ զվերջին և զմիջնորդ կողմն միջագետաց, որով և մասն ինչ Հայրարդ Հայոց անկանի ի միջագետս՝ և կոչի Ադիաբենա. ոչ միայն պէս առեալ Ադաւառ կամ Ասհմանն միջագետաց՝ որ է ի հարաւոյ տօրոսի արտաքոյ Հայաստանեայց, այլ ըստ որում անկանի ի մէջ երկուց գետոցն եփրատայ և տիգրիսի։

Այլն իբր վասն տօրա, և վասն աղձնեաց՝ պարտ է իմանալ զբան պրոկոպիոսի [1]. * Միջագետք է (ասէ) անուանեալ՝ ի դրից իւրոց որ ի մէջ գետոց, որպէս և է

(1) Գիրք պատերազմին պարսից. ա. 17։

միաբան կարծիք, թէպէտ և մասունք նորա բաց ի հա սարակ անուանէ աստի՝ և այլով անուամբք կոչեցան. զի ոմանք զայն սահման՝ որ ձգի (սկսեալ ի վերուստ ի հիւ սիսոյ) մինչև ցԱՄիդ՝ կոչեն Հայաստան ։ Իսկ ոմանք յանկ պրոկոպիոս՝ թէ այն սահման թէպէտ էր Ինջա գետք, այլ կոչէն Հայաստան անուամբ, որպէս և վեղե սիոյ գաւառն (ասէ ստորև՝) թէպէտ է Ինջագետք, սա կայն կոչէն Ասրոհեի ։

Սակայ և ի վերոգրեալ ծանօթութենէ անդ եպիսկո պոսարանաց, Ծորրորդ հայք՝ կոչի Ինջագետք, զի գնի խորագիր. * Գաւառ Վերին Ինջագետաց, կամ Ծոր րորդ Հայոց ։ Վասն այսորիկ և զմարտիրոսաց քաղաքն պրոկոպիոս ուրեք գնէ ի Հայաստան, և ուրեք ի միջա գետս. և կեդրենոս ի թվին. 686. զնաորբերդ քաղաք Ծորրորդ Հայոց՝ գնէ ի միջագետս. որպէս և այլք զար շամուշատ ։

Բայ ի գետոյն Ափրատայ և Տիգրիսի՝ ընդ մէջ Ծոր րորդ Հայոց անցանէ Ափրատայի գետ, կամ միւս մեծ վտակն եփրատայ բղխեալ ի ծագկոտան ։

Ունի զնեառն Կոհերայ, զորմէ ասղնիկ գ. 43. * Ափ անցեալ Թագաւորն ընդ հանձիթ, և ընդ բալոլ՝ ելանէ ի լեառն Կոհերայ ... որ ընդ մէջ Հաշտենից՝ ծովից՝ և խորձենոյ ։ Ափլ զայսմանէ լեզի բան և ի ներածու թենէ հին հայաստանեայցս ։

Ունի և զԿովակն ի սահմանին իւրում, որ ըստ վար դանայ՝ մերձ է ի բերդն մեծկերտոյ ։ Ծ բանս նորա տէս ստորև ի ստորագրութենէ մեծկերտոյ ։

Խորենացին յաշխարհագրութենէ իւրում յիշատակէ ինչ ինչ և ի բերոյ նահանգիս, յասելն. * Ունի Ծոր րորդ Հայք բերդս, և գետս, և լերինս, և Խլրեղ. ոնի և Իրէս, և Հաւս, և Զկունս. և ի գաղանաց՝ զԱրիծ ։ Վասն առիծուն գտանելոյ ի միջագետս, վկայէ նաև սդրաւեն ի ժէ. գիրս ։

Ծ այս նահանգ ապականեաց և անապատ արար ի մարդոյ և յանասնոյ կայսրն Թէոփիլոս ի սկիզբն Թ. դարուն ։ Իսկ ի նմին. ի վերջնում աւուր քաղց ամոյն յաւին 995, աւերակ արար Երկրաշարժութենէն, յորմէ հերձան լերինք, պատառեցան վէմք, բացան աղբիւրք և ջուրք յանկղմին տեղիս, և ցամաքեցան եղք սովորական ջուրց. և գաւառքն հաշտեանք, խորձեան, ծովիք, բա լու, և պաղնատուն, և ամենայն շինուածք առհասարակ

կործանեցան ՚ի հիմանէ դղրդեալք, ըստ գրելոյ առաղ-
քայ Ի. 36։

Ոմանք գաւառս դնեն ՚ի սմա խորենացին, որք են.

Ա. Խոյենան.	Ե. Ոտփ. (1)
Բ. Նաղդեանք.	Զ. Նանչէն.
Գ. Պաղնատուն.	Է. Գոլբէ. (2)
Դ. Խալմովիտ.	Ը. Գնեփէ.

Յաւտենիանոս կայսր այսպէս կարգէ զՁորրորդ Հայս. * Կացուցանեմք (ասէ) նաև Ձորրորդ Հայք, որ յա-
ռաջ ոչ ՚ի ձեռ նահանգի բովանդակեր, այլ ազգացն էր,
և ՚ի բազում խուժադուժ անուանց հատաքեալ։ Պրդ-
քաւինք. Ինղէրենք. Գողքանք. Կոդեանենք, և կոչեցեալն
ի ալալէրենք. և սադրաբաց հպատակեալ։

Ոչ այս անուն մեծուքեն չէ հռավմայեցւոց, և ոչ նախ
նեաց մերոց, այլ յայլմէ տերութենէ մուծաւ։

Ոչ այսպէս զարդարեցաք և զսա քաղաքական պետու-
թեբ և շքով, կարգեալ իշխանութեն քաղաքական անդա-
նօր, (3) և ՚ի մարդիրոքոլսեաց քաղաքին, և ՚ի Գէրնաբէ-
ղեն բերդէն ||։

ԽՈՐԶԵՆԱՆ։ (4)

Յայս անուն կոչէ և աստղիկ, և լաստիվերացին գլ.
ԺԶ. առ որում գլ. իե. գրի և խոշոյն։ Կորիւն կոչ
խոշյենեան գաւառս. և բնակիչն առ խորենացւոյն Ի. 54.
կոչի խոշյենացի։ Որ պատմէսոսի՝ գրի խոշոյ, զոր դնեն
առ եփրատաւ։ (5) Պրոկոպիոս ՚ի գիրս պատերազմին

(1) ՚Ի տպագրեալն աշխարհագր. խորեն՚. զնի Ծոփաց գնի Շոփս գաւառ, որ չնք ՚ի ձեռագիրս, և է ընդդէմ Թուոյ զոր նշանակէ խո-
րենացին. քանզի նոյնս գաւառ հանդէպ լինի՝ և ոչ ուրեք լինէին Գաւառաք Ձորրորդ հայոց։

(2) Յօրինակ մի Գովբէ. յայլ օրինակ՝ Գոբէ։

(3) Չկրիս իշխանական տեղիս երևի ակնարկել բանիւս. և Թեր-
ևս Աղեքսիոր առելով գիտէ իմա-
նալ զպետութեն Պրքասական՝ կար-
դալ յիւրմէ ՚ի խորզանէ. զոր
մ. ստորև։

(4) ՚Ի տպ. աշխարհագր. խորեն. գնի խոշյեն. և ՚ի միում ձեռագրի՝ խոշյանեան։

(5) ՚Ի յառաջաստացեալ ծանո-
թութենէ եպիսկոպոսարանաց՝ գրի Ուրհաեդես. վրիպակաւ ՚ի բաց Թո-
ղեալ զառաջինն տառն։

պարսից ՟Ը. 24. կոչէ Խոսրէանիկս. և ՟ի գիրս Հինաւտնոց ՟Գ. 3. Խոսրանի։ (1)

Որ և ասէ գաւառ սահմանակից պարսից տէրութեան (2) զոր յայնժամ ունէին, ձգեալ գրեթէ եռօրեայ, երկիր բազմամարդ, այլ անպատասպար ՟ի վաղուց անտի. ոչ ըռնի ինչ, ոչ գետով, և ոչ լերամբք բաժանեալ ՟ի սահմանէն պարսից. յոր սակս բնակիչք նորա երբեմն հնուվ մայեցւոց, այսինքն՝ յունաց, և երբեմն պարսից հնազանդ դիմեն. նաև խառն ՟ի միասին բնակիմեն, և հաղորդիմեն անբաժանելով։

՟Ի միջի անդ գաւառին՝ էր Վիւղ ինչ Աբդալաճ ա նուն, զոր յաւտնիանոս կայսեր պատեալ ամուր պարսպաւ՝ արար բերդ հզօր, և կացոյց զօրս ՟ի պահպանութիւն, կարգեալ ՟ի վերայ նոցա պետ՝ զոր հռոմայեցիք (այսինքն յոյնք) լատին անուամբ կոչեցին Կոմս, և այնպէս ամ բացայայ առհասարակ զայն սահման։

Ա՛յսոքիկ սահմանացս և մերս լաստիվերացեալ ՟ի գլ. ժգ. յասելն. * Օ խորձեան և գՀանձէթեան յոր ժամ յիշեմ, և որ ինչ ՟ի նոսա գործեցաւ (՟ի սուլտան Նէն պարսից յալփասլանայ,) հատկիմ արտասուօք... (քանզի) բազում և անհամար հոգիք ՟ի վերագոյն գաւառացն (այսինքն ՟ի գաւառաց Նէրքին հայոց) վանս տեղացն Աղթամարայ անգր ժողովեալ էին. յորոց վերայ հասեալ անօրինացն.. և խիլ արկեալ ՟ի բարանձաւս և յանտառախիտ մայրիս՝ անյագաբար կոտորէցին զորս և գտին ||։

Յիշատակէ և զանտառան խորձենոյ՝ յասելն ՟ի գլ. ժգ. վանն առաքատակոց Թումբասայ՝ Թէ եկեալ գէղան * Յընդարձակ գաշտն բասենոյ և կալնոյ.. յարեւմտեան մինչև զոր սպրտեն գիրք ժգ. գնէ ՟ի հայոց տան, չէ պարտ շփոթել ընդ խորձենոյ. քանզի տեղի նորա ոչ յարմարի ոչ ընդ խորձենոյ, և ոչ ընդ կորձէից, որ և հարաւային գաւառ մեծին հայոց։ * Քարզինի (ասէ) և Գամիլիսենի անկանեին յաւառել հիւսիսային կողմն, ուստի և են առաւել ձիաշտապաւք, վերաբերեալք առ լերինս կովկասու, առ վիրս, և առ կողքիսէ ||։

(1) Յիշատակի սորայս անուն և առ պերփերուժէնն (գիրք կառավարութեան. գլ. Ծ. Թիվ. 135։) * Խոսրանա երբեմն էր ընդ սահմանիկացովք, որպէս և առաջագոյն ||։ Սովին հնչմամբ գտանեմք ուրեք և ՟ի գիրս մեր մատենագրաց խոշն անուամբ գաւառ կամ քաղաք ՟ի Ճորրորդ հայս, զորոց ըղբանս չէ ինչ գիւրին այսոցգ խմանալ, և գյիշատակել առնիսդ այլ ուր քան ՟ի խորձեան կարգել։

Ա՛ՍԼ ԸՌՕՐՉՆԻ անուն գաւառ

(2) Ջայս գաւառ արիստակէս լաստիվերացի ՟ի գլ. ժգ. Թուէ ընդ գաւառս Յեկեղեաց ՟ի վայր։

՚ի խաղտեաց գաւառն . . . իսկ ՚ի հարաւ մինչև ՚ի տարօն, և մինչև ՚ի գաւառն Հաշտենից , մինչև Աղձատաւ Խոր ձէնոյ ‖ :

Եպիսկոպոսունք գաւառիս ոչ ուրեք առ նախինս չէ շատակին նախ քան զԺԳ . դարն . յորում՚ի պատմուԹիւն . Ժողովոյն սոյ Աիշատակէ՝ Փիլիպպոս եպիսկոպոս Խորձէնոյ :

Աղ ստորև՚ի ստորագրուԹիւն եպիսկոպոսաց՝ կոչի նա ինքն Փիլիպպոս՝ եպիսկոպոս Աղձոյ . որով իբր անտարակոյս՝ համարի Աղձն գնէ ըստ մասին լինել՚ի Խորձէան : Տես գԱղձն ՚ի նոր Հայաստան . ԹղԹ . 106 = 110 :

Մորմբանս : Աիւղ բերդաւոր՝ զոր լատինվերացոյն՚ի գԱ . ժա . դնէ՚ի գլուխ գաւառին Խորձէնոյ : * Աղձն (պարսիկք ասպատականաւորք դարձեալք՚ի մերմէնոյ փո քուն Հայոց) ընդ Խորձայն . . . եկին մինչև՚ի գլուխ գաւառին՚ի Կեօղն որ կոչի Մորմբանս : Աս այն գի Աերդ ունէր Կեօղն՝ յոր ժողովեալ էին ամենայն բնակ կիչք տեղւոյն . . և երԹեալ որ գլխաւոր էր նոցա (այս լինքն՝ պարսից,) բերդին առաջի՝ սկսաւ բանս լինչ խօսել առ որ՚ի բերդին իշխանն էր . . . Աս որ՚ի Աղձոյին իշխանն էր, ‖ ևն :

ՀԱՇՏԵՆԱՆՔ :

Յունարէն առ յուստինիանոսի գրի Աղթանէնէ . առ պրոկոպիոսի շին . Ք . 3 . Աղթանէնէ . ՚ի նախայիշեալ ծանօԹուԹէ եպիսկոպոսարանաց՝ նոյնպէս ՚ի սեռականն՝ Աղթանէնէս , ուր և դնի՚ի Ջորրորդ Հայս . իսկ առ պրոկոպիոսի գրի՝ Աղթանէնէս :

Ասա գրիցն՝ մերձ է՚ի տարօն , և միայն ձորով խիւք բաժանեալ յայսմանէ , որպէս յուցանէ խորենացին ԳԼ . 7 . * Աղաբէ գնոսա բնակել՚ի գաւառն Հաշտենից , և՚ի ձորն նորին Մահմանակաղ՝ որ է արտարծոյ ‖ :

Յայս գաւառ և՚ի սահմանակից ձորն բնակէին առն նայն ուստերք և դասերք ազգային Հայոց՝ որոց ոչ անկաս նէր Թագաւորել : Ակիզն արար այսմ վաղարշակ արքայ . որոյ քանզի բազում՚ուստերք էին՝ ոչ պատշաճ վարկաւ առնել ամենեցուն մնալ՚ի մծբին՝ ուր նստէր յայնժամ, այլ միայն զառաջինն որդին իւր զարշակ պահել առ իւր՚ի լինել յաջորդ ԹագաւորուԹէ , զայլսն առաքեաց աստ,

Թողլով՝ի նոսա նաև զամենայն շէնս, հանդերձ յատեանս լուացման առանձին մտից և ուռկից կարգելոց յարքունի նուստ. * Եւ եղև այս (ասէ խորենացին Բ. 7. իբ ձեռագրաց 8.) յայնմհետէ և առ յապայ օրէնք՝ի մէջ արշակունեաց՝ միոյ որդւոյ բնակել ընդ արքայի, փոխանորդ լինել թագաւորութեն. և այլ ուսաւերաց և գտեր գնալ՝ի կողմանս Հայաստենից յազգին ժառանգութիւն ||:

Ը. գործադրութիւն այսր օրինաց մարթ է տեսանել առ խորենացւոյն Բ. 33. կամ 36. Գ. 22: Այս արքայական զունք քանզի յոյժ բազմացան յաւուրս Ա. տիրանայ՝ զերկիրն Հայոց բաժանեցին ըստ մարդաթուի, և բազումք՝ի նոցանէ առ պակասութեն տեղւոյ՝ելեալ բնակ կեցան՝ի գաւառսն աղբոյովտի և առբերանւոյ, զորմէ տես առ խորենացւոյն Բ. 59. կամ 60:

Բաց յարքայազանց որք բնակէին առստ, ունէր և առանձին իշխան որ յիշատակի առ խորենացւոյն Գ. 4. առ ղստզարայ, առ մեծրոպայ, և առ բուզանդայ Գ. 12. Գնութիւն անուն՝ի Աշխնահան տոհմէն, և ոչ յարքայազանց:

Ոստան: Գնւղ՝ յիշատակեալ՝ի վարդանայ՝ի մեկնութեն ծննդ. Բ. 14. ուր և գնէ զակն տիգրիսի՝ յատեանն. * Տիգրիս որ Գնկլաթ կոչի՝ եւանէ՝ի Ծորբորւէ Հայոց՝է Հայտէն գաւառէ, և՝է Գեղջէ Ոստայ ||:

Գէղեհ: (1) Գեօղ՝ զորմէ յովհաննէս մամիկոնեան. * Գնացեալ էջ՝ի Հայաստան՝ի Գեօղն զոր Գէրեհն կոչեն, ՝ի ջրառատ վայրան ||:

Հանդիսատան: ՝ի Հայաստանս գնէ նոյն յովհաննէս մամիկոնեան՝ի թղթ. ՃԿ: Այլ մեզ անծանօթ, գեօղ արդեօք, թէ այլ տեղի՞ւ ինչ:

Գլուխ արձանին: * Գարձաւ (ասէ զէնոբ՝ի թիւն ԺԷ.) (2)՝ի գաւառն Հայոց, և եկն քանակեցաւ՝ի Գլուխ արձանին՝ վանն ընդարձակութեն վայրացն ||: Ուր նորին զէնոբեայ թղթ. ՃԷ.՝ի տպ. և՝ի ձեռ". Թուի որ՞ շէն գայս տեղի՝ի հաշտենից: (3) Գերեւս նոյն է սա ընդ ձան երկաան, և ոչ անուն լոկ, զի ասէ. * Եկին (միհրան)՝ի գաւառն հաշտենից.. մինչև Արձանն: Եւ երբեմն ընթերցան զգիր Արձանին՝ խորտակեցին զԱրձանն քարեայ ||: Եւ փոքր մի զկնի. * Ասկ երեւ. (ղօրք) դեռ Արձան անդր կային ||:

(1)՝ի տպագրեալն թղթ. ՃԿԷ: Ընտ այլ ձեռագրաց՝ դնի Կէհ:

(2)՝ի տպագրեալն թղթ. Հղ. այլազգ դնի:

(3) Այլ ինն գրէ վանն Արձանին հաշտենից յովհաննէս մամիկոնեան՝ի ՃՀ. և յուցանէ զնոյն արձանն՝ի ՃՀ. և ոչ անուն լոկ, զի ասէ. * Եկին (միհրան)՝ի գաւառն հաշտենից.. մինչև Արձանն: Եւ երբեմն ընթերցան զգիր Արձանին՝ խորտակեցին զԱրձանն քարեայ ||: Եւ փոքր մի զկնի. * Ասկ երեւ. (ղօրք) դեռ Արձան անդր կային ||:

Ա.րձան կոչեցեալ տեղւոյն՝ ուր անկաւ Ա.րձան քըր-
մապետ ։

Ա՛ուրելիայ ։ Օ որմէ գենուք՝ ի ձէ. * Նա եղեալ յան-
դիմանն նոցա ի քաջանէր՝ ի Ա՛ուրելիայ Կաեսրն Հաշտեցնից ‖ ։
Ուր՝ ի ձեռագրին եդեալ կայ՝ ի Ա՛ուրելիամարդն Հաշտենից ։
Ալեռձ ։ Ա.տողիկ ը. 2. կոչէ զնա Վռաղաւ Հաշտենից.
որ՝ ի լա. նորահրամանին յուստինիանոսի՝ և՝ ի նախա-
սացեալ ծանօթուքենէ եպիսկոպոսարանաց՝ յունական
հնչմամբ և աղճատմամբ՝ ի սեռական հոլովին կոչի Վռնա-
ենէն, և գնի՝ ի Ազորդոդ հայս.[1] զոր պրոկոպիոս՝ ի
գիրս շին". ը. 3. առաւել ևս որոշելով գնէ՝ ի Ա.սիա-
նեինի գաւառի՝ որ է Հաշտեանք ։

Ա.պիսկոպոս տրա՝ ի ժողովին տրուղեան յետ առնե-
ցուն ստորագրեաց զանուն իւր այսպէս. * Ա՛արիանոս
անարժան Ա.պիսկոպոս Վռիթարիզացւոց ։ա. հայոց[2] գա-
ւառին ‖ ։

Ալնքեր բերդ ամուր և ընդարձակ, զոր շինեաց յուս-
տինիանոս կայսրն՝ ի վերամբարձ տեղւոջ քաղաքին, ա-
ծեալ՝ ի նմա ջուր առատ. և անդր հաստատեաց դուքս,
մի յերից անտի՝ զորս կարգեալ էր՝ ի կառավարութիւն իւ-
րում բաժնին հայաստանեայց ։

Հետև գնէ զսա պրոկոպիոս՝ ի գիրս պատերազմին
պարսից ը. 24. ՝ի Թէոդոսուպօլեայ՝ ջրից աւուրց ձա-
նապարհաւ ։

ՊԱՂՆԱՏՈՒՆ ։[3]

Ա.ր մատթէոսի յիշատակի Պաղնայ գաւառ, որ թուի
լինել նոյն ընդ սմա, և՝ ի նմանէ ածանցեալ վերոգրեալ
անունդ՝ իբր Պաղնայպատառ ։ * Ա՛ատեան (ասէ) առ թա-
գաւորն մինամախ... և մատուցանէին չարախօսութիս

(1) Ա՛ր լըքիէնի ա. 453. վրէ-
պակաւ է գրեալ՝ թէ յուստինիա-
նոս եդ զԳիթարիզն, կամ լատին
հնչմամբ Գիթարիզա յերկոտրդ
հայս ։ Եւ ինքն լըքիէն գնէ զսա
՝ի կարգս քաղաքաց ը. հայոց. զի
որովհետև ստորագրուքենի տրուղ
ղեան ժողովոյն գնէ՝ ի ա. հայս.
խակ ա. հայք նախ քան զժողովն
և նախ քան զյուստինիանոս կո-
չէր աոէ ը. հայք ։ Բայց յայտ է
թէ ը. հայք ոչ անցանէր յայս-
կոյս յարևելեան կողմն եփրատայ,
ուր է Գիթարիզն կամ Կթուիճ.
ուստի վրիպակաւ գրչաց սպրդեալ
երևի՝ ի բան ժողովոյն՝ ա. փոխա-
նակ ը ։

(2) Տես զնախընթաց վերլու-
ծուքենէ ։

(3) Ա.յսպէս գրի յերկուս ձե-

վանն փառաւոր իշխանացն Հայոց՝ որք ի Դաւառն Պաղ նայ բնակեալ կային ‖ :

Ի գաւառէ սմանէ էր Յովհէփ մին յառաջին աշակերտաց Սրբոց Թարգմանչացն՝ ըստ յիշատակելոյ կարեան և փարպեցւոյն, որք կոչին զնա Յովնէփ ի Պաղանեան տանէն :

Ունէր բերդ Պաղին անուն՝ յիշատակեալ ի սմանէլէ յամին 827. և յասողկայ ՟ք. 7. * Իակ որ կարծիք Հայոց ի ծածից գաւառին (1) մինչև տաճկաց էր աշխարհն՝ բնակեր անգ. և յաւուր միում գնաց առ ամիրայն ի Կարճն Պաղին ‖ : Կայժմ է գիւղ. զորմէ տես ի նոր Հայաստան Թղթ. 226 :

Ի Դատեկոս յիշատակէ առ ժամանակօք մինոմնախոս կայսեր յունաց և զվնասեղաղայ ամիրային, և ցուցանէ լինել ի նմին գաւառի. * Ի նմին (ասէ) ի միաբանելոցն (իշխանացն Հայոց գաւառին Պաղնայ) Յորոսակ անուն տէրն Մծլազազայ ուրացաւ զերդումն ‖ :

ԲԱՂԱՐՈՅ ՀՈՎԻՑ կամ ԲԱՂԱՐՈՎԻՑ (2) :

Յայսմ գաւառի Թուի անկանիլ այժմեան բերդն Խլաթայ, և յանուն նորին կոչեցեալ անուն գաւառին՝ իբր Խլաթայ հովիտ : Ի վերոգրեալ գաւառանդաղիս յիշատակի այս բերդ, կոչելով Խերդ վլոխս, կիմ լատին հնչմամբ Պօլոխս. կամ որպէս ասացաւ՝ Խերդ Խալիմ : Իւ ասացաւ կայ ՟ք. 36. յիշատակի և կործանումն բերդին Խալատայ ի նմագ Թիւ. Հայոց. * և Խերդն (ասէ) Խալոս, հանդերձ շինուածովն և քարն ևս վիրազանիւք ‖ :

Ընդ վարդանայ յիշատակի և Լեառն Խալատայ. ուր համարի վարդան առեալ զոչն մեսրոպայ վնշանագիրս : * Որպէս ասացին մանաւանդ (ասէ) ի լեառն սմնայ, և անտ գրեան Խաղախովիք. որ է կերդ ձառնայն առաջնոյն. ուստի Խաղախովիք կամ Խաղախոյվիք, ինձ Թուի լինել հին անուն, և ասաի ապա ածանցեալ միտն Խալահովիտ, կամ Խազախովիք : Այլ այս անուն է, որ ի լեռ. Նորատիրանին յուսանիանոսի գրի Վալենտիոսի. և ի գաւառանդագիրս լեանի Խաղաձոյ առաւել աղճատեալ՝ Վիլովիտիոս :

ագիրս խորենացւոյն. խակ յայլսմ ձեռագրի Պաղնայոցն. միայն ի սպագրեալն Խաղաձոյն :

(1) Ի բանից ասի չէ պարտ կարծել Թէ ասոյիկ զՊագին գնէ ի Ծոփս. քան զրուժ և ի կարգ է բանիցն է ուսանել :

(2) Եւ յայսմ անէն մին ի ձեռագրէք աշխարհագրութեն Խոբենացւոյն. ուր ի միում յայլ գրի Խաղախոյվիք. խակ ի ապա

'ի լեառն Խալեայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն ահագին ձիոյ վրայի՝ և նկարք գրեթին. և պատուի տեղին խնկով և ջահիւք միշտ 'ի տաճկաց և 'ի քրիստոնէից բնակչաց տեղւոյն ‖։ Տես 'ի նոր Հայաստան գԽալեայ. 'ի Թղթ. 224։

ԾՈՓՔ. Ի. ՍՕՓԻՆԻ. Ե ՍՕՓԱՆԻՆԻ։

Գաւառ երևելի՝ յորում՝ ա. Ա աղաբշակ կարգեաց իշխանութեի մեծ։ * Հաստատէ (առ խորենացին էջ. 7. կամ բստ այլ ձեռագրի 8.) զԱՌՆԴ նահապետութիւնն Ծոփաց 'ի Ազորդոյն կոչեցեալ Հայոս ‖։ Ա. որպէս ակն արկէ՝ Ծոփք էր անուն նահապետութեի և ցեղին, զոր վաղաբշակ կարգեաց իշխան Համբրէն յորդոյ Հայոց. և յայնմանէ ընկալաւ անուն և գաւառն. Թէպէտ և փոքր իշխանք նստէին յայլ գաւառս 'ի. Հայոց ։ Ա. Հնչակ էր իշխանութեի տոհմ, մինչև սպրդանքի կոչել փոքր Թագաւորութեի. զի դիրք ժէ. Թղթ. 555. վերագոհս նմանեալ ցուցեալ Ծոփաց՝ ասէ. * ԱՌՈՒՄ որպէս և Սօֆինկի (Ծոփաց՝) իշխեցին փոքր Թագաւորք ‖։

Ա. Մեծութեի այսր իշխանութեի որպէս Թուի՝ ՆՈՓ կոչեցաւ ոչ միայն այս գաւառս ուր նստէր իշխանն, այլ նաև համբրէն նահանգն յորդոյ Հայոց. զի մատենս դիրք զՆՈՓս բազում ուրեք առնուն փոխանակ Հայոց ։ Յայտ է այս նախ անտի, զի ուր խորենացին էջ. 88. կամ 89. զարքեզայս կոչէ վերակացու Հայոց, * Ա. քեզայս որ էր կարգեալ վերակացու Ազորդոյն կոչեցեալ Հայոց ‖։ Ոմանք արքեզայս յոլհանեա կամ Թոռնակոս կոչէ՝ Կոռնակ ՆՈՓՈՑ աշխարհին ։

Ազորդ՝ զի ուրանօր լիշատակին կարգաւ իշխանք զանազան գաւառաց կամ նահանգաց մեծին Հայոց, ոչ լիշատակին ուրեք իշխանք 'ի. Հայոց. իսկ ընդ հակառակն՝ բազում ուրեք լիշատակին իշխանք Ծոփաց, բստ որում է տեսանել առ ագաթանգեղոսի 'ի Թղթ. յԳէ. ուր 'ի լիշատակելն զիշխանս ազգենեաց, մնկաց, սիւնեաց, ուռհայոցց աշխարհին, որք էն իշխանք նահանգաց մեծին Հայոց, ընդ նոսին գասի և Իշխանն ՆՈՓՈՑ աշխարհին ։ Այսպէս է տեսանել և առ մեսրոպայ, բուզանդայ. և այլն ։

Ազորդ՝ զի բազում ուրեք զՆՈՓս Աշխարհ անուանէ

կոչէն, յոր անուն սեպհական է կոչել զնահանգս, և ոչ զգաւառս. վասն որոյ բուզանդ Ե. 4. յայսմհետէ յերկուս բաժանել զՕտիս, յասելն. * Օ գանիել մեծ իշխանն Օտիաց ... և զնոյն իշխանն Ի՞սոյ Օտիաց ։ Այլ յերկուց Օտիաց ասաի զմին կոչ Օտէ մեծ, և զմիւսն Օտէ չափաւոյ ։ Յայսմհետէ սխալին ասել Ե. 24. * Ինդ աղջնիս, և ընդ Օտիս մեծ, ընդ անգեղ տունն, և ընդ գաւառս անձամայ, ընդ Օտիս Շ ա հնունց ։ Կոչ Շ ա հնունց՝ յամուն ցեղին. ըստ որում այլոցն Ե. 9. միանգն Օտէ անուանել զսա, շատանալով գնել յորոշումն՝ զիշխանն որ ի նոյն ցեղէ. * Օ իշխանն մեծի Օտիաց զմար, և զիշխանն Օտիաց Շ ահէնէ նեբսէհ ։ Օ սոյն զայս Օտիք շահունց Ե. 12. կոչ Օտիաց ազնաբդ. * Օ ա րեկ իշխան նահապետ Մեծի Օտիաց, և զվարազ Շ ա հնուի իշխանն Օտիաց աշխարհին ։ Որով ըստ բուզանդայ՝ Օտիաց աշխարհ որ է Ե. Հայք, կոչի Օտէ չափաւոյ՝ Օտիաց գաւառն՝ Օտէ մեծ։

Ի նահանի մատենագիրս յունաց կոչի Աօքինէ, զոր և ապրաժան գիրք Ժա. Թղթ. 521. կոչ Աօքինէ գեղջն Հայոց. և ի զանազան տեղիս զգիրս սորա նշանակէ, որ համաձայնի գրից Ե. Հայոց, կամ աշխարհին Օտիաց ։ Ուստի զի գնէ զսա առ եփրատաւ՝ ի հիւսիսոյ մեծմոյ, ընդ միջ մասիս լերին և անտիտօրոսի, և ի հովիտ անդ որ ձգի ընդ միջ տօրոսի և անտիտօրոսի հանդիպ գոմմագենոյ՝ սահմանակից միջագետաց. քանզի գրէ՝ Թէ տօրոս լեառն է որ զԱօքինէ ի պայ ծագեալ հայր ի ծիրանեաց բաժանէ ։ Այս այսպէս վայրապար քաւեփանոս կոչէ զԱօքինէ, Կոմագենոյ որ գերի էն ի հայապան ։ Այս առաքէ վասն այսր ի ժա. գիրս ապրաժանի. զի նա ինքն ապրաժան ոչ ի միջմասիս Հայոյ՝ այլ ի նոյն իսկ ի հայս գնէ զԱօքինէ՝ որպէս յայտ արարաք, և որպէս յայտ առնէ նաև նոյն իսկ ատեփանոս՝ յորժամ զգոմմագինեի գնէ հանդիպ սօֆինեի, սահմանակից միմեանց. վասն որոյ և պէրքեի լիսս մեկնիչ ատեփանոսի ծանուցանէ՝ Թէ զԱօքինեի պարտ է գնել ի սահմանս Հայոց ։

Յառաջ քան զգրաժան առաւել ևս ընդարձակ ձգէր սահման Աօքինեի, մինչև նաև ապիլսեմի գաւառ Հայոց էր ընդ նովաս, որպէս նա ինքն գրէ ի նոյն գիրս. Թղթ. 530։ Համաձայն ապրաժանի և պաղտիոս զսօֆինի գնէ մերձ ի խոտրուժն անդ եփրատայ ի հարաւ։ Այսպէս և ի ՕանօթուԹէ եպիսկոպոսարանաց

(զոր բազում ուրեք յիշատակեսաք) ի ՟ք. Հայս դնէ Աօֆինի՝ անմիջապէս նախ քան զՀանձիթ, համաձայն խոր լենացւոյն. ուր որպէս յայտ է, զգաւառն Ծոփոց կամի նշանակել Հելինաին, և ոչ զնահանգն որ է նոյն իսկ ՟ք. Հայք։

Յատին մատենագիրք ըստ հնչման իւրեանց գրին զսա Աօֆենէ. յորս բամբասիս մեզ [1] դնէ, ի կարգս գաւառացոյն առորուց, և ոչ Հայոց. նոյնպէս և պլինիոս [2] յաւորիս դնէ, կամ արտաքոյ Հայաստանեայց. որպէս և ՟ի գլ. 9. զբնակիչս գաւառին զԱօֆենէնս միանգամայն ընդ առիսպէնոց արտաքոյ կացուցանէ Հայաստանեայց։

Այլ ասելի է նախ՝ թէ ամենայն հին օրինակք մեզայի դնեն անդ ոչ Աօֆենէ, այլ Ակօզֆոնէ, որպէս վկայէ իսաւ հակ վօսսիոս. իսկ օրինակք պլինիոսի ՟ք. 13. գրին Ակֆենէ, և ոչ Աօֆենէ. և ՟ի գլ. 9. Ակֆենէ, որպէս ճաւ նուացանէ, սալմասիոս առ 37. գլ. սօլինոսի, ուղղագրելով զպլինիոս. թէպէտ զայսմանէ ևս ոչ յիշէ Տարտուին մեզ նիչ պլինիոսի։ Այսելի է երկրորդ. եգեալ թէ Աօֆենէ անուանս ուղղութիւ դնի ՟ի նոսա, սակայն ոչբա զանուանս Այորէ ընդարձակ առնուն. վասն որոյ և մեզ յայն բան զաւրասպէնէ և զբաբելոն դնէ յասորիս՝ որ էր յասորեստան. որպէս և Թուղլաթ զբաղդէսացիս դնէ յասորիս. տէս վասն այսր ՟ի Ձերբատոս վօսսին [3]։ Յաւտինոս պատմագիր ՟ի սաորագրելն զՀայաստան [4] յիշէ զԱօֆենէն, առանց ՟ի բաց հանելոյ ՟ի հայաստանեայց. ՟ի նմին եգեալ զերկրորդ ակն տիպրիսի, կամ զի վեր յառնելն նորին, յետ ընկղմելոյն յերկիր։

Այն այս Աօֆինէ կամ Աօֆինի է՝ որ Աօֆանէնէ կոչի առ արրիանոսի, ըստ վկայելոյ տեւիանոսի առ տիմնի. դիրք Լ՟ Այոյնպէս և տեսանել և առ պրոկոպիոսի [5] որ ասէ. * ՟ի Հայաստան Աօֆանենի [6] կոչեցեալ՝ ի քաղաք Աարդիրծոլիս անուն՝ կառուցեալ առ նիկեփիոս գե տով։ Այե ՟ի գլ. 3. * Այս է (ասէ) անուն տեղւոյն ՟ի Աօֆանենի Հայոց։ Այե այլուր. [7] *Պարսիկք անդրէն

(1) Գիրք ՟ա. գլ. 11։
(2) Գիրք Է. գլ. 12։ Այե գիրք ՟ք. գլ. 13։
(3) Գիրք Թ. Սկզբ. կառապաշտութ. գլ. 6։
(4) Գիրք Խ՟. գլ. 3։
(5) Գիրք շինուածոց ՟ք. գլ. 2։
(6) ՟Ի լծ. նորահրամանին յաւտոկրատորէն պարսից արքայէն Խոսրովայ, առ ՟ի նշանակել զինչութիւն ծ. տաճիս, զոր պահասի առ յոյնս։
(7) Գիրք ՟ա. պատերազմին պարսից. գլ. 21։

արշաւեցին ՚ի միջագետս ... զ՚Արդիրոքոլիան յորոյ պահպանութեն կարգեալ էին վրաքիս և վէգան՝ պաշարեցին. այս քաղաք կառուցեալ է ՚ի Սօֆանենէ՝ հեռի յաւիւղայ մի. ասպարիզօք ՚ի հիւսիսակողմն առ նինփիոս գետով, որ զսահմանս հռոմայեցւոց բաժանէ ՚ի պարսից ||: Օ այս Սարտիրոսաց քաղաք՝ զոր պրոկոպիոս դնէ ՚ի Սօֆանենէ, յովհաննէս կաթողիկոս որոշակի դնէ ՚ի Ջ. հայս. և հին Թարգմանիչք վարուց Տրդի մարտիրոսի կոչեն Նոտաց քաղաք, և այսպէս Սօֆանենէ և նոյն իսկ Սօփենէ, կամ Նոտք:

Ա.յլ չէլարիոս անծանօթ աշխարհագրուէ մերոց մանեակաց, ուստի և անտեղեակ Ձգրիտ գրից աշխարհիս հայոց՝ Ձգնի ցուցանել [1] Թէ Սօֆանենի պրոկոպիոսի՝ այլ է ՚ի Սօփենէ գաւառէն՝ զոր սգրաւին և պաղտէոս դնեն ՚ի հայս, ստիպեալ յերկուց: Այ՛ զի Սօփենէ է առ եփրատաւ և առ անտիտօրոսիւ. իսկ նինփիոս գետ որ անցանէ առ Սարտիրոսաց քաղաքաւ Սօֆանենի գաւառին՝ խառնի ՚ի տիգրիս գետ, որով և Սօֆանենի պրոկոպիոսի ձգի առ տիգրիսիւ: Այրկրորդ՝ զի խառնումն նինփիոսի ՚ի տիգրիս՝ Թուի լինել ՚ի միջագետս, և ոչ ՚ի հայս. զի ամենայնում՝ որպէս նաև պրոկոպիոս մերձ ՚ի վերոգրեալ նինփիոս գետ դնեն զ՚Ամիդ, զոր չէլարիոս կարծէ լինել միայն քաղաքաւ միջագետաց, և ոչ հայոց:

Ա.յլ առ առաջինն՝ յայտ է Թէ սգրաւին ոչ դնէ զՍօֆենէ ձգեալ միայն առ եփրատաւ, այլ ըստ մասին ձգի նաև առ տիգրիսիւ ՚ի վերին կողմանս ընթացից նորա. զի որպէս գրեցաք ՚ի վերոյ՝ յատենիոս ՚ի Սօֆենէ դնէ զայն տիգրիսի, և մեր մանեանագիրքն ՚ի Ջ. հայս՝ որ է նոյն: Օ այս առաւել ևս յայտ առնէ այն՝ զի Վարդանեմիոգերդա՝ որ ըստ սգրաւինի անկանէր ՚ի Սօֆենի՝ էր քաղաք կառուցեալ առ տիգրիսիւ, որպէս ունիս տեսանել ՚ի ստորև:

Իսկ առ երկրորդն՝ ասելի է, Թէ Ա.՛միդ ըստ նորին իսկ պրոկոպիոսի՝ է ՚ի հայաստան, և գոլով նոյն իսկ Տիգրանակերտ քաղաք, նաև ըստ նմանի մանեանագրաց այլոց ազգաց՝ սգրաւինի, պլինիոսի, և պաղտէոսի՝ անկանի ՚ի հայս. ուստի և առաւել Սօֆանենի որ էր ՚ի հիւսիսոյ ամդայ՝ անկանի ՚ի հայս: Ա.յսմ Թէ տեղեակ

(1) Տե՛ս Ջ. գլ. 15. Թիւ 39:

լինէր ելլարիոս, ոչ գրէր, *Ա՛յլ է ասել այս Յովհաննէս (պրոկոպիոսի՝) ի Յովհաննայ մեծին Հայոց (պրաւմնի,) որ ձգի ի հիւսիսային միջագետս ի վերոյ քան զնախիպին ||, այն է մծբնին։

Որ յայսմանէ ընդդիմանայ կարծիք իւր՝ իւրոյ բանից. զի եթէ Յովհաննայն ձգեալ ի հիւսիսային միջագետս՝ ի վերոյ քան զմծբնին, է սահմանն Հայոց, ևս առաւել Յովհաննէն անկանի ի սահմանս Հայոց, որ ըստ պրոկոպիոսի՝ է ի վերոյ կամ ի հիւսիսոյ քան զԱ՛միդ. զի Ա՛միդ ի հիւսիսոյ է քան զմծբնին՝ որպէս յայսմանէ գիտէ և ելլարիոս յայտնարարեցոյց իւր։ Ա՛րդ՝ առաւել հիւսիսային կամ վերագոյն կողմն միջագետաց՝ առաւել սեպհականն մանն է հայաստանեայց, քան թէ նուազ հիւսիսայինն, որպիսի է մծբնին առ ամիտա։

Այլ պատճառ վրիպելոյ ելլարիոսի այն է, քանզի համարի՝ թէ ոչինչ մանն միջագետաց անկանի ի Հայս, վասն որոյ և այլազգ մեկնէ զբանս պրոկոպիոսի վասն միջագետաց [1]. իբր զի՝ զայն վերին սահմանն ձգեալ մինչև յամիդ՝ ցուցանէ լինել բնիկ միջագետք ստորև, կամ՝ ի հարաւոյ տօրոս լերին, և միայն պիտակաբար կոչեցեալ Հայաստան. որ է ընդեմ այլոց մատենագրաց, նա և ընդդէմ ստորագրութեանն պրոկոպիոսի. զի զբազում քաղաքս որք անկանին ընդ մէջ երկուց գետոց եփրատայ և տիգրիսի՝ գրեթէ մինչև յամիդ՝ գնէ ըստ այլոց ի Հայս [2]։

Այսպիսկոպոս յանուն այսր գաւառի յիշատակի առ փոտիոսի ի մատեանն ծբ. ուր Յաւուրմա կոչի Յոփքէնեանց Այսիսկոպոս. զոր այլք կոչեն Այսիկոպոս քաղաք քին մարտիրոսաց՝ որ էր յայսմ գաւառի։ Այս ի ստորագրութիւն ժողովոյն հռոմկլայու յիշատակի Յուստինոս եպիսկոպոս ծոփաց։ Այսպէս ի ստորագրութիւն ժողովոյն սոյ՝ որ եղև ի 1307. յիշատակի Շ մաւուն եպիսկոպոս Յովհաննէս զահապանեաց, որ Թուի լինել Նոփք շահնուց [3]։

(1) Տե՛ս զանս պրոկոպիոսի ի վերոյ ի ներածութիւն նահանգիս եր. 39։

(2) Տե՛ս վասն այսր և ի ներածութիւն նահանգիս, ևս և ստորև ի ստորագրութիւն ամիդայ. որպէս և միջագետաց՝ յայլ հատորս։

(3) Յիշատակի ուրեք առ Թովմայի մեծոփեցւոյ եղեալ ոմն աշակերտ գրիգորի սանհացւոյ՝ լինել ի սահմանս նահիջեւանու, զի ասէ. Ա՛ստ մայրաքաղաքին Նախճաւանայ, զորմէ չունիմք ինչ ասել հաւաստի՝ թէ նայն կայ ընդ Յովհաննէս շահապուհ նեաց, կամ ընդ Շահունեաց, կամ Շահենի ծոփաց՝ յիշատակելոյն ի բուզանդայ. ուր և առաքել պատմիչ գլ. Ը. Թղթ. ի 12. յիշէ գաւառ ինչ միքաէլոյ ըստ հնչման՝ նահիջեւանայ։

Վաղաք Աբրահամայ, կամ Աբրահամայ ազգաք։ Զբ յովհաննու կաթողիկոսի կոչի Աբրահամայ պօղէս, որպէս նաև առ ասողիայ, որ է նոյն. զի Պօղէս՝ կամ ըստ յունական նմին Լուկէս՝ Վաղաք թարգմանի առ մեզ։ Ի գիրս յոհաննայ գրի Աբրէհոլէս, խակ ի գիրս ասորւոց Էնխնաա առաքե, որ չնորհն նշանակէ։ Հայց յաճախ կոչի առ նոսա (որպէս և միւսն առ արաբացիս,) Անքաբրէն. ուրեք ուրեք և ի գիրս մեր կոչի Կիբէրէբ։

Ի վարս մեսրուժայ՝ զոր յասորւոց թարգմանեցին հայքն գագիկ, և գրիգոր սարկաւագ, կոչի նաև Վաղաք Ծոփաց, յանուն գաւառին. նոյնպէս կոչի և առ ասորիս մատենագիրս ինչ, միայն զանունս Ծոփաց ազատագեալ ունելով. զորմէ տես ի վերոյ և զհանս ալրոկոպիոսի։

Գոտանի առ ասորիս և այլ հին անուն քաղաքիս, այն է Գաբէրէբ, որ անծանօթ է առ մեզ. և միայն զԳէգէս գաւառ չորրորդ հայոց գոտանեամբ մերձաւոր հնչման առ նա։

Յուստինիանոս կայսր կարգեաց զսա Այրարատ չորրորդ հայոց, որպէս յայտ է ի լիս. Նոտարհամանի նոր բա. և ըստ վկայելոյ մաղաղասայ ի սկիզբն ժէ. գլխոյ, ի նորոգելն իւրում զքաղաքն՝ փոխեաց նաև զանունն։ *Այլ կայսր զքաղաքն հայաստանեայց զանուանեալն Արտիքրտլիս նորոգեաց, և Յոստինիանոբէլէս կոչեաց. զՆնաձեալ եղծեալ պարիսպ նորա և զարտ առհասարակ անդրէն կառուցեալ, և զգունդ սրևելեան ի նմա կարգեալ։ Ա ամն որոյ և յովհաննէս կաթողիկոս Այրարատաւք անուամբ կոչէ, յասելն վասն մերկայ կայսեր. * ԼուզՁորրորդն կոչեցեալ հայք, յորում Այրարատաւք Արարատայ պօղիս՝ այսինքն նախրկեալ, (կոչէ մերկ) Յոստինէ պէսաա նէա։ Այնպէս և վարդան ի նմին պատմելեան մերկայ զայն զայս կոչէ Այրարատաւք բ. հայոց. * ԼուզՁորրորդն հայք՝ յորում Այրարատաւք Յոստինէն (1)։

(1) Այն է սա որ առ ասորիս և առ արաբացիս կոչի Անքաբրէն, տառագարձութիւն առ մեզ գրեալ Աբրէհոլէն, որ առ կիրս կոսի գրի ուրեք Անքաբրէն. Ի Քինչդեա անցանելն (առ՝ զորբ հուլաւան խանին Թաղարաց) ընդ Քաղաքն մարտիրոսաց՝ որ կոչի Անքաբրէն։ Լուտասիվերա յին ի գԼ. ի գրէլն վան յա-

նախչուանու կայ գաւառ մի զոր անուանեն Շաբառնոյեաց, և յայսմ գաւառի կայ գիւղ մի զոր անուա նեն Օթոմ. և մերձ այսմ գեղջս կայ չինեալ ի վաղեմեայ ժամա նակաց վանք մի յանուն սրբուհւոյ Տեծանէնին, զոր անուանեն Օթոմա վանս։ Եւ այս գիւղ յիշատակի և ի գրուածս ինչ Յահկայ ի ԺԲ. դարուն։

Ա. յս քաղաք ըստ պրոկոպիոսի հեռի է յամիգայ միջ-
բեայ Ճանապարհաւ քաջազօտի առն, կամ որպէս այլոք
գնեն՝ մին. ասպարիզօք, այսինքն ՟ը մղոնաւ. իսկ յահմանց
տիգրիսի՝ մե. մղոնաւ, (որպէս գնի ՛ի Ծանօթութե՛ն եպիս-
կոպոսաբանաց,) կառուցեալ յառաջ քան զքրիս մարու-
թիա։ Ա. յլ մարութիա (որ ՛ի սերնդոց մերոց էր ՛ի նախա-
բարեզուն ազգէն հայոց,) ընդէր գտեալ առաքի կայսեր
Թէոդոսի փոքու, խնդրեաց ՛ի նմանէ ամրացուցանել
զայն՝ ամրագոյն պարսպաւ [1] և ՛ի մէջ քաղաքին շինել
տաճար, առ ՛ի նմա հաւաքել մնոն ենչ ՛ի նշխարաց ամե-
նայն սրբոց, որպէս և եղև իսկ։

Թէպէտ նշխարացն զորս մարութիա հաւաքեաց անդր ՛ի
զանազան աշխարհաց՝ ոչ ՟ը միջոկ նշանագրի ՛ի հինն վարս
նորա։ * ՛Ի հռոմայոց իշխանութենէն ձև ի՛ւր. և յաստ-
բեստանեայց ի՛ւր. և յիշխանութենէն պարսից ձո՛ւ. և յիշխա-
նութենէն մերմէ (որոյ իմնակ գՀայս, որպէս ակնարկի
յայսմանուրս ՛ի մայիսի 28.) կի՛ւ։ Այսհամանուր ընդ ա-
մենայն աշխարհն բերեալ սքոյն երկերիւր և ութսուն
հազար. Թողուա՛ սակ և որ յետ այնորիկ ժողովեցան, և
կամ կատարեցան ՛ի նոյն քաղաքի՝ որ վկայք, և կան ան-
դէն ‖։

Յայսմ հետէ քաղաքն Թէպէտ և անուանի գտաւ ՛ի
կոբայ Թոնդրակեցւոյ. * Ազգու-
յեալ զաւուրս իւր՝ երթեալ չա-
րապէս մեռանի ՛ի քաղաքն որ կո-
չի Մ՟ահ-արքի ‖։ Իսկ առ գեաբէ-
նոսի ՛ի Թզեմ. 686. * Ամիրան
Մ՟արգիրոբոլոսց՝ որ առ նոսա (այս-
ինքն առ սարակինոս) Մ՟եքէրէին
կոչի ‖։

Ա. յս անուն զանազան օրինա-
կաւ գրի առ սորսի մատենագիրս՝
Մ՟այքէրէին, Մ՟այքէրէտ, Մ՟այքե-
րաւէտ, որպէս և սեռանիւ առ աս-
սեմանեայ հայս. ։ Թզեմ. 174։
Սոյն այս անուն Թուի լինել նոյն
ընդ ՛Նէրկերէտ անուան, և փոխեալ
մին ՛ի միւսն, կամ ՛Նփրկերտ յա-
սորւոց փոխեալ ՛ի Մ՟այֆերքքեն,
և կամ Մ՟այֆերքքեն փոխեալ ՛ի
մերոց ՛ի ՛Նփրկերտ, Թերևս ՛ի մեր-
ձաւորութե՛ անուան մեռելոյ գա-
ւառին աղձենից՝ (զորմէ առորև.)
բան որում և ՛Նփոխին և Մ՟ծրբին
են մի և նոյն անուն։

Վասն որոյ հայրն գագիկ և գրի-
գոր սարկաւագ՝ որք վաթառ ՟ըզն
մարութեայի յասորւոց Թարգմա-
նեցին ՛ի հայ, զանունս Մ՟այֆերք-
քէն ՛ի կրկին տեղիս Թարգմանե-
ցին ՛Նփրկերտ. քանզի և ՛Նփերք-
կերտ կոչել զայս քաղաք՝ սակաւ
Ո դիրս սորա, զատուդաբանուածն անուանն, և զպէտս սկիզբն չինուածիս՝ զոր արար անդ արտաչէս, մի ըստ միոջէ գտանեմք ստորագրեալ առ Թովմայի արծրունւոց ։ ։ ։ * Յիշէ (ասէ Ք. արտաչէս) զնժդեհանաշէն իւր ի վիմանիջան՝ զոր վերագոյն գրեցաք. գայ դարձեալ ի տեղին զբօանուալ ի նմա, և հաճոյ Թուեալ այս նորա, շինել զբարաբլուրն ապարանս արքայական աշնանայինս պայծառայարդարս գեղեցկայարմարս պարսպաւորս, ընդեմ ծիծաղելով ծովուն ի հիւսիսի նայեցուածով, արեգակ նային ի վերայ խաղալով Հառագայթաձիգ Հեմակականացն յելս և ի մուտս, ձկան իմն Թուելով ի վերայ մկանաց ալեացն խաղալով. ընդդէմ նայեցածն ունելով զմեծ լեառնն մասիք [1] կոչելով, բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ՝ իբր զթագաւոր մեծավայելուչ պատուական ալօք [2] զուարճացեալ ի մէջ Հոխ նախարարուածեց, առաջի տեսանելով զկատուտակ ծիրանափայլ դաշտաձև ծոիլն, դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերքն անտառաշխատ ծառովք, և գլինէբեր որթովք, և զանազան պտղովք զՀինս պատրաստեալ։

» Այլ շուրջ զամրոցացն տնկախիտս բուրաստանս ծաղկաՀոտս անուշահոտս ի զանազան ծաղկանց. ոչ միայն ի տեսիլ խտղտման աչաց և ի զուարճութիւն Հոտոտելեաց, այլև ի կազմուածն զեղոյ բժշկական Հնարագիւտ իմաստասիրուածեց կազմեալ ասկղեպեա վայրժամբն։

» Իսկ շուրջ զբերդամման ապարանօքն պարսպէ զբլուրն շուրջանակի յատկառաժուտ տաշելոյ քարանց, քաղաք ա մենալից զՀովիան ամրացուցանելով. իսկ ի վերայ բերդ խեաղ աղբերն դարձեալ պարսպէ զբարաբլուրն ի պահ պանութիւն ջրոյն ամրագունիւք շինուածովք, և շէն մարմարիտ [3] զբարաբլուրն յօրինէ պարսպէւորս անկասկածելիս անմատչելիս ձեռաց պատերազմողաց՝ Հեշտալիր առ զգուշութիւն յօրինեալ՝ ի խորագոյն ծովուն զպարիսպն յօրինեալ կազմէ։

(1) Ասէպէս յօրինակին, որ Թուի լինել Մասիս։
որում Թերևս ըստ ժամանակին պէսպիսութիւն օրինակաց, կամ
(2) Ասպէս էր յօրինակին։
ուղղութիւն կամ սուղութիւն ընդ
(3) Ասպէս ունէր օրինակն, ծայեսցէ։

» Լակ ՚ի մէջ երեքսարմատեան գոգաձև հովտին փոքու՝ որ յերից բլրոցն խոնարհի, շինեհ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ. և ՚ի վերայ նորա կանգնեհ զաստղ կեան պատկերն, և մօտ նորա զտուն գանձու պաշտպա նութեհ կոչոյն։ Կարգէ և յօրինեհ ՚ի նմա փողոցս վա ձառոց ամենալից և բաւականս։ Պատանէ և ՚ի վերա գոյն լերինն անդր ՚ի հարաւոյ կողմանէ աղբիւր սակա ւաքուղս, որոյ ջրմուխս կազմեալ՝ ածեալ հասուցանէ ՚ի մէջ հովտին։ Լակ ըստ բաւականութեհ աչաց տեսութեհց դաշտաւայրին ՚ի մուտս կոյս և առ եղերբ ծովուն պարս պաւորս յօրինէ զդաղն, ընուլ այգեստան անկախիտ պատ բաստութեհ ակնախիտս վայելչութեհ։ Լ՚ւ իբրև կատա րեաց զյօրինուած շինութեհ քաղաքին, և անմատչելի անկասկածելի զամրոյն պատրաստեաց, կոչեաց զանուն ամրոցին Օ՚ՐԴ, այսինքն Պայծառութեհ, ՚ի վերայ պայ ծառայարգար պատրաստութեհ շինուածոյն։ Լ՚ւ ածեալ զտիկինն սաթինիկ զբօսնուլ զաշնանային եղանակին՝ յա մարասուն գեղադիշ ապարանս զարդարեալ բերդին։ Լակ զանուն քաղաքին կոչեաց Լ՚ՐՈՆՈՒ, որ Թարգմանեալ ստուգաբանի Լ՚Րտաշէսի եկաք, զի ըստ պարսիկ ձայնի Լ՚ՈՆ՝ Լ՚ԿԸ Թարգմանի. զի ՚ի գնալն արտաշէսի յայսմ տեղւոջէ, ՚ուր ևս յաւել ձեռն երուանդայ տապնապել զնա ||։

Լակ Թէ յոր կողմն անկանի վիմամիջ տեղին՝ ուր կա ռոյց արտաշէս զայս քաղաք, յուսանէ Թովմաս ա. 10. *Լ՚ոյն ժամայն առեալ սմբատայ զարտաշէս՝ գայ անցա նէ ՚ի վայր ՚ի լեռնէն (վարագայ), և Թափառական (գոլով՝) զվէմս ապաստան արարեալ, յանկասկածա գոյն տեղիս գարանի ՚ի փոքր վիմամիջս, ՚ի կարկառս հով տաձև, հանդիպ հաջաւոյ քաղաքաբերդին վանի, մօտ յայն տեղի՝ յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ՝ մօտ լեզր ծովուն, յորմէ ընչէ օդք բարե խառն ||[1]։

՚ի ժամանակս քրիստոնէութեհ ուներ եկեղեցի, զոր

(1) Խորենացին ՚ի պատմութեհ ք. արտաշէսի ոչ ուրեք յիշէ Թէ եկեալ էյէ Նորա ՚ի վարագ, և կամ ՚ի կողմանս վանայ, այլ Թէ սմբատ շրջեցուցանէր զմանուկն արտաշէս ընդ երեսս լերանց և դաշտաց՝ մինչև փախոյց ՚ի պարսս։ Կոյնպէս ոչինչ յիշատակէ Թէ ե րուանդ եկն զէտ արտաշէսի մին չև ՚ի վարագ, այլ Թէ հետայոյզս առաքեաց ՚ի գտանել զարտաշէս։ Լ՚ւ ՚ի ք. 46. պատմէ զշինութեհ արտաշատ քաղաքի, և ոչ արտա շատ քաղաքի։

յիշէ նոյն Թուխ. արծր. ՟ը. 2. * Կնայ անտի ժերաք, և եկն եմուտ ՚ի վանատոսպ, և ՚ի յանցին հրձիգ արար զվեծ եկեղեցին յաւանին Աբատաձոյ ‖ (1)։

Ասաի էր ստեփանոս վարդապետ որդի ՚ին յուսկան ՚ի ժը. դարուն, որպէս աւանդէ յայսմաւուրս ՚ի 8. յունվարի ։ ՏԷս և ՚ի նոր Հայաստան. Թղթ. 144։

Ընդ։ Կիւղ մերձ յարտամէտ, յիշատակեալ յայսմաւուրս ՚ի 3. յունվարի ։

Պարագ։ Ընկանի յայս գաւառ, որպէս դնի ՚ի Ճառընտրի ՚ի պատմել երևման խաչին ՚ի վարագ. * Կնա և սահանդիստ խաղաղուել փութացեալ ՚ի լեառն ՚ի տոպ գաւառի որ կոչի Պարագ ‖։ Այլ ՚ի բանից Թուխմայի արձրունւոյ երևի լինել ՚ի ծայրի կիր ՚ի սահմանապլուխս տորին գաւառի, զի ասէ ՟ա. 10. * Իսկ սմբատ առեալ զարտաշէս գնայ բնակել ՚ի բարձրաւանդակ լերինն վարագ. իսկ երուանդայ հետազօտեալ գայ բնակել առ ստորոտով լերինն՝ ՚ի գլուխս տոպ գաւառի, և կոչէ զտեղին Այրուանդակաձոյ ‖։ Կոյնպէս ՚ի տոպ գաւառի գնէ և խորենացին ՚ի բանն որ յաղագս Ճանապարհորդութեանն Տրխիսխանեանց, յասելն. * Իսկ ՟եզին ՚ի տոսք գաւառ եւ լեառ՝ զոր նշանն Թողուն հանդիպ Պանի, (և) ՚ի հարաւակուսկ լերինն փոքրագոյն խրձիձն շինեալ վանայց, և եզին անդ վանն կասկածի հալածանաց ՚ի վերայ կացեալց։ Այս անդ ՚ի լեառն Պարագ ամրացեալ, զի լուսան խնդիր լինել ինքեանց. յան՚և ցիր ՚ի խորշ լերինն բնակեցան՝ արարեալ իւրեանց գեանափոր դադարս ‖։ (2)

(1) Գրի առ յովհաննու մամիկոնէի Թղթ. ՃԸ. վան վարդ պատրկի. * Էտ և երկու աւանս սիւր իշխանութեն ՟ին կարապետին զԱբատաձէ և գԳոմս ‖։

(2) Յայսմ լերին ոմանք եգին ինքեալ զտապանն նոյի, ըստ որում գնի ՚ի ծանօթութեան եպիսկոպոսարանաց լեռնի և անդրանիկոսի, որ և գասաի ՚ի ԺԸ. հատորն բուզանդարանի, ուր ասի. * Եւ է լեառն բարձրադագաթն վարաթիքէն անուն (այսինքն է՝ վարագ) յորում տապանն նոյի բարձեալ ՚ի ջուրց՝ հանգեաւ ՚ի գլուխս նորին, և է այս յայնի ամենայն բնակչաց նորին մինչև ցայսօր ժամանակի ‖։ Ուր երկու ինչ պարտ է ՚ի միտ ածանուլ, մի՝ զի զվարագ համարի ՚ի Թուխ լերանցն գաւրոսի (այսինքն՝ սօրոսի), յորմէ և ոմանք Թերևս մի ՚ի լերանցն կորդուաց համարեցան. և երկրորդ՝ յայսմանէ գուցէ ոմանք զմասիս լեառն ուր հանգեաւ տապանն ըստ հաւանական կարծեաց՝ շփոթեցին ընդ վարագայ, զվարագ կոչելով Մասիս, որպէս կատծիմք զիթովմայէ արծրունւոյ՝ ՚ի վերոգրեալ բանն զԱբատամեայ, կամ ՚ի զմասիս գնելով ՚ի հարաւային եզերս հայաստանեայց կիր ՚ի սահմանս ատրբեջանեայց։ Այլ զայսմանէ տես նաև ՚ի ներբածուքեն հին հայաստանեայ՝ որ զլերանց։

Այն գրիգոր զառաջինն չինեաց ՚ի վարագ եկեղեցիս, ըստ ասելոյ յայսմաւուրսն ՚ի 26. փետրվարի։ Ա.ԱՀ նախ քան զնոքն գրիգոր ըստ գրելոյ խորենացւոյն [1]. * Լերկոսք ոմանք ՚ի քահանայիցն որդ բնակեցան ՚ի նմին տեղւոջ, մինչև ցօր կոչման և կատարման իւրեանց առքն. և տեղիք նոցա կոչին Ա-բբեղայր, քանզի ՚ի յորքան մատուցանէին զպրօշս պատարագն, և բաշխէին արժանաւորապէս որ կանանցն (ընկերացն հալիփախիանց՝ որք մնացին ՚ի լերինն վարագ), զմարմինն և զարիւնն տեն ||։

Լակ ՚ի մէջն անդ է. դարուն քանզի աղօթիւք Թոզիկ Ճգնաւորին յայտնի եղև որ խաչն որ ՚ի վաղուց հետէ ծածկեալ կայր, զայն եկեղեցի կամ զտուն աղօթից՝ ուր եմուտ որ խաչն, Թառւցեալ ՚ի վիմէ ամուր լերին [2], ընդ արձակեալ նորոգեցին, և հաստատեցին վանս միանձանց՝ որ յանուն լերին կոչեցաւ Ա արագ [3]։ Շ լինեցին և այլ երկոտասան եկեղեցիս ՚ի տեղի երկոտասան՝ լուսաւորսն սեանցն՝ որք երևեցան յայնժամ ըստ պատմելոյ յայսմաւուրսդ։ Լակ ՚ի Ճառընտրի գրի. * Ա՝եծաւ պատուով պատուեցին զտեղին աշխարհին նախարարք, չինելով եկեղեցիս երկոտասանս յանուն իւրաքանչիւրոցն ըստ տեսչուհ լուսաւորացն որ ցուցաւ, և զտեղն յարկասցն և զնահատեցին որ խաչին՝ առաւել քան զառաւել մեծարեցին ||։

Օ պահպան տորա աշօտ արքայորդին ՚ի Շ. դարուն զարդարեաց ակամբք և մարգարտովք՝ երեսուն հազար ոսկի ծախեալ յայն, զորս տուեալ էր նմա խալիֆային պաղտատու, որպէս պատմէ մատթէոս ՚ի գլ. լէ. [4]։ Ա.ԱՀ յառաջ քան զնա գագիկ Թագաւոր արծրունեաց զարդարեաց զնոր խաչն, զորմէ գրէ Թովմա արծր. էջ. 11. * Ա՝ախոր առեալ ՚ինելբուստ ՚ի վեր ՚ի լեառն Ա արագ, և երկրպագեալ ՚ուծազարդ քառապատկեալ փայտի խաչին քրի

(1) ՚ի բանն որ յաղագս Ճառնապարհորդութեան որդ հալիփախ մեանց։

(2) Որպէս նշանակի և ՚ի շարականն. * Թառւցեալ եկաւորի ՚ի լեառն Վարագայ բնակել ՚ի նմա ||։

(3) Ըստ այսմ վարդան աշխարհագիրն. * Վասպուրականի վան է, ուր կայ որ ուխտն Վարագ, և անդ է որ նշանն՝ զոր երբեր որ կոյսն հալիփախմէ ||։

(4) Գալիսակարգութեն պատմութեն մատթէոսի՝ զոր ուրեք յիշատակեցաք, և ուշիմք ևս յիշատակել, ի համեմատ երից ձեռագրաց, որոց մին կայ ՚ի փարիզեան գրատան, ընդ մի համար ընդ պատմութեն մեսրովպայ երիցու, որ հասանէ մինչև ՚ի իե. գլուխն, և ՚ի իթ. գլուխն սկսանի մատթէոսին։ Լակ իը. գլուխն է գործ ուրումն՝ որ յետոյ է ժամանակաւ քան զթովմաս մեծոփեցին։

պատուանդանի ոտիցն այ, որով պարծի՝ և պսակի ի քո հաւատացելոց Թագաւորաց երամք. և ոսկեգործ ակա նակապ կազմեալ պատեաց ոսկով զսիրկագործ՝ որ խաչն. և ընդլուզեալ մարգարտով զարդարեաց զսխորագործ փայտն հիմանեալ ի մէջ անուշահոտ փայտից. Թողեալ մնան ինչ արտաքս ոսկեպատ պահարանին՝ յառաջնում իւրոյ քառածրագիծ փայտեղէն գրոցկանն ... և յետ խա չայարդար պայծառութեանն ևքեալ ի լեռնէն գագիկ ի ստորոտ լերինն՝ ուր սբեղէիցն բնակէին աբեմաձևքն»։ (1)

Յայտնեմ յայտ է՝ թէ շինութեն սենեքերիմայ արքայի էր նորոգութեն, զորմէ գրէ շարունակողն պատմութեան Թովմայի արծրունւոյ, թէ ի հովտի լերինն վարագայ՝ ուր էն աղբերք բարեհամք, և ուր եկաց՝ որ խաչն, * Ը ի նեայ (սենեքերիմ) ի նոյն տեղւոջ եկեղեցիս մեծաճախս, և ի ստորոտ լերինն շինեաց զնոյակապ և զհռչակաւոր մայրաքաղաք մենաստանացն զԱրագ, և կարգեաց ի նմա արս հաւատարիմս. և զարդ՝արեաց բազում կրճնաւորօք, և երկնագումար դասիւք՝ որ քահանայիւք, և կարգեաց նոցա ռոճիկս»։ Ի մենաստանի աստ՝ որ նշանի էր գերեզմնատուն Թագաւորացն արծրունեաց, որպէս գրէ մատթէոս ի գլ. կէ։ Ա.յլ վասն այսր տես ստորև և զՂեւագ։

Յելս անդ Ա. գարուն փոխադրեցաւ այս՝ որ խաչ ի սեբաստիա, և յետ մնալոյ անդէն ժամանակս ինչ, գարձեալ ընդ մարմնոյ սենեքերիմայ արքային բերաւ աստ։

Ի՝ակ ի 1651, սիւնեցման պէկ միաբանեալ ընդ չօմաղոյ ապատամբին՝ փոխադրեաց ի բերդն խօշափ՝ ուր ինքն տիրեր յայնժամ, յաւարի առեալ զծածուկ գանձս եկեղեցւոյն. բայց ի 1655. քրիստոնէից առեալ յիսլրաւ հիմ՝պէկէն՝ որ յաջորդեաց զնի սիւնեցմանայ, ածին յեկեղեցի տիրամօրն որ ի վան քաղաք։ Ի՝ան այսր ընդ արձակագոյնս տեսցես ի պատմութեն առաքելի։

Աղթայ գառաւ։ Ա.ր ստորոտով վերոգրեալ լերին դնի յերկրորդ վարս դերանկէն առ Թովմայի արծրունւոյ Ջ. 12. * Այս գաւձեալ վերստին սեպհականեաց իւր և ինքեան զնի եկելոց զԻ՝աւառն Աղթայ ի տոսպ գա-

(1) Բարձր տեղի լերինն՝ յորում բնակէին հռիփսիմեանք՝ յայսմ առաւս կոչի Գուէնչայ, և այժմ Վէրին Վրաց, ուր և երևեցաւ խաչն ի վերին. իսկ ստորին կոչին լերին՝ ուր շինեցաւ մենաստան, այժմ կոչի Սբոբին Վրաց, զորոց տես ի նոր հայսատան. Թղթ. 147։

ասէ, որ առ ստորոտով լերինն վարագոյ ։ Ստորև գնէ ՚ի նմա և ամրոց՝ յասելն. *Ընտու զՄրոյն (Աղգայ) և տիրէ գաւառին ։

ԲՈԴՈՒՆԻՔ. Ե ԿՈՂԱՆՈՎՏ ։

Ա յսպէս գրի առաջինն յերկուս ձեռագիրս աշխարհագրուձ խորենացւոյն, իսկ ՚ի միւսին որպէս և ՚ի տպագրեալն գրի Խոփունիք ։ Ոչ Թովմայի արծրունւոյ ՚ի կրկին տեղիս գրի Խոփունիք. յորում և ՚ի Գ. 11. գնի դիւղինչ Ընբսան անուն. * Ել երակացու (ասէ) նմա Թագղոյ գյովանիսէս ոմն քահանայ ՚ի Խոփունի գաւառէ ՚ի Ընբսատան գեղջէ ։

Երկրորդ գաւառն գրի Կողանովիտ յերիս ձեռագիրս աշխարհագրուձէ խորենացւոյն. միայն ՚ի տպագրեալն գրի Կաղանովիտ ։ Ոչ Թովմայի արծրունւոյ Գ. 4. ուրոյն ուրոյն գրի, Ովիտ այսինքն Հովիտան Կողան. * Եւ հասեալ ՚ի մի վայր՝ գան Հովիտն Կուղան, ուր գուրգէն քանակ արարեալ էր ՚ի Կարէնեանս տեղոջ ։

ԱՌԲԵՐԱՆԻ ։

Ա ոչ խորենացւոյ [1] կոչի և Ռեբերացւոյ գաւառ. յայտ է Թէ՝ վասն գլխաւոր քաղաքին եղելոյ ՚ի սահմանի իւրում, ըստ որում գնէ և վարդան աշխարհագիր յասելն. *Ոչ բերանի և Տարբերունի [2] Ռերկրի է՝ ուր կայ

(1) ՚Ի բանն որ յաղագս Ձնձաղարհորդուձէն հոխիսեանց ։

(2) Ջտարբերունիդ անուն յիշատակէ և եղիշէ ՚ի ստորագրուձս եպիսկոպոսաց Նամախին հայոց ընդդեմ պարսից, ուր ՚ի կրկին օրինակ գրի Վասն եպիսկոպոսն Տարբերունւոյ. իսկ յօրինակն տպագրեալ Թղթ. 26. գրի Տարբերեն նահապ ։ Ասէ առ ղաղթայ գրի Տարբերանոյ ։ Ջոր Թէպէտ մարթէ կարծել ոմանց Թէ Տարոնբերանն կամ Տարբերունին ոչ զԱրբերանի գաւառ (որ ՚ի վարգանայ կոչի Տարբերունի,) այլ զՏուրուբերան նահանգն նշանակիցէ. բայց քանզի ՚ի գիրս եղիշեի զկնի եպիսկոպոսին Տարբերունւոյ անմիջապէս յարի եպիսկոպոսն Մարգաստանի, որ է գաւառ վասպուրականի մերձ յԱրբերանի, յայն սակս ոչ անդադարձառ կասկածիմք, Թէ Տարբերունիդ կամ Տարուբերանն անգամ զայս գաւառս յաւէտ, քան Թէ զՏուրուբերան նշանակեցէ զնահանգն ։ Ցիշող գայն՝ զի եթէ էր Եպիսկոպոս նահանգին, ստորակարգեալ գաւառաց եպիսկոպոսունքն՝ որպէս տարօնոյ, աշմունեաց, հաւրքայ, քղնու-

*ՙՕբ ուխտն տէր յոսկան որգւոյն ‖ [1]։

Ռէրէրէ։ Վաղաք բերդաւոր՝ որպէս է տեսանել առ լաստիվերտցոյն ՚ի գլ. Թ. ուր ասէ. * Ռէրդաքաղաքն որ կոչի Ռերկրէ, որ է ՚ի վիճակէ արծրունեաց աշխարհին, զոր վաղնջուց յափշտակեալ էր պարսից, հանդերձ իւրովք դաստակերտօք, և ունէին ընդ ձեռամբ ‖։ Յիւ շատակէ գնոյն և Թովմա արծրունի Ճ. 12. * Ընդամենն նաև բուհայէ հասանել ՚ի վերայ գուբգինի, և ընդ նմա քաղաքացիքն Ռերկրոյ՝ որ ուժմանիկքն կոչին ‖։ Եւ փոքր մի ՚ի վերոյ. * Փութանակի հասեալ (ամիրային նախձաւանու) ՚ի քաղաքն Ռերկրէ ‖։ ՚Ի յիշատակելոց խորենացւոյն իմանամք՝ թէ էր Վաղաք հին, այլ մինչև ՚ի վարդան աշխարհակիր՝ զորոյ զընտս եդաք ՚ի վերոյ՝ ոչ որ ՚ի մատենագրաց յիշատակեաց զգաւառս նորա ։ Յիւ շատակի ուրեք և ՚ի գլխս յունաց, որպէս ՚ի Ճ. գլ. կառավարութենէ կոստանդեայ պերփերուժենի, ուր ըստ ձեռագրին գրի Ռէրէրէ, և ըստ տպագրելոյն Խաչգրէ. իսկ առ գէորգեոսի Թղթ. 732. կոչի՝ Ռէրէրէս [2]։

ՙԻ սկիզբն ժա. դարու ըստ պատմելոյ լաստիվերտցոյն քաղցր պատերազմաւ էանց այս քաղաք ՚ի ձեռս յու-

նեաց, և այլն, (որք յիշատակին ՚ի գիրս և ՚ի ժողովական Թուղթս,) պարտ էր հպատակել նմա, և կաթ գոնէ սմա պարտ էր նախագահ քաղքել նոցա, և յառաջ նշանաւկիլ անուան սորա քան զնոցայն. ուր ընդ հակառակն բազումք ՚ի նոցանէ՝ յառաջ ստորագրութեաւ նուանց՝ նախագահ և երկագոյն էրևին քան զսա, և սմա ոչ այլ ինչ ՚ինայ, բայց եթէ հաւասար այլոց եպիսկոպոս գոլ մանաւանդ ինչ գաւառի, և ոչ նահանգի։ Այլ եթէ ստուգագոյն ինչ կամիցիմք ասել, եպիսկոպոսական աթոռք կարգեալ էին ըստ կարգի աշխարհական իշխանութեան, վանն որոյ և նահանգագ ինչ՝ (որք էին ՚ի ծայրս սահմանաց մեծին հայոց՝) որպէս ասէնեացն, մոկացն, և տայոց, և այլն. որոց մի միայն էր գլխաւոր սիրոյ իշխան, ՚ի գիրս՝ մանաւանդ նահանգ հեղինակաց, մի և եթէ եպիսկոպոս յիշատակի բոլոր նահանգի, և ոչ ուրեք մանաւանդ գաւառացն այնց նահանգաց։ Այլ

՚ի նահանգն, մանաւանդ որ ՚ի միջոցի աշխարհին հայոց, որպէս յայրարատ, ՚ի վասպուրական, և ՚ի տուրուբերան, չէ ուրեք տեսանել զսոյն, ուր էին բազում նախարարութիւնք որք տիրէին ազանձին գաւառաց՝ անկախք յիւրեաց, և ըստ իշխանացն՝ նաև եպիսկոպոսունք առաջնորդք գաւառացն։ Այսչափ ինչ առ ժամս վասն այսր եպիսկոպոսական աթոռոյ, մինչև ժամանակն ընծայեցէ ստուգագոյն տեղեկութիւն։

(1) Զայս ուխտ հեղինակն յայսմ աւուրս յունվարի 3. ՚ի վաս նորին տեփաննոսի որգւոյ ՚ին յոսկան կոչէ Աբգէլան վանէ, ուր և Թաղեցաւ մարմին նորա զկնի մահուանն։

(2) Ուր և վրիպակաւ դնի մերձ ՚ի բաբելոն, զի ասէ. *Վաև ըզ բերդն՝ որ կոչէր Բերբերիս մերձ ՚ի բաբելոն՝ ալիմ սառակինոն հրամանաւոք նմին՝ ետ կայսեր ‖։

նաց • զի նախ յոյնք առին ՚ի ձեռաց պարսից, և ՚ի յու՞ նաց դարձեալ պարսիկք՝ կատարելով արս իբրև ՚ի՞. Հա զար [1]։ Դարձեալ հառ ՚ի ձեռաց նոցա ՚ի նմին ժամա նակի գանձի անուն իշխանն հայոց, այլ վերստին առին այլազգիք [2]։ Յաւել միքայէլ կայսր առաքել զօրս առ նալ զԱրկրի, որոց յայնժամ կամաւ ետուն այլազ գիք՝ գնացեալ յաշխարհն իբրեանց. * Եւ յայնմ օրէ և առ յապայ բարձաւ (ասէ լաստիվերացին) տէրութիւնն պարսից ՚ի տեղւոջէ անտի ‖։ Եւ զնիւթ իբր հնգետաս սան ամաց՝ պաշարեալ զայն տուղբիլ անուանի սուլգանն պարսից՝ և առեալ, երկաթի կապանօք ՚ի գերութիւն խա զացոյց զնշխանս քաղաքին [3]։

Եւ ասողկայ յիշատակի և Ռեբկրոյ էրն ՚ի գրելն ՃՀ. 4. վասն զօրացն խամայէլացւոց. * Եւ զօրն խամայէլի յա սորեստանէ ընդ Ճանապարհ ձորոյ՝ Ռրկրկրն տարօնոյ ընդ բզնունիս, ընդ Ռերկրոյ ձորն յայրարատ Թափե ցան, և առին զդուբին ‖։ Իսկ զի եառն Մոզէն Ռերկ բացւոց գաւառին յիշէ խորենացին ՚ի վերոյիշեալ բանն Ճանապարհորդութենէ հռիփսիմեանց, և առ նովաւ զԻա զաքագեօղն ցնծիցէ։

Ռրկիաս։ Ռերդ Ա՚զացովտի, այլ՚ի սահմանի Ռերկ բի քաղաքին, զոր քանզի մանաւանդ հանեալ էին ՚ի ձեռաց բերկրեցւոց, ա՚. ամբատ արքայ անդրէն դարձոյց առ նոսա՝ ըստ գրելոյ Թովմայի արծրունւոյ ՃՀ. 10. * Ա՚ն նըլով (ա՚. ամբատայ) հարկս և պատանդս, և զբերդն Ռրկիաւ յաղացովտի, զոր հանեալ էր մանազաւեցոյն [4] ՚ի բերկրեցւոյն, նոցա հանեալ էր ՚ի գինիւն ագգէն՝ ՚ի զարմէ մեժէժի գնունոյ, ՚ի վաստուրական բաժնէ. նաև Ռերկրի բաժին եղեալ էր վաստուրականի, և դարձու ցանէ անդրէն առ Ռերկրեցիսն [5] ‖։

Ա՚ռեսք էոէք։ Ա՚սողկ ՃՀ. 2. զնէ զայս Ա՚ռբերանի գաւառի, յասէն վասն զևոնդեայ կաթուղիկոսի, թէ էր *՚ի գաւառէ Ա՚ռբերանոյ ՚ի Գողջէ փոքր Ա՚ռես

(1) Շարունակօղն սամուէլի Տա ճկից ասէ, զոր լաստիվերացին Պարսիկ անուանէ։

(2) (3) Գրէ զայսցանէ մատ թէոս ուռհայեցի. իսկ լաստիվերաց ցին ՚ի գլ. ժԷ. հարևանցի յիշատակէ՝ յասէն վասն սուլտանոյ. * Ջանց արարեալ զարձիշաւ և զԲերկրով ‖։

(4) Մանազաւեցին՝ որպէս ասա ցաք այլուր, ոչ այլ ինչ է, բայց թէ Մանազկերտոյ՝ որ ՚ի հարք գաւառի, որ տիրէր նահ ապատհունեաց, որպէս գրէ Թովմա արծրունի ՃՀ. 10։

(5) Յովհաննէսի վրկապաւ գրի Ա՚ բերէոթիոն։

առ ։ Եւ յովհաննու կաթուղիկոսի գրի անդէն Լ-ասա պայ. * Եւ զկնի սորա զգևունդ՝ որ եր ի փոքր Լ-ռասաստայ՝ կացուցանեն յաթոռ սրբուհին ։ Որ թուի լինել վերպակ գրչայ, կամ վերպակ խօսից ռամկին ։ Այլն է սա թերևս ընդ Լ-եոն առանի, զոր յիշատակէ նոյն յովհաննէս կաթուղիկոս, կամ թէ՝ Լ-ռեստն էր առան, յոր հայելով՝ գիւղն մերձակայ կոչեցաւ փոխ Լ-եոն ։

Զնկանէր սա առ ծովեզերք, ըստ գնելոյ բուզանդայ Ը. 8. * Եւ գիպեցան միմանց առ ափն ծովուն բղնուց նեաց յԼ-ռեսան առանի ի Զինաստեանն արքունի՝ ի վերայ գետակին ։ Լ-ս Զինաստեանք ի Ը. 22. կոչի և Զինաստէնք՝ ըստ երից ձեռագրաց ևս. * Հասեալ մածեալ բանակեին ի վերայ Զինատենիցն Լ-ռեստեայ ։ Պ առ զար փարպեցի կոչէ զսա Պաղաքագեօղ. * Եւ մինչդեռ ժողովեալ գնային ի Ձանասարէն՝ մերձեալք ի Պաղաքագեօղն որ կոչի Լ-ռեստ ։ Լ-ս առան յիշատակի և առ Թովմայի Մեծոփեցւոյ՝ որ գրէ. * Պաղումք որ անդ ինայնի՝ մեռանէին, և որք եկին Լ-ռեստ առանի, և ձկամբք և բանջարովք շատանային ։

Յիշատակէ զևոնդ ի գլ. Ը. և զԼ-ասդան կոչեցեալ Լ-եոպաղոյն. * Կամ եղեալ գնացին ի կողմանցն վասպուրականի, ի դաշտավայր մարզին՝ որում Լ-ռեստա կողմն կոչեն ։

ԱՆՁԵՒԱՑԻՔ ։

Լ-սպէս գրի ի տպագրեալն, և յերիս ձեռագիրս աշխարհագրուե խորենացւոյն, նաև առ այլս սովորաբար. բայց յօրինակին Թովմայի արծրունւոյ ամենայն ուրեք գրի Լ-ՆՅ-ասդ, որպէս և առ այլս ուրեք ուրեք ։

Վասնզ սորա Թուի թէ յարմարեցոյց ի վերայ համբրէն բնակչաց գաւառիս զանունս Լ-ՆՅ-ասդ, քանզի լի են ի սմա անձաւք, խորաձորք, ծործորք, և այլն. և գաւառն ողջոյն է իբր բերդ ինչ, և տեղի ապաւինի յերեսաց Թշնամեաց՝ որպէս յայտ առնեն մատենագիրքն, և ի մէջ այլոց յովհաննէս կաթուղիկոս, յասելն վասն ատովմայ անձևացեաց իշխանի, թէ՝ զգաղթ տերունէ իւրոյ * Լ-մբառնայր ի գլուխս ամուր լերանց աշխարհին (անձևացեաց), ամրապահեստս զնոսա առնելով ի խորաձորս, է ի խոշխոր վիհս փոսոց, և ի ծործորս բըլ-

լոց ‖ : Օ նոյն ցուցանէ և ռամկական անունս Վարպետ, յոր անուն կոչի այժմ անձևացեալք՝ ըստ ասելոյ յայսմ ւուրաց ՚ի փետրվարի 27 :

Վաղարշակ արքայ կարգեաց աստ նախարարութիւն՝ որ ընդ ժամանակս էին իբր առանձին իշխանութիւն. իսկ յաւուրս ա. սմբատայ արքային նուաճեալ կայր *Ինդ ձեռամբ վասպուրականն իշխանութիւն ‖, որպէս գրէ Թովմա արծրունի էջ. 10 : Յայսմանէ ՚ի ժամանակս Թագաւորացն արծրունեաց ուրեք ուրեք անուանի տէրութիւն. *Յետ բազում յուղիչն և պատերազմանցն (ասէ Թովմա արծրունի էջ. 14. վասն գուրգենի) եհաս տիրել նմա Ինձաւացեաց տէրութիւնն ‖. և վասն այսորիկ, կամ վասն նստելոյ անդէն ոմանց արքայազանց արծրունեաց՝ կոչի ուրեք նաև Թագաւորութիւն :

Եպիսկոպոսունք անձևացեաց բազում ուրեք յիշատակին ՚ի գիրս, և նախ առ եղիշէի Թղթ. 26. և առ ղազարայ Թղթ. 75.՚ի ստորագրուածս եպիսկոպոսաց ժողովոյն արտաշատու՝ Եղբայր եպիսկոպոս Ինձևացեաց : Եւ զկնի յիշատակի ՚ի Թովմայէ արծրունեայ ա. 15. Շ մանւոն եպիսկոպոս Ինձաւացեաց [1] : Եւ ՚ի ստորագրուածս եպիսկոպոսաց ժողովոյն դվնայ յիշատակի Գրիգոր եպիսկոպոս Ինձևացեաց : Յայլ քան զամենեսեան երևելի գտաւ ՚ի Շ. դարու փայլեալ գրութիւնք և առաքինութիւնք հայրն ՚սրբոյ գրիգորի նարեկացւոյ՝ խոսրով եպիսկոպոս Ինձևացեաց :

Կանգուառ : Եւ խորենացւոյն ՚ի Ճանապարհորդութեն հռիփսիմեանց գրի Կանգուառ, ուր և կոչի Ինդրդ ամառ : Եւ ՚ի բանից Թովմայի արծրունեայ էջ. 14. երևի լինել յայս գաւառ. *Ամուտ (գուրգէն) յամուրն Կանգուառ և կատարեալ զոր լինչ ախորժեացն՝ տիրեաց Ինձաւացեաց մեծաւ զօրութիւն ‖ : Ընդ այսպէս և յայլ բանից նորին Թովմայի՝ ուր ասէ. *Եւ գուրգէն (Ինձաւացեաց տէր) դարձեալ գնաց յաշխարհն իւր յամուրն Կանգուառ ‖ :

(1) Ճամանակն Շմաւոնի եպիսկոպոսի ոչ է որոշակի նշանակեալ ՚ի Թովմայէ արծրունեայ, միայն ցուցանէ լինել ՚ի ժամանակս մեծին վարդանայ, զի ասէ. ՚Կոչեալ առ ինքն (վարդանայ) զեպիսկոպոսն ըռշտունեաց սահակ, և զեպիսկոպոսն Ինձաւացեաց Շմաւոն, և կարգէ զդասս պաշտօնէից ‖ : Բայց և անուն իշխանին անձաւացեաց ՚ի ժամանակս վարդանանց՝ էր Շմաւոն, որպէս յայտ է ՚ի գրոց եղիշէի և ղազարայ :

Այն այս տեղւոյ Թուի լինել՝ որ այլուր ՚ի նոյն գիրս Ա. 16. գրի Կանգոամբ բերդ։

Ընչաւակաց գետ։ Ծայմանէ Թովմա արծրունի Ա. 16. * Այն եմուտ յերկիրն Ընձաւացեաց, և էլ աշուռ քնակեցաւ ՚ի գեղջն Ընձաւակաց ‖։

Դաբբնոյ տաւ. Ընտուայ տաւ. Հոգեայ վանս։ Ցեղիք մօտ ՚ի բերդն Կարգուար, զորոց ընդարձակ գրէ խորենացին ՚ի պատմութեանէ պատկերի տիրամօրն առ սահակ արծրունի, և դնէ յաշխարհին անձաւացեաց. * Եւ եկեալ (բարթողիմէոս առաքեալ) յաշխարհն Ընձաւացեաց՝ ՚ի համբաւ քարի միոջ՝ քանզի դէպ բազումք քնակեալ էին անդ, և պատրէին զմարդիկ տեղւոյն՝ տուեալ յայնմ տեղւոջէ դեղս ախտականաս առ ՚ի կատարել զպղծութիս ախտից, կռանդաձայնս դարբնաց հաւատոյ հրաշիւք արհաւիրս գործէին. յորս մարդիկ աշխարհին սովորեալք՝ անդ առ քրային դեգերէին, առեալ ՚ի չաստուածոյն Ծրարաս Թարախածորս ՚ի պատիր ախտից ... և անուանէին զա նուն տեղոյն այնորիկ Դաբբնոյ տաւ։

» Հասեալ ՚ըզ առաքեալն ՚ի անդ՝ հալածեաց զդարբինսն ... և զկուռսն փշրեաց որ յանուն անահտայ էր։ Յոր ժողովեալ բազմութիւն դիւացն ՚ի վերայ լերինն բարձու ՚ի հիւսուոյ կողմանէ քարաձիգս առնելով անթիւ բազմութիւք յոյժ, և ձայնս և ձիչս, և գոչիւն սաստիկ արձակէին։ Իսկ ՚ըզ առաքեալն ՚ի նահգրեաց խաչ մի փոքրիկ, և կանգնեաց ՚ի վերայ քարի լերինն, և անդէն գևքն չիք լինէին։ Որ յետոյ ՚ըզ Հայրապետն գրիգորիոս զնաչն առաքելական ընդ իւր ՚ի ղեկեցուցանէր ...։

» Եւ է տեղին այն յորում գևքն էին՝ լեռնամէջ վիմայ՝ ՚ի վերայ գետոյն մեծի որ կոչի տիգրիս, հուսկ ՚ի բերդն ամուր՝ որ կոչի Կանգուառ, և միւսոյն Ընչաւակաց տաւ, ուստի ջուրք բազումք հոսին ՚ի լերանց ամրոցին ըստ գարնանային մասանցն՝ գան անցանեն ընդ հիմունս տաճարի տիրուհոյն, և խառնեալ օժանդակեն զդետն մեծ տիգրիս։ Ընդ հինարկեալ ՚ըզ առաքեալն զհին տաճարի սրբուհոյն իւրով իսկ ձեռօքն՝ շինեալ եկեղեցի փոքրագոյն, և անուանեաց զնա Ա՛ծածին, և եդ ՚ի նմա զպատկեր տիրուհոյն, և տայ զնա ՚ըզ կանանց. և գլուխ կացուցանէ անդ զքոյր յուսկանն և զքոյրն որմզդատայ և զմնքուղորդի, և զայլ կանայսն ընդ ձեռամբ նոցա կացուցանէ. շինէ խրճիթս վանից. և տեսուչս հրամայէ լինել հաւատացելոցն, և քահանայ կացուցանէ անդ յիւ

րոյ աշակերտացն. և անուանէ զտեղին Հոգեաց վանս (1) յանուն սիրամօրն...:

»Իսկ քոյր յուսկանն մարիամ կոչեցեալ՝ անցանէր յայնկայս գետին մեծի, շիներ իւր խրճիթ առ ստորոտով քարին փոքրագունի... և ի նմին տեղւոջ կացուցանէ տեսչս տեղոյն զքոյրն զանունս և զմարթա... Իսկ անունս շիներ իւր խրճիթ յայնկոյս ձորոյն որ Վարբնատափն կոչեն... տուեալ զտեսչութիւն տեղոյն մարթային... Օ որ եկեալ յետոյ ՚ի գրիգորի՝ վանս հաստատեաց զտեղին՝ շինեալ եկեղեցիս. բայց զտաճար սրբուհոյն ոչ քակեաց՝ զի ձեռագործ առաքելական էր.. և կայ մինչև ցայսօր ժամանակի ||:

Ընդարձակ գրեցաք զբանս խորենացւոյն, որ ոչ սակաւ տեղեկութիւն տայ զգրից երկրին անձաւացեաց. որ թէ ոչ յընդարձակ միտս առնուս զնձաւացիս, (նովին անուամբ խմացեալ և զմերձակայ գաւառս,) յայտնի ըզտիգրիս գետ՝ կամ գէթ զվտակ ինչ նորա՝ սահմանակից դնէ անձաւացեաց: Տես ի նոր հայաստան Հոգւոց վանք. թղթ. 157:

ԵՐՈՒԱՆԹՈՒՆԻՔ:

Այսպէս գրի յերկուս օրինակս աշխարհագրութեան խորենացւոյն, որպէս և առ ղազարայ թղթ. 221: Իսկ ի միւմ ձեռագրի աշխարհագր". խորէն". Յերիւանիք: ի տպագրեալսն միայն գրի Յերուանդունիք՝ որ թուի լինել ուղիղ, ըստ որում Յերուանդ՝ յորոյ անուն երևի կոչեցեալ այս գաւառ՝ ի տառիս գրի, և ոչ ն: Յօրինակին Թովմայի արծրունեայ գրի Յերուանունիք:

Հոյոց ձոր: Այսպէս անուանեցաւ յանուն Հոյ կամ Հայկ դաստակերտին՝ զոր շինեաց նախնին մեր Հայկ. *Այլ զտեղի ձակատուն (ասէ խորենացին ա. 10.) շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հոյ (2) վասն յաղթու թէ պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հոյոց ձոր||: Գաւառ անուամբ յիշատակի և ի յայսմաւուրս ի 20 դեկտեմբերի. յորում ձգներ երա-

(1) Զգետի Հոգւոց վանից՝ ուր տէր խրատել յայսմաւուրս իւր հանդուցաւ կենդանագիր սիրա- կոչէ Հոյանիս:
մօրն յաւաքելոյն բարեմոլիմեայ,
(2) Յօրինակի միւմ գրի Հայ:

*նեղլին աբրահամ աշակերտս ՝որք դևռնդեանց չետ դարձին իւրոց ՝ի բաբելոնէ. զի ասի. * Վնասցեալ (աբրահամ) դադարեաց ՝ի գաւառն Հայոց ձոր ‖. և զկնի. * Ելաւ զեղեին զմարմին աբրահամու միւրում յանապատին. և կոչի տեղին՝ Ա՛ աբրահամեան մինչև ցայսօր ժամանակի ‖:*

Ա.յլ խորենացին ոչ ուրեք յիշատակէ յաշխարհս դրուագիե իւրում ՝ի կարգս գաւառաց վասպուրականի, չայտ արարեալ՝ թէ այս ձոր էր վիճակ ինչ կամ փոքր գաւառ բովանդակեալ ՝ի միում ՝ի գաւառացն վասպուրականի: Լակ թէ չոր գաւառ անկանիցի՝ Թոռմա արծրունի ուրեք գնէ լինել ՝ի սահմանի, կամ չաւէտ ՝ի սահմանակցութիե Ա՛ղուանիքունի գաւառին՝ չասելն. * Չանզ դիպեցան միմեանց Ա՛լուրտ գիւղ ՝ի գլուխս Ձորոյն Հայոց՝ որ հանէ Ա՛ղուանիքունի գաւառն ‖:

՝ի հայոց ձորն անկանի և Վերեվանտ անուանեալ բլուրն որով կոչեաց հայկ զտեղին՝ ուր սպանեալ անկաւ բէլ (1): Տես ՝ի նոր հայաստան թղթ. 144. 145. զվիճակին կռ չեգեալ Հաւո- ձոր, և որ զկնի:

ՄԱՐԴԱՍՏԱՆ:

Ա.սպէս գրի չերիս ձեռագիրս աշխարհագրութեան խորենացւոյն, այլև առ չովհաննու կաթողիկոսի, և առ Թոռմայի արծրունւոյ, որպէս և չօրինակս ինչ եղիչէի. նոյնպէս գրի ուրեք և ՝ի հին քերականութիե նախնեաց: Լակ ՝ի տպագրեալն աշխարհագր՛. խորէն՛. գրի Վարգաս պան: Թոռմա արծրունի ՝ի յիշելն՝ գրեթէ աւենայն ուրեք զանունս Վաւառ չարակից չայն, որպէս ՝ի է. 13. * Եւ զՎարգաստան գաւառն՝ զոյն բաժին գուրգինայ, դարձոյց առ նա գերանիկն ‖: ՝ի քանից չովհաննու կաթողիկոսի երևի լինել սահմանակից կամ մերձակայ տոսպ գաւառի, զի գրէ. * Վայր հասանէր զկողմանեք Վար դաստանի և Տոսպ գաւառի ‖:

Եպիսկոպոս գաւառիս յիշատակի առ եղիչէի և առ զաքարեայ ՝ի ստորագրութիե հարց ժողովոյն արտաշատու առ վարդանամբք, Եպրեմիա եպիսկոպոս Վարդաստանի:

(1) ՝ի ստորագրութիս հարց ժո. Հայոց Եպիսկոպոս, զոր մարթի էր ժողովն գիտել՝ չօրինակի միում կարծել այսր վիճակի եպիսկոպոս, զկնի ոմանս և մարգպետականն և եթէ այլ օրինակ ոչ ուղղագրեր պիսկոպոսին յիշատակի Ներսես գրեալ Ներսես Եպիսկոպոս Հարցայ:

Լակ՝ ի Բ. դարու փոխադրեցաւ յայս գաւառ աթոռ Այրդպետական եպիսկոպոսին՝ ի նախձաւան քաղաքէ, որպէս յիշատակէ Թովմա արծրունի՝ զորոյ զբանս դիւրացուք՝ ի սատրագրեալ աւանի։

Համբոյրապան։ Կրկի զայժմանէ Թովմա արծրունի էջ. 7. * Կոչեդ ոմն հարուստ անցեալ ի Համբոյրապան աւանի Այրդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մերդպետականին՝ յայնժամ փոխեալ գներ ի նախձաւան քաղաքէ ||։

Ալ Էրանոյ։ Էրան՝ զորմէ գրէ Թովմա արծրունի. * Կոան հասանէն ի Այրդաստան, յաւանն Ալ Էտահոտ, հանեն ընդ սուր ||։

Զոր հասկոյ։ Յիշատակի առ Թովմայի արծրունւոյ. * Ի խոյս առեալ զջրէր զկողմանքն Այրդաստանի [1], և Զորոյն հասկոյ ||։

ԱՐՏԱԶ Ի ԱԿԻ։

Ա՛յսպէս գրի յերից ձեռագրից աշխարհագրութենէ, նաև՝ ի պատմութենէ նորին խորենացւոյ, և առ այլս։ Լակ առ Թովմայի արծրունւոյ՝ Թէպէտ ուրեք գրի Ա՛րտաշատ գաւառ՝ և էջ. 11. Ա՛րտաշատ գաւառ, իբր անուն ածանց ցակերտ, բայց այլուր գրի Ա՛րտաշ՝ համաձայն այլոց. վասն որոյ վրիպակ գրչաց է անունս Ա՛րտաշատ, որ գտաւ նի՝ ի տպագրեալն աշխարհագրութենէ խորենացւոյն, զանուանս երկոցունց գաւառաց՝ ի մի յօդելով որք ուրոյն ուրոյն գրին՝ ի ձեռագիրս [2]։ Ակիրակոս կոչէ Ա՛րտաշատ, յասելն. * Պատմեաց մեզ վարդապետն յովսէփ՝ որ շինեաց զվանան գերեզմանի Թադէոսի առաքելոյն Ա՛րտաւազդ գաւառի, յետ աւերածոյն և ամայի լինելոյն ||։ Ըստ այսմ կոչէ և Թովմա մեծոփեցին։

Ա՛ռաջինն կոչէր այս գաւառ Շ՛աւարշական, որպէս

(1) Յօրինակին վրիպակաւ գրի՝ Մարդոտան։

(2) Ե՛թէ Ակն էր առանձին գաւառ, յայտ առնէ և անուն ցեղի ինչ կոչեցեալ Ակնաւի՝ կամ Ակնաւեի՝ որ յիշատակի առ խոռենացւոյն էջ. 7. կամ ըստ ձեռագրացն յ. 8. առ եղիշէի, և առ Թովմայի արծրունւոյ. զի իւրաքանչիւր ցեղ գրեթէ ունէր իւր գաւառ առանձին։ Ա՛րդ՝ Թէ զայս Ակն միացուսցուք ընդ Ա՛ղձոյ զոյ ոչ գտանեմք զգաւառ ինչ կոչեցեալ այսր ցեղի. այն զի՝ խորենացին յայն գլուխ յայտնի ցուցանէ՝ Թէ ունէր գաւառ սեպհական, զի ասէ. * Նոյնպէս և զԱղուանեցիս և զԱկնացիս՝ ի նոյն գաւառաց ||։

յայտ առնէ խորենացին ՟Ք. 31. յաւելս. * ՝Ի գաւառին Շ ահրզան՝ որ այժմ կոչի Ալբաղ ‖ : Յակ Ալբաղ՝ ե անուն գաւառի ինչ երկրին ալանաց, և ՝ի նոցունց ալանաց կո չեցաւ ապա մերս Ալտաղ. զի իբրև գերի վարեալ բնա կեցան ՝ի շահաբշան հրամանաւ ՟Ք. արտաշէսի, կոչեցին զայն յանուն երկրին իւրեանց՝ ուստի գերեցան. * Ընդ մայեալ արտաշիսի (ասէ խորենացին ՟Ք. 49.) բնակեցու ցանել զնոսա ՝ի հարաւոյ յարևելից կուսէ մասեաց՝ որ կոչէր Շ ահրզնկան գաւառ, ՝ի վերայ պահելով զանիկ ա նունն (երկրին իւրեանց) Ալբաղ. քանզի և աշխարհն ուստի գերեցանն՝ Ալտաղ [1] կոչի մինչև ցայսօր ժամա նակի ‖ :

Այս գաւառ անկանի ՝ի հարաւոյ արևելից մասեաց՝ որպէս ցուցին բանք խորենացւոյն, և մերձ ՝ի կոդովիտ գաւառ այրարատու՝ ըստ որում դնէ Թովմաս մեծն փեղկն :

Եպիսկոպոսարանն որ յարտազ՝ որպէս Թուի հաստա տեալ ՝ի հին ժամանակաց, բայց եպիսկոպոսունք նորա ոչ յիշատակին յանուն գաւառին, այլ յանուն ՝ծէյ առա քելոյն Թադէոսի, որպէս ՝ի ԺՀ. դարու՝ Տիրացու եպիս կոպոս : Եւ ՝ի ԺԲ. դարուն՝ Օ աքարիա արքեպիսկո պոս, Օ՝ոլծոյեցի անուանեալ [2] : Ապա և միւս այլ Օ աքարիա Արքեպիսկոպոս՝ Պարսն տէր կոչեցեալ ՝ի վանձան նոյն դարու, ՝ի սիւնի Թուին Հայոց : Նոյնպէս և ՝ի ԺԵ. դարու՝ Գրիգոր եպիսկոպոս, որ յետոյ եղև կաթուղիկոս յԱղուանից ՟ը պատմէլոյ մեծապէցւոյն : Յի շատակի առ նորին Թովմայի և Պետրոս եպիսկոպոս Ալբտազու :

Շ ահրզան : Վաղաքագեօղ՝ ուր էր ամարանոց արքու նի. յիշատակի ՝ի Ճառընտրի ՝ի հին վկայաբանութենէ ա ռաքելոյն Թադէոսի. * Հասանէր յաշխարհն Հայոց առ Թագաւորն սանատրուկ՝ ՝ի գաւառին Ալտազ, ՝ի քաղա քագեօղն Շ ահրզան, յապարանս արքունի՝ որ էին հովոց գետինք Թագաւորացն Հայոց ‖ : Յայսմաւուրս ՝ի 23. գեկտեմբերի կոչի, * Հովանոց քաղաքն Շ ահրզան ‖, և դնի նոյնպէս յարտազ գաւառի :

՝Ի մեծաւակաց սորա յայսմաւուրս ՝ի 30. մայիսի դնի

(1) Յարինակի միւմ խորենաց. ձոյն՝ գրի առա Աւտրդ. յայլում՝ Աղբաղ. խակ ՝ի միւմ այլ գրի Աղբազ:

(2) Ըստ սա գրեաց Թուղթ երց կիւս Յովհաննէս ՟Ք. պատն ՝ի 1321. և ՝ի 1329: Տես ՝ի լբեկեն հատ. ա. Թղթ. 1445:

լեառն և գաշտ՝ Ամանատրուկ անուամբ. * Ընտակեր ՚ի լերինն Ամանատրուկ՝ մատ ՚ի Շ աւարշան քաղաք Արտազ գաւառի ‖ [1]: Այս ստորև.՝ * Յայսմեցաւ նման տեսիլ ՚ի միջ Ամանատրուկ գաշտի ‖:

Ա՝ակո: Յայս գաւառ գնեն վարդան աշխարհագիր, յաւելեալ. * Արտազ Ա՝ակու է, ուր կայ որ առաքեալն Թադէոս ‖, այսինքն ուխտն որոյ Թադէոսի: Ընդպէս և միւք Թար ասպարանցի ՚ի յիշատակարանի երգերդոց միհնու Լեհ վարդանայ՝ զոր նա ինքն օրինակեաց. * Կրեցի զաս (ասէ) ՚ի գաւառս Արտազու, ՚ի գեօղս որ կոչի Ա՝ակու . . . ՚ի Թվ. մարդեղ՚. տն ձ ղ ‖:

Ոյն է սա Թերևս ընդ վերոգրեալ Շ աւարշան գիւղաքաղաքին, զկնի կոչեցեալ Ա՝ակու. քանզի առաջնի ՚ի մատենագրաց (որք ծանօթ են մեզ՝) զԹովմա արծրունի գիտեմք, որ զայս անուն յիշատակէ յաւելն Ք. 3. վասն խոսրովու պարսից արքայի՝ Թէ ետ կայսեր մաւրիկայ [2] * Օ երկիրն Հայոց միմեանս ցգետն հուրաղգաց, և զգաւառն կոտայից՝ միմեանս յաւանն գառնի, յերգ ծովուն քղնունեաց՝ և միմեանս յառեսան աւան, և զկողմնիստ գաւառ միմեանս ցհայիւն և ցԱ՝ակու ‖: Այս ընդ հակառակին Շ աւարշան քաղաք անծանօթ իմն է յետագայից մատենագրաց: Այս Թերևս ՚ի մերձակայ հին գաւառէն Արկ, անուն սորա ապա ածանցեալ փոխեցաւ ՚ի Ա՝ակու. Թէ պէտ և էր ՚ի յարտազ գաւառի: Ընտակեր սա և բերդ, քանզի ՚ի պատմուԹէ Թովմայի արծրունւոյ է. 3. յերկրորդ վարս գագկայ յիշատակի Ներսէս Ա՝ակոյ՝ զոր էառ գագկ:

Ւսակ մենաստանն Թադէոսի, յայտ առնէ՝ Թէ յայսմ վայրի եղև կամ կատարումն նորին Թզյ առաքելոյն և ընկերացն, և կամ յաւէտ գիւտ և հանգիստ նըշխարացն, քանզի յայս անուն կոչէ զայն Թովմա արծրունի Ե. 11. * Կրեմ առ Թզ եպիսկոպոսին գրիգոր ամասունեաց տանն, որ նստէր [3] ՚ի հանդամի Թզյն Թադէոսի

(1) ՚Ի տպագրեալն՝ վերջին երկքն անուանքն վրիպակաւ գրին Շաւարշան, և Աբաղ:

(2) Այսպէս գրի միշտ առ Թովմայի արծրունեաց, և առ այլս ոմանս այս անուն, ուր յայլ աղբ գոյ գիրս որոց է անունդ՝ գրի Մաւրեքիոս, կամ Մաւրիչիուս, և կամ Մաւրկիուս, որպէս և մեր ձեռագիրք մատենից ունին Մաւրիկ, զոր նոքք սովորեցան գրել Մօրիկ:

(3) Եպիսկոպոսական աԹոռ տանն Ամասունեաց՝ մարԹ էր կարծել յայս գաւառ գՀաստատեալ, եԹէ յայլուստ ջունկաք զառաւել տեղեկութիւն լինել ՚ի գաւառն Արագածոտան յայրարատ.

առաքելոյ Յուդովկական գաւառի, դնել զելս իրացն եւ կեալ հասեալ հինին ||:

Նախնիք՝ որպէս խորենացին ք. 71. և Ճառընտիրք՝ զկատարումն առաքելոյն՝ և զհանգստարան և զգեստ նշխարացն՝ դնեն ի գաղտավայրին արտաքո, և ի շրջակայս շաւարշան գիւղաքաղաքի: Յայսմ վայրի ասէն լինել և գլուխն ըզմին գրիգորի՝ զորմէ տես ի նոյն գլուխ խորենացւոյն, և յայսմաւուրս ի 18. նոյեմբերի:

Ի ժբ. դարուն կործանեցաւ այս մենաստան, ըստ որում գրէ ստեփանոս օրպելեան. կթ. * Ի մբռնեցին և զեպիսկոպոսն առաքելոյն զտէր տիրացուն, և աղգի աղգի անարգանօք ձաղեցին, և առին զամենայն ինչ նոցա. բայց զվանքն նորա՝ որ էր շրիմ՝ որ առաքելոյն Թադէոսի քանդեցին, զշինուածս տանցն աւերեցին, կողոպտեցին և խաղտ կործանեցին ||:

Ա. ի նմին ժբ. դարու յովսէփ վարդապետ ոմն նորոգեաց զայս մենաստան Թադէոսի առաքելոյն: Ակն ա. կոստանդին կաթուղիկոս բարձրբերդցի Ճոխացոյց պալատ. * Յորժամ ոմն. էր Թուականն Հայոց (ասէ կիրակոս), առաքինի կաթուղիկոն կոստանդին առաքէ յաբեւելս եկեղեցեացն ընծայս... ի ձեռն Թէոդոսի սպասաւորի իւրոյ ի պատուական վանորայս, և շրջաբերական նամակ շիրիմի առաքելոյն Թադէոսի, տալ նմա վիճակ շրջակայ գաւառն և զքաղաքս, և ոսկի յոլով ի շինուածն գաւթին, որ շիներ վարդապետն յովսէփ յետ աւերածոյն որ ի Թուրքացն և ի հինին վրայ. քանզի յոլով ժամանակս անբնակ էր ի մարդոյ և ամայի: Ա. յովսէփայ երթեալ առ զօրագլուխ Թահմարին՝ որում անուն էր անգուն նուին, որոյ ի ջնջանքն իւր յաւուրսն ամենայնոյ հոգ էր ի գերեզմանն առաքելոյն Թադէոսի. և նորա հրամանաւ սրբեալ զեկեղեցին, և նաւակատիս կատարեալ՝ շինեաց զվանս, և ժողովեաց ի նա կրօնաւորս բազումս ||:

Ակն ի ՀԿԲ. (1319.) յահագին երկրաշարժութենէ կործանեցաւ նոյն վանքն նաև եկեղեցին, և շրջակայ տունք՝ սպանեալ ոչխս հե. զորս անդրէն շինեաց տէր զաքարիա արքայազնն կաթուղիկոս աղթամարայ [1]:

աես անդ: Ակն զբանս Թովմայի չէ պարտ առնուլ, թէ գրիգոր է պիկոլաս նաեր՝ի հանգստի որդին Թադէոսի յարտաղ իբրև յիւրա-

կան աթոռ, այլ վասն այլ ինչ պատճառի, և ըստ գիպաց ինչ:

(1) Պատմէ շարունակօղն սա մուելի:

Ծործորու վանք։ Ի վիճակ Տըրնոյ Թադէոսի գնէ զայս վենաստան յովհան երիցկացի ի յիշատակարանի մեկ նուԹէ մատԹեկի, յասելն վասն իւր. *Այս նուաստս ի քո.. յովհան երիցկայեցի սպասաւոր բանի՝ բնակեալ ի վիճակ Աքաւորեցոյն Ա(ա)դէոսի ի վանս Ծործորու կոչեցեալ՝ ընդ հովանեաւ նոր ուծաճնխս ||։ Ապա երկար բնակելոյն յայս վենաստան կոչի սա լինքն յովհան և ծոր ծորեցի, որպէս և զաքարիա եպիսկոպոս արտաղոյ առ ժամանակօք նորին յովհաննու։

Աղբեհաղաց։ Ծայսմանէ գաղար Թղթ. 223. *Ըստ եալք ի դիմայ գօրքն հայոց ըստ աւուրց օԹևանացն՝ երԹեալ հասանէին ի գաւառն Աղտատ, և մնտեալք ի գունդն պարսից՝ բանակէին ի գիւղ մի՝ որում անուն էր Աղբեհաղաց ||։

Աղարայր։ Գնեաց՝ զորոյ զդիւրս նշանակէ գաղար յաս սելն. *Ապա՝ այն առաւել ատիպով եկեալ հասանէին գունդն պարսից ի գաւառն Աղտատ, հուպ ի գեօղն որ կոչի Աղարայր ի ընդարձակ տեղի Տղմոյ դաշտին ||։ Ապա Տղմուտ է անուն գեօղն՝ յորոյ անուն կոչէ զաղար զընդ Թերակայ դաշտն։

Աղիւէ զայն դաշտ կոչէ Ալաղ ասաբայէ. Թղթ. 191. *Ալաւա և Ալաշան Աղարայրի [1] պայծառացեալ ծաղ կալից լինին, ուր յանձրևաբեր ամպոց, այլ ի ցօղ և յարիւ նաբուղղ վտակաց՝ ցանեալք և ցրուեալք ի սպիտակու Թիւնք ոսկերացն ||. ուր վերջին բանքն յայտնի առնէին լինել զայն դաշտ՝ տեղի նահատակուԹեան վարդանանց։ Օնոյն ցուցանէն և բանք ասողկայ ի ք. 2. ուր ասէ զնահատակուԹիւն վարդանանց լինել *ի դաշտին Աղարայրի ի գաւառին Աղտատոյ ||։ Աղ և Թուխմա արձ. ղունի (ք. 1.) *Ասայց իբրև եղև (ասէ) մեծ պատերազմ ՚ծգին վարդանայ ընդ մեկանին և ընդ զօրս պարսից ի Աղարայրեան դաշտին Աղտատական գաւառին [2], և անդ չուծ խրախուսեալ ՚ծ ուծարնակ զօրացն հայոց կատարեցան ի քո ||։

Աղինդ։ Ցիշատակի առ գաղարայ. *Այլ եկեալ մեզ միկոնեանն վահան ի գաւառն որ կոչի Աղտատ, ի գեօղն որ անուանեն Աղինդ ||։

(1) Աղարայրէն ի ձեռագիրս, ուր պակաս գրի՝ *Աղարայրեն դաշտին Աղտատական գաւառին ||։
(2) Յայլում օրինակի վրիպա-

ԱՂԲԱԿ, կամ ԱՂԲԱԴ։

Ի գիրս՝ մանաւանդ ստէպ առ Թովմայի արձրունի այդ կոչի սոսկ Աղբաք՝ առանց յարակցելոյ զանունս ՏԵՆ, որ է որոշիչ փոքր աղբագոյ որ ի կորձէս, ըստ այնմ ի ք. 6. ուր ասէ Թովմա արձրունի. * Այլն եմուտ ի գաւառն Աղբագ, և ասպատակ սփուեր ընդ կողմանս երկրին վասպուրականի ||։

Հպատակէրա։ Վաղաք ոստան տանն արձրունեաց՝ յիւ շատակեալ զառաջինն ի խորենացւոյն ք. 7. իբրև տէղի սեպհական արձրունեաց. * Եւ զԱրծրունիսդ գիւ տեմ ՚ն Աբծրունիս, այլ Արծիւ ունիս, որք արծուիս առաջի նորա (այսինքն վաղարշակայ) կրէին։ Ծառզուամ զառասպելեացն բաջաղանս՝ որ ի հադամակերտին պատմին. մանկան նիրհելոյ անձրև և արև հակառակեալ, և հովանի Թռչնոյ՝ պատանւոյն Թալկացելոյ ||։

Ի քաղաքի աստ շինեաց գուրգէն եղբայր գագկայ արքային արծրունեաց՝ եկեղեցի. * Արզպատն հայոց գուրգէն (ասէ Թովմա արծրունի էջ. 11.) հրաշագան յօ րինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին Հադամակերտ ի մեծն Աղբագ, ի բուն իշխանական սեփհականութենն իշխանութենէ զարմին արծրունեաց. հարուստ մի հեռի ըզ քարանցն տաշելոյ զհոլովումն բերելով առ տրամադրու Թի կոչարանին, իբրև ասպարիսօք երիւք զբացագոյնն մե տաղոյնս գործելով սայլիցն հոլովմամբ ||։

Ալսոյս նա ինքն Թովմաս կոչէ Ասպան արծրունեաց՝ յաւ սելն. * Այն եմուտ ընդ կողմն ատրպատական Աղբագ գաւառ յերկիրն վասպուրական, և քնակեցաւ ի Յա դամակերտ (1) Աստանէն արծրունեաց ||։ Ի պատմութե Թովմայի արծրունւոյ է. 2. ի պատմելն կրկին անգամ զաշոտոյ որդւոյ գերասկին կոչի Աշան։

Օխ։ Կիւղ՝ ըզոմն Թովմա արծրունի էջ. 11. * Այս տիկինն սեզայ առեալ զդի նորա (այսինքն զաշոտոյ վաղ ուրական իշխանի,) տարեալ հանգուցանէ ի Աղբագ ի գեօղն Օխ, ի վանս Աբէ խայլ ||։

(1) Աւստիս Յադամակերտ զաղանայ արծրունեաց ասէ. * կա գրի և յօրինակի միւմ պատմ. տարեալ զընթացս նահատակութե խորենացւոյն, որպէս և առ զա լուրոյ հանգչեր. և եգեալ ի մատ զարայ Թղթ. 15. որ ի գրէնն բանն ի Յադամակերտի ||։

Իակ մենասեանն Խաչէն [1] բաղում ուրեք յիշատակի առ Նորին Թովմայի, ուր էին գերեզմանք իշխանացն արծրունեաց նախ քան զթագաւորութիւնն, զի ասէ գ. 17. վասն աշտոյ իշխանին. * Եւ կատարեալ աշտոյ զկեանս իւր մեռաւ ի վանս տոսպ ... և տարեալ հանգուցանեն ընդ եղբայրս ի վանս որ խաչէն Աղբագ գաւառին ||։ Այսպէս ի գրէնն զմահուանէ դերանկին ասէ գ. 3. * Եշատ որդի դերանկին առեալ զդի Նորա տարեալ հանգոյց առ հարս իւր Աղբագ գաւառի ի վանս Աբ խաչէն ||։ Յորմէ յայտ է՝ թէ նախնիք դերանկին, որպէս նաև եղբայրքն աշտոյ անդ էին թաղեալ, անդ թաղեցաւ և տիկինն սոփի [2] կին Նորին դերանկի։

(1) Աս խորենացւոյն ի բանն որ յաղագս Ճանապարհորդութեանն հալիսխանցւոյ իշխանի տեղի ինչ Աբ խաչ անուանեալ, ուր զանազան բարք ջուրն բժշկեցին, և խաչ կանգնեցին ընդեղն. որ և ի յայսմ ուրս ի 5. հոկտեմբերի ասի լինել ի յաղբակ, քանզի գրի՝ թէ * Ելեալ ի գաւառն մոկաց գնաց ցէր հասեն ի յաղբակ ... և զախտ արար ջուրն բժշկեցին ||։ և այլն։ Աս լքանզի չէ յայտ թէ որ Աղբանն իցէ, մեծն՝ որ ի վաղուց բաւական, թէ փոքրն՝ որ ի կողմն Ճեայս. վասն որոյ զբանս խորհեսցուք, և յայսմանէ ինչ դնեմք ի սոսրև ի մէջ տեղեաց մեծին հայոց՝ որոց գաւառք անծանօթք։

(2) Աս որ բերէ մեզ տարաբնաւանն՝ այն է, զի Թովմա արծրունի յետ պատմելոյ գ. 2. զմահ և զթաղումն սոփեայ, յաւելու գրել. * Գագիկ և աշոտ և գուրգէն (որգիք սոփեայ և դերանկին) ... եաուն ի նը եկեղեցին գ. ագարակս զվանդ փշոյ, և զԱգռաւն Աձաոնս՝ յանգիման եկեղեցւոյն որ ի կղզի, և զքարն Մանավէրդ՝ որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲէրէրէ, և այլ բազում տեղիս՝ զոր աւանդեցին որգիք Թագաւորին (այսինքն դերանկին), յետ մահուան հօր և մօր իւրեանց ի պէտս նը իսչին Աղթամարայ||։ Ուր յուշանէ՝ Թէ այնմ եկեղեցւոյ և վանաց ուր Թաղեցան հայր և մայր նոցա՝ եաուն զղրեսին ագարակս. և զի նոքա Թաղեցան ի վանս խաչի որ ի Աղբագ, երևի ի բանից ասել՝ Թէ այն վանք նոյն էր ընդ վանաց խաչի որ ի Աղթամար։ Խակ մատթէոս ուռհայեցի՝ զդերզմանս Թագաւորացն արծրունեաց՝ դնէ ոչ յայս վանս խաչի, և ոչ յաղթամար, այլ ի վարագ, զորոյ զբանս յիշեցաք ի սոսրագրելն զՎարագ, տես անդ։ Չնարդ և իցէ քանզի զաղթամար ոչ ոք դնէ յաղբակ, այլ մանաւանդ յԱրշաունիս, միք և ուրոյն ուրոյն եդաք զսոսա։

Եւ աս միաբանելոյ գայլ և այլ բանս հեղինակաց՝ մարթ է ասել, Թէ գուցէ յայլևայլ ժամանակս փոփոխեալ էին տեղիք գամբարանաց տերանցն վասպուրականի, քանզի և ի վերոդրեալ բանն Թովմայի երևի լինել յաւելուածք ինչ բանից մուծեալ ի յետնոց, կամ յարմարեալ ժամանակի Թագաւորութեն արծրունեաց, որ պատճառ չիմոքուն այլոց բանից Նոցին Թովմայի արծրունւոյ. յորս ատորագրէ զեղեալն ի ժամանակս իշխանաց։

Յաւելուած լինել զվերոգրեալ բանն ի գրոց Թովմայի արծրունւոյ՝ Թէպէտ ոչ իշխեմք հաստատել, բայց կարի հաւանական երևի բայութեն կոսկածիմք ընդ հարաւ զատուն այնց բանից, վասն կրկին պատճառաց։ Մի՝ զի Դերանկին

Որ բանիւ ֆր։ Յիշատակէ Թովմա արձրունի յերկրորդ վարս աշտոյ որդւոյ դերանկին Ե. 2. ի գրելն անդ զիւ մէնն ափշի արաբացի ոստիկանի ի վերայ աշտոյ. * Ոսկ իշխանն աշտ եղբարբքն հանդերձ, և ամենայն զօրօքն իւոյս տուեալ ամենայ ի Զորն Որսիրանից ։ Եւ սա կաւ մի զկնի՝ ցուցանէ զնոյն տեղի լինել ի գաւառն աղբագ, յիշելով և զգիւղն անուանեալ Կաչենից. * Եւ ինքն (ափշին) երթեալ ի գաւառն Աղբագ՝ դադարէ ի Հադամակերտն աւանի, և առաքէ զայր մի ներքինի ... զօրօք բազմաք զի երթեալ պատերազմեսցի ընդ իշխանն նմին. և քանզի նորա ամրացեալ էին ի գժուարս կաչենից գեաւղջ դառնայ ներքինին մեծաւ ամօթով ոչ ինչ կարացեալ սանանել նոցա վասն տեղւոյն ամրութե, և զօրացն քաջամարտիկ լինելոյ ։

Օ համանուն գիւղ ի նմին յաղբագ գաւառի յիշատակէ և յովհաննէս կաթուղիկոս ի գրելն գնահատակութե երկրորդ ատուածոյ. * Նոյնն գլխաւորի նոցա ատոմ Ձանաչիւր ի գաւառէ Աղբագայ Աբրսիրանս գեղջ ։ (1)։

ԱՆՁԱԽՈՒՅՈՐ։

Յերկուս ձեռագիրս աշխարհագրութե խորենացւոյն գրի Ոչ ոչ, իսկ ի տպագրեալն և ի միւմ ձեռագրի

Թագաւոր կոչի ի բանս անգ, զոր ոչ ուրեք է տեսանել ի գիրս Թովմայի։ Երկրորդ՝ յեղանակէ բանիցն, որ յաւէտ պատշաճի յետնոյ ուրուք՝ (զկնի շինութե ազ Թամարայ, մանաւանդ Թէ զկնի լինելոյ ազթամարայ արքունեաք, և այնուհետև ի ժամանակս յաջորդացն դագկայ առաջնոյ արքայի.) քան Թովմայի արձրունւոյ։

Չայս յայտ առնէ այն՝ որ ինչ զկնի վերոգրեալ բանից գնի անգէն. * Եւ էն հրամանաք սոցա իրրև զվէմ հաստատուն. և Թէ ոք խախտել չանայ, ի հրամանէն ոչ ոչ ժառանգէ նա զաթոռ իւր և զնագաւորութե. և Թէ հաստատեալ կամեսցի՝ անսասանելի կացցէ նա յայսմ աշխարհս. ամէն ։։

Բանք զորս անգեպ է ընծայել Թովմայի, որպէս Թէ գրել նմա ի դմաց յետնոյ ուրուք, և այն Թերևս զկնի լինելոյ ազթամարայ աթոռ կաթուղիկոսի, (որպէս կասկածիմք ոչ միայն վասն այսց բանից. այլ և վասն այլ ինչ ինչ բանից ի գիրս Թովմայի.) միևչև գրեալ էր նորա զթագաւորել գագկայ։

(1) Աւ. ասողկայ ը. 2. գրի Ոսէրան. * Գլխաւորին անուն ատոմ կոչիւր, որ էր ի ԱՆաղբակ գաւառէ Աբսիրան գեղջէ։։ Ի մերձաւորութե անուանց կրկին այսոցիկ գիւղս Օ-ն, և Ոսէրան, կամ Ոսէրանն՝ մարթ է ի կարծիս լինել՝ եթէ մի և նոյն իցեն։

պրի Աչեխոյոր։ Յովսիա արծրունի ՟ա. 10. ուրոյն ուրոյն պրե Աչեխէց յոր, կամ Զոր անչահէց, յասելէն. * Հառնայ երուանդ առ սահմանօքն ատրպատականի ՟ի Զորն անձահից. իսկ Աչձահից ձոր վանն այնր կոչեցին՝ բաղում ունել ազնւս ՟ի կոխակս բարձրաւանդակս, և կիրճս նրբահանս, և զերծս, և խոխոմն ձորոյն ՟ի Թոխ և ՟ի բոխ երկրին անբնակ մարդկան ‖։ Ուրեք ուրեք ՟ի նմին օրէ նահկին Թովմայի գրի Զոր ընչահէց՝ որ է նոյն, որպէս տեսցի ստորև։

Աչյա ձոր ըստ նորին Թովմայի ՟ե. 2. աւարտի ՟ի կողմանս հեր քաղաքին պարսկահայոց. * Աչու եղև ՟ի գնալ գերանկին ՟ի ձմերոցս վասպուրական իչխանացն՝ ձմնապարհ արարեալ ընդ ձորն Աչձահից, որոյ ելքն ընդ գաւառն հեր քաղաքի ‖։

Կոտոր։ Ներդ՝ որ բաշխեմ ուրեք յիշատակի առ Թովմայի արծրունեաց, որպէս ՟ի ՟ե. 4. ուր ասէ վասն ապստամբութեանայ, Թէ * Օ գուրգէն (եդ) ՟ի Կոտորն բերդ ‖. և ՟ի ՟ե. 2. յերկրորդ վարս աշտոյ և գագկայ. * Կարձ ձեալ տանի յամրոցն Ա՟ձնոյ՝ ուր էր գուրգէն, նմանապէս և ՟ի Ներդն Կոտորոյ ՟ի ձորն անձահից ‖։ Իսկ այլուր ՟ե. 4. գրի ՟ի Զորն ընչահէց։ Ապստամբութեան կինքն գրաւեաց (ասէ) * Օ ամուրն Կոտոր ՟ի ձորն ընձահից ‖։ Զոր՝ կամ յայտ է Թէ կամ վրիպակաւ գրչաց գրի Զոր ընչահէց, և կամ այնպէս և կոչեր յամանց։

Աչյա մեռաւ Ստեփաննոս ՟ե. կաթուղիկոս, զորմէ ա սողիկ ՟ե. 8. * Աչու զստեփաննոս ՟ի Կոտորոյ բերդն վոխեցին, որ և մեռաւ ՟ի նմին ‖։

ԹՈՒՆԱՒԱՆ, Ե ԺՈՒԱՔ։

Ա՟ռաջնոյն անուն միշտ այսպէս գրի առ Թովմայի արծրունեաց, և ՟ի միում ձեռագրի աշխարհագրութեանէ խորենացւոյն. իսկ յայլ երկուս ձեռագիրս յաւելմամբ ե տառի գրի Թոռնաւան, յորմէ յայտ է վրիպակ ապագրելոյն՝ ուր գրի Թոռնաւան։

Կնան։ Ներդ՝ զորմէ Թովմա արծրունի ՟ե. 4. * Ա՟ռ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել ... զԱմուրն Կնան ՟ի Թոռնաւան գաւառի ‖ (1)։ Ա՟յլուր ՟ի

(1) Ա՟ռ նորին Թովմայի արծ. բունեաց. * Խաբեալ եր զաշտոյ՝ բունեաց ե. 1. գրի վասն ապստամ. ամբով զբերդն Ա՟գարակայ՝ հաս.

նոյն գլուխս կոչէ զայս ամուր Ընկալակածելի՝ զամրութիւն նորա ցուցանելով։

Նոյնպէս և Երկրորդ գաւառին անուն Ն՛ոռշ գրի յերից ձեռագիրս աշխարհագրութեանէ խորենացւոյն, միայն ի տպագրեալն գրի Ն՛ոռշոռ (1). այնպէս և առ Թով մայի արծրունեայ ՚ի. 11։

Գէպս առան։ Օ ուարձաքի տեղի առ երասխաւ. ուր գաղիկ ՚ա. արքայ արծրունեաց չինեաց իւր տեղի զօսաս նաց, կամ ամարանոց։ Օ որմէ Թովմա արծր. ՚ի. 11. *Կարձեալ վերակնեալ յառաւօտինս կոյս խաղացեալ ՚ի Ն՛ուաշռոտ ՚ի Գետս աւան՝ չինէ անդ վայելչական տեղի խրախից՝ բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ՚ի վայր կոյս քերի, ՚ի խաղս գետոյն երասխայ, ուր հոյլքն երեքոյն խայտան, և վայրենեացն խոզից, և առեւծոյն մորիքն, և երամք յոտից պատրաստական առ ոտոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին, ընդդէմ նայելով լերանց այրարատեան ազատն մասեաց ||։

Ա՛ռաւան։ Ընդ՝ ուր էր ձմերոց արքունի՝ որպէս է տեսանել առ Թովմայի արծրունւոյ ՚ի. 2. *Եւ գնաց դէ բանիւքն ՚ի Ճուաշ գաւառ՝ ձմերել յաւանին Ա՛ռաւական||։ Եւ սուղ ինչ զինի կոչէ զնոյն՝ Ձմերոց վաստպուրական իշխանաց։ Իսկ ՚ի ՚ի. 12. առաւել յայտնի. * Կամէր փութապէս անցանել ՚ի ձմերոցս արքունի ՚ի գաւառն Ն՛ուաշ՝ յաւանն Ա՛ռաւական||։

Ը ինեալ էր այս աւան առ Կարմիր վտակաւն երասխայ, ուրանօր գաղիկ ՚ա. արքայ արծրունեաց կառոյց զանազան շինուածս. *Իսկ վայր խաղացեալ (ասէ Թովմա

գերձ Ճախոյն կոչեցեալ գաւառաւ, փոխանակ իւր առնելով ըզ Բերդն Նկան, և զԱ՛ռաւանատան և զՃ՛ոռշ գաւառաք||։ Ուր ոչ Թէ միայն առանձին գաւառս կացուցանէ ուրոյն յիշելով, այլ Վնկան ցուցանէ լինել Բերդ երևելի, Թէպէտ և ՚ի Ա՛ռաւանատան գաւառի, որպէս այլուր յայտնի նշանակէ։ Յօրինակին յայտ վայրէ վրիպակաւ գրի Ա՛ռանատան։ Նոյնպէս վրիպակ Թուի գրչաց յիշատակելն ասրբեք յայսմեւուրս՝ Բերդն Նասն ՚ի վաստպուրական, առեալ ՚ի վարդանայ աշխարհագրէ, (յորոյ ՚ի սպագրեալն ևեթ գտանի, և ոչ ՚ի ձեռագիրս օրինական որ ՚ի ձեռս մեր.) որ Թերևս նոյն է ընդ Վնկան բերդին։

(1) ՚Ի միւսին ՚ի ձեռագրաց աշխարհագրութեանն խորենացւոյն մասնիկս սոպ յարի ՚ի յետագայ ա նուանս կրճատին. յայլսմ ձեռագրի Ճ՛ոռշ ուրոյն գրի, և ոռնփ՝ ուրոյն, իբր այլև այլ գաւառ։ Այն ոռնփ յերրորդ ձեռագրի գրի ոռնդ։ Եւ արդարև ոռփայ գաւառ առ յովհաննու կաթուղիկոսի յիշատակի ուրոյն. որ Թէ չիցէ յատուկ պատճառ կամ ՚ի պարսկահայս, Թերևս նոյն է։

արծ. Է. 11. վասն նորին գագկայ) ի Աառականն ա-
ւան առ Կարմիրն կոչեցեալ գետով՝ որ իջանէ ի գետն
երասխ, շինէ և անդ ամրական տեղի գժուարամատչելի
ապաստակող հինից, գնեալով ի նմա նմանապէս ապա-
րանս փողոցայարդարս տաձարակերտս սեհեկագործս՝
բաւական ի պէտս պատրաստեալ: Փոքր ինչ ի վայր խա-
ղացեալ ի տեղին՝ որում Ձորս ասեն, և անդ գտեալ
ամրագոյն անձաւս տեղի՝ անկասկածելի ի պատերազմա-
կան գործոց. և զնա պարսպեալ պատուարօք շուրջանա-
կի. և յօրինեաց պատրաստեաց ապարանս պատուաւորս
գեղազարդս խրախճանական կարգադրութեամբ գրուածս:
Այս Աառական աւան Թեբևս նոյն է՝ որ այլուր ի գիրս
նորին Թովմայի գրի Աբակայ, և կոչի Աաղաք:

Ինքնին: Օրմէ Թովմա արծրունի ասէ ուրեք. *Ա-
ինքն վերաւորեալ սրով մեռանի ի գեօղն Ինքնին ի
Ճուաշ գաւառի:

Ը ամբառ: Ներդ՝ կամ Ամրոց՝ որ բազում ուրեք կի-
շատակի ի պատմութեան Թովմայի արծրունեայ յերկրորդ
վարս դերանկին և գագկայ արքայի. * Ինակ գագիկ խա-
ղացուցանէ ի Ճուաշ գաւառ յամրոցն Ը ամբառ:
Ա-
յլուր Ե. 3. * Կարգեալ էր և զօրագլուխ մի մեծի-
մաստ յառաջատես իշխանին գագկայ ի վերակացութիւն
գաւառին Ճուաշայ և Ը ամբառին կոչեցեալ բերդի՝ ի
տանէն ակեաց՝ այր մեծամիտ և քաջասիրտ, որում
անուն էր Թադէոս: Օսոյն զայս Թադէոս ի յիշելն
Թովմա արծրունի յառաջին վարս գագկայ՝ գնէ ի Ը ա-
մբառ բերդին, այլ առանց որոշելոյ զգաւառն, և՝ ա-
ռանց յիշելոյ զանունս Ճուաշ:

Ոյրոգեաց զսա ապստամբուան վերակացու որդւոց դե-
րանկին: Ընտու ասէ Թովմա արծր. Ե. 1. * Ճուաշ
գաւառ, ուր և շինեալ ը ամբառին՝ պարսպէ յիւր ա-
նուն: Խայց ի յայսմանէ ուրն ի 8. ապրիլի՝ Ամօթ Ը ա-
բամայ կոչի նոյն իսկ Ներդն վանայ:

Խակեաբ: Յիշատակի առ ասողկայ Ե. 13. * Ապրեալ
իշխանի ի Ճուաշ գաւառէ՝ ի տեղին որ կոչի Խակեաբ:
Առաւել կոչէ զսա Ամրոց:

Կրճունիք. (1) Անճունիք. Պալունիք։

Յուլմա արծրունի յառաջին գաւառին երևի դնել զերկուս տեղիս, յասելն. * Պառնան ի Նուաշ, և ի Յոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն, և վարեն ի գերուրեի աւարառուրիբ զ եկ, և զ ընդ։

Նրբորդ գաւառն ի տպագրեաւն և ի միում ձեռագրի աշխարհապ՛. խորենացւոյն գրի Անճունիք. յայլում ձեռագրի գրի Անճունիք. իսկ ի միում այլ պակասի այս անուն (2)։

Նրբորդ գաւառն ի միում և երի ձեռագրի աշխար հագրուրեե խորենացւոյն գրի Պալճունիք (3)։

Նպիսկոպոսարանն սորա հինեալ ի վաղ ժամանակաց, բայց առաջնորդն յիշատակեալ զառաջինն ի ստո բագրուրեիս ժողովոյն գինւոյ՝ նախ քան զՆպիսկոպոսն Անհնունեաց՝ է Յակոբեոս եպիսկոպոս Պալունեաց։

ԳՈՂԹՆ։

Ի պատմուրեե Թովմայի արծրունւոյ յերկրորդ վարս գագկայ՝ կոչի Վողնեաւորան։

Ըստ դրիցն անկանի առ եղերբ գետոյն երասխայ, որ պէս յայտ է ի խորենացւոյն ա. 29. ուր գետ անուամբ պարտ է իմանալ զԵրասխ (4). յայտ է և ի տեղեաց գողթան՝ որք կան մինչև ցայսօր։ Ըստ գաւառ վասն զուարձալի դրիցն՝ Վնեղեկ կոչի առ ստեփաննոսի ուռ

(1) Ի միում ի ձեռագրաց աշխարհագրուրեե խորենացւոյն դնի վերկապաւ Կճունիք։

(2) Ի սորագրուրեիս եպիսկոպոսաց ժողովոյն գինւոյ յիշատակի՝ Սամուել Պնենունեաց եպիսկոպոս. որ որպէս թուի՝ պարտ է լինել Պնեձնունեաց։

(3) Կրկին Պալունիս ակնարկէ լինել երկիւղ թղթ. 90. յասելն. * Իշխանն միւս ևս Պալունեաց վարազշապուհ ||։ Թերևս մի ի պալունեաց այն ինչ զոր պատմիչքն սորոնոյ ցուցանեն լինել սահմանակից սորոնոյ. և կամ մանաւանդ վիճակ ինչ գաւառին սորոնոյ։ Տես ի սորոն՝ ուր յիշատակին կուառս և Հոռեան աւանք ի գաւառին կամ յերկրին պալունեաց։

(4) Որպէս յայտ է ի բանից ասող ուռպելենին ի գլ. ժե. վան՝ որոյ մեսրոպայ. * Եւ զԴողթն որբեալ ի ձեռն իշխանին իւրեանց շաբիթայի, և այնքան հալածեալ զբաղմութիւն գիւղացն՝ որք մարթնաւոր տեսլեամբ ... փախստեայ ան ցեալ ընդ Երասխ՝ անկանէին ի կողմն մարաց ||։

պէլեան ՚ի գլ. ԺԵ. յաեէլն վասն մեսրոպայ. * Լկեալ ՚ի սիսական կողմն՝ հաձեցաւ քնակիլ ՚ի գեղեցիկ գաւառն Վաղեձան ||։

Իսկ ըստ նահանգին անկանէր ՚ի վասպուրական, կամ ՚ի սկզբան անդ, և կամ առ ժամանակօք խորենացւոյն՝ որպէս յայտ է յաշխարհագրութիւնէ նորա. զի դնէ զայն ՚ի կարգս գաւառաց վասպուրականի. այլ էր սահմանաւ կից սիւնեաց՝ որպէս նշանակէ կորիւն։

Վակայն ստեփաննոս օրպելեան ՚ի գլ. Ճ. երկոքումբք ցուցանել ձգնի՝ թէ ՚ի սկզբանէ անտի էր ՚ի սիւնիս. մի՝ զի ՌԶՆ գրիգոր ՚ի լուսաւորել զՀայս՝ զառաջնորդս գողթան էարկ ընդ եպիսկոպոսօք սիւնեաց. երկրորդ՝ զի իշխանք գողթան էին ՚ի սիսական կամ ՚ի սիւնեաց ցեղէ, և իբր ժառանգութիւն իւրեանց առեալ էին զայս գաւառ։ Ա այս այսպէս հինն դնելով իւր, ՚ի գլ. Ճ. զՎաղեձն ընդ Արնջակայ դնէ մետասաներորդ գաւառ նահանգին սիւնեաց։

Բայց մնրթ է այլազգ լինել գաւառաց յեկեղեցական վիճակի, և այլազգ ՚ի քաղաքական կարգի՝ առ որ հայի աշխարհագրութիւն. այնպէս և իշխանքն գողթան թէպէտ էին ՚ի սիսականէն, բայց խորենացին յայտնի դնէ՝ թէ էին հատուածեալ։ Ա ան որոյ այսպէս թուի մեզ վիճակ այսր գաւառի, զի զառաջինն էր ՚ի վասպուրական, ապա ՚ի ՃՃՂ. Թուականիս (յամի ՌՈՆ ՂՅԷ.) ՚ի բաց հատաւ ՚ի վասպուրականէ ՀԵ Թովմայի արծրունւոյ (՚ի Ճ. ԱԱ.) և Թերևս յայնժամ անց ՚ի սիւնիս։ Իսկ ստեփաննոս գոլով ՚ի ԺՂ. դարուն, յորում ժամանակի բան մեծի մասին բարձեալ էին կարգք իշխանութեաց և նախարարութեաց, առաւել հայելով ՚ի վիճակ եկեղեցական Թէմի՝ քան Թէ քաղաքական գաւառաց, երևի դնել զայն ՚ի սիւնիս։

Լնդհակիչք սորա էին երգիչք հին քանաստեղծական պատմութեանց ազգին, զոր պէսպէս նուագարանօք կնճռոտ ցահար աղբերախիւք երգելով յորդւոց յորդի աւանդեալ հասուցին մինչ ՚ի ժամանակս խորենացւոյն, զոր և ստէպ յիշէ նա ինքն ՚ի պատմութեան։

Ա՚ բերս սորա առատ գոլով գինի՝ ընկալաւ ՚ի խորենացւոյն զմականունս Վաղէն գինեբեր, ոչ միայն յաշխարհագրութեան, այլ նաև ՚ի պատմութեան ա. 29. ուր և յիշէ զերգս նոցա՝ յաեէլն. * Յայտնեն զայս ձկնաբատակս և թռչելեացն երգք, զոր պահեցին հինն ախորժելով որ

պէս լսեմ՝ մարդիկ կողմանց գինեւէտ գաւառին գողթան ||։

Յեղ իշխանութենէ Գողթան սերեալ էր ի սիսականէ. * Իակ ղուշտունիս և ղԳողթնեցիս (ասէ խորենացին) (1) գտի պատմեալ՝ ի սիսականէն արդարև հատուած, ուր դիտեմ թէ յանուն արանցն զգաւառան անուանեալ, և թէ յանուն գաւառացն գնախաթարութենէն կոչեցեալ ||։ Յոր բան գրէ ստեփաննոս օրպէլեան գլ. ը. *Իմանալ պէս և իշխանք (գողթան՝) ուր եթէ յայլմէ տոհմէ էին, այլ ի նոյն սիսական ցեղէ, ըստ մասին ժառանգութենէ աւ ռեալ էին զայս գաւառ, որպէս ցուցանէ քեզ մխէնս խորենացի ||։

Այս իշխանք սորա յիշատակին ի գիրս, ի Ե. դարուն ի ժամանակս Տրդն մեսրոպայ՝ Շ աբիթ, և որդի նորա Գիւտ, կամ Գիւտա, որք և բազմօք սատարեցին քարոզ գործ Տրդն ի բարձունն հեթանոսական աղանդոյն ի կողմանցն գողթնեաց. ի ի. և ը. դարուն՝ Խոսրով Հայր վահանայ գողթնացւոյն, և գինի ինքն վահան՝ պարծանք գաւառիս իւրով մարտիրոսութիւք։

Յիններորդ և ի տասներորդ դարուն եղև իւր ա ռանձին ինչ տէրութիւն ի ձեռս հազարացի քունակալաց՝ որպէս ցուցանէ պատմութիւն յովհաննու կաթուղիկոսի, և ասողկայ. և ոչ իսկ այնչափ փոքր տէրութիւն, զի ասէ Հաչէայ աւիրայն ատրպատականի ի յարձակիլն ի վերայ ապուսալիմ որ էր տէր գողթան՝ հարիւր հազար պարսիկ զօրու խաղաց ի վերայ։

Այլն ի սմին գաւառի և տեղիք արքունականք՝ զոր ը. արտաշէս արքայ պարգևեաց սմբատայ. * Պարգևէ նմա (ասէ խորենացին ի ը. 50.) արտաշէս զմանն Աղ քունի որ ի հինս գողթան, և զԱղաւնակոտն ||։

Օ քրիստոնէութենէն ընկալան բնակիչք գաւառիս՝ քա րոզութիւք սրբ առաքելոյն քարթուղիմէոս, որպէս ցուցա նէ ստեփաննոս օրպէլ. գլ. ը. յորս մնաց նոյն կրօն մինչ ի սրն գրիգոր՝ թէպէտ և թագուն. * Այգա ասէ (նա ինքն ստեփաննոս, այսինքն է՝ քրիստոնեայք գողթան գաւ առին) կայրն և մնային անտերունչք՝ քնակեալ այսր անդր, և ոմանք ղողեալք ի լերինն Այրարատ միայնաւո րութիւք զկեանս իւրեանց վարեին՝ զբազումս ուսուցա նելով յոլով ժամանակաւք մինչ ի գալ մեծի լուսաւորչին

(1) Խորենացին ի ը. 7. (ըստ ձեռագրաց՝ 8)։

'ի հայս, և լուսաւորելոյ զամենայն աշխարհս հայոց, ասա գնացեալ սոցա՝ խնդրեցին իւրեանց առաջնորդ||, և այլն։

Այլ որպէս յետ քարոզութեանն ոչ անհետ եղեալ 'ի նոսա քրիստոնէութիւնն, նոյնպէս և յետ քարոզութեանն լուսաւորչին՝ ոչ բաւեաւ 'ի նոցանէ իսպառ աղանդն հեթանոսութեանն, նա՝ մանաւանդ 'ի նուազիլ թագաւորութեան՝ առ բազումս տարածեցաւ. վասն որոյ կորիւն զայն կողմանս կոչէ Ագաթանգ և Ագաթանգեան տեղիք գողթան։ Յակ զայն միացորդս քննողինդ արար երանելին մեծ Ներսէս, որ նախ զառաջինն աստ սկսաւ քարոզել զքրիստոնէութիւն, զի մեծ քաջութեամբ՝ հանդերձ օգնականութեամբ բարեպաշտ առն շաբիթայ կամ շաբաթայ իշխանի գաւառին. յայն սակս խորենացին Ղ. 67. զԿողթն կոչէ 'ի մէջ գաւառաց Ախաղաղէրքեանն մեծրոպայ։ Յակ կորիւն կոչէ զԿողթն Առաջին Վաստակերտ մեծրոպայ, իմն Վաստակերտ հողևոր՝ նմանութեամբ ասացեալ։ * Արթեալ յԱստղներ առ ոտս տանն Կողթան՝ Առաջինն Վաստակերտն իբր, և անդ ընդելական սովորութեամբն 'ի կիր արկեալ ըզ վարդապետութեանն հաւատարութեամբն բարեպաշտին շաբաթայ՝ լի առնէր զգաւառն ողջունիւ աւետարանին քրի. և կարգէր յամենայն գիւղս գաւառին դասս 'ըստ վանականաց։

Առաջին Եպիսկոպոս գաւառիս՝ ստեփաննոս օրպէլ 'ի գլ. Ղ. գնէ լինել զսուն Կումայի անուն աշակերտ բարթուղիմէ առաքելոյն, որում յաջորդեաց Աբրիլաս՝ ազգաւ խուժիկ. իսկ 'ի ժամանակս լուսաւորութեանն սրբոյ գրիգորի՝ զառաջինն եկաց եպիսկոպոս Յովսէս ոմն, ըստ որում յաջորդեցին այլք, ըստ ըստ կարգի դնեմք՝ առեալ 'ի գրոց ստեփաննոսի օրպէլեան։ Կումայ Եպիսկոպոս. Աբրիլաս խուժիկ. Յովսէս Տարօնացի. Ահակ Տարօնացի. Օրսանդատ. Ստեփաննոս. Յովհաննէս [1]։

Յիշատակի 'ի գիրս առ Սիոն կաթողիկոսիս՝ և Եսայի Գողթան եպիսկոպոս. որ զինի եղև կաթողիկոս։

Առ եպիսկոպոսն Գողթան՝ էր ընդ իշխանութեամբ եպիսկոպոսին սիւնեաց. զի ասէ նա ինքն օրպէլ գլ. Ղ. * Եայց գիտեաք՝ զի ոչ եթէ հատուածեալ էին սոքա (է-

(1) Բանք օրպէլենին 'ի գլ. Ղ. և յետ Նորա Ահակ տարօնացի, են. 'Գնացեալ սոցա (գողթնաց- և ապա զՕրսանդատ, և զՍտեփաւոց) առ որն գրիգոր՝ խնդրեցին նոս, և ապա զյովհաննէս. և այս իւրեանց առաջնորդ, և ետ նոցա պէս 'ի կարգ անկեալ մի զմի փոայլ մի տարօնացի Մովսէս անուն, խագրելով մինչև ցայժմ||։

պիսկոպոսունք գողթան) ՚ի սիւնեաց, այլ յատաչէն ինչ գեռ ոչ էին հաւատացեալ, և ոչ էին կարդած աչխարհն Հայոց եպիսկոպոսօք, սորա (քնարիչք գողթան) առանձին ունէին տեսուչս։ Լակ ՚ի լուսաւորել զերկն զրիգորի ցՀայս, և ՚ի կարդաւորել լարձ և զաստիճան եպիսկոպոսացն՝ և զոսա յանձնեաց եպիսկոպոսացն սիւնեաց, զի նոցա հրամանաւ և ՚ի նեղջոյ կացցեն հնազանդութեամբ. որում վկայ՝ առաջին կաթուղիկոսացն շրջաբերական թուղթըն, և հին գաւազանք գաւառացն՝ որ վասն հարկաց եկեղեցոյն. զի լիով ունի զրեալ յինքեան զբովանդակ գաւառն Գողթան ||։

Արճաւա, կամ Արեւա։ Գիւղ զոր վարդան աչխարհակիր գնեհայոց գաւառ, յասելն. *Գողթան գաւառն Կարուձ լինի և Ջուղայեցի, և Արճաւանն որ այժմ ասի Արդավատ ||։ ՚Ի նմին գաւառի ցուցանեն լինել և սահեփաննոս օրպէլ գէ. ՚ի. յասելն վասն ՚որդւոյ բարձուղիմեան. *Լակ որ առաքեալն չինէ եկեղեցի ՚ի գողթն յարևմտից եղերն ՚ի վերայ վիմի միոյ յիւրեանց հանգստեան տեղոյն՝ ուր վանքն էին կալեալ. և անուն կոչեցին Տեառն ընդառաջ, և արարին նշանս մեծամեծս. քանզի էր ջուր վնասակար ՚ի Արճաւա գիւղ՝ որ ուռոգանէր յամենայն ամի զամենայն անդաստանս և զայգիս. և աղօթեցին յանկարծակի, և կորուսին զջուրն, որ և տեղին կոչի ցայս օր ||։

Ջուղայ, կամ Ջուղա։ Լ՚ասն առ երասխաձոր մերձ ՚ի նախճաւան, զոր յիշատակէ խոր. ա. 29. առանց որոշելոյ զգաւառն, բայց նախագրեալ բանիք վարդանայ աշխարհագրի յայտնի դնեն յայս գողթան գաւառի։

Վանանդ. և Վէրան։ Յայսմաւուրս ՚ի 28. մարտի դնեն ցայս գաւառ, ուր ասի վասն ՚որդւոյ վահանայ գողթնացւոյն. * Լինկեալ ՚ի գողթան գաւառն իւր ՚ի Վանանդ, և յաւասն Վէրան ||։ Ո՚վանանդ գիւղ յիշատակէ և սահեփաննոս օրպէլ գէ. ՚ի. ուր թագեցին (ասէ) զաշակերտս ՚որդւոյ առաքելոյն բարթուղիմէոս. և շինեցին ՚ի վերայ՝ փոքրիկ մատուռն. էր անդ (ասէ) և բազին՝ զոր կորճաձև նեալ ՚որդւոյ առաքելոյն, շինեաց ՚ի տեղւոջն խրթին եկեղեցի, և կոչեաց յանուն ՚որդւոյն Թովմայի։ (1)

(1) Ա՚յս վանանդ գեօղ կայ մի տէր ՚ի նոր հայաստան. 270. մինչև ցայժմ մերձ յագուլիս զոր- զոր չէ պարտ չփոթել ընդ վա-

Աղաչեն։ Վաղաք՝ որ ’ի բանից հինչ ասողկայ է. 18. Թուխ լինել ’ի գողթան, զի ասէ Թէ ’ի Թուխն ինձ. * Հա նէ ’ի նմանէ զբաղաքն Աղարին, յաւարի առեալ զաշխարհն նորա զՎաղթն ‖։

ՆԱԽՃԱՒԱՆ։ (1)

Յաշխարհագրուէ խորենացւոյն յիշատակի ’ի կարգս գաւառաց, իսկ յայլ մատենագրաց գիրս Վաղաքն ևԷթ հռչակաւոր՝ որ ’ի նախին գաւառի՝ յայն անուն յիշատակի. միայն առ օրբէլեան պատմագրի գլ. Է. տպ. Թղթ. 25. գտանի յիշատակեալ և յանուն գաւառին՝ ուր ասի. * Ինդրէ պատճառանօք զտեղի ’ի Նախջևանու Վաստակն ‖։ Յարտաքին մատենագրաց պտղոմէոս կոչէ զնոյն ’ի Է. 13. Նախուանա։

Խորենացի ւս. 29. ’ի պատմելիս գործոց մեծին տիգրանայ՝ կոչէ զգլխաւոր տեղի գաւառին՝ Ոչդոյ և Ոչդոր. * Այնչափ ցնոյն ինքն (ասէ) Ոչմուրն Նախճաւանու ‖։ Նոյնպէս ’ի գ. 32. ’ի գրելն վասն թ. արշակայ՝ կոչէ Շ ենն. * Ի շինին նախճաւանի (2) բերին ‖։ Նոյց յաշխարհագրութեանէ իւրում կոչէ Վաղաք։ Նոյնպէս կոչէ և հեղինակն վարուց վահանայ գողթնացւոյն ’ի ձառընտիրս։ Ո աղար անուանէ Ոչօղ. իսկ Թուխմա արծրունի՝ Ոչաւն. և ուրեք Վաղաք, և անուանէ զնոյն Աղուան, յասելն. * Վանէ զի և զԱստանն Նախճաւան տուեալ էր ’ի կալուած ‖։

նանդ գաւառին այրարատոյ, յորոյ որոշումն գրէ ընդարձակող վարգանայ աշխարհագրի. * Գողթան վանանդ որիշ է ‖։

(1) Յերկուս ձեռագիրս աշխարհագրուէ խորենացւոյն գրի Նախջաւան, որպէս և առ յովհաննու կաթուղիկոսի, և առ ստեփաննոսի օրպէլեան ’ի բազում տեղիս. միայն ’ի գլ. Ճ. առ նորին ստեփաննոսի գրի Նախջևան։ Բայց ’ի պատմելիս խորենացւոյն ’ի թ. 7. և 48. ըստ տպ. և ըստ երից ձեռագրացն գրի Նախճաւան. միայն ’ի ւս. 29. այլոյլին օրինակք, ուր ոմանք գրեն Նախճաւան, և ոմանք Նախջաւան։ Նոյնպէս Նախճաւան գրի յերիս ձեռագիրս բուզանդայ ’ի գ. 55. առ զազարայ, առ յովհաննու կաթողիկոսի ուրեք, առ Թովմայի արծրունեցւոյ գրելիս միւսառ ասողկայ ’ի թ. և 4. ’ի հին ձառընտիրս ’ի վարս վահանայ գողթնացւոյն, և առ ստեփաննոսի օրպէլեան՝ ’ի միում վայրի. յորմէ յայտ է՝ Թէ օտար գրութիւն է Նախջաւան որ գտանի ’ի տպ. աշխարհագր. խոր. և ’ի միում ձեռ՛. պատմ. խոր. ’ի ւս. 29։

(2) Յերկուս ձեռ՛. խոր. Նախճաւանայ։

Ա՛ւ այլեւս. * Արթայ զետեղի ՚ի Նախճաւանն Վանիկ՝ Աղստանին Ա՛ասպուրական աշխարհին ||:

Օ դիւրս սորա խորհեսցին ա՛. 29. ակնարկել լինել հուպ ՚ի մեծ լեառն մասիս, և ՚ի զետեղը. որով պարտ է իմանալ զգետն երասխ, ըստ որում յայտնի դնէ զաղալ յասելն. Թղթ. 211. *Զայր հասանէը յաշխարհն հայոց ՚ի զետեղըն երասխայ, կամեցան անցանել ՚ի Կաւղն որ կոչի Նախճաւան ՚ի սահմանակցութենն սիւնեաց ||: Ըստ այսմ և ստեփաննոս օրպէլեան. *Նստեալ էր իւր զօրօքն ՚ի Գաշտին Նախջաւանու յեզը երասխայ ||:

Ա՛ւ անկանի ՚ի հիւսիսակողմն, կամ ՚ի ձախմէ երասխայ. զի զաղալ զվերոյհեղեալ բանդ գրէ վասն ատրվըշնասպայ՝ որ գայր յատրպատականէ. իսկ ատրպատականն անկանի յաջմէ կամ ՚ի հարաւոյ երասխայ. ըստ այսմ դնէ և ասողիկ ը. 3. յասելն վասն կայսեր Հերակլեայ. * Ա՛ւ դարձաւ Հերակլէս (՚ի փայտակարանէ) ՚ի Թէ կունս կոյս, հարկանէ զշահէնն երեսուն հազարօք, և ինքն ընդ ծղուկս (որ է գաւառ սիւնեաց՝) ՚ի Նախճաւան Թափէ. և անցեալ ընդ գետն երասխ յաւանն Ա՛ղբնը- նէս, գնաց ՚ի բագրեւանդ ||: Իսկ բագրեւանդ՝ քանզի անկանի յաջմէ կամ ՚ի հարաւոյ երասխայ, յայտ է թէ Նախճաւան՝ էր ՚ի ձախմէ կամ ՚ի հիւսիսոյ երասխայ: Օ այս յայտ առնէ և այժմեան դիրք նորա. վասն որոյ ՚ի դնելն խորենացւոյն ՚ի նոյն գլ. զՆախճաւան ՚ի գետ նողմանէ գետոյն, պարտ է իմանալ վասն ձախակողմեան գետոյն երասխայ [1]:

Իսկ ըստ նահանգին՝ գոլով յայնմ վայրի վասպուրականի՝ որ սահմանակից է սիւնեաց՝ (ըստ որում եդ ՚ի վերոյ ղազար,) ՚ի ժէ. դարուն անցեալ էր ՚ի սիւնիս. քանզի ստեփաննոս օրպէլ գլ. ձ. գրէ վասն սիւնեաց. * Ունի ՚ի Ա՛յրաքաղաք զՆախջաւան ||: Ա՛յլ թէ երբ անց ՚ի սիւնիս, ՚ի բանից ինչ Թովմայի արծրունւոյ՝ երևի լինել ՚ի է. կամ ՚ի ը. դարուն. զի գրէ ժ. 11. Թէ Նախճաւան մեծաւ. ամաք յառաջ քան զգագիկ արքայ, կամ յառաջ քան զգրեհէն իւր զային բան, ՚ի բայ հանաւ ՚ի վասպուրականէ, այսինքն՝ իբր յեղս անդ է. դարուն, և ՚ի սկիզբն ուԹերորդին. և զի սահմանակից էր սիւնեաց (որպէս ասացաք,) երևի Թէ յայնմ ժամանակի անց

(1) Որով և յայտ է վրիպակ ՚ի կարգս քաղաքաց մեծին հայոց՝ պաղամեայ՝ որ զՆախճաւան դնէ արք ձգին առ եփրատաւ:

՚ի սիւնիս։ Վասն որոյ և ՚ա. սմբատ արքայ յիւր ան-
ձ. դարուն ձեռագիր յետակարաւ ետ զայս քաղաք ՚ի
պարգև միւս սմբատայ իշխանին սիսականի, և յայնմանէ
ճագեցաւ խռովութիւն մեծ ՚ի մէջ գագկայ սրծրունեայ՝
որ զինի պակեցաւ Թագաւոր, և ՚ի մէջ ՚ա. սմբատայ,
և անտի համալխարհական կործանումն առհասարակ հայ-
ոց, զորմէ ընդերկար և անաչառութիւն [1] գրէ յովհան
նէս կաթողիկոս։ Այս այսպէս կամ ՚ի վախճան է. դա-
րուն՝ որպէս նշանակէ Թովմա արծրունի, և կամ ՚ի ձ.
դարուն առ ՚ա. սմբատաւ երևի անցեալ ՚ի սիւնիս։

Այս քաղաք պանծալի է ՚ի հնութենէ քան զամենայն
քաղաքս համօրէն աշխարհի. զի հասարակաց աւանդա-
թիւն է ազգիս՝ զոր և յիշէն ամենայն ձանապարհորդք
եւրոպեանց՝ գաւէրնիէ, շարտէն, և այլք՝ որք յայն կող-
մանս ձանապարհորդեցին, թէ ՚ի Նախճաւան եղև ա-
ռաջին բնակութիւն, ուստի և առաջին շինութիւն յարկաց
և տանց մարդկայինս ազգի յետ ելից իւրոց ՚ի տապա-
նէն։ Այս ՚ի հաստատութիւն այսմ՝ բերէն և զստուգա-
բանութիւնսորին իսկ քաղաքին, իբր թէ Նախ էլեան, կամ
Նախ աւան, այսինքն Նախկին իջևանիկն և բնականաբն
յետ ելանելոյ ՚ի նաւէն, կամ Նախկին աւան [2]։

(1) Քանզի Թովմա արծրունի պատմիչ ժամանակակից յովհան նու կաթողիկոսի, Թէպէտ և ակա նատես եղելոց՝ բայց ՚ի բաղում իրս յայս նկատ ծաղրանալով ՚ի յովհաննու կաթողիկոսէ, օտա րանալ երևի և յանաչառ գրութ, բաղում ինչ գրելով իբրև ՚ի չնոր հուկս գագկայ. այլ և այլ կարկա տուն պատճառանս կգտցելով գըժ տութեն գագկայ ընդ սմբատայ, յամենայնի գովելի ընծայեցուցեալ զգործս գագկայ, և զինքսա եղե լոյն հանելով ՚ի սմբատ, զոր քաջ կշռադատ պատմագրաց Թողուած ՚ի քննութեն մատուցանել։

(2) Ցիշէ զայս ուղիղ ստուգա բանութեն շարաձէն. այլ դաւէրնիէ ձանապարհորդ սխալի ՚ի ստուգա բանէն Նաաա էլեանէն, զի բառս Նախ՝ ոչ նշանակէ ՚ի մեր լեզու Նաա, որպէս նայն կարծէ։ Անհիմն է և ստուգաբանութեն ոմանց՝ զոր բերէն անգլիացի պատմաբանք ընդհանուր պատմութեն, իբր զի սակս բազմութեն նկարագրոց ա բուեհասարոյց անդր բնակելոց՝ կոչեցաւ այս քաղաք Նախճաւ ձէ հան. այսպէս հաստատեն առեղ պարսիկք, և ինքեանք անգլա ցիք իբր հաւանական ասեմ՝ յաե լումն թէ նաև ՚ի բարբառ հայոց Նախշաբար նշանակէ Նկարիչ, և Նախչէն՝ նկարել։ Ասել քանզի նախճաւան քաղաք ՚ի հայաստան է, և ոչ ՚ի պարսս, յայն սակս զըս տուգաբանութեն այնր պարս է խնդրել ՚ի հայոց և ոչ ՚ի պարսից. և անունդ այդ ՚ի գործ ածէր առ հայս և ՚ի հինգերորդ դարու՝ յո բում ժամանակի էր խորենացին, բազմօք Թերևս յառաջ քան զայն Նախճաւն՝ զորս երազին պատճառ այսր անուանակոչուեցաւ։ Իսկ Նախ ձարար և Նախչէն ՚ի գործ ածին ՚ի ռամկական լեզու հայոց՝ յետոյ ուրեմն մտածեալ յայոց ազգաց, որոց գործածութեն ոչինչ հաստատութեն բերէն առաջարկութեան խնդրոյս։ Որ Թողուած զի ձէ

Այսպէս ի մէջ բերէն և զյարմարութէն գրից, զի է մերձ ի լեառն այրարատեան՝ ուր հանգեաւ տապանն. նմին իբրև վանն նախաւանու պարտ է խմնալ զբան յով սեպոսի՝ որ ասէ [1]. * Յոկ զայս տեղի (այսինքն՝ զտեղի ելից նոյի.) հայք կոչեն Ախոռվէրէժ (այսինքն՝ տեղի ելից, չու, իջևան,) զի անդանօր զնչխարս պահեալ տաւ պանին մինչև ցայժմ ցուցանեն բնակիչք ‖: Վանդի ի կողմանս այրարատեան լերին՝ ուր եւ նոյ, ուր գտանեմք այլ քաղաք ինչ կամ տեղի որոյ անուն ստուգաբանեալ նշանակեսցէ Տեղէ էլէց, կամ Տեղէ իջևան՝ յարմար ասից յովսեպոսի, բաց ի նախաւանու:

Ասանօր դնէ Թաղեալ վարդան աշխարհագիր՝ և ըզ նոյն ինքն զնահապետն նոյ, ըստ որում առանդեն և բնակ կիչքն [2]:

Յայս քաղաք հաստատեալ էր երևելի աթոռն Ադիա կոպոսական՝ անուանեալ Ա՛րքեպիսկոպոսական, որպէս ցուցա նեն բանք Թովմայի արծրունւոյ էջ. 7. * Վասնզ ի հա րուստ անցեալ ժամացին ի Համբարձման աւանի Ա՛ր դաստան գաւառի, ուր Ադիակոպոսական աթոռ Ա՛արդ պետականին՝ [3] յայնժամ փոխեալ դնէր ի Նախաւան քաղաքէ ‖: Այս զի քաղաքն Նախաւան էր Աստան, (ըստ որում կոչէ զայն Թովմա արծրունի՝ զորոյ զբանն եդաք ի վերոյ,) յայն սակս Ադիակոպոսն Ա՛արդպետա կան ի ժողովն դվինայ կոչի Յովհաննէս Ադիսոպոս Աստան և Ա՛արքեպիսկոպոս, և այն՝ անմիջապէս զկնի կաթուղիկոսին: Նոյնպէս յիշատակի Յովհաննէս Ադիակոպոս նոյն աթո ռոյ անմիջապէս զկնի կաթուղիկոսին նաև ի Թուղթն մաթուսաղայի սիւնեցւոյն՝ առ ժամանակօք եզրի կաթու ղիկոսի:

Ի ժամանակս աբրահամու կաթուղիկոսի (ըստ գրելոյ ստեփաննոսի օրպելը գլ. իէ.) իբրև բաժանեցան վիրք ի հայոց. * Նոտուն զԱ՛ետրպսօլտուԹէն Ա՛արդպետական Ադիակոպոսին Ասէոդորոսի ‖. յայտ է Թէ ի ժամանա

հանիւմայն գրէ՝ Թէ զՆնէձէվանն արաբացի հնչելով՝ կոչեն ոմանք Նոփէն ձէհան, որ Թարգմանի Նկար աշնարհի:

(1) Դիրք ա. հնախօսուԹէ. գլ. 3. հատ. ա. ԹղԹ. 16. ըստ տպ. հավերքամբայ ի 1726, ուր յաւելուա մեկնիչն. * Ա յսինքն Հայք ի բարբառ իւրեանց կոչէին զտեղին այնուիկ անուամբ, որ ի յոյն լեզուփոխեալ Ախոռվէրէժան լսի ‖:

(2) Տէս և ի Դավերնիէ ձա նապարհորդ գիրք ա. գլ. 8:

(3) Յօրինակին վերպակաւ գրի Վ՛ԷրդպէՀպական, փոխանակ գրե լոյ Ա՛արդպետական:

կին յայնմիկ մեծ էր նա նախագահութիւն քան զայլ եպիս-
կոպոսունս, վասն որոյ նմա յաւէտ քան այլոց ընծայե-
ցաւ այդ պատիւ։ Ա՛յլ որպէս գրէ զնմին նոյն ստեփան
նոս օրպէլ՛ի նոյն գլ. իբրև * Հպարտացեալ (Թէոդո-
բոսի) խնդրեր եպիսկոպոսունս ընդ ձեռամբ լինել (որ-
պէս օրէն է այլոց ազգաց՝ մեծարապատց ունել եպիս-
կոպոսունս ընդ ձեռամբ,) առին՛ի նմանէ և զայն, (այս
ինքն՝ զմեծարապատական պատիւն, և ետուն առաջնոր-
դացն սիւնեաց՝ ըստ որում՝ նոքա) և յաւուրսն հարցն
նոյն պատուով (էին) կոչեցեալ։

Ա՛յլ Թէպէտ և այսպէս, բայց և զնմին՛ի ժողովն սիւնի
կաթողիկոսի՝ Վէտրդ Հատան Եպիսկոպոս յիշատակի
զնմին կաթուղիկոսին. նոյնպէս և յաւաջ քան զժամա-
նակն սիւնի՛ի ժողովն մանազկերտի՝ Յադեոս Հատան
Եպիսկոպոս (1)։ Յիշատակի և առ Թովմայի արծրունւ-
ոյ էջ. 2. Սահակ Եպիսկոպոս՛ի ժամանակս բուզայի.
* Ի մբռնեալ լինելոյ յայնժամ մի ոմն՛ի հայոց ազատա-
նոյն տոհմից վահեւունեաց՝ ապուսահակ ոմն եղբայր Սա-
հակայ Եպիսկոպոսի Հատանին նախձաւանու և Մարդ-
պետականի։ Իսկ և՛ի ժամանակս գագկայ արծրունւոյ
փոխադրելոյս՛ի Մարդաստան գաւառ, ըստ որում
յայտ առնէ նոյն Թովմա արծրունի. տես զբանս նորա՛ի
վեր անդր. Թղթ. 220. ուր Թէպէտ ոչ նշանակէ պատճառ
ինչ այնմ փոխադրուելոյ, այլ որպ հաւանական Թուի, էր
սակս բռնակալելոյն՝ այլազգեաց՝ որք տիրէին այնմ քա-
ղաքի, կամ առպատակաւ աւերելին զնոյն։

Յետ ժամանակաց յիշատակի և՛ի ժողովն Հռոմկլայու
Խաչիկ Եպիսկոպոս, այլ յանուն Նախձաւանի, և ոչ
Հատան Մարդպետականի։

Օ անուանս իւրաքանչիւր եպիսկոպոսաց յիշատակե-
լոց՛ի գիրս՝ դնեմք ըստ կարգի այսպէս. Յովհաննէս Եպիս-
կոպոս. Թէոդորոս Եպիսկոպոս Մետրապոլիտ. Յովհան-

(1) Թէպէտ ոչ յիշատակի ա-
նունդ Մատթէոսեան՛ի ժողովն
սիւնի կաթողիկոսի, և՛ի ժողովն
մանազկերտի գէթ ըստ մեր օրի-
նակաց, զի և՛ի ժողովն գնելոյ
յօրինակս ինչ պակասի բառգ
Մատթէոսեան, և գնի միայն Սոփ-
բայց որպէս յայտ է՛ի սուրբ
գոյն օրինակի ժողովոյն գնելոյ՝
(որ՛ի ժամանակս ներսէսի շնոր-
հի՛) և՛ի բանից Թովմայի արծ-
րունւոյ, և ստեփաննոսի օրպէ-
լեան, զորոց զբանս յիշատակե-
ցաք՛ի կարգի անդ, Եպիսկոպոսդ
Հատան ոչ այլոք է՝ եթէ ոչ Մարդ-
պետականն։ Ա՛յլ Թէ ընդդէմ կո-
չեցաւ Մարդպետական՝ տես՛ի
ներածութիւն հին հայաստանեայց՝
՛ի բանն որ յայտգոյ Եպիսկոպո-
սարանաց մեծին հայոց։

հետ Աղեքսոսոս. Ղազադոս Աղեքսոսոս. Գէորգ Աղեքսոսոս. Սահակ Աղեքսոսոս. Յակոբ Աղեքսոսոս։

Վանդեցին զայս քաղաք զօրք շապհոյ արքային պարսից՝ յաւուրս Ը. արշակայ արքային մերոյ, յորում ժամանակի Թէ քանի բազմամարդ էր, յայտ է՝ի Թուոյ գերելոցն՝ զոր դնէ բուզանդ Ճ. 55. * Պատ առին և զնա (զնախձաւան,) քանդեցին անտի երդս հայս երկուս հաղարս, և հրէայս երդս վեցհատասն հաղարս, անտի խա ղացուցին գնացին ամենայն գերութիւնքն հանդերձ։ Ի Ե. դարուն՝ի հիմանց քանդեաց կայսրն հերակլ յարշաւելն՝ի պարսս հարիւր բսան հազար զօրօք։ (1)

Յեկեղեցւոջ սորա հրամանաւ կաշմոստիկանին այրեցան բազմութիք նախարարաց աշխարհիս հայոց (2) յամին 704. ոգիք իբր ութ հարիւր, որպէս դնէ ստեփանոս օրպել։ Ի ժամանակս զազան խանին Թաթարաց յելս անդ ՃԺ. դարուն՝ զօրք Թաթարաց կողոպտեցին զեկեղեցիս նախձաւանու, և զմանուրայս գաւառի նորա, գերեցին զքահանայս. * Վարշեցին զդրունս քաւարա նացն, ընկեցին և զսեղանսն։ Ոտ որում գրէ օրպէլեանն գլ. Ե. կամիմն քակել և զեկեղեցիս, այլ ոչ Թողացուցին գլխաւորքն նոցա՝ ասէն ածեալք՝ի վրաց, և զի՝ բնակիչքն կաշառօք արգելին։ Նաև՝ի վերջին ժամանակս՝ բազում աւերմունս կրեաց յաւուրս սուլդան մուրատայ՝ի պատերազմին պարսից, և զկնի։

Հայեցեալ գալ և Ոտան։ Ասէ՝ի նախձաւան քաղաք դնէ զսոյն վարդան աշխարհագիր, զնոյն հաստատէն և բանք պատմելոյ հայկունեաց խաչին, ուր յիշատակի ընդ գաշտին և աւանն համանուն. * Երթալ գնաց (ասէ պատմիչն վասն տիկնոջն սիւնեաց՝) ընդ ձմեռապարէնն անցեալ՝ի գաշտին որ Հայկունեաց կոչի։ Վանզի գնայր նա՝ի գաղթէն Աղբաթոյ որ առ Սանատրուկ քաղաքաւ արքատաղ գաւառի՝ անցանել ընդ գաւառն Նախձաւանու՝ի Սիւնիս։ Այլ փոքր մի զկնի գրէ գնմանէ. * Գնեաց զՈտանն Հայկունեաց, և զառնդ աւանին, և ետ՝ի վանս նշանի խաչին, և ինքն գնաց յաշխարհն իւր։

(1) Ասողիկ Բ. 3. գրէ վասն հերակլի. * Զնախձաւան և զԴաձակ՝ի հիմանց բրէ։

(2) Նա ինքն ասողիկ Բ. 4. * Հրամայեցին յերկուս բաժանել զնոսա (այսինքն՝ զնախարարսն հանդերձ նոցին հեծելովք,) զմանս յեկեղեցին նախձաւանայ, և զկէսն յեկեղեցին խրամայ, և հրով վառեալ զեկեղեցիսն՝ այնպէս այրեցին զամենեսեան՝ի ՃԺգ. Թուականին։ Զոնսն գրէ նախ

Ռալայ սրահ, և Յաճուկ աւան։ Պատմիչն օրակելեան ի գլ. Ե. տպ. Թղթ. 25. յիշէ զայս տեղւ յասելն վասն Էլիկումի օրբելեան. * Խնդրէ պատճառանօք զտեղի ի նախիջևանու գաւառին... ընդ որ հաձեալ աթաբակին՝ տայ նմա զբերդն երնջակայ (1).. և զՅաճուկ աւանն, և զՌալայ սրահն ի նախջուան ։ Այլ զկնի. * Յուզարկէ զնա բազում փարթամութբ և երևելի փառօք ի քաղաքն նախջևան ։ Հանեալ այնուհետև Էլիկումին, և տիրեալ այմ նահանգի՝ կոչէ առ ինքն զեպիսկոպոսն սիւնեաց զտէր ստեփաննոս ։ Այլ ասպ. * Դեցեալ զբազում աւուրս Էլիկումին՝ եղև յաւուր միում հիւանդացնալ նմա հիւանդութբն մեծ, զոր լուեալ ելտիկուզ մեծ աթաբակին եկն ի տեսութբն ի Յաճուկ աւանն ։ Այլ յետ սակաւուց. * Մեծ սիջնլով և անանցական գրով ետ զՅաճուկ աւանն, և զՌալայ սրահն, և ի նախջևան յաւագ փողոցին՝ երեք կուզպակ՝ (կամ կուզպ) ազատ և Թարխան յամենայն հարկաց ։

ՄԱՐԱՆԴ։

Յայսմ գաւառի գնէ վարդան աշխարհագիր Թաղեալ գնոյեմշարա, յոր անուն ասեն կոչեցեալ գկին նոյն. * ի նախչուան է տապանն մեծ նահապետին նոյի, և նոյեմշարայ ի Մարանդ ։ Ըստ այսմ աւանդեն և բնակիչքն, զոր և յիշէ դավերնիւ գիրք ա. գլ. 8. և ի հաստատութբնն այնմ բերեն և զստուգաբանութբն անուանն Մարանդ, իբր Մայր անդ ։

Յիշատակի այս գաւառ և առ յովհաննու կաթուղիկոսի. * Ըստ այնմ մարզն հերայ և զարևանդայ, և Մանդայ, և նախջևանայ ։

Ունի և քաղաք համանուն, ուր Թաղեցան բազում սուրգանք պարսից, որպէս գրեն վարդան, և մատթէոս՝ որ ասէ վասն ալբասլանայ, Թէ որդի նորա * Խաղեաց զնա ի գերեզմանն հարց իւրոց ի Մարանդ քաղաքի ։ Յորմէ և յայտ է Թէ բազմութբն այլազգեաց բնակիչն ի նմա յայնժամ ի ժա. դարու ։ Խակ ի ժբ. դարուն ա

քան զառ և զևանդ պատմիչ ի Յաճուկ աւանն յանծանօթս մեծին պատմութբն իւրում ի գլ. թ ։ հայոց ։

(1) Տես զՄաճուկ կամ զՅա-

ռեալ՝ի ձեռաց այլազգեաց աւերեցին զաքարւէ և իւանէ հայկազուն զօրավարք Թամարայ Թագուհւոյն վրաց՝ զը բոց գրէ կիրակոս. * Ոոգան զօրօք քաղմօք՝ի քաղաքն՝ի Վարանդ, և առին զնա և աւերեցին զրազում գա ւառս որ շուրջ զնոքօք, և ապա գնացին յարտաւիլ քա ղաք ||:

՝ի ժողովն ԺՀ. դարուն յիշատակին Եպիսկոպոսունք Վարանդունեաց, ՝ի ժողովն ասոյ՝ Յովհաննէս եպիսկո պոս. և ՝ի ժողովն ատանոյ՝ Կոստանդին եպիսկոպոս:

Տեղի վասպուրականն նահանգին՝ որոյ գաւառք անճանօնք:

Ագ-ի: Ներդ անուանի առ ծովեզերք, զորմէ գրէ Թովմա արծրունի գ. 17. * Եայց աշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզերեցիսն որ ուԹմանիկքն կոչին, որք ամրանային՝ի Վիւիկ անկասկածելի քարանձաւին. վասն զի ըստ պտղոմեայ և աղեքսանդրի սահմանադրու Թեն, կամ Թէ մերն արտաշէսի որդւոյ սանադրկոյ, ՝ի վասպուրական գաւառացն համար Թուեալ է գաւառն այն՝ զոր Ձ. ամաք յառաջ հանեալ էր բռնակալուԹեն տաճկաց՝ի վասպուրական պետուԹէ ||: Եւ սուղ ինչ գիմի վասն ամրուԹեն նորին գրէ. * Ընպատերազմելի էր ամրոցն, միայն բաւականաւն ըռռնկացն մի վասնիցի ||:

Եառ զայս գագիկ արքայ՝ որպէս պատմի յերկրորդ վարս նորին Ե. 3. ուր ասէ. * Եակ զգաւառն ծովեզերի՝ յորում է աքանչելի և անառիկ բերդն Վիւիկ, զոր բա զում ժամանակօք յափշտակեալ էին այլազգեաց, բա զում և անհուն պատերազմաք յարձակեալ՝ի վերայ՝ ՈՁՃասէր իշխանաց մերոց առաջնոց, դեռ ևս ցայն ժա մանակս անդ յղփացեալ ամրացեալ կային մարդիկ դա րոն ուԹմանիկք կոչեցեալ, ընդ որոց մեծ ջանիւ աշխա տեալ տանն արծրունեաց՝ ոչ ինչ սանանել նոցա կարա ցեալ, մանաւանդ քաջն և յաղԹողն մեծանուն իշխանն գրիգոր՝ անուանեալն դերանիկ... Եւ մնացեալ բերդն Վիւիկ իւրական գաւառաւն վեր մեծ անգժկելի՝ի սիրտս իշխանացն վասպուրականի, որում ոչինչ սպեղանիք ա ռաջնոցն ազդեցին, որ տեւեաց եկն եՀաս իբրև Հարիւր ամաք մինչև՝ի ժամանակս քաջին գագկայ... (որ)՝ի գե ղերի գողանայ զամրոցն, և սրախողխող արարեալ զընա կ՝ ոչս բերդին՝ բնաջինջ բառնայ յերկրէ ||:

Յետ առնելոյն պատեաց զայն պարսպաւ, և կառոյց շինուածս. * Օ ըերդն Ա՛միւկ (ասէ) զզարմանալին զամբ ղոյն, զոր երկնապիշ և պարանոցատուն իմն գիտէ ա նուանել քան, բազում ճախիւքն և բազմագումար արուես տաւորք յերևելիս հրաշակերտ շինուածս. 'ի ծայրից անտի գագաթանն 'ի խոնարհ՝ մինչև ցեղր ծովուն լի և լի պարսպաւորէ անմերձենալի ամրութիւք ||: Տես վասն այսր 'ի նոր հայաստան ղ՚ամուկ. Թղթ. 150:

Շ արունակօղն Թովմայի արձրունեաց ցուցանէ թէ պատեալ էր ջրով ըստ աղթամարայ, այլ յայտ է թէ ըստ մասին միայն՝ զի չէր կղզի. * Ա՛ն ինաց (ասէ) տեղի քրխատունեից, բայց միայն յանմատոյց ամրոյն Ա՛միւկ, և յաճախնակ կղզոյն աղթամար, որ վայելչացեալ ունէն զգեղ վայելչութեն ամրացեալ աւեղք, և պարսպեալ խորխոտացեալ կոհակօք ||:

Ա՛ւ գոլով երևելի յիւրում սահմանի՝ առանձին գա ւառ կացուցաներ 'ի ժամանակի անդ Թագաւորութե արծրունեաց. * Ա՛նտրեաց տէր (ասէ նոյն շարունակօղն) տեսուչ և վերակացու այսմ՝ ճաղատոյ և անմատոյց ամրո ցացս՝ զայր ոմն տոհմակից արքային սենեկապետին 'ի Վա ւառն Ա՛մկոյ յագգէն արծրունեաց՝ անուամբ աբդլմանէ կոչեցեալ ||: Ա՛ր որպէս Թուխ՝ արտաքոյ էր յայնժամ այ լոց գաւառաց վասպուրականի՝ զորս Թուխ խորհնացին:

Ա՛յս ամրոց վկնի ժամանակաց Հանդ 'ի ձեռս այլազ գեաց, զորոց զառումն յեղգբուզայ յիշատակէ և վար դան պատմիչ, յասելն. * Ա՛յս (այսինքն եղգբուզ, կամ ըստ այլոց ելտկուզ զօրավարն պարսից) հաւ զ՚Ա՛մուկ 'ի խեաէնկայ, և զասատնաք 'ի վիզինայ ||: Յետ զայս բերդ և Թովմա մեծոփեցի առ ժամանակաք խրովք. * Ա՛յս մինչ յայս նեղութիւս կայաք՝ յանկարծակի զօրք բեր դին Ա՛մկոյ, (և) չար և անօրէն պիղծ իշխան նոցա... նստեալ 'ի նաւ եկին 'ի կղզին ||: Ա՛յլուր կոչէ նաև Վ՚որ Ա՛մկոյ:

Ա՛ման ամոաբ, կամ ամբոյ: Յայտ է լինել սորա 'ի վաս պուրական՝ 'ի բանից ինչ Թովմայի արծրունեայ Շ. 4. զի ասէ Թէ ապստամբեան կալեալ զերեսին որդիս դերանկին իշխանին արծրունեաց՝ եղ յամոաբ աշխարհն. որով իմա նայ զվասպուրական աշխարհ արծրունեաց, և ապա Թուխ զբերդս նոյն աշխարհին յորս եդ. յորոց զերկոսին քան զի յայտնի գիտեմք լինել 'ի վասպուրական, զհետ գայ՝ Թէ և երրորդն որ է Ա՛ման՝ էր 'ի վասպուրական. զա

շոտ եղ ասէ ՚ի նկան, զգուրգէն ՚ի կոտորն քերդ, իսկ զգագիկ Լ՚մրոն Ալան։

՚Ի նոյն ԿՀ· գԼ· գնէ զԼևան ՚ի փորն Ղբայ, որ ՚ի բանից նորա երևի նոյնպէս լինել ՚ի վասպուրական· ապուռրուան ասէ յինքն գրաւեաց զԼ՚մրոն Ալան ՚է փորն Լ Ղբայ։ Լ՚ալ յայտնագոյն ևս յովհաննէս կաթուղիկոս զՓորին Ղբայ՝ որ է նոյն, գնէ ՚ի տերութէ աշխարհին աղբրունեաց, այն է վասպուրական· * Ո՚յսու ժամանակաւ մեծ իշխանն աղբրունեաց աշոտ, որ ՚ի բողբոջից բուսոյ սենեքերիմայ արքայի եղեալ, զգնայր շրջեր զկողմամբք երոյ պերոնեն փոքր ինչ գնդով, և հասեալ ՚ի ձորակ մի՝ զոր Ձորակ Լ՚մբայ (1) անուանեն, երեկօթն անդ առնէին յաւգարակի՝ ՚ի ոջ՝ յորում քնակէին գաբաւոնացիք ։

Լ՚ւ այսպէս այս Ալևան ամրոց՝ զոր յիշէն Թովմա արծրունի, և յովհաննէս կաթուղիկոս սուղ ինչ զինի վերադրեալ բանից, այլ է յամրոցէ կղզոյն սևանայ՝ որ անկանի ՚ի սիւնիս, զորոյ զամրութէի յայտ առնել կամելով նոյն Թովմա արծրունի՝ կոչէ ուրեք Լ՚մրոց Ալևաւանէի, և միշտ զբառդ Լ՚մրոյ, կամ Լ՚մրոց զհետ յարակցեալ՝ այնպէս ՚ի գործ ածէ· * Կուրապաղատն տարուձոյ (ասէ ՚ի Ջ· 2·) կայր Լ՚մրոյին Ալևան՝ որ ՚ի ձեռն հասանայ որդւոյ վասակայ ամբարշտի ։ և այլուր ՚ի նոյն գԼ· * Խոստանայ առնել զգարձ Լ՚մրոյին Ալևանի, և աշխարհին նորա ։ Տես վասն այսր և ՚ի Ալևանն սիւնեաց ՚ի գեղարքունի գաւառ ։

Պղտանա ։ Գեօղ ՚ի սահմանի փորակին Լ Ղբայ՝ զոր յիշէ Թովմա արծրունի յերկրորդ վարս գագկայ· * Գնայ ՚ի հետիոտս ձակատել ընդ զօրաց իշխանին՝ որ էին ՚ի Գեօղն Պղտանա ՚ի գաւառին Լ Ղբայ՝ կոչեցեալ Փարակ ։

Ղբաձա ։ Յիշատակի առ Թովմայի արծրունւոյ· * Լր վէն օրինակաւ շրջեալ ընդ բոլոր աշխարհս վասպուրականն, և հասեալ ՚ի Գեօղն Ղբաձա (2) ինայր անդէն ։

(1) Թովմա արծրունի յերկրորդ բորդ պատմութէ գագկայ՝ զայս Ձորակ անուանէ Գառառ, յասելն· * Գնայ ՚ի հետիոտս ձակատել ընդ զօրաց իշխանին՝ որ էին ՚ի Գեօղն Պղտանա ՚ի գառառին Լ Ղբայ՝ կոչեցեալ Փարակ ։

(2) Յիշատակի ուրեք առ նմա զին Թովմայի արծրունւոյ ՚ի պատմէն երկրորդ անգամ զվարս գագկայ արծրունւոյ Ղբաձայն ամրոց՝ յասելն· * Որ բանեալ որջացեալ էր յՂբաձայն անուանեալ ամրոցի ։ Լ՚ալ թէ նոյն էցէ ընդ Ղբաձա անուանեալ գեղջ, կի՞ մերձակայ նմին, և կամ ՚ի նորին սահմանի, առ ժամս չունիմք ինչ ասել հաւաստի։

Իսրաէլէ ։ Օրմէ նոյն Թովմա արծրունի . * Լսելոյ պատահեն զօրացն ի զօրագլխացն վասպուրականի , ի Վեղն՝ որում Իսրաէլեըքն ասեն ։ Լաւ Թուի լինել մերձ ի բերկրի ։

Վափկակերտ ։ Ճ հինեաց զայս գագիկ արքայ նախ քան ընդդատաւորելն . * Վարձեալ լինէ (ասէ Թովմա արծրունի ։ գ . 11 .) զօրավարն գագիկ ի դլուխս ՈՁ հրոյ , որ վճռեալ իսատուցին սատակաւղիչ դառնալոյ մահաճին հողմոյն հնչելոյ այսպէս անուանեն , փոխէ անդ գեօղս , և լինի զբլուրն՝ որ տեղի բանակի զաշիկ առնելոյ էր տանն արծրունեաց , և անուանեաց յանուն իւր զձեռակերտն Վափկակերտ , և դարձոյց անդր փոխելոյ գեօղիցն ։

Վաղուան ։ Ձիշէ Թովմա արծրունի . * Ի մտանելն նորա ի Վատուան աւանն՝ զոր իւրեանց սեպհական հայրենեացն ժառանգութիւն ։ Տես վասն այսր և ի նոր հայաստան . Թղթ . 165 ։

Աղթաշէեան աւան ։ Օրմէ Թովմա արծրունի ի գ . 17 . * Աշտ վերջանեալ ենկն բանակեցաւ Աղթաշէեան աւանի , և յիսէ ի վան քաղաքի ։ Ասելիս նոյն է սա ընդ Աղթամատ կամ Աղթամէտ աւանի , զոր չինեաց արտաշէս ։

Աղաղոյս կաթոլ ։ Ընդն բլոյ՝ զոր յիշէ Թովմա արծրունի գ . 17 . * Յառաջխաղալ ընդ Աքաղայոյ կատար ասացեալ բլուրն ։

Այս ամենայն տեղիք ի բանից նորին Թովմայի արծրունւոյ երևին լինել ի վասպուրական , կամ ի սահմանի արծրունեաց , որպէս և գիւղ ինչ Վայկղան անուն , որ Թուի լինել ի տոսպ գաւառի ։

Ընձաեաց ճձածէն ։ Ասուի լինել Ալանք , և յիշատակի ի յիշատակարանի գրչագիր աւետարանի գրելոյ ի ձեռն ռոմանոս վարդապետի ուրումն , ուր և ասի . * Ի Թուիս հայոց չիե . . . ի Թագաւորութենն հայոց լևոնի . . . և մեր ընդ հովանեաւ լեալ Ընձաեաց ճձածէնին ի գաւառիս վասպուրականիս , ևն ։ Լաւ ապա գրէ , թէ՝ յիշեցէք զմեր Վեղջս զպոլորս մկրտիչն . ևն ։

Նալբէր գեղ ։ Ա արգան գրէ վասն գեղոջդ վարդապետի մեղրիկ կոչեցելոյ , թէ * Էր ի վասպուրական գաւառէ ի Նալբեր կոչեցեալ գեղջէ ։

Լիճ , և Վոսոց ։ Ի վախճան վասպուրական նահանգին դնեմք և զերկուս զայսոսիկ կղզիս ծովուն աղթամարայ , զորոց Թէպէտ չիք ինչ յիշատակութենէ առ նախնի մատե-

նագիրս մեր մինչև ի դարն ԺԶ. այլ ի վախճան նոյն դա-
րու գտանի անուն առաջնոյն ի յիշատակարանի միում
գանձուց գրոց. և |՝կեղեցկին որ յանուն Աբգն գեորգայ
յիշատակի անդէն. * Վրեցաւ..ի | խին կղզիս՝ ընդ
հովանեաւ Աբգն գեորգեայ հայակատ և հնչակաւոր բարձ-
բաշէն և գեղեցկաշէն տաճարիս, յամի ուԹ հարեւր-
երորդի քառասներորդի և երորդի. յորում ամի ՅՁ ծաստաստ
բարկուԹիւն շարժեցաւ ի վերայ երկրի՝ արիւնալցու
զօրքն ԹաԹարին՝ որոյ անուն գլխաւորին լանկԹամուր
կոչիւր... յորոյ սատիկն զերծեալ մեր ապրեցաք առ
ոտս երջանիկ վարժապետին սարգսի ի | ըմն կղզիս ||:

|՝Ա Թովմա մեծոփեցի ի սկիզբն ԺԸ. դարուն, ի ԹուխԹ
պՀԵ. գրէ զանձնէ՝ ԹԷ փախուցեալ յերկրէն քաջերու-
նեաց յերեսաց զօրաց սբանդարին՝ * |՝ազատուրծ եւ
զեալ կամաւք մնանել ի կղզին | մայն, և իբրև մնաք...
սիրով ընկալաւ զմեզ Հոգևոր եղբայրն մեր վարդապետն
և եպիսկոպոսն յոհաննէս: |՝Ա մինչ յայս նեղուԹիւնս
կայաք՝ յանկարծակի զօրք բերդին ասկոյ և.. իշխան
նոցա ՀաՃի պէկ անուն նստեալ ի նաւ՝ եկն ի կղզին ||:

|ակ սկզբնաւորուԹիւն անապատական կենաց, կամ նո-
րոգուԹիւն ընծայի ներսէսի վարդապետի մհկացոյ ի ԺԷ.
դարու, ըստ որում գրի ի յիշատակարանի ինչ գրոց ոտա-
նաւորաց գրելոյ ի ստեփաննոս գրչէ. * Վ՝իտելի է՝ զի
հնգն (ներսէս) ի մհկաց է, և գնաց յանապատն տա-
Թևայ Ձ. տարի եկաց, և եկաւ անտի աստ ի | մայ կըղ-
զիս՝ Հաստատեաց անապատ...ի ԹվԼ. ՌՀԱ ||: |՝Ա այլ-
ուր ի նմին մատենի. * |՝ոկացի ներսէս վարդապետն..
եկաւ ի վանայ երկիրս ի | մայ կղզիս, անապատ Հաս-
տատեց ի ԹվիՆ ՌՀԱ ||: Ընդարձակ ևս առաքել պատմիչ
գԼ. իա. ԹղԹ. 251. * |՝ելեալ գնաց ի գաւառն վասպու-
բականի, և եմուտ ի կղզին | մայ ի ՄՂՋ ծովուն, և անդ
ժողովեցան առ նա բազմութք եղբարց, և եղև անապատ||:
Ուր յիշէ և զմահ նորին ներսիսի ի ՌՀԶ. ԹուխԹ:

Յիշատակէ ապա և զկղզին Կաուց. * |՝ս զկնի նորին
յաջորդեաց զառաջնորդուԹիւն տեղւոյն ընկեր նորին
ստեփաննոս վարդապետն, և յայսմ ժամանակիս և ևս
առնեցան միաբանք | մայ անապատիս, վասն որոյ ոմանք
ելեալ ի | մայ՝ գնացին ի տեղին որ անուանի Կաուց,
որ և առ կղզի է ի ՄՂՋ նոյն ծովուն, և անդ ևս շինեցին
զմանապատ և զեղբայրանոց ||: Յետ և ի նոր հայաստան
ԹղԹ. 154. 155:

ՆԱՀԱՆԳ ԻՆՆԵՐՈՐԴ

ՍԻՒՆԻՔ ԿԱՄ ՍԻՍԱԿԱՆ

Ա՛ռաջինն անունն է սովորական յաղգի մերում, իսկ երկրորդն առ սպարսիկս, Թեպետ և է ուղղագոյն. քանզի այս նահանգ զսնուն իւր ընկալաւ՝ ի սիսակայ որդւոյ գեղամայ՝ հինգերորդ նահապետի ազգիս, նմին իբրև ուղիղ անուամբ անկ էր կոչել զսա Սիսական, որպէս և գրէ խոր. ենացին ա. 11. * Ա՛յսր ծնաւ (այսինքն՝ ի գեղարքունիսն՝ գեղամ նահապետ) զորդի իւր զՍիսակ, զայր սեգ և անճնեայ... (և) սահմանես հատանել նմա ժառանգութեա՛ն՝ ի ծովէն՝ (որ է ծովն գեղամայ) ընդ արեւելս մինչև ցդաշտ մի, ուր գետն երասխ հատեալ զքարանձաւս լե՛ռանց անցանէ ընդ խոխոմն ձիգս և նեղս... Ա՛յսր ծնաւ կեալ Սիսակ՝ ընու չինուածք զսահմանս իւրոյ ընակութե՛ան, և զաշխարհն կոչէ իւրով անուամբ Սիսական, այլ պարսք յոտակագոյնս իսկ Սէսական կոչեն ||:

Ա՛րդ Թեպետ Սիւնիք անունն է առ մեզ սովորական, սակայն և Սիսական անունս ոչ սակաւ ուրեք՝ ի գործ ածի, որպէս յասելն ստեփաննոսի օրպելեան գլ. լէ. * Ո՛չ միայն այս՝ այլ և բազում էին չինեալ եկեղեցիք՝ ի Սիսական աշխարհի, և յարարատեան գաւառի ||: Կամ այլուր յասելն. * Խնդացին ամենայն տունն Սիսակա՛նու ||: Այլ որ առաւելն է՝ ի միում և՝ ի նոյն բանի նախ կոչէ Սիւնիք, և ապա Սիսական՝ յասելն վասն մըռնանայ գլ. լը. * Ակեալ՝ ի Սիւնիս ամրանայ՝ ի բերդագիւղն Շ աղատու, և կամէր և զայն ևս ապստամբել՝ զեղեցիկ աշխարհն Սիսական ||: (1)

Ա՛յսր այսմ և յոհաննէս կաթուղիկոս՝ ի միում և՝ ի

(1) Շաղատ՝ ոչ էր՝ ի սիսական մանաւանդ գաւառի, որ վերեալ կաւ գնի՝ ի տպագրեալն աշխարհագիր. խորենացւոյն, այլ՝ ի ծաղուկս. ուստի Սիսական առ նուամբ իմանալ ասելն ստեփանոսի նոյն օրպէլ զրոյցս Սիւնեաց:

նմին պատմութիւնէ մովսէսի՝ զոր աշտա՝ իշխան էր կացուցեալ ուտի գաւառին, նախ կոչէ Աիւնիք, յասելն. * Արթայր անկանէր (մովսէսն) յաշխարհն Աիւնեաց առ իշխանն սմբատ ||. իսկ սուղ ինչ զկնի՝ կոչէ Աիսական. * Ղուեալ մովսէսն ի Աիսական կողմանցն || առ քորիկոսոսն ծանարած: Յայսմանէ զլասական անուանեալ նեալ գաբուռն՝ նոյն յովհաննէս կաթուղիկոս նախ կոչէ՝ Իշխան Աէնեաց և զկնի՝ Իշխան Աէսական: Իբր զայն իշխանն սմբատ՝ որում ա. սմբատ արքայ եւ գնախձաւան, յովհաննէս կաթուղիկոս կոչէ Իշխանն Աէսական, իսկ ստեփաննոս օրպել. ի գլ. լբ. կոչէ Իշխանն Աէնէ: Իբր ընդ հակառակն՝ ուր յովհաննէս կաթուղիկոս զսմբատ ա նուանէ՝ Աէնց էշխանն Աէնեաց, զնոյն սմբատ՝ ստեփաննոս օրպել. կոչէ՝ Աէնց էշխանն Աէսական սմբատ:

Աչափ ինչ յառաջ բերաք առ ի յանդիման կացուցանել ընթերցողաց՝ զի մի զանուննս Աիսական կարծեսցեն առանձին գաւառ ի սիւնեաց նահանգի, որ վրիպակ կաւ գնի ի տպագրեալ աշխարհացոյցն. խորենացւոյն. որպէս ունիմք գրել զկնի:

Այլով անուամբ գտանեմք կոչեցեալ զայս նահանգ առ կորիւն վարդապետի, այն է Աէսական աշխարհ, որ է ածանցեալ յանուանէս Աիւնեաց:

Ձիշատակի և առ պրոկոպիոսի (1) ի գրելն, թէ ի ժամանակս յուստինիանոսի կայսեր՝ * Արաքեաց կաւատ (արքայ պարսից) ի հայս՝ որ էր ընդ իշխանութեամբ հռոմ մոց՝ այլ զօրս հաւաքեալ ի բերասամխիոյ, և ի Ասանդ գեայդ (այսինքն ի Աիւնեայգ) որք սահմանակից են ալա նաց ||: (2)

Ա ամն անուանս Աիւնեաց՝ են և երկու ինչ, զոր պարտ է ի միտ առնուլ: Այն՝ զի թէպէտ ստէպ ի գործ ածի յարակցեալ ունելով զառաս աշխարհ, կամ գաւառ, բայց և ոչ սակաւ ուրեք ինքնին առանձին ի գործ ածի, որպէս յասել անդ ստեփաննոսի օրպել. գլ. լբ. * Նկին և վախտակականքն սահակ սիւնեաց տէր, և բարգէն և վասակ եղբարբք սմբատայ ի բնիկ աշխարհս իւրեանց ի Աիւնիս ||:

Երկրորդ՝ ի գործ ածի փոխանակ բնակչաց, ըստ այսմ

(1) Գիրքն պատերազմայ պարս. պրոկոպիոս ընդ Աղանաց ի մի յոսկ ա. 15: գէ և զԱղուանս, որում սահմա-
(2) Թուի թէ յայսմ վայրի նակից էր Սիւնիք:

խորենացին գ. 46. * Աեռանի և սպարապետն Նորա գարա Աիւնի՝ ի պատերազմին ‖, այսինքն՝ որ էր՝ ի Աիւնեաց նահանգին։ Այնպէս և առ ստեփ. օրպել. բա զում ուրեք. * Ցէր ներսէհ Աիւնի որդի փիլիպէի սպա նանէ վասն ոխութեան ‖։ Նոյնի՝ ի գլ. լէ. * Նոյ անգէն հա բեալ զգեղեցկադիտակ իշխանն Աիւնի սահակ՝ գիտեաց եալ յերկիրն ընկենոյր ‖։ Նոյն թէ՝ * Պպա և զերծեալ մեծին վասակայ Աիւնոյ մօրքն իւրով և եղբարբն, և այլոք իշխանաքն՝ ի գերութենէն բուղայի, և գառն կապա նացն՝ գայ մնանէ՝ ի սեփական աշխարհ իւր Աիսական ‖։ Նոյն՝ ի գլ. թ. * Նոյ հրամանն տուեալ անդրադարձ սիւնեաց տէն ամենայն Աիւնեաց փախչել ‖, այսինքն՝ բնակչաց սիւ նեաց։ Որով յայտ է թէ՝ Աիւնեցի կոչել զբնակիչս՝ օ տար է յոմէից աստի. բայց և առ ստեփ. օրպել. ի գործ ածի՝ ի գլ. իէ. * Աի լեցի քեզ շարժիլ՝ ի տեղւոյս առանց մանաւանդ Աիւնեցոյ ‖։

Ոչխար Աիւնեաց անկանի յարևելեան կողմն այրարա տոյ՝ ընդ մէջ երասխ գետոյ և արձախայ։ Աիւնի գժուա բին տեղիս, որպէս յայտ լեցի՝ ի ստորագրութենէ գաւա ռաց իւրոց, և ըստ որում ծանուցանեմ այս բան յոմէական նոյ կաթուղիկոսի. * Ել և զսիսականացն տերանց և ազգաց՝ ոչ սակաւ ինչ աղմուկ շփոթից շուրջ պատէր յոս տիկանէ անտի, որք և ամրացեալք իսկ՝ ի խորհուն խո րոյն ձորոց, և յամուրս քարանձաւաց, բազում արշաւ սոյր հչնս՝ ի վերայ Թշնամեացն հասուցանէին ‖։ Ա՛ս որոյ՝ ի տալ. պատմութենէ օրբէլեանց գլ. է. կոչի Ոստր Նա յոխ աշխարհն սիւնեաց։ (1)

Ի քերոց՝ (ըստ ասից խորենացւոյն) ունի Աուրտ, Վերերի, և Կուռն։

Օ բարս բնակչաց կողմանց ինչ սիւնեաց՝ կորիւն կոչէ Վաղաշտափոս, Վայրենագոյնս, Ձիաաղբարոյս. և այլ պատմու թիւնք ցուցանեն լինել զԱիւնիս զօրաւորս, կորովիս, Ճար տարս և կայծղս՝ ի մարտի և յուսման. այլ նոյնպէս յա ջողս և՝ ի գործս ժամտուէ, որք պիտացին զանձեռնաո կելիսն և զզարհուրելիսն՝ ի գործ դնել՝ առ՝ ի վրէժ առ

(1) Իակ այն բան աշխարհագրու թեն խորենացւոյն յորում ասէ լի նել Ասդր պէղէտ՝ ի պնդոս, չիք յերկուս ձեռագրս, այլ՝ ի մուսն ևէթ, ի տպ, և առ Թովմայի կի լիկեցւոյ, որ՝ ի ստորագրեն զգ հայաստան՝ գրեթէ բառ առ բառ օրինակէ զխորենացին. բայց անյար մարելի կարգի շարադրութենէն՝ կարծիս ասյ՝ ի վերջոյ յաւե լեալ զայն՝ ի բանս խորենացւոյն։

նուէր յիւրեանց առեալեաց, որպիսի եղեն վասակ մարզպան, վարազվաղան, գրիհոն. նաև ի կանանց իսկ՝ փառանձէմ, և կինն այն՝ որ ինքնին սրով սպան զառեւթան նոս քսանեւորդ երկրորդ եպիսկոպոս սիւնեաց։

Իշխանութեի և նահապետութեի սիւնեաց ի սկզբանէ անտի գտաւ երևելի, և բազում պատուով մեծարեցաւ. * Ակսեալ նահապետութիւնս այս (ասէ ստեփ. օրպել. գլ. ՃԸ.) ի նախնեացն սիսակայ՝ երևելի հարազատութեք պայազատեն զաւերութիւն որդիք ի հարց՝ երկայն և բազում ժամանակաւք, բազում և մեծամեծ քաջութեիս ցուցեալ ի պատերազմունս Թագաւորացն Հայոց, և բազում և մեծամեծ պարգեւաք և գահիւք պատուեցան ի Թագաւորացն պարսից և Հայոց, նաև յունաց իսկ. և այնքան անուանիք եղեն՝ մինչ հրամայեցաւ նոցա գահոյս ունել արծաթի, և վարսակալ ածել մարգարտեայ, և մատանի ունել վարազագիր, նաև կօշիկ կարմիր, և մեկան ոսկի՝ ունելով ի վերայ գրեալ զանուն և զպատիւ ցեղին ‖։ (1)

Նոյց բուն գահ իշխանութեե սիւնեաց կարգեցաւ ի վաղարշակայ. * ի սորա ծննդոց (ասէ խորենացին ա. 11. այսինքն սիսակայ) աստ ուրեմն վաղարշակ որ առաջին ի պարթևաց արքայ հայոց, գտեալ արս անուանիս՝ տեառս աշխարհին կարգէ, որ է Ախսականդ ազգ ‖։ Այլ ոչ միայն իրը հասարակ իշխան կարգեաց, այլ և կողմնակալ առ լևեռեան կողմանն. * Այս յարևելից կողմանէ (ասէ խոր. բ. 7. կամ ըստ ձեռ". 8.) զեզերը հայկական խօսիցն՝ կողմնակալս (կարգէ) երկուց ցեղից տանց նահապետութեցն Ախակեան և Կադմեան ‖։

Այս կողմնակալութեան պաշտօն իշխանացն սիւնեաց հաստատեցաւ նաև յաւուրս մեծին տրդատայ, յորժամ նորոգեալս ի կարգի եդ զիւր թագաւորութիւն քան և մի իշխանաւք կարգեալ ի պահպանութիւն արևելեան կողմանն. նաև անցոյց ի թիւս ութ իշխանաց՝ որք ի մէջ չորեքհարիւր իշխանաց տրդատայ գահակալութիւք անուանեին՝ որպէս յայտ առնէ ստեփաննոս օրպել ի գլ. Է. առեալ ի զևոնդայ։ (2)

(1) Թուի թէ զայս ամենայն պատիւ զոր թուէ ստեփաննոս օրպել, գէթ զմանս ընկալան իշխանքն սիւնեաց զնի վաղարշակայ. քանզի պատուեցան ասէ նաև ի յունաց թագաւորացն, զոր պարսից իմանալ վասն յունաց կայսերացն՝ սկսեալ ի մեծէն կոստանդիանոսէ. որ բազում ամաք յետոյ է քան զվաղարշակ։

(2) Այլ չէ պարտ զայս կարգ յուզել յագաթանգեղոս ի թզթ.

Նայեց այս շուք սիսական իշխանութեանն ուստատացաւ մի ծագէս յելս անդ Ք. դարուն, ի ժամանակս արքայիցն Ք. արշակայ, և պապայ. և նահանգն սիւնեաց զամն քսան և հինգ առհասարակ ապականեալ աւերակ մնաց. զի շատուհ արքայ պարսից զանդուկ իշխանն սիւնեաց կայցոյց ի չորեքտասաներորդ կարգի իշխանացն Հայոց. ընդ որ խոժոռեալ անդուկ՝ հնարիւք յաւարն առ զտիաբան քաղաք, և քնակչացն սիւնեաց հրամայեաց փախչել, և զտունս և զհամբարանոցս համբարօք հանդերձ այրել. և ինքն հուսկ յետոյ զերծեալ անկաւ առ մեծն Թէոդոս, և ի նմանէ ընկալաւ զանունս Պաթրիկայ պաթրկի։ Ընդ աւուրս գազանաբար ի վերայ յարձակեալ սիւնեաց, ձառ ի պահանջել զվրէժ աւարառութեանն տիրանայ՝ ոչ ինչ է գիտ բաց յեկեղեցեաց, զորս և առհասարակ քանդեաց։ (1)

Յայնմ հետէ այնչափ ատելութիւն կալան պարսիկք ընդդէմ սիւնեաց, զի սանդ եգեալ յարքունի պալատին իւրեանց լն մխիրով հնոցի՝ կոփելով ի վերայ մխրոյն՝ ասէին. * Սիւնեաց տերանցն նախագահութեն տէրութեն ըստ այս մխիրս ի վայր լեցի, և որպիսութեն նոցին խորհրդոյ և կենաց ‖։ (2) Ալ զայս անարգանս ետ բառնալ բաբիկ իշխան որդի անդուկայ ի հնորհս քաջագործութեն՝ որով սպան զգլխաւորն հնոյց ի մենամարտութեն, և ընկալաւ ի շահակայ արքային զսեպհական տէրութիւն սիւնեաց նահանգին, և զնախագահութեն համապատիւ լինելոյ ընդ բագրատունեան և ընդ մամիկոնեանս՝ յերկրորդ աւի Ք. խոսրովու հայոց արքայի, Տարիւր երեսուն և ութ ամաք յառաջ քան զթուականն հայոց։

Ա՝եծապէս զարդարեցին զերկիրն սիւնեաց, և բարձ բացուցին զիշխանութեն իւրեանց երկոքեան իշխանքն գրիգոր՝ Մուփան մականուանեալք, ի Թ. դարուն. վասն առաջնոյն գրիգորի սուփանայ՝ որ էր որդի սահակայ սպանելոյ ի հօր ոստիկանին, գրէ ստեփաննոս օրպէլ՝ի գլ. լէ. * Ա՝ռաւել քան զնախնիս իւր կարգեր զգահ իշ-

* Ընպայազատ զսիւնեացն հրամայէ առնել զառմ‖։ Աւր ի տալ. վրնպակաւ գնի Ա՝զատ առնել։

(2) Զայսոսիկ պատմէ ստեփ. օրպէլ. ի գլ. Թ. և Ժ. առեալ ի ներբողենէն պետրոսի քերթողի (աշակերտին մովսէսի քերթողի) ի բաբիկն սիւնի։

(1) Զայս Թշնամութեն շատոյ ընդ սիւնիս սակաւուք յայտ առնէ խորենացին ի ՟ե. 28. յաւելն ըստ երից ձեռագրաց ևս, Թէ շատուհ յետ առնելոյ զտիգրանակերտ յՀԹ. և ոչ ի յԺզ. ուր զիշխանն սիւնեաց մեռաստաներորդ գասէ ի մէջ այլոց յիշատակեալ իշխանաց։

խանութեն իւրոյ, և տնօրինէր զշինութեն աշխարհիս ||։ Յակ վասն երկրորդ գրիգորի սուփհանայ որդւոյ գաբռուն վասակայ գրէ յովհաննէս կաթուղիկոս. * Այս իմաս տութեն և յաջողաձեռնութեն և շինութեն բազմաս անդր ևս քան զպայմանն ընդր զչափ հարցն իւրոց. բայց առաս ել յեկեղեցեաց քեմ 'ի շինութեն և 'ի նորոգութեն գինեաց վերաբերեր ||։ Յս ստեփաննոս օրպել. գլ. լէ. գրէ. * Յարգարեր զգեղեցիկ կարգ իշխանութեն իւրոյ, և ևս առաւել ծախեր զամենայն փարթամութեն իւր և զկեանս 'ի գործ ճշպաշտութեն, և ('ի) շինութեն պայծառակերտ քաւարանաց (այսինքն՝ եկեղեցեաց՝) որ գեռևս կան և վկայեն իրքն ||։

Ա՛յլոր հարկաւոր է 'ի գիտել վասն իշխանութեն սիւնեաց, այն է՝ զի ցեղք իշխանաւն յայս նահանգ էին երկու. մին՝ Վահեւնեաց, զոր վասն այնորիկ յովհաննէս կաթուղիկոս, և ստեփաննոս օրպել. սովորաբար յորոշումն՝ ուրեք կոչեն Վահ, բազում ուրեք Վահէրէդ, որպէս յաւսեէն ստեփաննոսի օրպել. 'ի գլ. լը. վասն աշտոյ որ յաւուրս յուսիայ ոստիկանին 'ի վահճան թ. դարուն. * Յորում աւուրս Վահ նախարարն սիւնի, և Վահերէդ իշխանն աշտ՝ յետ բազում քաջութեց մեծամեծ երևելի գործոցս, այնչափ բարեպաշտութեց և շինութեց աշխարհի՝ եկեղեցեաց և վանորէից՝ փոխի յաստեացս ||։ Այսինն այլոր 'ի գլ. լէ. կոչէ Վահափլոխ, յասէն վասն նորին աշտոյ և որդւոց իւրոց. * Յայց մեծ իշխանքն Վահագլոխք սիւնեաց տերութեն աշտ և որդիք իւր սքաւռ ևն, յոլով և մեծամեծ երևեցուցին գործ 'ի շինուածս եկեղեցոյ զարմացուցիչ ամենայն տեսողաց ||։ Յս 'ի լը. գլ. վասն սքաւոյ ասէ. * Կացուցին զսքաւս Վահագլոխ իշխան սիւնեաց, և տէր 'ի վերայ սիսական աշխարհին ||։ Յեր ստոլս կոչէ զնոյն սքաւ՝ * Վահերէդ իշխանն սիւնեաց ||։ Յրիկիր այսր ցեղի՝ էր Յաղք գաւառ, Ա այոյ ձոր, և շրջակայք։

Յակ զիւս ցեղն՝ երկոքին ևս յօհաննէս կաթուղիկոս, և յետ նորա ստեփ. օրպել. գլ. լը. անուանեն Հայկազունս վասակ եղբայր մանկազուս իշխանին գրիգորոյ ||։ Յս օրպելեանն ուրեք 'ի գլ. լէ. Ասպուհն անուամբ յիշատակէ, յասէն. * Յակ մեծ Ասպուհն իշխանն սիւնի վասակ գաբռուռ ||։

Յրիկիր այսր ցեղի՝ էր շրջակայ սահմանն ծովուն գէ

ղամայ , որ է Վռեղարքունի գաւառ , ղորմէ տէս և ’ի կարգի ստորագրութէն գաւառացն : Եւ վասն զի ցեղն որ տիրէր ’ի գեղարքունիս՝ ’ի սկսակայ անտի որդւոյ գէ- ղամայ ունէր զիւր տէրութէն և զժառանգութէն , վասն այսորիկ կարծեմ տիրաբար կոչեցեալ Հայկազուն : Իսկ միւս ցեղն իշխանութէն՝ Թուի լինել այն , որ զինի սկիղբն էառ ’ի վաղարշակայ , Թէպետ և Վահագնեաց կարգեցաւ :

Օ երկոսին իսկ ցեղսն ’ի կրկին տեղիս յիշէ յոհաննէս կաթողղիկոս մի զինի միոյ , նախ՝ յաւուրս աշոտոյ՝ որ և կարգեցաւ առաջին Թագաւոր բագրատունի , յասելն . * Օ մեծ իշխանն սիւնեաց վասակ , որ ըստ փաղաքշական նմին Իշխանիկ անուանիւր ‖ : Եւ ապա . * Օ միւս ևս իշ- խանն սիւնեաց վասակ , որ Վահրուձն՝ փաղաքշաբար անուանիւր ‖ , և տիրէր գեղարքունեաց : Երկրորդ՝ յիշէ յաւուրս շահանշահ աշոտոյ՝ դնելով և զերկիրն . * Այդ հեզահամբոյր իշխանն սիւնեաց ընդ կրունկն յարքայորդ- ւոյն դարձեալ յարագած լեռնէ անտի , ջուխ հանդիպի հղեալոց իւրոց երեցունց՝ սահակայ սիւնեաց ՚ն , և բաբ- կէնի և վասակայ . վասն զի և նոքա դեռ ընդ դեռ է- կեալ անցեալ էին յաշխարհ տերութէ իւրեանց ... տի- րէին ’ի վերայ սեպհական իշխանութէ իւրեանց , գուն ’ի վերայ գործեալ շինել և նորոգել զհայրենի տերու- թէին ‖ : Այս է առաջին ցեղն . իսկ սուղ ինչ ստորև գրէ վասն երկրորդին . * Այդ և հայկազուն ևս եղբարքն սահակ և վասակ բնաբար կուսակալք գաւառացն՝ որ շուրջ զեղերք ծովակին գեղամայ , յայսմ՚ի սոյն աւուրս եկեալք ’ի հեռաստանէ հալածանացն՝ տիրէին պայազա տեալք զաշխարհս տերութէ իւրեանց ‖ :

Այսպէս յիշէ զերկոսին և ստեփաննոս օրպել . գլ . լէ . * Վնեբքեան շինութէ եկեղեցեայ պարապէին , ևս ա- ռաւել որդիքն վասակայ Վհինեաց ան (1) Կրկին սու- փան , սահակ , և վասակ , և մայրն իւրեանց մարիամ՝ ’ի գաւառին գեղարքունեայ , զի այն իսկ գաւառք շուրջ զծո վակողմն նոցա էր հասեալ բաժին ժառանգութէ : Իսկ բուն գահք իշխանացն սիւնեաց՝ բաղք , վայոց ձոր , և այլ շրջակայքն՝ վասակայ և աշոտայ , և որդոյ աշոտայ՝ սմբատ տայ , սահակայ , և բաբկենայ , և վասակայ , և որդոյ վա- սակայ փիլիպէի ‖ :

(1) Սիւնեաց տէր ասէն յայսմ վայրի՝ ոչ զԳահերէցն նշանակէ , այլ զլինելն վասակայ գլխաւոր իշխան երկրորդ սիսական ցեղին որք կոչին Հայկազունք :

Խայց այլուր ՚ի գլ. խա. յիշէ զերիս իշխանս. * Ա՛ք դէ և զայս մեծի և գահերէց իշխանին սիւնեաց ազատի (աշոտի) եղբօր վասակայ որդոյ փիլիպէի, և հօր սմբատայ և սահակայ և բաբգենի... և միւս իշխանին որ ՚ի գեղամ գաւառի լինէր՝ գրիգոր սուփանայ որդւոյ գաբուռայ և սահակայ, և միւս իշխանին որ ՚ի բաղս ձագիկ կոչեցեալ հօր Ջևանշերի ||: Այր չէ պարտ զերեսին և առնուլ իբրև զանազան ցեղս, քանզի եղբարք կամ որդիք մի և նոյն ցեղի երբեմն բաժանեալ զերկիր իւրեանց՝ նստէին ՚ի զանազան տեղիս իբրև զանազան իշխանք, ըստ որում գրէ նոյն ստեփաննոս ՚ի գլ. լը. վասն սմբատայ և սահակայ և բաբգենի. * ԱյսպէսքՁ կայէն իշխանքն սմբատ և սահակ, և բաժանեալ էին զհայրենի ժառանգութիս աշխարհին, աւագն սմբատ զաւագագոյն մասինն ՚ի սիւնեաց ընդ արևմտեան կողմն՝ և զբոլոր վայոց ձոր առնէր ՚ի բաժին. իսկ սահակ ընդ արևելեայ մինչ ՚ի Ձա կարի, բայց փոքրիկն բաբգէն սակաւ ինչ ունէր մասն ՚ի բաժնի ||:

Օ՛ինի ժամանակաց՝ իշխանութիւն սիւնեաց յինքն ընկալաւ զպատիւ անուան Վահագունի, զորմէ համառօտիւ այսպէս պատմէ ստեփաննոս օրպէլ. յոտանաւոր ողբս վաղարշապատու:

* Խայց միւս ևս այլ ըզքահ լուցին,
՚ի տան Խաղից Վիսականին.
Ամպատ սեպուհն այն մեծ սիւնին,
՚ի հայկազանց այն առաջին...
Վահագաւորեաւ Թագ կապեցին,
ուժգին և խրոխտ ընդդէմ չարին.
Ըզորբք բազմաք ՚ի յետ անցին,
ընդ Թագաւորս բագրատունին.
Հարիւր և քսան ամք յաւելին,
վասն ամրութեան այնմ աշխարհին.
Որոց վերջին Վահեքարիմ,
նաև Գրիգոր որդի նորին.
Ըպտա և զայս ՚ի բաց բարձին,
՚ի ժամանակս ելարկուզին.
՚Ի վեց հարիւր մեր Թվականին,
և տան և հինգ յաւելուածին ||:

Այր յանուանէ Խաղք գաւառին՝ յայտ է Թէ զայս

պատիւ ընկալաւ այն ցեղն սիւնեաց իշխանութեանն որ էր մեծ և գահերէց. զի որպէս գրեցաք ՚ի վերոյ՝ նա էր որ տիրէր բաղաց գաւառին. և ոչ միայն ստեփաննոս, այլ նաև վարդան ՚ի յիշեալն զոսոս՝ կոչէ Վաչաւոր Վաղոյ և Պապանին՝ որ է Զորք գաւառ, որպէս գրեացուք ստորև. * Իշիւ. Թուխն (ասէ) առաքեաց փատլուն ամիրային զանձակայ զվաստակ պահել՝ որդի գրիգորայ մագխ տրոսի ամենայն զօրօքն առանայ յանառիկ ամուրսն Վաղաց և Պապանին, որ և խաբէութեաբ հնարեալ մնին անդր, և սպանին զվէնեքարիմ ալբայն հայկազնի, զի Թագաւորքն որ անդ՝ հայկականք էին ‖ Ընդոյն յայտ առնէ և աղաբանութեան սմբատայ՝ որ նախ առաջին զա նուն Վահագաւորի գրաւեաց ըստ ստեփաննոսի օրպէլեան՝ զորմէ ստորև։ Այս սմբատ՝ յայտ է թէ՝ ոչ յաւելէ քան զտանեերորդ դարն (1)։

Յակ վախճան այսր Թագաւորութեանն սիւնեաց եղև ՚ի Թուականին ոձե. յամին 1166. որպէս որոշակի եդ ստեփաննոս ՚ի վերոյ. և այսպէս առեալ ՚ի սկզբանէ մինչև ցաւարտ իւր տևեաց առ առաւելն զամս իւր 190, կամ 196։ Այս յայտ միջոցի պայազատեցին Վահագաւորք վեցք՝ որպէս պատմէ ստեփաննոս օրպէլ. գլ. ծԼ, և կա. ըստ այսմ կարգի։

1. Սմբատ ա. որդի սահակայ, որդւոյ աշոտի եղբօր վաստակայ՝ որ իշխանիկ կոչիւր։

2. Վասակ որդի սմբատայ՝ որ մեռաւ անորդի։

3. Սմբատ բ. որդի աշոտայ, և քեռորդի վերոգրեալ վաստակայ։

4. Գրիգոր եղբայր բ. սմբատայ։ Որքա երկոքին եղբարքն՝ կոչին Վաչագ աշոտեանք։ Այս Գրիգոր մեռաւ անորդի, որոյ կին էր Շ ահանդուխտ ՚ի տանէն աղուաց նից՝ դուստր Թագաւորաշղթին մեծին Վաչագայ։

5. Վէնեքարիմ եղբայր վերոգրեալ շահանդխտոյ։

(1) Զի ոչ յիշէ զայն յոհաննէս կաթուղիկոս որ էր ՚ի թ. գարու և ընդ հակառակն ամենայն նախնիք Թագաւորք բաղաց, կամ կապանին, և կամ սիւնեաց՝ յիշատակեալք առ այլ պատմագիրս՝ են ՚ի Ժ. դարուն. որպէս և այն Վահակ սիւնի՝ զոր վարդան կոչէ Թագաւոր, զի վասն կատարմտեալ ասէ՝ Թէ էր դուստր սորին սահակայ. արդ՝ կատարմտեալ եղև կին ա. գագկայ շահնշահի՝ որ էր յԵլս անդ Ժ. դարուն. և ասէ՝ փաննոս օրպէլ. ՚ի պատմութեան իւրում՝ զսկզբնաւորութիւնն այսր Թագաւորութեանն խօսի ՚ի գլ. ծԼ. զկնի վահանայ կաթուղիկոսին, և յառաջ քան զա. սարգիս կաթուղիկոս, որով ժամանակ նորա անկանի ՚ի մէջն անդ Ժ. դարուն։

Պան զսա ամիրային պարտաւոյ՝ ստեղով երդմանն։

6. Կրիզոր Ք. որդի սենեքարիմայ, որոյ էր մի միայն դուստր՝ զոր ետ Հասանոյ՝ կոչեալ ի խաչենոյ, այսինքն՝ յարցախոյ, և կացուցեալ ժառանգ Թագաւորութեան՝ ինքն գրիգոր մեռանի ի ոճէ. Թուին։ Լակ Հասան գաղտ փախուցեալ ի Կաղաբերդն հանդերձ ընտանեօք գնայ ի գաւառ իւր և ի տուն ի խաչէն։

* Կհա զայս օրինակ (ասէ օրպէլեանն ի գլ. կա.) բարձաւ տէրութիւն Սիւնեաց և Կաղաց, և եղև վախճան տոհմին Սիսակայ, և նախագրութիւն սիւնեաց. քանզի առնեքեան որ կային յառաջագոյն յաւուրս սմբատայ, իւրաքանչիւրքն՝ ի որ անզաւակ ինայէին, և ի որ կիսօրեայ փոխեցան, ի որ սպանան և գերեցան, և ինաձեալ էին միայն այս գրիգոր և սմբատ (եղբայր նորին՝) որ այսու օրինակաւ բարձան ‖։ Լակ յաւուրս լանկթամուրայ առ հասարակ քանդեցին թաթարք զերկիրն սիւնեաց, որպէս պատմէ Թովմա մեծոփեցի։

Օ կրճին քրիստոնէական ընկալաւ այս նահանգ զաջինն քարոզութիւն՝ որպէս բարեմուղիմայ, որպէս պատմէ ստեփաննոս օրպէլ. ի գլ. Ը. բերելով ի հին զրուցաց և յաւանդութենէ. որոյ ի դառնալն ի պարսից՝ անդ ձեալ ընդ ատրպատական, և * Կնդ գեան երասխ՝ մնաւ նէ (ասէ) ի սահմանս Սիսականոյ, և սկիզբն արարեալ քարոզութեանն յորդվատ գիւղ և յարևելս գաւառ (այն է՝ արևիք,) և ի տունն բազաց և ի գողթն, որք ընկալեալ զքարոզուն աւետարանին, լուսաւորեցան մկրտութեամբ աւազանին ի ձեռն որ առաքելոյն բարեմուղիմէի ‖. վանն որոյ կան պայապանիչայս Կաղանձաձոյ կոչէ զՍիսիանիա։

Կյորոգեցաւ անդրէն լուսաւորութիւն գրոյն գրիգորի, յորում ժամանակի ընդ մկրտիլ տրդատայ՝ մկրտեցաւ և իշխանն սիւնեաց, որ գնացեալ էր ընդ լուսաւորչին ի կեսարիա, և ի դարձին բազում քաջութիւն ցուցեալ ի տարօն ի պատերազմին ընդդէմ քրմացն գիսանեան կռոց, և խնդրեալ յարքայէ և ի գրոյն գրիգորէ ուստր ցիչ վանն իւրոյ նահանգին, առնու զոմն յասորոց անտի՝ զոր բերեալ էր գրիգոր. և եկեալ ի սիւնիս՝ մկրտէ զամենայն ընտանիս իւր, կործանէ զբագինս, և զտեղի նոցա պատրաստէ ի շինուածի եկեղեցեաց, դարձուցեալ զամենայն նահանգն ի քրիստոնէութիւն։ Յետ սակաւուց եկն ի սիւնիս և նոյն ինքն գրիգոր զկնի դարձին իւրոյ ի հռոմայ՝ (ընդ որում գնացեալ էր և սոյն իշխանս

սիւնեաց.) որոյ չքնեալ (ասէ ստեփաննոս,) *ընդ գլուխս առնն աւենայն (սիւնեաց) հաստատէ ի հաւատս, և ի պատշաճաւոր տեղիս շինէ եկեղեցիս, և կանգնէ զնշանն տէրունի ||:

Այլև զբն մեսրոպ քարոզուած իւրով ջնջեաց զաղանդն հեթանոսական՝ որ յառաջն ղօղեալ և թաղուցեալ կայր, *ի գաւառն սիսական և ի գողթն, (և) այժմ (այսինքն առ ժամանակաւ մեսրոպայ, ասէ ստեփ. օրպէլ. ի գլ. ԺԵ.) հանդարձակեալ երևեցուցին ||: Այս սուղ ինչ զկնի գրէ. *Նանեալ (մեսրոպ) զկրկին երևեալ աղանդ կռապաշտութեանէ, և սկսեալ ի քարոզութեն մեծամեծ և ահագին նշանաւք՝ ուստինչ ընդհատ քան զբազն գրիգորի ի հաւատ առնել զաշխարհն սիսական հրամանաւ և օգտութեամբ բարեպաշտ իշխանին սիւնեաց վաղինակ կայ սրբել զկռապաշտութենէ, և խոյտակել զկուռսն թա գուցեալ ||: Այսմ վկայէ և կորիւն վարդապետ ի վարս զբն մեսրոպայ, յորմէ առնու ստեփ. օրպէլ:

Ասուսն ձեռնարկական ի սկզբանէ անտի ծաղկեալ ճնաց յայս նահանգ, որում նախ առաջին հիմն եդ Նա նիա աշակերտ մեսրոպայ և եպիսկոպոս սիւնեաց, զորմէ գրէ ստեփաննոս օրպէլ. ի գլ. ԺԶ. *Ի բանալ դպրութեաս հայոց վերին պարգեւօքն ի ձեռն զբն սահակայ և մեսրոպայ՝ եդ դպրատունս աշխարհին սիւնեաց, և կարգեաց ի վերայ զաշակերտակից իւր զբենիամին, և փութապես զամենեսեան ուսոյց հայերէն դպրութեան ||: Յայնմ հետէ այնչափ երևելի եղև վարդապետութեն սիւնեաց՝ մինչև առնուլ զգլխաւորութեն պատիւ ի մէջ վարդապետաց հայաստանեայց. *Որ մեծարոյ և նախաթոռ (ասէ օրպէլեանն ի գլ. ԼԸ.) ի վարդապետն հայոց աթոռն սիւնեաց, զի էր ի վաղնջուց հետէ հրամայեալ զթարգմանութենէ և զմեկնողութենէ նոցա ունել ի զբն սա հակայ և մեսրոպայ, և գլուխ կալ և հրամանատար ամենայն վարդապետաց հայոց ||:

Ես սակաւ ծաղկեցոյց զնոյն ուսուն մանաւսաղայ քերթող ի սկիզբն Ժ. դարուն, որ և կարգեցաւ գլուխ ամենայն վարդապետաց վարժարանին սիւնեաց, և զկնի եղև և եպիսկոպոս սիւնեաց, մինչև կոմիտասայ կաթողիկոսի՝ զնոյ սարարեալ զամենայն վարդապետաց կաթողիկոսարանին, և զարշարունեաց վարդապետարանին՝ որ էր երևելի, առ սա ինքն առաքեաց զեղբօրորդի իւր զԵզեկիայոս յուսուցանել:

Համբաւ այսր վարդապետարանին սիւնեաց հնամատ զորդիսն մինչ ի սկիզբն ը. դարուն, առ որ իբր յաղբիւր իմաստից դիմեաց ստեփաննոս քաննէորդ երկրորդ եպիս կոպոս սիւնեաց յոյսանիկ՝ նախ քան զեպիսկոպոսութիւնն. յորում ժամանակի թէ քանի՞ մեծ էր համարեալ այն ի մէջ ազգիս՝ այսպէս առաջի դնէ ստեփաննոս օրպել. ի գլ. լը. յասելն վասն նախայիշատակեալ ստեփաննոսի. * Լսեալ ի մենարանէ անտի (մաքենոցաց) փութայ Ճեպ ի յաղբիւրն իմաստից ի վարդապետարանն սիւնեաց՝ որ գլուխ էր ամենայն դիտնոց հայոց, և պայծառացեալ զպարոյքն որ ի նմա. քանզի որպէս աթենայիքն ի մէջ Հռոմոյ և յունաց ճոխացեալ էին, և մայր իմաստից կոչեցեալ ի սպանիացոց աշխարհին լադին և հելլէն զպրութիւք, այսպէս և սոքա ի տանս Թորգոմայ աշխարհս հիս հայոց ||:

Ի վարդապետարանէ աստի ելին երկոքին երևելի մա տենադիրքն՝ յորոց առաջինն է պետրոս քննէորդ եպիս կոպոս սիւնեաց յԵլս ե. դարուն. և ի սկիզբն վեցերորդ դին Ի Երեթոզ մականուանեալ, աշակերտ քերթողահօրն մովսէսի, որպէս դնէ օրպելեանն ի գլ. ժ. և իբ. որ ա բար Թարգմանութիւնս և ճառս, մեկնութիւնս հին և նոր կատարեաց, և ներբողեան ի բաբիկ որդի անդոկայ իշխանին սիւնեաց, և այլ ներբողեան ի ծնունդն քոյ: Երկրորդն է նախայիշատակեալն ստեփաննոս՝ նոյնպէս եպիսկոպոս սիւնեաց, որ զինքն կոչէ ի յիշատակարանս ինչ Թարգմանեալ գրոց յիւրմէ՝ Աշակերտ ճոն մովսէսի սիւնեաց եպիսկոպոսի, (այն է նախընթացին իւր.) և զսորա պէսպէս գործս յիշատակէն ստեփաննոս օրպել, և այլք:

Այսչափ հռչակաւոր գտաւ ածաբանութիւն և վարդապետութիւն սիւնեաց վարդապետարանին, և այսչափ փոյթ ծաղկեցուցանելոյ եմուտ ի նոսա, սակս երևելի գոլոյ աթոռոյ Եպիսկոպոսին սիւնեաց. զի այս աթոռ ի սկզբանէ անտի մեծամեծ պատիւս և արտօնութիւնս ընկալաւ, և նախ՝ ի ՚ջէն գրիգորէ. զի յորժամ դարձաւ նա ինքն ՚ջ լուսաւորիչն ի նահանգին սիւնեաց ի վազարշապատ՝ (քանզի ինքնին առաքելաքար շրջէր և քարոզէր զաւետարանն, և հաստատէր ի հաւատս գնորահաւատ քրիստոնեայս,) ի խնդրոյ իշխանին սիւնեաց ձեռնադրեաց զոմն յիւրոց մերձաւոր աշակերտաց Երիգորիս անուն, և եա ցիշխանն տանել վիճակեցուցանել յեպիս-

կոպոսութեի իւրոյ նահանգին, որ և եղև առաջին եպիս-
կոպոս, և ի կարգէն ՚ծին երեսուն և վեց եպիսկոպո-
սունս բազմել ընդ ինքեան՝ յաջմէ և յահեկէ, սիւնեաց
եպիսկոպոսին եհաս բազմել յեօթներորդ գահոյն յաջմէ
կողմանէ, որպէս ցուցանէ օրպէլեանն ի գլ. Ե. և Է.
առաջի սամուէլի կամրջաձորեցւոյն։

Յոկ յորժամ զմեծն Ներսէս պատրիարգ կացուցին,
յայնժամ եպիսկոպոսն սիւնեաց Դրիդորիս կամ Դրի-
գոր՝ կացուցանէ Վետրապօլիտ. * Կացուցանէն (ասէ
ստեփ. օրպէլ. գլ. Է.) պատրիարգ զնոքն Ներսէս, և ի
ներքոյ նորա արքեպիսկոպոս զաղուանիցին՝ որ և կաթողի-
կոս, և Վետրապօլիտ՝ զսիւնեաց եպիսկոպոսն [1]։ Նոյ
յայսմանէ ընկալաւ յայնժամ զայլ ևս կրկին պատիւս.
* Յոկ Դրիդորի սիւնեաց մետրապօլտի (ասէ անդէն օր-
պէլեանն՝) աւելի պատիւ արար նմա քան ներսէս վասն եր-
թալոյն ընդ նմա ի կեսարիա. տայ նմա բազմական ոս-
կեթել, և կարգէ զվիճակ Նախաթոռ պատրիարգին,
որ կոչի ի հռոմ լեզուն Պռօտուֆրօնտէս [2] հայոց
մեծաց։

Յայնմհետէ Եպիսկոպոսունք սիւնեաց կոչին Վետրա-
պօլիտք, որպէս և տեսանել առ ստեփաննոսի օրպէլեանն
ի գլ. ԺՇ, և յայլ բազում տեղիս, յորս զեպիսկոպոսու-
թիւն սիւնեաց կոչէ * Վետրապօլտութիւն, (կամ) Պ.թռո
մետրապօլտութիւնէ տանս Սիւնեաց, (կամ) տանս Սի-
սական։ Պոյնպէս և տեսանել և յայլ գիրս նորա, և ի
ժողովական թուղթն զոր գրեաց ի գիմաց արևելեան
եպիսկոպոսաց առ գրիգորիս կաթողիկոս, ուրանօր Պ՚նա-
նիա աշակերտ Մեսրոպայ, Պ՚ուշէ, Պետրոս քերթող,
և Դրիսատափոր՝ որք էին եպիսկոպոսունք սիւնեաց և

(1) Յաւելու անդէն ստեփան-
նոս օրպէլ անմիջապէս. * Եւ
զվրացն, և զմարզպետականն, և
յԱղոյ այլ ևս մետրապօլիտք կա-
ցուցանէին զմիւխոնցին և զսբաս-
պիսն։ Յոկ յովհաննէս կաթո-
ղիկոս ի պատմէն զպատերիարգու-
թէ մեծին Ներսէսի՝ այլազգ գրէ.
զի և զվրացն անուանէ Եպիս-
կոպոս, և չկիշէ զՊիւնեացն
և զմարզպետական մետրապօլիտն.
բայց կիշէ զմիւխոնցին և զսբաս-
պիսն, յաւելեալ ի նոսա և զե-
տրապօլիտն մարտիրոսաց քաղա-
քին Նփրկերտ կոչեցեալ։ Բայց
թերևս յովհաննէս կաթողիկոս
խօսի զաձոցոցս որպէս և զնորդ
էին առ իւրովք ժամանակք. և
կամ օրպէլեանն զմիջին դարու ըն-
դահ առաջնորդաց ի վեր ածանի
և հանէ ի ժամանակս մեծին Ներ-
սէսի։

(2) Յունական բառս ըստ հնչ-
ման իւրեանց Բռօդուֆրօնտես,
նշանակէ՝ Նախաառնուչ, Նախ-
կին ինամող։

գտան ՚ի զանազան ժողովս հայոց՝ կոչին Վեհարապօլիտք սիւնեաց։

Իսկ ՚ի ժամանակս մեծին սահակայ և մեսրոպայ եպիս. կոպոն սիւնեաց ընկալաւ ՚ի նոցանէ հրաման մեկնութեանն և թարգմանութեանն, և պաշտօն և գործք նորա յառաջագոյն պատիւ բարձրացան. * Վարդ է սոցա (այսինքն մետրապօլտաց սիւնեաց՝ ասէ ստեփ. օրպէլ. գլ. ի.) ձեռնադրել եպիսկոպոս գաւառաց, վասն որոյ երկոտասան եպիսկոպոսաց գլուխ կարգեցաւ [1]. և առանց սոցա ոչ ձեռնադրի պատրիարգ հայոց, և ոչ լինի ՚ի ժողով այլ գլուխ և հրամանատար ժողովոյ։ Այսքա լինին և նախաւթոռ վարդապետութեանն, և հրաման մեկնութեան և թարգմանութեան սոցա միայն հնորհեցաւ ՚ի մէջ հայոց ՚ի տէրս սահակայ և յերանելոյ վարդապետին մեսրոպայ ||։

Վասն ժամանակի անանիա եպիսկոպոս սիւնեաց աշակերտ մեսրոպայ ՚ի հնորհս երախտեաց՝ զոր արար յաղագս ընդ մեսրոպայ՝ ստեղծելով դիր լեզուի նոցա, և բանալով զդպրութեան և զվարդապետութեան ճշմարիտ հա-

(1) Այս բանք օրպէլինին՝ է. թէ առին որչափ ինչ նշանակին բառքն, երևին կարծիս ՚ի միտս արկանել, թէ գուցէ մեսրապօլիտք սիւնեաց կատարէին և ձեռնադրէին եպիսկոպոսաց. և սակայն ոչ թեթև գժուարութիւն կրէ կարծիք այգպիսի ՚ի սաուգութիւն՝ առ որս քաջ զննութեամբ դեգերեալ լցեն ՚ի գիրս հայոց։ Օձ արգարև մետրապօլիտք առ յոյնս առնէին ձեռնադրութիւնս եպիսկոպոսաց (թէպէտ և ոչ առանց հրամանի և հաւանութեան արքեպիսկոպոսին իւրեանց, զնոյն կարծեմք և վասն մետրապօլտին վրաց՝ յորմէ միաբան էին ընդ հայս.) այլ առ հայս՝ քանզի ձեռնադրութիւն եպիսկոպոսաց՝ որպէս և օրհնութիւն միւռոնի ՚ի սկզբանէ հետէ կաթուղիկոսին և ոչ պատէալ էր, ոչ ուրեք ՚ի գիրս է տեսանել զայդ, մանաւանդ զհակառակն. զի ՚ի խնդրել մարգպետական եպիսկոպոսին (ըստ նոր բին իսկ ստեփ. օրպէլ. ՚ի գլ. իբ.) զոր մետրապօլիտ կացուցեալ էին, եպիսկոպոս ընդ ձեռամբ ունել (յայտ է թէ՝ իբր զվրացն՝ որոյ փոխանակ մետրապօլիտ կացեալ էր մարգպետականն) առին ՚ի նմանէ զպատիւն, և ետուն եպիսկոպոսին սիւնեաց, դաշամբ ոչ ժառելոյ աւելի ինչ, * այսինքն եպիսկոպոսս ունել ը ինքեամբ, և ձեռնադրել ||։ Վասն որոյ հարկ է այլազգ խմանալ զբանս օրպէլին նին, որպէս թէ ասէր. * Պաշտօն մետրապօլտաց է ձեռնադրել եպիսկոպոս՝ եթէ առ հայս չէր վերապահեալ այն կաթողիկոսին ||։ Իսկ գլուխ լինել ժբ. եպիսկոպոսաց, քանզի առ նախագահութեն է եթ հայի, չէ ինչ անհաւանական. քանզի ոչ անդէպ է ասել՝ թէ էին և ՚ի հայս, որպէս և յայլ ազգս գլխաւոր եպիսկոպոսունք՝ նախագահք բազմաց. իբրև ստորակարգեալ պաշտօնեայք և հրամանատարք ընդ կաթողիկոսիս։ Այլ թէ ժբ. գաւառք սիւնեաց ունէին առանձին եպիսկոպոսունս, ուսանիմք ՚ի բանից ստեփ օրպէլինն, թէպէտ և առ նախնի մատենագիրս ցարդ ոչ ուրեք գտաք՝ գէթ զմանս ՚ի նոցանէ յանուանէ նշանակեալ։

ւատոյ, ընկալաւ այլ եւս արտաքին պատիւս 'ի թագաւոր ըէն աղուանից՝ որ կոչէր Եսվաղէն. * Պատիւ արարեալ նմա (ասէ օրպէլեանն 'ի գլ. ԺՀ.) երախտահատոյց լինի, և պարգեւէ զնւր նշանակին թագաւորական ոսկէ տուան վառիւ, և 'ի գլուխն գունտն ոսկի, և 'ի վերոյ խաչ պատուական, և հրամայէ զայն հանապազ շրջեցու ցանել ընդ իւրեանս եպիսկոպոսացն սիւնեաց 'ի յիշատակ թագաւորացն աղուանից ||(1):

Ա.ՀՒ 'ի վախճան ՂԱ. դարուն՝ նուազեաց այս պատիւ եպիսկոպոսացն սիւնեաց, որոյ պատճառն (ըստ ստեփանոսի օրպէլեան) եղև, զի յորժամ երկու կաթուղիկոսք նստան՝ մի 'ի բաժնին պարսից, և միւս 'ի բաժնին յունաց, պետրոս քերթող անուանեալ՝ որ յայնժամ եպիսկոպոս էր սիւնեաց (2) հրամայեաց իւրում ժողովրդեան՝ յաղուանից առնուլ ձեռնադրութիւն և ձէթ, մինչև 'ի իւաղաղել խռովութիւն. յայսմանէ զկնի կաթողիկոսին հայոց՝ արքեպիսկոպոս կարգեցաւ յայնժամ աղուանիցն, և մետրապօլիտ՝ վրացն. * Օ'ի սիւնիք հրամանաւ պետրոսի (ասէ օրպէլ. 'ի գլ. ԻՁ.) ժամանակս ինչ յետ էին կացեալ 'ի հակառակ աթոռոցն ||:

Այլ 'ի միաբանել սիւնեաց վերստին յաւուրս Ա. աբրահամու կաթուղիկոսի, ծագեցաւ (ըստ գրելոյ օրպէլինին) այլ հակառակութիւն 'ի մէջ վրաց և աղուանից վասն դահերիցութեան աթոռոյ. և 'ի բաժանիլ վրաց 'ի հայոց՝ մետրապօլտութիւնն տուաւ մարզպետական եպիսկոպոսին թէոդորոսի, և ապա տուաւ նոյն պատիւ եպիսկոպոսին սիւնեաց. *Պատշաճ համարեցան (ասէ օրպէլ. 'ի գլ. ԻՁ.) միաբան ժողովով տալ նոցա զմետրապօլտու-

(1) 'Ի գլ. Է. գրէ նոյն ստեփ. օրպէլ. վասն այսր. * Պարգեւէ նմա զկնի թագաւորական գրօշն՝ կարմիր և ոսկեհուտ վառիւ, ու նեղով 'ի գլուխն գունդա ոսկի, և 'ի վերոյ խաչ պատուական ||:

(2) Կոյնպէս և այս ենթադրու թիւն օրպէլենին ընդգէմ ելանէ այլոց պատմագրաց հայոց, զի զոր յովհաննէս կաթողիկոս և այլք ընդ նոյն՝ գնեն կարգեալ 'ի մօրկայ 'ի ժամանակս Ա. աբրահամու կաթողիկոսի, և այն՝ զկնի բաժանման վրաց 'ի հայոց, սա զնոյն գնէ 'ի ժամանակս մովսէսի կաթողիկոսի (առ որով կարգեցաւ թուական հայոց.) վասն որոյ և հեռևեցուցանէ՝ թէ պետրոս քերթող որ էր 'ի ժամանակս մովսէսի՝ տեսեալ զայսպիսի բաժանումն աթոռոյ կաթողիկոսութեանն՝ հատուածեաց զսինիս 'ի հայոց յաղուանս: Այլ ենթէ ստոյգ իցէ այդ գործ պետրոսի, սակայն պատճառ գործոյն զոր տայ ստեփաննոս օրպէլ. ոչ նոյնպէս ստոյգ գտանի ըստ հաւաստի պատմութեանց, զոր պատմագրաց թողումք 'ի քննել:

Թիւն, առնել և բարձակից և սեղանակից կաթողիկոսի, աթոռով և բարձու ի միասին բազմել։ Կացուցանէն ապա զդաւիթ մեծապատիւս սիւնեաց, և տան նմա ըզխաչանիշ նշանն զառաջեաւ կրել հանապազ, և ոչ քարոզել զկաթողիկոսն հայոց յիւր եկեղեցիսն ի վերայ նոցա սեղանոցն, այլ միայն զիւր անուն. և ի թղթապրութեան ոչ գրեն սիւնիք Ալիսկոպոսապետ, կամ այլ անուամբ զկաթողիկոսն, այլ տերունիք ի սիւնիք՝ Ընծայասիւ և Հոգևոր Տէր՝ գրեն, և նոքա՝ ի ծառայ։ Ապա յետ զհնայի կաթողիկոսի խակապրծութեան յերիցս վանս՝ մինչ գնայր ի հնազանդել զաղաւնս, ոչ գրեցին տոքա՝ ի ծառայ, և նոքա՝ զՀոգևորն [1]։

Այս ապա յաւելու ասել. * Ապահս զետեղեալ սահմանեցին զինն դասս եկեղեցոյ, հայոցն՝ Պատրիարգ, աղուանից՝ Ընթեպիսկոպոս, սիւնեաց՝ Վետրապոլիտ դող, և զայլ աշխարհս Թողին յառաջին սովորութեանն զի մի ամբոխ ինչ լինի։ Ապ և խնդրեցին ի սիւնեաց՝ մի ինչ աւելի լիս ժառանգ, այսինքն՝ Ալիսկոպոսս ունել ընդ ինքեամբ և ձեռնադրել, այլ միայն բազմականաւն և խաչիւն մեծարեցին, և նախաթոռ կոչեցին պատրիարգին որ ի Կռատոսիքրնդէս, և անուանեցին Վետրապոլիտ։ Այս այս կրկին անգամ եղև հնորհեալ նոցա զայս պատիւ և զնշան, առաջինն՝ յետ ազատել Թագաւորի աղաւանից. և երկրորդ՝ ի ժողովին հայոց ի տէր աբրահամայ ||։

Ապա ի սկիզբն ։ գարուն միաւանդամ հաստատեցաւ այս պատիւ նոցա և արտաւնաթիւն ի ։ա. դաւթայ կաթողիկոսէ վասն երախտեաց առեփաննոսի՝ որ էր ։բ. եպիսկոպոս սիւնեաց. զի վասն հաստատութեան, և ոչ վասն նորոգ ինչ պատուոյ պարտ է իմանալ զբանս առեփ. օրպել. որ գրէ ի գլ. իթ. Թէ դաւիթ կաթողիկոս * Ի սան մեծի երախտեացն (առեփաննոսի) առաւել պատուէ, զնա,

(1) Յայսմհետ նախընթաց բանին Թուի լինել այս։ Ի գրել առաջնորդացն սիւնեաց (զորս Տէր-Ներսէս կոչէ, այսինքն Տեառն կաթողիկոսն) ոչ գրեն ի խոտագրի Եպիսկոպոսապետ, կամ այլ ինչ անուն գերագոյն նախադասութեան, այլ միայն գրեն Ընծայասիւ և Հոգևոր տէր։ իսկ կաթողիկոսք ի գրել առ սիւնիս ի ծառայ։ բայց ի չգտանել եղեալ կաթողիկոսն զայս սովորական կարգ ի գրութեն, զանց արարեն և սիւնիք ի պատասխանին զնոսա սովորական պատուանունն այն ի Հոգևոր տէր։ և այլն։ Ապ յայտագս այսց պատուոյ անուանցն ասելիք և ի սորա ի կարգի անդ գրել ինչ, ասս անդ։

և կացուցանէ գլուխ եպիսկոպոսաց, և զաթոռն սիւնեաց՝ գլուխ ամենայն աթոռոց ։ Յաւելու անդէն օրէնս լեանն. * Այսու ամենայնիւ՝ եթէ ինչ ունիցեն յեօթներորդ դասուն էր եպիսկոպոսացն հայոց, այժմ յերկրորդ դասուն կարգեցին. բայց մի հաւանիցի միայն էր ի վեր քան զսիւնեացն վասն արքեպիսկոպոսութեան. խակ սիւնեացն վասն մետրապոլիտութեանն ի վերոյ էր քան զամենայն եպիսկոպոսքն հայոց, զի այլ ոչ ոք ունէր զմետրապոլիտութեան պատիւն. և որքան պատրիարքն քան զարքեպիսկոպոսն է գեր ի վերոյ, և արքեպիսկոպոսն քան զմետրապոլիտն, այսպէս մետրապոլիտն քան զեպիսկոպոսն, զի նա ձեռնադրէ զեպիսկոպոսն ։

Վարձեալ միւսանգամ ի մէջն անդ Ա. դարուն հաստատեցաւ չորրորդ անգամ այս պատիւ նոցա՝ անուամբ Արքեպիսկոպոսութեան. քանզի պատմէ վարդան, և ընդարձակ ևս կիրակոս, թէ եպիսկոպոսն սիւնեաց յակոբ ա նուն, և այլ եպիսկոպոս մի խոսրով անուն՝ բաց յայլոց նորաձեւութեանց, ուսուցանէին թէ չէ պարտ հնուս լինել կաթուղիկոսին. * Օ՛ի աւելի ինչ ոչ ունի (ասէին քան զեպիսկոպոսն,) բայց միայն զանուանակոչուի ։ Յերև խրատեցան ի կաթուղիկոսէն և յայլոց վարդապետաց, առաւել ևս լըրեալ յայնմի ապստամբեցան և ապստամբեցուցին զայլս։ Խակ յետ մահուանն յակոբայ՝ ինքն կաթուղիկոսն որ էր անանիա մոկացին, երիցս անգամ (1) գնաց ի սիւնիս ի հնազանդել գնոսա. որում ընդ առաջ ելեալ իշխանքն սիւնեաց՝ զղջացեալ սրտիւ ետուն ձեռագիրն երդմանն՝ առ ի ոչ ապստամբիլ միւսանգամ յաթոռոյ աջոյն գլխոցն յայգէ մինչ յայգ ։ Վասն որոյ և կաթուղիկոսն արձակեալ գնոսա ի նզովից, որովք կապեալ էր յառաջն, կացոյց նոցա Արքեպիսկոպոս զտէր Ովհան ի բաղաց գաւառէն, որ զկնի եղև կաթուղիկոս. և զնախկին արտունութեանն՝ յայլ կրեցոյ առաջի, անդրէն չնորհեաց ։

Այս այսպէս սակս վերոյհն հաստատութեանն այսը արտունութեանն, և պատուոյ Արքեպիսկոպոսութեանն պարտ է խնդրել զանս կիրակոսի՝ որ ասէ վասն անանիայ կաթուղիկոսի. * Ձեռնադրեաց յայգէ նոցա (2) զմի ոմն Արք-

(1) Ա՛յսպէս գրէ առ օրպէլեան։ * Այս բազում անգամ գնալն ի սիւնիս ի ցանկն գլխոց գէ ծէ. ուր կիրակոս ոչ ինչ յիշէ պերճացն առ զՍիւնիք ։

(2) Վարդան կոչէ զվահան. * Ու-

դամ գնալըն. խակ վարդան գրէ

եպիսկոպոս որ յառաջն էր Սիւնեաց եպիսկոպոս, զայն ի պատիւ արարեալ իշխանացն սիւնեաց՝ հրամայեաց խաչ տանել առաջի Աբբեպիսկոպոսին սիւնեաց ուր և երթիցէ ‖ : Պատմէ զայս և ստեփաննոս օրպել. ի գլ. ծբ. (1):

Արդ՝ Սիւնիք թէպէտ թուղթ ետուն ուչ երբեք ապրստամբելոյ յաթոռոյ ՚երջն գրիգորի, սակայն յամին 1113. յորժամ դաւիթ նստաւ կաթուղիկոս յաղթամայր հակառակ գրիգորի հարազատ կաթողիկոսի, աթոռն սիւնեաց, և թագէոսի առաքելոյն՝ միաբանեցան ընդ դաւթի. այլ յետ միոյ ամի՝ դարձան անդրէն ի հնազանդութիւն գրիգորիսի, որպէս գրէ ընդարձակօրէն սամուէլի:

Պատմութիւնն օրպէլեանց ի գլ. իթ. (տպ.) յուցանէ՝ թէ հինգերորդ անգամ նորոգեցաւ պատիւ այսր աթոռոյ ի 1287. յորժամ ստեփաննոս որդի տարսայիճի՝ որ է նոյն ինքն պատմագիրն սիւնեաց՝ ձեռնադրեցաւ Ա՚ե տրապօլիտ, զի ասի անդ. *Ձեռնադրեն զՍտեփաննոս Ա՚ետրապօլիտ (2) մեծի աթոռոյն Սիւնեաց ... վասն նորոգման ՚որ աթոռոյ հին պատուոյ և աստիճանին, որ բարձեալ էր ի վաղնջուց վասն աւերման և կործանման աշխարհիս ‖ (3):

Նոյն պատուոյ եպիսկոպոսացն սիւնեաց, որպէս ուսանիմք ի գրոց օրպելինին, և յայլ գրոց, էր նոյն իսկ պատուանունն կաթողիկոսաց՝ զոր և սիւնիք ի գրեն առ կաթուղիկոսն ի գործ ածէին, այն է Ի՚ջապափ Հոգևոր պէր: Այս առ ի ստուգութիւն ասացելոցս՝ շատ լինին առաջիկայ վկայութիւնք ի գրոց. և նախ՝ ի վէմ-

դէ ջանչէր էվանդն. Թերևս նոյն է որ առ օրպէլինին գրի՝ ՋՆանչէր:

(1) ՚Ի մեր օրինակն գրոց օրպէլինին նախ քան զկսականին զգ. պատմութիւն՝ գտանի ցուցակ գլ. գլխոց հանդերձ խորագրովք, այլ ի կարգի անդ պատմութիւնս պակասին ամբողջ գլուխք 30. ասի և անտի, որպէս և գլ. ծբ. մեք ուր ուրեք և ի խորագիրսն անդ գտաք արժանի ինչ յիշատակի՝ ուչ զանց արարաք, մինչև ըստ ժամանակին ամբողջ օրինակ լցցէ զպակասութիւնն գրելոցն ի մէնջ:

(2) Ա՚յլք ի մատենագրաց՝ զոր օրինակ գրիգոր մագիստրոս, վարդան, կիրակոս, որպէս և ի թուղթն ժողովական գրիգորի կաթուղիկոսի ի ժողովն հռոմկլայի, և այլք, զեպիսկոպոսունս սիւնեաց՝ որ զկնի ՚ետ վահանայ՝ միայն Աբբեպիսկոպոս կոչեն, նաև զնոյն ինքն ստեփաննոս օրպել. ուր նա ինքն ի բանս իւր զնոյն պատուանունն Մետրապօլիտ (թէպէտ և առարին քան զԱբբեպիսկոպոսն,) առաւել թուի ախոր. ժէլ:

(3) ՚Ի նմին պատմութիւնէ օրպէլեանց տպ. ի գլ. իթ. կայ յիշատակ և եպիսկոպոսական թագի՝ զոր ընկալաւ ստեփաննոս օրպել. ի թագաւորէն հեթմայ:

գիրն կամ՝ ի յեսակարն ետն փիլիպէի սիմնեաց ետն, զոր ետ դաւթի սիմնեաց եպիսկոպոսի, (առ ստեփաննոսի օր պելեան՝ ի գլ. լԹ.) ուր ասի. * Յերկերիւր և հինսուն երեք Թվականութեե հայոց՝ որպէս կամ եղև հնձ փիլիպէի որդւոյ վասակայ սիմնեաց ետն՝ ետու զտաԹև վանս իմ հոգեաց ի ձեզ՝ ի տէր դաւիԹ սիմնեաց եպիսկոպոս ... ամենայն սահմանօք ... և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման ... հեռացուցանել զայդ գիւղդ յայդ եկեղեցւոյդ .. և Թէ ոչ՝ նզովեալ լիցի յիս, ի հոգ եկեղեցւոյդ և ի հոգ խաչիդ, և ի հոգևոր տնեդ անէծս կրեսցէ ||: Այս՝ ի սկիզբն միւս յեսակարին՝ զոր ետ նմին դաւԹայ հրահատ իշխան՝ գրի այսպէս. * Ի յերկերիւր հինսուն և երեք Թվականիս հայոց՝ ի ժամանակս Ա՛ծապատիս և հոգևոր տեն դաւԹի սիմնեաց եպիսկոպոսի, ես հրահատ ||:

Այսպէս և ի գլ. իս. առ նորին ստեփ. օրպէլ. ի սկիզբն պայմանագրոյ ջևանշէր իշխանին վասն փոխոխուԹե գեղջ՝ զոր ետ տէր սողոմոնի եպիսկոպոսի՝ (որ էր ի ժամանակս տէր զաքարիայ կաԹողիկոսի՝) գրի. * Ի յիվ. Թվականութեես հայոց ի ժամանակս Ա՛ծապատիս և հոգևոր տեն Սողոմի [1] սիմնեաց եպիսկոպոսի. կամ եղև հնձ ջևանշէրի ... զիմ զշէն մի որ ի բաղու գաւառի Ա՛ռուքս անուն, փոխանակել ընդ Ա՛ղջ շինին որ ի կուլական գաւառի էր, և շէնն բնական որ խաչին, և հոգևոր տերանցն սիմնեաց եպիսկոպոսացն ժառանգուԹիւն էր լեալ, միաԹանց կամաւ և յօժարութեամբ փոխանակեցաք ... Ա՛ստ հոգևոր տէր Սողոմոն, և ով ոք յաջորդի ի տեղի ձեր և յաԹոռդ ... կնքեցաք մեր բով մատանեաւ և Ա՛ծապատիս տեն ||:

Այս՝ ի միւս պայմանագրի տիկնոջն քուպղիխտոյ՝ զոր ետ առ նոյն տէր սողոմոն՝ գրի. * Այս քուպղիդուխտ դուստր վասակայ սիմնեաց տեն մերձեցայ ի ժամանակս ծերուԹե ... և վասն զի մարմնաւոր կենացս զրկեալ էի ի զաւակէ մասանց՝ զոր խաչդ, և զԱ՛ծապատիս և զհոգևոր տէր սողոմոն սիմնեաց եպիսկոպոս հնձ հոգեաց զաւակ ստացայ ... և շէն մի Ա՛ձ անուն ի բաղաց գաւառի ... ետու ես քուպղիդուխտ ... ի զոր խաչդ, և ի տէր սողոմոն ... ապա եԹէ յանդգնի ոք բանս առնել յիմ

(1) Ա՛յսպէս էր յօրինակին. առանն ի բաղք գաւառի: տես և գլխոյ ծանուցմանն Ա՛ռուքս

արարածիդ, և կամեսցի խախտել զիմ զտուրսդ, չ՚ոյ և ի՚ որ խաչեդ զատապարտեալ եղիցի, և ի՚ Հոգևոր տե- ըանցն նգովեալ ... Եւ գրեցի չԺգ. Թվականութեանս Հայոց ... և վասն առաւել հաստատութե՛ գրոյս՝ զ՚ծա- պատիս և զՀոգևոր տն սողոմոնի սիւնեաց եպիսկոպոսի զվաւերական մատանին ի վերայ եդի ||։

՚Ի վախճան պայմանագրիս յարէ ստեփ. օրպել. *Եւ առա չետ բազումք և մեծամեծ վաստակոց ընու զկետ կե- նաց իւրոց ... տէր սողոմոն փոխեալ յաստեացս, (և) յաջորդի ի տեղին Հոգևոր և Ծատապատիս արքեպիսկոպոսն եպիսկոպոսն տէր յովհաննէս ||։ Զոյնպէս նա ինքն օր- պել. ի գլ. ծբ. գրե. *Յծատապատիս և ի Հոգևոր տն յովակիմայ սիւնեաց եպիսկոպոսի կիշատակի ||։

Այս պատուանուն ի գործ ածէ և գրիգոր մագիս- տրոս ի Թուղղն ժգ. առ յովհաննէս արքեպիսկոպոս սիւ- նեաց. * Ծատապատիս Հոգևոր տնդ, և զիմոյ լուսա- ւորիդ յովհաննու՝ զինքսուր և զծանեարկ մակացու աջոյդ վերծանեալ զտառ ||։

Իակ ինքեանք եպիսկոպոսունք սիւնեաց այսպէս կոչէն զանձինս. * (Այս անուն) հնորհօքն, կամ հնորհին այ սիւնեաց եպիսկոպոս ||, որպէս յայտ է ի պայմանագրէն դաւթի եպիսկոպոսի առ տէր փիլիպէ իշխան սիւնեաց՝ որոյ սկիզբն է. *Ես տէր դաւիթ հնորհօքն այ սիւնեաց եպիսկոպոս ||։ Եւ ի կիշատակագրէ ինչ տն սողոմոնի՝ որ սկսանի. *Ի հնորհին այ այս իմ ձեռին գիր է՝ Տն սողոմոնի սիւնեաց եպիսկոպոսի ||։

Տէղի եպիսկոպոսարանին սիւնեաց՝ Թէպէտ յառաջ ժամանակաւ ոչ էր որոշեալ ուրեք, այլ յետոյ եղև հրա- կաւոր մենաստանն եւստաթէի՝ զորմէ այսպէս գրէ ստեփ. օրպել. ի գլ. լԹ. *Նախ և առաջին էր (ասէ) սահմանն եպիսկոպոսաց բնակել՚ի քաղաքս և ի շինամէջս. զի հովուին պարտ է ի մէջ հօտիցն լինել, և ոչ յանկեան ուրեք կայանալ ... իսկ յետոյ ըստ նսեր բարուց ոմանց՝ որպէս Թէ ձգնազգեացք և անապատասէր գոլով ... պատշաճ համարեցան բնակել՚ի վանս և ի պատշաճաւոր ժամու ելանել առ հօտն և խրատել. որպէս և մերոյ աշ խարհիս եպիսկոպոսք սիակամս գրոհի, որք յառաջ ժա- մանակօք շրջելին ի գաւառաց ի մէջ, և ի տունս իշխա- նաց ... և գահ արկեալ էր նոցա ի սիւնիս [1]. իսկ յե-

(1) Եւ Թերևս ի ծղուկք գաւառ սիւնեաց. զի ի գլ. ֆ. կոչէ

տոյ . . գտեալ զայս տեղի (Եւստաթիէ , կամ տաթեւոյ) յոյժ պատշաճաւոր և ի ձահ . . . եկին և բնակեցան առ տէն ։ Եւ սուզ ինչ զկնի . * Եւ արդ՝ խնդրեաւ յիշ խանացն եպիսկոպոսացն սիւնեաց զտեղիս զայս՝ եկին և բնակեցան ի սմա ։

Ա.յլ թէ ո՞ եր յեպիսկոպոսաց՝ որ զառաջինն սկսաւ անդէն բնականալ՝ * Այլ ծանեայ (ասէ օրպէլ.) միայն ոն գէորգայ (որ է ի թ. դարուն եպիսկոպոս սիւնեաց՝) և այսր գոյն նշան և կայ ի ծանօթ ամենայն որպիսու թեանց նոցա . այլ զառաջինն ոչ գիտեմ[1] , զի ոչ դոյր յիշատակ ինչ. բայց գիտեմ՝ զի բազում ժամանակօք բնակեալ էին անդ ։

Ա.ռ ժամանակօք ոն դաւթի , և սողոմոնի սիւնեաց եպիսկոպոսաց՝ որք յաջորդեցին զկնի ոն գէորգայ , ոմանք յիշխանացն սիւնեաց ետուն այսր վաճառ ի յիշատակ հոգւոց իւրեանց բազում կալուածս, և ինչ ինչ յա ւելուա յայնա ի սեպհական արդեանց նոցին խակ եպիսկո պոսաց ոն դաւթի և սողոմոնի ։

Ւակ ընտրութի եպիսկոպոսացն սիւնեաց՝ ոչ միշտ եղև միօրինակ . զի առաջին առաջնորդք սիւնեաց գրեթէ լի նէին ընտրութիք կաթուղիկոսին ի խնդրել իշխանացն սիւնեաց նոր առաջնորդս փոխանակ վախճանելոյն , (որ պէս ուսանիմք ի պատմութեց անտի ստեփ . օրպէլ .) խակ միջին և վերջին դարու եպիսկոպոսքն ընտրէին յիշ խանացն և ի ժողովրդենէն , և ձեռնադրէին ի կաթու ղիկոսէն . օրինակի վասն զերծուք զայս բան օրպէլեանն որ ի գլ. խա. յընտրութի ե. յովհաննու եպիսկոպոսի սիւնեաց . * Ւասեալ վախճան առաքինոյն սողոմոնի , և ժողովեալ տեղանցն սիւնեաց , և ամենայն ազատաց նո ցա , և վասնց երիցունք աշխարհիս , նաև աւագ տանու տէրք ըստ գաւառաց , և ամփոփեալ զոր մարմինն եպիս կոպոսին , առնեն ընտրութի նորոգ հայրապետի . և ամե նայն ժողովոյն զաղաղակ հարեալ զյովհաննէս փակակն խնդրէին ինքեանց առաջնորդ , ընդ որ հաձեալ բաւմնա

ձծղուկս , Բուն գահ էլխանացն , և հայրապէտացն ։

(1) Թ-ևակտ նոյն ինքն սոեփանէ նոս օրպէլ. ի գլ. լէ. գրե վասն գաւթի յաջորդին գէորգայ. Այս էր ... որ հաստատեաց զաթոռ եպիսկոպոսուէ ի տաթևոյ վանս , և ընդարձակեաց զսահմանս նո

րուն ։ Ա.յլ զայս պարտ է իմա նալ, ոչ զի զառաջինն գաւթի բնա կեցաւ անդ , այլ ստացմամբ կա լուածոց , և նորին խակ տեղոյ վանայն տաթևոյ՝ հաստատեաց անդէն զընակուն եպիսկոպոսացն սիւնեաց ։

Թէ՝ յուղարկեն զնա մեծապատիւ փառաւք առ կաթողիկոսն Հայոց տէր գէորգ, և ձեռնադրեալ դառնայ մեծաշուք պատուով։ Օնոյն է տեսանել և յընտրութէ առ ըին ստեփաննոսի օրպէլեան։

Ի վախճան ներածութէ նահանգիս սիւնեաց՝ պատշաճ համարիմք զնել համառօտիւ և զկարգ եպիսկոպոսացն սիւնեաց՝ առեալ ի գրոց օրպէլինին, և յայլ յիշատակարանաց, եդեալ առընթեր և զամս յորս կացին եպիսկոպոսս։

1. Կրիգորիս, կամ Գրիգոր ա. ամս իշ։ — Ձեռնադրեալ ի լուսաւորչէն։
2. Աշտոց. ամս ինչ։ — Ձեռնադրեալ ի գլխ մեծէն Կերսիսէ։

Աթոռոյ պարապոյ ամս ե հինգ ամայ։

3. Ղևանիա ա. ամս իբ։ (1) — Ձեռնադրեալ ի գլխ սահակայ։
4. Ղուն. ամս ը։
5. Վաղատ. ամս ժե։
6. Աւրէ. ամս լգ։
7. Գրիգակ. ամ մի։
8. Մակար. ամս իբ։
9. Պետրոս քերթող. ամս ձ։ — Ձեռնադրեալ ի թ. ներսիսէ կաթողիկոսէ աշտարակեցւոյ։
10. Գիգան. ամս է։
11. Ներսէհ. ամս իչ։
12. Գրիգոր բ. ամս ժե։ — Ձեռնադրել յաղուանից։
13. Գրիտափոր. ամս ձ։ (2) — Կոյսպէս յաղուանից ձեռնադրեալ։
14. Դաւիթ ա. ամս իչ։ — Ձեռնադրել յաբբահամ կաթողիկոսէ։
15. Ներսէհ սահակեան քերթող. ամս ժը։ — Ձեռնադրեալ յեզր կաթուղիկոսէ։

(1) Զսա բազումք ի մերոց մատենագրաց յիշատակեն, և առ զաղարայ փարպեցւոյ ի ժողովն արտաշատու անհնարին կարգի գնի կաթուղիկոսին՝ նախ քան զայլ եպիսկոպոսունս։

(2) Ոմն առաջնիկայ գտաւ ժողովս ընտրութէ ա. աբբահամ կաթողիկոսի։

Օ. Ընդ մարտիրոսային վկայից պարտադոյ ոչինչ ասացեալ :

16. Կ. բրահամ. ամն ը :
17. Յովսէփ ա. ամն ժթ :
18. Յոհան ա. ամն իբ :
19. Մովսէս ամն է : (1)
20. Կնանիա ը. ամն է :
21. Յոհան ը. ամն թ :
22. Մատթիանոս ա. ամ ամ : (2) Ձեռնադրեալ 'ի գաւ. Թայ կաթուղիկոսէ :
23. Յովսէփ ը. ամն ժէ :
24. Յովակիմ. ամն ժէ :
25. Մադովկ. ամն լը : (3)
26. Յովհաննէս ա. ամն ը :
27. Մողոմոն ա. ամն է :
28. Կղէա. ամն ը :
29. Ովդորոս. ամն ժէ :
30. Գէորգ. ամն ը :
31. Դաւիթ ը. ամն ժէ :
32. Յովհաննէս ը. ամն ժ :
33. Մողոմոն ը. ամն ժէ : Ձեռնադրեալ 'ի զաքարիայ կաթուղիկոսէ :
34. Յովաննէս է. ամն լը : Ձեռնադրեալ 'ի ը. գէորգայ կաթուղիկոսէ :
35. Յակոբ (հերձուած ծօղ) :
36. Ի. ահան առաջին Կ. ըք. եպիսկոպոս : Ձեռնադրէը յանանիայ կաթուղիկոսէ մհակաւոյ :

Ի ինչէ ցայս վայր կարգաւ եդաք զեպիսկոպոսունս սիւնեաց. այլ քանզի 'ի մեր օրինակին գրոց օրսկէլենին պակասի ծիգ. գլուխն՝ որոյ վերնագիրն է. * Կաթուղիկոսք սիւնեաց՝ որ կարգեցան զկնի նոն վահանայ ‖. վասն որոյ չունիմք առ ժամս յիշել զանուանս նոցա յայսմ կարգի,

(1) Սա է վարդապետ մեծին սաեփաննոսի սիւնեաց եպիսկոպոսի :

(2) Ըստ այլոց՝ ամն ը : Սա է երիցն սաեփաննոս քերթողն ծաղկեալ գրչութիւ և թարգմանութ. սպանաւ 'ի պոռնիկ կնոջէ՝ վասն յանդիմանելոյն զնա սաեփաննոսի :

(3) Գտաւ 'ի ժողովն պարտաւոյ առ սիոն կաթուղիկոսիւ, որ յիշատակի և 'ի կանոնադիրս :

այլ միայն զնոցա անուանս որք յիշատակին ի հետևեալ գլուխս նոյն գրոց, և կամ յայլ գիրս. որք և են,

Յովաննէս։ (1)

Գրիգոր։ Ա ախճանեալ ի չէ. Թուին Հայոց։

Ստեփաննոս։ (2)

Յոհաննէս։

Նայրապետ։

Սողոմն։

Յոհաննէս։

Ստեփաննոս օրպէլեան։ (3) Ձեռնադրեալ ի ք. կոս. տանդէայ կաթողիկոսէ։

Յովհաննէս օրպէլ։ (4)

Յիշատակի ի գիրս և առ Թովմայի մեծոփեցւոյ՝ Ուռա քել, կամ Ուռաբեաւ Եդեսիական սիւնեաց տեղաս սաց (5)։ Ոսկ առ ժամանակօք ժողովոյն էջմիածնայ՝ որ գումարեցաւ յընտրութիւն կիրակոսի առաջնի կաթուղիկոսի էջմիածնայ՝ յիշատակի առ Թովմայի մեծոփեցւոյ՝ աեղապահ աթոռոյն սիւնեաց՝ Տէր Ստեփաննոս։ Ոչ այց առաջնորդ ստաթէի վանաց էր ի ժամանակին Շմաւոն եպիսկոպոս, որ յիշատակի և ի մուրհակին տանուտեարց երկրին գեղարքունւոյ՝ որ գրեալ կայ ի վախճան ցուցակի գլխոց պատմագրութեանն ստեփաննոսի օրպէլեան, օրիւնակ զոյս. * Ովսկան Ջկը. էր՝ մեք գեղարքունոյ մելիք տանուտերքս եկաք ի թղ աթոռ ստաթէի սիւնեաց ձմին գալաւոի, լաս առաւել երկրին մեր գեղամայ . . . յուխտ և դաշինք դրինք դրան թղ առաքելոյս, և առաջի եպիս. կոպոսաց Շմաւոն եպիսկոպոսի, և տէր Ստեփաննոսի, և Մարտիրոս փակակալի, և տէր Գուկաս հայրապետին, և այլ միաբանից մեծի և փոքու. ամէն ։

(1) Ընդ սա գրեաց բազում թուղթս գրիգոր մագիստրոս։

(2) Գտաւ ի ժողովն հռոմկլայու, ստորագրեալ զանուն իւր ի կարգ Եպիսկոպոսաց։

(3) Զսա բազումք ի թղ առաքաբար անուամբ Մեծարապելիա կոչեն, թէպէտ վասն գրով ծաղկեցուցանելոյ զնստարապետութիւն աթոռոյն սիւնեաց. այլ ժամանակակից նորա, յորոց մի է և Եղիա Եդեսի վարդապետն եսայի՝ գրէ առ նա և կոչէ՝ Եպիսկոպոս։

(4) Սա միանգամայն էր և իշխան աշխարհական, որոյ կան և գրուածք ինչ, ոգւոյս և թուղթ մի առ զաքարիա ծործորեցի արքեպիսկոպոս արտաղու։

(5) Կան և սորա գրուածք պէս պէս արձակ և ոտանաւոր։

Վաւառք սիւնեաց են ժք։

ա. Այրնջակ.	ղ. Նղոսիք.
բ. Ձախոսիք.	ը. Նաբանդ.
գ. Ալայ ձոր.	թ. Կաղզ.
դ. Վերքարտանի.	ժ. Զորք.
ե. Վարք.	ժա. Գլխիք.
զ. Ղահիճք.	ժբ. Կոստական.

Բաստ այսմ կարգի Թուէ խորհնացին, այլ տարբերի ստեփաննոս օրպէլ. զոր և նշանակեացուք յիւրաքանչիւր սահմանս գաւառաց։

ԵՐՆՋԸԿ [1]։

Առաջին դասէ զսա խորհնացին՝ ի կարգս գաւառաց սիւնեաց. իսկ ստեփաննոս օրպէլ դնէ մետասաներորդ։ Նահալաւ զանուն իւր՝ ի համանուն բերդէն. իսկ բերդն՝ ի շինողէն իւրմէ՝ ի տիկնոջէն սիւնեաց. * Այի ոմն (ասէ ստեփ. օրպէլ. գլ. ը.) ի կանանց նոյն նահապետացն (սիւնեաց) Այրնջիկ անուն՝ շինէ և զանհնարին ամուրն Այրնջակայ, և յիւր անուն բերդն և գաւառն կոչի Այրնջակայ ։

Ինչափ էր ամրութիւն բերդիս՝ մինչև՝ ի նմա հաստատել զգանձարանն ըստ ասից Նորսուն. * Պահէն՝ ի նմա տուն գանձու և հարկաց աշխարհին ։ Ելուր՝ ի գլ. լը. կոչէ Ինաւիկ. * Այայ՝ ի մարտ ընդ Նաւարիկ ամրոցին Այրնջակու՝ յորում կային պատուական տիկնայքն սիւնեաց ։ Այ ասն որոյ և յոստուփ ոստիկանն՝ ի վախճան ժ. դարուն ոչ կարաց առնուլ՝ ի բաղում աւուրս խստագոյն մարտիւ պատերազմելով, բայց ելեալ գաղանի հնարիւք, բաստ գրելոյ յոհաննու կաթուղիկոսի. * Այայ ոստիկանն անօրէն արձանացեալ, և մարտ զամրոցաւն Այրնջակաւ եդեալ՝ ոչ հեռանայր անտի, մինչև գաղտաբար լինքն գրաւեալ յափշտակէր զամրոցն ։ Այլ ելեալ զինչ էր գաղտ նի հնարքն՝ յայտ առնէ ստեփ. օրպէլ. ի գլ. լը. * Ի գիշերի գողութիւ եաւ զբերդն անձաւամուտ և քա

(1) Ա. յսպէս գրի՝ ի տպ՝. և առ ստեփ. օրպէլ։ Ուսոյի վրէ՝ ի միւմ ձեռ՝. աշխարհագր. խոր. պակաս գրի յերկուս ձեռագիրս որպէս նաև առ յովհ. կաթ. և Եւդոկ։

բակնաց արամբք, որք երկաթի Հանկօք ընդ ժայռս դը-
ժուար վախից արբեստակեալ ընթանան ||:

Յետ գրաւելոյ յոսփոյ ետ Հագարացւոյ ումեմն՝ որ
տիրեր միանգամայն և գողթան, յոյր սակս մեծ պատե-
րազմ մղեաց Ընդեմ նորա ամբատ սիսական. * Արդ-
պիսին (ասէ յովհ. կաթ. վանն ամբատայ և երից եղբարց իւ-
րոց) առ Ի նմանէն յինքեանս դարձուցանել զսեպհական
իւրեանց ամրոցն Արնջակ, և զառաւտրոտով նորա զգա-
ւառն, զոր յոսփոյ ոստիկանին առեալ՝ տուեալ էր Ի
ձեռս գողթան բռնակալին ||:

Ի բանից աստի յհաննու կաթուղիկոսի՝ որ զգաւառն
դնէ առ ստորոտով բերդին երնջակայ, յայտ է թէ՝ այս
բերդ էր Ի վերայ լերին՝ որպէս է և այժմ, որ կոչի Ա-
ճա փալնւխ. (1) յայտ է ևս՝ թէ էր սահմանակից գողթան
գաւառին. վանն այնորիկ ստեփաննոս օրպել. զգողթն
միանգամայն ընդ Արնջակայ կացուցանէ մի գաւառ. և
կորիւն զգողթն դնէ սահմանակից սիւնեաց:

Ի ժբ. դարու էլիկում նախահայր հայազգի օրբէ-
լեանց տիրեաց Արնջակայ բերդին, որպէս գրի Ի պատ-
մութիւն օրբէլեանց գլ. ե. թղթ. 25:

Ի ժէ. դարուն յարձակեցաւ Ի վերայ Արնջակայ և
Թաւատրն ազախաց Թահմարու, զորմէ Թովմա մեծոփե-
ցի ժամանակակից գրէ. * Ոուեալ եկն Ի յերկիրն սիւ-
նեաց Ի վերայ դղեկին Արնջակու:

Յիշատակի յայսմուսուրս Ի 21. հոկտեմբերի և Ա անտ
երնջակոյ ընդ հովանեաւ ՝ջին գէորգեայ, ուր Թաղեցւոյ
վարդապետն մաղաքիա գրիմեցի:

Ալրակունք: Գիւղ՝ յերնջակ գաւառի՝ որ յիշատակի
Ի ժէ. դարու Ի պատմական յիշատակարանս ինչ (2):
Յիշատակէ մխիթար ապարանցի և զԱ անքն Ալրակու-
նեաց՝ յասելն. * Ի գաւառն Արնջակոյ Ի վերի վանքն
Ալրակունեաց՝ ունի քաջ վարդապետ .. որ կոչիւր սար-
գիս»: Յիշէ զնոյն վանս յերկրին երնջակու և Թովմա մեծ-
ոփեցի:

(1) Տես Ի նոր հայաստան թղթ. 268:

(2) Տես Ի նոր հայ. թղթ. 267:

ՃԱՀՈՒԿ [1]։

Ա՚յս գաւառ երկոտասաներորդ դասի առ ստեփ. օր պէս. ՚ի գլ. ՟ճ.* Երկոտասաներորդ (գաւառ ունի սիւնիք) Ահեւակ գաւառ, որ և Զորն՝ որ Շահապաւնս կոչին ‖։

Շ ահապահէց էէրդ ։ Որ զայսմանէ ստեփաննոս օրպէս գլ. ՟ճ. * ՚Ի շահապ պարսկէ շինեալ, և զՁորն յիւր անուն (կոչէ) Շ ահապահէց էոր, որ հատուածի պատճառ եկեալ էր առ նահապետքն սիւնի ‖։

ՎԱՅՈՑ ՁՈՐ, կամ ՎԱՅՈՑ ՁՈՐ [2]։

Օ պատճառ անուանակոչութեանէ այսր գաւառի՝ այսպէս բերէ ստեփաննոս օրպէս. ՚ի գլ. ՟լ. իբր զի յետ մահուան ստեփաննոսի ՟ի՟. եպիսկոպոսի սիւնեաց, զաւուրս ևս. խաւար պատեաց զգաւառն սիւնեայն, և եղև երկրաշարժութիւն սաստիկ. * Ո՚ւխնայն տէղիք (ասէ) երերէր տատանմամբ, և ձայնք մարդկէղէն բարբառոյ լսելի լինէին ՚ի նեղքուստ յանդնդոց, և ՚ի վէրուստ յօդոց՝ Վա՚յ ՟որ, վա՚յ ՟որ. և կենդանեայն ընկղմեցան ոգիք իբրև ժՁ. զորս գիտէին, և ՚ի թիւ արկին, և յանծանօթիցն ո՚չ ոք գիտեր զհամարն. յաղագս որոյ Վա՚յոյ ՟որ կոչեցաւ անուն գաւառին ‖։ Օ սոյն զայս դնէ պատճառ և կիրաւ կոս պատմագիր. և արդարև նոյն իսկ անուանն յայտ առնէ՝ թէ սակս սգալի անցից ինչ կոչեցաւ այսպէս. բայց վերսկսեալ է ժամանակագրութեանէ դնել զայն յետ մահուն ստեփաննոսի եպիսկոպոսի՝ որ էր ՚ի ՟ը. դարուն. զի սովին անուամբ յիշէն զայս գաւառ խորենացին, եղիշէ, և զաւգայ՝ որ կին ՚ի ՟է. դարուն՝ բազմօք յառաջ քան զտեփաննոս ։

(1) Ա՚յսպէս գրի յերիս ձեռագիրս աշխարհագրութեանէ խորենացոյն. որպէս և առ Թովմ. կիլիկ. և առ ստեփ. օրպէս. Իսկ ՚ի տպ. աշխարհագր՚. խոր. վերի պակաս գրի Ջահուկ։

(2) Ա՚յսպէս գրի ՚ի տպ. աշխարհագր. խորեն. և յերկուս ձեռ՚. իսկ ՚ի միւմ ձեռ՚. և առ ստեփ. օրպէս. սիւնեայն ուրեք գրի Վայոյ ՟որ, որպէս նաև յերկուս ձեռ՚ պատմ. խոր. ՟ճ. ՟ճ՟. առ զազարայ, առ Թովմայի կիլիկեցւոյ, և առ վարդանայ աշխարհագրի ։

Ա. յս գաւառ կոչի և Այղեվէդ ՅՈՐ, որպէս գնէ վարդան աշխարհագիրը, յասելն. * Ա այոյ ձոր՝ Այղեգէց ձորն է, ուր կայ կենսաբեր Տէր նշանն ‖ : Յայտ է և՝ ի բանից ստեփաննոսի օրպէլեան, որ զմնհն ստեփաննոսի սիւնեաց եպիսկոպոսի գնէ լինել Այղեվէդ ՅՈՐՆ, կամ որպէս նա ինքն կոչէ՝ ի Ձորն եղեգեաց, և ապա ասէ Թէ նոյն գաւառ ուր մեռաւ՝ կոչեցաւ Ա այոյ ձոր :

Հողոցմ : Ա. զազարայ գրի՝ Խողոցմ, և յերկուս ձեռագիրս խոլենացւոյն ՚ի. 67. Խողոցմ. ուր ՚ի տպ. վրիպակաւ գրի՝ Հողոց : Ա. մենեքին գնեն զայս գիւղ յայսմ գաւառի, ընդ որս և յոհաննէս կաթուղիկոս՝ յասելն վասն որդւոյ յովսեփայ կաթուղիկոսի, որ ընդ ղեւոնդեանս նահատակեցաւ. * Ի սկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն տեղապահութիւնք յաջորդեաց յովսէփ քահանայ ՚ի վայոց ձորոյ ՚ի Հողոցմ գեղջէ ‖ : Ա. ստողիկ վասն նորին յովսէփայ գրէ. * Ի գաւառէն Ա այոց ձորոյ ՚ի գեղջէն Հո զոցմայց (1) ‖ : Ա. եղիշէի ը. Թղթ. 181. այլովք տա ռիւք գրի յասելն : Այն յովսէփ ՚ի Ա այոյ ձորոյ, ՚ի գեղ ջէ Հողացմանց ‖ :

Այղեէս : Վիւզաքաղաք՝ զորմէ ստեփաննոս օրպէլ. ՚ի գլ. լը. * Ի սկ մեծ և ամենիմաստն ամբաստ ՚ի սեփական գաւառին իւրում դարեաւ դադարեալ նստեր ՚ի վայոց ձոր ... ամրացուցեալ զտուն իւր, և զամենայն գաւառն յամուրսն Ա այոյ ձորոյ ... շուրջ զիւրեաւ կացուցանէր յիւրում արքունական յապարանսն որ ՚ի գիւղաքաղաքն Այղեգիս ‖ : Յանուն սորա Թուի Թէ և բոլոր գաւառն կոչեր՝ Այղեվէդ ՅՈՐ :

Ի ժամանակս լանկթամուրայ սահմանն եղեգեաց ուհներ իշխան սեփհական յազգէս մերմէ, որպէս վկայէ Թովմա մեծոփեցի յասելն. * Ա. զտէրն Այղեգեաց Տարսայիձ անուն զորդի գորգին ուրացուցին ‖ :

Ա՛ոն, կամ Ա՛ոպան աւան : Ձիշատակի առ ստեփ. օրպէլ. ՚ի գլ. լա. * Ի գաւառս բարելից ՚ի Ձորն եղեգեաց յաւանն Ա՛ոզան : Ի նկանի յայս գաւառ, վասն զի ձորն եղեգեաց որպէս ասացաք՝ է նոյն իսկ Ա այոյ ձոր : Յայսմ աւանի բնակէր կինն Հերատուհի՝ որ ինքնին սրով սպան զստեփաննոս իշ. եպիսկոպոս սիւնեաց, սակս պատուհաս

(1) Վարգան այլազգ հոլովն մեսրոբայ ՚ի վայոյ ձորէ ՚ի գեղջէ յասէն վասն որդւոյ յովսեփայ կա- Հողոցմանց ‖ : Նոյնպէս գրէ և ՚ի Թողիկոսէ. * Յովսէփ աշակերտ Ճառընտրի բանիւ եղիշէի :

սելոյն զնա վասն չար գործոց իւրոց ։ Կիրակոս կոչէ զա-
ռաքեալսն՝ յասելէն վասն նորին ստեփաննոսի . * Պա-
նեալ եղև ի պռոնիկ կանանց ի Հռոմ գաւառի . . . և
ահա խաւար կալաւ զՀռոմ սաստիկ, և զաւուրս ին
չարժեցաւ տեղի . . . վասն այն Հայոց ձոր անուանեցաւ
մինչև ցայսօր ժամանակի ։

Հերձ յայս աւան կամ ի գիւղ եր Եպափան անուա-
նեալ առն քաղցրահամ աղբեր, ուրանօր սպանաւ նոյն
ստեփաննոս ի կնոջէն ։

Եդեսան ։ Գիւղ՝ զորմէ գրէ ստեփ . օրպել . գլ . լա .
* Օր որ լուեալ Հրկազան գիւղն տերամբ իւրեանց ելին
ընդ առաջ, և հաւանեցուցին զսպասաւորն հանդուցեալ
ի սենեակին՝ որ յանուն Տէր քրիստափորի անցաղէտ զօրա-
վարին շինեալ եր . զոր տարեալ (այսինքն զմարմին ստե-
փաննոսի սիւնեցւոյ) անդ հանդուցին ի սենեակին ։
Ի պատմէ նորին ստեփ . օրպել . քաջայայտ երևի լինել
յայսմ վայրի ձոր գաւառի ։

Ընդ կիրակոսի այլազգ գրի սորայս անուն, և կոչի գա-
ւառ, ուր ասի վասն նորին ստեփ . * Օրոյ զմարմին
առեալ բերին ի Այգեհան գաւառի ։

Գողգոթան ։ Ձիշատակի ի տօ . պատմ . օրպելեանց . ի
գլ . ծ . * Ի գառ (ամբառ օրպելեան) և զեղեգիս, և զա-
մենայն դաւառն Հայոց ձորոյ, զԳողգոթանն, զԼՌ-ըծ [1]
(Թերևս զՂԱյծ), և զՀԷՒ իւր ձորովն մինչև Հրդեհաձոր
և ի կոտայս, և մինչև ի Կեղաքարունի ։

Հրաշեհբերդ ։ Յասէն գրի ի պատմէ օրպելեանց .
խակ առ ստեփ . օրպել . ի գլ . կէ . ուրեք ուրեք գրի այս
պէս · ըստ այմմ . * Հայոց յետոյ Հրաշակաբերդն շինեցաւ
և բնակեցան ի նմա պարսիկք, զորս և վերստին առին
Հայոսուրս ամաւրակ իւանէին ։ Խակ ուրեք գրի Հրաշե-
բերդ, այլուր՝ Հերդ Հրաշեկայ . * Կեղեալ (ասէ) յանկ
ծեալ և ի պիղծ բերդատահճէն Հրասեկայ ։ Ուրեք և
գրի Հրաշեկան բերդ, որ է վերնակ ։ Ի գլ . ջ . յուցանէ
ստեփ . օրպել . Թէ սակս ի Հրասեկայ ունելոյն շինեալ
գոլոյ՝ կոչեցաւ Հերդ Հրասեկայ, կամ Համառօտելով
Հրասակաբերդ, այլ անուն բերդին կոչեր Այպայ, զոր
չէ պարտ շփոթել ընդ կապոյտ բերդին՝ որ յերասխաձոր ։
* Խակ ի վայրէ ձոր (է) Կապոյտ բերդք ի Հրասեկայ
շինեալ՝ անհնարին ամրութեամբ ոճաստեղծ պարսպօք ամ

(1) Տես յանծանօթս մեծին Հայոց զԿալուածս իշխանացն Ուրծոյ ։

բայեալ ‖ : Ի վայոց ձոր գաւառի դնէ նաև ի գլ. կիզ. զի ասէ լինել մերձ Արտաւանից՝ որ էր ի վայոց ձոր :

Աղէքսանդր : Աւետ. օրակ. ի գլ. ձ. զկնի վերջ գրեալ բերդի յիշէ և զայս, գասելով ընդ ամուր բերդս սիւնեաց, որ էր շինեալ ի Աղէքսան պանոպեանէ, որպէս գրէ անդէն :

Արտաւան. կոչի նաև՝ Արտաշոր անապատ. * Այս միւս իշխանն համառօտն անուն (ասէ օրակլեանն գլ. կա.) որ էր որդի մեծ իշխանին բաղաց Հոռանայ (գուցէ՝ Հասա նայ), և Թոռն աւագ Համազասպայ՝ գնաց ի վայոց ձոր առ փառաւորեալ եղբայրն իւր տէր Յովհաննէս՝ որ բնակէր ի Արտաձոր անապատին՝ որ Արտաւանս կոչի, մերձ Հրաշ կաբերդոյն, և անդ կրօնաւորեալ ի նմին վախճանի ի շՁ. Թվականին ‖ : Այ է սա ի հռչակաւոր մենաստանաց սիւնեաց՝ որ ի խորագիրն կիզ. գլխոյ պատմութիւն օրսկեւ լինին կոչի՝ Աներեսակ և աշխարհապէս խմբող ան :

Օ դիրս նորա այսպէս ստորագրէ ստեփ. օրպել. անդէն. * Յառաջ քան զայս (ասէ) բաղում ժամանակօք, վազ աւուրբք, և հնագոյն ամօք ի նեղ և յանձուկ ձոր բակին այնմ ի պատշաճաւոր տեղւոջ՝ էր շինեալ եկեղեցի մի կրաշաղախ վիմօք յանուն ըզյ կարապետին, յոյժ աբանչելագործ և ահարկու և անուանի մերձակայ սահմանացն. և բղխեր մերձ նմին աղբիւր քաղցրահամ, և ձորն ամենայն գեղեցկացեալ էր այգովք և թանձրախիտ ծառովք մրգաբերօք : Այս ի թանձրամած կաշկառուտին ի նոյն ձորին կայր եկեղեցի մի յանուն ըզյ Հայրապետին փոկասու շինեալ, և ի մէջ եկեղեցւոյ բղխեր ջուր սակաւ ի ներքոյ բեմին ‖ :

Յետ ժամանակաց իբրև ամայացաւ՝ նորոգեաց զնոյն Յովհաննէս ոմն եպիսկոպոս. * Ապա ի նուազիլ ժամանակաց (ասէ օրպելեանն) մինչ եհաս աւեր ամենայն աշխարհի, և բարձաւ Թագաւորութիւնն բաղաց, և սպանաւ Թագաւորն սենեքարիմ, և բնաջինջ եղև տէրութիւնն բաղաց, և խափանեալ լուեցին ամենայն ուխտք պաշտանէից, ի շՃգ. Թվականին (յամին 1104.) էր եպիսկոպոս ոմն ի վանսն Յովհաննու Յովհաննէս անուն՝ լցեալ ամենայն առաքինութիւք և բոլորովին զգեցեալ զչք, յազգէ ազնուական՝ որդի մեծատուն իշխանին բաղաց Հասանայ (Թուի՝ Հասանայ), որ ունէր ընդ ձեռամբ զամենայն աշխատս Թագաւորութեանն այնմ, և էր որդի մեծին Համազասպայ. այս Յովհաննէս յետ աւերման իւրոյ աշխարհին բա-

զում ալեկոծեալ այսը և անդր, եկն ՚ի վայոյ ձոր գաւառ, և կամեցաւ ընակիլ ՚ի խորաձոր անապատին Կո-
րայնից՝ մերձ անառիկ գղեկին Հրասկաբերդոյն, առ հիացը և մեծապանչ եկեղեցւոյն որ կարապետին ||։

Յողովեաց անդէն կրօնաւորս, և եհան զաշխարհական հրովարտակսն զոր էառ ՚ի մահմուտ սուլտանէն պարսից. շուրջ զսահմանսն կանգնեաց խաչ, զի մի անցանիցեն ընդ այն կանայք և լկտի մարդիկ. էառ ՚ի սահմանացն գանձակեցեաց և ՚ի տեառրբերցեաց անդաստանս ՚ի ժառանգութիւն եկեղեցւոյն. և այլով հրովարտակով էառ և գհրաշակաբերդն, և զերկոտասան ագարակս [1]։

Ի միջն անդ ժգ. դարուն սմբատ օրպէլեան զարդարեաց զայս մենաստան, որպէս գրէ պատմիչն օրբէլեանց ՚ի գլ. ը. * Շ ինեաց (սմբատ) զհրաշակերտ ժամատունն ՚ի Նորավանս ՚ի վերայ գերեզմանաց իւրոց, և արար բազում արդիւնս, և վարձամացոյց զնա, և զարդարեաց զեկեղեցին, և ետ զգեօղս և զայգեստանս ||[2]։ Այս որպէս ակնարկէ նոյն պատմիչ ՚ի նոյն գլ. տարսահիճ եղբայրն սմբատայ աստ ՚ի Նորավանս շինեաց եկեղեցի յանուն Ս. Աստուածածնի, և տուն տապանի վանս սմբատայ, և անդր փոխեաց զմարմին նորա։

Յայսմ մենաստանի էր և դերեզմանատուն զարմին օրպէլեանց՝ որպէս յայտ առնէ պատմիչն օրպէլեանց՝ ՚ի գլ. ը. յասելն վանս մերինոյ սմբատայ օրպէլեան. * Կնեբեալ ՚ի հայրենի գամբարանն ՚ըզ ուխտին Նորավանից, և աշխարհախումբ հանդիսիւ եդին ՚ի տապանի ընդ հարս իւր ||։ Որպէս և յառաջ ՚ի գլ. ե. գրէ՝ թէ անդ թաղե-

(1) ՚Ի կը. գլ. օրպէլ. երկուս Նորավանս դնէ ՚ի կողմանս վայոց ձորոյ, և ասէ վանն միոյն՝ թէ յետոյ եղև էպիսկոպոսարան, որ է ոմն այս Նորավանք՝ զոր ասորագրեցաք. որոյ և էպիսկոպոս Սարդիս անուն յիշատակի ՚ի պատմ. օրպէլեանց ՚ի գլ. ը. յիշատակի և այլուր՝ Ջաքարիա էպիսկոպոս. և որպէս ակնարկէ պատմիչն օրպէլեանց՝ այս սեծոս էր ը Ալքե պիսկոպոսական սեծոուին սիւնեաց։ Ալ որպէս թուի՝ վերպատճառ եղեալ են երկոքին ևս Նորավանք մի գնի միոյ ՚ի կարգս վանորէից Վայոց ձորոյ. կամ թէ առ ՚ի ոչ չփոթել զերկոսին ՚ի մի՝ յիշի անդէն միւս Նորավանք. զի այն Նորավանք որ չէր այնչափ ինչ երևելի՝ ՚ի ցուցակն անգ խոցագրաց խէ. գլխոյն սահմանոսի օրպէլ. (որոյ բուն գլուխն պակասի յօրինակի մերում.) դնի * ՚ի գաւառն Բղնոյ ||. իսկ Բղնի՝ թուի լինել ՚ի բազում գաւառի։

(2) Պատմէ վանն այսը և սահմանոս օրպէլ. ՚ի պատմութիւն իւրում գլ. կէ. որոյ խորագիրն է. * Վասն շինութիւն եկեղեցոյն Նորավանից և հոգեցատուր ժառանգութեանցն նորա՝ որ յիշխանացն օրպէլեանց ||։ Բայց և այս գլուխս պակասի ՚ի մերում օրինակի։

ցաւս օրպելեանն լիսպարիա հայր սիմեաոյ. * Լերեալ գնի ի Կորավանս ի գրան որ կարապետին առ մօր իւր բուսմ ։ Ընդ Թաղեցաւ և տարսահիճ՝ երկիս գնի ի գլ. Թ ։

Յախաց խոր ։ Ա՝ենաստան՝ որ առ ստեփ. օրպել. ի գլ. կիբ. վերնակաւս գրի Յաղաց խոր, և կոչի՝ Խաբչահաղակ և որ առաքինոցն ։ Ընդ լինեաց զայս ստեփաննոս վանահայր ի միջն անդ ժ. դարուն ի ժամանակս անանիայ կաթուղիկոսի՝ որպես գրէ ասողիկ գ. յ. * Եւ Յախաց քար (վանքն շինեցաւ) ի վայոց ձորի, ի ձեռն հօր ստեփաննոսի ։ Ասկ ի 1041. վարդիկ վանահայր շինեաց անդէն կրկին եկեղեցիս. * Ի նոյ. Թվականին (ասէ օրպելեանն ի նոյն կիբ. գլ.) ի Թագաւորութեն գագկայ՝ հայր ոմն վանիցն վարդիկ անուն շինէ (ի Յախաց քար) պայծառ եկեղեցի երկու ի հանդստարանի առաջնին որ Հարցն. զմին գմբեթայարկ յանուն ոջլ կարապետին, և զմիւսն սագաշէն հրաշալի յօրինուածովք ։ Յարտահիճ օրպելեան որ ի ժգ. դարուն՝ չնորհէ այսմ մենարանի գիւղ և այգի. * Եւ գրէ ինքեան զարձան (ասէ պատմիչն օրպելեանց) ի վերայ ոջլ կարապետին ։

Թանահապ, կամ Թանահապի վանք [1] ։ Ի մի լերեւելի վայրի ձորոյ՝ առ ի ցուցանել զգաւառն. զի այսպէս սկսանի զայն կիբ. գլ. յորում Թուղ կամի զգուհորայս սիւնեաց. * Ա՝նաջլին գլուխն ամենեցուն վանօրէից՝ և ազգիւր շնորհաբաշխութեամբ՝ տանն սխական՝ Տաթեւէ ապա մեծ առաքինաբարն՝ Թանահապ վանս Ախանի վանք ։ որոյ եկեղեցին չքնաղ և նորաձեւ ձեւով կանգնեալ գմբեթայարդ խորան երկնանման ի մեծ բարեպաշտուհւոյն վարդիտայ սիւնեաց սիւնորէք յաւաք քան զայլ Թվականն յանուն ոջլ լուսաւորչին, և յառաջև վանիցն ի մէջ քաղցրահայեաց մէջ գանին գնեն իշխանքն առն արքունի, և ապարանք իշխանանիստ. և յամենայն աւուր ասեն գայլն ի պատարագին ։

Ջայս մենարան զոր ի սկզբան դրոյս յիշէ՝ մեծ առաքինաբան կոչեցուսյ, և զեկեղեցի նորա չնեալ լով, և զեկեղեցի նորա չնեալ առելով նախ քան զԹվական հայոց՝ յայնմէն ցուցանել լինել նոյն

(1) Կոյն է առ՝ որ ի կիբ. գլ. նաեպ. օրպել. գրի Թանապէի վանի, և գնի ի կողմանս վայոց ձորոյ, զի և ի խորագրի լիբ. գլխոյն նոյն Թանահատի վանք գրի Թանապէայ վանի. իսկ ի ցուցակն՝ Թանանապէայ վանի, որք են այլայլութիւնք գրչի ։ Այլ զի որպէս ի կիբ. գլ. վանն Թանահատի վանից գրէ, Թէ ի նմ. * Կայ նշխարք սրբոյն ստեփաննոսի ։ նոյնպէս ի լը. գլ. ի Թանահատի վանս գնէ գնշխարս ստեփաննոսի սիւնեաց եպիսկոպոսի, որպ սեսանի ի կարգին ։

Դարձեալ ի կիբ. գլ. ստեփ. օրպել. Թէպէտ սորա ի կողմանս վայոց ձորոյ գնի Թանահատի վանք, որպէս ասացաք, բայց ի սկիզբն անդ գլխոյն գնի Թանապէ վանս, զոր ոչ կարծեմ լինել տարբեր ի սորա եզելոյն, այլ յիշէ ի սկզբան անդ առ ի ցուցանել Թէ յետ սանհատոյ ի մէջ սիւնեաց՝ այս էր երևելի. և յիշէ գարձեալ սորա ընդ այլ վանորայս կողմանս

(1) Կոյն է առ՝ որ ի կիբ. գլ. նաեպ. օրպել. գրի Թանապէի վանի, և գնի ի կողմանս վայոց ձորոյ, զի և ի խորագրի լիբ. գլխոյն նոյն Թանահատի վանք գրի Թանապէայ վանի. իսկ ի ցուցակն՝ Թանանապէայ վանի, որք են այլայլութիւնք գրչի ։ Այլ զի որպէս ի կիբ. գլ. վանն Թանահատի վանից գրէ, Թէ ի նմ. * Կայ նշխարք սրբոյն ստեփաննոսի ։ նոյնպէս ի լը. գլ. ի Թանահատի վանս գնէ գնշխարս ստեփաննոսի սիւնեաց եպիսկոպոսի, որպ սեսանի ի կարգին ։

վանորէից սիւնեաց, զոր այսպէս ստորագրէ ստեփ. օր. պէտ. ի գլ. լէ. * Յայնմ ժամանակի (ի վախճան ը. դարուն) պայծառանայր նզ երկնահրաշ կարգօք գերապատուն և հռչակելի ուխտն Թանահատի վանից՝ որ կայ ի վերոյ սիւնեաց, յոստորոտ լերինն ի բարձրաւանդակի միոջ ի մէջ անդաւթին, և էին սահմանաւորքն միաբանք [1], հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց, միայն աստուձ հացիւ և ըմպով վճարելին զպէտս իւրեանց. և զայն յաւուրն միանգամ ընդ երեկս։ Ոչիկք, հեզաշարժք, որք իբրև զկանթեղունս անշէջս կանխեալք լինէին յաղօթս գոյգդ և գերեկ... և բայց ի սպասս ուրացին ընդ դրունս վանիցն ոչ որ ելանէր արտաքս. Թէ և բազում անգամ հարկեցան [2] յիշխանաց եպիս. կոպոսաց սիւնեաց՝ ոչ առնն յանձն ի կիրակէքն ի Թան կամ ի պանիր կամ մեղր խմել. այլ բանջարովք և հնդ դով շատանային, վասն որոյ Թանահատ կոչեցան. և ի գլխաւոր տօնսն ի ձիթոյ Ճաշակէին՝ և սակաւ բաժակօք. և զայս Ճանոյց մեզ պատմութիւն երանելոյն մաշտոցի որ ի սէնո։ Էայց գտաք իւրոց արձանագրութեցն՝ եթէ ն. ամաւ յառաջ շինեցաւ եկեղեցին քան զՀայ Թվականն [3] յիշխանացն սիւնեաց յանուն սրբոյն նահատակին ստեփաննոսի։ Այս էր եղեալ հայր վանիցն որոյ անուն միխիթար, որ անցեալ էր ճգնութիւք ընդ բոլոր հոյլս առաքինութեց։ Որոյ և մարմինն Թաղեցաւ փայտակերտ արկեղօք ի գեղանափոր վիրապի մերձ յեկեղեցին ի փոքր

(1) Համանոյ զկարգ Աշխանգըս- տից վանաց՝ որք յն. կոչին Ագեմիդք, այսինքն Աչքուն։

(2) Յօրինակին գրեալ էր. * Թէ և բազում անգամ հարկեցան։

(3) Աչքսպէս գնի և յերկուս ընտիր օրինակս վարգանայ աշխարհաբերի (որ Թուի առեալ յօրինակէնէն), Թէ ն. ամաւ յառաջ շինեալ էր քան զՀայոց Թուա- կանն այլ Թէ զկարգ հնարից յերկրորդ գլուխն քրիստոսի՝ նախքան զնոր լուսաւորիչն՝ իշխանաց սիւնեաց շինել զեկեղեցիս, այլում տեղւոյ և ժամանակի Թողում քննութեն։

ընդ Թանահատի վանից. խակ ի տարին յիշեալ միաբանին Թանահատայ գնելով զնշխարս սուրբ փաննոսի եպիսկոպոսի, նոյնպէս յուցանէ՝ Թէ է մի և նոյն։ Կայն պէս այլ և այլ գրութիւնք ոչ հերանան յիւրեանց տատգաբանութեն, զի որպէս Թանահատի վանք նշանակէ բուս տեփ. օրպէլ. Յաուելք ի Թանէ, նոյնպէս և Թանահատայ վանք նշանակէ Աչքեցող Թանի. յոր առաւել մերձենայ գրեալն Թանաքեաց վանէ, որպէս գնի առ կիրակոսի, յասելն վասն մարմնոյ ստեփաննոսի։ * Աչառի (այսինքն ի կազան գաւառէ) ի Թանահատաց վանս փոխեցին ի հանգիստ ||։

բլրակի միում՝ որ կայր մինչև յաւուրս ստեփաննոսի օրպէլեան։

Այս Թաղեցաւ և ստեփաննոս իջ. եպիսկոպոս սիւնեաց, որ ըստ գրելոյ օրպէլինին ի գլ. լա. մեռաւ ի ՃՃգ (735). * Վոխեն (ասէ) գնչխարս ՚ձրյն (այսինքն եպիսկոպոսին ստեփաննոսի) ի միաբանակեաց վանն Յանահատի վանից՝ որք էին մշտապաշտօնք, հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց, վասն որոյ և Յանապատ կոչեցան. և շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի՝ զոր յետոյ չինէ. Թվականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբեթայարկ կեղեցիկ յօրինուածովք, և եդին զտապան ՚ձրյն ի հինն նորա ||։ (1) Յակ հանդէպ վանացս յարևմուտս կոյս՝ յայրկոյս ձորակին Թաղեցաւ և կինն այն որ սպան զստեփաննոս՝ բազմաւեալ Ճգնուքիք ապաշխարեալ ի տեղւոջն։

Յաց ի վանորէից աստի ստեփ. օրպէլ. ի գլ. կբ. ի վայոյ ձորոյ կողմանն դնէ նաև գյետագայ մենաստանս։

Յոտաւէրդի վանս, որ կոչի Վաբդէ։ Կրօնաւորքն որ ի նմա՝ էին մշտապաշտօնք։ Կործանեցաւ սա ի շարժմանէ, և անդրէն շինեցաւ ի ձեռն յովհաննու մետրապօլտին սիւնեաց՝ որ յետս անդ Թ. դարուն։ Պատմէ զայսմանէ ստեփ. օրպէլ. ի գլ. խէ։

Էերմնավանս։ Բրաւինեց վանս, և Վանդայէ վանս։ Օձ ռաջինն յիշատակէ և ընդարձակօրն վարդանայ աշխարհագրի ի վայոյ ձոր, և կոչէ Էերմնի վանս. սոյնպէս կոչի և ի ձեռագիրն աշխարհագրական բառարանի, և դնի ի վայոյ ձոր (2)։

Վաչէր։ Վենաստան համբաւեալ ի յիշատակարանս այլևայլ գրոց մատենագրաց կամ գրչաց՝ որք ծաղկեցան ի ԺՃ. դարուն, որոց և բանք ակնարկին ծաղկեալ գոլ ի նմա գարուն դարուն։ Յս անկանի յայս գաւառ՝ որպէս է տեսանել ի յիշատակարանի գրոց մխիթարայ. * Յս ապա երթեալ (մխիթարայ վարդապետի կերմանեցւոյ) ի Վայոց ձորն ի վանսն որ կոչի Վաչէրը ||։ Յիշատակին անդէն երկու վարդապետք սոյն վանից՝ Եերսէս, և Յասայիաս, ուսուցիչք դպրութեան,

(1) Սոյնպէս գնի և առ վարդանայ աշխարհագրի յամենայն օրինակս։

(2) Թովմա Մծոփեցի զայս մեզ նաստան ակնարկէ լինել յերեքիս, զի ասէ. * Ժողովեալ (գրիգորի տաթեւացւոյ) զբազումս յաշակերտաց իւրոց՝ զմխիթար ի տաթեւ. զյովհաննէս ի յերեգեաց վանից Հերմանի ||։

միմեանց զինի յաջորդեալք ՚ի վախճան ժՂ. դարուն. որոց յետինն է երևելի վարդապետն Հայոց՝ որոյ կան պետական գրուածք։

Հակեղեցի վանայն է յանուն Սրբոյ Աստուածածնի՝ զոր Հայոց առնէ յիշատակարան օրինակի ինչ պիտոյից գրոց՝ գրեալ ՚ի Թուականին չՀԵ. * Վրէեցաւ սա ՚ի Վասաւ ուիս կոչեցեալ Այոց ձոր, ՚ի վանս Վաձոր, ընդ հո վանեաւ ՚որ նախաւկայիս, ՚ի վարժապետութեե Հայոցեայ առն հեզոյ և խաղաղարարի, ձեռամբ յաջնամեղ ծառայիս յոհաննիսի աշակերտի բանի ||։

Նոյն Թուի լինել սա ընդ Վասպ ՅՈՐ [1] անուն ուհնաւ տանին, զոր վարդան աշխարհագիր գնեհոդնպես ՚ի Այոց ձոր, և յաւելու. * Այր աճուռն է և վարժարան ՚որ վարդապետացն մերոց ||։ Նոյնպես և առ միխիթարայ ապաբանացոյ ՚ի գլ. ՃԸ. կոչի Վայքձոր. * Մեծ վարդապետն Հայոց ՚ի Վայլեձորն իւր աշակերտօք կրեալ է զջամբ բռնին ||։

Ա՞յս Վաձոր կամ Վայլեձոր՝ նոյն է Թերևս և ընդ Խորաձոր անապատին, և վ՚ո այնորիկ ոչ յիշատակէ ստեփ. օրպել, կամ Լեհ՝ կամովին զանց առնէ, զի ՚ի կը. գլ. յետ Թուելոյ զանապան վանորայս, ասէ. * Նայց այլ ևս (վանորայք) բազումք կային՝ զորս ոչ Թուեցաք ||։

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ, կամ [2] ԳԵՂԱՔՈՒՆԻ։

Այուեցաւ այս գաւառ յանուանէ շինիչին՝ զորս Վահ զամ նահապետ որդի ամասիայ անուանեաց այսպէս, որպէս գրէ խորենացին ա. ԺԱ. * Ինքն (գեղամ) գնաց զմիւս լերամբն արևելեան Հիւսիսոյ (այսինքն՝ որ ըստ գրից արմաւիրայ անկանէր յարևելեան հիւսիս,) յեզր

(1) Ա՛յսպէս գրի յերկուս ընտիր ձեռ՚. իսկ յայլ յերիս ձեռ՚՚ որք են ընդարձակութիւք վարգանայ, որպէս և ՚ի տպ. գրի Գասպ ՅՈՐ։

(2) Ա՛յսպէս գրի ՚ի տպ. և յերկուս ձեռ՚՚ աշխարհագր. խոբենացւոյն. իսկ ՚ի միումն գրի՝ Գեղաոունի, և ընդ հակառակն ՚ի պատմ. ա. ԺԱ. և ԻԹ. Ձ. ՚ի տպ. և յերկու ձեռ՚՚ գրի Գեղաոունի, և ՚ի միումն միայն՝ Գեղարքունի։ Նոյնպես և առ ստեփ. օրպել. ՚ի գլ. Է. ՚ի յիշելն կարգաւ զգաւառս՝ գրի Գեղաոունի. ՚ Երրորդ (գաւառ՝ ունի ասէ՝ սիւնիք) Գեղաքունի, որ ՚ի հայկեանն գեղամայ կոչեցաւ Գեղաքունի ||։ Իսկ յայլ տեղիս գրի Գեղարքունի, որ և է ուղիղ հնչուն, զի նաև առ այլ մատենագիրս ըստ այսմ գրի։

ծովակի միոյ. չինէ զեզը ծովակին, և Թողու անդ քնա-
կիչս, և յիւր անուն և սա զլեառն անուանէ՝ Վնեղ, և ըզ
չինսն՝ Վնեղաւոնէ, որով կոչի և ծովն ‖ : Յոհաննէս կա-
թուղիկոս՝ ի պատմելն զայս բան՝ յուցանէ Թէ՝ Վնեղաւ-
ոնէ կոչեցան զանազան գիւղօրէք զորս չինեաց գեղամ,
և Թէ զլեառն կոչեաց յիւր անուն Վնեղամ, որ է նոյն
ընդ Վնեղ անուան. * Լակ գեղամ չուեալ (ասէ) ... յեզը
ծովակի միոյ, և չինեալ անդ գիւղս և գերդաստանս,
ըստ իւր իսկ անուանն զլեառն կոչէ՝ Վնեղամ (1), և զծով
եզերեայ չինանիստն՝ Վնեղաւրքունի ‖ : Վ ման այսորիկ
ուրէք ուրէք ի գիրս գաւառն Վնեղաւրքունւոյ կոչի նաև՝
Վնեղ կամ Վնեղամ՝ բնիկ անուամբ նահապետին, որպէս
առ ստեփ. օրպէլ. ի գլ. լը. * Լակն և սահակ եղբայր
գրիգորոյ և վասակայ ի հայրենի ժառանգութէն իւր ի
Վնեղամ ‖ :

Վկիրակոս ի բացատրութէն զերկոսին անուանս և յա-
ւելու ուրէք՝ յասելն վասն երկուց եղբարց զաւրեայ և
իւանեի. * Օ բազում աշխարհս հայոց՝ զոր ունէին պար-
սիկք և տաճկունք առեալ ի նոցանէ յինքեանս զգաւառն
որ շուրջ զՎնեղսին Վնեղաւրքունոյ ‖ : Վւր յայտ է Թէ՝
նոյն են երկոքին, զի և ի գլ. լէ. ստեփ. օրպէլ. զժա-
ռանգութէն այնց իշխանացն՝ կոչէ Վնեղաւրքունի անուամբ :
Օ այս նշանագրէ և վարդան աշխարհագիր յասելն.
* Վնեղամ Վնեղաւրքունի է, ուր կայ ՝ոբ ուխտն Վ՝աքե-
նիս ‖ :

Յայս գաւառ անկանի և Ծովակն գեղամայ, զորմէ
տես ի ներածութէն հին հայաստանեայց :

Վ՝իրք սորա ձգի շուրջ զնորին ծովակատն գեղամայ,
ուր տիրեր առանձին ցեղ լինչ և իշխանութէն հայկազեան՝
տէր և իշխան սիւնեաց անուանեալ. ուրոյն ի բուն գա-
հագլուխ իշխանէն սիւնեաց՝ որպէս աւանդեցաք յառա-
ձին ներաձութէն նահանգիս. և ուներ յիւրում սահմանի
այլ փոքրիկ գաւառս կամ վիճակս, վասն այսորիկ ուրեք
ուրեք ի բազմաւորականն Վ՝՝՝՝՝ անուամբ կոչի գեղ
արքունի, ըստ այմ յասելն յոհաննու կաթուղիկոսի.
* Նայց առաւել ևս յոլովք հայկազեանցն գրոհ իշխանն
գրիգոր և նորին եղբարքն սահակ և վասակ՝ որք հայրե-
նական սեպհականութէք տիրէին գաւառացն, որ շրջա-

(1) Ա յլուր նոյն յոհաննէս կաթուղիկոս կոչէ. * Լեառն Գնեղ ‖ :

պատեալ կան շուրջ զեզերբ ծովակին գեղամայ ‖ : Արով թէ իմանայ զգեղաբօյնի՝ յայտ առնէ այս բան ստեփ. օրպէլ. ՚ի գլ. լէ. յաջելն վասն նոյն իշխանաց երից եղբարց. * Ո՛մնեքեան շինուէին եկեղեցեաց պարապէին, եւս առաւել որգիքն վասակայ սիւնեաց տէն (որ գաբուռն կոչեր,) գրիգոր սուփան, սահակ, և վասակ, և մայրն իւրեանց մարիամ՚ի գաւառն Վեղաբքունեց, զի այն իսկ Վասաւաք շուրջ զծովոյն՝ նոցա էր հասեալ բաժին ժառանգութեաւ ‖ :

Այլ նոյն իսկ յոհաննէս կաթուղիկոս որ՚ի վերոգրեալ բանի վասն սահակայ և վասակայ՝ որգւոց գաբուռն վասակայ ասաց, թէ սիրէին գաւառացն որ շուրջ զծովեզերբն գեղամայ, այլ ուրեք միայն վասն նորին սահակայ ասէ. * Օ այսու ժամանակաւ ապա իշխանն սիւնեաց սահակ՝ որ՝ սեպհականաբար պայազատեր զդաւառսն առ ծովեզերբն գեղամայ, վախճանեալ փոխի՚ի կեանսացս ‖ : Իսկ այլուր միայն վասն վասակայ եղբօր նորին սահակայ՝ գրէ. * Վասյց վասակ որ սեպհականաբար պայազատեր զտէրութիւնն գեղարքունեց ‖ : Յայտ արա րեալ՝ թէ նոյն է ասել Վեղարքունի, և նոյն՝ Վասաւաք առ ծովեզերբն գեղամայ, որում սիրէր վասակ, որպէս յառաջ, նոյնպէս և յետ մահուան սահակայ եղբօր իւրոյ : Օ՝ սոյն զայս հաստատէ և բան ստեփ. օրպէլ. ՚ի գլ. լը. ուր գրէ վասն նորին վասակայ եղբօր սահակայ. * Ո՛ձեալ՚ի տուն իւր՚ի Վեղարքունի գաւառ, զի այն իսկ էր մասն ժառանգութեաւ սորա՚ի սիսական աշխարհս ‖ : Այլ թէ զնոյդ զարգարեցին շինուէիք զայս երկիր երկոքին դրիգոր՝ սուփան անուանեալք, գրեցաք՚ի վեր անդր՚ի ներածուէն նահանգիս :

Ուներ այս գաւառ դժուարին տեղիս՝ զորս յիշատակէ ստեփ. օրպէլ. ՚ի գլ. լը. յաջելն. * Գրիգոր սուփան և եղբարք իւր ինան յիւրեանց տեղիս (որ էր Վեղարքունի), ամրացեալք՚ի կատարս լերանց, և՚ի ծորձորս ձերպից վիմաց ‖ :

՚Ի թուականիս չկը. (այսինքն յամի տն 1319.) եղև երկրաշարժուէն ահագին, որ ընկղմեաց զբազում գիւղս ընս սորա, որպէս գրէ ընդարձակօրէն սամուէլն :

Վեղարքունոյ բերդ : Օ այս բերդ յիշատակէ միայն ստեփանոս օրպէլ. ՚ի գլ. ՃԴ. ընդ ամուր բերդս սիւնեաց, զորմէ յայլըսստ չունիմք ինչ ծանօթութեաւ :

Վահանի : Ո՛ր պատմագիրս յետագայ դարուց կոչի՝

Պետրոսեան[1]։ Այլ մի՛ ի հնագոյն գիւղաքաղաքաց Հայաստան աշխարհին, որ յառաջագոյն կոչէր Պետիդ, քանզի զհինն նորա եդ գեղամ նահապետ. * Այլոյ ինքն գեղամ (ասէ խոր. ա. 11.) դառնայ անդրէն ի դաշտ անդր (առ որով երասխ անցանէ ընդ նեղ խոխոմն՝ որ պէս գնէ ի վերոյ), և առ ոտամբ նորին լերինն ի ձորաձ կի մի ամրոջ[2] շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նո՛ր բա Պետեամ, որ յետոյ ի Պառնակայ Թոռանէ նորա առնաւանեցաւ Պառնի։ Յովհաննէս կաթողիկոս կոչէ զայն Պետեղիկ՝ յասելն. * Ճ՛ինէ (գեղամ) զՊատառ կերտն մեծ և Պետեցիկ զՊետեամի[3], որ յետոյ Պառնի ի Պառնակայ անուանիւր։ Այս յայս է Թէ՝ գառնիկ նորոգեաց զայս ձեռակերտ գեղամայ, կամ արար ի նմա ինչ ինչ շինուածս յորմէ կոչեցաւ յիւր անուն։

Օ՛ղնի արգատ արքայ շինեաց ի նմա և յամրոցին՝ պալատ զարմանալի ի պէտս քեռ իւրոյ՝ ըստ գրելոյ խոր. բենեցւոյն ի թ. 87. * Օ այսու ժամանակաւ (յորժամ լինէր ա. ժողովն Նիկիոյ ի 325, կամ սուղ ինչ յետոյ,) կատարէ արգատ զշինուած ամրոցին գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ, և կապարով մածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց մահարձանօք սքանչելի դրօշուածովք բարձրաւանդակօք ի համար քեռ իւրոյ խոսրովիդուխտ. և գրեալ ի նմա գլխատակ իւր հելլենացի գրով։

Զհետատակէ զՊառնի և եղիշէ Թղթ. 67. ընդ ամուրս Հայաստանեայց, զոր յառնուէն վարդանանց ի պարսից, քանզեցին զշինուածս ինչ նորա։ Ալերևս զոյն զայս Պառնին ի՛նանց Թոմմա արծրունի ի թ. 1. կոչելով տեղի արգատայ, յասելն վասն նախարարաց միաբանեալ ընդ մեծին վարդանայ. * Յակ զհետագաւառաբնակ տեղին մեծին արգատայ տան ի ձեռս վահանայ արծրունոյ՝

(1) Որպէս առ յովհաննու կաթողիկոսի՝ յասելն վասն սողոմոն կաթողիկոսի. * Սա էր ի վաղագահէն Գառնոյ։ Յակ առ կիրակոսի ուրեք կոչի Քաղաքաւ գիւղ, և ուրեք՝ Գիւղ, դնելով զԳէորգ թ. կաթողիկոս լինել * ի գեղջէն Գառնոյ։

(2) Ջգիրս սորա ի ձորակի և յապառաժուս յայս առնէ և պատմ. օրպ. ի գլ. Ե. յասելն. * Գաւեթազարդ երեսակալ ընդ փրթուածս մեծ քարին՝ որ ի խորամին գառնոյ՝ առ հատարակ հուսալ կործանեցան։ Այս կիրակոս յայս բան. * Ի վախիցն ի վայր մեհեաւք ի ձոր անդր ընուն ի գլուխս քառագլուխն Գառնոյ . . . զայլս գահավէժ արարին ի գլուխս ձորոյն։

(3) Ձերից ձեռ՝՝ օրինակաց պատմ. խոր. նաև յօրինակաց յոհ. կաթող. յայս է Թէ վերագրեալն գնդեմ

շինել նմա տուն թագաւորացարար պատրաստութիւ ||։

Յաւանօր թագեցաւ Աշտոց կաթողիկոս՝ որպէս գրէ ստողիկ. ՟ի. 3. Եւ նշխարքն ոսկերաց նորա հանդուցեալ եղև ՟ի Վառնի, մերձ առ Հովանոցին խաղաղիդխաց, զոր էր շինեալ արդատայ հայոց արքայի ||։ Յիշատակ զայս շինուածք Վառնոյ նաև կիրակոս՝ Գաղձ անուանեալ. (յայտ է թէ՝ ՟ի ժամանակս իւր այնպէս կոչէին այլազգիսկան բառիւ,) որում և իրր ականատես գրէ. *Գաւ ՟ի գերեզմանի (մարմին մեծաւոյ կաթողիկոսի) ՟ի Վառնի, հուպ առ զարմանալի Գաղձն արդատայ. և շինեցին ՟ի վերայ նորա վայելուչ եկեղեցի ||։ Այսպէս և ընդարձակօրէն վարդանայ աշխարհագրի՝ ասելով. *Այս բաբաղաքն Վառնի, ուր կայ գերեզմանն գեղոյ հայրապետին, և մեծաւոյ հայրապետին, և գեղեցկաշէն և զարմանալի Գաղձն արդատայ ||։

Յայց ՟ի ՌՃՀԸ. (1679.) կործանեցաւ յերկրաշարժութենէն՝ որպէս գրէ ընդարձակօրէն սամուէլն. *Առաւիկ շարժ եղև յերևան, ըստ. մարդ մեռաւ, և հաւուց թառաւ եկեղեցիքն, և գեղարդին, և գետարգելին՝ փլան. և արդատայ Գաղթն ՟ի Վառնի ՟ի հիմանէ կործանեցաւ, և այլ բազում եկեղեցիք և ապարանք կործանեցան ||։ Տես վասն այսր և ՟ի նոր հայաստան. Թղ. 254. և 256։

՟ի դաշտին գառնոյ հովտաւուն խանն Թահմասպ ՟ի ԺՀ. դարուն եւտ շինել քաղաք բազմամարդ՝ որպէս պատմէ կիրակոս, յորոյ շինուի աշխատեցեալ գՀպատակս իւր անգութ վերակացուաք՝ ՟ի հեռաւոր վայրաց բերել տալով բազմութիւն փայտից, և արուեստաւորս քարանց և փայտից և նկարուց։ Աղաչիւս ՟ի պատմութիւն Թահմասպայ՝ միայն զշինուի ապարանիցն յիշատակէ. *Յայնժամ՝ հրամայեաց (ասէ հովհաննէս) զարպաս շինել իւր մեծաւ ծախիւք ՟ի Վառն զդաշտին (որ պարտ է լինել ՟ի Վառնոյ դաշտին՝ որպէս յայտ է ՟ի կիրակոսէ,) զոր կոչեցին ինքեանք զանուն տեղւոյն Ղաշաղ, որ էր զառաջինն տեղին այն՝ նոտոց ամարան մեծ թագաւորացն Հայոց, (այսինքն՝ արշակունեաց)։ (1)

՟ի ձորակին գառնոյ յայրի միոջ առանձնացեալ Հիմնէր

(1) Զայս շինուածն հովհաննէս նկնի՝ արդեօք փոխանակ այժմեան գառնի գեղջ պարտ է առնուլ, թէ փոխանակ էրևանայ՝ (զորմէ մարթի է ասել եւս կառուցեալ ՟ի գաշտին գառնոյ), ոչ կարեմք որոշել ինչ։ Տես և ՟ի նոր հայաստան. Թղթ. 254. 256։

՚ի սկիզբն ՚ը. դարուն՝ քոյր սահմանսոյ ՚ի՚ը. Հալիկոպա-
սի սիւնեաց՝ Յահակադուխտ անուն, որոյ հմուտ գոլով
յոյժ երաժշտական արուեստի՝ ՚ի ներքոյ վարդապետի
նստեալ ուսուցանէր բազմաց. արար և կցորդս և մեղե-
դիս, յորոց միոն սկսանի. * Արբուհին մարիամ՝, որ ի՚ս-
րով անուամբն և յօրինեալ, որպէս պատմէ սահմանսոյ
օրսիկ ՚ի գլ. լ՚ը։

՚Ի շրջակայս գառնոյ են զանազան մենաստանք, զորս
կարգեսցուք յառաջիկայդ։

Ա՚ՅՐԻՎԱՆԴ։ Ակբրակոս գնաց զայս մենաստան ՚ի գառնի՝
յասելն. * Աուսակաւոն յոհաննէս անուն՝ ՚ի գիւղաքաղա-
քէն գառնոյ, ուր զարմանալի Աթոռոյն է տրդատայ,
՚ի որ ուխտին Ա՚ՅՐԻՎԱՆԴՑ՝։ Ա՚ՏԼ յոհաննէս կաթո-
ղիկոս գնաց զայն ընդ արևելս հիւսիսոյ գառնոյ. * Ա՚ռա-
քել զօր բազում՝ հնձելովք, և լեգեոն վառելովք՝ ՚ի վանս
կուսակրօնիցն՝ որ Ա՚ՅՐԻ անդ յարևելից հիւսիսոյ գե-
ղաքաղաքին Գառնոյ՝։ Ա՚ՅՐԱԿ կոչէ Ագաթրդ զերն սա-
հակայ, և յիշէ նաև Ա՚ԵՐՆ վանս. * Ա՚յսպէս ասաց ելեալ
՚ի վանից անտի Ա՚ՅՐԱՑ, ՚ի Ագաթրդոյ զերն սահակայ՝
որ ՚ի ծորձորս լերինն գեղոյ ՚ի ձորակի միոջ գնալ ուղիղ
գնացաք, և ելաք ՚ի Ա՚ԵՐՆ վանս՝ ուր Գայլեանք անուա-
նոցն էին՝։ Յայտ է ՚ի բանից յոհաննու կաթուղիկոսի
թէ սակս Ա՚ՅՐԻ շինեալ գոլոյ ընկալաւ զԱրբ անուն,
որ և էր իրր ամրոց. զի ասի անդէն. * Ա՚ռաքեա զօր
բազում՝ զի նախ զԱ՚նս ամրացին Ա՚ՅՐԻՆ առցես քեզ՝։
կամ թէ՝ զԱ՚ռնոյ ամրոցն սուաւ կամի յուցանել։

Ա՚ղաթակողն սամուէլ ՚ի բանսն զոր ՚ի վերոյ յա-
ռաջ բերաք, զայս մենաստան յանուն Ա՚ՀԵՂԱՐԴԻՆ կոչէ,
զի ՚ի նմա պահեալ ասի գեղարդն, որպէս գնի վարդան
աշխարհպատիր՝ ՚ի կողին գառնոյ (է ասէ) * Ա՚յր սրբի
վանք ուր կայ գեղարդն ածամուխ՝։ Ա՚ւր ընդաթակողն
յաւելու ՚ի վերայ. * Ա՚յ սահմանին ՚ուր ասպանին նոյեայ
նահատակեին. և նա է առն հաւատոյ հայաստանեայցս
հաստատեալ ՚ի ՚ուր լուսաւորչէն՝։

՚Ի մենաստանէ ասսի էր եղեալն գանձասայն Ա՚ՀԻ-
ԹԱՐ վարդապետ, յորոյ ՚ի խորագիրս՝ և երբեմն ՚ի
սկզբնատառս գանձուցն գրի՝ Ա՚ՅՐԻՎԱՆԵՑԻ։

Ա՚ՂՈՑ վանք։ Ը ՚ինեալ ՚ի ՚ուր լուսաւորչէն բան յայսմա-
ւուրայ ՚ի 5. հոկտ. * Ա՚ի սմն ՚ի քահանայիցն սահման-
նոս անուն՝ անկաւ ՚ի լեառն գառնոյ, և անդ կեցեալ՝
կատարեցաւ ՚ի քո, և յետոյ զերն զրիգոր ազգմամբ հրեշ

տակաց արար զտեղին վանք միաբանակեցաց, որ է մինչև ցայսօր, և կոչի Ի ղէնոց վանք, այսինքն է՝ Ի ղէկանց վանք [1]. և զանունն և ս ուսաւ ի հրեշտակէն՝ զոր գրի գոր՝ Առեփանոս գոլ, վասն որոյ ասի՝ Ի ղէնոյ վանայ սբ սթեփաննոս ‖ : Կամ որպէս գրի ի 6. հոկտ. Ի ղէնոյ սբ սթեփաննոս. ուրմնօր և նշանակեալ է տեղի այսր վանից՝ ի սահմանս գեղաշաւոյին գառնոյ : ի կողմն գառնոյ դնէ նաև վարդան աշխարհագիրը, ուր և յաւելու ընդարձակողն. * Ա՛ր կայ աջն ՚ր ստեփաննոս քահանային, և ՚ր աջն արիստակիսի որդւոյն գրիգորի ՚ր լուսաւորչին ‖ :

Հառուց խառ : Ա նոր մեծափառ, յիշատակեալ սահակ ի պատմագրաց : Ի հանդէպ գառնոյ՝ որպէս դնի յայսմ աւուրս ի 19. Յունիսի ի վարս յակոբոփայ նահատակին գրեցոյ. * Ի՛ր այր մի սարգիս անուն բարձեալ զմարմին սրն ՚ր յն տարաւ ի մեծափառ վանսն Հառուց Թառ, որ է հանդէպ գառնոյ ‖ : Ա արդան աշխարհագիրը ցուցանէ կոչեցեալ և Դարաւնից, կամ Ի՛ղունեց եկեղեցի. * Ի՛ղունեց եկեղեցի՝ Հառուց Թառն է, ուր կայ փըրկչական պատկերն ‖ : [2]

Ի՛ր ի սմա և աթոռ եպիսկոպոսական, որոյ եպիսկոպոսին յիշատակի ի Մուղնի ժողովական գրեալ ի ժամանակս որդւոց տարաւնձի առ գրիգորիոս կաթուղիկոս անուսարգեցի՝ Ա՛խիթար Հառուցեցի եպիսկոպոս: Ա՛ր ալն և ի ժէ. դարու յիշատակի ուրեք և Օ՛ագարիա եպիսկոպոս Հառուցեցի :

(1) Ա՛յսպէս դնի ի ձեռ՛՛ յայսմ աւուրս. իսկ ի տպ՛՛. պակասի անունս * Ի՛ղնեան էնոյ ‖ :

(2) Այնպէս դնի և յերկուս ընտիր ձեռագրս վարգանայ աշխարհագրի. Ի՛ղնա՛ի միւսն փոխանակ անուանս Հառուց Թառ, գրի վրացական Հայոց Ի՛ղունեց բիս ձեռ՛՛. որպէս և ի տպ՛՛ յԵղեգ արձակողին վարգանայ դնի այսպէս. * իսկ ի կողմն գառնոյ՝ Դարաւնից մեծ եկեղեցին է, որ է Հայոց Թառ, ուր կայ կենդանադիր պատկերն փրկչական, և այլ աջն Թադէոսի առաքելոյն, և Ձկոյնն աջ կարապետին ‖ : Զգաստանից եկեղեցին յանուն փրկչական պատկերի յիշատակին առ դին և վարդան, զորոց զրանս եդաք ի Դարաւնս կամ ի Դարօնս որ ի կոգովիա, հոլովումն մի և նոյն անուան համարելով զԴարաւնիցն ընդ անուանս Դարօնք. զի և բուզանդ զերկրն որ ի կոգովիա՝ այսպէս հոլովմամբ Դարաւնից (կամ Դարօնից) բերդ անուանէ. ուստի և ոչ տարբեր առնի լինել զանունսդ զերկուսին ի միմեանց :

Ա՛րդ՝ զայս Դարաւնից եկեղեցիս միացուցանել ընդ Հառուց Թառայ՝ որ հանդէպ գառնոյ, ընդդէմ երևի, բայց եթէ առասպուք, թէ Հառուց Թառն նոյն իսկ եկեղեցին է Դարաւնից որ ի Դարօնս ի կոգովիա գաւառի՝ զնոսի շինեալ առ նմին և վանք, որ լայ նաբար ինն ի վարգանայ գնի լինել ի խոշ գառնոյ. և յայսմ աւուրս. * հանդէպ գառնոյ ‖ :

Ի վախճան ժբ. դարուն, և ի սկիզբն ժգ ին, եղիա վարդապետ ոմն ի կարգի եդ զերաժշտուն երգոց այսր մինաստանի. * Եղիա (վարդապետ. ասէ կիրակոս) ի Հաւուց Թառէ, այն՝ որ գեղեցիկ կարգաւորեաց զկարգ վանաց իւրոց, որպէս թէ առենեցունց ընդ մի բերան հնչել եթէ ցած, և կամ բարձր. և ոչ հարատահարել ընկեր զընկերն ||: Կոտաւ սա ի ժողովն գումարեալ ի լոռի՝ ի 1205:

Ը ողջագոյ: Ընդ յոհաննու կաթուղիկոսի գրի Ը ողջագոյ, ուր անեփանոսի օրսկէ. ուրեք գրի Ը ողջոագոյ, այլուր՝ Ը աղջոագոյ, կամ Ը աղջաագոյ, և այլն. բայց աստղիկ ի ջ. 32. յայտ առնէ թէ ուղիղ հնչումն է Ը ողջագոյ. * Իակ գաղիկ յաւուրս մանկութեան իւրոյ յորժամ ջրջէր նա ի գաւառին գեղամայ՝ տայ նմա (ա. սարգսի կաթուղիկոսի՝ որ ի վերջն անդ ժ. դարուն) տեղի և վանս բնակութեան զվանսն՝ որ յաղագս ծագմանն իրիք լուսոյ ընծայեալ՝ Ը ողջագոյ անուանի ||: Կոտ այսմ Ը ողջագոյ գրի և առ սմեփ. օրսկէ. ի գլ. կբ:

Կայ մինաստան թուի լինել նոյն՝ զոր շինեաց մանր բիամ տիկինն սիւնեաց ի վախճան ժ. դարուն, և յանուանէ մինաստանին՝ նաև գեօղն կոչեցաւ Ը ողջագոյ. * Այդն մարբիամ (ասէ սմեփ. օրսկէ. ի գլ. կէ.) շինէ զմեծապայծառ եկեղեցին ի Ը ողջագոյ յանուն սրբոյ առաքելոյն պետրոսի, և կարգէ ի նմա կրօնաւորանոց, դասս բազմահոգի քահանայից վանս հոգեաց ընդ իւրով վանակայ իշխանին սիւնեաց. և գնեալ ի հայաստանի մարզկանէ զգեօղն Ը աղջագոյ ընդ կո. դրամի, ազատ յամենայն աշխարհական հարկաց ընծայէ սեփական ժառանգ գաւթի սբ եկեղեցւոյն. նմանապէս և գիւղ մի ի Ա աղաղ գաւառի ընդ ձո. դահեկանի գնէ, և տայ ի սբ եկեղեցի՝ որոյ անունն գեղջն գներ. և հաստատէ արձան անջինջ յիշատակի առաջի գեղորգայ կաթուղիկոսի (որ և գեորգ ը.) և յովանեսի սիւնեաց եպիսկոպոսի, և գազկայ սիւնեաց տեռ ||:

Կայ թագեցաւ և նոյն մարբիամ տիկինն սիւնեաց՝ մայր գրիգորի սուփանայ, սահակայ, և վասակայ, որպէս գրէ յոհաննէս կաթուղիկոս. * Չարեալ հանդուցանեն զմարմին նորա ի քնարանի իւրում, մերձ ի ձեռակերտ եկեղեցին իւր ի Ը աղջագոյ ||:

Ա՝տէնա, կամ Ա՝տէնոյ: Ցետ ժամանակաց՝ յանուն եկեղեցւոյ իւրոյ կոչեցաւ Ա՝ծածին պեղամայ, ոմն գրեալ

կայ ՚ի յիշատակարանս ինչ գրոյ ։ Ա. մենաստան, կամ ուխտ հռչակաւոր՝ որ անկանի յայս գաւառ, որպէս դնէ յոհաննէս կաթուղիկոս. * Պատանօր ապա մեծ հայրապետն յովհաննէս՝ (այսինքն է՝ հինգերորդն,) վասն զի շրջէր ընդ վիճակեալ կողմանս գաւառին գեղարքունոյ, լցեալ զկետ կենացդ իւրոց՝ վախճանի ՚ի մեծ ուխտի կրօնաւորական կայանին Աթաբենոցայց, և ՚ի նմին ուխտի ՚ուր ՚ի հանգիստ վնա փոխեին ։ Պատ դնէ և ստեփ. օրպէլ. որպէս և յայտնաւորս ՚ի 28. մարտի. * Բաբեաց (եղիա կաթուղիկոս զվահան գողթնացին) ՚ի մեծափառ վանք ՚ի Աթաբինիս՝ որ յերկրին Գեղամայ ։ այն է՝ գեղարքունի ։ Այսպէս ունդ դնէ և վարդան աշխարհագիր՝ զորոյ զբանս եդաք ՚ի վերոյ ։

Մինչ քանի ծաղկեալ էր այս մենաստան ՚ի սկիզբն ՃԸ. դարուն, կայ առնէ այս բան ստեփաննոսի օրպէլ. ՚ի գլ. ԼՈ. յասելն վասն ստեփաննոսի ԽԸ. եպիսկոպոսի սիւնեաց. * Վտայր ՚ի համբաւատեսիչ և մեծանաքանչ հանդիսարանն . . . կրօնաստանն որ և ՚ուծաբնակ առաքինաբանին Աթաբենոցայց, առ ՚ուծազգեաց և սրոքէատիլ հալածանաց հայրն սողոմ, որ էր էգումենոս մեծին ուխտին որ պայծառանայր յայնմ ժամանակի մեծամեծ ձգամբ և անտանելի խստամբեր վարուք, որ և յօրինեաց զսայս ծառայողիչն տճնից տէրունականաց, և գիւղատակս մարտիրոսաց զտնտական ՚ի ձէ. Թվին հայոց ։

Ա. յԼ մերձ ՚ի վախճան Ը. գարուն քանդեցաւ այս մենաստան ՚ի պարսից, և կրօնաւորքն յերկուս տեղիս ցրուեցան, զոր համառօտիւ՝ այլ ըստ կարգի այսպէս պատմէ ստեփ. օրպէլ. ՚ի գլ. ԼՃ. * Վտայ (ասէ) բաբան (պարսիկ) ՚ի գաւառն գեղարքունոյ, և էարկ ՚ի սուր սուսերի զընակիչսն ոդիք իբրև ՀԶԵ. և գյաքնասպայծառ մենաստանն. և զհռչակելի ուխտն Աթաբենոցոց [1], յաւարի կոս) յաշակերտութիւն սբ հօրն Աթաբենոցայց ստեփաննոսի ։ Այսպէս և յոհաննէս կաթուղիկոս ՚ի պատմութիւն սողոմոնի կաթուղիկոսի. յորում քանզի են ինչ ինչ տարբերութիւնք ՚ի պատմութիւն ստեփ. օրպէլ. ողոյն յաւել բերցուք զբանս նորա ։ * ՚ի մանկուն առեալ (էր) զուսն կրօնաւորական կարգի, և բազում առաքինեաց երից զանձն տուեալ

(1) Գրիպարիսաւ գրչի եդեալ է աստանօր. * Մաւենոցոց ։ , զի այլ ուր առ նորին ստեփ. դնի սեռա կան հոլովսորա Մաւենոցոց, որպէս յասելն ՚ի գլ. լԸ. * Ցուն ցանէ մեզ զսոյդն սողոմոն հանդց հայր ՚ուր ուխտին Մաւենոցոց, որ և հարցեալ ՚ի ՚ուր սողոմոնէ նոյն Մաւենոցոց առաջնոր դէ ։ Եւ ՚ի լԵ. գլ. * Որ և եա դմաշտոց (որ գինի եղև կաթողի-

առեալ զամենայն սատացուածն, այրեաց և քանդեաց զա-
մենայն շինուածն։ Այսպէս կրօնաւորքն նախնեաց եղեալ՝
յերկուս բաժանեալ, կէսքն գնացին ընդ հօր սղոմի,
ոչ առաքելոյն՝ որ հարանց հայր կոչեցաւ, այլ ընդ նորին
աշակերտին, գնացին ի գաւառն շիրակայ ի ՚ի ուխտն
զրեակ, յորում պայծառանայր սուրբ այս սղոմոն Ա՛գնու-
Թ՛ սիւնամուտ լեալ։ Այլ կէսքն գնաց ի յաղւանս՝ ա-
ռաքելոյդ կալեալ զմի ումն յեղբարցն, և բնակեցան ի
միաբնեսհեայ վանսն՝ որ է ջրվէժիկ (1). և տեղին (մա-
քենից՝) անբնակ մնայր ։

Այլ զնոսի դարձեալ հաւ շինուԹի ի վախճան Թ. դարուն. * Այսպա յաւուրս գրիգորի սիւնեաց տեն (ասէ) որ սուփան կոչեցաւ, վերստին նորոգեցաւ, և շինեցաւ մեծ եկեղեցին, և պայծառացոյց առաւել քան զառաջնին ։ Այլ Թէ գնոսի էր այս շինուԹի՝ զոր արար Ը. գրիգ որ սուփան որդի վաստակայ՝ պատմի ի գլ. լէ. ուր և յառաջ բերէ գնորին զարձանագրուԹիւն քանդակեալ. * Ը նոսկ և գերհնաՀեմ խոբարանն ի հիացան մենաստանին։ . . ուխտն Ա՛ագնոցայց, զգմբեԹայարդ եկեղեցին յանուն սրբ Ա՛ծածնին, և պարսպէ վիմաք. և այլ բազ զուամ շինուածս յօրինեալ զարդարէ գնա յանդնայ գանձիւք, և փարԹամացուցանէ բազում ընչիւք. նաև գեօղ գնիւք և ագարակօք ի գառնի և յերևան, և յայլ տեղիս. և կարգէ նմա արձան յիշատակի հարստոյցս արգեանցն իւրոց՝ որ ունի օրինակ գայս ։

»Ես Ա՛ամաէն այ ես Ա՛ուփան սիւնեաց իշխան շինեցի գԱ՛՝ ա-
գնոցաց եկեղեցիս, և յանդնայաքար զարդարեցի պա-
տուականն սպասիւք, և Ա՛ծածին եմ կարապետաւք. և ետու
զսեփական տեղին մեր ի սա՝ որ ըստ անուան եկեղեցոյս՝
Ա՛ծածին ասի, իւր ամենայն սահմանօք լերամբ և դաշտիւ,
և ետու որս ձկանց գետաղէն սեղանոյն, և Ը. գրամ ի
դեղձաձետոյ զապաղէն. ԹՀ. գրամ ի կաԹիկոյ. Ը. ի
յամանեաւն, որ լինի ռԻԲ. գրամ։ Ա՛տու և Ե. կուզպակ
ի յանի, և Ե. այգի յերևան, և Ը. առուայգի ի գիւղա-

ի մեծ ուխտին Ա՛ագնոցաց. . . և հայրն հարանց հասարակ բաժինս կրօնաւորական գասուն երԹեալ քնակէր ի զրեակ՝ որ ի շիրակ գաւառի. գՀետ նորա և այս ետ սղոմոն (կաԹուղիկոս) չուեալ գնայր, և անդ ի միայնակեցի կարգ ելեալ լինէր ի խրձիԹ ։ Ղազիպէս և առ կիրակոսի ասէ.

* Տէր սղոմոն ամ մի. սա էր ի Ա՛ագնոցայց վանից ։ Յայսմ-
նէ խնասասիրեմք և ուղղականին
սորա առաւել սովորական լինել
Ա՛ագնոցք ի բազմաւորականն։

(1) Տէս յանձնաւոլա մեծին
հայոց ի բառն Ջրվէժիկ։

քաղաքին գառնի, և զ. այգի յեղեգից, և զամենայն պէտս նոր եղբայրութեանն լցի առատապէս ... Այժմ այս իսկ եր արձանն Աբգենոցաց. բայց վասն հնութեանն և խախտելոյ քարանցն՝ ոչ կարացաք զբովանդակն յիմանալ. այլ բա զում բանք և տուրք իշխանացն պակասեն. զայս փոքր ի շատէ եդաք, զի մի բնաւին ընդհատ կորիցէ յիշատակ նոցա։ Այս ամենայն գործեալ եղև ջ. թվականին մինչև ցՀԾՆ։ Այս շինութեանն և արձանագրութեանն եղև յաւուրս Ջ. յովհաննու կաթողիկոսի. քանզի գրի անդէն. * Այս տէր յովանէս հայոց կաթողիկոս ի տանէս մի իշխեսցի դատ կամ փայքար հանել։

Այրերոն, կամ Այրերծ։ Վիւղ՝ որ ի պատմութենէ օրսկեղեանց ի գլ. Ջ. դնի հանդիպ գառնւոյ. * Այաւ (ասէ՝ ասլանն ազգաւ Թաթար ի ժէ. դարուն) նաև զվայոց ձոր, և զեղեգիս մինչև ի Այրերծոն գիւղն՝ որ է հանդիպ գառնւոյ։ Վրի անդէն՝ թէ զայս ամենայն էտ օրսկեղեան էլխումին որդւոյ լեսպարտի ի հայրենիս. * Այս ա զայս հաստատեցաւ (ասէ) այս լինել հայրենիք տանն և ազգին օրբէլեանց։ ՚Ի գլ. Է. կոչէ զայս՝ Այրերոն։

Վառնակէր։ Վիւղ՝ զորմէ ի պատմ. օրսկեղեանց ի գլ. Ը. * Այս (տաբասիձ որդի լեսպարտի) ի վանան Յաղուց գաւրս՝ գիւղ ի գեղարքունեաց Վառնակէրն, և զայգի մի ի Աճառաւանջորէ։

Վլաս։ Վիւղ՝ զոր յիշէ պատմիչն օրսկեղեանց ի գլ. Է. տպ. Թղթ. 28. * Ցայ փոխան հայրենեաց լեսպարտին ... զՎլասն, և զայլս գիւղս յղուաս ի գեղարքունի։

Ա ասակաղէն։ Վիւղ ի գաւառին գեղարքունւոյ. որոյ հնութիւն յայտնի է յանուանէն, թէպէտ որ յիշատակ կէն գնոյն՝ է նոր հեղինակ [1]։

Կոն։ Ի գլխգորի մագիստրոսի [2] կոչի սա գաւառ, զի ասէ. Կոն գաւառ գեղամայ, որում պարտ է իմանալ զփոքր բիւրգաւառ՝ զոր մեք կոչեմք Ագեակ։ Ակիրակոս յիշէ զՀամանուն գիւղն կամ զաւանն յասելն. * Ցեզը ծովուն

(1) Ասի է առաքել պատմիչ յելս ժէ. դարուն, ի պատմութենէ յովանուս վարդապետին ծաղկեցւոյ ի Թղթ. 581։ * Որոյ (ասէ՝ այսինքն յովանուս վարդապետին) պատուական մարմինն եդեալ կայ ի յերկիրն գեղամայ ի գիւղն Վաստակաշէն, հուպ դամբարանի վարդապետին սարգսի ||։

(2) ՚Ի Թուղթն որ առ կարծեցեալ խմաստունն։

գեղամայ Լ՚ևան մի է Կոթ անուն, ի սահմանս այնր գեղջն հուպ ի լեառն՝ գալն մարդ մի ‖ Կակ ստեփ. օր պէշ. ի գլ. ԼՀ. (ի պատմելն վասն գրիգորի սուրհանայ որդւոյ դաբուռնն վասակայ՝ յԵլս ԹԳ. դարուն,) կոչէ զԸ նայն Վիւղաբաղաք. * Ը լնէ (ասէ) և սուրհան զզարմանակերտ փարախն բանաւոր հօտից ի Վիւղաբաղաք քին Կոթայ՝ յանուն որ ասացինն, և զարդարեալ մեծամեծ սպասիւք՝ կարգէ ի նմա դաս պաշտօնէից, և պարսպէ մեծամեծ վիմօք ... և կարգէ յիշատակիր արձանի ի վերայ որ եկեղեցոյն, որ ունի օրինակ զայս ։

» Ինձ սուրհանայ յիշատակարան հաստատեալ հոգևոր ի քո ի Լաղաքակիւղս Կոթայ ի կացուածի իմոյ նախնեացն. զոր նախ քան զայս, պարսպափակ շրջապատեալ էին ի բազմածախ գանձուց յոլով աշխատութիւք. յետ այսր ասա յիմոյ նախնեացն խորհրդակցեալ կամաքն այ՝ շինեցի տուն ետն և յարկն այն յակոբայ, անուանակոչուել սրբոյն աբրահամ ածածկին՝ վիմատաշ կոփածու քարամբք. և ի սմա սենեակս ը. ի վերոյ և ի ներքոյ. և ասա ի սմին որ քահանայս կարգեցի քահանայս, և զարդարեցի զատենաքահանայ ի նախնեաց իմոց, և այլ սպասաւորս բազումս. և ազատ արարի յարքունական ծանրութիւն և ի լեկարէ. և սահմանեցի հողս և ջուրս. և հատս միայ միայ քահանայի Ճ. դրամ ի տարւոջն՝ որ լինի հնկեցիկս, և սահմանեցի չորիցս քառասունս, և սաղմոս՝ գնեզուէ կանոն, և զառաւօտուն սաղմոն ‖ Օ սոյն ետ գրել և ի յիշատակագրին որ ի Ա՚աքենիս ։

Լ՚այս Վիւղաբաղաք՝ որպէս ակնարկի յարձանագրու թիւնն, գոլով կացուած, այսինքն՝ տեղի սովորական քնա կութիւն նախնեացն իշխանին գրիգորի, երևի թէ ի նմա էր արքունիքն այսր իշխանութիւն ։

Ասա ։ Կղզի՝ ի ծովուն գեղամայ՝ որ անկանի յայս գաւառ, որպէս գնի վարդան աշխարհագիրք. * Գեղամ Վեզաբրունի է, ուր կայ որ ուխտն մաքենիս, և Ասան կղզին ի մէջ ծովուն ‖

Ի սմա էր և ամրոց՝ զոր քանդեաց մուրատ ոստիկա որ ի մէջն անդ է. դարուն. * Կակ Ասան կղզի (ասէ յոհաննէս կաթուղիկոս) որ ի ծովակին գեղամայ, թէ պէտ և յիսկզբան նուագի անդ ոչ ըմբռնեցաւ ի ձեռս նորա, սակայն գիտի երկեամ ամաց մնասեցաւ ի ձեռս նորա, և որ միանգամ բնակեալ կայրն յամրոցի անդ՝ գերի առեալ տանէր, վկապատ կողոպտեան յաւարի

առեալ՝ սպառսպուռ քանդէր աւերէր զամրոցն ||։ (1)

Օ՛ինի զարձեալ չինուելն Հառ, յորժամ ամբոստան Հայկազուն իշխանքն սիւնեաց՝ որք տիրէին ի գաղաքունոյ տահակ և վասակ, և մայր նոցա մարիամ՝ յերեսաց զօրացն յունաց ի վերջն անդ Թ. դարուն. զորոց գրէ յովհան նէից կաթուղիկոս. * Յրթեալ զօղեալ ամբանայրին ի Աևան կղզոջ ||։ Օ՛որ և ի վերոյ կոչէ * Աեահական առ բոց աերուելէ իւրեանց ||. յայս առնելով՝ Թէ անկանէր ի գեղարքունի։

Ընդ ամրացաւ և աշոտ շահանշահ, յորոյ աւուրս կոչէ զայն յովհան՛. կաթ՛. Ընդարձակեալ. * Յանմարանալով առ բոցին ի Աևան կղզոջ առակայնայր ||։ Այր և տասն նաւս ետ ծովամարտիկ պատերազմ՝ ընդդէմ Թշնամւոյն, որ եկեալ էր * Յեզր ծովակին հանդէպ ամրոցին Աևան կղզոյ ||։ (2)

Ի սևան կղզոջ է և միաբանութեան հռչակաւոր միջնեւ ցայժմ, յոր անուն կոչէ լաստիվերացին գլ. Թ. զկղզին առհասարակ, յաստէն վասն ե՛. սարգսի կաթուղիկոսի. * Այարժեալ կրօնաւորական ձգնութեամբ՝ ի կրօնաւորանին որ կոչի Աևանայ կղզի ||։ Ասէն ասողկայ՝ ի գ. 3. ցուցաք նէ Թէ զառաջինն կառոյց զայս միաբանութեան և զմիաբանութիւն՝ մաշտոց կաթուղիկոս. զի գրէ վասն նորա. * Ի ծո վասն գեղատնչ զկղզին սևանայ բնակուելի իւր արարեալ, չինէ զեկեղեցին ի նմա՝ որ Ասուածածին անուանեաց. յոր Աևանայ կղզոյն է յայտ. վասն որոյ և գերգս ասի երգել ի յայտնել գաւառաձնող Թշնամեացն ||։

(1) Ի սմին Աևան կղզւոջ ասէն նախ երգեալ գերգն Շնորհեա գր. պատճառաւ յայտնի լինելոյ որ գայթից Թշնամեացն, որք նաւու սաստիկին հանին ի ծովեզերս նոր բաց բազմանալ բեռանց լցեալ ի պարկս իբր վաճառականութեան ազագաւ։ Բայց ի մանկանց ծաղեան ի պարկան լինել զօր զնեալս, որք գիշերոյ սպասէին յելանել և ի կատարել գործակիցս. իսկ բնակչաց յերազել լինելն այնմ ի խաղաղ մանկանց, ի ծովեզերն Ժողովեալ զգերոյիշեալ երգն երգեալ, միբան միջէ զպարկան արկանէին ի ծով, կարուսանելով զամենայն զօղեաքն որ ի նոսա։

Յիշատակի այս և ի մեկնուե Ժամակարգուե խոսրովայ, Թղթ. 372. ուր ասի. * Արարէս և ի

(2) Յայս ամենայն բանից յովհաննու կաթուղիկոսի յայտ է Թէ այլ է այն Աևան որ յիշատակի ի գիրս ի պատմութեն իշխանացն արծրունեաց կամ վասպուրական. զի ի վերոգրեալ բանն անգ՝ ուր խօսի զսևանայ որ ի սիւնիս՝ Աևան անուամբ կոչէ միշտ զկղզին, և ոչ ուրեք զամբոցն որ ի նմա. իսկ ի խօսելն զարձրունեաց, և ի յիշելն անդանօր զԱևան, յայս անուն կոչէ զնոյն իսկ զամրոցն. * Իսկ հասանն արծրունի... զնա կուեցին կայանի իւրոյ ուխեր զամրոցն անուանեալ Աևան ||։ Տես զայսմանէ և յանձանօթս վասպուրականի։

միացեալ ժողովեցան եղբարց բազմութիւն՝ կանոնագրուա
թիւ սահմանաւ որոյն բարսղի, միակրօնք ի տան այ եղեալ,
ստանալով զբազմութիւն գրոց որոց ‖ Ա. այլուր ի ՟ք. 32.
զչինութիւն վանաց համօրէն տայ նմին մաշտոցի՝ իբրև հե
ղինակի, յասելն վասն ա. սարգսի կաթուղիկոսի՝ որ ի
վախճան ՟ժ. գարուն. * Պատասխան եղեալ ի ծովակին
գեղամայ ի վանսն սեանայ, զոր շինեալ էր երանելւոյ
առնն այ տէր մաշտոցի ‖

Ա. ՀԱՐԹ զնացեալ շինեաց. պատմէ զայն ստեփաննոս օր
պէլ. ի գլ. լէ. քանզի մաշտոց եռեա ասէ յանուրջս
գալ առ նա ինքն երկոտասան առաքելոց ի վերայ ծո
վուն, և նշանակել զտեղի եկեղեցոյն, հրաման տուեալ
կանգնել անդէն եկեղեցի յանուն ՟ք. առաքելոց, և
սահմանել միաբանակեացս։ Յերևմանէ աստի վերին աղ
դեցուք շարժեալ թագուհին մարիամ կին գաբուռն վա
սակայ, և մայր վերոյիշեալ եղբարց զրիգորոյ սահակայ
և վասակայ, հաւանեցոյց զմաշտոց ձեռն ի գործ արկանել։
Պ ան որոյ նա ինքն տիկինն՝ ասէ. * Ընդ ինէ զգեղա
պաճոյճ եկեղեցիսն յանուն ՟ք առաքելոցն, և միւս յա
նուն տիրուհոյ աստուածնին, և զարդարեալ մեծամեծ սպա
սիւք՝ կանգնեաց զնա տուն այ, և բնակարան աստուածեաց
արանց յիգ. թվականին հայոց (յամի տն 874)։ Նայց
մաշտոց եդ սահման վանիցն, և պայծառացոյց երկնաքա
տակ կարգօք, յորմէ համբաւս միաբանեալ աշխոյ իշխա
նաց իշխանի՝ ՟ք ուխտին գայ ի տեսուքեն ՟ք հօրն, և ըն
ծայէ զփրկական նշանն յաստուածակալ խաչին. և տան ժա
ռանգութեն ՟ք եկեղեցոյն գեօղս՝ զԱրծէրն, զՅամաչա
բերդ, զՈսկեվանդն, զԱերդն, զԱսառեպոպտ, և զԲան խաչ
ծին, և այգիս՝ ի գառնի, և յերևան, և յայլ տեղիս ‖

Վեհաւնն։ Ցեղի՝ մերձ ի սևան կղզի, զոր յիշատա
կեն արևելեան եպիսկոպոսունք ի ժողովական նամակին
գրեալ ի ձեռն ստեփաննոսի օրպէլ. առ գրիգոր Է. կա
թողիկոս։ * Ի ժամանակս զաքարիայի սպասաւորի և իւա
նէի աթաբեկին վրաց՝ դարձեալ (եղև) ժողով ՟ք հարց,
եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից ի Վեհաւնն
մերձ Սևան կղզոյն ‖

Ա. ԲԵՐԴ։ Յիշէ զայս ասողիկ ՟ք. 6. ընդ այլոց տեղեաց,
յասելն վասն կայսեր Թէոփիլոսի որ նստաւ յամին 829.
* Այ ի խաղաղն իւր յարևելս կոյս ի սահմանս հայոց՝
առնու զԱրմո բերդն հայոց, զԱրաշէն, և զԱնձէվոյ, և
զԱ. ԲԵՐԴ ի գաւառին գեղամայ ‖

Ա անաց վան։ Ա՝ենարան՝ զոր ստեփ. օրպել. ՚ի գլ. կբ. այսպէս կոչէ, և գնէ ՚ի գեղամ. իսկ ՚ի գլ. լէ. կոչէ Ա՝ նէվան կամ Ա անավան։ Ը ինեաց զայս շատուհ բագրատունի յեր անդ ՚ի Թ. դարուն, կամ՚ի սկիզբն տասներորդին, զորմէ պատմէ նոյն օրպել. ՚ի գլ. լէ. *Ա՝ախանձեալ ընդ այս բարիոք մեծութիք շատուհ բագրատունի եղբայրն մարիամայ, և ՚ի ձեռն քեռն իւրոյ չինել զվտառաւորն տունն այ յանուն ՚ի ձորակին Ա անէվանայ՝ որ այժմ Ա՝նանոյ կոչի. և բազում տուրս ընձեռէ ՚ի պէտս եղբարցն, և հաստատէ տուն կրօնաւոր բայ. որոյ յիշատակագրութիւն չարձանին ունի օրինակ զայս։

„Ձանուն այ ես Ը ասուհ բագրատունի հայոց սպա բապետ՝ տեառնց տէր՝ որդի աշոտոյ հայոց Թագաւորի, ՚ի ժամանակս հայոց Թագաւորի մեծին սմբատայ հարա զատ եղբօր իմոյ, և .. հայոց հայրապետի տեն յովանի սի ... տեսուչ առնելով զքոյր իմ մարիամ սիւնեաց տէ կին, յիմումն իշխանութե ՚ի վանս՝ վանատուն այ կանգ նել վիմատաշ կոփածովք, շատածախ գանձիւք և մե ծաջան վաստակօք կատարել... և տուաք ՚ի քեզ վանս վանու վանական հայր աբրահամ ... հինգ գեղոյ սահ մանն, Ա՝րևակայ ձորն, Ա՝ղաբովանան, Ը աւառնանոցն, Ա՝նէպա ղէն, Ա՝նանոյն, Ա՝նէպավանայ ծուէ. մկ դրամ ՚ի Ա՝րևմտեան, շէ. ՚ի Ա՝րաբենեցն, ոկ Ա՝ղբովանացն ծովէ, ՋՀ ՚ի Ա՝արբէն գետերէն և վնասբէն ‖։ Ա՝յսր Թաղեցան տէր սողոմոն՝ որ Թուի լինել սիւնեաց եպիսկոպոս, տէր աթանաս, և ամբատ բագրատունի, ըստ որում գրէ անդէն ստեփ. օրպել։

Ա անէվան։ Ա՝նի և զայս նա ինքն օրպելեանն ՚ի գլ. կբ. ՚ի կարգս մենարանաց երկրին գեղամայ, և կոչէ Ա՝նս վանէվան, յորոշումն վերնոյն, և ՚ի գլ. լէ. իսկ և իսկ զինի վերոգրեալ բանից պատմէ զչինութիւն որ եղև ՚ի Ա անէվան, զի գրէ. *Ա՝արձեալ և յետ ամաց հինչ նորոգէ և գազիկ որդի աշոտոյ շահնշահի՝ զհրաշակերտ եկեղեցին Ա անէվանայ զոր կաթուղիկէն, և տայ զԱ՝ղէյ նափեա ՚ի նա, և պարսպէ շուրջ զեկեղեցեաւն, և գրէ արձան անհծից՝ ոչ յափշտակել զոչն ՚ի ոչ եկեղեցոյն ‖[1]։

(1) Ա՝յս նորոգութի արգեօք թէ ՚ի վերոգրեալն, այլոց Թո յոցայս Վանէվան մենաստանի եղև, զուարք որոշել։

Յաշխարհագրութեանէ խորենացւոյն գրի Ա՛՞՞. իսկ առ ստեփ. օրպել. ՚ի գլ. ՟է. և լէ. գրի՝ Ա՛՞՞։ Իսկ զպատճառս անուանակոչութեանս դնէ նա ինքն ՚ի գլ. ՟է. ուր այսպէս. * Ղորղորդ (ունի սիւնիք) Սոթիից գաւառ, որ ասէին Հանապազորդեան բերդ և դառնաշունչ օդոյն՝ կոչեցաւ Սոթք։ Պլինիոս ՚ի ՟է. 10. յիշէ զՍ՛՞՞ս երբեմն մանաւանդ ժողովուրդս մերձ յաղուանս և ՚ի վիրս։

Ըստ յետագայս կոչեցաւ Ծ՛՞՞ր՝ այս էրէրէ, որպէս վկայէ վարդան աշխարհագիր յաստեղն. *Սոթիից գաւառն ծաղայ երկիրն է։[1]։

Ծ՛՞՞ր։ Յիշատակէ զայս աւան գրիգոր մագիստրոս ՚ի Թուղթն ժ՟. առ իշխանն մամիկոնեան, Թէպէտև դնէ զնոյն յաղուանս հայոց. զի գուցէ առ ժամանակօք մաս պիտորսի աղուանք ունէին զգաւառն սոթից, յորոց և ՚ի սահմանակցութենէ է ըստ պլինիոսի. * Ըսեմ քեզ (ասէ մագիստրոս) ՚ի մերում սեփականին իսկ յաղուանն աշխարհի յաւանն կոչեցեալ Ծ՛՞՞ր, և ահա ոչ ծեքաբաս նեմ քեզ. մանաւանդ սահմանացն վաղնջուց գեղեցկուղեղն գի, յորմէ սիւնս ոչ սակաւ՝ հզօրս և ստուարս ՚ի կոչարաս նուամ անդ տեսեալ մեր. և գերանք գերակատարք և երկայնաձիգք՝ որ է վկայարան ոչն յակովբայ։ Ընդհանայն կաղք տաճարին գերակայ, տախտակք և խոյակք և խաչ ըմսիւք, և զթակաղակք և զդրունս, և զսեամն հանդերձ բարաւորօք, և նեղբդոյ զատակս կազմեալ ՚ի միջնէ ծառէ յայնմանէ գիւղն գոլ ասեն զնա. և զայլս ոմանս ի նոյն աշխարհին ընդարձակագոյն սրահք և միջոցք այնմ տաճարի տեսեալ մեր. որ գրեթէ այսպիսի ոչ այլ ուրեք՝ բայց միայն ՚ի Թագաւորեալ քաղաքին։

(1) Ահա բան գտանի յերկուս օրինակս վարդանայ աշխարհագրին, որք ընտիր են քան զայլս. իսկ յայլ օրինակս, և ՚ի տպ. պակաս է։ Ահա ծ՛՞՞ր էրէրէ որպէս Թուխ լինի կոչեցեալ առ յետինս ՚ի համառն աւանին, զորմէ գրեցաք։

ԱՂԱՀԱՅՔ։

Ա. յսպէս գրի՛ ի սպագրեալն և՛ ի միում ձեռագրի աշխարհագր՛՛. խորհնացւոյն. իսկ յայլում գրի Ա.ղահէձ։ Ա.ռ ստեփ. օրպէլ. ՛ի գլ. ՟է. գրի. Ա.ղահէձ. * Հինգե բորդ (ունի սիւնիք ասէ) Ա.ղահէձ գաւառ, որ այժմ կոչի Ա.ղաւնաձոր, և Ստժոռաբերդ։ Այսկողքին և էին անուանք բերդից, յորոյ անուն կոչեցաւ զինի այս գաւառ. զի սուզ ինչ զինի՛ ի կարգս բերդից յիշէ Ա.ղէ նաղոց բերդ, և Ստժոռաբերդ։

.Ծ.Ղ.Ո.Ւ.Կ.Ս։

Ա. յսպէս գրի՛ ի միում ձեռագրի աշխարհագր. խոր բեն. ՛ի տալ. գրի Ո՝ղո՛՛ որ է վրիպակ։ Ա.ռ ստեփ. օրպակէ. ՛ի գլ. ՟է. գրի Ո՝ղո՛՛. * Իսկ գաւառաք ունի (սիւնիք) երկոտասան, առաջինն՝ որ ունի զբուն գահ իշխանացն և հայրապետացն՝ Ո՝ղուք Վաւառ՝ անուանեալ ՛ի Ո՝ղկա գաւառապետէ։ Ի այց ուղիղն է Ո՝ղո՛՛. զի այլուր առ նորին ստեփ. միշտ ՛ի բազմաւորականն հոլովի. ըստ այնմ յասէն ՛ի գլ. լ՟է. * Կուտեալ զգօրսն ՛ի գաւառէն Ո՝ղկաց ՛ի նմին տեղւոջ։ Ա՛ւ ՛ի գլ. լ՟Թ. յիշատակի * Ա՛նդիէ Ո՝ղկաց տրէնոցս։ Վաև առ ասողկայ ՛ի ՟Ը. 3. յասէն վան հերակլի կայսեր. * Ինքն ընդ Ո՝ղուկա ՛ի նախձուան Թարկի։ Յորում բանի յայտ առնէ՝ Թէ այս գաւառ սահմանակից էր նախձաւանայ։ Տէս և ստորև։

Շ աղաթ։ Վիւղաքաղաք երևելի՝ զորմէ ստեփ. օրպէլ. ՛ի գլ. Լ՟Թ. * Ա՛ւ հասեալ զօրն անտ ՛ի Ո՝ղուքս գաւառ ՛ի Շ աղատ գիւղաքաղաք։ Ի՛նէլր և բերդ. վան որոյ ՛ի գլ. լ՟է. կոչէ. * Ի՛ներդիւղն Շ աղաթ։ Ա՛ւ էր կառուցեալ յերդր լ՟Ի, զի ՛ի գլ. ՟ժ՟. զԹագինչ սորա գնէ * Յ՟ԵԷր ծովնէ գՈՂ։

Ա՛ւ քանզի յայսմ գաւառի էր գահ իշխանացն սիւնեաց՝ ըստ որում եգ ստեփ. ՛ի վերոյ, Թուի Թէ՝ ՛ի գիւղաքաղաքի աստ նստէին նոյն իշխանք, գէթ առ ժամս նակ ոմն, զի այլուր կոչէ զայն իշխանանիստ. * Ա՛նցեալ ՛ի գաւառն ծղկաց՝ հասանէ յաւանն իշխանանիստն Շ աղատոյ։

Յորժամ անդոկ իշխան սիւնի յետ Ք. դարուն՝ հրաժայեաց զաւենայն տեղիս սիւնեաց քակել, յեկեղեցւոջ սորա Թադեցին և Թադուցին գնչխարս՝ որք, առ ի ոչ անկանիլ ի ձեռս պարսից, և ասպա զեկեղեցին ողջոյն Թադեցին ընդ հողով։ * Ի ողաբլուր արարեալ (ասէ ստեփ. գլ. Ը.) ի վերայ՝ որ եկեղեցոյն Շ աղատոյ՝ որ է ի Օղովկա գաւառի, փախուցեալ ցրուեցան ընդ ամենայն երկիրը, և ոչ ոք իշխէր ասել զանուն սիւնեաց ։

Ա յս եկեղեցի էր յանուն՝ որպէս ստեփաննոսի, որ և զկնի Թադեցին՝ սքանչելեօք յայտնեցաւ բաբկայ իշխանին սիւնեաց, որպէս գրէ օրպէլեանն ի գլ. ԺԸ. ուր և այսպէս ստորագրէ. * Տեսին ի նեբրոյ՝ եկեղեցի քարկոփ չքնաղաշէն, որ ոչ ուրեք էր այնպիսի հրաշաքարտար շինաց գմբեթին, և խորանքն չորեքկուսի միայարկ տանեօք, և ոչ ուրոյն՝ որպէս և յայլ գաղատոսաշէն եկեղեցիս. և բացեալ զդրունս՝ որպէս եկեղեցոյն նախաւկայեն ստեփանոսի ։, և այլն։ Ա յնչափ հրաշալի և հռչակաւոր եղև գիւտ եկեղեցւոյս՝ մինչև ամի ամի անդ ժողովիլ սիւնեաց իշխանին և եպիսկոպոսին ի տօնախմբել * Ի բրև վմայր եկեղեցեսն աշխարհին սիւնեաց ։. զի այլ աւենայն եկեղեցիք սիւնեաց քանդեալ էին ի պարսից ։

Տեսեալ զսքանչելին որք յայնմ աւուր եղեն՝ երկու պարսիկք եղբայրք անուանեալք Վոր և Վաղան, հաւատացին ի քս, որոց և վիճակաւ ետուն մի մի աւան. Վորայ վիճակեցաւ աւանն Լոռայ. իսկ * Վաջամարտիկն Վաղանայ (ասէ օրպէլեանն) հասանէ վիճակաւ գիւղաքաղաքն Շ աղատոյ, հանդերձ՝ որ եկեղեցեաւն՝ որ յայնմ ժամանակի Ա յր եկեղեցեայն անուանէին ։ Ա յս զայս պատիւ տային եկեղեցւոյն ի հրամանէ վերոգրեալն * Ա բաբկայ սիւնեաց տէն (ասէ). զի նախաձոյլ լինէին յաւենայն սիւնիս՝ սպասաւոր քահանայք և հաւատացեալ ժողովրդականք պաշտօնեայք՝ որպէս եկեղեցւոյն Շ աղատոյ, իբրև զմայր եկեղեցեաց և մայրաքաղաք աւենայն աշխարհին սիւնեաց ։

Օ այլ ինն պատիւ տային եկեղեցւոյս՝ ի կարգաւորեալ Տիրոտ անուն ներանձնաւոր քահանայի, որ և Թաղեցաւ յարևելից եկեղեցւոյս։ Այն այս քահանայ պատուիրեաց ոչ մնանել կանանց ի նոյն եկեղեցի, և ոչ կալ նամբի քահանայի սպասաւորութիւն առնել որբուքիե տէրոյն, որոյ կարգաւորութիւք եկաց եկեղեցին շաղատոյ զամն 300 ։ Ա յս այսպէս այս եկեղեցի և ողջոյն աւանն՝

նախագահ դասեցաւ ի մէջ համարէն աւանաց սիւնեաց. և այս պատիւ զկնի վերատին հաստատեցաւ. քանզի ի ժամանակս յովակիմայ սիւնեաց եպիսկոպոսի՝ հակառակ կուռքն յարեաւ վասն նախագահութեանէ գիւղաքաղաք աւանաց՝ թէ ո՛րն իցէ։ Յայնժամ խոսրով շաղատեայ՝ որ էր ի զարմէ վերոյիշեալ Վահանին, զհուպղէն իւր եդ առաջի տումնեբսէհի տէն սիւնեաց, յորմէ * Հրամայեցաւ (ասէ օրպէլեանն ի գլ. ժբ.) Շ աղատնեցեայ իբրև մայրաքաղաքացեայ յաւաջանիստ լինել վհհադոյն պատուով, նոյնպէս և զվարդապետութեանէ սիւնեաց վնախագահութեանէ զնիստ՝ հրամայեցին Շ աղատոյ վարդապետի. ընդ որ յոյժ զլարեաւ փանոսի ոյծնեցոյ սիրոյն վանական՝ ակամայ գնաց, և ո՛չինչ ումեք ժողովոյն փոյթ զոյնմինէ լինէր ‖ (1)։ Յիշատակի առ ստեփ. օրպէլ. ի գլ. լԹ. և * Վիճակն Շ աղատոյ վանական սիւնեաց վարդապետ ‖։ Յորմէ երևի Թէ՝ ի Շ աղատ էր և մենարան միանձանց։

ՀԱԲԱՆԴ։

Լուտագրեալ աշխարհագրութեան խորենացւոյն գրի՝ Ա՛բանդ. իսկ ի միում ձեռ՛՛ գրի Աբեանդ, և յայլում՝ Հաբեանդ։ Ա՛ռ ստեփ. օրպէլ. ի գլ. ՃԲ. գրի Հանդանդ, և դասի ի վերերորդ կարգս գաւառացն սիւնեաց։ Ա՛ռ Թովմայի կիլիկեցւոյ գրի՝ Հաբենդ։ Ի մէջ այսչափ գրութեանց ոչ ուղղագոյնն Թուի լինել Ա՛բանդ, և փանաւանդ Հաբանդ, զի մի ի գաւառաց նահանգին աբցախայ կոչի յատհարհագրութեան խորենացւոյն՝ Ա՛խաս աբանդ՝ յորոշեալն սորա, յորմէ յայտ է՝ Թէ այս և այս կոչի Հաբանդ։

Հանբատայ բերդ, կամ Զաքէոյոյ բերդ։ Յորմէ գրէ ստեփ. օրպէլ. ի գլ. ՃԲ. * Հանբատայ բերդ՝ որ ի նոյն տոհմէ սիսակայ ի ձագակայ նահապետէ շինեալ՝ ի վերայ գետոյ միոյ՝ կոչէ յիւր անուն զձորն Զաքէձոր, և զբերդն՝

(1) Ա՛յս Շաղատ Թուի լինել նոյն՝ որ այժմ պղպղատիթ կոչի Շաղատ, զի բաց ի մեզաւորաթէ անուանից՝ նաև գիւրքն ընդհանրապէս համաձայնին։ Ա՛յժմեան Շաղատ չէ ինչ հետևի հնագոյն ձևաւանայ. նոյնպէս և ծղուկք գաւառ յորում էր Շաղատ՝ սահմանակից էր նախճաւանայ. ի Շաղատ էր եկեղեցի յանուն նըշան սուրբ փանոսի. նոյնպէս և ի Շաղատ գտանի Վ՛ սուրբ փանոս, այժմ փոխարկեալ ի մատուռն Տէս ի նոր հայ՛. Թղթ. 269։

Զագեձորոյ բերդ ||։ Յայտնի ևս ՚ի պատմ. օրպել. եանց ՚ի գլ. է. դնի յայսմ գաւառի. *Ուանզի ընդ այն ժամանակս էր զօրագլուխ նետողացն որպէս Թագաւոր ՚ի վերայ ամենեցուն բայց նոյինն, և նատէր ՚ի գաւառին Հաբանդայ ՚ի գլուխն Զագեձորոյ, և էր աճեալ զբռամբ զիտքր Թագաւորն սիւնեաց զդաւիթ ||։

ԲԱՂԱՆՈՑ։

Բաղանոց գրեալ կայ յերիս ձեռ" աշխարհագր". խոբլեն". և միայն ՚ի տպագրեալն վերնագրի Խաղ յորդ, զերկոսին գաւառս միացուցանելով. որով գաւառք սիւնեաց ոչ լինին ժք. որպէս դնեն տպագրեալն և ձեռագիր օրինակք աշխարհագրութեանն խորեն. այլ ժ։ Ի տ այսմ և ստեփ. օրպել. յորժամ կարգաւ Թուխ զժք. գաւառս սիւնեաց ՚ի գլ. ը. ուրոյն ուրոյն գաւառ դնէ զԽաղն և զՋորն։ Եւ յայլ ամենայն գիրս՝ միշտ Խաղ կոչի այս գաւառ, և ոչ ուրեք Խաղձորք (1)։

Ո պատճառ անուանակոչութեանն սորա դնէ ստեփ. օրպել.՝ ՚ի գլ. ը. *Խօթերորդ (գաւառ սիւնեաց) է Խաղք գաւառ, որ այժմ կոչի Ղ՚ճէն, որ ՚ի Խաղկայ ա նուանեցաւ ||։ Ղ՚ալ որպէս տեսցի ստորև՝ ՚ի բաղակայ անուանեցաւ տիրապէս բերդն, և ՚ի բերդէն ողջոյն գաւառն. իսկ զՂ՚ճէն, այլք գրեն Ղ՚ճանան։ Ունէր զզանազան ամրոցս, որք ՚ի լե. գլ. ստեփ. օրպել. ՚ի բաղմատ բականն յիշատակին. *Ոլոց պակուցեալ՝ ոմանք ամրացան յանառիկ ամուրսն Խաղաց ||։ ՚Ի ժ. դարու՝ յա նուն այսր գաւառի կանգնեցաւ Թագաւորութեանն զըրմէ գրեցաք ՚ի վեր անդր։

Խաղբերդ։ Ոմն այսր տեղւոյ այսպէս գրէ օրպելեանն ՚ի գլ. ը. *Յակ ամուրք անառիկք ՚ի սմա (այս-

(1) Աբ ստեփ. օրպել. ՚ի գլ. ըգ. յիշատակի՝ գաւառ Բաղանոյ։ ՚Ջիւտ այսր (այսինքն՝ յետ Ձէզ. Թուխանի) անհնազանդ եղեն գաւառն Բաղկանայ (Բաղականայ) հրամանի և օրինաց բաքանայ (պարսկի), որոյ եկեալ ձեռն. տուութեանբ աբլագասայ աղանեցոյ՝ կոտորեաց սաստիկ և անողորմ զգաւառան Բաղականու, և մինչ ՚ի կանայս և մատաղ մանկտիս ||։ Սոյն այս գաւառ ՚ի խորագրի նոյն գլխոյն կոչի Բաղաւանի, որ մեզ Թուխ լինել ոչ Բաղաց գաւառ սիւնեաց, այլ գաւառ աղուանից, որ ՚ի տպ. աշխարհագր. խոր. և ՚ի միում ձեռ, գրի Խբաղանի, յայլսում՝ Բաղկան, և ՚ի միւսում՝ Խբաղանան։

ինքն ՚ի սիւնիս), որ ՚ի մարդկան հնարից հեռացեալ էն, բայց միայն թէ տեր մատնեսցէ. Խաղաբերդ՝ որ և մի գին ՚ի զարմից սիսական Խաղակ անուն առեալ զայս գաւառ մատն ժառանգութիւն, շինէ զքարն Խաղակու ամրոցս, որ և կոչի Խաղկէ փոր, և ամրացուցանէ զբերդն, և կոչէ Խաղբերդ. և գաւառն յիւր անուն կոչեցաւ Խաղաց գաւառ ||։

Այն այս Խաղաբերդ է՝ որ առ յոհ. կաթուղիկոսի կոչի Ոստոյն բաղաց. և էր ամուր քան զամենայն բերդս սիւնեաց նահանգին, վասն որոյ տեսանեմք ՚ի պատմիս՝ զի յամենայն նուազի յորս փախչէր Խնդրկին բնակիչք երկրին, ՚ի սմա ամրանային։ Այսր ամրացան բնակիչքն, և անդոկ իշխան նոյ յետ կողոպտելոյ զտիսբոն, ուստի շատուհ արքայ պարսից երիցս անգամ առնային զօրօք յարձակեցաւ ՚ի վերայ բերդիս, և երիցս կոտորեցաւ. որոյ ՚ի կամին չորրորդ անգամ ՚ի վերայ յարձակիլ, մեծամեծ նախարարքն պարսից անկեալ (ասէ ստեփ. օրպել. ՚ի գլ. Ը.) առաջի շապհոյ, * Հրաւիրեցին մի և այ պատերազմել ընդ անդ պարսից ամրոցին Խաղաբերդու, և տալ կոտորել զաբեացն գունդս ||։ Այսր ամրացան և սիսական տեարքն յեբեսաց բուղայի, որ հրոսակս առաքեալ էր ըմբռնել զնոսա. * Հայց յորմէ ՚ի տերանցն կուսակալաց (ասէ յհ հանձնէս կաթուղիկոս) յանառիկ ամրոցն Խաղաց դիմեալք հաւաքեալ փրծանէին ՚ի ձեռաց նեղչացն ||։

Ի շԽե. Թուականին (յամի տեառն 1126.) ասէ օրպելեանն ՚ի գլ. կա. ամիր Հարունն եկեալ էառ զԽարն Խաղակու որ էր վանք. յորում ՚ի գաղթել գաւառականացն՝ գանձեալ էին զոսկի և զարծաթի սպասս եկեղեցւոյն, և այն ամենայն մատնեցան ՚ի ձեռս Թշնամեաց. * Նա ՚ի ոճԹ Թվին (յամի 1170. ասէ ՚ի նոյն գլ.) կրկին բարկացաւ ՚ած Խաղաց աշխարհիս, և սիւնեաց նահանգիս, և զաւալէնն ամենեցուն և զտեղի ապաստանի զանառիկ ամուրն զԽաղաբերդ մատնեաց ՚ի ձեռս իսմայելի ... որ բաղում զօրօք եկն և ոչ կարաց հնարել ինչ. ապա պատրող բանիւք խաբեաց զպարզամիտ արս քրիստոնեայս աչաղուաց, և նոքօք նախ առ զԽաբնոց, և ապա ՚ի գիւ շերի այնու արամբք գողացաւ զԽաղաբերդ, և առեալ կոտորեաց սաստիկ. և զի վասն անառիկ ամրութեանն յաւէնայն վանորէիցն անդ էին կուտեալ զարբուքիս և ըզդրեանս և զսպաս եկեղեցոյ, և առաւել զանհամար և զանմատն արբուքիս և սպասս եկեղեցոյն տաճկաց՝ փառ-

թամ և հարուստ աթոռոյն. խաչ և վկայարանք յոսկոյ և արծաթոյ, և անգին ականիք և անհուն մարգարտով զարդարեալ, և կտակարանք յոլովք՝ որք թուով աւելի քան զԺռ. զորս ամբարեալ էին անդ, առանձին առհասարակ գերի վարեցան, և ցան և ցիր եղեն ընդ երեսս աշխարհի ||:

Յիշէ զՅաղաբերդ և վարդան աշխարհագիր ըստ երկուց օրինակաց: Ընտի եր և վահան կաթուղիկոս՝ որ հալածեցաւ յաթոռոյն ի վասպուրական: Ընդուն սորա կայ մինչև ցայժմ՝ Պաղաբերդ կոչեցեալ ի գաւառակաս նոց:

Յովհաննու վանք: Յիշատակէ զայս վարդան, որ գրէ՝ Լեռ ջնջեցեր իշխանն հայր ՚որ վահանայ * Ը լինեաց զաւրինասպայծառ ուխտն Յովհաննու վանս՝ առ ՚ստորոտով անմատոյց գղեկին բազայ ||(1):

՚Ի Յովհաննու վանս առ գրան տաճարին Թաղեցաւ և Ք. ամբաստ Թագաւոր սիւնեաց, որ երրորդ յամէորդ եր նախկին Թագաւորին բազաց ամբաստայ, որպէս գնեց օրպէլեանն ի գլ. ծԼ:

Ո անազան շինուածս կառուցին ստտ սենեքարիմ՝ հինգերորդ Թագաւոր բազաց, և քոյր նորա շահանդուխտ, զորոց գրէ ստեփ. օրպէլ. ի նոյն գլ: * Ի՚ա զամ արարին արդիւնս և շինուածս երևելիս ի վանսն Յովհաննու ||:

Յիշատակին ուրեք ուրեք ի գիրս Լսպիսկոպոսունք Յովհաննու վանից, որպէս ի չԺդ. Թվին հայոց՝ Յովհաննէս եպիսկոպոս. և այլոյր յիշատակին Կարապետ և Պաբգիսէ եպիսկոպոսունք: Լև ի ռձԺթ. Թվին ի յիշատակարանս ինչ գրոց, Յովհաննէս բաբունապետ Յովհաննու վանից:

Ը նկերս: Ընկանի յայսմ գաւառի՝ որպէս յայտ է ի բանից օրպէլինին: * Լաև զտեղիքս զայս աւանդեալ (ասէ շահանդուխտ դուստր վարազտրդատայ գահերեց իշխանին աղուանից՝ յիւրում կտակի,) ՚ոք եկեղեցւոյն (տաթևոյ) առնէին ձորով, որ ի Ը նկերս սահմանէն ի վեր, մինչ ի Կինական գետն ||: Լայ՝ տեղի եր ձորավայրն բնակուԹեն նորին շահանդխտոյ. իսկ ձորավայրն բնակուԹեն նորին՝ եղև ի բազաց սահմանի, ըստ որում

(1) ԶչինուԹեն Յովհաննու վա խե. որ պակասի ի մերում օրինակ պատմե ստեփ. օրպէլ. ի գլ նակի:

դնէ՝ի վերոյ օրպէլեանն, և որպէս գրէ նոյն ինքն շա-
հանդուխտ ասելով. * Ակեաղ՝ի սահմանս Խաղաց՝ի
գլուխ քարիս՝ ընդ որ անցանէ ճանապարհն, և ահա յանդ
կարճակի պատահեցան ինձ խմբակեալքիք, որք վասն համ
բաւոյ գեղոյ իմոյ կամէին յափշտակել զիս . . . և դար-
ձուցեալ զերասանակ երիվարին Թռչեայ ի քարս. և ապա
յահագին ընչմանէ հողմոյ և անեւևոյթ զօրութիք ինչոյ
իբր կառաւք ընդ խորութիւն ձորոյս՝ ես և երիվարն իմ
անշնաս ‖ : Յայն ձոր չինեաց նոյն շահանդուխտ մնատուն
և իջեալ, ուր ձգնութիք եկաց զամենայն ժամանակս կե-
նաց իւրոց զամն երեսուն. ժողովեաց առ ինքն և այլ
կուսանս, և անդ թաղեցաւ [1] : Այնչափ ցայժմ գոյ Շ ընդ
հեր գիւղ մերձ՝ի տաճիկ :

Ա՛ղուձ : Կիւղ՝ զոր ջնջեցեր իշխան ոմն սխալական ետ
՝ի՛նոր խաչն տաճկաց , փոխանակելով ընդ այլուսմ գեղջ
զորոյ զվճիռ պայմանին բերէ տաճիկ. օրպէլ. ՝ի գլ. խ.
* Ի յիշ. Թվականուս հայոց՝ ի ժամանակս ածապա-
տիս և հոգևոր հաւ սոզոմի [2] սիւնեաց եպիսկոպոսի ,
կամեցաւ ինձ ջնջելոյ՝ ածապահ հաւ տահակայ սիւնեաց
հաւ որդոյ՝ զիմ գիշն ի որ՝ի քաղաս գաւառի Ա՛ղուձ
անուն . . փոխանակել ընդ Ա՛ղէպ չինոյն . . . Ա՛ղէ ի՛ջ-
խան էք դուք ինր սոզոմոն ուտել և ժառանգել զայդ շինդ
զԱ՛ղուձ իւր սահմանօգդ բոլորովիմբ, ծառովք և այ-
գովք , գետով, և ցամաքով, արտաւարօք և մարդօք ,
ջրաղացովք և պարտիզօք, եկեղեցեաւ և այլ շինուա-
ծովք . . . : Այս սահմանքն այս ե Ա՛ղուձայ (Ա՛ղուձայ)
յարևելից կողմանէ . . . դրախտ ե նոյն ինր խաչիդ սահ-
ման , և՝ի հարաւոյ կողմանէ հին ջրաղացովդ ե մինչև՝ի
Ռեխոյ սահմանն . և ընդ հիւսիսոյ կողմանէ Ա՛ուրդոյ
սահմանովն , և արքունի նեպակովն , որ էր ժ՛ե. դրամ ‖ :
Ա՛ձ : Շ էն՝ զոր քուպղիդուխտ դուստր վասակայ
սիւնեաց տաճկ՝՝քոյր փիլիպէի , և կին հրահատոյ՝ պարգև-
եաց՝ի՛նոր խաչն տաճկաց , զորոյ զպայմանն վճռոյն բերէ

(1) Ջայս անցք պատմէ ստեփ. օրպէլ. ՝ի գլ. լՁ. խակ՝ի գլ. լԷ. պատմէ զանցս որք եղեն՝ի յԻ. Թուականին (յամի ՈՀԱ.) յոր մէ յայս և Թէ շահանդուխտ էր յետ Թ. դարուն , և՝ի սկիզբն տասներորդին : Խակ բնակիչք Շնհեր գիւղջն յիշատակին առ ստեփ. օրպէլ. ՝ի գլ. խ. ՝ի պայ-
մանագիրն քուպղիդուխտ . * Ե՛ս գրեցի յիշ. Թվականուես հայոց, վկայուԹիք իմ եղբօրորդեացս . . . և ամենայն Շնհեր ‖ :

(2) Ա՛ռաքան հոլովի յատուկ անուանս Սողոմոն ուրեք՝ի գիրս օրպէլենին դնի կրճատմամբ Սողոմ, փոխանակ գրելոյ Սողոմոնի:

ստեփ. օրպել. ՚ի գլ. ին. որ գրեցաւ ՚ի Թվին չԺգ. (յամի տեր 867.) * Ճէն մի Աճատանուն ՚ի Խաղաց գաւառի, որ նախ տէր անդներսէհի սիւնեաց տէն և իմ եղբօր՝ ինձ էր տուեալ... ետու ես քուպղդուխտ զայդ շէնդ լերամբք և դաշտով, մարգով և արտով, գետով ջրով և ցամաքով, ծառովք և մնկովք ՚ի ՚որ խաչդ, և ՚ի ՚որ սողման սիւնեաց եպիսկոպոս ||: Աինչև ցայժմ է այս շէնն՝ Աոչ ձայնեալ, առ ջրով մերձ ՚ի տաթև:

Արոտն, և Խաղէն: Յառէն լինել ՚ի բաղաց գաւառի, զի դրէ ստեփ. օրպել. ՚ի գլ. կա. * ՚ի չծգ. Թվականին առաւ Արոտն և ՚ի չծդ ին՝ առաւ Խաղէն, և դերեցաւ խոսրովիկ իշխանն, և ՚ի սուր սուսերի մաշեցան բազմունք Թէք քրիստոնէից, և բնաւէն յաւեր անցաւ տունն բազաց ||: Արոտն Թուի կոչեցեալ յանուանէ ընթերակայ վտակին Արոտան. իսկ վտակն այսպէս կոչեցեալ՝ առ որոտաձայն ընթացից իւրոց. զի որպէս դնէ ՚ի գլ. լԹ. ահագին կարկաջմամբ հոսի այս վտակ երասխայ: Յիշատակի Արոտն առ եղիշէի (՚ի Թղթ. 67.) ընդ ամուրս Հայաստանեայց: Աինչև ցայժմ կայ այս գիւղ. զորմէ տես ՚ի նոր Հայաստան. Թղթ. 273:

Խաղէն ունի և բերդ, զոր և ՚ի գլ. ՚ը. ստեփ. դասէ ընդ ամուրս բերդս սիւնեաց՝ կոչելով Խաղենոյ բերդ: Յառ զայսոսիկ յայլազգեաց սպառս օրպէլեան որ ՚ի ժԸ. դարուն, զորմէ գրի ՚ի պատմութիւնէ օրպէլեանց ՚ի գլ. Ի. * Յառ և Թափեաց զերկիրն Արոտնայ բովանդակ՝ մինչ ՚ի սահմանին Խորդոյ, և Խաղենոյ (փոխանակ գրելոյ Խաղենոյ), յորում և կայր ընդ աւեր՝ աՒոռն սիւնեաց տաթև ||: ՚ի սահմանին բղենոյ էր մենաստան Գորաւանայ ձայնեալ, զորմէ տես ՚ի միւս Գորաւանս ՚ի վայոց ձոր:

Ա աղանդոս գեօղ: Աստի էր յովհան որոտնեցի, ըստ որում վկայէ Թովմա մեծոփեցի յասելն. * Յովհաննէս մականուն կախիկ.. գոլով ՚ի գաւառէն Արոտնու ՚ի գեղջէն Ա աղանդնու ||:

Յիշատակի առ նորին Թովմայի և Ա անդն վաղանդոս, կամ Ա աղընդոս: * Յոդուվեալ (ասէ վասն գրիգորի տաթևացւոյ,) զբազումս յաշակերտաց իւրոց... զգալոստան ՚ի Ա աղընդընու (1) ՚որ կարասէտէն.. գյովհաննէս ՚ի Ա աղանդու վանիցն ||: Ա յլ նախ քան զմեծոփեցին, նաև

(1) Ա՝ալ օրինակ ունի ՚ի Վաղընդոս||. այլևայլ օրինակաւ ղընդիոս||. որպէս և զոր ՚ի սասնա. գրելով զնոյն անուն:

ստեփանոս օրպել. ՚ի գլ. կը. յիշէ զայս մենաստան, կո-
չելով Աղանդնին վանս։

Տաթև։ Կոչեցաւ այսպէս յանուն եւստաթէոսի առա-
քելոյն՝ որ ըստ յայսմաւուրաց (՚ի 6. մարտի.) էր յա-
շակերտաց Տ֊ջին Թադէոսի առաքելոյն։ Օ այս անուն
քանզի բազում ուրեք գրին Աստաթէ առաքեալ, որպէս
յայսմաւուրս (՚ի 27. ապրիլի. ՚ի չորս տեղիս,) և առ
Թովմայի մեծոփեցւոյ (՚ի պատմ. ձեռնադրութեանն կիրա-
կոս կաթողիկոսի.) յայսմանէ կրճատմամբ՝ անուն տեղ-
ոյն կոչեցաւ Տաթև, որ ուղղագոյն և առ նորին Թով-
մայի գրի նաև Պաթև։

Ի գիւղ, և ՚ի նմա մենաստան մերձ յորոտն առ գե-
տակաւ նորին, որ ՚ի բանից աստի ստեփ. օրպել. ՚ի գլ.
լձ. երևի լինել՚ի Խաղք Վաւառաի։ * Աստեղ (շահան-
դուխտ) ՚ի քաղաց սահմանն՝ երթայր ՚ի Ճանապարհն
յանբոյթ տեղիս . . . յորում էր փրթուած քարի մի ա-
հագին խորութեան, որ իբր յանդունդս հայէր՝ հանդիպ
մեծի հայրապետանոցին Տաթևոյ։ Ի՞նչ ստորև. * Ի՞նչ
՚ի սահմանս Խաղաց՝ ի գլուխ Վարիս ընդ որ անցանէ
Ճանապարհն։ Ա՞յս Վարդ է վերոյիշատակեալ քարն զոր
եդ հանդիպ տաթևոյ. և ՚ի բանիցն (որ ՚ի գլ. լեթ.)
երևի լինել՚ի վերջին սահմանս բաղաց։ * Ի՞նչ էր տեղին
(ասէ վասն տաթևոյ) հեռի յաւետնոյն հինից թէշտաեաց,
զի միջոց էր աշխարհին . . . և ամրացեալ՚ի մէջ երկուց
գահոյիցն Աիւնեաց և Խաղաց։ (1)։

Օ գեղեցկութեն գրից սորա այսպէս ստորագրէ օրպէ-
լեանն ՚ի գլ. լեթ. ուր ասէ. * Ի՞նչին և բնակեցան ա-
նտէն (՚ի տաթև) ՚ի գեղեցկավայր տեղւոջ, որ իբր ըզ-
բարձր գիտանոց հայի ընդ արևելս ՚ի բաղում գաւառս՝
հանդէպ լերանցն գիզափայտու՝ ուր բազմութիւնք ՚ոչ
վկայիցն հանգուցեալ կան, յոյժ առողջասուն։ Ի՞նչ

(1) ՚ի բանից վարդանայ աշ-
խարհագրի երևի լինել սահմանա-
կից արցախայ, զի գնէ զայն ՚ի
փոքր սիւնիս, որ մեզ Թուի լի-
նել արցախ, որպէս նշանակեա-
ցուք յիւրում տեղւոջ։ * Մեծ
սիւնիս (ասէ) և փոքր սիւնիս,
ուր կայ աթոռ Սատեկի առաքե-
լոյն՝ որ կոչի Տաթև։ Ո՛չ կարէ
լինել ըստ ամենայնի ՚ի փոքր սիւ-
նիս՝ այսինքն յարցախ, զի զառա-
թև այլուստ գիտեմք լինել ՚ի բուն
այսինքն ՚ի մեծ սիւնիս, ապա հարկ
է լինել ՚ի սահմանակցութեն անդ
սիւնեաց և արցախայ, կամեցեալ
զվարդան միաբանել ընդ այլս։
Սահմանակից արցախայ լինել
յայտ առնէ և ստեփ. օրպել. որ
զտաթև գնէ * Հանդէպ վերոյն դէ-
ղեցկոյս։ իսկ զդիզափայտ՝ վար-
դան աշխարհագիր սկնարկէ լինել
յարցախ։

վայրն հարթահատակ, շրջապատեալ բարձր և սուր լե-
բամբք իբր կարակնակերտ կիսաբոլոր. առաջոյ վանիցն՝
ձորք և խոխոջք խորագոյն յոյժ, ընդարձակագոյն և գե-
դեցիկ, ընդ որ անցանէ ահագին դղրդմամբ գետն
Արտասն. և ձորն այն լի այգեստանօք, և դրախտացեալ
զանազան բուրաստանօք: Այլ եր ի տեղին ի վերայ բարձ-
րագոյն քարին՝ եկեղեցի խրճին անտաշ վիմօք կրաշա-
ղախ ձուլեալ յոյժ ի հին ժամանակաց՝ յաւուրց անտի
սրբոյն Գրիգորի և սահակայ, և տակաւ կործանեալք մինչև ի
ձգնութիւնք բնակիչն ի նմա ||:

Յետ ժամանակաց այս մենաստան՝ որ եր անշուք, եղև
աթոռ մեծապատկառին սիւնեաց. այլ թէ յորմէ ժամա-
նակի եղև առաջին բնականաբն նոցա յայսմ տեղւոջ,
* Այլ ծանեայ (ասէ սարեփ. ի գլ. լԹ.) միայն (ի ժա-
մանակաց) ՚ռն գէորգայ (սիւնեաց եպիսկոպոսի, որ եր
ի սկիզբն լԹ. դարուն.) և այսր՝ պատմեցի, և կացի
ծանօթ առնոյն որպիսութեանց նոցա: Այլ զառաջինն
(ասէ) ոչ գիտեմ, զի ոչ գոյր յիշատակ ինչ. բայց գի-
տեմ, զի բազում ժամանակաք բնակեալ էին անդ ||:
Այսմանէ գլուցաք երկարագոյնս ի ներածութեան նա-
խնդիս. տես անդ:

Ի գալն ի տաճիկ եպիսկոպոսաց զառաջինն՝ բերին ըն
խրեանց բազմանդ նշխարաց սրբոց, զորս Թուխ օրպէլեանն
ի գլ. լԹ. ուր ասէ. * Այս որդի խնդրեաց յիշխանացն՝
եպիսկոպոսն սիւնեաց զտեղիս զայս, եկին և բնակեցան
ի սմա. բերին և զծածամուխ սբ նշանն՝ որ եր ի կենա-
րծր փայտէն, բերեալ ի յունական աշխարհէն. և ըն-
ձեռեալ եպիսկոպոսացն սիւնեաց ի պահպանութիւն վիճա-
կելոցս սոցա առաջին իշխանացն, և հանդուցին ի սբ
եկեղեցոյս: Այդին և աստ զծածկեալ խաչն բարկենեան՝
որ ի վաստակս որդւոց բարկայ որդւոյն անդրկայ կազ-
մեալ եր յարծաթոյ ի չափ հասակի առն միոյ. և ունէր
յինքեան մասն ի փրկական փայտէն. բերին զնշխարս
առաքելականս և հայրապետականս ի գլխաւոր և յե-
րեւելի սբոյն՝ զորս հաւաքեալ էին անթիւ բազմութեամբ
յիշխանացն՝ որք ընդ սբոյն գրիգորի և ընդ սբոյն ներսիսի
գնացին ի կեսարիայ և ի մեծն հռոմ, և յայլև այլ ժա-
մանակս՝ որք բազում փափագանօք ժողովեալ էին: Ընդ
որս և եր նշխար մեծին յովհաննու, և ստեփաննոսի նա-
խավկային, և ժա. առաքելոցն, և սբոյն գրիգորի, և ա-
սբոյն հռիփսիմեայ նոյն մարիամայ, և այլ բազում որոց

ձէ գոյր Թիւ, եւս և .. հերք սրբուհոյ ՝ուծաճնին. զայս ամենայն բերեալ հանգուցին ՝ի ՝որ եկեղեցւոջ. և կազ մեցին զսա փարթամ դանձարան ՝ուծուԹե ։ ՝ի մկՀ այս չափ նշխարաց ՝որց՝ հռչակաւոր գոլով ՝որ խաչն՝ յանուն նորին անուանեն զտաճիկ և ՝ի կտակս և ՝ի վէՀուս ։

Ա.յս մենաստան Թէպէտ եղև երեւելի յետ լինելոյ աԹոռ եպիսկոպոսացն սիւնեաց, այլ սահմանն նորա էր փոքր, և ընդարձակեցաւ ՝ի ժամանակս դաւԹի սիւնեաց եպիսկոպոսի ՝ի սկիզբն Թ. դարուն. * Յոյժ նեղ և անձուկ էր (ասէ տեփ. ՝ի նոյն լԹ. գլ.) սահմանն վանենցն ՏաԹեւոյ, և ձէ էր բաւական պետութեան աԹոռոյն. ապա հայցեալ ՝ոն դաւԹի յայծապատ ՝ոն փիլիպէէ իշխանէն սիւնեաց՝ ընդ գնով տալ զմերձակայ ագարակսն, զոր և լուեալ կատարէ զինդիրն. և առեալ ժՀ. դրամ՝ որ լինի մեզ ոմի վեց դանկ, և տայ ՝ի ձեռս նորա զ՝ՅէՀդիւղ, և զ՝ԵրդիանԵրէէ՝ որ ՝ի վերոյ վանիցն ... ազատ յաւիտեան աշխարհական հարկաց. և գրեցին կտակ յաւետեական, և կնքեցին իւրեանց մատանեաւ, որ ունէր օրինակ զայս ։

» Ա.յս տէր դաւԹի շնորհօքն ՝ոյ սիւնեաց եպիսկոպոս՝ ՝ի մՃզ. ԹվականԵս հայոց, գնեցի զ՝ագԹիւ ՝ի ՝ոն փիլիպէէ՝ վաստակայ որդւոյ սիւնեաց ՝ոն, իւր սահմանօքն ևերամբ և դաշտիւ, զոստին, և զ՝ՋրբԹին, և զարօտ երկիր, զարտ և զմարգ ։

» Ա.յս այս են սահմանք. յարևելից կողմանէ՝ ուղեկիցքդ որ ՝ի Ա՝ոթծեայ և ՝ի Ա՝ներդիանԵրէէյ ՝ի Վ՝ետաձաքան, և անտի ՝ի Ա՝ւտ՝ոդ՝ որ ՝ի Շ ԽնափԵխ. և անտի Ջ՝ՐնափաՀ ՅՈԵրՁոյ գառաւ, և Ա՝Հաձեռւոդ ՝ի ՈՂ ԱրգԹանոյ Ա՝ՈրգԹոռն, և անտի ՅՈ՝ԶյՀոակաւար. և յարևմտից կողմանէ՝ Ա ՀրաՀ Հոդդ Ա՝ՀաձաբաՀդ. և ՝ի հարաւոյ կողմանէ Ա՝ոթծէ, որ ՝ի ՀանձաւարՀդ ՝ի Ա՝ոՀդ ելանէ ձորովդ ՝ի վայր .. և ՝ի վեր ՝ի սարն վանից Ջորոձեռւոդ ։ Ա.յս տէր փիլիպէ առի զդանձս ՝ի տէր դաւԹէ սիւնեաց եպիսկոպոսէ Ժո. դրամ, և ասպատարեցի զդիւղդ ՝ի ՝որ խաչդ այդ սահմանադ որ ՝ի վՃհուս գրեալ է ... ետու ես տէր փիլիպէ զ՝ԵրդիանԵրէոյ զկնդ առ նա՝ քարին փոխան. և զկնդ ՝որ եկեղեցոյդ ... Ո՝ԵրանահդղՁ ՝ի վայր ՝ի գետդ, և ՝ի վեր ՝ի կատարն ... ՝ի գաւակ ։

Ա.յս փիլիպէ քանզի կամէր փարԹամացուցանել ըզ վանս ՏաԹեւոյ, որպէս գրէ անգէն տեփ. օրակէ, յետ եօԹն ամաց ետ ՝ի պարգև նմին նաև զնոյն խոկ զդիւղն

Տաթէ՝ որ էր իւր սեպհական, հինգեալ զիր պայմանի զայս օրինակ. *Յերկերիւք և իննսուն երեք թվականուն թէ հայոց՝ որպէս կամ եղև ինձ փիլիպէի որդոյ վասակայ սիւնեաց տէր՝ եւտու զՏաթէ վանն իմ հոգեւոյս ի ձեզ ի տէր դաւիթ ... առենայն սահմանօք լերամբ և դաշտիւ, այգօք և ընկոյզօք, մարգագետնօք և ջաղացանաւ, և որ ինչ համօրէն սահմանք են. և մի որ իշխեսցէ յետ իմ անցման՝ իմ որդիք կամ եղբարք, կամ այլ խոստակիցքն հեռացուցանել զայդ գիւղդ յայդ եկեղեցոյդ և ի նոր խաչէդ ||։

Ի վերայ այսոցիկ պարգեւաց՝ յաւել շինել ի տաթէ և եկեղեցի. * Ը ինէ (ասէ օրպէլ. ի նոյն լե. գլ.) եկեղեցի մի գեղեցկաշէն մերձ հին եկեղեցոյն ի հարաւոյ կողմանէ՝ յանուն նոր լուսաւորչին գրիգորի, և ինքն վախճանեալ դնի անդէն ի գրանն ... և այս լինէր ոճիր. թվա կանին հայոց ||։

Յետ փիլիպէի զարգարեաց զՏաթէ սողոմոն եպիս կոպոս սիւնեաց՝ (որ ի ժամանակս զաքարիայ կաթուղիկոսի.) զանազան կարգօք, ստացուածովք, և պարգեւելով զոր խաչափայտն կազմեալ յոսկոյ, և յեռեալ ականջք և մարգարտով, զորոյ գիշատակագիրն բերէ ստեփ. օրպէլ. ի գլ. իա. * Ը նորհնուն այ այս իմ ձեռինս գիր է՝ ես սողոմոնի սիւնեաց եպիսկոպոսի, որ յառաջ ժամանակաց գ[illegible]ոյ կոչեցեալ՝ ես գհորդայ և զոր նշանն հոգեւորական արարեալ, գինչ պատճառաւք և էր՝ այլ յափշտակեալ էին. յորժամ յայնմըդեցայ ի զոր յաթոռս՝ ստացայ ինձ գծնընդեան զոր նշանս յաղագս տառապեալ հոգւոյս իմոյ փրկութեան. և առի զՏաթէ ի հրաշատայ սիւնեաց ես ի գրիգորյ որդւոյն ... գնեցի ընդ հաղար և երկերիւր դրամի, և զոր նշանիս հայրենիք առաքել ... Սահման Վարագայ այս են. որ իւր ձեռնադիրդ գրած են, և Ղեբինն շինեն առաջ և էր գ. դուռ երկիր։ Ես արդ՝ Յովհաննէս տէրքս գրիգոր վասակայ որդի վկայ եմ ես ... ես գրիգոր երէց ի Տաղաւայ ... աբխազոմ ի Վերդկանէրէչոյ ... մրջնիկ ի Վարագայ՝ վկայենք ... Արդ՝ որ այս հաստատուն վճռոյս Վարատափոյ և Ղնոյն (այսինքն է Ղըզնոյն) հակառակ ելանէ, ի յոյ և ի զոր նշանդ գատապարտեալ եղիցի ... ՌԼ. Թվիս է ||։

Ուստ յայնմըդեն սողոմոնի յովհաննէս եպիսկոպոս սիւնեաց զհին եկեղեցին Տաթևոյ՝ որ էր փոքր և խախտեալ ևս ի բազում ժամանակաց նաև ի շարժմանէ՝ խորհեր

նորոգ կառուցանել, ունպատշաճ համարելով այնպիսի հայրապետանոցի՝ Լուսոյ ճեմ խոհուչիկ եկեղեցի մնել ըստ ասելոյ ստեփ. օրպել. ՚ի գլ. խա։ Այլ մինչդեռ տարաբաղձեալ կայր վասն ծախուց, հրեշտակ ՚ին ասէ՝ երեքիլին տեսլեամբ քաջալերեաց՝ ձեռն արկանել և շինել յաւնուն ՚որջ առաքելոցն պետրոսի և պօղոսի, գծեալ նաև զտեղին։ Օ այն լուեալ և տեսեալ բազմութիւն խնդացն սիրնեաց, քացին զդանձս իւրեանց ՚ի ծախս սիրոյ տոյից, և այնպէս լցացուցին ձեռամբ նորին յովհաննու եպիսկոպոսի, որ ՚ի վերայ եկեղեցւոյն գրեաց զվիշատակարան զայս. *Յամի յորում թվականն հայոց չկար էր, և զատիկն ՚ի նաւասարդի իջ. Ես տէր յովհաննէս որ երկրորդ կարգեցայ եպիսկոպոս սիւնեաց՝ զկին ՚ին սողոմոնի՝ արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս. և այսպէս կատարեալ զեկեղեցին կամար երկնանման կմբէթայարկ ձեմարան իմն հրեշտակաց և քաւարան մարդկան. ՚ի տաշածոյ վիմաց և ՚ի քերածոյ քարանց գաղատոսաչէն իմն յարմարեալ ակնախտիղ տեսողաց, ՚ի ձ. կանգնոյ բարձրութիւն երկնաձեղուն քարակարկառ չարկին. և այս ՚ի խորհուրդ ը զլեառնոր առաքելոցն պետրոսի և պօղոսի, յոր բոց նշխարացս եդան ՚ի ներքոյ սեանցս, և բազմութիւնք ՚որց նշխարաց անդ գումարելոցն առաքելոց, հայրապետաց, մարտիրոսաց՝ եդան ՚ի հիմունս և յանկիւնս եկեղեցւոյն ‖։

Այլ չաւելու ստեփաննոս օրպել. *Ահա զայս իսկ աւարտեալ զամն ՌՀԵՏԱՍԱՆ՝ կանգնէ և մերձ եկեղեցւոյն հանդէպ գրանն հարաւու՝ սիւն մի զարմանալի չանուն ՚որչ երրորդութեանն ՚ի մանր քարանց պատուածեալ ՚ի չափ ձ. կանգնոյ. պարսպէ և զեկեղեցին սրբաքարով. և ապա զվանան կոփածոյ քարամբք։ Այլ զի էր նիստ տեղոյն անբարբառ, հարեալ զվանձրութիւն գետոյն (գեհենոյն,) և խորութիւն վայրն բաւթարացուցանէ կրաշաղաղ որմիւք։ Շինէ և զգաղտանոցս գեհենախորս ՚ի ներքոյ վանիցն ծածուկ ընդ երկրաւ՝ բազում տունս և դարանս ՚ի պետս

եկեղեցոյն ։ և հարթեալ հաւասարեալ զվայրն, և սրբաշէն տրապիզս և գործատներս, համբարանոցս և սրբատունս և պրանոցս. և ի դրան եկեղեցոյն տուն աղօթից և տեղի դամբանի իշխանաց և եպիսկոպոսաց սիւնեաց ։ Ընդ այս առնոյն կազմած յօրինուածի մեծի տան հայրապետութեանն հոգացեալ և աւարտեալ սրբոյ ցանկալի հեռաւորաց և մերձաւորաց բոլոր յոստանիս աշխարհի ։

Ի նահապետս նորա ժողովեցան սմբատ թագաւոր պլտովք իշխանօք, յովհաննէս կաթողիկոս յայրարդ մաշտոցի, դաւիթ ա. թագաւոր վասպուրականի իւրովք իշխանօք և եպիսկոպոսօք, սիմէոն աղուանից կաթողիկոս իւրովք եպիսկոպոսօք և իշխանօք, և բազմութիւն իշխանացն սիւնեաց ։ Յայնմ ժամանակի պայծառացաւ ոչ միայն շինուածովք, այլև լի էր՝ որպէս ասէ անդէն օր պէլեհանն, * Նովամտոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ձոխ էր և վարժարան դպրոցացն վարդապետաց կան կրթուածին. նաև արուեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք ։ (1)։

Այլ յետ անդ ՃԻ. դարուն խմայելացիք զեկեղեցին կործանեցին, և զվանան տաթևոյ այրեցին, զորս վերատեսին շինեաց միւս յովհաննէս եպիսկոպոս սիւնեաց, զորմէ պատմէ ստեփ. օրպել. ի գլ. ԺԸ։ Ապա ի միջին անդ ԺԲ. դարուն՝ սենեքարիմ Է. Թագաւոր բաղաց, և քոյր իւր շահանդուխտ՝ * Խաղում պարգևս և ժառանգութիս ընծայեցին ի տէր մայրաքաղաք աթոռն ի Տաթև ։ ըստ որում գրէ օրպելեանն ի գլ. ծԶ ։

Այս ի ԺԲ. դարուն սմբատ օրպէլեան նորոգեաց զաւերեալն զՏաթև. իսկ տարսահանն օրպելեան նորոգեաց զեկեղեցի նորին, առ որոյ դրամբ Թաղեցաւ և այուզ խաթունն կին տարսահանի՝ ըստ որում պատմի ի պատմ. օրպելեանց ի գլ. Է. և ը. * Այս՝ (այսինքն տարսահանն) զարդարեաց զմեծ եկեղեցին Տաթևայ ի սպաս և ի ըզգեստս պեղեցիկս. և ետ ի տէր եկեղեցին զվաղնջուց յափշտակեալ ժառանգութիւն, զ[illegible] իւր սահմանաւն, զ[illegible] իւր սահմանաւն, զ[illegible] իւր

(1) ի յիշատակարանի լուծման տաթև եկեղեցի տէր ածածնի. զի դրոց տաթևացւոյն՝ որ է հարա- ասէ. * ի տէր ուխտս Սուրբ տաթևի տէր զատ ձեռագիր թումայի մեծոփեց- առաքելոյս, և Սբ ածածնիս, և ւոյ գրեալ ի պճե, յիշատակի ի Սբ գրիգորիս ։

ձեռատունկ այգին ՚ի Խոտաքեա, և զՐէնէվանս իւր սահմանաւն, և գրէ ինքեան զարձան յիշատակի ՚ի վերայ սեանն հարաւայնոյ՝ որ ունէր օրինակ զայս։

» Այս գիր յիշատակի և արձան անջնջելի՝ ես իմ Յարսապետիս իշխանաց իշխանի որդւոյ մեծի լեսպարտի՝ եղբօր ամբատայ մեծի իշխանի և կողմնակալի այսր նահանգի ... ՚ի գրանէն քարգուշատայ՝ մինչև յաւհմանն քննոյ. միա բանեցայ Տաթեւայ ՚ըզ առաքելոցս. և ետու զիմ հոգւոյս սման ՚ի յիմ սեպհական ուխտս ՚ի ՚ըզ եկեղեցիսն գիւղս ՚ը. զոր լուեալ էաք ՚ի հին ժամանակաց՝ ժառանգութիւն լեալ սորին. ՚ի Ը հնէր զՅոտան աւան սահմանօք իւրովք՝ լերամբ և դաշտիւ. ՚ի Խոտաքեա զմեր ձեռատունկ այգին. և զՅուր իւր սահմանաւն՝ լերամբ և դաշտիւ. զՀաժիս իւր սահմանաւն, զորոյ զկէսն գանձաք գին էի արարեալ, և ՚ի Խորտի զՐէթիխանս իւր սահմանսն ... Այժ այսմ վճռոյս է վկայ տէր սարգիս նորաւանից եպիսկոպոսն ... Այս տաբսակիս իմ ձեռագրովս հաստատեցի զընծայս ... ‖ ։ (1)

ՁՈՐՔ, ԿԱՄ ԿԱՊԱՆ ։

Ոյսմանէ այսպէս գրէ ստեփ. օրպէլ. ՚ի գլ. ՃԽ. * Տանէերորդ (գաւառ սիւնեաց՝ է) Ձորք գաւառ. ուր նի զանմատոյց ամուրն Խաղաբերդ, և այժմ կոչի Կապան ‖ ։ Այն ամուրն Խաղաբերդ՝ կոչեցաւ Կապան, զի զայս ՚ի կա. գլ. յայտնի որոշէ ՚ի Կապանէն. այլ Ձորք գաւառ, որ յայտ է թէ սակս ունելոյն նեղ և անճուկ կիրճն՝ կոչեցաւ ՚ի վերջնոյ Կապան, որ է անուն սովորական առ յետագայ պատմագիրս ։

Արդ՝ թէպէտ յայս բան զԽաղաբերդն դնէ ՚ի Կապան, կամ ՚ի Ձորք գաւառի, սակայն ստորև յայտնի դնէ լինել յայնմ վայրի՝ յորոյ անուն շրջակայ սահմանն և գաւառն կոչեցաւ Խաղաց գաւառ, որով և Խաղաբերդ լինի ՚ի Խաղ՝ գէթ ՚ի նախնի ժամանակս. որպէս

(1) Ա՚ի մէջն անդ ժէ. գաւրան՝ որպէս գրէ ընդարձակօրէն սամուէլի ՚ի ՃՁդ. ՚Տաթեւու ա. նապատն մեծ շարժեցաւ ՚ի տէր. զոհէն ՃՐ. վտաւանաւ. յետոյ յայ. կոբ կաթուղիկոս բերեալ զմիա. բանն ՚ի ներքոյ Տաթեւու, և անդ հիմնարկեաց զանապատն և զեկեղեցին. բայց յետոյ աւերեաց զայն արիստակէս վարդապետն ‖ ։

և անուանց մերձաւորութիւն քաղաքին և գաւառ[ին]՝ զնոյն յայտ առնէ [1]։ Այլ որպէս ինձ թուի՝ ի բանից օրպէլեանն ի գլ. կա. Կապան կոչեր սովորաբար յայնմ վերջին ժամանակի [2] ոչ միայն Զորք գաւառ, այլ նաև Կաղք գեղ ըստ մասին. իսկ իշխանութիւնն կամ թագաւորութիւն որ ձգէր ի Կաղս և ի Կապան՝ յաճախակի կոչեր յա նուն Կաղաց. վասն որոյ գրէ յայն գլուխ. * Յամի յո րում էր Թվականն հայոց շնբ. եղև սկիզբն աւերածոյ Կապան գաւառի, և անուր աշխարհին Կաղաց, և սպա ռեալց տէրութիւնն նոցա Թագաւորաց և իշխանաց ։ Ուր Կաւառ կոչէ զկապան, և Աշխարհ զԿաղս վասն տէ րութեան, և զերկոսինն իբր մի համարի. քանզի և երբեմն մի և նոյն իշխան տիրէր երկոցունց՝ որպէս դնէ նոյն ստեփ. օրպէլ. ի գլ. լը. * Պայծառանայր և յայնմ աւուրս (յաւուրս նոր ոստիկանին, և շահանշահ աշոտոյ արքային,) համագգի սոցին իշխանացս ի սիսական տոհմէ՝ ձագիկ մեծ իշխանն աւելացաւ բարեպաշտութիւք, որ ունէր ի բաժնի զԿաղաց գաւառն և զկապան քաղաք ։ Տէս և ստորև զբան ստեփ. օրպէլ։

Կապան։ Այրաքաղաք բերդաւոր յիշխանութիւն բա ղաց, զոր հաւ չորթման պարսիկ, առ ի հանել զքէն վրէ ժուն՝ զոր ունէր ընդ սենեքարիմ Թագաւորին բաղաց. * Ճ. Թվին (ասէ օրպէլ. ի գլ. կա) օր մի յանկար ծակի մինչ կային յանհոգութիւն քաղաքացիքն, մատնեաց տէր զանաւիկն ի մարդկանէ զկապան քաղաք, և անի ծեալն չորթման վասն քինոյն իւր յերդակարծում ժամու հեղաւ ի վերայ քաղաքին. նախ բազում. մարդիկ սորա մուտք և քարաձնացք ելին ի գլուխ ապառաժուտ լերինն և իջին ընդ. հեղեղատին ի քաղաքն, զի այն վայր ոչ էր պարսպափակ, վասն անհնարին գոլ մտից մարդկան, և սկսան կոտորել ... և ապա բացին զդուռն քաղաքին՝ որ ի խնծորոյ գլուխ հայէր, և մտին զօրքն ամենայն, և սատակեցին զամենեսեան առ հասարակ, բայց ի բերդն ոչինչ կարացին ձեռնարկել. այլ գնացին անդրէն ի տե ղի իւրեանց ։ Կապա այս իսկ եղև սկիզբն աւերման աշ

(1) Տէս զբանս ստեփ. ի վե րոյ ի ստորագրութիւն Բաղաբեր դոյն։

(2) Ի գիրս ստեփ. օրպէլեան սահմանք գաւառաց ուրեք ուրեք եգեալ կան ի յետագայից ըստ վիճակի վերջին ժամանակի. ըստ այսմ է՝ ուր զկախաճաւան գնէ մայրաքաղաք սիւնեաց. վասն որոյ և ոչինչ առաք յայնմանէ վկայու թիւն յորոշումն տեղեաց։

խարհին, և օրըստօրէ սկսաւ նուազիլ և պակասիլ իշ խանութիւն այն՝ որ ունէր ընդ ձեռամբ բերդս ինդ, և անուանիքն ի նոցանէ բժ. և վանորայս իը. և գեօղս ձն, և մայրաքաղաք զԱպահունն. այս Խաղաց իշխանու թիւն է ||:

Ապտաբէերդ: Ա արդան դնէ ի Պասանին՝ յասելն. *Ի սոյն ժամանակի առան և ինացեալ դղեակք Պասա նին յայլազգիս՝ Կրճոյ, և Կնէղ, և Ապտաբէերդ ||: Իր ստեփ. օրպէլ. ի գլ. կա. գրի Ապտաբէերդ, զոր ստորև կոչէ Կբերդ Ապտաբ: Խաւա զայն ամիր Հարունն ի չՀե:

Կնէղ: Ա արդան դնէ և զսոյն ի Պասանին, զորոյ զբանս եդաք ի վերոյ ի Պաքաւաբէերդն: Յիշէ զԿնէղն և ստեփ. օրպէլ ի գլ. կբ:

ԱՐԵՒԻՔ:

Ա յսպէս գրի յերկուս ձեռագիրս աշխարհագր". խոր բենացւոյն, նաև առ ստեփ. օրպէլ. ի գլ. ջ. * Կտնէ որդ (գաւառ սիւնեաց՝ է) Ա րևելիք գաւառ, որ այժմ կոչի Տաշտուն և Ա ղէղ ||: Յորմէ յայտ է թէ վերնական գրի ի տպագրեալն աշխարհագր". խորէն. Ա րեւելք, և առ Թովմայի կիլիկեցւոյ՝ Ա րեւելէ:

Ա էրջին առուսին սորա եղև ի Թուաւականիս չՀե (յամի տն 1126.) որպէս դնէ օրպէլեանն ի գլ. կա. * Ի չՀե Թվականին՝ էկն ամիր Հարունն, և բնաջինջ արար զտուն Պասանին, և վ Ա րևելիք գաւառ ||:

Ա ղէղէ: Յիշատակէ ստեփ. օրպէլ. նաև ի կա. գլ. զոր առին ազգ Թուրքաց ի ոջ. Թուաւականիս (յամի 1157): Ն րուելի գոլով Ա ղէղի՝ յանուն սորա կոչեցաւ առ յե տագայս Ա րևելիք գաւառն, որպէս և եդ ի վերոյ օրպէ լեանն. որ և կայ մինչև ցայսօր, որպէս և գիւղն Խաշտուն: Տե՛ս և ի նոր Հայաստան Թղթ. 272:

ԿՈՒՍԱԿԱՆ, կամ ԿՈՎԱԿԱՆ:

Յ երկուս ձեռագիրս աշխարհագր". խորէն". գրի Կո ւսական. առ ստեփ. օրպէլ. յամենայն ուրեք Կո վական. առ Թովմայի կիլիկեցւոյ՝ Կոսական. վասն որոյ վերնական գրչաց է Ակսական, որ գրի ի տպագրեալ աշխարհագր".

խորհեն", և ՚ի միում ձեռագրի, զի անունս Միսական ՚ի գործ ածի փոխանակ նահանգին սիւնեաց, որպէս ցուցաք ՚ի ներածութեան նահանգիս վկայուբ մատենագրաց։ Յորս յաւել և զայս քաջայայտ զան ստեփ. օրպել. ՚ի գլ. ՟ը. ուր յետ տալոյ զընդհանուր տեղեկութեան համօրէն սիւնեաց, և թուելոյ զամենայն գաւառս նորա, ասէ. * Նա արդ՝ այս այսքան տեղեկութեանց քեզ՝ բերմանց, պարարտութեանց, և սահմանաց, և բերդից, և գաւառաց Միսական աշխարհիս։ Ուր յայտ է թէ՝ Միսական աշխարհ ասելով իմանայ առհասարակ զՄիւնիս. և թէ ՚ի գլ. ԺԵ. Գաւառ կոչէ՝ յասելն, թէ յաւուրս մեսրոպայ՝ * Զանդն հեթանոսական դեռևս զօղեալ կայր ուրեք ուրեք ՚ի գաւառն Միսական և ՚ի Գողթն։ Ընդհանօր ևս իմանայ զնահանգն կամ զաշխարհն սիւնեաց, զի ստորև ասէ վասն մեսրոպայ. * Սկսեալ ՚ի քարոզութենէ .. ՚ի հաստատ աճել զաշխարհն Միսական։

Այժմ կոչի այս գաւառ Արփա, որպէս վկայէ օրպէլեանն ՚ի գլ. ՟ը. յասելն. * Ալեթորդ (գաւառ սիւնեաց՝ է) կողմական գաւառ՝ այժմ Արփամ կոչի։ Նոյ տեղի մինչև ցայսօր։ Տես ՚ի նոր հայաստան թղթ. 271։

Արփա։ Նոյնպես անուն բերդի՝ զոր ՚ի գլ. ՟ը. օրպէլեանն գասէ ընդ ամուր բերդս սիւնեաց, և յիշատակէ նաև ՚ի կա. գլ. որպէս և այլք. յայտնեալ և գաւառն կողմական՝ զկնի կոչեցեալ յայս անուն, զոր ՚ի գործ ածին մինչև ցայսօր, և հնչէն ոմանք Աղարփա, յորոյ ընդ սահմանն անցանելն վտակքն երասխայ՝ անուանեալք Արեղ ըայ գետ, և Ձաիլդրու գետ։

Ալարդան զԱրփամ գասէ ընդ դղեակս կապանին, ուր զկապանն գուցէ առնու ընդարձակ առումբ նաև փոխանակ կողմական գաւառին։ Տես զբանս նորա ՚ի վերոյ ՚ի կաքաւաբերդ։

Արշակիկ։ Կոչէ՝ զոր հրահատ իշխան սիւնեաց էտ ՚ի պարգև ՚ոչ խաչին տաճկաց, որպէս պատմէ օրպէլեանն ՚ի գլ. լե. և բերէ զայս պայմանագիրը նորին՝ յասելն. * Կապա տեսեալ և զայս մեծ իշխանին հրահատայ՝ սահակ կայ որդոյ, և գրիգորի, և արամանայ եղբօր հայկազնի՝ ՚ի նոյն սիսական տոհմէ, որ ունէր ՚ի բաժնի ժառանգու թեամբ զկողմական գաւառ, և զԲաղանդ[1]. մոլեալ զբա բիոք մոլութեն, և եկեալ առ տէր դաւիթ՝ և յիւրոց

(1) Իմանայ սովաւ զԲաբանդն, յոր անուն կոչի Աղահեճ գաւառ։

սեփական հայրենեացն ընծայէ զգեղն Աորաշխիկ ի Կովսական գաւառի, և զրէ նամակ վճռի անխախտ պայմանաւ՝ որ է այսպէս. Ի յերկերիւր լինասուն և երեք թուականիս հայոց, ի ժամանակս ճգապատիս և հոգևոր հաւր դաւթի սիւնեաց եպիսկոպոսի, ես հրահատ .. զճգընկալ եղբ խաչդ ասպաւէն լինէ արարի, և փոխանակ որդեաց. և գիւղ մի ի Կովսական գաւառի Աորաշխիկ անուն ... ասպատուարեցի իւր բոլոր սահմանօք, լերամբ և դաշտաւ ջերմաւ և ցրտով, ծառով և տնկով. ոլոր սահմանք են այսոքիք. յարևելից կողմանէ՝ Տրօսանոյ սահման, և ի հիւսիսոյ՝ Ընդբէ, և յարևմտից՝ Ծէ, և Ալդաստաղ, ի հարաւոյ՝ Ալբէն, և Ռէբդի։

Աորաշէբդի անուն գիւղ բերդաւոր, գտանի մինչև ցայժմ առ երասխաւ, ուչ այնչափ ինչ հեռի ի Շ ոռոթայ և յԱլբդովարայ։ Ալ ստեփ. օրպել. ի գլ. խա. յիշի Աորեայ ջնն՝ որ թերևս է նոյն ընդ սմա. * Ոզդի գոլ (ասէ) առն միոյ այրոյ և մուրացիկ աղքատի ի Աորեայ շինոյն ||։

Ռէխ։ Գիւղ՝ որ յառաջագոյն սեփական էր ջոխ խաչին տաթևոյ. իսկ ջևանչէր իշխան զայն առեալ՝ փոխանակ նորին ետ զԱրտաս գիւղ. * Յայսմ ժամանակի (այսինքն ի 877. ասէ ստեփ. օրպել. ի գլ. խս.) իշխան մի սիսական ջևանչէր անուն, որդի սահակայ սիւնեաց տեառն՝ գայ առ տէր սողոմոն (սիւնեաց եպիսկոպոս), և խնդրէ ի նմանէ զգիւղն Ռէխ որ ի Կովսական գաւառի, որ էր սեփական ժառանգութէ ջոխ խաչին, և եպիսկոպոսացն ի հին ժամանակաց ||։ Ասէ գիւղ լինէ ստորև գրի Ռէղ, և կոչի շէն. * Ամ եղև ջևանչէրի .. փոխանակել ընդ Ռէղայ շինոյն՝ որ ի Կովսական գաւառի էր. և շինն քնական ջոխ խաչին, և հոգևոր տերանցն սիւնեաց եպիսկոպոսացն ժառանգութէ էր լեալ||։ Մինչև ցայժմ կոչ Ռէխ գիւղ ի Կայքան։

Տեղիք սիւնեաց՝ որոց գաւառք անծանօթ։

Այծ. Ընդ Աղբատ, և Ասան։ Կան ի սիւնիս, զի ստեփ. օրպել. ի գլ. ժբ. պատմէ թէ հակառակութէն եղև ի մէջ սուգա, թէ ում անկ էցէ նախագահ լինել ի մէջ սիւնեաց, զորոց և զկարգ ընդ այլ տեղեաց որոշեցին, այլ զամենեսին զկնի Շ ադատոյ. * Ընդ Այծ, և ընդ Աղբ-

տու՝ սաստիկ հակառակութեի եղև (ասէ), իսկ հնազիւ տակը Յղիտուացեաց՝ զՀայծնեցեացն հաստատեցին ի վրայն աշխարհին լինել պանդուխտ, և նժդեհ գոլ առ նայն սիւնեաց։ Եւ դարձեալ Շ ամի և Յղիտուայ հրաւիրեաւ՝ զկնի Շ աղատոյ զնախնադաստութե ունել զվեհ հազոյին զերկրորդականն զպատիւ, և զքաղցրդ (այս էինքն՝ զքառորդ) նախոդաստութե Ռուան գիւղաքաղաքին Ո՝որենոյ ընկալեալ... և ապա զհինգերորդ զդահն հրամայեցաւ Հայծնեցեաց ունել։ Այծ, գուցէ նոյն է ընդ Ո-ւթ աւղոյ՝ որ ի վայոյ ձորն։

Նրաժոնա։ Յոպէս կոչէ յոհաննէս կաթուղիկոս՝ յաւ սեէն վասն սահակայ սիւնոյ եղբօր գրիգորի սուփանայ. * Գնեն զնա ի քնարանին առ դուրս ձեռակերտ եկեղեցոյն իւրոյ ի գեօղն Նրաժոնս։ Իսկ առ ստեփ. օրպել. ի գլ. լէ. գրի՝ Նրաժոնս, ուր պատմէ զշինուածն արարեալ ի նորին սահակայ. * Իսկ եղբայր գրիգորի (սուփանայ՝ ասէ) սահակ՝ շինէ զպանծալի յարկն մեծաձախ յօրինուածովք ի Նրաժոնս գիւղ, և կարգէ ի նմա բազմութե քահանայից՝ յորոց դրան և ինքն հանդուցեալ կայ ի տապանի։ Ա.յս ի լը. գլ. գրի Նրաժոնս, յասելն վասն մարմնոյ վերոգրեալ սահակայ. * Գնէ ի քնարանի յիւրումն ձեռակերտին՝ առ դրանն մեծ եկեղեցոյն՝ որ ի Նրաժոնս։

Ձուսի լինել ի գեղալքուսի՝ յորում տիրէին սահակ և եղբարք նորին. յայր սակս և ի նմա որ էր իւրեանց սահմանն՝ սովորաբար առնէին շինուածն, և թաղէին, և ոչ ի սահմանս օտարաց։

Ալ Այմն։ Շ ինեաց զայս գրիգոր սուփան, ուր և թաղեցաւ. զորմէ ասէ յոհաննէս կաթուղիկոս. * Ցարեալ թաղեալ գնա ի ձեռակերտ իւր ի սրբարանի Ալ սիմնեայ։ Ոնոյն գրէ և ստեփ. օրպել. ի գլ. լը. * Գնէն ի տապանի յիւրումն ձեռակերտ սրբարանին Ալ Շ իմնեայ։ Ձուսի լինել ի գեղալքուսի՝ սակս վերոգրեալ պատճառի։

Ա՝ճառակոչոյ։ Ձնիշատակի ի պատմ. օրպելեանց ի գլ. ը. զորոյ զբանս եդաք ի վերոյ ի գեղալքուսի ի Գառնակեր գիւղ։ Ա՝երձ յայս անուն գտանեմք զՈ՝ճ շէնն ի Նաղաց գաւառի. զորմէ տես անդ։

Նակրպան։ Գիւղաքաղաք զոր շինեաց բաբիկ իշխան սիւնեաց, յաւուրս ը. խոսրովայ արքայի։ * Նէ անցեալ ընդ երասխ գետ՝ շինէ գիւղաքաղաք մի՝ կոչելով զանուն

տեղոյն Ղակորզան, որ Թարգմանի՝ նախ քնա գործեալ (կորզեալ) առ ինքն յիւր Հայրենեացն ‖ : Աստե՛փ. օր. պէս. ՚ի գլ. ճ :

Շ ըրոաք : Խերդ զոր առին Թուրքք ՚ի Թուին ռաւ : Յիշէ ստեփ. օրպէլ. ՚ի գլ. կա :

Պ ոդոսբերդ : Յիշէ և զսոյն օրպէլեանն ՚ի գլ. ՟ը. ՚ի կարգս ամուր բերդից սիւնեաց, որ յայտ է Թէ յամդս կայ իշխանէ սիւնեաց շինեալ գոլով՝ զնորին բերէ և զանունն :

Հայրաբերդ : Ա՛այբի (Թերևս՝ Ա՛այբի) : Ա՛անանայ բերդ : Խորոյ բերդ : Յիշէ զսոսա օրպէլեանն ՚ի գլ. ՟ը. ընդ վերբոգրեալ ամուր բերդս սիւնեաց՝ յասելն, Թէ են ՚ի սիւնիս * Այլ այլ եւս ամուրք գովելիք, անվախ և անսասան ՚ի հնարից մարդկան ‖ : Այս ասա սկսանի Թուել զվերոգրեալսն :

Ա՛երջին եղեալն Թերևս է նոյն՝ որ ՚ի պատմ. օրպէլ. ՚ի գլ. է. յիշի Խորդենոյ սափման և Խորդենոյ բերդ. որպես և ՚ի գլ. ե. գրի վանն զաքարէ և իւանէ իշխանացն՝ Թէ Պ՚ոլն և Պ՚ևեանէս, Պ՚ոլոսն, Պ՚ոլոսայն, Պ՚ոլնէն : Խաչայայտ եւս ՚ի ստորև. * Պ՚ռնու զհարուածս (վիպարիտ) ՚ի ձա՛ նապարհի յանկարծագէպ նետից ՚ի գլուխ վերինն՝ որ է հանդէպ բերդին Խորդոյ, և եկեալ անկանի ՚ի բերդն Գոլշոյ վանից ‖ :

Յ ոյրաբերդ : Յիշատակի սա ՚ի խորագրի խը. գլ. ստեփ. օրպէլ. ուր աւերեցաւ ասի, և նզովք եդաւ այլ ոչ եւս շինելոյ. յիշատակի և ՚ի ՟ճ. գլ. այլ աղաւաղեալ ՚ի գրչէն :

Ա՛ետն : Ա՛ենարան անուանի՝ զոր յիշէ օրպէլեանն ՚ի գլ. լը. * Խարձին զնշխարս (ստեփանոսի սիւնեաց եպիս. կոպոսի,) և տանէին ՚ի Տը մենարանն՝ ՚ի լեառն Ա՛իռն Գոլեցեալ, որ պայծառանայր Հրնաւորամբք յայնմ ժա՛ մանակի՝ քան զսկնայն և զսկիւԹայն լեգիսլատոս ‖ :

Ա՛յն և այլ վանորայք բազումք՝ զորս ստեփ. օրպէլ. ՚ի գլ. կը. Թուէ կարգաւ, որք են.

Պ՚ապականէ վանս. յորոյ եկեղեցւոջ էր փոս ինչ փոքր ՚ի նշան հնիւնին՝ որ կայր անդէն նախ քան զշինուԹիւն. և իշխանքն սիւնեաց անդանօր շինեցին զայս եկեղեցի և զմենարան :

Ա՛աղարծին վանք [1] : Ա՛ըէցավանք : Ամք հին մշտապաշ

(1) Տես վան այսր վանից ՚ի գաւառն Բաղաց՝ զնի Ոըոտնայ :

տօնք : Շ ապանէայ վանք : Կոյսպէս մշտասպասօնք :

Պողրէնայ վանք : Ա ահանու վանք : Ոյսա էր շերիմ Թադաւորացն սիւնեաց . որպէս յայտ առնէ այս բան ստեփ . օրպէլ . ի գլ . ծԹ . ասելով զմարմնոյն սենեքարիմայ Թադաւորին սիւնեաց . * Կարձեալ տարան ի ՚ռբ ուխտն Ա ահանու , և անդ եդին ի շերմի ընդ այլ Թագաւորսն ||

Ձանչ ֆարախ . Կենակիչքն էին խարազնագեստք , և սահմանաւորք : Ձուսի լինել անասնոյն Կանձաւիարաքսու որ կայ մինչև յայսօր ի վերին կողմանս Պուրհամոյ՝ մերձ ի ջաՆդրու վտակն երասխայ :

Լոսկէվանք : Լրհէվանք : Կրծնէ վանք : Պադբէ վանք (1) : Կոռոփաձորոյ վանք : Ծուծառոյ վանք (2) : Կայլաբոյ վանք : Զիանաձորու վանք :

Յետ Թուելոյ զոսոս և զայլսն՝ (զորս եդաք ի վեր անդր յիւրեանց գաւառին) , ասէ ստեփաննոս օրպէլ . * Ընդ զայս ամենայն վանորայքս յականէ և յանուանէ ի գլխաւորագունիցն , յորոց բազումքն ամայի և Թափուր են ի շինուԹենէ , և սակաւքն ի լուսաւորուԹեան այժմ՝ որք Թուով Ը. բայց այլ ևս բազումք կային , զորս ոչ Թուեցաք ||

(1) Տէս յանծանօԹս մեծին հայոց գիւադի վանս :

(2) Յիշէ զայս վարդան աշխարհագիր զնին տաճկաց , կոչէ լով ըստ երկուց օրինակաց Ծուծառան վանք . յայլում օրինակի գրի Ծիծառավանք . ի միում՝ Ծիծէնաձանք . իսկ յայլ միւսում Ծուծառանավանք . և առ ստեփ. օրպէլ. ի գլ. լԹ . յիշատակի՝ Սիսէննոս Ծուծառոյ վանական :

Ա Ր Ց Ա Խ

Ա՛րեք ուրեք գրի և Ա՛ղբիւր։ (1) Կոչի սա և Ա՛ղուանից աշխարհ, քանզի որպէս գրէ խորենացին վա՛ժ. գաւառաց սորա՝ աղուանք գրաւեալ ունէին։ * Պատառք են (ասէ) ի նմա ժ՛. զոր Ա՛ղուանք ունէին ‖։ Ա՛ման որոյ և ի ստորագրութեան աղուանից գ՛ժ՛. գաւառս սրբյախայ գնէ նաև անդ, ըստ որում յայտ է ի զանազան օրինակաց։ Կոչի նաև Ա՛ղխարհ առանձին, ըստ որում Ա՛ղան եղև առաջին կողմնակալ աշխարհին աղուանից, ընդ որոյ անուամբ բովանդակէր նաև Ա՛րցախս։

Կոչի և Փոքր ա՛խէտ, քանզի զԱ՛մարաս գիւղ՝ ուր Թագ զեցաւ երանելին գրիգորիս՝ նախնիք, խորենացին, և յո՛ հանննէս կաթուղիկոս գնեն ի Փոքր սիւնիս, որպէս ունիս տեսանել ստորև։ Իսկ Ճառընտիրն ի պատմութե՛ գիւտ նշխարաց սրբոյն գրիգորիսի՝ զԱ՛մարաս ծանուցանէ լե՛ նել Ա՛րցախ. քանզի գրէ՝ թէ յոթ ոմն Ճգնաւոր քարո՛ զեր ի գաւառ ինչ Ա՛րցախայ, ուստի և բնակեր Ա՛րցախ. և բնակութե՛ նորա էր մերձ ի տեղին՝ ուր կայր Թաղեալ մարմին սրբոյն գրիգորիսի՝ որ էր Ա՛մարաս (2)։

(1) Որպէս առ բուզ. ե՛. 50. և ե՛. 12. ի տպ. և յերիս ձե՛ռագիրս։ ի Ճառընտ՛. ի պատմ. գիւտի նշխարաց գրիգորիսի. ուր յերկուս օրինակս գրի այսպէս, և ի մուսա՛ն Ա՛ղբախ, որ է վերի պակ ֆ տառիս։ Ա՛ղբախ գրի և առ եղիշէի ի Թղթ. 125. նաև ի 93. բայց վերջինն ի ձեռագիրս որ առ մեզ՝ գրի Ա՛րցախ։

(2) Զի գրէ նախ վասն նորին յոթից. ՝Սա բազում անգամ է՛ կեալ կատարէր զսիշատակ սրբոյն գրիգորիսի, և ասէր երկից և երից առաջի բազմաց՝ Թէ Թագաւոր աղուանից՝ զոմէ գուշակէ այս յոթ, ԱՄամաս արար ինգիր վասն նշխարաց գրիգորի՛սի. իսկ զայն գնէ ԱՂՈՒԱՆից աշխարհս, որ յարմարի Ա՛րցախայ,

Լե ևս բուզանդ յայտնի գնի՝ թէ Ս. Մարաս ուր Թաղէ-
յաւ երանելին գրիգորիս՝ էր ի Հաբանդ գաւառի. իսկ
այս է Հաբանդ Ա. յգաթայ, և ոչ Սիւնեաց. նմին իրի և
փոքր սիւնիք կոչեցեալն է Ա. յգաթա։

Լե թէ յիշատակեալն ի բուզանդայ է Հաբանդ Ա. յգ-
յաթայ, և ոչ Սիւնեաց, յայտ առնէ այս բան ստեփ.
օրպէլ. ի գլ. ե. ուր զՍ. Մարաս և զփոքր Սիւնիս յայտ-
նի օտար կացուցանէ ի Սիսական աշխարհին՝ որ է Սիւ-
նիք, յասելն վասն ոգւոյն գրիգորի լուսաւորչին, թէ եր-
թեալ ի վիրս, անտի յաղուանս, ի մնաքուեթս, և ի պա-
հակն հնոյց, ապա * գայ ի փոքր Սիւնիք, և մտեալ
Ս. Մարաս՝ շինէ եկեղեցի, և թողու անդ սպասաւորս,
և եկեալ անտի՝ գայր ի սահմանս Սիսական աշխարհիս,
որում ընդ առաջ ելեալ մեծ նախարարն սիւնեաց՝ բերեալ
յաշխարհ և ի տուն իւր . . . և շրջեցուցեալ ընդ գա-
ւառն աւետեաց՝ հաստատէ ի հաւատս։ Այդ՝ եթէ ըստ
բուզանդայ Ս. Մարաս է ի Հաբանդ, և ըստ ստեփաննոսի՝
արտաքոյ սիւնեաց նահանգին, ղհետ գայ՝ Հաբանդայ լի-
նել այն՝ որ է ի մէջ արցախայ, և ոչ որ ի մէջ սիւ-
նեաց (1)։

Յայս անուն փոխ սիւնեաց Թուխ ինձ կոչեցեալ Ա. յգախս
նահանգ վասն իւրոյ Սիսական գաւառին, զոր յորոշումն
միւս Սիսականին՝ որ է առհասարակ նահանգն Սիւ-

և ոչ Սիւնեաց։

Դարձեալ ստորև պատմէ նոյն յոլ՝ թէ Աղուանական ոմն հիւր
եկն առ Ջէդ, և մէք ընկալաք զնա ըստ օրինի եղբարց. իսկ նա էլ
եալ ի տեղիդ յայտ ննջեաց՝ ուր էր Թաղեալ մարմին ջին գրի-
գորեսի. կանգնեաց խաչ ի տե-
ղւոջդ, և պատուէր ետ անխա-
փան աղօթս առնել անդէն։ Յոր
մէ յայտ է՝ թէ ինքն յոթ քա-
րոզիչ և բնակիչ արցախայ՝ էր
մերձ ՀԱՄարաս, ուր էր մարմին
գրիգորեսի։ Քաջայայտ ևս պատ-
մէ զնի. թէ * Ա. յլ ոճն ձևով
աբեղայի եկեալ ընկալեալ եղև ի
մէնջ։ Իսկ նորա գողացեալ ըզ-
բաժակ գինւոյն վաճառեաց, և
սկսաւ առնջիլ այնչափ մինչև
դնալ յերուսաղէմ ի բժշկիլ. իսկ
անդ ձայն լինէր առ նա՝ թէ առ
ի բժշկիլ հարկ է քեզ դնալ անդ

* Ուսոի զբաժակն գողացար. ան-
տի յարուցեալ այրն այն՝ առնոյր
զգինս բաժակին յերուսաղէմ-
տանէր ՀԱՄարաս, և եկեալ յե-
կեղեցին՝ կոչեաց առ ինքն զվա-
նայ երէցն, և սկսաւ ողբալով
խոստովանել զերսն, և սաստիկ
աղաչէր առնուլ զգինս բաժակին։
Ա. յս ամենայն բանք նորին պատ-
մէին՝ յայտ առնեն, թէ յոթ
քարոզիչ արցախայ՝ բնակէր առ-
ընթեր ամարասայ. ուսոի և
Ամարաս էր ՀԱ. րցախ։

(1) Ջլինելն Ամարասայ յաբ-
յոլ՝ ակնարկեն և բանք առաքե-
լի ի պատմ. յոհաննու Ծարեց-
ւոյ, որպէս և վարդանայ աշխար-
հագրի. զի առաջինն ի Թղթ.
579. զՀամարաս դնէ յերկիրն
վարանդայ և դիզակայ. իսկ զայ-
սոսիկ վարդան աշխարհագիր ցու-
ցանէ լինել ՀԱրցախ։

նեաց՝ որպէս ցուցաք յԻերուսաղեմ ստորագրութենէ, կոչեցաւ սա փոքր սիւնիք։ Որպէս և զմիւս հաբանդն ալբցախայ խոբենացին յաշխարհագրութենէ՝ ի ստորագրութենէ աշխարհին աղուանից կոչէ փոքր Հաբանդ։ Յայսմանէ կրկին որոշէ վարդան աշխարհագիրը * Ի՝նչ սիւնիս, և փոքր սիւնիս ||, որ ոչ յիշատակի առ այլս [1]։

Այլ այսպէս վերսկակ երևի՝ փոքր սիւնիք կոչեցեալ Համարիլ զերկիրն Ո՛ւարայ՝ ըստ որում դնի՝ ի գիրս ա՛ ռաքելի՝ ի թղթ. 580. ՝ի բանն որ վասն յովհաննու վարդապետին ծարեցաւ։ * Օ՛ի եր նա (ասէ) յերկիրն Ո՛ւարայ փոքր սիւնիս կոչեցեալ, ՝ի վանիցն Թադէոս՝ծոյ առաքելոյն ||։ Օ՛ի Ո՛ւարայ երկիրն ըստ վարդանայ աշխարհագրի՝ է Մոնք գաւառ սիւնեաց նահանգին, որպէս ասացաք ՝ի վեր անդր [2]։

Ամանք յարդեալ՝ զՀաբանդն յիշատակեալ՝ ի բուզանդայ՝ նոյն կարծելով ընդ այժմեան անուանս Խափան, զՀափանն համարին կոչեցեալ ՝ի հնումն փոքր սիւնիք. բայց որպէս գրեցաք՝ այժմեան Խափան է նոյն իսկ հին անուանս Կապան, որ առաւել՝ի հնումն կոչէր Ձոբք, և էր մի ՝ի գաւառացն սիւնեաց. բայց թէ և ընդարձակ առ մամբ Խափան կոչեսցեն զՄիւնիս, նաև զԴ՛բցաս գէթ ըստ մասին, յայնժամ և ոչ յարմարի Հնդրտիս կոչել փոքր սիւնիք, յոր անուն ըստ մեզ կոչեր միայն Դ՛բցաս։

Դ՛և յետագայս Դ՛բցախ կոչեցաւ Խաչէնիք, որպէս վկայէ վարդան աշխարհագիրն յասելն. *Դ՛բցաս Խաչէնիք է|| Այլ պէս և յայսմաւուրս մարտի 29։ Օ այս անուն ՝ի գործ ածէ և ներբեխ լամբրոնացի ՝ի Թուղթն առ լևոն արքայ։ Այնպէս և ստեփ. օրպել. ՝ի գլ. կիւ. ուր ասէ. * Կոչեցին ածել ՝ի Խաչենոյ իշխանացն մանուկ ոմն հասան անուն ||։ Յայտ առնէ զայս և դիրք Խաչենոյ՝ զոր նշանակեն կիւ

(1) Մարթ է համարիլ՝ թէ վարդան աշխարհագիրն՝ յայս անուն կոչէ զսահման երկուց ցեղից իշխանութեանց, որք էին ՝ի սիւնիս. այլ այժմ ոչինչ ունիմք ապացոյց ՝ի մատենագիրս՝ զորս ՝ի ձեռին ունիմք, բայց եթէ՝ զի երկու իշխանութիւնք ևս ունէին ուրոյն ուրոյն սահման։

(2) Բայց յայլոց բանից կիրակոսի՝ այժմ ապացոյց է և այն բան՝ զոր գրէ ՝ի գլ. ՃԴ. վասն ջալալ իշխանին. * Ձոգաւ առ նա (այսինքն առ բաթու զօրավար թաթարաց,) և մեծ իշխանն խաչենոյ, և կողմանցն Աղթամարայ՝ զոր ջալալն կոչէին գոռւա նօք|| Ուր յայտնի է թէ վխաչէն ամրոցն (որում տիրէր հասան) անկարկէ լինել ՝ի կողմանս արքախոյ։

բակոս և վարդան, գնելով մերձ յաղուսանս և ի վիրս, որպիսի է և դիրք արցախայ։

Օ այս անուն ընկալաւ յամրոցէն որ կայր անդ ի վաղուց անտի, զոր յիշէ յոհաննէս կաթուղիկոս յատէն. * Յակ բուզայի երթեալ ըմբռնել զմեծ իշխանն ատրներսեհ որ բնակեալ էր յամրոցին խաչենոյ ։ Օ նոյն ակն արկէ և կիրակոս՝ յատէնն վասն ստելի. կաթուղիկոսի աղաւանից. * Օ երծեալ ի վանդակն՝ չոգաւ ի կոմսին խաչենոյ, և այլ ոչ իշխեր մնանել ի սահմանս գանձակայ ։ Ուր ոչ իրրև զդաւառ, այլ իրրև առանձին տեղի յիշատակէ. Թէպէտ և ուրեք դաւառի անուն տայ՝ յատենն. * Աղբա գաւառաք խաչենեցւոյ ելին կերևեցի աղգն ։ Եւ այլուր կոչէ Ա՛շխարհ, յատենն վասն մխիթարայ գօշի. * Ակեալ նա Ա՛շխարհն խաչենոյ առ վախճանակ իշխանն խաթերքոյ ։ Եւ Թէ՝ * Շ ինեաց վարդապետն (մխիթար) իւր միաբանութեանն ձեռնտուութեաբ վախճանակայ խաչենեցոյ տէրն հաթերքոյ ։

Ա՛զ վարդանայ յիշատակի և Ա՛ղբէրէն խաչէնէ, յատենն նորա. * Ա՛ինա վախճանակ սակաւանց փեսայն իւանիէ տէր Ա՛ղբէրն խաչենոյ ։ Ուր միւս ասելով զատանէ, յաղանջոյն վախճանակայ, զոր և տուղ ինչ յատաջ յիշատակ կէ, կոչելով * Տէր Հոռեդոյ ։

Ա՛յսպէս սահմանակից ունելով զխնախ՝ ունի անտառս, որ յիշատակի առ եղիշէի Թղթ. 125. * Կէսքն (ասէ՝ ամրոցացն) ի Թանձրատիտ մայրին Ա՛յձաքոյ ։ Ա՛յսոյիկ և առ յովհաննու կաթուղիկոսի, յորս ամրացան հայկազուն իշխանքն սիւնեաց յերեսաց յունաց ։ Ունի և անառիկ ամրոցս, և քաղաք քարաձայր և գժուարին կոմսին, զորս առ գժուարամատոյց գոլոյն՝ կոչէին Հոռաղաց, որպէս գրէն վարդան և կիրակոս՝ անուամբ խաչենոյ. նմին իրի առ բուզանդայ ի գ. 50. կոչի Ա՛ռ գառան Ա՛ղձախայ ։

Ի բերոյ՝ խորենացին յաշխարհագրուն՝ գնէ միայն Ա՛ղարանունդ ։

Ա՛յս նահանգ ապատանէեցւոյ ի ը. արշակայ արքայէ, այլ մուշեղ ապարապետ պապայ գաթձեալ էառ, և ի հալ կի կացոյց ընդ տէրութիւբ հայոց՝ ըստ պատմելոյ բուզանդայ ի գ. 50. և ի ե. 12 ։ Յակ առ ժամանակաւք խորենացւոյն էր ընդ տէրութիւբ ազուանից՝ որպէս ասացաք ։ Ի մէջն անդ ժգ. դարուն տիրեր ի խաչենք բարեպաշտ մեծ իշխանն Ջալալ անուն յազգէս հայոց՝ որպէս զրէ կիւ

բահոս, զոր ազգականք իւր տաճկահպատաւեք դէղ մահու արբուցեալ սպանին։ Յայսմ դառնութեանէ ժամանակի՝ ի խաչէնք կային ամրացեալք երեւելի իշխանազունք յաղդս Հայոց՝ փախուցեալք յիւրեանց տահմանաց. այլ՝ ի նմին ժէ. դարու բազում ապականութիւնս և քանդմունս դործեցին՝ ի սմա հինք և մուղալ թաթարք։

Վասն Թուոյ գաւառաց սորա՝ ի տպադրեալ և յերկուս ձեռագիրս աշխարհագրութենէ խորենացւոյն միաբան գրի լինել ժբ. ասա՝ ի համարիլն յանուանէ՝ ի տպագրեալն և յերկուս ձեռ՝՝ դնի ժդ։ Ի միում և ևթ ձեռ՝՝ համաբի՝ ժբ. քանզի պակասի՝ ի նմա մետասանեւորդ գաւառն. իսկ ժբ, և ժդ. գաւառք՝ ի մի յօդին իբրև մի գաւառ. այլ յայս օրինակ աշխարհագրութենէ խորենացւոյն՝ ի բազում աշխարհս բազում գաւառք պակաս գրին։ Ուր Թոմմայի կիւլիկեցւոյ՝ որ է օրինակ աղճատեալ, գաւառք արցախայ՝ ի վերոյ դնին լինել ժբ. իսկ սաորև՝ ի Թուեն յանուանէ՝ ժ. և ևթ յիշատակին։

Ի՝ներ յառաջիկայս ժդ. գաւառս և կարգեսցուք մի բան միոյէ, դնեալով առ ընթեր զտարբերութենէս օրինակացն՝ որչափ ինչ մարթ է, Թողեալ զստուգութենէն յետագայից. զի հարկ է վերնակ լինել՝ կամ առաջնին ժբ. Թուոյ, և կամ ստորև եդեալ ժդ. անուանց։

ա. Ի՝ետ Հաբանդ.	ը. Հաբլանդ (4).
բ. Ա այիւանդ (1).	թ. Ի՝ուանդ (5).
գ. Ի՝ներջոր (2).	ժ. Գիանդ.
դ. Ի՝ներ էրանդ.	ժա. Գարծէանդ.
ե. Ի՝ներ կռանդ (3).	ժբ. Ի՝սական (6).

(1) Ի՝յսպէս դնի յերկուս ձեռ՝՝ աշխարհագր. խորէն. ՚ի յարցան և յաղուանս. իսկ ՚ի տպագրեալն յերկուս տեղիս ևս դնի Վանդանդ։

(2) Ի՝յսպէս գրի յերկուս ձեռ՝՝ աշխարհագրութենէն խորէն՝՝ ասա և յաղուանս. որպէս և ՚ի տպ. յաղուանս դնի Բներջոս. յորմէ վերնակ Թուոյ լինել Բներջոյ անուանն՝ որ գտանի գրեալ ՚ի միում ձեռ՝՝ և ՚ի տպ. միայն ՚ի ատրպատական արցախայ, և ոչ աղուանից, և առ Թոմմայի կիւլիկեցւոյ։

(3) Ի՝ տպ. ՚ի ստորագրութենէ աղուանից վերնակաւ գրի Ի՝ներ կռանդ։

(4) Ի՝յսպէս դնի յերկուս ձեռ՝՝ նաև ՚ի տպ. յաղուանս. իսկ յարցախ՝ ՚ի տպ. և ՚ի միում ձեռ՝՝ դնի Հաբլանդ. ՚ի յաղուանս յերկուս ձեռ՝՝ վերնակաւ դնի Հաբլանդ։

(5) Ի՝յսպէս դնի յարցախ ՚ի միում ձեռ՝՝ և ևթ. իսկ յայլս և ՚ի տպ. դնի Ա՝ուանդ. բայց յաղուանս Ա՝ուանդ գրի ՚ի տպ. և յերկուս ձեռ՝՝։

(6) ՚ի միում ձեռ՝՝ գրի Ա՝ուան. առ Թոմմայի կիւլիկ. Ա՝ուանդ։

ԺԱ. Վրաստակ [1]. ԺԶ. Վտանէս.
ԺԲ. Վրաստան [2]. ԺԷ. Կողբ [3].

ՄԻՒՍ ՀԱԲԱՆԳ։

Խորենացին՝ ի ստորագրելն զազգանունից աշխարհ, կամ չէ զան՝ վասն հաճանդ՝ յայտնութեան Հարանդայ սիւնեաց։ Իմաստ։ Վիւղ կամ առան՝ յորում թագեցաւ Նոյն զորիս աղաւնեկից եալիկոտոս։ * Ո որ բարձեալ տարկաւ տապաց նորան (առ խորենացին՝ ի ՚ք. 5.) բերելով՝ ի վտքը սիւնիս թագեցին Հայմարաս առանի ։ Ետ այսմ և յոհաննէս կաթողիկոս. * Հանգուցանեն զնոր մասն մին նոցա (այսինքն գրիգորիսի) ի գեօղն Հայմարաս [4] որ ի վտքր սիւնիս ։

Ընկալան յայսմ Հիւս հարանդ կոչեցեալ գաւառի՝ ըստ որում յայտ առնէ բուզանդ ի ՚գ. 6. ուր յերիս ձեռս գիրս գրի Հայոց։ * Հարձեն զնա (այսինքն զմարմին նորին գրիգորիսի) որք ընդ նմա էրթեալ էին՝ ի գաւառն Հարանդայ, և բերին ի գաւառն իւրեանց՝ ի կողմանս աղաւնից՝ ի տահմանս Հայոց ի Հարանդ, ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Հայմարազ [5], և եգին զնա առ եկեղեցեան՝ զոր շինեալ էր առաջնոյն մեծին գրիգորի ։ Ուր բանօք իմանալ զՀիւս հարանդն՝ որ է յայսմ յորցաս նահանգի, և ոչ որ էր ի սիւնիս. քանզի այլք զՀայմարաս

(1) Ձ.յապէս գնի յերկուս ձեռ՚՚։ Իակ առ Թովմ. կիլիկ. վրկ պակաս գրի Կ՚ոգայ, որ է գաւառ այրարատոց։ Ի տպ. գրի Վ՚ոգայ. իակ ի միւմ ձեռ՚՚ պակասի այս անուն։

(2) Ձ.յսպէս գրի յերկս ձեռ՚՚ նաև ի տպ. յաղուանս. ուստի վրիպակաւ գրի Վ՚ոգայ ի տպ. յորցաս։

(3) Ձ.յսպէս գրի յերկս ձեռ՚՚ առա և յաղուանս, որպէս և առ Թովմ. կիլիկ. առ բուզանդայ Ե. 13. իակ ի տպ. աշխարհագր. խոր. յաղուանս գրի Կ՚ող, և միայն յաբ. ցասխ գրի Կ՚ոխ։

(4) Ձ.մարաս գրի և յերկուս հին ձեռ՚՚ վարգանայ՝ առանց յիշելոյ զգաւառն. նոյնպէս և առ կիրակոսի։ Ձ.ա ասողկայ ի ՚ք. 1. գրի Ձ.մարն առան, նոյնպէս գնի ի վտքր սիւնիս։ Ի յայսմաւուրս առ խորայելի գրի ի գեկտ. 2. Ձ.մարեան առան. զի ասի. Հարձեալ աշակերտաց նորա զմարմինն (այն գրիգորիսի) բերին ի վտքր սիւնիս, (և) թագեցին Ձ.մարեանն առանի ։

(5) Ձ.յսպէս գնի յերկս ձեռ՚՚ բուզանդայ. այլ յերկս ձեռն աիրս՝ (յորոց երկուքն են հին,) ի վարս նորին գրիգորիսի որ առեալ է ի բուզանդայ՝ գնի Ի նշանաց ազգասանիս։ Իակ գիւղն գրի Ձ.մարս. յորմէ յայտ է թէ՝ ուղիղ գրուին է Ձ.մարս, և ոչ Ձ.մարազ, կամ Ձ.մարաս, ոչ գրի ուրեք առ առեալ. օրակէ. և ի միւմ ձառընտրի։

դնեն ՚ի փոքր սիւնիս, իսկ փոքր սիւնիք կոչեր արեալս՝ որպէս ցուցաք ՚ի վերոյ (1)։ Ի նդ ՄՋ սորա անցանէր և գետակ, զի ասի ՚ի Ձառընտրի ՚ի պատմութեան գիւտի նշխարաց գրիգորիսի. * Երբեմն մերձ եղեն ՚ի գեօղն մտանել գետ փոքրիկ անցանէր ընդ ՄՋ շինոյն (ամարաստայ,) և կամուրջ կազմ ՚ի վերայ նորա ։

Ակեղեցի ասանիս զոր յիշէ բուզանդ՝ ոչ էր բոլորովին շինեալ ի սրբոյն գրիգորէ լուսաւորչէ, այլ միայն սկզբնաւորեալ. զոր կատարեաց ՚ՅՆ գրիգորիս՝ որպէս դնի յայսմաւուրս մարտի 6։ * Չարեալ եդին (զմարմին գրիգորիսի) ՚ի գիւղաքաղաքն Ա՛մարաս, յեկեղեցին զոր հիմնարկեալ էր ՚ՅՆ գրիգոր լուսաւորիչն, և մանուկն գրիգորիս կատարեալ էր զայն շինուածք, և օրհնեալ ։ Չարևելեան կողմն եկեղեցւոյս վաչագան արքայ աղուանից յետս է. զարուն գտանէ զմարմին ՚ՅՆ գրիգորիսի, որ և * ՚ի վերայ գերեզմանին հրամայէր արկանել հինն մնատրան, և փութալոյ աւարտել, անուն կոչել մատրանն Ա՛ՅՆ գրիգորիս. որպէս գրի ՚ի Ձառընտրի ՚ի պատմութիւն գիւտի նշխարաց ՅՆՑՆ։ Ա՛նդր և Ա՛ՆՆարան՝ զոր յայտ առնէ այս բան Ձառընտրին. * Ընդ ուրեմն գոզայեալ աբեղայ մի ՚ի նշխարացն՝ որ էր Ա՛մարասայ Ա՛ անայն ։

Ո՛ առաջինն այս գիւղ էր Ա՛պիսկոպոսանիստ. զի ասի անդէն ՚ի Ձառընտրի. * Ընդ այն ժամանակս (այսինքն ՚ի ժամանակս վաչագանայ) ոչ գոյր եպիսկոպոս Ա՛մարասայ. հարցեալ արքային զգեղջ երէցն, ևս։ Ուակ օրակարան ասէ փանն ասէ փանն ՚ի գԼ. Ե. գնէ լինել ՚ի հնումն աթոռ կաթուղիկոսացն աղուանից, ուր և պատմէ զկողոպտիչն եկեղեցւոյն ՚ի ժամանակս բատուն խանին Թաթարաց՝ որ Թագաւորեաց ՚ի 1295. * Ա՛ա (ասէ՝ այսինքն բատուն) յաղիկեալ զջալալն որդի տարաճէին՝ այլ և մեզաղ արամբք ՚ի ՄԾ աթոռն աղուանից Ա՛մարաս, որ ՚ի հինն լեալ էր աթոռ կաթուղիկոսաց նոցին. և ետ տանել առ ինքն զգաւազան սբյն գրիգորիսի որդւոյն լուսաւորչին՝ զոր նա, որդւոյն սբյն գրիգորի լուսաւորչին՝ քանզի և կայր գերեզման նորին անդ, վասն որոյ և գաւազանն ՚ի նմին եկեղեցի պահէին. և ընդ նմին տարան և աքանչելի խաչն ածահրաշ՝ որ ՚ի հին ժամանակաց կայր անդ կազ-

(1) Իբ այսպէս վրիպի վարդան ՄԾ եկեղեցին է Ա՛մարաս, ուր աշխարհագիր՝ որ զԱ՛մարաս դնէ կան նշխարքն գրիգորիսի աղուա-
Ա՛ի գաւառին, յասէն. * Ու նից կաթուղիկոսին ։
ան ՚ի մէնց կայ երասխոյ .. ուր

մեալ՝ի համակ ոսկոյ, և զարդարեալ լիք. ակամբք պատուականօք, և այս՝ի մատնեալոյ լերոյ և անդգամ իրիցու մի՝ի նոյն վիճակէ։ Այլ զի անդ (հր) դուստր կայսերն յունաց դէսպինա անուն՝ որ աճեալ էր՝ի հիւանդել ապա զա զանկն, և մնացեալ էր յորդկիրս զրայտոյն (խանն), սա բազում թախանձանօք խնդրեաց զնաչն և զդաւազանն, յուղարկեաց՝ի թագաւորական քաղաքն կոստանդինուպօլիս։ Այլ այսու օրինակաւ կողոպտեցաւ աշխարհն աղուանից [1] ՝ի պատուական և յոծայլեն գանձուցն ||։

ՊԱՐՍԿԱՆՔ, կամ ՊԱՐՋԿԱՆՔ։

—

Ոանազան օրինակաւ գրի սորայս անուն, զի յերկուս ձեռագիրք օրինակս աշխարհագրութեանն խորհեցայ՝ի սորագրութեանդ արջախայ և աղուանից, որպէս և առ Թովմայի կիլիկեցւոյ գրի Պածկանայ. յերկուս ձառընտիրս՝ի պատմութեանդ գիւտի նշխարաց գրիգորիսի՝ Պարկանայ, ըստ այսմ յասելն. * Արանաելոյն յորոյ ձգնաւորի հաստատացանելն վիճակ՝ոյն Արջախայ գաւառն Պարջկանց [2] ||։ Այլ ուղիղ գրութիւն երևի Պաբճկանայ. որպէս դնի՝ի տպագրեալ օրինակն աշխարհագրութեանն խորհեցայ՝ի սորագրութեանդ աղուանից. որում և յարմարի գրեալն՝ի ձառընտրի, զի տառս չև ճ դիւրաւ փոփոխին։

Յայս գաւառ (զոր պատմութիւն ձառընտրին ակնարկէ լինել մեծագոյն գաւառ արջախայ,) միանգամ՝ի ե. դար հիացեալ կայր աղանդն հեթանոսութեանդ, զոր եբարձ յոթ միաբանակեաց յելս այնր գաւառ։ * Յոր ոմն այլ ձգնաւոր (ասի՝ի նմին պատմութեանդ,) և յայժ առաքինի վարուք հեցեալ յաշխարհի, ունէր և առաքելական շնորհս, որ

(1) Յաշխարհին աղուանից դնէ զԱմարաս ոչ միայն օրպէլ. յայս քան, այլ նաև ձառընտ.՝ի պատմութիւն գիւտի նշխարաց գրիգորիսի. որով ոչ թէ կամին ասել հայոց աշխարհին, և ամենայն հայոց հաբանդայ կացուցանել, այլ վասն զի Ամրցախ նահանգ էր ընդ տէրութեամբ աղուանից՝ որպէս ասացաք՝ի վերոյ, աշխարհն աղուանից կոչեն և զՀաբանդ և զԱմարաս վասն տէրութեան նոցին։

(2) Յօրինակի միում գրի Պարջկայ. իսկ՝ի միում ձառընտրի՝ Պաղկանայ, յորմէ ծանր գրութիւնն երևի լինել Պաղչկանայ, որպէս գրի՝ի միում ձեռագրի աշխարհագրութեան խորհնացւոյն. որ՝ի տպագրեալն գրի Պաչկանայ։

թագաւորին աշխատութեամբն իւրով՝ հաւատով և սիրով քով՝ զՎեծագոյն Աբգարայ աշխարհ մի վարդկանք կոչեցեալ՝ դարձուցանէր ի մոլար չանապարհէն, և ի դիւանուէր մնոտի պաշտամանցն փոխարկեալ, առնէր ծառնօթս քրիստոնէից, և անձառ խորհրդոյ ծիր երբորդութեան պաշտօնատարս ||:

Ի կողմանս արցախայ գտանի միևնոյն ցայժմ գիւղ կոչեալ Պաւենք, կամ Պէնջեփան ձայնեալ, ոչ այնչափ հեռի յԵրասխայ և յորոմն վտակէ, որ Թերևս է սոյն այս անուն աղճատեալ:

ՓՈՒՆՔ Ս:

Աեսկական է այսմ գաւառի ի մի յօդիլ ընդ անուանց երկուց այլոց գաւառաց. երբեմն ընդ անուանս Վաոսոպ, կոչելով Վաոսոպէտեանս, որպէս է տեսանել ի միում ձեռագիրս աշխարհագրութեանն, և առ Թովմայի կիլիկեցւոյ. Թէպէտ և երկոքին և՛ վերին ի տառս կոչ:

Ուստ այսմ և Հռիփսիմեան Միհայել անուն՝ կոչի Հռիփսիմեան Վաոսոպէտանէայ, ի խորագրի ձառին իւրոյ՝ այսպէս. * Հրամանելոյն Միհայելի հայոց Հռիփսիմեան Վաոսոպէտանէայ նահանգին ի թզ խաչն ածրնկալ ||:

Եւ երբեմն յօդի ընդ անուանս Աեսպան, համառօտելով և այլայլելով ինն Վաոսոս կոչելով. յայտ է այս անտի՝ զի նոյն իշխանքն կամ Թագաւորքն ոմք կոչին Վաոսոսոյ Ռափաւորք, այլոմք կոչին Ռափաւոր սեսպանին. զորօրինակ ասողիկ ՚ք. ւ7. զմայր աբասոյ Թագաւորին կարուց՝ առ լինել, * Վայր Թագաւորացն Վաոսիսոսոյ սեպհեքեր ընդայ և գրիգորոյ ||. իսկ զսենեքերիմ ստեփանոս օրպէլ յոտանաւոր ողբս իւր դնէ Թագաւորեալ՝

* Ի տան Հաղպց սիսականին ||(1):

Ասողիկ ի ՚ք. 48. գրէ. * Իշխանքն Վաոսիսոսոյ որ

(1) Բանք ստեփ. օրպէլեան.

Թագաւորեալ Թագ կապեցին, ...
Հարիւր և քսան ամբ յաւելին ...
Որոց վերջին Սենեքարիմ,
Նաև Գրիգոր որդի նորին.
Ալա և զայս ի բաց բարձին, ...
աղգն այլասեռ և պարսկային ||:

ի հայկազնեայ ազգիս բաւեալ միչեւ ցահնեքերիմ և ի գրիդոր՝ սպառեցան մնհուամբ ||։

*Այլ լինելն փառիսոսոյ ընդ փառնէս գաւառին՝ յայտ է և անտի, զի գաւառ անուամբ յիշատակէն, որպիսի եր փառնէս, և սահմանակից ցուցանեն լինել սիւնեաց և արցախոյ՝ որ յարմարի սմա։ * Ի սոյն աւուրս (ասէ վարդան) կէին մի մամ անուն գայ ի պարսից երեք որ գումք ի գաւառն փառիսոսոյ առ գրիդոր փառատր իշխանն ||։ Նմ ասողիկ ի ՟ք. 30. * Տիրեաց նա (այսինքն գագիկ յաջորդ սմբատայ) յոլով բերդից և գաւառաց՝ ի սահմանացն վայոց ձորոյ, խաչենոյ և փառիսոսոյ ||։ Ոսկ Խաչէնք որպէս գրեցաք ի վերոյ՝ է Արցախ։*

*Ովանս փառիսոսոյ յիշէ կիրակոս ի գրէնն վէ պետրոսի աղուանից կաթուղիկոսի. * Տէր պետրոս ամն ԺՀ. յառաջնորդութենէն փառիսոսոյ վանայց ||։ Ոսամնանին է գինի (կամ յաւուրս) անանիայի կաթուղիկոսի հայոց, գինի ն. Թուականին հայոց։ Ի փառիսոսոյ եր և հռչակաւոր վարդապետն յովհաննէս մականուն Սարկաւագ կոչեցեալ՝ զորմէ գրէ վարդան. * Նմին և վարդապետաբ յայնմ ժամանակի Յոհաննէս որ և Սարկաւագ ի գաւառէն փառիսոսոյ ի քահանայական յազգէ, որոյ յիշատակք Ձառագայթիցն փայլեն մինչև ցարդ ի բանս իւր, և ի նմանէ աշակերտեալսն ... իսկ որ վարդապետն կեցեալ ի ժիր մշակութեան զաւուրս իւր, հանգեաւ ի շիր Թիլին ||։*

Տեղիք արցախոյ՝ որոց գաւառաց անձանօնք։

Գանձակ։ Քաղաք երևելի, որ բազում ուրեք յիշատակի ի վերջին պատմագիրս մեր, և այժմ կոչի Կանձայ, կամ Կենձէ, որք են այլայլութիւն անուանս Գանձակ, ուստի ուղղագրին և այժմեան անունն յայսմաւուրս ի 5. յուլիսի, ի ձեռագիրս գրի Գանձայ, զի նախ դնի. Ա կայաբնակեալ էին հոսքովքա Գանձակեցւոցն։ Ոսկ ստորև. Ա՛ն վկայն *ոմն խոսրովէր ի Գանձայ *աղաչեն աղաւանից։ Նա՛ի տպ. դնի. Ի *աղաչէն Գանձայ աղաւանից։

Ա՛արգան աշխարհագիր ակնարկէ լինել Արցախ, քանզի յիշէ զայն՝ ուրանօր խօսի զարցախայ. զնոյն ակն արկէ և կիրակոս յասելն. * Ընազում վիշտս կրեալ էին նոքա (այսինքն՝ պարսիկք որ ի գանձակ,) ի քնակչացն

խաչենոյ. առաջակաբար կելով զբաղումն սպանանելին ՚ի պարսից, և կողոպտելին զբլխատեալս ՚ի ձեռաց նոցա։ Այս է թէ Վանձակ էր մերձ յամրոցն Խաչէն, ուստի և ՚ի գաւառի նորա. իսկ Խաչէնք էր նմին իսկ Աղբակ, որպէս նաև դիրք այժմեան տեղւոյն գնոյն ցուցանէ։

Ապրդան և մատթէոս ուրեք ուրեք կոչեն Վանիկ հայոց, կամ որ է Յաղխարենն հայոց. յայսմհետէ՝ ըստ ո՞ր ըստ եղաք ՚ի վերոյ՝ կոչի յանուն Աղուանից. սոյնպէսնակ և ՚ի յիշատակարանին գտատատանագրոց մխիթարայ գոշ՝ զի գնի Ապարտաղատ փանն Աղուանից, յաղխարենն Վանայ. և առ կիրակոսի յասելն վասն Թամթարայ. * Հանկն գնա (այսինքն զաղաղատեին, կամ զջալալագին սուլդանին) փախստական յաշխարհն աղուանից. եկն նա ՚ի քաղաքն Վանձակ, և առ գնա։ Ապ զի Աղբակ որպէս զբեցաք՝ կոչի և աշխարհ աղուանից, ուր և նստան երբեմն Խալխալ կոստոսունք աղուանից [1]։ Այս համ յարակցեալ անուանք Հայոց, Աղուանից, գնին յորոշումն միւս Վանձակ կայ՝ որ է յատրպատական։

՚Ի Թուականիս ՇԼԷ. (յամի 1088,) պուռզան ամիրային զօրապետ հրաւակատոր մկնիք շահի սուլդանին պարսից՝ հաւ զՎանձակ ՚ի ձեռաց փառլեանց շատատիկք կոչ ցելոց, որ էր ցեղ ինչ և տէրութի այլազգեաց [2], սաստ կապէս մարտուցեալ, և ՚ի վայր ընկեցեալ զբուրգն Ներ. յորոց ՚ի զօրս կային և յաղգէս հայոց։

Ապ նոցա քաղաքն ՚ի ձեռս պարսից մինչև ՚ի ժԷ. դար. և եղև առ նոսա իշխանանիստ քաղաք երևելի, մինչև ՚ի բաժանել տաճար սուլդանին զամենայն երկիրն առ որ դիս իւր, կրտսեր որդւոյն ետ ՚ի բաժին զսահմանս գանձակայ։ Պարսիկք բնակիչք քաղաքին արհամարհութիք բերեալ ընդ քրիստոնեայս՝ ՚ի նախասահմանս նոցունց եդին ՚ի նեղութիւն սեամն դրան քաղաքին խաչ՝ ՚ի կոխումն անցաւորաց. այսպիսի թշնամութիք պարսից գանձակեցւոց առ քրիստոնեայս՝ յայտնի է և ՚ի բանիցն կիրակոսի՝ որ ասէ. * Այս քաղաքս բազմամբոխ լցեալ պարսկօք, այլ սակաւ և քրիստոնեիւք, յայժ թշնամի էր սա քեզ։

՚Ի 1140, ըստ որում գնին վարդան և կիրակոս՝ կոչ

(1) Զկարգ Եպիսկոպոսաց կիք Աղբեպիսկոպոսացն աղուանից՝ որք սովորաբար Կաթուղիկոսք անուանին, ունիմք գնել ՚ի հին աղուանս, որ ՚ի կարգի աշխարհացոյց ընդ իշխանութիք հայոց։

(2) Որպէս պատմէն Մատթէոս հայ կամ նահանգաց երբեմն եղեալ։

ծանեցաւ այս քաղաք՝ ի վերայ բնակչացն յահագին եր-
կրաշարժութենէ, և լեառն ընթերակայ՝ ի վայր հոսեալ
՝ի ձորակն՝ արգել զնեղեցաւ ջրոյն, և արար ծովակ լի
պէսպէս ազնիւ ձկամբք. մինչև յաւուրս նորին կիրակա-
սի, որ յաւելոյ գրել՝ թէ լուեալ զայն գեմիտրէ Թա-
գաւորին վրաց, եկն և տարաւ յաշխարհն իւր զդրունս
քաղաքին (1):

Նոյն և ի ժէ. դարուն էր նոյնպէս քաղաք բազմա-
մարդ՝ որպէս յայտ է ի վերոգրեալ բանից կիրակոսի,
յորում դարու հասեն ի վերայ մուղալ Թաթարք, կո-
ծանեցին զպարիսպ քաղաքին մեքենայիւք յամենայն կող-
մանց, և մինչև էր մտեալ նոցա ի ներքս՝ բնակիչքն
ինքնին այրեցին զամենայն տունս՝ զի մի անկցին ինչք
իւրեանց ի ձեռս թշնամեաց. իսկ իբրև մտին մուղալք՝
զբնակիչս առ հասարակ կոտորեցին, որով Թափուր մնաց
այս քաղաք:

Նմանի էր միխեթար վարդապետ գօշ մնականութեամբ
յԵլս ժբ. դարուն, որ բաց յայլ գրոց՝ արար ի ոչգ, և
դատաստանագիրս. զվաթս նորա և զգործս ընդարձակ
ստորագրէ կիրակոս:

Վարդան աշխարհագիրը ի սահմանս դանձակայ գնէ
պլետադայ տեղիս՝ յասելն. * Վանձակ Վանձայ է իւր
վիճակումն և Օ ախաձ մինչև ի գաղտն Վաճայ, և կայ ի
նմա երկու ուխտք Լստրանաշատն, և Նդղէձէ առաջելոյ ա
Լոան ||: Նդ ստորև յետ ստորագրելոյ զսիւնիս, զղակամ
գնէ ի հիւսիսակողմն սիւնեաց գեղարքունեայ և սեանայ:
* Նդ այլ բազում գաւառք ի կողմն հիւսիսոյ՝ որ կոչի
Օ ախաձ, ուր կայ Նէ հաղարծին, և Վեղիսաձոր՝ որ աճուն
է գօշ միխեթար վարդապետին ||:

Հաղարծին: Յօրինակս ինչ վարդանայ աշխարհագրի,
և ի գիրս ինչ գրի Լաղարծին: Նւիսի երևելի կայն կող-
մանս՝ զոր զարգարեաց խաչատուր վարդապետ որ ա-
ճաչմորդ եր այսր վանից, զորմէ գրէ կիրակոս: * Նդր ի
տճեսամբուլեի որ եկեղեցւոյն (զետակ վանից), և որ

(1) Նյսպէս պատմէ կիրակոս. յաշխարհն իւր. փոյթ և լեառն Նլէսարն ի շարժմանէն, և ար-դել զձորակն որ անցանէր ընդ մէջ նորա, և եղև ծովակ, որ է մինչև յայսօր. և լինին ի նմա ձկունք ազնիւք ||: Նյլսր ի կրկնէն զնոյն պատմութիւնն գնէ մեռեալ ի բնակչաց:

* Լակ ի շձբ. Թուին եղև շարժ սաստիկ, և կործանեցաւ քաղաքն Գանձակ, և տասպելեցան շինուածքն որ ի նմա ի վերայ բնակչաց իւրոց. և եկն Թագաւորն վրաց գեմետրէ հայրն գաւթի և գեորգեայ, և տարաւ զդրունսն

վարդապետն խաչատուր տարօնացի՝ առաջնորդ՝ որ ուխտին որ կոչի Հաղարծին [1]... Այս պայծառացոյց ճշմարիտ յորում առաջնորդ էր ինքն, որ յառաջ քան զգալ նորա ամայի էր և խամրացեալ. զայս պատուէր մեծասպէս Թագաւորն վերայ գորգի հայր Թամարին, և ետ եկեղեցւոյն ձեռնադրաւ իւրով զերկու գիւղսն. զԲասեան՝ որ, և զՆանչառն, և զայգի մի Արընջեին... և ինքն (խաչատուր) անդ հանգեաւ՝ ի քո, և կայ Թաղեալ յաբևմտից կուսէ եկեղեցւոյն ||:

Աբար՝ ի սմա շինուելէն և յոհանննէս առաջնորդ վանացս, որ զկնի՝ եղև նաև առաջնորդ գետակայ վանացս: * Այսպա (ասէ կիրակոս) տէր յոհաննէս արմանեցին՝ որ և Հաղարծին էր առաջնորդ, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս՝ ի չէ. Թվին. սա շինեաց՝ ի Հաղարծինն սեղանա տուն երևելի սրբատաշ վիմօք, և ապա գնաց՝ ի մեծ ա Թոռն՝ ի հաղբատ ||: [2]

Ստեփանոս: Արևելի՝ ի մէջ ուխտից նահանգիս. այս սէս կոչեցեալ սակս յոլովուն եկեղեցեաց և խորանացն՝ ի նմա, զոր շինեաց վանական վարդապետն այր երևելի արդեամբք և գիտութիւ՝ ի սկիզբն ժ՝ գ. դարուն. * Այս եղև վախճան սորա (այսինքն՝ վանական վարդապետին ասէ կիրակոս) այսպիսի օրինակաւ. ի վանան զոր իւր իսկ էր շինեալ՝ որ կոչի Ստորանաշատ, վասն յոլով եկեղեցեաց որ՝ ի նմա է՝ ընկալաւ զանուն, որ կայ հանդէպ երգնկայից բերդին, և՝ ի Թիկանց գարգմանայ (Թերևս՝ գարգմանայ, զի և յայլսում օրինակի գրի՝ Վարդմանայ.) առնէր նա շինուածս երևելիս՝ գումիթ շինելով՝ ի կոփածոյ վիմաց՝ ի դուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ շինեալ էր ||: [3]

(1) Գրի ուրեք առ նորին կիրակոսի և Հաւուչին, (եթէ չիցէ վրիպակ գրչի:) * Գլխաւոր վանացն (ասէ) սանահնին և գեղամիկ և Հաւաղծինն և կէչառուս ||:

(2) Այսօրիս պատմէ զայլ շինուածէ: * Ի չէ. Թվին (ասէ) խաչատուր վարդապետն և եղբայրն իւր բարսեղ շինեցին եկեղեցի մի ընդ ընդարձակ գաւիթ ի Թամար թագուհւոյ Վրաց ||: Այլ որոշել կիրակոս զվանան, բայց առաւել Թուի շինել Հաղարծինն՝ քան Թէ դեղիկ վանք, զոր ոտղ ինչ յառաջ յիշէ:

(3) Եթէ կիրակոս յայս բան զգաւառն Գարգմանի իմանայ, ստորանաշատն անկանի՝ ի գարգմանի գաւառի և յաւելի նահանգի, և յայնժամ զվերոգրեալ բան կիրակոսի պարտ է մեկնել առելով, Թէ Ստորանաշատն էր՝ ի Թիկանց գարգմանայ բերդին կամ քաղաքին (զոր Թերևս ունէր), և ոչ՝ ի Թիկանց գարգմանայ գաւառին, (որում արտաքոյ անկանէր գաւառին.) այլ քանզի անյայտ է բանն, և անուանն խակ չէ որոշ գրեալ, ոչ համարձա-

Յայսմաւուրս ՚ի 31. յունվարի նոյն վանական վար-
դապետի տայ զանուանակոչութիւնն։ * Վնաց (ասէ)
յաղուանս, և շինեաց փառաւոր վանք ի սրբատաշ վի-
մաք, բազմախորան գմբեթաւոր, և հրաշազարդ եկեղե-
ցիս, և անուանեաց զվանքն ըստ իւրոյ անուանն։ Յա-
խարհին աղուանից դնէ, քանզի որպէս ասացաք ՚ի վերոյ՝
Ա.րցախ՝ կոչեր նաև Ա.ղուարճ աղուանից։

Ա.ստանօր Թաղեցւոյ նոյն վանական վարդապետ ըստ
իւրում հրամանի. * ՚Ի գլուխ վանիցն (ասէ կիրակոս)
յարևելից կուսէ, մօտ ՚ի փոքրագոյն եկեղեցին՝ ուր էին
գերեզմանք աղքատաց։

Վանոյ անապատ։ Որմէ ՚ի յիշատակարանի գատաս-
տանագրոց մխիթարեան գոչի. * ՚Ի դիտապետութենէ տէր
ստեփաննոսի տանս աղուանից, յաշխարհիս առանայ, ՚ի
նահանգիս որ կոչի մայրաքաղաքիս Վանձակ, յանապատ
և լերդայրանոցս անուանեալ Վանոյ, սկզբնաւորեալ
՚ի լեռնակողմ մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն, ընդ
հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց։

Վանձաւար։ Ձուի ածանցեալ յանուանէս Վանձակ, և
Ար. որպէս թէ Վանձակաւար. զի ըստ որում ցուցանէ
այժմեան դիրքն նորին՝ ե մենաստան ՚ի վերայ լերին, ուր
այնչափ տարակայ ՚ի գանձակայ. իսկ զլեառն՝ աշխարհիկ
բարբառ մեր կոչէ Ար։ Ընկանի յայս նահանգ՝ որպէս
գրէ վարդան աշխարհագիր յասելն. * ՚Ի Ա.ղձախ (է)
ՀԷ ուխտն Վանձաւար, ուր կայ գլուխ ՀԷ կարապետին։
Յարձախ դնի նաև ՚ի ձեռագիր յաշխարհագրական բա-
ռարանին։

Յիշէ զսա և կիրակոս Ա.նձ. անուանելով. ուր ՚ի
սկիզբն ժԳ. գլուխն բարեպաշտ և աղքատասէր այրն հա-
սան անուն քեռորդի հայկազուն իշխանացն զաբարեայ և
իւանեի, շինեաց եկեղեցի գեղեցկազարդ յօրինուածով
բազմամեայ աշխատութիւն։ Իսկ կին նորուն մանկան ա-
նուն շինեաց զդաւիթն։ Վրէ և վարդան վասն արքայա-
զուն Ջալալ իշխանին՝ որ էր ՚ի ժամանակս իւր, Թէ զկնի
վկայական մահուանն * Ա.կին իւրքն, և տարեալ Թա-
ղեցին յիւր սեփհական վանքն Վանձաւար կոչեցեալ,
հայրենեաւք տուն գերեզմանի իւրեանց։ Ա.յլ անուանս
Վանձաւար ոչ յիշատակի ՚ի հին պատմագիրս։

կէցաք դնել ՚ի գարգման, այլ բա- դաք ՚ի սահմանին գանձակայ։
նիւ վարդանայ աշխարհագրի է-

Յօթանաբէրդ · զոր և ուրեք կիրակոս կոչէ՝ Յօյախանայ բէրդ, որպէս և անուանեին պարսիկք։ Ի մէնց անառիկ հանդիպ գանձասարայ, որոյ տէր էր նոյն իսկ հասանն վերոգրեալ. այլ որպէս գրէ անդէն նոյն կիրակոս՝ զսա և զվերձակայ ամրոցս Կէդ · Ընդ արեւմտեան, և զայլ ևս դղեակս, մնացեալ թաւթաւրք հարկապահանջք հինիայատակ կործաւ նեցին, մինչ և հետոց անգամ ոչ երևել բնաւ՝ թէ չէին լեալ իցէ երբեք անդէն։

Հայրէբ [1]։ Ղեղեակ իշխանանիստ նախայիշատակեալ իշխանին Հասանայ, որպէս գնի ի յիշատակարանի գաւառանագրոց միւիթարայ գօշի. * ի ժամանակի ինաչելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անառանելոց Հասանայ կրօնաւորեցելոց, և որդւոյ նորա վախթանգայ, ի գղեկին որ անուանի Հայթերք, գլխաւորի այլոց իշխանաց ։

Պաղէբ։ Յիշատակի յայսմաւուրս ի 29 մարտի։ Այն ոմն յիշխանացն զօրագլխաց (հնոց՝) եւ ի կողմանս Բրգախոս . . . ի տեղին Պաղաբլուր օթևանս կալեալ, ուր էին աշակերտքն մեսրոպայ ։ ի վերոյ դնի մերձ յարցախ՝ յասէնս. * Ղարձեալ եկին յաղուանս, և քնակեցան ի տեղի մի որ կոչի Պաղաբլուր, հուպ ի Բրգախ գաւառին [2] որ է Խաչէնք ։ Կոչեցաւ այս պէս, վասն զի ի վերայ մարմնոյ Թագուհի անուն մեծազ գի կնոջ՝ որ սպանաւ ի զօրագլխէն հնոց, էջ լոյս աստ ղաձև, որպէս գնի անդէն յայսմաւուրս։ * Պաղտպէս ցոլացեալ խաղայր լոյն ի վերայ կաթուածի արեան Թագուհւոյն. և ժողովեցին զնշխարս նը Թագուհւոյն՝ ամփոփեցին և եդին ի բլրակին, և անուանեցին զայն Պաղաբլուր ։

Վէղափայ ։ Ի անուն մնացարանի ի համանուն լերին։ Կոչեցաւ այսպէս՝ սակ դիզելոյ անդէն հնոց զմարմինս քրիստոնէից և այրելոյ, յաւուրս աշակերտացն մեսրոպայ, ըստ պատմելոյ յայսմաւուրսդ ի 29 մարտի ։ * Իսկ որ դիք զօրավարին մովսէս և երանաղիս և այլ զօրքն հաւատացեալ փախեան ի լեառն որ կոչի Վէղափայ, որոց

(1) Ի միւսմ հետ օրինակի վարդանայ գրի Հայրէբ, որ ի սովրական օրինական գրի Հայրէբ · նոյնպէս և առ կիրակոսի բազում ուրեք գրի Հայրէբ, Հայրէբոյ. և ուրեք առ նմին կիրակոսի գրի նաև Խայրէբ։

(2) Կոյնպէս գրի և ի հին յայսմաւուրս տէր խորայելի ի մարտի 30. համառօտ այսպէս. * Յայսմ աւուր որ վկայքն կատարեցան ՅԱՂուղաբլուրն հուպ ՅԱՐցախ ։

զՀետ երթեալ անօրինացն՝ կոտորեցին զնոսա անդ, և ժողովեալ կուտեցին զնոսա ի մի վայր, և այրեցին հրով, և անուանեցին զբեառն Ոխիզափայա, վասն զի քան զբ-փայտ դիզեցին զնոսա և այրեցին։ Եւ յետ ժամանակաց միանակեացք ոմանք արք Ճգնաւորք եկեալ բնակեցան անդ, և արարին իւրեանց վանս զտեղին ։ Եւ անք պատմեն ցուցանեն լինել՝ի կողմանս արցախայ։ Եւ վարդան աշխարհպետիր յետ դնելոյ զարշաւս, դնէ և զայս ա սեղով. * Ոխզափայան [1] Ոխզայ և Վարանդայ է ։

Այրեվանք։ Կիրակոս յիշէ զսա ընդ ամուր բերդս։ * Ըստ ին և նոքա (զաքարէ և իւանէ,) բազում գաւառս ի պարսից, և բերդս ամուրս զգարդման, զքարհերձ, և զԱյրեվանք ։ Այսպա յարձակեցան մեղաւ թաթարք՝ զորոց դրէ կիրակոս. * Յարձակեցան ի վերայ այլ բերդին որ ընդ իշխանութիւն վահրամայ ի Ցերուանդեան, և Այրեվանայ, և ի Վաճանբերդն՝ զոր ոմնէր կիւրիկէ բագրատունի որդի աղսարթանայ ։

Ոմանք բերդին Այրեվանից ըստ ասելոյ կիրակոսի՝ էր առաջին վանք վանական վարդապետին, զոր աւերեաց Ջալալէտինն սուլտանն հինից։

(1) Ասպես գնի յերկուս ձեռ. նայ, իսկ յայլ յերիս ձեռ՝. և ի ոագիրս՝ որք երևին լինել հարա- տակ. որք են ընդարձակութիւնք դաս աշխարհագրութիւն վարդա- վարդանայ՝ պակասի այս բան։

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ

Ընտն սորա ձգի աստ և անդ արտաքոյ իւրոց սահմանաց, ի Պարսս՝ որ էր Ասիւոի, ի Տիեռս՝ որ է ի վերս, մինչև տարակուսիլ մեզ և ի վերայ Ասբէդափենի, կամ Ասբէդափ անուանա՝ գուցէ ի փայտակարան անուանել աստի ինչ ածանցեալ առ աշխարհագիրս յունաց և հռոմայեցւոց. զի են տեղիք՝ որք զանուն իւրեանց յայլմէ տեղւոյ ընկալան, յորոց տարակոյին սահմանաւ. նա զի և զԱսբէդափենի ի զանազան տեղիս ձգեն։ Պտղոմէոս մանն պարսից կացուցանէ. սպենիոս ի մէջ պարթևաց և արեաց. երոդոտոս ընդ աղգս մարաց դասէ, որպէս և ստեփանիոս բիւզանդացի զԱսբէդափ՝ մարաց քաղաք գնէ. սղրաւեն գիրք ժա. սահմանակիցս գնէ պարսից. իսկ ի ԺԸ. գիրս. Թզթ. 732. սահմանակիցս Ադոլընիա դի, որ ըստ նորա էր Ասիդագենի գաւառ ասորեստա նեայց՝ ձգեալ մինչ ի տիգրիս։

Այս սակս հակառակ՝ ինքն փայտակարան նահանգ յա նուն այլոց աշխարհաց կոչի նախ՝ յանուն Ադոաենոյ, զի զանատոլուկ ասողիկ ի ք. 3. գնէ իշխան աղուանից, զոր խորենացին ի ք. 3. յուցանէ իշխան փայտակարա նի կարգեալ ի տրդատայ։ Այս զդիդորիս կոչեն ի գիրս՝ Ալիակոպոս աղուանից, որպէս կոչէ նաև բուզանդ ի ք. 6. * Ալլ վասն գրիգորի եպիսկոպոսի ... որ կաթողիկոսն էր կողմանցն վրաց և աղուանից ‖։ Այս սակայն կարգեալ էր եպիսկոպոս փայտակարան քաղաքի. զի որ պէս պատմէ խորենացին ի ք. 3. * Վործակալք կողմանցն արևելեայ հիւսիսոյ՝ վերակացուք հեռաւոր քաղաքին՝ որ կոչի փայտակարան ‖, ինդրեցին ի տրդատայ տալ նոցա եպիսկոպոս ի ձառակէ սըզն գրիգորի։ Այս տրդատ * Տայ նոցա եպիսկոպոս զմանուկն գրիգորիս ‖։ Այսինքն վերակացուաց փայտակարանի, և ոչ ընդհակ

աղօսանից ։ Այլ ինքն խորենացին մահուանն գրիգորիսի զաղուանս դնէ պատճառ՝ որք էին փայտակարանցիք, յասելն . * Իսկ ի հաստանել համբաւոյն վախճանին սրբոյ դատոյ՝ ի դաւեղոյ նորին սանատրկոյ, և այլոց ոմանց հանապազաստուտ սրանց աղօսանից, սպանին զկրանելին ընթադրեալ ձիով բարբարոսքն ի վ ատնեան գաշտին, մերձ ի կասպիականն կոչեցեալ ծով ։ Այս յորժամ սա նատրուկ հակառակ Թագ կապեալ ի փայտակարան քա զաքի՝ գնաց նախարարօք իւրովք առ շապուհ, որոց յայտ է Թէ գլխաւորքն էին ի փայտակարանէ՝ խորենացին ի ջ . 6 . կոչէ զնոս առհասարակ Ղ. ղուանից նախարարք [1] ։

Արկրորդ՝ կոչի յանուն Ա՛թոյ և Ղ՛րպապականի՝ որք նգիպէս էն մարք, ուչ միայն առ օտար ազգաց մատենագ գիրս, այլ նաև ի հայկական գիրս, զորօրինակ առ բուզանդայ ի ջ . 6 . յասելն վասն գրիգորիսի . * Ե ինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, և ձգեցաւ ի գաւառակողմանցն ատրպատականի, քարոզ Հնմարտութեն հաւատոյն քրիստոսի կենդանւոյ ։ Արդանօր փո խանակ փայտակարանի՝ (ուր տիրապէս առաքեցաւ, և քարոզեաց գրիգորիս ըստ խորենացւոյն,) գնի՝ Գաւառա ղողմանի ատրպատականի ։ Այս այս՝ սակս գոլոյ սահմնականիցն ատրպատականի, նաև ընդ ժամանակս ինչ ընդ տերու թեամբ ատրպատականաց . և վասն այնորիկ Թերևս ան ուանք գաւառաց փայտակարանի բերին զՀնդուանն մա բաց՝ օտարս ի հայկական հնչմանէն ։

Արկրորդ՝ կոչի նաև Կասէ, զոր յօրինուք ստորև ։

Ա՛ան գրեաց ստոյգ գրէ խորենացին . * Յետ կայ ու տիոյ առ երասխաւ ։ Արդ փայտակարան անկանի ուչ միայն յարևելեան կողմն ուտի նահանգին, այլ նաև և բասխայ . վասն զի գուտի նահանգ խորենացին գնէ յա րևմտից երասխայ . արդ՝ փայտակարան ուչ կարի լինել առ երասխաւ՝ միանգամայն և յարևելից ուտից, բայց եԹէ լինելով նաև յարևելից երասխայ ։ Այս այսպէս և բասխ անցանէ ընդ մէջ երկոցունցս՝ յարևմտից ունելով

(1) Վասն երկուց պատճառաց մարԹի է ասել Թէ փայտակարան ըստ մասին երբեմն կոչեցաւ յանուն աղուանից . մի՝ Թերևս առ բազ մութԹ բնակչաց աղուանից սփռե լոց ընդ համօրէն նահանգն կամ ի գլխաւոր քաղաքն . և երկրորդ՝ մանաւանդ վասն գործակալացն . իբր զի գործակալք կարգելք ի կողմն արևելից հիւսկոյ՝ էշխէն յայնժամ առհասարակ կողմանցն աղուանից . որպէս նաև փայտա կարանի ։ Այլ որով և իցէ պատ ճառաւ՝ ճշմարիտ է Թէ փայտա կարան կոչեցաւ ուրեք ուրեք և յանուն աղուանից ։

զուտ, իսկ յարևելից զփայտակարան. որով և ուտի անկանի յարևմտից փայտակարանի, իսկ փայտակարան յարևելից կամ յելից ուտիոյ։

Զգի այս նահանգ մինչև ՚ի ծոին կասպից, և ՚ի սմա անկանի բերան կամ խառնուածն երասխայ յայն ծով. զի թէ մեծ հայք սահմանակից է կասպից ծովուն ՚ի մուտս անդ երասխայ ՚ի ծով, (որպէս յայտնի ունիս տեսանել ՚ի ներածումն մեծին հայոց,) ՚ի միջ ժե. նահանգաց մեծ ծին հայոց՝ ոչ կարեմք գտանել զայլ նահանգ յարմար այսր գրոց ըստ աշխարհագրութեան խորենացւոյն, բայց եթէ զփայտակարան։ Ա՚յլ գիւրաբերն է որոշել թէ արդեօք ձգէը ընդ երկուս կողմանս բերանոյն երասխայ, թէ միայն ՚ի մի կողմն, այսինքն ՚ի հարաւակողմն կամ ընդ աջմէ գետոյն. զի թէպէտ զսահման ազուանից, կամ որ նոյն է՝ ալպանից՝ պտղոմէոս ձգէ ՚ի հարաւոյ մինչև ՚ի խառնուածն կուր կամ երասխ գետոյն ՚ի ծով, բայց պարտ զոմէոս ոչ գիտէր ճշգրտիւ զսահման փայտակարանի, և ոչ իսկ զսահմանակցաց ազուանից՝ որպէս գիտէ խորենացին՝ որ զազուանս ձգէ մինչև ՚ի խառնուածն երասխայ ՚ի կուր, այլ ոչ մինչև ՚ի խառնուածն երասխայ ՚ի ծով. ոչ գիտէր և պտղոմէոս թէ փայտակարան սահման հայոց՝ կոչէր նաև Ա՚զուանք։

Ա՚յս նահանգ անկանի յայնմ սահմանի՝ որ կոչի Կասբ, ին. Վասբ, որպէս յայտնի գնին մեր մատենագիրք, զորօրինակ ասողիկ ը. 3. գրե վասն կայսեր հերակլեայ. * Վառնայ ՚ի մարս, գայ հասանէ ՚ի փայտակարան յաշխարհն կասբից ‖։ Ա՚ւ ագաթանգեղոս թղթ. մխզ. ըզ-փայտակարան քաղաք գնէ ՚ի կասբս, յասելն. * Ապա ՚ի սահմանս կասբից ՚ի փայտակարան քաղաք արքայութեն հայոց ‖։ Ա՚յոյսպէս և բուզանդ որ ՚ի ե. 14. գնէ խորա-գիր Յաղաբ կասբից, և ստորև պատմէ զփայտակարան քաղաքէ, յայտ արարեալ թէ անկանէր ՚ի կասբս։ * Ա՚պա ինդրեր (ասէ) զվրէժն մեծապէս սպարապետն մուշեղ յերկրէն պարսից [1] և ՚ի փայտակարան քաղաքէ, փոխանակ զի և նոքա նշխարեցին ստեղծն արքային հայոց ‖։ Օ այն ակնարկէ և խորենացին՝ որ ՚ի ստորագրել զսահման մեծին հայոց, ձգէ * Ա՚ռ ատրպատակա-

(1) Աստուն Պարսից վրիպակաւ գրեալ փոխանակ անուանս Կասբից. որով յայտնելի և խորագրին, և վերագրեալ մատենագրաց, թէպէտ և ՚ի տպ. և յբիս ձեռ՛. գնի Պարսից։ Այսպէս վրիպակաւ սպրդեալ է և ՚ի խորենացին ը. 50։

նաւ ել մարս՝ մինչև ի մուտս երասխայ ի կասբից ծով ‖ : Ուրանօր հարկ է անկանել վայոտակարան նահանգին մեծին հայոց՝ որպէս ցուցաք ի վերոյ : Իսկ ի ստորագրելն զկասբից ծով, և ի Թուէլն զչորեակայ ազգս որք բնակ կեալ կան զնովաւ, զկասբս գնել ի մուտս անդ երասխայ ի կասբից ծով՝ որ է սահմանն փայտակարանի :

Ուրանօր գնէ զկասբս և զլինիոս որ ի Ղ. 12. ստորագրելով զարևմտեայ կողմն կասբից ծովուն՝ Թուէ զաղգս բնակեալս յայն կողմն, և զգետս որք հոսին ընդ աւազանիս, այսինքն ընդ աղուանս, և ի յիշելն զՀերոս, այն է Կուր գետ՝ ասէ. * ի Հերոսէ (1) Կասբից ծովն սկսաւ կոչիլ. անդ բնակին Կասբք ‖ : Այսինքն որպէս մեկնեն մատենիւք ի բառն Կասբ*, ի չորեակայս կուր գետոյն ուրանօր բնակին Կասբք՝ ծովն սկսանի կոչիլ յաւ նմանն Կասբից. քանզի զանազան կողմանք ծովուն զանազան անուամբք կոչեին : Այս այսպէս ասէ Կասբք ել սկիզն նիոսի սկսանին անդ՝ ուրանօր կուր գետ խառնելով յեբասխ՝ զեղուլ ի ծովն Կասբից, ուր և անկանի վայոտակարան. ուր ուրեք սկիզնիոս ձգէ ասէ զանուանս կասբից ի հիւսիսակողմն կուր գետոյ՝ որպէս այլք գնեն, այլ յարևելս հարաւոյ կուր կամ երասխ գետոյն :

Յերատոսթենէսէ առ սգրաւելնի գիրք ԺԱ. Թղթ. 514. ի յիշելն զազգս բնակեալս ընդ ծովեզերս Կասբից՝ յետ աղուանից՝ կամ որ նոյն է ալվանից՝ յիշէ զկասբս իբր սահմանակից, որպէս էր վայոտակարան նահանգ. և նոյն ինքն սգրաւելն գիրք ԺԱ. Թղթ. 528. պատմէ Թէ Կասբք, կամ որպէս կոչէ անդէն նա ինքն Կասբեանս* (2), ի մարաց առաւ, և գրաւեցաւ ի սահմանս հայաստանեայց. որով և ըստ սգրաւելնի Կասբք էր ի հայաստան գնեմ ընդ ժա

(1) Այսինքն ի կուր գետոյ : Պարտ է գիտել (զոր օրինակ ուրեք նախ տեսանել ի ներսէսեան հին հայաստանեայց ի գլ. գետոց.) Թէ զոր խորենացին Երասխ կոչէ յետ խառնելոյ կուր գետոյն և երասխայ ի միասին մինչև ի ծով, պլինիոս և օտարազգի մատենագիրք կոչեն կուր նաև զայն մասն մինչև ի ծով. միայն սգրաւելն Թղթ. 528. համաձայն խորենացւոյն գնէ վերասխ առ ծայրիս ալվանից կամ աղուանից, որով լինի բաժանիչ ընդ հայս և ընդ աղուանս :

(2) Խահակ վռոսի ի լուծ մունս մեկայի գիրք ԻՈ. գլ. 2. նշանակէ Թէ Գասբք և Գասբիանք զանազանին. զորօրինակ Աբիա (ըստ մեզ՝ Աբիք,) և Աբիանք զանազանին, զի Աբիա կոչեցաւ ասէ առանձինն երկիրն ձգեալ առ Աբեաց գետով. իսկ Աբիանք՝ համօրին տէրութիւն Աբեաց, յորում անկանին զանազան աշխարհք. այլ այս զանազանուն ոչ այնչափ հաւաստի երևի մատենիւք :

*մանակս ինչ։ Յակ Թղթ. 502. գնեն զայն յաղուանս, ա-
ւելով. * Ալբանիացւոց (այսինքն աղուանից) է՝ նաև
Պասբիանի, ի Պասբից ազգէն զանուանն ընկալեալ, ուս-
տի կոչի և Ծոփն. այս ազգ այժմ աղօտ լինի է գլխովին* (1)։

Աղուանք կոչի ոչ միայն Արցախ և Ուտի, այլ նաև Վայոց ձորոյ մեր, որպէս ցուցաք ի վերոյ. նո-
քին աղագաւ սպրալէն ուրեք գնեն զվաճառս յաղուանս,
ուրեք գնեն ի մարս, և ապա ի հայս. վասն զի Վայոց
ձորայ քրիստոնեայ նահանգ հայոց՝ երբեմն լինէր ընդ տէրու-
թիւն մարաց, որպէս և առ ժամանակօք խորենացւոյն. երբեմն
կոչէր յանուն աղուանից։ Յաց յայսմանէ հաստատական
երևի մեզ՝ թէ Վասբք ձգէր ոչ միայն ի Վայոց ձորոյ
նահանգ հայոց, այլ նաև արտաքոյ նորին ընդ երկայնու-
թիւն ծովուն ըստ մասին ի մարս, և ըստ մասին յաղուանս,
վասն այնորիկ երբեմն սմին, և երբեմն նմին ընծայեն
նախնիքն (2)։

Ի բանից աստի մինչև ցարդ յառաջ բերելոցս յայտ
է՝ թէ այն ազգք Վասբից զորս նախնիքն գնեն բնակեալ
ընդ ծովեզերս Համանուն ծովուն, էին ի փայտակարան
և ի շրջակայս նորա. մինչև թէ գոյի ոք ի նախնեաց՝ որ
յայլ կողմն ծովուն ձգեսցէ զվաճառս հետէ ի փայտակա-
րանէ, միաբան համաձայնութեամբ վերոգրեալ զանազան մա-
տենագրաց հայոց յոմանց և հռոմայեցւոց ուղղագրեն
զնորուն գիրս (3)։

(1) Ագաթօնիս հատ. Ք. Թղթ. 363. ըստ տպ. Լիբսիոյ ի 1773. ի խօսելն զալպանից, գրէ թէ սպրալէն սովին բանիւ զՎասբիա-նա գնէ յայիկոյս կուբ, կամ է բասխ դեռոյն, ի կողմն մարաց, որ է յայլմէ կամ ի հարաւոյ դէ-ռոյն (ուր է փայտակարան). իսկ զայս սահման պատմիս գնէ ա-սէ ի հայաստան, որպէս և է ի-րաք, ըստ գնելոյ խորենացւոյն։

(2) Երկու ինչ ծանուցանէ մատ-դեխէ կարևոր ի տեղեկութիւն Վասբից. մի զի նախնիք չուներն որոշ ծանօթութեի զմեծութէ և զձևոյ Վասպից ծովուն, չէ պարտ յուզել ի նուա սայգ և որոշ սահմանս ազգաց բնակելոց զծով եզերաք նորին, յորոց մի են և Վասբք։ Երկրորդ՝ զի երևի թէ անուանս Վասբք էր մականուն. և բաց յանուանէս Վասբք՝ ունէին և առանձին անուանս, որպէս և իրաք այս նահանգ հայոց առան-ձին անուամբ կոչէր Փայտակա-րան, և իբրև մականուամբ Վասբք. այլ թէ մատենիկ ունէր զայսպ-սիկ տեղեկութիւն հանեալս ի մե-ծոց մատենագրաց, և նովին տե-ղեկութիւ մտագրէր գիրս յոմանց և հռոմայեցւոց, որոշագոյն գիրք զգրից Վասբից,

(3) Քանզի պատմիս գիրք Ա. գլ. 2. ի խօսելն զմարաց՝ ասէ. Յակ զարևմտեայս միտիոյ (մարաց) առ հայաստանեօք ուրեմն Վասբք։ Եւ ի Ե. 13. ի ճառելն զհայոց մեծաց՝ ընդ մէջ մարաց և հայոց դնէ գօսէ ինչ լերանց Վասբք անուանեալ. և ի սատրագրելն ան-

Ա.ԱՀԼ բաց ի սմանէ յիշատակէն նախնիք և այլ կատ բիական անուանս գրանց, լերին, ձմեռապարհն, նահ ազգի, զոր հարկ է ստանիօր որոշել առ ի չշփոթել ի միասին։ Արդ՝ որպէս գրէ Համամատիկն ագրաւանի (1), * Երկու են ազգք Վասբից, մին առաւել յարեւմուտս քան զՎատուս առ Համանուն ծովու, և գամիխի գե առ. իսկ միւսն մերձ ի բարթիս (պարթաւս), ուր են գրունք Վասբից ։ Ա.այս Վամիխի չէ այն զոր պատղ ամս գնէ ի մարս, այլ զոր պլինիոս գնէ յաղուանս, նմին իսկ առաջին յիշատակեալ ազգ սորա է նոյն՝ զորմէ խո սեցաք մինչև ցարդ. իսկ երկրորդ ազգն տարբեր է գլեռ վին, որ անկանի ի միջ պարթաւից և մարաց ։

Ընդհանօր գնեն այլք ի նախնեաց զԱրտաշս Վասբից. պատղամոս Ճ. 2. և ագրաւին գիրք ժա. յատեր. * Վեծաւ գոյն լայնութեամբ միտից (այսինքն՝ մարաց) երեւի յանցից զաղերիս, (որով) կոչէին զգլուխս միտից, մինչև ի Վաս բիական գրունս ընդ սիզերանի ։ Երբեմն գիրք Ճ. յատերն՝ թէ աղեքսանդր ի հալածելն զդարեհ ի ժա. աւուրս յեկբատանայ եկն ի ռագա (հռագուէ) որ միջ բեայ հեռի է ի գրանց կասբից ։ Ար գիմոսթենես բերելի գնին զպարթաւս գնէ բնակեալ, * Ար ոտամբ գրանց Վասբից ։ Այլ խոխդորոս գարագէնոս գնէ անգէն ոչ միայն գրունս, այլև լեառն Վասպիական. զի զքարաքս քաղաք գնէ առ լերամբ՝ * Որ ասի Վասբիոս, յորմէ անուանին գրունք Վասբիականք ։ Օ այս քաղաք պրտղոմէոս համարի լինել հանդիպ պարթաւից, նա մանաւանդ ի սահմանակցութեան մարաց և պարթաւց ։ Ար այսպէս այս անուանի գրունք կասբից՝ որք են ի միջ մարաց և պարթաւից, այժմ անկանին յայն լերինս՝ որք են

դէն զընթացս երասխայ՝ գնէ անցանել առ կասբից լերամբ։ Որոյ վասն պարտ է գիտել նախ, զի ըստ այմ պտղոմէոս զկասբս հեռի գնէ ի համանուն ծովէն, հեռի և ի փայտակարանէ։ Երկրորդ՝ գնէ լով զկասբից լեառն առ երասխաւ՝ ըստ մասին գնէ զայն ի հայաստան. քանզի երասխ ընդ միջ հայաստանեայց անցանէ։ Ար երրորդ՝ նաև զգօտի լերինն կասբից պարտ է գնել ի հայաստան, զի ընդ միջ մարաց և հայոց չէք այլ ինչ ազգ ատար։

Ար ինքն պտղոմէոս կամեցաւ ցուցանել թէ ըստ միջ երկոցունց անկանի գօտի լերանց՝ զոր ինքն կոչեաց Գասբք, այլ ոչ որոշեաց՝ թէ այս լերինք և բնակիչք նորին են տարբեր, կամ թէ անկանին ի մարս. ուստի առ ի համաձայնեցուցանել զպտղոմէոս ընդ այլս՝ պարտ է գնել ի հայս, այլ ըստ նորա՝ ի պարսկահայս, ի կոր Ճէս, Եմ. բայց ոչ ի փայտակարան։

(1) Գիրք ժա. թղթ. 127. ի տպագրութեան ամստրդ. ի 1707։

'ի մէջ դէպերիսթանի և իրագ առնդի ։

Օ այլ դրունս կասբից եգին այլք 'ի հիւսիսոյ կուր գետոյն՝ 'ի մէջ լերանց կովկասու, որ է անցք 'ի վիրս. այլ պլինիոս գ. 13. վերիպեալ համարի գնոսա, և ուղղէ կոչել զայնսոսիկ դրունս յանուն կովկասու (1), և ոչ կառ բից ։ Ի նոյն կողմանս՝ այսինքն ընդ մէջ կողքիսոյ և ծո վուն կասբից գնէ սպրավոն գիրք ը. Թղ. 91. և զ ևառն ինչ Վաաբէից, որով չփոթէ ասէ մասդկինիէ զևառն կով կասու ընդ լերին կասբից ։ Այս գաչիդոս գիրք ղ. գլ. 33. ընդ մէջ սեաւ և կասբից ծովու 'ի լերինս կովկասու գնէ Վաաբէական ճանապարհ, ընդ որ վիրք տեարք ձգնաժ պարհին անցուցանէին զսարմատացիս 'ի հայաստան, և սրգելուին զեկեալս յօգնութէ պարթևաց ։ Այս գիրք ա. պատմութե. գլ. 6. յիշէ Վախանդ կի կապան կասբից, զոր մասդկինիէ նոյն համարի ընդ վերոգրելոյն, և նոյն ը անցից կամ կապանին՝ զոր պլինիոս կոչէ Վրունս կով կասու ։

Այս դրունք կովկասու՝ զոր այլք կոչեցին յանուն կասբից, անկանին ը նորուն մասդկինիէի յայն սահման՝ զոր այժմ կոչեմք Ալ բասան, զկողմանիք Թիֆլիսու, այս ինքն տփխեաց, յոր կողին և յիրաւի ձգեցաւ առ մեր մատենագիրս անունս վայատակարան, որ կոչեր և կասբք՝ որպէս ունիս տեսանել ստորև. այլ զանունս կասբից ոչ ձգեցին յայն կողմանս ։ (2) Յիշատակի ինչ ուրեք առ խո րենացւոյն ը. 83. բան այսպիսի. * Վարոզեաց 'ի կղարջից սկսեալ առ դրամբք ալանաց և կասբից, մինչև 'ի սահ մանս մասքեաց՝ որպէս ուսուցանեն քեզ ազաթանգեղոս ։ Այլ աստ զանունս Վրուն չէ պարտ բերել նաև 'ի վե րայ կասբից, այլ իմանալ՝ որպէս իմանայ ազաթանգեղոս 'ի յիշ. սահլով. * 'ի սահմանս մասքեաց մինչև 'ի դրունս

(1) Յովսեպոս գիրք ժը. գլ. 6. զայս դրունս կասբից՝ զոր ըստ պլինիոսի պարտ է կոչել դրունս կովկասու, սահմանակից դնէ ալանաց, յասելն Թէ՝ Վիրք եռուն անցս ալանաց ընդ դրունս կաս բից, առ 'ի տալ պատերազմ ընդ դէմ արտաւանայ. յորմէ մարթի է 'ի կարծիս անկանիլ Թէ այն դրունն ալանաց սակայ յիշատա կեալ 'ի գիրս մեր, իբրէ նոյն ընդ դրանց կովկասու, կամ ըստ այլոց կասբից ։ Ասի զի յոհաննէս կա թուղիկոս զդրունն ալանաց (որ ըստ ձեռագրի խորենացւոյն էր 'ի ծանարս 'ի սարմատիա,) ցուցա նէ լինել մերձ 'ի գետարս, զոր օրինակ էր և այս դրունն կովկա սու, կամ կասբից. այլ զայս այ լոց թողուած 'ի քննել, իբր ար տաքոյ մերոց սահմանաց հայաս տանեայց ։

(2) Յիշատակի և 'ի տպ. աշ խարհագր. խորեն. 'ի սարմատիա ազգ ինչ կոչէին. այլ պահասի այն անունն յերկուս ձեռագիրս,

ալանաց, մինչև ՚ի սահմանս Կասբից ‖. և ոչ ՚ի դրունս Կասբից։

Այս այսպէս յերիս տեղիս ձգէն նախնիք զանունս Կասբից. մի՝ ՚ի բերանի կուր կամ երասխ գետոյն, այսինքն ՚ի վայտակարան. երկրորդ՝ ընդ մէջ մարաց և պարթևաց։ Լռաջնոյն ազգն անուանի քան զերկրորդին, այլ ոչ յիշեն անդ դրունս կասբից. զերկրորդին յիշեն և զդրունս, և զլեառն, և զազգ, այլ դրունքն նորին անուանի. իսկ երրորդն ձգի ՚ի լերինս կովկասու, ուր յիշեն զգ Ճանապարհ, զկիրճ, և զլեառն. այլ այս երրորդն սակաւ ուրեք յիշատակի (1)։

Ով ՚ի զառաջինն գրաւեաց զկասբս ՚ի սահմանս հայաստանեայց՝ անյայտ է ՚ի պատմութենէդ. այլ քանզի կասբք է նոյն ընդ վայտակարանի՝ միւսն ՚ի ժէ. նահանգաց մեծին հայոց, յայտ է թէ արամ կամ նորոգ էառ, կամ մանաւանդ զառեալն յիւրոց նախնեաց առաւել ևս սեպհականեցոյց ազգիս. զի որպէս այլուր նշանակեալ է մեր՝ ժէ. նահանգք մեծին հայոց էին սեպհական ազգիս նաև յառաջ քան զարամ։

Յետ արամայ քաջայայտ երևի՝ թէ տիրէին կասբից և հզօր թագաւորք ՚ի յետագայս, գէթ մեծն տիգրան, վաղարշակ, ՚ա. արտաշէս, ՚բ. տիգրան (մինչին), որք և եղեն ընդարձակողք սահմանաց. զի թէ տիրէր կասբից տրդատ՝ որպէս ուսուցանէ ագաթանգեղոս, և ա. ռաւել տիրէին զօրաւորագոյնքն յարշակունիս, որոց

և գտանի միայն ՚ի միւսին՝ որ բազում ուրեք համաձայնի ընդ տպագրելոյն, նաև ՚ի սխալանս, յորում և գրի Կասբէ։

(1) Զդիպս պատմեալ զոր յիշեցաք ՚ի վերոյ, ոչ համարիմ տարբեր յառաջնոյն. այլ է նոյն իսկ Ժողովուրդ և լեառն կասբից առ համանուն ծովու, զոր սա ինքն պատմէ քանի մի տասնձանաք փոխագրէ յարևմուտս հարաւոյ հեռի ՚ի ծովէն, որպէս և նշանակէ չէ չէլլարիոս. և է իբր տասնձաղնուի կարծեալ ՚ի վերոյ տեղւոյ մի և նոյն Ժողովրդեան, ումանց ասս դնելով, և ումանց անդ։ Յորում չէ պարտ հետևել պատմեալ յայսոսիկ կողմանս, քանզի և զընթացս երասխայ ըստ մասին խառնէ ՚ի կուր, և ըստ մասին ՚ի ծով ուրոյն ուրոյն բերանով, զոր ոչ ոք գնէ ՚ի նախնեաց։

Ասլուր մերձ ՚ի կողմանս տիգրիսի թուի գնել զդրունս կասբից պլինիոս՝ որ ՚ի. 15. գրէ՝ թէ Բրադիգք անուն Ժողովուրդք մարաց՝ որք սահմանակիցք են կորդուաց բնակելոց առ տիգրիս, ունին զդրունս կասբից. այլ յայսմանէ չէ մարթ ստոյգ ինչ որոշել. զի նոյն պլինիոս գլ. 25. զԲրադիգեան Ժողովուրդ մարաց գնէ ուղղութեամբ յարևմտից պարթևաց. ուր և գնեն նախայիշատակեալ մատենագիրքն զդրունս կասբից, որով Բրադիգք տարաբնային յոյժ ՚ի կողմանց տիգրիսի, ուր եդ զառաջինն։

ահմանն չէր յափշտակեալ ի Թշնամեաց, որպէս յափըշտակեաց ի պարսից յաւուրս մանկութեան տղայոյ։ Այն սակս առաւն արտաքսիայ և դարձեալ զօրավար զօրացն մեծին անտիոքոսի, զորմէ պատմէ սգրաւէն գիրք ԺԱ. Թղթ 528. ուչ է նոր առաւն Կասբից ի հայս՝ (եգեալ և ատոյգ գնորին պատմութեի զոր բերէ յայլոց գրուացայ), այլ անգրէն գրաւուն. զի հայկազունքն արամ և մեծն տիգրան բազմօք յառաջ էն քան զմեծն անտիոքոս.

Ի ժամանակս ը. արտաշէսի արքային մերոյ՝ ընդ տերութիւ հայոց և պարսից դնէ լեալ խորհնացէն ը. 30. զկասբս, և յաւուրս նորա ապստամբեալ, և դարձեալ ի ձեռն քաջին ամբատայ հնազանդեցուցեալ. որոյ՝ որ պէս գրէ անդէն. * Օ երկիրն Կասբից [1] աւերեալ՝ առաւել քան զարտազեան գերին բազմութիւ ածէ ի հայս, ընդ որս և զղարդմանս անուն թագաւոր նոցին ‖։

Վարձեալ ապստամբեցան Կասբք ի հայոց յաւուրս ը. արշակայ ըստ պատմելոց բուզանդայ գ. 30։ * Յետ այսորիկ (ասէ) ապստամբեաց ի թագաւորէն հայոց և ձեռնի իշխանութեանն տանն հայոց թագաւորին՝ որ էր զատրպատական աշխարհաւն, յետս եկաց ի թագաւորէն հայոց ամուր աշխարհն մարաց, յետս եկաց յարքայէն հայոց և աշխարհն կապղից ‖։ Ի մէջ սպա բապետ պապայ արքայի անդրէն նուաճեաց, և ի հարկի կացոյց։

Ի բերոյ՝ ունի վայտակարան ըստ խորհնացւոյն Կամ բակ անբաւ, և Վարի ինքնաբոյս։

Վ ամն գաւառաց սորա գրէ խորհնացին՝ որպէս ասացաք, թէ * Կ. ժամատրպատականք ունին ‖. ուր ի միում ձեռագրի գրի՝ * Կ. ժամատրպատական անուանէն ‖։ Նոյնպէս թէև նոցին յաճնայն օրինակս աշխարհագրութիւ խորհնացւոյն նշանակին ժը. բայց ապա ի թուէն յանուանէ ի տպ". և ի միում ձեռ". գտանին ժգ. գաւառք. իսկ յերկուս ձեռագրս՝ ժգ. որպէս ունիս տեսանել յառաջ ցուցակդ։ Կ. Թովմայի կիլիկեցւոյ՝ յորում վերպակաս և Թերատ գրեալ կան անուանք գաւառաց, զնոսին ամենեցուն յաւելու էր ի գաւառաց վայտակարանի և զվաղքք։

(1) ի տպ. վերպակաս գնի Կասբէն, և յերրորդում՝ Կասբէն։ Պասբէն, բայց յերկուս ձեռ". գնի

ա. Հրաւոտ. (1)
բ. Պերճ.
գ. Ալ արդանակերտ.
դ. Հօրինեցուածոյ բագինք.
ե. Վոսկեան. (2)
զ. Ալվերձաղաչ. (3)
է. Վաղանոսք. (4)
ը. Խոտոռուն. (5)
թ. Խնճանձանք. (6)
ժ. Ալիշ. (7)
ժա. Խաչատան. (8)
ժբ. Ալպանդարանի պերճ. (9)
ժգ. Ալրմղեպերճ. (10)
ժդ. Ալատան. (11)

Հայոցեաց գաւառացս միջի՝ անուն Ալ արդանակերտի ևեթ յիշատակի՛ ի գիրս, զոր և քննեցուք յատաջիկ կայդ, այլ նախ եդեալ զվայրատակարան քաղաքաւ՝ որոյ գաւառ անծանօթ է:

Վայրատակարան: Վաղաք՝ որ անկանի յայսմ նահանգի, որպէս և անունն իսկ յայտ առնէ՝ գոլով համանուն ընդ նահանգի. զնոյն ցուցանեն և վերոգրեալ բանք ագաթանգեղոսի և բուզանդայ, նոյնպէս և խորենացւոյն ՚ի 3. որ նախ զվայրատակարան կոչէ Վաղաք հեռաւոր ՚ի բացակողմանն իշխանութեանէ տրդատայ. ապա զայս բացակողմն ցուցանէ լինել ՚ի կողմն ազռւանից և ՚ի կողմն կասբից ծովուն. և ՚ի գլ. 6. առ աւրպատականաւ, և առ պարսից սահմանաւ, որպիսի էր վայրատակարան նահանգ (12):

(1) Աւյսպէս դնի և ՚ի տպ. գրեալն և ՚ի միւսմ ձեռագրի. իսկ յերկուս ձեռագրս՝ Հրէտք:

(2) Պահասի այս անուն ՚ի տպ. և ՚ի միւսմ ձեռ՛. և գտանի յեր. կուս ձեռագրս:

(3) Աւյսպէս դնի յերկուս ձեռ՛. իսկ ՚ի միւսմ և ՚ի տպ. գրի այսպէս. Ալ-նի Ռոխիշաղայ:

(4) Աւյսպէս յերկու ձեռագ. դիրս, իսկ ՚ի միւսմ և ՚ի տպ. Խաղանոսք:

(5) Այնպէս դնի յերկուս ձեռ՛. իսկ ՚ի տպ. և ՚ի միւսմ ձեռ՛. Աոոս:

(6) Աւյսպէս դնի յերկուս ձեռ՛. իսկ ՚ի միւսմ Պէնձան յօդի ընդ վերոգրելոյն, գրելով Աոոս պէնձան. ՚ի տպ. Պէնձանձանքն:

(7) Աւյսպէս յերկուս ձեռ՛. իսկ ՚ի տպ՛. և ՚ի միւսմ ձեռ՛. Աիշ:

(8) Մինչև ցայժմ յեզր կասբից ծովուն է քաղաք լինչ կոչեցեալ Բաթա, որ թերևս անկանի յայսմ գաւառի, զանուն իւր պահեալ ՚ի վերայ:

(9) ՚Ի տպ՛. և ՚ի միւսմ ձեռ՛. Պանդարանդէրճ. իսկ ՚ի միւսմ ձեռ՛. վրիպակաւ գրեալ կայ և յերկուս բաժանեալ. առ Թոմայի կիլիկեցւոյ գրի Պանդարան:

(10) Աւյսպէս գրի յերկուս ձեռ. իսկ ՚ի տպ. և ՚ի միւսմ ձեռ. Ռրմդ պերճ. առ Թոմ. կիլիկ՛. Ռրմդան:

(11) Աւյսպէս յերկուս ձեռ՛. իսկ ՚ի տպ՛. և ՚ի միւսմ ձեռ՛, Աշատան:

(12) Խորէն. յայն գլ. դնէ զՂփայատակարան քաղաք ընդ գործա կալաք կողմանցն արևելեան հիւսիսոյ, յոր կոչին անկանի և փայատակարան նահանգ ըստ գրից հայ մարդկն հայոց: Ձաւել և զայս, թէ խորէն. առանն ոչ զփայատակարան,

Օ այս ՚ի միտ առեալ, պարտ է այժմ քննել զդժուա-
բութիւնն որ ծագի ՚ի բանից յետագայ մատենագրաց,
քանզի սոքա սկսեալ ՚ի Թովմայէ արծրունւոյ՝ նորին կացու-
ցանեն զՓայտակարան ընդ Տփղիս քաղաքի։ * Եւ խա-
զաց (ասէ Թովմ. արծր. էջ. 8. վանն բուղայի) հասեալ
նեղ ՚ի վերայ արևելից աշխարհին, և հրամայեաց հասեալ
նեղ ՚ի վերայ քաղաքին Տփղիս կոչեցեալ, որում յառա-
ջագոյն Փայտակարան անուանէին, (զի) և ՚ի փայտից
մայրենից շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք, և պատ-
ուարք, և ապարանք նոցա, և ամենայն տուն բնակաց
քաղաքին, և ամենայն կազմած պատրաստութեան նո-
ցա ‖։ Այսպէս և երկնակոյսն ՚ի նախագրութեն Հառնն
երկնային շարժման՝ ուր ասէ. * Պատահեաց գալ ինձ ՚ի
կողմանս Ճաճասահ Թագաւորութեան աշխարհիս վրաց, ՚ի
հռչակաւոր և ՚ի մեծ մայրաքաղաքն ՚ի Տփղիս, Փայտա-
կարան կոչեցեալ ՚ի գիրս պատմողաց ‖։

Պարբերն էր մեկնել զբանս սոցա՝ ասելով, թէ Տփղիս
քաղաք ՚ի ժամանակս սոցա կոչէր Փայտակարան, եթէ
ոչ յաւելուածն Յոհաննէսի, կամ թէ՝ ՚ի գիրս պատմողաց
Փայտակարան կոչէր Տփղիս։ Արդ կամին ասել, թէ
այն՝ որ այժմ Տփղիս կոչի ՚ի ժամանակս մատենագրաց
նախ քան զմեզ եղելոց՝ կոչէր Փայտակարան։ Պարբերն
լինէր նաև՝ եթէ յայտ առնէին, թէ ո՛ր պատմագրքէ են՝
որք զՏփղիս կոչեցին Փայտակարան. զի յոհաննէս կա-
թողիկոս ուրոյն անուանէ զՏփղիս՝ կոչելով Այրաքա-
ղաք վրաց, և ուրոյն զՓայտակարան, ոչ ուրեք նոմանացու-
ցեալ զերկոսին։ Խորենացին զՏփղիս ընդ Շամշուդէ
քաղաքին դնէ ՚ի վիրս. արդ՝ վիրք ՚ի հայոց գնահատն
գուգադաց առնին, այլ ոչ զՓայտակարան՝ որ կարի ինն
բացակայի ՚ի նոցունց։ Այսպէս և եղիշէ, և բուզանդ,
և ագաթանգեղոս զՓայտակարան դնեն յայն կողմն՝ ուս-
տի հեռի է յոյժ Տփղիս՝ որ կայ մինչև ցայժմ, և կոչի
Թիֆլիս, զորմէ տես ՚ի Նոր Հայ՞. 276։

Չէ մարթի և ասել, թէ զքաղաքն զոր նախնիքն կոչե-
ցին Փայտակարան, յետագայք կոչեցին Տփղիս, վասն
ընդդէմ ելանելոյ գրիցն. զի որպէս խորենացին զՏփղիս
դնէ ՚ի վիրս՝ որով տարակայի յոյժ ՚ի Փայտակարան քա-

այլ զգործակալս կոչէ Ազիենէոն հայոց՝ որ անկանէր յարևելս հիւ-
հիւսիսոյ. այսինքն գործակալ կա- սիսոյ. և առհասն նոցա ձգէր նահ
յուցեալ էին համօրէն կողմանցն ՚ի վերայ Փայտակարանի,

զաքէն, սոյնպէս և յոհաննէս երզնկացին գնէ ՚ի վիւս. և որպէս յոհաննէս կաթուղիկոս զՏփխոս գնէ առ կուր գետովք յասելն վասն ամբաստ. * Զգեալ աձեցուցանէր զշաւիղ տերութեանն իւրոյ ... զկուր գետով մինչև ՚ի քաղաքն Տփխոս ||, նոյնպէս և Թովմա արծրունի ՚ի գ. 8. յասելն վասն բուղայի. * Ասայց հասեալ բուհայ անց ընդ գետն մեծ՝ որ կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն, և բնակել շուրջ զքաղաքաւանն ||, այն է Տփխեաց: Նա վասն նորին Տփխոս քաղաքի ասէ, թէ առ փայտակերտ գոլոյն՝ դիւրաւ այրեաց զայն բուղայ: * Կոյնժամայն շուրջ փակեալ (ասէ) զքաղաքաւանն (Տփխեաց՝ զոր և ՚ի վերոյ կոչեաց փայտակարան,) հրձգուեցաւ, և դիզեալ բորբոքեր հուրն ՚ի դիւրաճախ փայտէն մայրից և գիւց ||:

Նա որպէս յոհաննէս կաթուղիկոս մերձ գուցանէ ըզՏփխոս ՚ի բերդն Շ ամշուդէ՝ յասելն վասն նորուն բերդապահից, թէ յօդնութիւն կոչեցին իբր մեսակայս իւրեանց * Ո սպայազօրսն Տփխեաց, և զծովրծոյսն կովկասու || ընդդէմ մեսակայ Թշնամւոյն[1], սոյնպէս և Թովմա արծրունի՝ զմի գուռն Տփխեաց գնէ ՚ի Ճանապարհին շամշուդէի, ուստի և մերձ նմին: * Ասէ քաղաքապետն սահակ (ասէ) ելեալ ընդ գուռնն (Տփխեաց՝) որ ելանէ ՚ի բերդն Շ ամշոյ ||: [2]

Նա այսպէս ոչ կարեմք ստուգել զբանս սոցա, թէ մի՞ք էն ՚ի նախնեաց՝ որք զՏփխոս կոչեցին փայտակարան, որպէս կոչեն ինքեանք. և կասկածիմք վրիպանօք սպրդեալ այս կարծիք առ յետագայ մատենագիրս՝ ՚ի վերոյ նախնեաց. և յայնմանէ ուրեք ուրեք շփոթեցին զայս նոր փայտակարան (որ է Տփխիք) ընդ հին փայտակարանին որ է ՚ի համանուն նահանգի: Այսպէս և յայտնի իսկ սխալանօք դնի յայսմաւուրս յու. 31.

(1) Յայտ է թէ վասակ և աշոտ բերդապահք շամշուդէի զմեծաւորս իւրեանց կոչեցին յօդնութիւն ընդդէմ աշտոյ թագաւորին՝ յորմէ ապստամբեալ էին, և ոչ ՚ի փայտակարան քաղաքէ և ՚ի նահանգէ՝ որ էր հեռի, և գրեթէ առհասարակ գրաւեալ յայնժամ ՚ի տաճկաց:

(2) Մի՛ ոք ընդդէմ ածիցէ առ այս՝ թէ Թովմա արծրունի ՚ի վերոգրեալ բանի զՏփխոս գնէ յաբևելս՝ որ ոչ անկանի յայն կողմն, այլ ՚ի հիւսիս. նախ՝ զի ոչ վասն Տփխեաց, այլ վասն բուղայի գրէ, թէ ել հասանել ՚ի վերոյ արևելից աշխարհն. և բուղա ընդ զանազան քաղաքս Ճանապարհորդեաց. երկրորդ՝ զի և կողմանքն հաղբատայ, սանահնի, ևն՝ որք անկանին ՚ի հիւսիսակողմն, ՚ի գիրս յետագայ մատենագրաց կոչին՝ արևելից աշխարհ:

'ի տպագր. 'ի վարս ղևոնդեանց, ուր Տփխիս կոչի այն փայտակարան քաղաք, զոր եղիշէ գնէ 'ի փայտակարան նահանգի Թղթ. 88. 'ի գրելն վասն միհրներսեհի. * Նստեալ մերձ 'ի սահմանս հայոց՝ մտանէր 'ի քաղաքն փայտակարան, և զգօրսն առնային սիրեալ տարածանէր շուրջ զքաղաքաւն ‖ : Միհրներսէհ քանզի 'ի պարսից սահմանէն մտանէր 'ի սահմանս հայոց, փայտակարանաւն իմանայ եղիշէ զայն քաղաք՝ որ անկանի յայժմ փայտակարան նահանգի, և ոչ որ 'ի վիրս. որպէս յայտ առնէ զայս նաև անտուստ յետս դառնալն նորին միհրներսեհի յերկիրն արևելից 'ի պարս՝ առ 'ի յանդիման լինել թագաւորին պարսից, որպէս գրէ եղիշէ 'ի Թղթ. 96. և յառաջանալն մանկանիսաալաւուրտայ 'ի փայտակարանէ 'ի հեր և 'ի զարևանդ գառառ հայոց. (առ նմին եղիշէի Թղթ. 104.) զի այս ամենայն յարմարին գրոց փայտակարան նահանգին[1]. և սակայն յայսմաւուրս վասն նորուն միհրներսեհի գրի այսպէս. * Նմին 'ի փայտակարան քաղաք՝ որ է Տփխիս ‖ :

Օ սոյն վրիպանս և առ վարդանայ աշխարհագրի գտանեմք՝ որ գրէ. * Փայտակարան Տփխիս է. Վարդանայ կերտ Տփխեաց վիճակին է ‖ : Ընդ՝ որպէս յայտնի գիտեմք 'ի խորենացւոյն՝ թէ Վարդանակերտ է 'ի փայտակարան նահանգի, նոյնպէս յայտնի է և վրիպակն սորա 'ի դնել զնոյն 'ի վիճակին Տփխեաց. յորմէ ղհետ գայ և երրորդն՝ թէ նոյնպէս վրիպակ է՝ Տփխիս կոչելն յետ նոց զփայտակարանին խորենացւոյն :

Օ սոյն վրիպանս և զասողկայ կասկածիմք. զի ուր յո հանիւնէս կաթողիկոս գրէ գյուսփայ ոստիկանին՝ թէ գայ 'ի փայտակարան, և անտի ընդ Ուտի գառառ մինչև ցՏաշրատափ, անդէն վասն նորին յուսփայ գրէ, գնալ նախ 'ի Պարտաւ՝ որ է քաղաք յուտի գառառին, և անտի գաղտագնաց եղեալ ընդ Տփխիս՝ հասանել 'ի Տաշիր[2] :

(1) Պատմութիւնն իսկ եղիշէի յուսցանէ զայս, զի մանչկանն որ զօրագլուխ կարգեցաւ 'ի միհրներսեհէ 'ի փայտակարանի անդ, հարկ էր մտանել 'ի հեր և 'ի զարևանդ գառառ, այսինքն 'ի պարսկահայս՝ առ 'ի խաղալ անտի ընդդէմ բանակին հայոց, որ էր 'ի կողմանս այրարատոյ. իսկ թէ այս փայտակարան Տփխիս լինէր՝ կրկնութիւն էր ձանապարհաց՝ 'ի Տփխեաց մտանել 'ի հեր և 'ի զարևանդ, և անտի 'ի կողմանս այրարատոյ, զի 'ի Տփխեաց կարէր գնալ յայրատ՝ առանց գնալոյ 'ի հեր և 'ի զարևանդ :

(2) Յայսոսիկ բանս ասողկայ ամենայն անուանեալ համաձայնին՝

Ա.յլ ստուգել զսոցա վերկոսան՝ Թողումբ յետագային, և մեք հաւանական համարիմք՝ թէ ընկէ փայտակարան քաղաք յիշատակեալ ՚ի նախնեաց՝ է ՚ի փայտակարան նահանգի. իսկ զկնի՝ նաև Տփխիս քաղաք վըաց կոչեցաւ ՚ի հայոց փայտակարան, ըստ վկայելոց յետագայ մատենագրացս, յորս յաւել և զԹովմա մեծոփեցի՝ որ իբր մի և նոյն անուն զերկոսին ՚ի գործ ածէ՝ յասելն վասն Թագաւորին Թաթարացն ազախու. * Ընթացեալ բազում զօրօք ՚ի փայտակարան Տփխիս քաղաք ‖ : Այս սակս փայտակերտ գոլոյ շինուածոցն՝ որպէս ասէ Թովմա արձրունի, և այնպէս լինին կրկին քաղաքք փայտակարան անուանեալ: Իսկ վերոգրեալ մատենագրաց՝ առաջինն՝ լինի կարծել զնախնեաց Թէ և նոքա զՏփխիս կոչէին փայտակարան, և Թէ՝ մի և նոյն փայտակարան էր նախնեաց՝ որ կոչէր նաև Տփխիս: Երկրորդ՝ որ զհետ գայ յառաջինն վերոյգրելոյ՝ ինքեանք մի և նոյն համարեալ զանուանս Տփխիս՝ ձգեցին ՚ի վերայ փայտակարանին առաջնոց, կոչելով Տփխիս նաև զայն փայտակարան նախնեաց, և փոխանակ միոեանց ՚ի գործ ածելով (1):

Ա.յսաՓանգեղոս՝ որպէս գրեցաք ՚ի վերոյ, կոչէ զայս հին փայտակարան Վաղաշ արքայաքնէ հայոց, յորմէ երևի լինել ՚ի նմա ապարանք արքունականք, ուր երբեմն եղ քեան գնայիկ Թագաւորք հայոց զաւօսանաց աղագաւ, կամ ՚ի ժամանակս պատերազմի. այլ քնակել անդ Թագաւորի ուամբ որպէս յայլ Թագաւորանիստ քաղաքս՝ ոչ գտաւնեմք ուրեք. բայց եԹէ սանատրուկ արշակունի յետ մահուան տրդատայ՝ հակառակ որդւոյ նորին Թագ կապեաց ՚ի փայտակարան. այլ այս եղև ապստամբութ[ե]ան, և զկնի աւարտելոյ պատմութեան ագաԹանգեղոսի: Կամ Թէ կոչէ Վաղաշ արքայաքնէ հայոց՝ զաերութեանն հայոց նշանակելով, որպէս Թէ ասէր՝ Վաղաք ընդ Թագաւորութեամբ հայոց:

Տէրթանակերտ: Ա.ւան՝ այլ ՚ի քաղաքէն զոր եդաք յաղէ-

յիշատակելոցն ՚ի յոհաննէ կաԹուղիկոսէ, զի Տաշիր և Տաշրատուի է նոյն. միայն Տփխիս և կարգ տեղեացն են որք տարաձայնին, ուր Թերևս ասողիկ ճշդիւ ՚ի մոի եգեալ՝ Թէ Տփխիսն է փայտակարան, ընդ Թուեցաւ կարգ տեղեացն որ ՚ի յոհ. կաԹ. զի արդարև կրկնութ[ե]ամբ է ճանապարհի նախ գնալ ուամբ ՚ի Տփխիս. անտի յԱւան, անտի ՚ի Տաշիր. և յայս սակս Թերևս փոխեաց, նախ գնելով զՊարտաւ կամ զԱւան, ապա զՏփխիս:

(1) Զբանս մատթէոսի վասն փայտակարանի տես ՚ի Պարտաւ քաղաք՝ որ է յուսի:

նախ, զոր յայս նահանգ գնէ ասողիկ ի ԺԲ. 3. ասելով. *Պայ հասանէ ի Փայտակարան յաշխարհն կազբից, բանակին ի Տիգրանակերտ աւանի ‖ : Պատմէոս Ե. 13. կոչէ զայս Պէրիբանաման, կամ որպէս գնի ի բալագինեան ձեռագրի՝ Պէրիբանոամա, և գնէ ի մեծ հայս ի սահմանակցութենէ մեր բաց. Թէպէտ և տեղի նորա ճշդիւ ոչ համաձայնի ընդ սմա. քանզի որպէս բազում անգամ գրեալ եմք՝ սակաւ աւանս և քաղաքս է գտանել առ օտար ազգաց մատենագիրս՝ որոց տեղիք համաձայնեսցին ընդ ճշգրիտ տեղեացն, զոր նշանակեն մեր մատենագիրք։

ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏ։

Հայկական անուն այսր գաւառի՝ ըստ հնչմանն ուղ անծանօթի ի մեջ այլոց գաւառաց Փայտակարանի, գիտմ սնոյն աւան ունել ի սահմանի իւրում տայ մեզ ակնարկել Թէպէտ և ջանիմք ուսուցեք յիշատակութիւն հաւաստի զվարդանայ՝ յորոյ անուն կոչեցաւ։ Ւսակ զոր ղևոնդ պատմիչ ի գլ. ՀԲ.[1], և ասողիկ ի ԺԲ. 4. կոչեն

(1) Ջընդարձակ բանս ղևոնդեայ՝ որ սուրբգրէ զերիս տեղւոյ պատերազմի հանարարացն Հայոց ընդ զօրացն հագարացւոց, ի գեղ համօրինիւք կարգել ի վերլուծոմ ձեռ ասա։ * Եւ երբև գնաց (ա. աէ) մահմետ զօրավարն յաստրեխ եթող իշխան աշխարհիս Հայոց փոխանակ իւր յիսմայելացւոց. ո ըստ խորհուրդ վատ ի մէջ առեալ բանալ զազատախումբ առնին յաշխարհէս Հայոց հանդերձ նուցին հեծելովք. և անդ վաղվաղակի յայանեցաւ նենդութեն նորա սմպատայ՝ որ էր ի առմէն բազբառունեաց, և այլոց նախարարաց, և նոցին հեծելոց. իսկ երբև զգայր զդաւաճանութեն կոչէր առ ինքն զհամազունս իւր զազատախումբ բանակին՝ զամբառ որ դի աշտոի իշխանի, և զվարդ զոր դի Թէոդորոսի իշխանի, և զեղբայր իւր զաշոտ, և զայլ նախարարսն, և խորհէր հնարս գտանել՝ որով մարթասցին զանձինս ապրեցուցանել։

» Եւ եղև խորհրդին տեղի տալ և գնալ յաշխարհէս առ Թագաւորն յոնաց։ Եւ անդէն անձնատեալ մեկնեցան ոմանք ի նախարարաց վասպուրականի ի գաշտաւայր մարզին՝ որում Աբուսահլ կոչն կոչէն. քանզի անդ բնակեալ էր մայրնակեաց ոմն՝ առ որ ջգան հարցանել զորպիսութեն գործոյն, քանզի էր այր սուրբ և ընտրեալ . . . իսկ նորա աշխարհալ և աւազեալ զկորուստ աշխարհիս . . . յանձնեաց զնոսա ընորհացն ՚ն՝ և առաքեաց յիւրմէ։ Եւ նոքա գնացեալք ընդ եզր գետոյն երասխայ՝ անցանէին ընդ սահմանն Ա-ղձնեաց, և սահմանն էին ի մեծ աւանն Ա-կռաւ։

» Իսկ զօրքն իսմայիլի որք էին ի Նախջաւան քաղաքի յարձակեցան զինի նոցա, և ոչ մեկնեցան ի հետոյ նոցա, քանզի էին առել քան զնոսա. որ կամէին կենդանի ըսյն կալնել զնոսա։ Եւ երբև աղ-

Ալան, և ակնարկէն լինել մօտ յերասխ, ուր և յելս անդ է. գարուն հինգ հազար զօրք հայաբայլոց կոտորեցան յերկուց հազար զօրաց հայոց, ոչ անհին տարակուսիմք լինել այլուր, կամ ըստ կիրակոսի՝ ի բագրեւանդ գաւառի [1]. քանզի պատմիչք Ալան կոչեն զնոյն, և ոչ նշանակեն զգաւառն, և ոչ իսկ ցուցանեն զկարի իմն բաց ցակայութիւն այդր տեղւոյ պատերազմի՝ ի միջնագաւառ ասաց՝ յորս իշխեին պատերազմող իշխանքդ, որպիսի ոչ էր վարդանակերտ գաւառն փայտակարանի. քանզի և յոհաննէս կաթուղիկոս անորոշ իմն յիշատակէ, յասելն. * Ո այսու ժամանակաւ ապա լինի կռիւն ի Ալարդանա կերտի ... վասն որոյ ցարդ ևս բան առ հագուրացիսն ըստ իւրեանց աղիւսատրոյզ բառին պատմի, թէ Ալարդանա կերտ առիւ մի՛ շինեսցի մեզ ||:

եղև զօրուն հայոց վասն հինին որ զարթուցեալ գայր ի վերայ նոցա, յարուցեալ անցին ըստ գետն երասխ, և բնակեցան ի Վարդանակերտ յաւանի: Եւ զօրն տաճկաց պնդեալ գայր զկնի նոցա ... իսկ զօրուն հայոց ամրացուցեալ զփողոցս աւանին՝ կարգեցին ի վերայ պահապանս մինչև ի լուսանալ առաւօտին ... և իսկոյն ընդ ծագել առաւօտին ... յարուցեալ յարդարեցին գունդ առ գունդ և ճակատ առ ճակատ, և խմբեցան պատերազմին:

» Անդ հասեալ յօգնութիւն մեծաւ զօրն ՅԾ գնդին հայոց՝ թէպէտ և նուազագունք էին քան զթիւ երկուց հազարաց, սակայն զգազման հարեալ սատակէին ի սուր սուսերի, քանզի էին աւուրքն ցրտաշունչ սառնամանեաց, և առաւել (սաստ կացեալ) գառնաշունչ օդոյն՝ կատեցուցանէր զզօրսն խմայիլի յարիւական զօրութենէն իւրեանց, զի զդիւերն ամենայն ի վերայ ձեռն օթաւգացեալք էին, և ի ծագել լուսոյն անկան ի ձեռս սրոյ. և որք ի սրոյն փախեան՝ անկան ի դեան երասխ, քանզի սառուցեալ էր ի խստութենէ օդոյն. և իբրև ելանէին ի վերայ պաղին բազմութիւն զօրացն, անդէն վազվազակի խորոց մաանէին՝ խորտակեալ պաղին՝ որք ի սրոյն զերծեալք էին, և այնպէս հեղձմամբ վճարէին ի կենաց: Յօրոց նուաճունք ի փախուստ դարձեալ իբրև արք ՇՃ. ապաւինէին առ սիւկինն շուշան, զորոց զկնի հետամուտ եղեալ սմպատ որդի աշոտի զօրօք իւրովք՝ կամէր արկանել զփախստեայսն ի սուր սուսերի. որում ընդ յառաջ եղեալ տիկինն շուշան բազում աղերսանօք և գոհ չամբք թափէր զնոսա ...

» Իսկ զօրն հայոց ... առաքէին առ թագաւորն յունաց աւետիս յաղթութենէ իւրեանց, տային տանել նմա ընծայս յաւարէ թշնամեացն ... և կայսր ընկալեալ զայն նուէրն ... այլ բերել նմա պատիւ կուրապաղատութենէ ... և նոքա ընկալեալ զպատիւն .. առնոյր զզօրս իւր, և երթայր յաշխարհն տայոց, մնայեր յամրոցսն՝ յոլով թուխարան կոչէն, և զգուշանայր որգուցն խմայիլի ||: Ո՛չ երկրորդեմք զբանս ասողիկ՝ որ համառօտ զբանս վկանդեայ:

(1) Կիրակոս ի գրէն ցն ամբաստայ բագարատայ բիւրեղեան՝ որ յայրարդեաց ի մարզպանութեան աշոտոյ՝ յայրարդին ներսէհէ: Սա պատերազմեցաւ (ասէ) ընդ զօրս այլազգեաց ի վարդանակերտն աւանի, և յաղթեաց քաջութիւ ի Բագրեւանդ գաւառի ||:

Այնպէս և բանք վարդանայ յայտնի ցուցանէ զվարդանակերտն յիշատակեալ յայս պատմութիւն՝ կարի իմն հեռի լինել ի վայտակարան աշխարհէ, քանզի գրէ. *Գնացեալ մահմէդի՝ այլ ոստիկան առաքէ ի հայս աբդլա անուն՝ որ կամեցաւ բառնալ զազատագունդն հայոց, զսահակ կաթուղիկոս կապեալ առաքէ ի դամասկոս, և զիշխանս հայոց զմբատ և զդաւիթ խաչէ ի փայտի, և ինացեալ իշխանքն սմբատ և աշոտ և վարդ կամեցան փախչել ի յոյս. որոց հետամուտ եղեալ իսմայելացիքն՝ հասին ի Վարդանակերտ, և կռուեցան և սրախողխող եղեն առհասարակ յիշխանացն մերոց։ Զպաքէն իշխանք հայոց ի հայաստանէ փախչելին ի յոյս, և զնարդ հետամուտք նոցին հասանելին զհետ նոցա ի փայտակարան՝ որ մերձ է ի պարտ կամ յաղուանս, տես և զբանս գնա ի վերլուծումնէ։

Այս ևս՝ ի սկիզբն ը. դարուն գագիկ որդի վահանայ կամսարականի՝ շինեաց ի Վարդանակերտ եկեղեցի, ուր և կատարեաց զտօն նահատակութեանն քեռն իւրոյ սրբուհ ւոյն շուշանայ, որպէս պատմի ի պատմութենէ եպիսկ պոսացն արշարունեաց ի Ճառընտիրն և ի կանոնսիրս։ Այս ևս հաստատ գիրք կարծիս, թէ գուցէ ի մեր ձեռս եղիս իշխանութենէ կամսարականաց իցէ Վարդանակերտ աւանդ, որում և նպաստեն բանք զևոնդեայ։

ՈՒՏ

Յերկուս ձեռագիրս վարդանայ աշխարհագրի գրի Աթոռ : Ասէպ ՚ի գործ ածի յարակցեալ ունելով զառաջինսն : * Իսկ և իսկ ժամանեալ գուժկան (ասէ յոհաննէս կաթողիկոս) Հաւտի գաւառէ առ Թագաւորն աշոտ հասանէր, ասելով նմա զեղս իշխանին սահակայ առ ներոյ նորա Հաւտի գաւառ ‖ : Յոր անուն կոչի աստէն նահանգն, և ոչ լոկ գաւառն. զի ստորև յիշի զարդմանն՝ որ ոչ էր յոստի գաւառին, այլ յոստի նահանգին :

՚Ի գործ ածի երբեմն նաև սոսկ առանձին, կամ և ՚ի հոլովմունս, որպէս յասելն խորենացւոյն վասն գուգաբանաց՝ Թէ ՚Ի տէղ կայ Աթոռ: Կոչի նաև Աթոռաց գաւառ, որպէս է տեսանել ՚ի ճառընտիրս ՚ի պատմութեանէ գիւտի նշխարաց գրիգորի. * Յայժ հրաշակեալ լուր սքանչ գրիգոր ընդ ամենայն աշխարհն Հայոց գաւառին ‖ : (1)

Աւ խորենացւոյն էջ. 71. գրի Աթոռոց գաւառ. իսկ առ յոհաննու կաթողիկոսի ուրեք՝ Աղխարհ Աթոռոց : Կոչի նաև առ ագաթանգեղոսի Թղթ. է. Ասէ գաւառ. ՚ի տպ". Ասէ գաւառ, որ է նոյն ընդ անուանս Աթոռ. զի որպէս ագաթանգեղոս զանակայ յանդիման լինելն առ խոսրով, զնէ յայսմ Ասէ գաւառին, այսպէս և խորէն. էջ. 71. զխոսրով զնէ լեալ յայնմ ժամանակի Աթոռոց գաւառին :

Աւ օտար ազգաց մատենագիրս՝ այս անուն գրի Ատրպատական, զոր ստեփանոս կոչէ Ատան հայաստանեայց, և ՚ի վկայ ուղի կոչէ զգուստարադս՝ որ այսպէս գրէ յերրորդ գիրս պարթևաց. * Իսկ բագորոս արքայ հայաստանեայց զայնու ժամանակաւ մերձ ՚ի յարդաքսադա (այն է՝ արտա-

(1) Աւ յայսմ գրի յերկուս հին որք գրեալ կայ Աթոռոց գաւառնիս. իսկ ՚ի նոր ճառընտիրս՝ առին.

շատ), և ի Գէնի հայոց կացեալ։ առ արտաշատաւ դնելով սահմանակից կացուցանէ երասխ գետոյ։ Ել յերկրորդ գիրս դնէ առ կուր գետով. * Ո գիրոս (այլ ինքն զկուր) գետով բնակին Վաղք և Գինք որք են մեծ մասն հայաստանեայց։ Յիշատակէ զԳինի և բարգեծան ասորի առ եւսեբեայ ի նախապատր. աւետ տար. գիրք Ժ. Թիւ 10։

Ընդ պլին. ջ. 13. լատին հնչմամբ գրի Գէնէ։ * Ընդ բագինէ (ասէ) ի Գինէ գաւառէն հայոց երասխոյ բաժանեալ։ Ընդ սինոքն որպէս մեկնի հարտուին, Ընդ պատական կցի ընդ մեծ հայս, յորոյ յարևելեան կողմանի՝ որ Գինէ կոչի, միայն երասխ գետով բաժանի։ Այն այս անուն է՝ որ առ պաղոմիոսի Ե. 13. գրի վրիպակաւ Աօքինէ, և գնի ի մեծ հայս մերձ ի կուր գետ. և յաշխարհագոյցս պաղոմեայ գրի Աօքինէ, որպէս նշանակէ ընդ պլոյ նաև պօշար։

Ասէ յանուանի աստի՝ որ է մի և նոյն անուն զանազան հնչմամբ, և զանազան օրինակաւ գրեալ, կոչի նաև յանուն Ընդանիից՝ սակս գոլոյ ընդ տերունիք նոցին։ Ւսկ բնակիչքն յորջորջին նաև յայլ նոր անուն՝ իբրև առանձին ժողովուրդ, այն է Ա՝ ոդէ, որպէս վկայէ յոհաննէս կաթողիկոս, յասելն. * Ի գիտելով զնենգութիւն զօրաց իւրեանց բնակչաց Աւտի գաւառի՝ որ են Աևորդիք։ զորոյ զպատճառն գնէ յայս բան. * Ղուկ զօրու ծանուս հրոսակ գեորգեայ նահապետին Աևորդեաց, որ սակս Աև կոչեցելոյ հաւտուն իւրեանց՝ ազգն յայն անուն Աևորդիք անուանէին։ Ընդ ասողիսկայ այս անուն գրի Աէ՝՝ ոդէ՝՝. որ առ ընդարձակողին վարդանայ աշխարհագրի՝ գրի Ա՝՝ ոդէ՝՝։ Տես ստորև և զՏաւս գիւղ։

Սովին անուամբ, որպէս և ուրեք ուրեք Աւտեացւոց անուամբ իբր մնանաւոր ազգ յիշատակին սոքա [1]։

Նաև Եպիսկոպոսունք իսկ յայս անուն յիշատակին ի գիրս, որպիսի են՝ Ա՝արտիրոս և Գրիգոր եպիսկոպոսունք Աևորդեաց։

(1) Ա՝յլոց Թողցուք ի քննել զանանիս գետով. քանզի բաց ի վե՛ ազգին Ա՝՝ ոդէ՝՝, զորս պլի. Նիոս ջ. 7. յիշատակէ ընդ սար. մատագիս. արգեօք Աէ՝՝ ոդէ՝՝ էին ի կարգս սարմատացւոց ազանց դասեալ՝ ի նմանէ, թէ հաւտուած լինէ Աևաւորգեաց բնակեալ առ մերձաւորութիւն անուանց՝ սոլինոս գլ. ԺԶ. զՅաւրօմագս ի մարաց անտի սերեալս գնէ. իսկ անուն Ա՝արք՝ ուրեք ուրեք փոխանակ հայոց առեալ լինի առ նախնիս։

Վրբք սորա ըստ պլինիոսի անկանի առ երասխաւ, իսկ ըստ գուատրադոսի՝ առ երասխաւ և առ կուր գետով, համաձայն խորենացւոյն՝ որ գրէ. * Ի մէնից կայ երասխայ՝ ընդ միջ արցախայ և կուր գետոյ ‖: Ի յսինքն անկանի յարևմտից երասխայ ի հարաւոյ կուր գետոյ, և յարևելից արցախայ. յորմէ յայտ է թէ՝ մի ծայր նորա անկանի ի խառնուածն անդ կուր գետոյն յերասխ. և որ պէս ցուցանեն տեղիք որք կան միմեանս ցայժմ, ինքն Ալան նահանգ երկայնաձգեալ կայ առ աջակողմանէ կուր գետոյն, յերկուց՝ նա մանաւանդ յերից կողմանց պատեալ ջրով, ի հիւսիսոյ և յարևելից՝ կուր գետով, (ուրանօր եդ զԱլան և գուատրագոս). իսկ ի հարաւոյ՝ սակաւուք երասխաւ:

Ի կուր գետով սահմանակից լինի աղուանից, քանզի խորենացին զաղուանս ձգէ մինչև * ի հայոց սահման առ կուր գետով ‖. և * Ինչպէս ի խառնուածնն երասխայ ի կուր գետ ‖: Ի երասխաւ սահմանակից լինի փայտակարսի ըստ խորենացւոյն, զորմէ տես ի ստորագրութիւնէ փայտակարսին:

Իսկ ըստ պլինիոսի՝ սահմանակից լինի ատրպատականէ, քանզի պլինիոս զՓայտակարան դասէ ընդ ատրպատական:

Անի ամուր և անէծ տեղիս, զորոյ զանձաւախիտ ամրոցս մայրեաց՝ որք էին ի գարգմանն գաւառի սորա, այլ և զանտառախիտ մայրիս՝ որ էին առ ափն կուր գետոյ, յիշէ յոհաննէս կաթողիկոս:

Ի բերոյ ոմնի ըստ խորենացւոյն՝ Հիթենի սակաւ գիւտ ի հայաստան, Ա արընկենի (1): Պլինիոս ժբ. 12. գնէ և կինամոն, Ի մոմում ձայնեալ լո: * Ի ասանի (ասէ Ի մոմում) և ի մասին հայաստանեայց՝ որ կոչի Գնէն ‖: Օ որմէ տեսցես ի ներածութիւնէ հայաստանեայց: Իսկ ի Թռչնոց ոմնի՝ կատակ:

Ատեացւոց սերունդ էջանէ ի զաւակացն առանայ, որ էր ի ցեղէն սիսակայ, և կարգեցաւ ի վաղարշակայ կողմնակալ արևելից հիւսիսոյ կողմանն, որպէս է տեսանել առ խոր. բ. 7. կամ ըստ Ձեռ". 8. * Ի սորա (այս ինքն առանայ) զաւակէ ասեն սերեալ զազգ Ատեաց

(1) Ի Ձեռ". աշխարհագր. խոր. բեն. գրի Վայրենի: Յերկուս ընդ. Ձեռ". խորեն". և ոչ Թռչնոյն ի միում Ձեռագրի: կիլիկեցւոյ յիշատակի ի բերս և Յասմիկ, որ ոչ գտանի ի տպ. և

ւոյ [1] և ծովեզեացւոց, և գարգարացւոց իշխանութիւն ||։ Կարուք բնիւրս, ապստամբս, և ձիւաղաբարոյս կոչէ զԱտեացիս յոհ. կաթ. և միշտ աւազակութենէ պարապեալ։

Յորժամ ապստամբեցան ՚ի ք. արշակայ հեռաւոր նաև հանգիպ մեծին հայոց, նաև այն սահմանք որք էին արտաքոյ հայաստանեայց, բայց ընդ տերութիւն հայոց, յայնժամ զայս նահանգ իշխ մեծի մասին գրաւեցին աղուանք. այլ մուշեղ սպարապետ պապայ արքայի անդրկն կարկ իշ տերութիւն հայոց։ * Կապիեր ՚ի նոցանէ (ասէ բուզ. է. 13. այսինքն յաղուանից) բազում գաւառս, զոր հաւ տեալ էր նոցա ՚ի նոցանէն (այսինքն ՚ի հայոց), զԱւան, և զշակաշէն, և զձորն գարդմանայ, զկողթ. և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք, և զկուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն աղուանից՝ և ընդ երկիրն իւրեանց՝ սահման արարեալ կացուցանէին. և ՚ի գլխաւորացն բազում սպանանէին, և զնացուղդն ՚ի հարկի կացուցանէին ||։ Այլ ՚ի ժամանակս խորենացւոյ էր գարձեալ սիրելին աղուանք. զկնի ժամանակաց՝ ա. ամբաստ վերստին էառ ընդ իւրև. իսկ աշոտ շահնշահ յաջորդ նորա, որում սիրելի էր յոյժ Աւան, երբեմն պատերազմեաւ, և երբեմն սիրով հազիւ ընդ իւրեաւ նուաճ ձեռալ պահէր, յորմէ ստէպ ստէպ ապստամբէին։

Գաւառք սորա՝ զորս աղուանք ունէին առ ժամանակ կօք խոր. յաշխարհագրութենէ նորին գնին լինել եօթն, այլ զկնի ՚ի թուելն յանուանէ, ուր գաւառք նշանակին ըստ այմ կարգի.

ա. Ալբանոպա. [2]
բ. Տոռէ. [3]
գ. Ուռվոպայական. [4]
դ. Ալդուէ. [5]
ե. Ուշանապակ. [6]
զ. Գարդման.
է. Շակաշէն.
ը. Ուռէ առանձնակ.

(1) ՚Ի տպ. և ՚ի միւմ ձեռ. զկնի Ուռէացւոց, կամ որպէս է ՚ի տպ. Օգեացւոց, գնի անուն Գարգմանացւոց, այլ յերկուս ձեռ՚. պակասի այն անուն։

(2) Ալյապես գնի յերիս ձեռ. իսկ ՚ի տպ՚. Ալբանոպա։

(3) Ալյապես յերկուս ձեռ՚. իսկ ՚ի տպ. և ՚ի միւմ ձեռ. Տոռ։

(4) Ցերկուս ձեռ՚. այապես գնի, իսկ ՚ի միւմ Ուռպայեան. յորմէ յայտ է թէ վրիպակ է ՚ի տպ. անուն Տոպայեան։

(5) ՚Ի տպ. և ՚ի միւմ ձեռ՚. այսպէս գնի, իսկ յերկուս ձեռ՚. Ալդուէր։

(6) Ալյապես յերկուս ձեռ՚. իսկ ՚ի տպ՚. և ՚ի միւմ ձեռ՚. Տուշապակ։

Երևելի գաւառ ուսեալցուց՝ որ Թուի լինել նոյն ընդ անուանս Վարդմանայ յոր որ յիշատակի առ խոր. և առ բուզ. Ե. 13. ընդ այլ գաւառս ուստի նահանգին. այսպէս կոչեցեալ ի ձորավայրը գրէից իւրոց։ Զոյն անուն և՝ որ առ բուզ. Ը. 50. վերնագրեալ գրի Վարգմանաչոր, կամ ըստ այլ ձեռ՛. Վարգմանանոր, փոխանակ գրելոյ Վարդմանաչոր. որպէս և ի միւմ ձեռ՛. առաւել ուղղութիւն գտանեմք գրեալ Վարդմանակոր. զի յայն գլ. Թուէ զսա ընդ ասսուամբեալ տեղիս. խակ ի պատմէն զանդրէն հնաւ զանդրէն զամենեցուն նոցա ի ձեռն մուշեղայ, դպր. Ե. ի 9. գլխոյն մինչև 320, ուր ուրեք գտանեմք զօտարաճայն անունդ վերադրեալ. այլ փոխանակ այնր ի 13. գլ Վարդմանաչոր, որպէս ասացաք։ Զոյն և Թերևս և ընդ այսր անուան Վարդամ, որ յիշատակի յերկուս օրինակս կիրաւ կոսի՝ յասելն վասն նեբսէսի արքեպիսկոպոսի աղուանից. * Իւինչ եպիսկոպոս էր Վարդամայ՝ հաւանեցոյց զկին ոմն ‖ [illegible] ։ Ի արգան աշխարհագիրը գրէ վե այսր. * Վարդման գաւառ՝ Վրնամանիկ է (1), ուր կայ գերեզման յոհան նէս վարդապետին մայրագոմեցոյն ‖ ։ (2)

Օ իշան սորա Խուրս անուն յիշէ խոր. Ը. 60. և յոհ. կաթ. զԱտրիճ անուն։ Զոյնպէս և եպիսկոպոս այսր գաւառիս՝ բաց ի վերոյիշեալ ներսէսէ՝ յիշատակի ի վարդանայ և ի կիրակոսէ՝ Յոհաննէս տէրոյ արքեպիսկոպոս Վարդմանայ և այլոց էերդից և գաւառաց, որպէս գրէ վարդան. որոյ Թեւին յայնժամ ընդարձակ տարածէր յոյժ (ըստ կիրակոսի) յայլ և այլ գաւառս, այսինքն ի վերայ քաղաքին Շ ամբոյց, կամ որպէս գրի յայլ օրին՛. Շ ամբոյ ըոյ՝ (որոյ գաւառն անծանօթ). Աղգեվանից՝ (զոր ստրաբոն գրէ յերիս ձեռ՛), Ջերունականին, և Տաւշոյ, և այլ կողմանց։ Զոյնպէս Եպիսկոպոս Թուի գարդմանայ

(1) Ա յսպէս գրի յերիս ձեռ՛. խակ ի ոմն. և ի միւմ ձեռ՛. գրի Վրբնամանիկ, և յայլումն ձեռ. Քրբնամանիկ. վերջին երկու ձեռ՛. են հարազատ վարդանայ օրինակք ա ռանց ընդարձակութեաց։

(2) Ա յլոց Թոզցուք ի քննել Թէ այժմեան անուանս Քարնէ, որ է նահանգ վրայ. ձգեալ մինչև ցայսոսիկ կողմանս, արգեօք ի Գարգման անուանէ ածանցեցի, զի պատմութիւն, օրպ. Թղթ. 8. ուր ի Գարբմանայ այլ ի Գարնաւոս անուանէ եղբօր հայկայ ածանցեալ դնէ։

և վերոյիշեալ եպիսկոպոսն Սարգիս եպիսկոպոս, զոր յիւ
ջեցաք յարցախ [1]։

Իշխանն հեթանոսութեանէ գտանէր յայս գաւառ մինչև
ի ժամանակս սրբոյն Մեսրոպայ, զոր երբարձ նոյն լինքն երա
նելին։ * Ինքն (մեսրոպ՝ ասէ խոր. գ. 60.) գառնայ
զվարդմանայ ձորոյին, զի և ի նմա լուսաւ լինել ի նոցին
ընկերաց աղանդոյն, զոր գտեալ ածէ և զնոսա ի դի
տութեն հեթանոսութեանէ, հանդերձ վերստին ուղղութէ իշ
խանին վարդմանայ, որում անուն էր Խոսրս ||։

Ունի իւր և բերդ՝ զոր հաւ բուղայ ըսա գրելոյ յով.
կաթ. * Ըհեալ գնայ ի գաւառն վարդմանայ, և պատ
նէ և պաշարուին շուրջ զվարդան բերդիւ եդեալ, ըմ
բռնէ անտի և գիշխանն վարդմանայ զկարիձն ||։ Ի ձե
ռաց աշտոյ շահանշահի հաւ աներ նորին սահակ իշ
խան, իսկ ի սահակայ անգրէն գրաւեաց նոյն աշտ աղ
քայ։ * Ւշ ապա (ասէ յով. կաթ.) զամրոյն առ հա
ռարակ զվարդմանայ՝ Թագաւորն լինքն գրաւեալ, և
զլովանդակ աշխարհն յիւր անուն նուաճեալ հնազան
դեր ||։ Ի ժէ. գարուն զաքարիա և իւանէ առին ի
պարսից։ * Ւդրն և նոքա (ասէ կիրակոս) բաղում գա
ւառս ի պարսից, և բերդս ամուրս զվարդման ||։

Վեհաբակո։ Օրմզ կիրակոս՝ յասէրն վասն յով. մայ
րագումեցոյն. * Ընթեալ յովհաննու ընտրեաց իւր տեղի
լուսթէ ի կողմանս Վեհաբակո բերդոյ [2] ||։ Ինկանի
յայս գաւառ, վասն զի յով. կաթ. և վարդան վասն նոյն
յովհաննու պատմին երթեալ ի գաւառն Վարդման. և
որպէս Թուի՝ էր ի ծայր գաւառին. քանզի գրէ վար
դան. * Ոգաւ յաղատս ի գլուխ Վարդման գաւա
ռի ||։ Ալ ասն որոյ և կիրակ". Թուի իբր որոշել արտա
քոյ գարդմանայ, յասէրն վասն մուղալոյ՝ Թէ յարձա
կեցան * ի Վարդման, և յայլ կողմանս՝ ի չարեքն, և
ի Վեհաբակո այլ ոմն գլխաւոր չոգաւ ||։ Ի ժէ. գա
րուն զաքարէ և իւանէ իշխանք առին զսա յայլազգեաց,

(1) Ի պատմութեան Ժողովոյն մանազկերտի յօրինակի միում յիշատակի ընդ եպիսկոպոսունս յա կողմկ ասորոց՝ Թ.Էզդոս եպիսկո պոս Վարդմանայ, բայց ուղղագրէ զվերնայնս սորա այլ օրինակ՝ ուր դրի Վաղդամէ, զոր և յիշատակէ յովսէփ ասսէման յարևելեան մա տենագարանի. գնելով զՎարդա մակ եպիսկոպոսանիսա քաղաք առ ասորիս։

(2) Ի միում օրինակի կիր. դրի Բէդոյ, և ի միւսում օրին. յոր մէ հանաք, ր տառս յօտար գրչէ գինի եղեալ կայ։

որպէս գրէ վարդան. * Լուծին զկարս ... և տպա զՀոտաբակս և զարեքն։

ՀԱՊԱՃԷՆ։

Առյսպէս գրի յերկուս ձեռ՛. աշխարհագր՛. խոր՛. խակ՛ ի տալ՛. և՛ ի միւմ ձեռ՛. Շ էկալէն, այլ զուղղութիւն առաջին գրութե՛ հաստատեն և օտար ազգաց աշխարհագիրք, առ որս առաջին վանկն նոյնպէս գրի ա տառիւ և ո՛չ է. Ապասէնէ կամ Ապասենէ։ Ազգ. գիրք. ժ՘ա. Թղթ. 528. ՛ի Թուէլէն զայն գաւառս հայաստանեայց, որք էին ձորավայրք և բարեբեր, մի՛ ի նոցանէ դնէ և զայս. և կացուցանէ յայնմ սահմանի, յորում և անկանի ուտի և շակաշէն։ Զետ դաշտավայրացն ասէ երասխա ձորոյ՝ ՛ի * Ապասենի. սա և առ երի կայ ալվանից (աղուանից) և գիրոս (կուր) գետոյ։ Եւ գիրք. բ. Թղթ. 73. ՛ի խօսելն զաքանչելի բեղինաւորութե՛ վրկանայ՝ գրէ. * Օ սոյն և ՛ի մարաց գաւառի (պատմեն) լինել, որ ասի մադդիանի, և ՛ի Ապասենի նաև յարաքսենի (այսինքն յերասխեան գաւառս) հայաստանեայց։

Եւ այսպէս ուղղիղ եդեալ կայ գիրք Ապասէն, կամ լատ. հնչմամբ Ապասէն գաւառին յաշխարհագրացն՝ որ դնի հա. Է. դրծոց արքունի ձեմարանին վարիզու արձանագրութե՛ և բանասիրութե՛ զկնի Ճառին Փիլէնեդայ, զի դնի ՛ի խառնմանէն անդ կուր գետոյ յերասխ, ուր և անկանի ըստ խոր. նաև ըստ այժմեան դրից՝ որ կայ մինչև յայժմ։

Օ նոյն կողմամբք դնէ և պլին. Ջ. 9. զբնակիչս սորա, զորս կոչէ Ապասանս, կացուցանելով ստորև՝ այսինքն ՛ի հարաւոյ մօքեանց և կուր գետոյ. տես ՛ի հարտաւին և ՛ի մառդինի։ Այն այս գաւառ է որ առ պտղ. Ե. 13. գրի վրիպակաւ Ապաբէնէ, և դնի ՛ի մեծ հայս զկողմամբք երասխայ, մերձ ՛ի գօթի Կարիատին լերանց, Թէպէտ և չելլարիոս տարակուսելով նոյնացուցանէ ընդ վերնոյն։

Զնոյն սորա յայտ առնէ՝ Թէ ՛ի Շ ակայ շինեցաւ, և յայնմանէ կոչեցաւ առ մեզ Շ ակաղէն։ այլ զպատմութե՛ նորին յօտարաց կարօտիմք առնուլ, որք զԱպաս կամ զՇ ակս ըստ մեր հնչման՝ դնեն լինել ազգ ինչ սկիւթաց ասց, սահմանակից մասսագէթաց, այսինքն մազքեաց, որպէս դնէ սգր. և որպէս ակնարկէ դիոդորոս սիկիլեա-

ցի, նաև պլին. զկնի Սագաց զմաղքութիւն իսկ և իսկ յհ
շելով. յիշեն զնոսա և գուրգիոս և պաղտմէոս։ Ա՛րդ՝
Սագք ասէ սդը. գիր ժա. Թղթ. 511. և 512. ըստ ա
նանգելոյ ոմանց՝ արշաւելով ՚ի Մերձակայս և ՚ի հեռա
կայս առին զբակտրիանա. * Այս զամենաքարի երկիրն
Հայաստանեայց, զոր յիւրեանց անուն կոչեցին Սագա
սինի ‖։

Պատմէ ասպա՝ Թէ յառաջ խաղացին մինչև առ կա
պադովկացիս և առ պոնտացիս բնակեալս սեաւ ծո
վու. այլ մինչդեռ կատարէին տօն ուրախութեան վասն ա
ւարտին յափշտակելոց, նախաբարքը պարսից գիշերային ՚ի
վերայ յարձակեալ՝ առհասարակ կոտորեցին։ Յակ այլք
պատմեն ասէ, Թէ կիւրոս պատերազմեալ ընդ սագս՝ փա
խեաւ պարտեալ ՚ի նոցանէ, և ընդ կրունկն ՚ի տեղի բա
նակին դարձեալ՝ և զսիրտս զօրաց կերակրով կազդու
ցեալ, եւ անտի ընդ երեկս զփախուստ կեղծաւորեալ.
սակայն հետամուտ լինելով՝ այն ինչ հասեալ գտին զտե
ղի բանակին առանց ինչ զօրաց՝ ի կերակրովք և գինւով,
՚ի խնձոյս զեղխեցան. անդ ՚ի վերայ խաղացեալ կիւրո
սի, զտանս ՚ի քուն, զայլս ՚ի կաքաւ անզինս գտեալ՝ առ
հասարակ գրեթէ ՚ի սուր մաշեաց, և տօն վասն այսր
յաղթութեան կարգեաց՝ կոչեալ Սագէա։

Ոսիդորոս քարագենոս՝ որ զՍագաստան դնէ գաւառ
սագաց սկիւթացոց, ՚ի միջ այլոց աւանաց նոցա յիշէ և
զՍպաս աւան, կամ՝ լտ. Հնչմամբ Պաբաս, մերձ առ
Հնչուն անուանս Պաբաս, որ է քաղաք յուտի, յորմէ
մաղթէ և կասկածիլ Թէ գուցէ խափորոս զերկոսին սագս
՚ի մի շփոթեաց զԷթ իւիք իրօք, զի որպէս և Ծանուցանէ
Ֆաստրիչիոս, նաև գաւառն Սագաստէնէ ՚ի ձեռ՛. գրի Սա
գասանէ. և զտեղի նորա դնէ անդ, ուր ոչ ոք դնէ ՚ի նախ
նեաց։ Տես՛ ՚ի էլլաբիոս և ՚ի մատդինիէ. յաւել և զայն,
զի պտղ. վասն սագաց սկիւթացւոց գրէ լինել անտառաւ
բնակս և սորամուտս, և չունել ինչ աւանս։

ՈՒՏԻ ԱՌԱՆՁՆԱԿ։

Ա. յսպէս գրի յերիս ձեռ՛. աշխարհագր. խոր. և ՚ի
տպ. միայն գրի Առաջ առանձնական։

Պաբաս։ Վաղաք երևելի յայսմ գաւառի, որպէս դնէ
խոր. յաշխարհագրութեան. որ առ Թովմ՛. կիլիկ՛. գրի

Պարսս, ըստ որում դրի և առ արաբացիս, որ այլով հնչմամբ կոչի այժմ Պէրսէ. տես՛ի նոր Հայաստան Թղթ. 272։ Համմ. արծ. գնէ զայս յաշխարհին գարգարաց-ւոց՝ յասելն. * Վարձեալ գնաց եհաս՛ի Պարտաւ յաշխարհն Վարդարացւոց ‖։ Այլ այլուր, ե. 9. * Լակ բուհայի առեալ զբազմութեն զօրացն իւրոց իջանէ՛ի դաշտն Վարդարացւոց (1), և երթեալ մտանէ՛ի քաղաքն մեծ Պարտաւ ‖։ Յայտ է ասել՝ թէ Վարդարացւոց երկիր անկանի յուտի, վասն այնորիկ զնորին տայ զանուն։

Ի թուղթն արևելեան եպիսկոպոսաց գրեալ՛ի ձեռն օրպէլեան ստեփաննոսի՛ի Թուին չխդ. առ գրիգոր կաթ. Պարտաւ գնի Ճ աղաանա, զի որպէս ասացաք, Աւտի կոչէր և աղուանք, սակս ընդ աէրութիւն նոցին լի նելոյ։ Աւտէ. նոյն գնէ գսա ընդ փայտակարանի՝ յա սելն վասն կաթողիկոսացն աղուանից որ յԵլս ժ՘. դա րուն. * Ալտէին առաքելական աթոռոյն՛ի քաղաքն Հայոց՛ի Պարտաւ, որ ասի փայտակարան, սահմանա կից համատարած ծովուն ‖։ Ել է օտար կարծիք յայլոց նախնեաց. զի եդեալ ևս թէ Պարտաւ քաղաք անուա նէր նաև փայտակարան, այս փայտակարան ոչ լինի սահ մանակից համատարած ծովուն՝ որով իմանայ զծովն կաս պից, այլ միւս փայտակարան է սահմանակից կասպից ծո վուն. յորմէ յայտ է թէ շփոթեալով նոյնացուցանէ ըզ փայտակարան ընդ Պարտաւոյ։

Ի՝ներ՛ին աղեքսանդրի շինեալ ասէ զայս քաղաք՝ տաճ կական մատենին կոչեցեալ Եպգարիզ, որ է ընտանուր պատմութիւն իւրեանց դէպին։ Յորոգեցաւ ապա՛ի հիճ. 39. (յամի տռն. 659.) որպէս գնէ Ձհամանիւնցին, նոր շինութիւն կոչելով զայն. բայց քանզի խորենացին որ բազ մաց յառաջէ նաև քան զսկիզբն հիճրէթին այսինքն թէ ընտանին տաճկաց, լիշէ զայս քաղաք, յայն սակս ղշի նութիւն՛ի 39 հիճրէթի, ձշմարիտ ևս եդեալ, պարտ է համարիլ նորոգութիւն, կամ առաւելն՝ յաւելուած ինչ քաղաքին։

Ընտաշէր արքայ պարսից ետ զՊարտաւ՛ի ժառանգ գութիւն ազգին անակայ, ՛ի ընորհս սպանանելոյ նորա զնոսրով արքայ Հայոց. որպէս գնէ գնորա. Թղթ. լԹ. * Նայց Թագաւորն պարսից զօր մեհնուն խոսրովայ սպան կարգեաց, և զՊարտաւն մնացեալ ազգին անակայ

(1) Յօրինակին վրիպակաւ դրի Գափարացւոց։

տայր ||. յայտ է թէ՝ զնիւի տիրելոյ սահմանացն Հայոց յետ մահուան խոսրովու : Այղև յետոյ կաթողիկոսարան աղուանից , քանզի ոչ միայն ի ժա . դարուն՝ որպէս է տեսանել ի վերոգրեալ բան մատենիէ , այլ նաև ի Ե . դարուն ասա յիշատակին լեալ կաթողիկոսք աղուանից՝ ի կանոնսկիրս գլ. լէ . ուր շուփհաղնէն կաթ . աղուանից կոչի արքեպիսկոպոս պարտաւայ [1] : Այս ի սկիզբն ը . դարուն ևս՝ ասա ի թագաւն պարսից եկին եղիտ կաթողիկոս ըմբռնեալ զնեբսէս կաթողիկոս աղուանից , որպէս գնեն կիր՛. որ և զնիւի յայտնի գնեն յասելն վասն յովանու կաթողիկոսի աղուանից՝ որ ի ժ . դարու . * Ա փոխեաց զկաթողիկոսարանն ի Կերդակոր՝ իւրեանց հովանաց տեղւն , յորժամ հանաւ ի պարտաւայ ||

Այլ եղիտ կաթողիկոս արար աստ ժողով ընդդէմ վերոյիշատակեալն նեբսիսի առ ի միացուցանել զաղուանս ընդ հայս , որպէս գրի ի նախայիշեալ Թուղթն արևելեան եպիսկոպոսաց , և առ ստեփ . օրպ . գլ . իզ :

Ո՛չ սակաւ մատենագիրք տաճկաց ելին ի քաղաքէ առաւ , յոյր սակս Պարտաւացի մականուանին :

Տեղի Ո-ոյ նահանգին , որոց գաւառ անձանօնք :

Խաղխաղ : Վհաղաք՝ զոր ագաթ . ի Թղթ . Է . գնէ ի յուսի գաւառին , ուր գուցէ Թէ խմննայ ոչ ևեթ գնա հանգն ուսի , այլ նաև զընիկ գաւառն ուսի , այն է Ո-ոյ առանձնակ : Վ աղար կոչէ Վեսղ և գնէ յաղուանս , զի որպէս գրեցաք ի վերոյ՝ Ուսի կոչէր նաև Աղուանք , որ յայտ է նաև ի բանից նորին զազարայ , զի գնէ ըզԽաղխաղ յաջմէ կուր գետոյ . քանզի պարսիկք [2] ի կամիլն գնալ ի Խաղխաղ , անցին զկուր գետով , և այնպէս եկին : * Այ հասեալ յաղուանս երանելոյ զօրավարին հայոց վարդանայ տէն մամիկոնէից , աղդ եղև զօրագլխացն պարսից՝ եկք հայոց . որոց լուեալ փութացան անցանել ընդ գետն մեծ՝ զոր կուր գետն կոչեն , և ընդ առաջ եհ

(1) Ա- կիր· գրի * Շուփհաղնէ ձոյ աղուանից արքեպիսկոպոսն պարտաւայ ||:

(2) Յորում բանի զազարայ՝ յայտ է թէ պարսիկք էին ի բնիկ աղուանս, որոց առ ի մոտանել յուսի , և գնալ ի Խաղխաղ , հարկ եղև անցանել զկուր գետով. ապա թէ ոչ կուր գետով պարտ է խմնալ ասասն զերասխ , որ անտոլոր է ի գերս ձեր :

կին նոցա մինչև ՚ի գետէն՝ որ կոչի Խաղխաղ յերկրին աղուանից ||։ Ընդ բնիկ երկիր աղուանից ուր ձգեր յայս կոյս կուր գետոյն յաջակողմն նորա, այլ աւարտեր ՚ի ձախակողմն նորա. զի ըստ խոր". կուր գետ բաժանէր զմեծ Հայս յաղուանից։

Եւ սա մի յարքունի ձմերոցաց, վասն որոյ ագաթ. և եղիշէ կոչեն * Ձմերոց արքայութեանն Հայոց ||։ Զոմանս մեծ ոստեցի վասն Խարաբաղայ գրէ, թէ էր ձմերոց առաջին Թագաւորացն մերոց. յորմէ երևի՝ թէ զԽաղխաղ նոյն համարի ընդ սմա, ՚ի յետին ժամանակս ընկալեալ զանունս Խաբեղ, կամ աղաւաղելոյ առաջին անուանս Խաղխաղ, և կամ այլ ինչ պատճառաւ։ Զայլ այժմ Խարաբաղ, կամ տձկ. Կարապաղ բերէ զանունն գաւառի, ընդարձակ ձգելով զկողմանիքն արցախայ, և ուստի նահանգին։

Չաղբաթ և Մանահին։ Մինաստանը երկու հանդէպ մեանց ՚ի կարգս երևելի մինաստանաց մեծին Հայոց՝ յաշխարհին սեաւորդեաց, որ այն ինքն է ուտի, որպէս դնէ ասողիկ. գ. 8։ * Յաւուրս սորա (աշոտոյ ողորմածին) շինեցան կրօնաւորանոցք ձգնաւորականաց տեղիք. Սեաւորդեաց աշխարհին, հաւաստարակեացք միաբանականք ըստ յառաջասացեալ կանոնին սահմանադրութեանն եղեն բարսղի, որոց երկոցունց տեղեացն անուանք Չաղբատ և Մանահին. հանդէպ միմեանց, միակրօնք ՚ի տան այ արանց Ը. ից, և առաջնորդ Մանահնին՝ յոլհանէս գիտական այրն այ, իսկ Չաղբատայ Եփրեմն ձգնաւորեաց ծառայն քրի||։

Ընդ դնէ և ընդարձակող վարդապետ աշխարհագրի յասելն. * ՚Ի վերայ Սաւորդաց (այսինքն Սեաւորդեաց) ձորոյ գետին է շինեալ խոյակապ և հռչակաւոր որ ուխտն Չաղբատ. Մանահին|| ։ Իսկ այլ պատմագիրք դնեն զսա ՚ի սահմանս լօռի քաղաքին, յորմէ երևի՝ թէ սահմանն այսր քաղաքի ձգի մինչև յուտի, որով միաբանին ընդ բանից ասողիկայ. ըստ այսմ պարտ է խմանալ և զբանս վարդանայ աշխարհագրի՝ որ գրէ. * Ցաշիր լօռի է, ուր կան որ ուխտքն Չաղբատ և Մանահին||։ Զայսինքն կան այս ուխտք ուր ՚ի լօռի քաղաքին՝ որ էր ՚ի տաշիր գաւառ գուգարաց, այլ ՚ի սահմանս լօռոյ, որ ձգէր նաև արտաքոյ տաշրայ մինչև ՚ի նոյն իսկ յուտի։ Այժմ թէ պարտ է ասել, թէ այս վանորայք էին ՚ի մէջ երկուց սահմանակացս լօռոյ և ուտի գաւառին, նմին իրի ամենք յուտի

գնեն, և ամենք ի լօռի [1]։

Ա ման շինուլեն վանորէից կաւեցեալ միաբանել զտա-
ճարսուլեն մատենադրաց, պարտ է դնել, թէ վանքն
Սանահին ի վաղուց անտի շինեալ կայր, կամ որպէս ա-
ւանդեն բնակիչքն՝ ի սկզ լուսաւորչէն հիմնեալ. յորում
ի սկիզբն Ճ. դարուն յաւուրս աբասայ արքային՝ իբր
ի 934. կրօնաւորքն փախուցեալք ի հոռոմոց՝ շինեցին
եկեղեցի, որպէս գրեն վարդ. և կիր։ * Շինեցին և ե-
կեղեցի մի յանուն Ա ածածնին ի վանքն որ կոչի Սանա-
հին, ի սահմանս Լ օռէ քաղաքին ‖։

Լ.յԼ զերկոսին վանորայս նորոգ հիմնարկեալ ընդար-
ձակ և հաստատաւոյց շինուածով կանգնեաց խոսրովա-
նոյշ Թագուհին կին աշոտոյ ողորմածի, որպէս պատմին
նոյն իսկ վերոգրեալ վարդան, մատթէոս, և միսաս համ-
թեցի, զորոյ և զթուականն շինուլեն գնէ, ասելով թղթ.
38. * Ա ագուհին սուրա (այսինքն աշոտոյ) շինեաց զՀաղ-
բատ և զՍանահին զհռչակաւոր վանորայն ի թվին ՊՀԺ ‖, յամին
961։ Յայլում թուականի և յայլևայլ
ամն գնէ ընդարձակօրէն սամ. զշինուլեն երկոցունց սուրբ
յասելն. * Լ ՆԺզ. թվին (յամին 967) շինեցուսւ Հաղ-
բատ և Սանահին Ճ. ամաւ յառաջ քան զՀաղբատ շի-
նեցաւ ի խոսրովանուշ Թագուհւոյն [2] ‖։

Յետ այնորիկ ի ժա. դարուն կիւրակէ կամ կորիկէ
բագրատունի արքայ աղուանից նորոգեաց, կամ նոր շի-
նուած ինչ կառոյց, զոր վանս այսորիկ կիւրակոս հիմնար-
կուլեն կոչէ։ * Իբրև ետես կիւրակէ արքայ բագրատու-
նեաց որդի դաւթի որդւոյ դերենկան, որ հիմնարկեաց
զհռչակաւոր ուխտն զՀաղբատ և զՍանահին. (եթէ)

(1) կամ զի Սեաւորդիք կոչէին
ոչ լոկ բնակիչք Լաւի նահանգին,
այլ և մանր ինչ գուգարաց, զոր
չունիմք ստուգել. ընդարձակող
վարդանայ աշխարհագրի ի Տա-
շիր և ի լօռի գնէ ոչ զՀաղբատ
և զՍանահին, այլ զՔոփաւր, և
զՀոռոմայրն։

(2) Զշինուլեն խոսրովանոյշ
Թագուհւոյն՝ համարիլ ընդհա-
նուր նորոգուլեն կամ վերստին
հիմնարկուլեն ցուցանէ և այն՝ զի
վարդան զերկոսին շինուլեաս և
պատմէ, նախ զշինուլենն կրօնա-
ւորաց ի հոռոմոց, և ապա զշի-
նուլենն ի խոսրովանուշայ, զոր
ոչ կարէր պատմել, եթէ ստուգիւ
չէին կրօնաւորքն շինեալ ինչ
ինիճ. և եթէ չգոյր Սանահինն նախ
քան զխոսրովանոյշ, զի որ զմի
եւեթ շինուլեն պատմէ՝ զորօրինակ
կիր. զշինուլենն ի կրօնաւորաց,
զանց արարեալ զշինուլեն Թա-
գուհւոյն, գիւրին է չփոթելով
զմին առնուլ փոխանակ միւսոյն.
այլ որ զերկոսին եւս պատմէ՝ որ-
պէս վարդան, գժուարին է յայս-
չափ չփոթուլեին վտանգիլ, եթէ
ոչ լինէր ստոյգ։

*Եթող տէր գրիգորիս զաթոռ իւր ||, և այլն. քանզի զա-
նազան մեռուածունք են 'ի հաղբատ, յորոց զմին թերևս շի-
նեաց այս կիւրակէ, կամ դերևնիկ. զի բան կիրակոսի
շփոթ դոլով, մարթ է իմանալ զկիւրակէ, մարթ է իմա-
նալ նաև զդերևնկանէ։*

*'Ի նմին ժա. դարու Հաղբատ եղև եպիսկոպոսանիստ
'ի ձեռն վերոգրեալ կիւրակէ արքայիկն. որոյ կռվեալ
գյովսեփ կաթողիկոս աղուանից՝ եւս ձեռնադրել զմին
սարգիս գրան երեց եպիսկոպոս Հաղբատայ (1)։ * Ի-
յայմմ հետէ (ասէ կիր.) եղև աթոռ եպիսկոպոսի ||։
Յորոց և զմննաս յիշատակէ անդէն (2). մի 'ի նոցունց
եր յովհաննէս եպիսկոպոս՝ որ արար բազում գործս ար-
ժանի յիշատակի. զի ըստ պատմելոյ նորուն կիր. * Ո գա-
ւիթն փոքրագոյն քակեաց որ 'ի դուռն կաթողիկէին
Հաղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուածս, որ
զարմացուցանէ զտեսողսն հիացմամբ ||։*

*Ո կնի սորա արար շինուած ինչ նաև միւս յովհաննէս
եղբօրորդի առաքելոյն, զորմէ այսպէս գրէ կիր։ * Շ ի-
նեաց բերդ մի ամրագոյն պարսպօք 'ի մէջ Հաղբատայ՝ և
Սանահնին, վասն որոյ գժտութեի ընդ երկուս մեծամեծ
վանորայս եղև, որպէս լեհ 'ի հողոյ Սանահնին իսկ. և
վրէժխնդիրը եղև իշխանն շահնշահ որդին զաքարէ
Սանահնին . . . զի Հաղբատ 'ի վրաց Թագաւորին հա-
շուին եր յայմմ ժամանակի. իբրև մեռաւ եպիսկոպոսն
յովհաննէս, քակեցին և զպարիսպն բերդին հրամմնաւ
Թաթարին ||։*

Կրկին եկեղեցի կայր 'ի Հաղբատ մեծ և փոքր, զորս

(1) Վարդան այլազգ և և որոշ պարագայիւք պատմէ զսոյն յասելն, * Տէր վահրամ և տէր բարսեղ որ յարևելս՝ ... 'ի հաղբատ ձեռնադրեցին զտէր Սահփանոս կաթուղիկոս աղուանից . . . և զՍարգիս աւագերեցն արքունի դրանն (կիւրիկէի Թագաւորին) Աղբեպիսկոպոս ձեռնադրեցին երկոքին կաթուղիկոսքն ՝ոք ուխ տին հաղբատայ, տալով վիճակս յերկուց կողմանց ||։

(2) Ջանուանն արքեպիսկոպոսացն հաղբատայ՝ զորս գտաք նշանակեալ 'ի գիրս, կարգեմք աստա նօր. առաջինն ըստ պատմ. վարդ՝. և կիր, Սարգիս։ բ. Գէորգ, ընդ որում Թղթակցի սակս նորն ձեռնադրելոյ։ գ. Բարսեղ։ դ. Գրիգոր (առաքելորդին)։ ե. Յովհաննէս ա։ զ. Յովհաննէս բ։ է. Յովհաննէս գ։ ը. Հանդուցեալ 'ի ժամանակս ուռպէլենին սակս փանոսի եր եպիսկոպոս հաղբատայ Յովհաննէս՝ որ զանուն իւր աստղագրէ 'ի Թղթին արևելեան եպիսկոպոսաց առ գրիգոր կաթուղիկոս, այսպէս. * Էս տէր Յովհաննէս ընորհօք ՝ոյ եպիսկոպոս հաղբատայ ||։ Խակ 'ի ժամանակս Թովմայի մեծոյ. եպիսկոպոս եր հաղբատայ Գրիգոր։*

զերկոսին և միանգամայն յիշատակէ նոյն կիրակոս ՚ի գրելն զմահ երևելի առն յոհաննու սարկաւագ վարդապետի՝ որ էր ՚ի Հաղբատայ, և Թաղեցաւ անդէն. * Յարևելից դուսկ եկեղեցւոյն Աեծի, առ դուռն փո քրագոյն եկեղեցւոյն ‖ : Օ փոքր եկեղեցին համազասպ եպիսկոպոս, * Շ ինեաց եկեղեցի ՚ի տեղին հրաշալի, և զանկատառն և ժամատուն մեծ և սքանչելի ‖ (1) :

Ո՞ւ մենատանաւ էր գերեզմանատուն վարդապետաց, զոր յիշէ կիր. յասելն վասն Թորոսի վարդապետին աշա կերտի մխիթարայ գօշի. * Այս Թաղեալ ՚ի հնչակատուն վանքն Հաղբատ՝ ՚ի գլուխ վտանգն, ՚ի գերեզմանս եպիս կոպոսացն և վարդապետացն ‖ :

՚Ի Սանահին ևս Թուի լինել կրկին եկեղեցի, զորոյ զմեծն յիշէ ուրեք նոյն կիրակոս յասելն վասն զաքարիայ մեծ զօրավարին վրաց. * Տարեալ Թաղեցին զնա ՚ի սա նահինն ՚ի մեծ եկեղեցւոյն առաջի գրաց խորանին նեքոյ ահեակ կողմանէ ‖ : Ո՞ւ հուպ ՚ի միւս յեկեղեցեաց նորին Թաղեցաւ դէռնակոսս առաքնորդ, զոր յոհաննէս Թագա ւոր կացոյց առ ժամանակ մի կաթողիկոս փոխանակ սեթ բոսի : Տես և ՚ի նոր հայաստան Թղթ. 279 :

՚Ի չՃգ. յամին 1105, իբզբել անուն բռնաւոր էառ զլօռի և զուխտան Հաղբատ և զՍանահին, որպէս գրէն կիր. և սամ. յորոյ ՚ի միւս օրինակի յաւելու՝ Թէ և այլեաց : Ո՞յլ յետ այնորիկ ևս անուանի էին այս մեծ նաստանք, մանաւանդ Հաղբատ, զոր Աայրապետս կոչէն արևելեան վարդապետք ՚ի Թուղքն իւրեանց առ գրիգոր բիս կաթողիկոս (այն է մխիթարեանսն Տղայ), որ պէս և յոհ. կաթողիկոս կոչէ զՀայրապետանոցն : Ո՞ւ որպէս գրի ՚ի յիշատակարանի մեհրուե սաղմոսի լամբրո նացոյն, ՚ե. լևոն արքայն գովէր և յանձանձէր, * Աա նաւանդ քան զազգս տեղիս զմեծ և գՀնչակաւոր երկնահաւատսդ՝ որ ուխտն զԱայրապետանէն զՀաղբատ, յորում կամէր անմոռաց արձանացուցանել զինքեան յիշատակ բարի ՚ի քո, նուիրօք և պատարագօք ‖ :

Հաղբատ և Հաղբատացիք բազում ուրեք յիշատա

(1) Վասն այսր այլուր ևս գրէ կիր. յետ պատմելոյ զԹաղուծին նորին յոհաննու սարկաւագի. * Զոր (այսինքն զվոքրագոյն եկեղեցին) յետոյ քակեաց եպիս կոպոսն համազասպ, և շինեաց հրաշալի շինուած. ուր զանկական կախեցին յարմարեալ ՚ի նմին և եկեղեցիս ‖ :

կին ՚ի Թուղթն վերոյիշատակեալ գրիգորի կաթողիկոսի տղայի, որպէս և ՚ի Թուղթն ներսէսի լամբր. առ լեւոն արքայ, յորում կշտամբէ՝ եթէ վարդապետան ինչ ինչ յանկարգութենէ՝ որք մուծեալ էին յայնժամ՚ի նոսա. յորում ժամանակի ստեպ կոչին և ՚Քրեստոնեայ՝ ըստ գրիցն կիլիկիոյ հայելով, որպէս և առաքնորդն կոչի ՚Քրեստոնեան եպիսկոպոս, ըստ որում ուսանիմք զսոյն և ՚ի խորագրէ Թղթոյ ընդհալոյն ուր գրի. * Յուղթ առ ՚ի ներսիսէ եպիսկոպոսէ. . . պատասխանի Թղթոյն գէորգեայ ՚Քրեստեան եպիսկոպոսի առաքնորդի տըղ ուխտին Հաղբատայ։

՚Ի միջի անդ ժա. գարու՝ այնչափ փայլեր սեր Ձգնու Թեան յուխտն Սանահնի, զի գրիգոր մագիստրոս ՚ի պատասխանելն առ նաւմակ նոցա, այսու օրինակաւ սկսանի գովել, և նկարագրել զքաղաքավարութիւն նոցա. * Օ սրբազանից՝ և զ՚ի մարմնի անմարմնոցն հանդիսակ ցելոցն միեղինաբար կցորդութիք, և յարատեւական արտահանութեամբ, մշտաշարժ ՚ի գերակատարն խաչակ ցութիք վկայից, և զ՚այրաքաղաքական բարեկարգութիք ՚ի միասին բնակելոց, խնամատից բոլոր արհեստից և մանկացուեց պարառելոց, և յոծանեւտական բանն միայելոց անընդմիջաբար, . . . և եթէ պարտ է ասել՝ հարց մերոց և եղբարց ընկալեալ զգիր . . . Որ գրեթէ պետութենէն և բոլորն երկնային դասու և զօրութեանց գերակատար գտեալք, և ոմանց զանազան և պէսպէս առաքինութիք և Ձգնութիք սքանչելի և զարմանալի երևեալ, որ և ոչ ՚ի սկիզբ կամ՚ի Թերայիդ այսպիսի երբեմն երևեալ։

" Ոմանք ոմանք ՚ի ձկնէ՚ի մորթոց փայտից զգեստաւորեալ, և ՚ի կերակուրս մարդկայինս ոչ հոգեկցոց, այլ խոտովք վայրենի շատացեալք, և ոմանց մերկութիւն միայն, և առանց պարեզօտի և զգեստու։ Օ տապ ամենայնի՝ և զառնամանեաց օդոյ գժնդակութիւն ձմերայնոյ հիւսիս սային կինքն կրեալ, և գետնախշտի տարտամեալ, և սովու և ծարաւու համբերեալ։

" Այս ոմանք ծածկաբար ՚ի ներքոյ պատառատուն պատրեզօտին՝ առասանս ՚ի խոտագոյն ձարաձև այծից՝ կշկռտուն կարկատեալս ՚ի ներքոյ ատորակայեալ, և նոյնօրէն յառաջանիցն այն՝ պարպատեալ զմիջս և զկողս, և ՚ի պարանոցն հարստեալ կաշկանդեալ, անշրթելի մանուածով բազմաժամանակեայ չարչարանաց այսպէս սի. և վտանգի համբերելով, և անուաղութիք և ծարաւոս, և զայն՝ զուարթագին և աչալուրջ լըսմութեամբ։

Այլ նորա ոչ այլ ինչ, եթէ ոչ՝ երգել միտայար զդաւթեանն նուագ, և պատարագիլ զանարիւն զհնութիւն, որ յառաջանիցն պարտեալոց իւրաքանչիւրոք խղտեալ զոչխն սղոցի, մինչև հեղուլ արտաքս փորոտեացն, և գեղեցիկ պարանոցին, որ զծածկելին էր ընկալեալ մանեակ, ստորաքարշեալ հատանելը զմարմինն. այսպիսի քաղցր լծոյ հաւանեալ, զի մտանել կարասցէ լընդ նեղ դուռն ...։

» Խակ ումն անատանելի կիրս յանձին կալեալ, և հրաշից և զարմանալոյ, և մանաւանդ թուլեաւն արժանաւոր։ Վասնզի ուսեալ՝ ի մերոյն պարթևէ՝ երջն սահակայ, եթէ ստացեալեր նորա աշակերտս երկաթասատս և բոկանիս և խարազնագեաստս, պատր վարկանէր լինել այսպիսի, զանատանելի կիրս կրծոյից յանձին կալեալ, իբրու զառասանս, կամ զպարանս ստուարս և քաջլարտս ՝ի ձաղից ձիոց և յայլասուոց, և որ այլք այսպիսի քուրձ կազմեալ։ Որ դժուարին է տեսողացն զնա կամ դատողացն տեսանել, որ եթէ պատժասպարտի ումինն՝ միոյ աւուր հրամայեր զգենուլ, թուի թէ լաւագոյն ինն զմահն համարէր. և ՝ի վերայ այսր ամենայնի ոսանակապանս եր կաթիս, և շղթայս, և ձեռնակապանս, .. և մանեակս ՝ի պարանոցի, և այլ կազմեալ աղխասանման ՝ի ձև խաչին։ Այլ զինչ առ այսոքիկ լինձ երկարագոյնս գրել՝ զոր յայտնի ամենեցուն, և այժմու տեսողացս Ձեռքտապատում մանաւանդ թուիս երևեսցի. քանզի ծանրութի երկաթոյն և թոռոմին եր լտերս Ձ. և Ն, զոր այժմ եթէ ՝ի մատեանս առաջնոցն ընթերցեալ եր մեր, կարծեմ եթէ ամենեցուն եր անհաւատալի ...։

(1) Ջանուն վրացի եպիսկոպոս չուկերտոյ։ Յիշատակի ՚ի յիշա տակարան ինչ գրոց Աղանիա և սին ՚ի գլ. Ը. կոչէ Ջաքարիա. պիսկոպոս Աշտիչեցւոյ, որ Թուի զոր և եպիսկոպոս կոչէ Վաղաւ.

Ա.ՀԼ՝ի հին վարս սրբ. ոսկեանց՝ի Ճառընտրի գրի Լ՚ան ՁԵ, ուր ընդարձակ ևս ստորագրի զիրք նորա, և առա՚ջին շնորհ աւանին յիշատակի յանուանէ։ * Այրթեալ (ասէ տուքիասանց աշակերտելոց ոսկեանց) կրծնաւորե՚ցան՝ի Ա՚երինն որ կոչի Ջ՚ըբաշխ մերձ յակն աղբեր ու՚ բունն Յորդանանի՚։ Այս փոքր ի զինի. * Ա՚յ արեցան յարևմուտս կոյս՝ի հարաւոյ կուսէ առ ստորոտով (նոյն) լերին, և գտեալ տեղի բարեխառն մեծ՝ի դաշտաբե՚րանն՝ յորում բխեին աղբիւրք ոչ սակաւք ընդդէմ հա՚րաւոյ, յորս իբրև հասեալք նստան հանդուսկեալք՝ի տեղոյն բարեխառնութենէն, որ և արգելանոցս իւրեանց արարին գեանաիորս դարիւք... Այլ յետ փոքր ինչ ժամանակի և՝ի տեղին շինեալ աւան մեծ՝ի Թագաւորէն վաղարշայ՝ անդ զոլորդի իւր բնակեցուցանէր սակս տեղոյն բարեխառնութեան, Ա՚ղաղրշակերտ յանուն իւր կոչե՚ցեալ։ Իսկ լեառն Ջրաբաշխ յանուն գլխաւորին նոցա Ա՚ոքիասու Ա՚ուկաս կոչեցաւ՚։

Ա՚լանէր եկեղեցի յանուն Ա՚ածածնի՝ շինեալ՝ի Է. դա՚րուն, զորմէ գրէ Յոհաննէս Մամիկոնեան՝ի պատմութե՚ան Ծիծառնէի խաչին։ * Ընդ այն ժամանակս նեբսէս Հայոց կաթողիկոսն՝ որ՝ի տայոց էր ծննդեամբ (այն է Ք. ներ՚սէս.) այն՝ որ զԱ՚ղաղէրսոյ (այսինքն Ա՚ղաղրշակերտոյ) Ա՚ծածածինն շինեաց, եկն՝ի տեսութե՚ն սքղ խաչին՚։

Ա՚ագուան, Յառաջնոց Ա՚ղաչափեաց և Լ՚ան անուամբ յիշատակի, իսկ՝ի յետագայից՝ Վ՚ահօ։ Ա՚նկանի յայս գաւառս, որպէս յայտնի դնէ ասողիկ ք. 2. յասելն. * Ա՚յ եր անդ այր մի՝ի Ա՚ագրևանդ գաւառէ՝ի Ա՚ագուան գեղջէ՚։ Ա՚ի պարթևաց բարբառ կոչի Վ՚էդասա. * Վ՚այր հասանել (ասէ ագաթ.՝ի թղթ. լկէ. վասն տրդատայ.) ՚ի քաղաքագիւղն բագուան, որ անուանեալ կոչի՝ի պարթևաւարին լեզուէն Վ՚իցաւան [1]։ Ա՚յսան որոյ և տուղ ինչ ստորև կոչէ տակ Վ՚իցաւան։

Ա՚ռ խորենացւոյն կոչի սա Ա՚ագնայ տաճն, որ է նոյն, զոր յայտ առնէ Ա՚լախ՝ նոյնուհետէ անուան, զի Ա՚ագնայ աւան, և Վ՚իչ աւան՝ի նոյն հայկեան բան պաշտամանն։ Ա՚յրկոյդ՝ գաւառն, զի խորենացին՝ի նմին բագրևանդ գաւառի գնէ և զբաղնայ աւանն, ուր էր Ա՚ագուան.

լինել Ա՚ստղերոյ. այլ ոչ է հնա՚գիր մատեանն, յորում և չկաք Թէ՚ականի։

(1) Որպէս Թէ ասէգէ. պարթևք կոչէին յայն անուն՝ զոր Թարգմանեալ՝ի նոյն պարթևա՚կան լեզուէ՝ի հայ, նշանակէ Վ՚իչ աւան։

Երրորդ՝ զի զոր ինչ տօն դնեն ագաթանգեղոս կատարել հեթանոսաց՝ ի Բագուան կամ՝ ի Վից աւանի, զնոյն խորենացին պատմէ լինել՝ ի Բագնայց աւանի։ Որ զանդագ ըստ ձեռագրացս ևս կոչի Բագաւան, զորմէ ստորև. սոյնպէս գրի՝ ի յունականն ագաթանգեղոսի, կամ ըստ յոյն հնչման Պագաւան [1]։

Այլն կասկածիմք լինել և որ առ խորենացւոյն ԵՐ. 74. յիշատակի Բագաւան. մի՝ զի անդէն՝ ի միում ձեռագրի գրի Բագուան, և երկրորդ՝ զի դնէ՝ ի նմին աւանի լինել պաշտօն որմզդական, որ յարմարի այսմ [2]։ * Ո Հուրն որմզդական (ասէ) որ՝ ի վերայ բագնեն՝ որ՝ ի Բագա-

(1) Վարդան աշխարհագիր գրէ վն սորա. * Բագուան աւանն Բագրեւանայ բերդն է՝ ի վերայ ախուրեան գետոյ. աւանն գիւղաքաղաք ասի ։ Եթէ Բագրեւանն նաև խնանայ զգաւառն, որպէս թէ ասել՝ Բագուան բերդն է՝ ի Բագրեւանդ գաւառին. ընդդէմ է դնել՝ ի վերայ ախուրեան գետոյ. զի բագուան՝ որպէս եզաք՝ ի վերոյ՝ է՝ ի վերայ եփրատայ, և ոչ ախուրեայ՝ նայ՝ որ է վտակ ինչ որ զեղուչ եբասխ գետ։

Յայլում ձեռ՝. գնի ուրոյն ոչ բոյն։ * Բագուան աւանն, Բագրեւանայ բերդ՝ ի վերայ ախուրեան գետոյ ։ Որպէս թէ յայրեբատ են զանազան տեղիք՝ Բագուան աւանն, և բերդն Բագրեւան գաւառի։ Բայց և այնպէս՝ այլևայլ եդեալ վերկոսին զսոսա՝ ի միմեանց, ոչ ուղիղ թուի դնելն՝ ի վերայ ախուրենոյ, ուր ոչ կայ բէ ձգիլ բագրեւան գաւառն, և ոչ բերդ ինչ նորա։

Աւելագ դնէ ընդարձակողն վարդանայ. * Բագուան աւանն (ասէ) բագաթրանայ բերդն է՝ ի վերայ ախուրեան գետոյն, զոր երթևեկդ լինիցես, և անդ փոխեսց զաեռոռ հայոց Թագաւորայն. աւանն գիւղաքաղաք ասի ։ Որոյ թէ կամելով ասել. Այս բագաւան է բերդն բագարանու. որ է չորրաչոր շփոթութի, զի բագարան չինեալ յերեւանդայ առ ախուրեայ նաև՝ էր յարշաւունեաց գաւառի, իսկ բագուան էր՝ ի բագրեւանդ գաւառի առ եփրատաւ, և այն՝ ոչ եթէ բերդ, այլ աւան։

(2) Քանզի խորենացին յայն բան անկարելի արատչըի զայրարատ նահանգ՝ ի կարգի եգեալ և չինեալ՝ որ էր ընդ արքունական երկիր, կեդրոն հայաստանեայց, յորում և էր այս բագաւան. և ոչ զփայտակարան զհեռաւորն յայրարատոյ, յորում էր այլ բագաւան, բայց գաւառ, և ոչ քաղաք. թէպէտ և ժԵ. գաւառն փայտակարանու կոչեցեալ յանուն որմզդայ, ցուցանէ թէ և յայն կողմանս առաւելութի՝ ինն կատարէր պաշտօն որմզդայ։

Եւ ևս զի և յայսմաւ. ՚ի նաւասարդի ԻՁ. դնէ կատարել հայոց զոմն արամազդայ, կամ որ նոյն ի որմզդայ ՚ի ժամանակս հեթանոսութե, յորում աւուր կատարէր և տօն ՚ի բագուան։ Ի հայն զի յայսմաւ. Նաւասարդի ՚ւ. կի օգոստ. ՚ւ։ տնաւլի՝ յորում զայս տօն արամազդայ ցուցանէ լինել ՚ի տեղիս մեհենիկն յաշաւիշատաւ, զոր և շփոթէ ընդ գլակայ վանայց, ուր ագաթ. Թղթ. յիւ. գրէ՝ Թէ նա գրիգոր ՚ի ՀՀ տահմի ամանոյ հրամայեաց կատարել զտօն սրբոց, յորմէ մարթի է կարծել Թէ և տօն հեթանոսաց յայնմ վայրի յաշաւիշատաւ ՚ի նմին տահմի ամանեան կատարիւր։

ւսան՝ անշէջ հրամայէ (արտաշիր արքայ պարսից) լու-
ցանել ||։

Ա.Յս աւան կառուցեալ է ի նպատ լերին՝ առ որոյ
ստորոտով անցանէ եփրատ. յայտ առնէ զայս ագաթանգ
գեղոս ի յԿղ. ուր նախ գրէ վասն գրիգորի. * Ա.պա գայ
հասանէ յանուանեալ գիցաւանն ||։ Ա.Ւ զկնի. * Պ.այր
հասանէր առ ստորոտովն նպատական (կամ ըստ ձեռ".
Ն.պատակ) լերինն, ընդառաջ լինէր Թագաւորն ամե-
նայն զօրօքն հանդերձ առ այն եփրատ գետոյն ||։ Ա.յս
ինքն՝որն գրիգոր կամելով Հանապարհորդել ի Պ.ոմ աւան՝
ուր սպասէր նմ տրդատ, եկն եհաս առ ստորոտով նպատ
լերին, ուրանօր ընդառաջ ել Թագաւորն առ եփրատաւ։
Ո ի աւանն անկանէր ո՛չ առ ստորոտով, այլ ընդ գառ ի
վայր նոյն լերին. վասն որոյ չետ մկրտելոյ տրդատայ և
ժողովրդեան ի գետն անդ եփրատ, իբրև ի գետոյն գառ-
նալ կամէին յեկեղեցին որ ի Պ.ոմ աւանն, հարկ եղև ե-
լանել ի վեր, որպէս գրէ նոյն ագաթանգեղոս ի Թղթ.
Հռ. * Ա.ւ նոքա ի վեր յաւանն գառնային... Ա.լեալ
ի վեր ի տերունական տունն գառնային ||։

Ա.յլ քնիկ տեղի աւանին էր ի լանջս կամ ի կուրծս
անդ լերին՝ զոր բացայայտ ստորագրէ ղազար. Թղթ. 245.
* Ա.ւ լուեալ զայսպիսի քանս անօրէնն դատաւորացն ի
սըջն յաղագս, սրով կորել զգլուխ երանելոյն հրամայե-
ցին մերձ ի տեղի՝ որ մատրանն առաքելանման նահատա-
կին որջն գրիգորի, ի գեօղն Ա.ագատան ի նահանգին
բագրեւանդայ, ի լանջակողման լերինն՝ որ անուանի
Ն.պատ, մօտ ի որ տեղի մատրանն՝ որպէս երկու քարընդ
կեցօք ||։

Ի ժամանակս հեթանոսութե՛ն երևելի էր ի սմա գե-
ղեցման մաժանայ քրմապետի, եղբօր վերջին տիգրանայ,
ուր էր բագին և իշևան ի հիւրընկալութե՛ն. յորում և
կատարիւր տօն մեծ ի ա՛. աւուր նաւասարդի։ Ա.յլ թէ
ո՛ չինեաց զբագինն, և ո՛ կարգեաց զտօնն, գրէ խորենա-
ցին. ք. 63. * Պատմէ (ասէ՝ բարդածան) ի մեհենիցն
պաշտամանց, վերջին տիգրանայ արքայի հայոց պատ-
ուեալ զգերեզմանն եղբօրն իւրոյ մաժանայ քրմապետի ի
Ա.ագնայն աւանի որ ի Ա.ագրևանդ գաւառի՝ բագին ի
վերայ գերեզմանին շինեալ, զի ի զոհիցն առնեայն անցա-
տրիք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկօթիւք. յո-
րում և զկնի վաղարշ տօն աշխարհախուռն կարգեաց ի
սկզբան աւի նորոյ ի մեհեան նաւասարդի ||։

Խաղինն էր յանուն վանատրի չաստուածոյն Հիւբրընկալեան. և տօնն կատարիւը վասն նորոյ ամին և նոր պտղոց. իսկ ՝ըն գրիգոր շինեալ անդէն եկեղեցի՛եգ զման ինչ՝ի նչխարաց սրբոյն յովհաննու և աթանագինեայ, և հրամայեաց զտօն նոցա կատարել անդէն. պատմէ զայս ագաթանգեղոս ըստ մասին՝ի թղթ. ՀՒ. յասելն. * Այլ եդ անդ (՝ըն գրիգոր) հիմունս, և շինեաց եկեղեցի, և զնչխարս զոր ունէր յոսկերաց սրբոյն՝ ՝ի տերու նական տանին բնակեցուցանէր ‖ Այս ըստ մասին՝ի թղթ. ՀԻԲ. * Այս զիշատակ վկայիցն բերելոց ժամադրեաց՝ ի տօն մեծ հռչակեալ յառաջագոյն կարծեցեալ մտաւեացն պաշտաման (՝ի ժամանակի դիցն ամենորաբեր նոր սրբոյ ոոյ տօնին, հիւբրընկալ դիցն վանատրի, զոր յառաջագոյն իսկ՝ի նմին տարւոջ պաշտէին, յօր ուրախութեան նաւասարդ աւուր), զի ժողովեալ՝ի յիշատակ մեծի եւ բանելի սկզբանչին յովհաննու, և զոր վկային քեի զաթանագինեայ նագինին յայնմ աւուր խմբել՝ի նմին յաւանի ‖ [1]։

Յիշատակի այս տօն և՝ի բուզանդայ. գ. 15. յասելն. * Այս յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին յովհաննու, որ՝ի գրիգորէ և՝ի տրդատայ յաւանին բագաւանին կարգեալ էր ‖ Ոյ աղաւ զայս եկեղեցի թղթ. 242. կոչէ Աբ գեղ փան նախագահին գրէգորէ. իսկ փոքր ինչ ստոյգ և կոչէ Աագոռան սբյն գրէգորէ. զորոյ զքանս յառաջ բերաք՝ի վերոյ։ Յորմէ երևի՝ թէ մենաստանն որ էր աստ, զինի շինեցաւ. զի՝ի յետագայից միայն յիշատակի, զոր օրինակ՝ի յովհաննէ կաթողիկոսէ, յասելն. * Այս վասն զի ընդ նոքօք նուաճեալ էր գաւառն բագրեւանայ, ընդ այն ապա զմի՝ի պատուաւորաց իւրոց ոստիկանն առաքէ. որոյ երթեալ հասեալ՝ի վանս միայնարանի սբյն գրիգորի՝ որ՝ի գեղջն բագուանու, երեկօթս անդ առնէր ‖ Այ՝ի սամուէլէ՝ յասելն. * Կոտորումն ուխտի սբյն գրիգորի՝ի բագրեւանդ՝ի բագուան ‖

(1) Հիւբրընկալ և վանատուր՝ են մականուանք որմզդայ, այն է արամազդ կամ գիտս. զի հեթանոսք համարէին զարամազդ իբր չաճ պաշտպան հիւբրընկալութեանէ, և վրէժինդիր անիրաւութեանց եղելոց առ հիւբս։ Ընթերցիք քան զի պատուէին զհիւբս, առանձին ինն պաշտէին զդիտս սովին հիւբրընկալ մականուամբ, ըստ որում և նախնի հայք՝ի բագուան։ Եւ որպէս կարծէ պօսուէ՝ սամարացոց ևս առ հիւբրընկալն դիտս նուիրեալ էր զիւրեանց տաճար որ՝ի գաբլին։ Կաև հիւբրընկալութենէ՝ տօն հռոմայեցւոց՝ անուանեալ Ափրդիսդհնիում, կատարեցաւ երբեմն յանուն դիտի, հերմէսի, և իրասայ, որպէս վկայէ վալերիոս մաքսիմոս։

կոչեցաւ այս մենաստան յանուն ՚ՁԱյն գրիգորի, ըստ որում եկեղեցի նր հիմնեալ էր ի ՚ՁԱյն գրիգորէ։ ՚Ի սմա գտաւ նեբսէս շինօղ ի տճոկի վարդավառին աշխարհաժողով բազմութիք, որպէս գրէ կիրակոս. առ որով եղև կարգաւորութիւն շարականաց։ ՚Յելս անդ ՚Ը. դարուն յաւուրս յովաբայ կաթողիկոսի փարիսամնացեալ էր ոսկի և արծաթի սպասուք, զորս առ ի յափշտակել ոստիկան ոմն զպարտութիք ետ կոտորել զվիաբանս. զորոց զթիւ աւելի գնէ յովհ. կաթ. քան զկՀ այր, բաց ի փախուցեալ լոյն որք էին սակաւք [1]։ ՚Ի Կագուսանէ էր և սիոն կաթուղիկոս՝ ըստ գրելոյ կիրակոսի։ ՚Ի յժմ կոչի սա Կուչ քէլիսա՝ մերձ ի տիատին իբրև 3 ժամաւ, զորոյ զշինուածքեանէ եկեղեցւոյն տես ի նոր Հայաստան. Թղթ. 116։ Կրկոքումբք պանծալի ցուցաւ այս գեօղ և եկեղեցի քան զայլս. մի՝ զի աստանօր առաջի գեղջս ի ջուրն անդ եփ բատայ՝ եղև մկրտիլ տրդատայ հանդերձ արքայագունդ բանակաւն, և երևումն աստիկ լուսոյ ի նմանութիւն սեան՝ խաչ ունելով ի գլուխ, (զորմէ տես յագաթ. ի Թղթ. քՀա։) Կրկրորդ՝ յայսմ վայրի մեկուսացաւ ՚ՁԱյն խահակ, յորժամ ի բաց հանին զնա ի հայրապետութէն՝ որպէս պատմէ խորենացին. էջ. 66. * Կսկսն կալով ի բա գրևանդ [2] գաւառի, ի տեղւոջն՝ ուր ծագեաց լերկ նուստ լոյն ի մկրտել ՚ՁԱյն գրիգորի զարդատ արքայ և զջոլոր հայոս ||։

Օ արբհաւան։ Կաղաք մծո՚ի բագուսան, քիշատակեալ առ բուզանդայ, առ որում ուրեք գրի Օ արբհաւանդ. և այլուր ի է. 58. Օ արբհան [3]։ * Կյ զկանայս ազատ տացն և նախարարացն զփախուցելոց՝ հրամայն տայր (շապուհ) ածել յասպարէզն՝ որ էր ի Օ արբհվան քաղաքի ||։ Օ աղկեալ էր սա բազմութիք բնակչաց, այլ զօրք շապհոյ պարսից արքայի առեալ կործանեցին յաւուրս ՚Ք. արշակայ։ * Կյսպա առնուին (ասէ բուզ. է. 55.) և զքաղաքն բագրևանդայ Օ արբհաւան, և խաղացուցաք նէից անտի հինդ հազար երդ հայ, և ուղի հազար երդ չէ ցայսօր սահացեալ երևի տեղին||։ Յայլում օրինակի գրի Բագռանայ։

(1) Զայս գիտուած ծանուցաք նէ երևի կիրակոս ի պատմութիք անդ զաքարեայ սպասալարին Թամարայ Թագուհւոյն վրաց, որ զայլազգիս սպանանէր. ասէ. * Փո խանակ քահանայիցն բագուանայ զոր մորթեցին, և զարիւն արկին զպարսպոյնք եկեղեցւոյն, որ մինչ

(2) Ի միւմ ձեռ՚. գրի Բագռանայ։

(3) Որ է միևնոյն քաղաք. զի ի նոյն գլ. սուղ ինչ ի վերոյ գրի ըստ առաջնոյ օրինակի Զուբհաւան։

հրէայ, և ղբաղաքն ի հիմանց տապալէին յատակէին ‖։ Այլ սակս ստորև Ե. 43. զաւերական նորին յիշատակէ՝ նշանակելով և զդիրս։ * Իր բանակ նոցա ի բագրաւանդ գաւառի ի բագուան աւանի, որ է մօտ յաւերական Օ արեհատնդ քաղաքի ‖։

Այն այս Օ արեհատն յիշատակի և ի ժամանակս վարդանանց առ եղիշէի Է. 133. և առ ղազարայ 107. յերկոցունց իսկ առանց ինչ յիշատակութեան գաւառի, քանզի առաջինն գրէ այսչափ ինչ վասն ուրացեալն վասակայ. * Յառն էր նա և ի մահ մոգուցն ի Օ արեհատնի [1] ‖։ Իսկ երկրորդն Թէպէտ և Վիւղ անուանէ հայելով յառաջիկայ վիճակ Օ արեհատնի զնոյն աւերմանն ի շատոյ, քանզի գրէ. * և ի վաղիւն ի ծագել արևուն՝ ասս ի նոցանէ Թուով սպանին սրով ի գիւղն որ կոչի Օ արեհատն ‖։ Այլ ի նմին տեղւոջ ոչ ընդ աղօտ ակնարկէ լինել և Օ արեհատնի մերձ ի վանս սպարապետին՝ որ էր ի բագրեւանդ։

Նոյն համարիմք ընդ այսմ զ Օ արուանա քաղաք յիշատակեալ ի պտղ. ի մեծ հայս. զոր օրդելիոս վերնակաւ դնէ ի փոքր հայս. Թէպէտ և դիրք տեղւոյն (որպէս և և այլոց բազում քաղաքաց պտղոմեայ.) ոչ համաձայնի ճշդտիւ տեղւոյն բագրեւանդայ։ Նոյն զգիւղն համառնէն պյիշատակէալն յատոդկայ և ի մագիստրոսէ, զոր և դնեն ի ծաղկոտն գաւառի՝ ոչ կարացաք որոշել, արդեօք նոյն՝ թէ այլեւայլ իցեն. քանզի ասողիկ կոչէ զնոյն Է. 3. Օ արեհատան. յաեւէն. * Յաւուրս սորա երևեցաւ սմպատ Թոնդրակաց առաջինն ի Օ արեհատն գեղջէ ի ծաղկոտն գաւառէ ‖։ Իսկ մագիստրոս ի Թղթ. որ առ կաթողիկոսն ասորւոց՝ կոչէ Օ արեհատան։ * Ամեսան այն... եկեալ ի գաւառէն ծաղկոտնէ ի գեղջէ Օ արեհուատնէ [2], եկեալ բնակեցաւ ի Թոնդրակս ‖։

Օ ի ծաղկոտն գաւառ սահմանակից գոլով բագրեւանդայ՝ մանրի եր յետ ժամանակաց փոփոխել սահմանաց նոցա, և այնպէս մի և նոյն զարեհատնի՝ որ էր նախ քաղաք բազմամարդ ի սահմանին բագրեւանդայ, յետ կործանելոյն դարձեալ շինուիլ առնուլ ըստ մասին վիճակի գեղջ, և անցանել ի սահմանակից գաւառն ծաղ-

(1) Ի տպ. բացատ գրի ի Զարբնէ աւանի. իսկ յայլ օրինակի մի ի Զարնէանի։

(2) Ա յայլս գրի յերկուս օրինակս, իսկ ի միում գրի Զարնէ աւան։

կոտան. այլ զտուգութիւն այսորիկ՝ կետադայից Թողցուք ի յայտ բերել։

Ա՛շտարակայ գեղ։ Ունի յայսմ գաւառի առ յովհաննու կաթողիկոսի, յասելն վասն ը. Ներսէսի կաթողիկոսի. * Եւ զկնի սորա Ներսէս, ի գաւառէ բագրեւանդայ ի գեղջէ Ա՛շտարակայ։ Այնպէս գնի առ ատողկայ ի պատմելն զնոյն Ներսիսէ, ուր և գաւառն գրի Բագրեւանդ։ Ասէ ի պատմելն զի. գէորգ կաթուղիկոսէ, յայլում գաւառի կացուցանել զայս գիւղ՝ ասելով. * Տէր գէորգ յաբաձօտանէ ի գեղջէ Ա՛շտարակայ։

Ա՛բամանայ գեղ։ Ո՛գիբս սորա ստորագրէ զաղաղ յայս բան. * Եւ եկեալ Հասանէին ի գիւղ մի՝ որոյ անուն էր Ա՛բամանայ ի նահանգին բագրեւանդայ, մերձակայ սահմանակից բասենոյ և տուարաճատափայ։

Ա՛րճակ. և Ներդկունս։ Ո՛ երկոսին եւս յայս գաւառ գնէ զաղաղ՝ յասելն. * Կալեալ զնա ի գետէն՝ որ կոչի Ա՛րճակ, տարեալ կապեցին ի միւսում եւս ի գետ յանուանեալ Ներդկունս ի նմին բագրեւանդ գաւառի։ Ո՛ արճակ յիշէ լաստիվ. Ը. գնելով փոքր ինչ հեռի ի բերկրոյ, յորմէ Թուի լինել այլ Ա՛րճակ ի վասպուրական նահանգի, կամ Թերեւս նոյն է ընդ արծկէն։ Նակ զՆերդկաց գիւղ յիշէ յովհաննէս կաթողիկոս, բայց գնէ ի մազազ գաւառի, զորմէ տեսցես ի ստորև։

Ն՛ը։ Գիւղ՝ յորում մեռաւ մեծն խահակ, որպէս գրէ ղազար. * Ո՝ ախճանեցաւ խաղաղական հանգստիւ ի գաւառին բագրեւանդայ, ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Ն՛ը։ Ա՛շակերաք նորա ածին զնա աստ ի հիւանդանանն իւրում։ * Որպէս Թէ (ասէ խոր. Գ. 67.) ի վայր և ընդանեցոյն և զերծ տեղի մատուցեալ ի զօրացն պարսից կատողաց զնոսա, որք բանակեալ էին յայնժամ առ բագնայ աւանի։ Ն՛ը կոչի սա առ խոբենացւոյն, և առ յովհաննու կաթողիկոսի. այլ կորիւն կոչէ Գ՛ը Բերոյց, գնելով զմահ սքէս խահակայ, * Ի բագրաւանդ գաւառի ի գիւղն Ն՛ը որոյց։

Նղեգեակ։ Յիշատակի առ եղիշէի 181։ * Ա՛րջէն եւ բէց ի բագրեւանդայ ի գեղջէ Նղեգեակայ (կամ ը այլ օրէն.) Նղեգեկայ։ Եւ առ ղազարայ, յասելն. * Եւ զոր ղարջէն երեցն, որ եր ի գաւառէն բագրեւանդայ՝ ի գեղջէն որ կոչի Նղեգեակ։

Զրա՛։ Գիւղ յիշատակեալ առ Թովմայի արծրունւոյ ը. 14. * Հասեալ ի բագրաւանդ գաւառ ի Զրաւ

դեօղ, կամիը անցանել 'ի Թագաւորաբնակ տեղիսն Հայոց ‖ : Զիբաւ անուամբ այլք զդաշտն լիշատակեն առ նպատ լերամբ, յորմէ երևի թէ էր անուն գեղջ, և 'ի գեղջէն անուանեցաւ և դաշտն:

Ո֊նթեաց *աղաւ. կամ Ո֊նթոյ աւան: Լիշատակի առ Լաստխվերացոյն:

Տէրաւէճ: Վ֊իւղ՝ զորմէ յոհաննէս կաթողիկոս. * Լ՚սպա գքրիստափոր 'ի գաւառէ բագրեւանայ 'ի Տիրաւէճ գեղջ Հ֊ նստուցանեն յաթոռ Հայրապետութեան ‖ : Լ՚ւս ասողքայ ե֊. 2. դնի 'ի Հոլովեաըն. * Տէր քրիստափոր փիլիսոփայ, 'ի գաւառէն բագրեւանդայ 'ի գեղջէ Տիրաւճոյ ‖ :

Խո֊ : Տեղի՝ 'ի դաշտի անդ բագրեւանդ գաւառի՝ զոր լիշատակէ բուզանդ ե֊. 32. յասելն. * Լ՚ւ եր թագաւորն Հայոց պապ բանակեալ 'ի դաշտին բագրեւանդ գաւառի 'ի Խո֊ անուն տեղւոյն ‖ :

Ծ Ա Դ Կ Ո Տ Ն:

Յերկուս ձեռագիրս աշխարհագրութենէ խորենացւոյն գրի Ո֊աղնաոան. առ ասողկայ Ո֊աղնոյոան. առ զազարայ ուրեք՝ Ո֊աղնէոան, և այլուր՝ Ո֊աղնոան: Որպէս թէ առ յատնախուեճ ծաղկանց իւրոց անուանեալ Ո֊աղնոաա. այլ ուղղագոյն և թուի մեզ կոչեցեալ Ո֊աղնոան, կամ Ո֊աղնէոան, սակս ձգելոյ գաւառիս ընդ լերամբ ծաղկաց, (1) զոր օրինակ Լ՚բագածոտն, Ա՚ասեացոտն՝ որք ձգին ընդ արագած և ընդ մասիս լերամբ:

Սահմանակից է բագրեւանդ գաւառին, և հանդէպ նորա. զի զօրք Հայոց և այլոց քրիստոնէից երբև կամեցան բանակիլ ընդդէմ տաճկաց եղելոց 'ի ծաղկոտն, բաւ նակեցան 'ի բագրեւանդ գաւառին, 'ի վաղարշակերտ քաղաքի նորա. որպէս է տեսանել առ ասողկայ ե֊. 38. զնոյն յայտ առնէ և այժմեան դիրք ալաշկերտոյ՝ որ է բագրեւանդ, և դիրք ծաղկաց լերինն:

Օդ սորա գոլով զովացուցիչ, էին 'ի նմա տեղիք ամանոցաց. զոր յայտ առնէ ղազար. Թղթ. 102. յասելն.

(1) 'Ի հին վարս սրբ՝ ոսկեանց 'ի Ճառընտրի. * Յետ մահուան առաքելոյն (Թադէոսի) երթեալ կրթնաւորեցան 'ի լերինս ուրեմն ծմակայինս յահուսն եփրատայ 'ի խառնուրդս ձորոց ուրեմն, որ սկիզբն առեալ լիշանեն, որ կոչի Ծաղկեն. յորոյ յանուն և չինքն կոչեն մինչև ցայսօր Աղն Ծաղոյ:

* Հասեալ ամիսք տօնեցին Յերմելեայ՝ յոր արարեալ աւետնայն բազմութիւնն հայոց ի տեղիս հովոց՝ զայն հասատնէին ի գաւառն որ կոչի Նաղկուան ||։

Ը ախտվեան ։ Այ լեառն, որպէս և տեսանել առ խորհնացոյն ՟ի. 23. * Գտեալ բազում երկս քան զայն ունել ընդ նոյն աւուրս յիւրում լերինն՝ որ Ը ահագնվանն անուանի ||։ Ստորև սոյն այս լեառն դասի նոյն ընդ ծաղկաց լերին ։ * Ցեսցես տեղիս քաջերես ՟ի լերինն ծաղկաց (1) զպարկացիր ջրով ||։ Որով անկանի սա ՟ի ծաղկոան գաւառի, որպէս և լեառն ծաղկաց։

Յայս լեառն ժողովեր ամի ամի բանակ Թագաւորին ՟ի նաւասարդի՝ առ՟ի կատարել զտօնն առնորաբեր, և զտօն յովհաննու՝ որ եկեղեցին էր ՟ի մօտակայ աւանին բազուան. որպէս և տեսանել առ բուզանդայ Ը. 15. * Այր էր բանակ Թագաւորին (Բ. արշակայ) ՟ի Ը ահագնվանի ՟ի բուն բանակի տեղն արշակունեացն ՟ի՝ նեղբոյ սիւնեացն, և ՟ի վերայ ասպարիսացն ||։ Յիւրէ ՟ի նոյն գլ. և Ո ծնօ նաւասարդայ, և գիշատակ յովհաննու ։ Այսպէս և ՟ի գործս ժողովոյն՝ զոր արար աստանօր ա. յովսէփ կաթողիկոս՝ այս Ը ահագնվան կոչի Բանակեաղ Թագաւորացն՝ ՟ի ժամանակի ամանորաբեր տօնին ։ * Զայնի ժողովէին ՟ի հրամանէ միաբանութեանն յերեսաց կեսրի՝ ՟ի Ը ահագնվանի ՟ի բանակեաղ Թագաւորացն հայոց ՟ի ժամանակ ամանորաբեր տօնին ||։

Ընդուն սորա Թուի լինել անուն վանից կամ իջևանի և բնակարանի իշխանին շահապի յայսմիկ լերին, և յայնմանէ ընկալեալ լերին զիւր զանուն. զի և ուրեք ՟ի պատմութեան ժողովոց ազգիս՝ ուրոյն գրի Ը ահագնվանի առ ագաթանգեղոսի ՟ի Թղթ. յՅթ. յիշատակի իշխանին Ը ահագնվանի։

Զայս լեառն սեպհական էր նախ տոհմի ուրուք գնուեաց, ապա էանց առ նախայիշատակեալ գնել արշակունի, վանն զի ժառանգութիւք եհաս նմա ՟ի մայրենի հաւոյ իւրոյ՝ որ էր գնուն, և նոյնպէս կոչէր գնել, որպէս

(1) ՟ի տպ. ՟ի լերինս ծաղկոց։ Յայսմաւուրս որ խորայիլի գրի յօգոստ. իէ. վանն սբց ոսկեանց. * Ազաթ բնակեալ ՟ի լեառն ծաղկաց ||։ Եւ ՟ի կոյ յակունս եփրատայ գետոյն ՟ի ժամանակս արաւաչեսի արքայի ||։ Եւ ՟ի սեպտ. իէ. * Գնացեալ կրօնաւորեցան ՟ի յակունս եփրատայ ՟ի ծմոկ լեառն ծաղկոց ||։ Եւ փոքր մի զկնի գրի վանն սուքիասանց. * Եւ եկեալ գադարէին առ նոսա ՟ի լեառն ծաղկոց ||։ Եւ ՟ի վերջն գրի. * Իսկ լերինքն կոչեն յանուն սբցն (ոսկեանց՝) Ոսկի, և (սուքիասանց՝) Սուկաւ ||։

պատմէ խորհեալոյն, և յայսմ վայրի եւ սպանանել և թաղել զ. արշակ վնասն գնել արշակունի, որ էր իւր եղբօրորդի։ Ի լերինս յայսմիկ թաղեալ գնէ վարդան և զմարմինս սպանողացն նորին գնելոց, և ի 1157. յայտնեալ իւրը նորանշան ինն տեսլեամբ։ * Յայտնեցան (ասէ) ի շահապիվանս մարմինք սպանողացն գնելոց անփուստ հանդերձիւք, և արիւնաշաղախ մարմնով՝ որպէս և սպաւ նանն, ըստ անիծից սրբոյն ներսէսի ‖։

Լ. «Ին։ Ցեղն ի լերինն շահապիվանի, զորոյ զդիրսն որոշեն բուզանդ գ. 15. յասելն. * Լսեալ զպատահեակն գնեալ առնուին գնայիսն մծո ի սիւնեաց աշխարհն, և անդ դէն կառափէին ի սարակ լերինն (իմն գշահապիվանն), որումմէ տեղոյն Լսին անուանեալ է, մծո յորմածս արգելոցացն որոյն երիտոյն, ընդդէմ մուրատաստանին աղբերայն բազմոցացն աշքունի, յանդիման բանակեալեղ բնին ‖։ Լսինքն յանդիման տեղւոյ բանակին, ուր բաւ նակեալ էր թագաւորն ի շահապիվանի։

Լ. «Ին։ Լերդ՝ որ ի բանից աստի զգաւաբայ Թղթ. 102. երևի լինել յայսմ գաւառի. * Հասանէին ի գաւառն որ կոչի ծաղկոտան, մերձ ի բերդն ամուր՝ զոր Լ. «Ինգին անուանեն. զայն տեղաք արարեալ բանակեւեղս արանց՝ գադարէին անդ զաւուրս տօթոյն ‖։ Յիշատակէ զնոյն և եղիշէ Թղթ. 55. բայց առանց որոշելոյ զգաւառն, և կոչէ Վիւղաքաղաք. յասելն. * Լսկին հասին յաշխարհն հայոց ի Վիւղաքաղաք մի մեծ՝ որում անուն էր Լ. «Ինգ ‖։ Այն է սա ընդ աւանին՝ զոր յիշատակէ ընդարձակողն Թովմայի արծրունւոյ։ * Լրեալ իւր ամուսին (արգելմեհ արծրունի) զդստեր գրիգորի արևելեան դուկի, և զթոռն մեծաշուք և տիեզերակալ իշխանին ա. լուզի՝ որ էր տէր և իշխեցող գաւառացն ծաղկոտան, և կոզովտի և մեծ աւանին Լ. «Ինգեղանն ‖։

Այն կարծեսցուք և ընդ Լ. «Ինկ գեղջ, զոր ստորագրէ պրոկոպիոս (պատերազմ պարսից. բ. 25։) * Հարիւր և քսան ասպարիզաւ հեռի ի տուվինոսէ (ի դվինայ,) յաջմէ եկեղեցին ի սահմանաց հռոմայեցւոց՝ երևի լեառն դժուարամատոյց և ահագին զառ ի թափ, յորոյ գագաթ բաժեռ խոխոմն է գիւղն Լ. «Ինկըն, ուր նավէտիս չիմաչեանն անդ զգալուստ թշնամեաց՝ անդրէն ընդ կրունկն դարձեալ ամենայն զօրօք պատսպարեցաւ, ասպաւիսեալ յամուր դիրս տեղւոյն։ Լդ ստորոտով լերին և գիւղն. իսկ ի գահավիժ գագաթանն՝ բերդ ամուր համանուն

գեղջ. արդ նավէտիս զտաճնային մուտս գեղջ վիմօք և ա ռատպուզք խցեալ՝ գժուարամատոյց կացոյց, նաև փոս հատեալ, յորս հազար զօրս անդանօր եդ ‖ :

Ա արշակ : Ջերմուկ յիշատակեալ առ ղազարայ. Թղթ. 230 : * Վայրն հասանելին այնուհետև ՚ի Ծաղկոտն. և կաւեցեալք առ վայր մի հանդչել ՚ի Ջերմկին որ կոչի Ա արշակի ‖ :

Կոպէնեան : Վիւղ՝ զորմէ ասողիկ էջ. 38. * Վան ՚ի գաւառն Ծաղկոտն, ՚ի գիւղն որ կոստեանքն կոչի ‖ :

Ընդեղեայ խալ : Տեղի՝ որ Թուխ լինել յայսմ գաւառի, զորմէ յիշատակի յայսմանաւրս. յօդոստ. 27. ուր պատ մի երևումն քան սուքիասանց մերձ ՚ի միայնարանն ոս կեանց, ուր և մկրտեցան ՚ի նոցանէ ՚ի յակունս եփրա տայ ՚ի Ծաղկաւէտ տեղին :

Շ Ի Ր Ա Կ :

Ա յսպէս կոչեցեալ ասի յանուանէ շարայի, որոյ հայրն արմայիս բնակեցոյց զնա յայսմ վայրի, և եղև կալուած սեփհական նմա : Վիրք նորա գաշտաւայր մերձ յերասխ և յարմաւիր. երկիրն յուրթի և բերքի, զոր համառօ տիւ ստորագրէ խորենացին յիւրում պատմութեան ա. 11. * Այս զորդին իւր զշարայ, զյոլովածին և զշատա կեր, առաքէ (արմայիս) ամենայն աղխիւ իւրով ՚ի դաշտ մի մծտաւոր (այսինքն մերձ առ երասխ, և առ արմա ւիր,) արգաւանդ և բարի [1], յորում գնան ջուրք ա ռակաւք, ՚ի Թիկունս հիւսիսոյ լերինն՝ որ անուանեցաւ արագած, յորոյ անուն և զգաւառն ասեն անուանել Շ իրակ. վասն որոյ արգարանալ Թուխ առասպելին՝ որ ասի ՚ի մէջ գեղջկաց. Թէ քո շարայի որկորն է ասեն, մեր Շ իրակայ ամբարքն չեն ‖ : Ա յսպիսի զշիրակ գաւառ Ա ճէմեան շարայէ անուանէ նոյն խորենացին էջ. 6. և հնորհալին յողբան եդեսիոյ. Ո՛ւռհայէ Շ արայէ :

Կոչեցաւ զկնի այս գաւառ նաև Ձորոփէտ, գէթ ըստ այնմ մասին որ անկանի յոլորտս անի քաղաքին. * Ձո րոյգետ յանի է (ասէ վարդան աշխարհագիր) և Շ ի րակ գաւառն ‖ : Ո՛ւմն իրի և վարդան պատմագիր զգա՜

(1) Ա յսպէս յերկուս գրչաց որպէս և ՚ի տպագրեալն դրի դիր օրինակս, ուր ՚ի միւս այլ, Բերրի :

գիկ վերջին Թագաւոր անուն՝ կոչէ Յովաննէս Ձորոյ գեղոյ՝ ի Թուղթս գրիգորի կաթողիկոսի և Լամբրոնացւոյ կոչին բնակիչք Ձորոփեցոցն[1]։ Այժմ այս գաւառ կոչի Ծ. բէնէլ, եղեալ աղաւաղութիւն՝ ի բառիս Ճ Իրականաց, զոր ասորև։

Յաւուրց անտի մեծին տրդատայ սերիհական եղև այս շինուած աղգին կամսարականաց, որպէս և տեսանել առ խոր. գ. 87. * Տայ (ասէ տրդատ Թագաւոր) ժառանգութիւն նմա (կամսարայ նահապետին կամսարականաց) զմեծ գաւառ տակերտն արտաշէսի, որ այժմ ասի դրասխանակերտ, և զգաւառն Ճ Իրակ։ Ասէ որոյ բուզանդ գ. 19. և գ. 11. և զազար դնեն ընդ տերութիւն կամսարականաց, զոր յափշտակեաց արշակ բ. այլ յետ այնր գաբձեալ էանց՝ ի ձեռս կամսարականաց, զի իշատակին՝ ի գիրս իշխանք սորա՝ ի նոյն զարմէ, որպէս և առ զազարայ՝ յաւ սեբեոս. * Ընդ մէջ երկոցունց մասանցն (բանակին) ըզքաջն և զընտիրն՝ զիշխանն շիրակայ զներսէհն կամսարական, և զնորուն եղբայրն զհրահատն պատրաստական յօրինեին։ Հայց որպէս Թուխ՝ ի ը. դարուն յանցանել արշարունեաց գաւառի՝ ի ձեռս բագրատունեաց՝ էանց և այս գաւառ՝ ի նոցա ձեռս։

Ընդ։ Վաղագ հռչակաւոր՝ ի ժամանակս բագրատունեաց, և արքայանիստ ամանց Թագաւորաց՝ ի նմին տոհմի, վասն որոյ Թագաւորաբնակ կոչէ մատթէոս. Իջեալ՝ ի վերոյ նախաւորբնակ գաղաքին Ընոյ։ Ուրեք ուրեք գրի Յունդ, բայց զառաջնոյն գրչագրի ուղիղ համարել տայ այս ստուգաբանութիւն ընորհալւոյն յոյգան եգեսիոյ. ուր գեղեցիկ ինն խորհրդաբանէ զանուանէ սորա՝ ի գիմաց եգեսիոյ.

* Հայց և զբեզ յայս հրաւիրեմ,
արևելեան քաղաքդ Ընի . . .
Ճ Ինեալ եղեր տուն արքունի,
ընտրեալ նահանգըդ Ճ արայի.

(1) Մարթ է թէ և այլ տեղիք, որոց նիւթք են առ ձորովք գետոց, կոչեցան՝ ի գիրս Ձորոյ գեղք. իբր անուն տեղւոյ. զոր օրինակ ստեփ. օրպ. գլ. ըբ. զնահակ իշխանն՝ որ էր աներ բ. աշտոյ արքայի բագրատունւոյ, կոչէ իշխան Ձորոփեցին և փարդմանոյ։ Ուր Թուխ ակնարկել և յայլ տեղի ինչ որ էր՝ ի կողմանս գարգման գաւառին գուգարաց՝ կոչեցեալ սոյնպես Ձորոյգետ։ Կամ թէ ասացուք՝ գուցէ այս նահակ իշխեր՝ ի գարգմանայ սկզբ սեալ մինչ՝ ի յայս ձորոյգետ շրջակայ։

Ծագաւորաց բագրատունի,
որ ՚ի յեղէն խորայելի . . .
Դեղեցկանուն զարմանալի,
որ երրակի տառիւ բերի,
Նրրորդութեանըն խորհրդի,
որ միշտ ՚ի քէն երկրպագի ||:

Յաւել և զայն, զի և առ յունաց պատմագիրս, առ կեդրենոսի և առ սկիլիցիոսի զրի համաձայն առաջինն գըրչութեան:

Ա արդան ուրեք տայ սմա և այլ անուն անսովոր, յաստեն. * Ինչգեռ չև էր ընդարձակ շինեալ քաղաքն Անի, որ կոչի Կամախ || : Այսպէս գնի նաև յերկուս հինն օրինակս, որ մեզ Թուի ածանցեալ կամ յանուանէս Կամախ, և կամ կամախ անուան ածանցեալ և աղճատեալ յանուանէն Կամախ:

Տես վասն այսր գրիւս Անի, ուր նշանակեցաք թէ որպես յետինք շփոթեն զերկոսին, յորոց մին անկանի ՚ի դարձուածողեաց գաւառի բարձր Հայոց. իսկ այս երկրորդս յայսմ շրջակ գաւառի. զոր քաց ՚ի վերոգրեալ քանից ընորհալոյն և վարդանայ աշխարհագրի, յայտ առնէ նաև կիրակոս՝ յասելն վասն զաքարիայ զօրավարին Թագուհոյն վրաց. * Հրամայեր ժողով առնել ՚ի մայրաքաղաքն յանի, որ ՚ի շրջակ գաւառի || : Այլև մատթէոս. որ և ուրեք կոչէ զԱնի Մեծ տուն Շ էրակայ. որպէս և ստեփաննոս օրպել. յոտանաւոր ողբոն ասէ վասն բագրատունեաց.

* Վանզի աթոռ նոքա արկին,
՚ի Շ էրակայ տանն ՚ի Անին ||:

Նոյնպէս անուանեն զնա և վարդան և այլք. վասն ո րոյ և զանանիա համարօրէն՝ զոր ոմանք յանուն քաղաքին կոչեն Անեցի, այլք յանուն գաւառին կոչեն Շ էրակացի. և զբարսեղ արքեպիսկոպոս քաղաքիս, ոմանք կոչեն արքեպիսկոպոս Անոյ, և ոմանք Շ էրակայ:

Ո առաջինն էր սա բերդ, յայն սակս բերդ անուամբ յիշատակի առ ղազարայ, որ նախ զգաւառ նորուն յիշէ ասելով. * Նկեալք ՚ի գաւառն Շ իրակայ՝ ՚ի գաշտն ուր բնակեր մարզպանն Հայոց ատրվշնասպ || : Նա սուղ ինչ զինի զբերդն, ասելով վասն նորին ատրվշնասպայ և ամբոխին որ ընդ նմա. * Ձուէին ՚ի տեղւոյն (այսինքն ՚ի

դաշտին շրջակայ), և երթեալ բանակեին մօտ ի պալիսպ բերդին՝ որ անուանեալ կոչի Կնիկ ||։

Բայր ի սմա շինուածի ինչ աշտա բագրատունի մանկեր կարգացեալ լեալս ընդ. դարուն [1], այլ այս շինուածի եր իբր նորոգուածի ինչ, և ոչ ընդարձակուածիւն. զի և յովհաննէս կաթողիկոս 100 ամաւ զկնի քան զաշտա, Կնոջ կոչէ, և զնեց մերձ լեզր ախուրեան վտակին, [2] և ոչ լեզր անդ նորա՝ ուր զկնի տարածեցաւ։

Այլ առաջինն որ ընդարձակեաց զանի, եղև ընդ. աշտա արքայ ողորմած յորջորջեալ, որ նոր պարիսպ յաւել կանգնել լբատ վարդանայ, զոր կոչէ փոքր պարիսպ քաղաքին անոյ, և զամենայն բրգունս և զեկեղեցիս։ * Զ փոքր պարիսպ քաղաքին Կնոյ շինեաց (ասէ աշտա,) և զամենայն բրգունսն, եկեղեցիս յօրինեաց ի նիժդ թվին ||, յամին 964։

Ուրդի նորա ընդ. սմբատ արքայ տիեզերակալ ձայնեալ՝ եւ կատարեալ ընդարձակուածի քաղաքին. որոյ ի բազում նոր պարիսպ յաւելեալ՝ ի մէջ էառ զպարիսպն շինեալ ի հօրէն իւրմէ, և վասն այնորիկ առաջին պարիսպն փոքր կոչեցաւ՝ համեմատութիւն շինելոյն ի սմբատայ. որ պէս և այս պարիսպ կոչի ի վարդանայ Արճանիստ։ * Սմբատ որ տիեզերակալ կոչեցաւ՝ զարճանիստ պալիսպն Կնոյ շինեաց, և զկաթողիկէն հիմնարկէ ||։

Յայմ ժամանակի քաղաքն ձգեցաւ մինչև յախսուբեան վտակ, որպէս ծանուցանէ ասողիկ էջ. 11. * Իսկ արկեալ պարսպափակ առնէ զպարիսպն Կնոյ, յախսուբեան գետոյ մինչև ցձորն ծաղկոցաց՝ կրով և վիմամ-

(1) Պատմէ զայսմանէ վարդան ի բանն զոր յառաջ բերաք ի միւս անի. ուր շփոթելով կոչէ Կամսա. բայց գաւառ յարմար այսմ կամախոյ, գտանեմք ի բանս անդ նորա զշիրակ. ուստի նորոգեալն յաշտոյ ոչ էր կամսա որ էր ի գարանաղեաց գաւառի, այլ ընդ կոչեցեալն Անի որ ի շիրակ. զոր և հաստատէ բան ասողկայ որ ասէ վասն սորին աշտոյ՝ մեծ գնոյ էառ ի կամսարականաց զերկիր նոցա։

(2) * Իսկ արքայ սմբատ (ասէ յովհ. կաթ.) ի գառնային իւրում ի տայոց, երթայ հանդիպի ներքինապետին մեծի, մերձ յամուրն Անի լեզր ախուրեան գետոյ ||։ Ամուր անուամբ կոչէ և սամ. ի թուին նիժդ. յաւուրս վերնոյ կաթողիկոսի, նոյնպէս և լաստիվ. ը. և կիրակոս։ Այս ամուր և բերդ յետ ընդարձակելոյ քաղաքին՝ ձգերիա անուամբ կոչեցաւ Կերդին Բերդ, որպէս և ուռհանեալ առ լաստիվ. ը. յասելն. * Սարգիս իշխան եաես զեղեալն զգանձս թագաւորութեն առեալ ի Նեբքին ամուրն մտանէ յանառն Անի ||։ Զոր մատի՛. և վարդ՛. շփոթեն ընդ միւս անի ամրոցին որ ի գարանաղեաց գաւառի։

ծուցեալ, մնհարձանաք և աշտարակօք բրգային բարձրա-
բերձ պարսպեալ, բացագոյն քան զՀին պարիսպն յընդ-
արձակութիւն քաղաքին, և մայրագերան դրամբք երկա-
թագամ հաստահեղոյս բևեռապինդ ամրացուցեալ ։ Յա-
մենեքին գնեց զայս շինուածն ի Թվին ՆՆԹ. որ է ամ ՇՌ
980, յառաջին ամն անդ թագաւորութեանն ամբատայ, զի
զրեն. * Իսկ և իսկ ընդ թագաւորելն ամբատայ, լիր ար-
կեալ պարիսպ քաղաքին Կարսոյ [1] բարձրաբերձ բրգամբք
և լայնատարած տեղօք՝ յախտրան գետոյն մինչև ցծաղ-
կոյսաձոյն կոչեցեալ վայրն, հիմնարկեաց և զկամարակն
պայծառափառ ի նմին քաղաքի ։ Յորմէ օրինակ գրե-
թէ բառ առ բառ և կիրակոս ։

Յայնմ օրէ սկսաւ պայծառանալ այս քաղաք մարդա-
շատութիւք, հարստութիւք, և բազմութիւք եկեղեցեաց և ա-
պարանից՝ մինչև յամենայն սահմանս Հայաստանեայց զՔրի-
քրիստոնէութիւն՝ ուչ յիշատակի ուրեք ի գիրս մեր այլ
քաղաք համեմատ սմա ։ * Լիր անկ (ասէ մատթ.) բազմ
ամբոխ լցեալ քաղաքն, բիւրք բիւրուց արանց և կա-
նանց՝ ծերոց և տղայոց, որ և հիացումն արկանէր տես-
ողացն, զոր կարծեալ զօրացն բազմաց՝ եթէ մեծ մնան
աշխարհիս Հայոց իցէ. և յայնմ աւուր հազար և մի ե-
կեղեցի ի պատարագի կայր ի Կարնի. և էր քաղաքն շուր-
ջանակի քառակուսի. և էր գետն ախուրեան շրջապատ.
բայց միայն ի մի կողմն կայր տեղի ինչ դոյր, որպէս թէ
նեռընկղզի մի ։ Կամն սմին և կիրակոս որ գրէ. * Վա-
զաքս այս Կարնի՝ լցեալ էր բազմութիւք մարդկան և անաս-
նոց, և պարսպեալ ամրագոյն պարսպօք. և եկեղեցի բա-
զում կայր ի նմա. մինչ ի կարգ խօսիցէ երգմանն՝ այսպէս
երդնուին, Կնոյ հազար և ի եկեղեցին, և յայժ փառքնամ
էր քաղաքն ամենայն իրօք ։ Յուցակ բազմամարդութիւն
սորա է և այն, զի յոհաննէս Թագաւորն ի ԺԱ. դարուն՝
ընդդէմ աշտոյ որ յանկարծ եկն ի վերայ նորա, վազ-
վազակի 40 հազար հետևակ զօրս, և 20 հազար հեծե-
լազօրս եհան ի նմանէ իսկ ի քաղաքին ։

(1) Ասպէս գրէ և առ լաս-
տիվ. ե. * Մինչև ի գուռն Ա-
ւոյ ։ եւ ի գլ. Ժ. * Յոյժ պա-
կաս էր ըստ արժէքին Ալեայ...
Առաքէ Թագաւորն տեղակալ քա-
ղաքին Ալեայ ։ և ոչ Ալոոյ, որ-
պէս գտանի առ ասող. զոր եզաք
ի վերոյ ։ Ա՛ա կիրակոսի գրի Յո-
նոյ, կամ Ալոյ. * Լիր արկեալ
պարսպին Յանոյ ։ եւ թէ * Իբ-
րև տեսին ամիկք բազմութիւն
քաղաքին Յանոյ... Առաքեցին
քնակիչք քաղաքին Անոյ ։ ևն ։

՝ի հազար և մի եկեղեցեաց քաղաքին՝ զերից միայն և կեղեցեաց չինուԹիւն գտանեմք յիշատակեալ. յորոց երկուքն են արքայաշէնք ։ Օ մին կառոյց վերոգրեալ սրմբատ. ԲԸ. * Արկանէ (առ ասող. Ճ. 11.) հինն և մեծաշէն եկեղեցւոյ ՚ի նոյն քաղաքին Անւոյ ՚ի ձեռն Ձարեհ տարապետին տղգատայ, որ զկաԹուղիկոսարանին եկեղեցին չինեաց յարգինայի ։ Եչ կարաց սմբատ ՚ի գլուխ հանել զայս եկեղեցի՝ առ կանխելոյ օրհասին մահու, այլ կատարեաց կատարամետ Թագուհին կին ՚ա. գագկայ արքայի, ՚ի հրեշտակէ ՚այ յորդորեալ՝ ըստ ասից վարդանայ։ Օ զարդս այսր չինուձ պատմէ առաղնկ Ճ. 30. * Այլ կին նորա (գագկայ) կատարամիգե Թագուհի բարեպաշտուհի եղեալ, որ էր դուստր վստակայ սիւնեաց իշխանին. շինեաց զհիմնարկեալ եկեղեցին սմբատայ, առհնապայծառ վայելչուԹիւ, բարձրաբերձ կամարօք գմբեԹաւորեալ խոբան երկնամման. և զարդարեաց ՚ի զարդ ծիրանեծաղիկ ոսկեԹել նկարագործ անգուածոց, արծաԹեղէն և ոսկեղէն անօԹոց, և բազմապայծառ լուսատու անօԹոց վայելչուԹիւ, որովք ջահանայր ըստ երկնային կամարին կաԹուղիկէն (1) ՚աբ՝ որ ՚ի քաղաքին Անւոյ ։

՝ի զարգուց սորա զերկոսին յանուանէ յիշէ մատԹէոս. մի՝ ծանրագին խաչ արծաԹի՝ մարգաչափ մեծուԹ՚՝ կանգնեալ ՚ի գմբէԹին անդ եկեղեցւոյն, երկրորդն՝ կանԹեղ ապակի կազմեալ ՚ի բիւրեղէ (2), յայսմ ժամանակի չնաշխարհիկ հասմարեալ, զոր ՚ի հնդկաց տուեալ էր բերել սմբատայ աթիզերակալն ընդ բիւր մի գանձուց. որոյ կշիռն էր 12 լիտր. և նոյն չափովն տանէր 12 լիտր. զերկոսին և՚ ՚ի վայր ընկէց, և զջահն խորտակեաց սին ՚ի վնասուցաց յառաման անդ քաղաքին յալփատ լանայ ։

Օ երկրորդ եկեղեցին չինեաց ՚ա. գագիկ արքայ յառնէն սբին գրիգորի. զորմէ առաղնկ Ճ. 47. * Օ մեծաշէն եկեղեցին որ ՚ի Վաղարշապատ՝ անուամբ սբին գրիգորի չինեալ. որ էր փլեալ և կործանեալ, կամեցաւ (գագիկ)

(1) ԿաԹուղիկոն զոր ասայ եկեղեցւոյն՝ առանց յիշելոյ զայլ ինչ անուն, յայտ առնէ լինել և կեղեցի կաԹուղիկոսարանին, զոր և հաստատէ սամուէլ ՚ի նոյն ա նուն կոչելով. * ԿաԹուղիկէն սխրատեսիլ զոր հիմնադրեաց սրմբատ Ա. Վաղարշապատ քաղաքին Այնի, ասատանօր (այսինքն ըստ հաշուի նորա ՚ի Թվին նձէ. որ է ամ ՚ին 1008.) գլխաւորեցաւ հրամանաւ և արգեամբք կատարմանեայ Թագուհոյ գագկայ շահնշահի ։

(2) Թերևս իմանայ զայն բիւրեղ, որ է հանք, և ՚ի բնաբանից կոչի Բիւրեղ ընդոծին։

նոյնաձև չափով և յօրինուածով յարդարել ՚ի քաղաքն Կղնուոյ, հիմնարկեալ ՚ի կուսէ ծաղկոցաձորոյն ՚ի բարձրաւանդակ տեղւոջն տարփատեսիլ տեսողացն. (զոր) մեծաւ տաճ վիմարդեան կոփածոյ վիմօք մանուածոյ քանդակեալ յօրինէ, լայանցոյց պատուհանովք, երկակի դրամբք, աքանչատես տեսմամբ գմբեթաւորեալ, գունակ գերամբարձ և երկնանման գնդիւն ‖ : Պատճառ շինելոյ եկեղեցւոյս՝ ակնարկէ լինել սուերումն միւս եկեղեցւոյ սրբոյն գրիգորի. իսկ այն սուրբեալ եկեղեցի է նոյն իսկ զոր շինեաց ինքն. նեռեսէս կաթողիկոս ՚ի վաղարշապատ քաղաքի, որպէս յայտ է ՚ի բանից առաջի առմուելն. * Այր գրիգորն գերագոյն՝ զոր նախ սկիզբն առնու ՚ի շինել Թագաւորն գագրկի ՚ի Այնի, ՚ի վերայ ծաղկոցաձորոյն վայրիւք, գաղափար առեալ զլուսազարդ գիշերաշրջի վրայ գրիգորն՝ գշխնեաղն ՚ի նեբսիսէ հայրապետէ. և կատարեաց զայնծաւ կերպ փարախն բանաւոր հօտին քրիստ, ՚ի ու. ամի մերոյնմ նոցոյ տէն մերոյ յիսի քրիստ ‖ : Ոչ այսոսիկ բանս բառ առ բառ օրինակ և կիրակոս :

Ոչ երրորդ եկեղեցին շինեաց ա. սարգիս կաթողիկոս, որ չէլ անդ ՃԻ. դարուն, զորմէ գրէ վարդան. * Ճ ի նեաց զվիայարան սրբոյ հռիփսիմեանցն, առընթեր կաթուղիկէին Կղնոյ, և փոխեաց անդր գիշխարս նոցա բերեալ մեծաւ հանդիսիւ, և կարգեաց զօրն տան մեծ ‖ :

Բազմաւթիւք յիկեղեցեացս աստի կանգնուն կան ասէն Ճանապարհորդք յանի մինչև ցայսօր, զորս առ ի որոշել հետաքննին մեր Ճանապարհորդաց հարկ է նախ ՚ի վերայ հասանել այսր ստորագրութեանս նախնեաց՝ զորս յառաջ բերաք : Տես ՚ի նոր հայաստան թղթ. 122 : [1]

(1) Նոր Ճանապարհորդ ականատեսս պատմեաց մեզ՝ քառասնիւ չափ եկեղեցի տակաւին կանգուն կայցեալ յայժմեան յաւերակս հին Անի քաղաքին, գմբեթաձեւնակք և առ հասարակ կճեպաք, որպէս և սուերակք ասից ըստ մեծի մասին կճեպաք. զի առ եղերբք ախուրեան գետոյ՝ են ասէ առհասարակ հանք կռոյ, թող զբազմութիւն կիսասուեր եկեղեցեաց : Գթբիսաք քաղաքին ըստ մեծի մասին անկեալ կան, այլ բազում գրունք պարսպաց կճեպոյ բարաւորըք կան, զոն կացեալ մինչև ցայժմ, առնելով և ելանելիս ՚ի վերայ : Գտաւ նին և աշտարակք, յորոց ՚ի միւսն մարթի է գնալ գեանափոր գաղանի ինն Ճանապարհաւ, որ բրեալ կայ ՚ի ներքուստ ախուրեան գետոյն, ընդ որ գնացեալ յայնկոյս գետոյն լինի անցանել ընդ երկրաւ, և անդուստ յաշտարակ անդր է լանել : Մակագրութիւնք երկաթագրվք յանուն թագաւորաց աստ և անդ բազում ուրեք տեսեալ. ուրեք ընթերցեալ ասէր Պահապանաց Խաչատուրայ. և ուրեք այլ մակագրութիւն ՚ի շիրմի թագաւորաց, ուրանօր տեսեալ ասէր

Լ՚ին ՚ի քաղաքիս և ամբարանոցք շինեալք ՚ի սմբատայ, զրոս յիշէ ասողիկ էջ. 29։

Լ՚յս մայրաքաղաք համարէն հայաստանեայց՝ այսպէս ամենահիւծ ծոխացեալ, աճուռ արքայի և կաթուղիկոսի սահմանեալ, սակաւատեւ գոյաւ յիւրում փառաւորութեանէ, բազում փոփոխութեամբ և նեղութեամբ կրեալ ՚ի յունաց և ՚ի պարսից. քանզի յոհաննէս Թաղաւոր՝ որ և սմբատ անուանեալ ՚ի սկիզբն ժա. դարուն, նեղեալ ՚ի զանազան թշնամեաց՝ մեհեաւանդ ՚ի Թագաւորէն վրաց, առաքեաց զպետրոս գեղադարձ առ կայսրն վասիլ՝ որ յոյժ ժամ եկեալ էր ՚ի կարին, խոստանալով * Ցալ ձեռագրով զ՚ինի զինի մահուան իւրոյ ՚ի հոռոմս ||, եթէ պահեացէ զնա կայսրն ՚ի նեղչաց իւրոց, որպէս պատմէ վարդան (1). ուրախացեալ ընդ այն կայսեր՝ նուաճեաց զվիրս, աւերեալ զերկոտասան գաւառս նոցա։

Իբրև մեռաւ յոհաննէս, և Թագաւորեաց գագիկ էջ. ՚ի 1042. ոչ կամեցան հայք տալ զանի ՚ի ձեռս յունաց՝ զոր սակով խնդրէին. վասն որոյ Է. միքայէլ կայսրն քալեֆագ ձայնեալ՝ առաքեաց 100 հազաւ զօրս պաշարել զանի. այլ վհրամ պահլաւունի 30 հազար հետևակ կօք, և 20 հազար հեծելովք յարձակեալ ՚ի քաղաքին ՚ի վերայ յունաց ընդ դուռն անուանեալ Կ՚աղբոյ՝ (2) չաբաչար հարուածս էած ՚ի վերայ նոցա, մինչև ըստ զրե-

և տող մի անծանօթ տառիւք ինքեան նաև այլոց հմտացելոց։ Այսկ չօպան քէլհեսին գեղեցկակերտ և ամբողջ, արտաքոյ պարսպաց կայ ՚ի հեռին, զոր շինեալ ասեն հովուի ուրուք, որոյ յաւուր միում վտարեալ գոլով յհակերեցւոյ առ գծծուածեան հանդերձիցն, ինքն վասն իւր իւրովք ծախիւք արտաքոյ քաղաքին շինէ զայս և կեղեցի, հաստիթս սահմանելով նաև ՚ի պէտս երիցանց նորուն. յայտնի առնելով յայնժամ զինքն լինել գաղտնի մեծատուն։ Եւ այսպէս յայնչափ յաւերական հայաստանեայց աշխարհի՝ մի միայն զայս քաղաք տեսանելիս մեծացեալ, որ յայնմի ցուցանէ զիւր գաւեր բակս քարող իւրումն նախնի մեծութեան. ուրանօր եթէ դէպ լինէր ումեք ինամով ժողովել զայժմեան զերևեալ մնագրութիւնս, բազմաց օժանդակէր ՚ի լուսաւորութիւն պատմութեան նախնեաց առ ՚ի մեզ ժողովելոց ՚ի վերոյ։ Ի ձանապարհին կարապ կառուցեալ, հարկ է ժամաչափ և աւելի ՚ի ներքս կոյս քան զձանապարհն խոտորել առաջնորդ առեալ զոմանս յերկուց հայաբնակ գիւղօրէից որ անդ ուր երբև լինի հասանել, երևի բազմութիւն աւերակաց մի զիտել կուտելոց, ընդարձակ տարածեալ ձգեալ ՚ի չափ մեծութեան կոստան դնուպօլսոյ, երբև զայժմեան աւերակս բալիհոայի և իլխանալոյ, որ արդ կոչին Պաալպէկ և Համա։

(1) Ա՚յլազգ պատմէ գլխովին կեդրենոս. Թ՚լթ. 761։

(2) Ա՚յսպէս կոչեցեալ երևի այս դուռն՝ սակս հանելոյ ՚ի ծաղկոցաձորն։

լոյ մատեհոսի՝ ի հազարէն հարիւր լինելոյ մեռցեալ։

Յետ սակաւուց կայսրն կոստանդին մնռումախ Թագաւորեալ, ի սադրելոյ ոմանց իշխանաց Հայոց, մանաւանդ Հնարագործութեամբ սպրդի ուրուն վեստ կամ ազատ կոչեցելոյ՝ կոչեաց զդպռիկ ի կոստանդնուպոլիս, երդմունս տստիկս երդուեալ ոչինչ կարծիս նենգութեամբ ի մտի դնել վասն այնր. իսկ ի գնալն արքայն՝ դաւաճանն սպրդիս, և այլք յազատաց նմին համախոհք՝ * գին. բանալ (1) քաղաքին Կ՚Ընոյ, առաքէն առ կայսրն հանդերձ յետկարաբ, ի նա տուեալ զԿ՚Ընի, և զամենայն Հայս։

Իսկ դպռիկ Թէպետ ի սկզբան անդ զաւուրս երեսուն պնդագոյնս ընդդէմ եկաց հաւանելոյ կամաց կայսեր, քանզի թէ յուցեալ առաքի՝ Թէ իւր էր իրաւունքն տալ և չտալ զԿ՚Ընի, բայց զինի ոչ կարելով ելի աղագս ինչ գտանել, ակամայ կամեաք հաւանեալ յանձն եառ։

Կ՚ընուհետև կայսրն ոչ եթող դպռիկայ գնալ յաշխարհն իւր, այլ ի 1046, զօրաժողով արարեալ բազմաւ Թի յոյժ՝ առաքեաց ի տիրել քաղաքին, զօրավար կացուցեալ նոցա զմն ներքինի Պաւակամնոս (2) անուն, որպէս Թէ ասէ մատեհոս. * Օ այր կին կամէր գնել պահապան աշխարհին հայոց, փոխանակ հզօր քաջին դպռիկայ։ Իսկ քաղաքացիք՝ որք զառաջինն ընդդէմ դարձեալ յաւնոց՝ կոտորեցին և հալածեցին, իբրև ստուգեալ ծանեան զնենգութեն նախարարացն, և զղջ դառնալ Թագաւորին իւրեանց, * Կայսն առ հասարակ (ասէ մատե.) ամենայն տունն հայոց, և արարին ամենայն քաղաքն ժողով՝ ուր էին դերեզմանք հայոց ամենայն Թագաւորաց յառաջնոցն (3), և անդ լայեն զմնտիրա նալն ազգն հայոց, լայեն և զաԹոռ Թագաւորութեն իւրեանց։ Այս ասլա հարկադրեալ եւտուն զանի ի ձեռս յունաց։

Յետ անցանելոյ տէրութեան քաղաքիս ի ձեռս յունաց, տակաւին ի շինութեան կայր, և յիւրում առաջին բարեզարդութեն, որպէս պատմեն մատեհոս և կիրակոս. զորոց զանուս եդաք ի վերոյ. այլ զառաջինն աւալ կանուԹե և զաւերումն ի վերայ հած չարաչար՝ առլտանին

(1) Ա՚յս Թիւ դնի առ մատե. որ եԹէ չէ վրիպակաւ եգեալ, պարտ է իմանալ ոչ սոսկ վասն արտաքին գրանց քաղաքին, այլ և բերդին և ապարանից արքային։

(2) Կեդրենոս կոչ. զզօրավարն՝ Նիկողայոս։

(3) Տե՛ս վառն այսր ի մէս Անի։

պարսից ալփասլան[1], եղբայրն, (կամ ըստ վարդանայ հօրեղբայրն) տուղղիլ բռնաւորին։ Որոյ կուտեալ բազմութեամբ պարսից և Թուրքաց՝ պաշարեաց զանի զաւուրս քսան և հինգ՝ ըմ կիրակոսի, և զպարիսպն ցամաքակողմանն ի վայր ընկէց բաբանաւ. բայց և այնպէս ոչ կարաց ցեալ մտանել ի քաղաքն առ ընդդիմանալոց զօրաց քաղաքացւոց, լքեալ սրտիւ մեկնիլ սկսաւ անտի։

Ապա ի նմին աւուր և իշխանքն զօրս կայսեր կացուցեալ էր ի պահպանութեան, տարապարտ երկիւղիւ թշնամեաց ըմբռնեալ մեկնեցան ի վերին և ի ներքին բերդն քաղաքին, ոչ գիտելով զլքումն, և զպատճառ մեկնելոյ թշնամեաց։ Ի փախստեան աստի իշխանաց՝ անկաւ ահ և խռովութիւն ի քաղաքացիս, ոլոց կոծ և աղաղակ լսելի լեալ ի հեռագեալ զօրս ինչ թշնամեաց, ազդ արարին առ ալփասլան, մանուկ մի ի նշանակ այնր տարեալ յարիւղատակեալ ի քաղաքէն որ կայր ի շիրմս առանց պահապանաց։ Ընդ հնչափ դժուարին թուեցաւ ալփասլանայ խորտակումն քաղաքին, մինչև ոչ գրել զայն՝ ասելով. * Ընձն նոցա մատնեաց վնասս այսօր, (և) զանառ քաղաքն ընդ ի ձեռս իմ‖[2]։

Ընդ դարձ արարեալ այն ահագին բանակաւ էմիւտ ալ ընդ ի Թուին շծգ (1064) ի տօնի տիրամօրն ի երջանիկ քաղաքի՝ որպէս դնդ ընդ այլոց և սամուէլ, իւրաքանչիւր ի նոցանէ զինեալք երեքտասնից սրովք, զերկոսին ի ձեռանն, և զմի յատամնէնն. յայն սահմանն եհաս կատաղութեան և անգթութեան նոցա, մինչև ի քահանայից զոմանս այրել ցին, և զայլս քերթեցին։ Ապա ալփասլան՝ ասէ վարդան՝ հազար այր ի քաղաքացւոց զինեալ ի փոս ինչ լուացաւ յարիւն նոցա. և որպէս պատմ շարունակօղն Թովմայի արծրունեաց, * Ընդէն բազումք ի տեսողացն՝ թէ զոր զայս դիպակիս թաւալ տալով արեանն ի գետն հասուցաներ, որ անցանէր ընդ դուռն քաղաքին‖։

Յետ այսչափ ապականութեան՝ թէպետ մնուէ ամրացն անոյ՝ չինեաց զպարիսպն և զամրութիւնս նորա, մինչ չև ասել վարդանայ՝ թէ ոչինչ պակաս քան զառաջինն շինեցաւ անի, այլ յետ այնորիկ ստէպ ստէպ ի զանազան թշնամեաց հարստահարեալ՝ ոչ կարաց յառաջին պայծա-

(1) Ա. յոպէս գրի ի գիրս մեր. իսկ ի գիրս այլ. եղպարսլան, որ նշանակէ Հզօր առիւծ։

(2) Տես ի մատթէոս ուռհայեցի, որ ընդարձակ պատմէ զայս ամենայն։

ռուԹէ իւր գառնալ։ Ի 1124 տեսեալ քաղաքացւոց՝ զի ամիրային քաղաքիս աբլղըլար ձայնեալ՝ կամէր վաՃառել զքաղաքն ամիրային կարուց ընդ 60 հազար դենարի՝ ըստ վարդանայ, եւտն զանի ի ձեռս դաւԹի վերց աբքային։

Յետ իրրեւ ամի միոյ ի վերց Հանդ առ փատլուն որդի աբլղըլարայ, որ գրեԹէ ամմի պաշարեաց զանի, և առ վով չարաչար նեղեալ՝ պայմանադրուԹիւ եմուտ ի ներքս՝ ազինչ ինասեալ բնակչաց։ Ի 1161 անդրէն էառ զորդի աբքային վերց. այլ ի 1163 հարկադրեալ ետ առ սալան պարսից աբքային, որ զամն չորս ասպատակաւ աւերէր զերկիրն։ Ուստ ի 1174 վերսին էառ զորդի։

Լայնափ յաՃախ փոփոխուԹիւն տիրուԹե ի միում դաւրու՝ զոր նշանակեցաք, և զոր այլ ևս յիշատակեն մեր պատմագիրք՝ ի վերց առ պարսիկս, և ի պարսից առ վիրս, օրըստօրէ յապականուԹիւն հասուցանէր զանի։ Լայլ չարաչար յաւեր դարձոյց չարմաղան գլխաւորն բանակի մուՀաղ ԹաԹարաց, որ ի 1239 ձեռնտուուԹիւ իշխանաց քաղաքին եմուտ ի ներքս, և կոտորած մեծ ի վերայ ածեալ՝ մերկացոյց յամենայն ընչից։

Ուստ վերջին կործանումն և աւերումն՝ յորում կայ մինչ չև ցայժմ այս քաղաք այսպէս լքեալ և ամայի, չէ յայտ Թէ երբ, և զիարդ եղև. զորմէ տես ի նոր Հայաստան ԹղԹ. 122։ Պ ազար ջահկեցին պատճառ այնմ դնէ զգետնաշարժուԹիւն պատճառեալ յանիծից յովհաննու երշնկայւոյն, յորմէ փախեան ասէ բնակիչքն ի Ձուղայ, յեղերս կասպից ծովուն, ի վան, ի սիս, ի յագ սերայ, մերձ ի յաժտերխան, ի քեֆֆ, յորոց փախուցեալքն միայն ի լեհ՝ դնէ ըստ ոմանց՝ տունս 40 հազար։

Լգէնայ։ Պ ուղաքաղաք մեծ յանի՝ որպէս երևի ի դրիցն, զոր ստորագրէ ասողիկ Ք. 9. յասելն վասն խաչիկ կաԹողիկոսին. * Լորոգեաց զտուն կաԹողիկոսարաքնին ի շիրակ գաւառի՝ ի գիւղաքաղաքին Լգենայ, յե զերս ախուրեան գետոյ. ի հանգստարանի նո անանիայի հայոց վերադիտողն. և ի նմին գիւղ շինեաց զոք կաԹողիկէ եկեղեցին վիմարգեան կոփածոյիւք, հաստահեղոյս արձանօք, գմբեԹարդ խորան երկնանման, հանդերձ և երեք եկեղեցովքն՝ նոյնաձև հրաշատեսիկ չքնաղագեղ յօրինուածովք. և զարդարեաց մեծապայծառ ծիրանաձաղիկ ոսկեԹել անգուածովք, ի զարդ ոսկւոյ և արծաԹոյ, և ամենազարդ պայծառուԹիւք չահաբորբոք լուսաւոր անօԹոց։ Լևս զծածխօս կտակս յոլովակի ստա-

ցեալ զգիրս սքեա՝ զառաքելասացս և զմարգարէաբարոզ պատգամն հանդերձ ամենայն վարդապետացն ձայնիւք ‖ ։

Ն՛արտարապետ սորա եղև արդասա՝ ըստ նորին ասողական. ՚ի ։ 11 ։ Լ՛ստանօր Թաղեցաւ և նորին ինքն խաչիկ կաթողիկոս ։ * Վ՛նի (ասե ասողիկ ՚ի ։ 31 ։) յիւրում հանգստարանի՝ ըստ հիւսիսոյ կուսէ եկեղեցւոյն Ա՛րգիշոյի՝ զոր ինքն շինեալ էր ‖ ։ Լ՛ալ վասն այսր՝ զոր ուրեք Վ՛իւղաքաղաք կոչէ, և ուրեք Վ՛իւղ, չունիմք այլուստ տեղեկութիւն ինչ ։

Լ՛րշակաւոր ։ Վ՛աղաքագեօղ երևելի ՚ի ժամանակս բագրատունեաց, որ ստէպ յիշատակի առ յովհաննու կաթողիկոսի ։ * Հ՛րամայեալ (ասե վասն սպարապետին սմբատայ՝ որ յաւուրս բուղային,) ժողով եպիսկոպոսաց լինել ՚ի քաղաքագեօղն Լ՛րազգաւորս, ձեռնադրեն ՚ի հայրապետութիւն զղաբարիայ ‖ ։ Վ՛ինի կոչեցաւ սա Շ է դակաւան, որպես վկայէ սամուէլ ՚ի Թվին ՌՃԳ. * Շ՛ինէ (ասէ) սմբատ զմեծ քաւարանն պայծառ զարդու Լ՛րշակ դաւորս [1] որ արդ Շ իրակաւանն կոչի [2] ‖ ։ Լ՛ալ այս անուն գոյր նաև յաւուրս յովհաննու կաթողիկոսի, որ զերկոսին և անուանս ՚ի գոյծ ածէ յասելն. * Հ՛ա սանէ ըստ համբաւոյն հասելոյ՝ սմպատ որդի արքային ՚ի սեպհական կալուածս Լ՛րազգաւորաց [3] Շ իրակաւան ‖ ։ Վ՛ւր զ՛րազգաւորաց անունն ՚ի կիր առնու իբր անուն սահմանի և վիճակի. իսկ զշիրակաւանն իբր քաղաքագեօղ նորին սահմանի ։ Այսպէս Շ իրակաւան գրի առ կիրակոսի. այլ առ ասողկայ ուրոյն գրի Լ՛ան շիրակայ. իսկ առ վարդանայ աղաւաղնաւոր Շ իրակաւան [4] ։ Յ՛անուանէ աստի սորա յայտ է թէ անկանի ՚ի շիրակ գաւառի, թէպէտ և յայտնի ուրեք ոչ գնեն պատմագիրք զգաւառս սորա ։

Լ՛ր սա կալուածէ ՚ա ։ սմբատայ, որպէս գնէ յովհաննէս

(1) Յ՛երկուս ձեռ՛՛ գրի յիշատ՛՛ խոսրօ, այլ ՚ի հնագոյնն գրի յիշատ՛՛խոսրօ ։

(2) ՚ի նորագոյն ձեռ՛՛ գրի Շ՛իրակաւան, այլ յերկոսին որք են հին, գրի Շ՛իրակաւան ։

(3) Ա՛յլուր առ նորին. յով. կաթ. գրի Լ՛րշակաւորս ։ * Սակ պով առեալ ընդ իւր զոստոր ա բասայ եղբօր իւրոյ, է զգաղթն Լ՛րազգաւորից ։ ։ ։ չուէ գնայ յոս ակ գաւառ ‖ ։

(4) Յ՛այսմաւ. յով. 30. այս անուն գնի իբր անուն գաւառի, կոչելով զբաբասեղ Ա՛ռ՛էպիսկոպոս յանոյ, և փանն Շ՛իրակաւայ ։ Ա՛լ վերկակաւ է եգեալ աստեն փոխանակ անուանս Շ՛իրակայ, ըստ որում ուշգագոյն և գրի ՚ի նոր ձեռագրի ինչ. Ա՛ռ՛էպիսկոպոս յանոյ, և փանն Շ՛իրակայ ։ Զի բարսեղ համարէն գաւառին Շ՛իրակայ կացուցաւ արքեպիսկոպոս, է աթոռ նորա էր յանի ։

կաթողիկոս. ուչ միայն ի վերոյգրեալ բանս իւր, այլ նաև այլուր յասելն. * Աքեայ սմպատ դարձեալ ի փախստեւ ուղեէ իւրմէ՝ գայ ի սեպհական կալուածս տէրութեան իւրոյ Այրարգաւորս։ Ասեն անդէն ապարանս՝ զոր ւիւէ նոյն յոհաննէս կաթողիկոս. * Ասէ արքայ սմպատ չուեր գնայր յարքունական ապարանս իւր ի քաղաքա- գեօղն Այրարգաւորս։ Ե ինեայ նոյն սմբատ և եկեղեցի Աբ փրկիչ անուանեալ ըստ վարդանայ, զոր ասողիկ ած. 3. կոչէ Աներափրկիչ։ * Ե ինեայ (ասէ ա. սմբատ) զԱներափրկիչ եկեղեցին Այ անին շէրակայ գմբեթաւորեալ բարձրագոյն յօրինուածով, կոփածու քաղաքորմով։

Ասէ սա յարքունի ապարանս ըստ գրելոյ յոհան- նու կաթողիկոսի, զոր առանց անուան ւիշատակէ, ասե- լով. * Ո այսու ժամանակաւ ի քաղաքագեօղն մեծ Այրարգ գաւորս եկեղեցին որ նախ յարքայէ սմպատայ հիմնա- դրեալ եղև մերձ ի Թագաւորական նորա յապարանս, բովանդակեալ շինուածք ի գլուխ ելեալ աստանօր (1), և ըստ օրինակի կարգաց ածմանոյ՝ զնորայն նաւակատիս պատուեալ բարձրացուցանէին։

Այլ եկեղեցի պարտ է համարիլ զիշատակեալն ի սամուէլէ ի վերոյգրեալ բանս իւր (անվրէպ համարեալ զգրեալն նորա). քանզի շինեալ ասէ զայն ի սքբատայ սպարապետէ՝ որ աբլաբասն կոչեցաւ, և ուչ ի սքբատայ սրբոյէ (2)։ Զայն սամուէլ ի թվին շձ. դնէ կործանեալ զեկեղեցի աներափրկչէն՝ որ (ի հնագոյն, նաև յերկուս նոր օրինակս դնէ յանդի) ասելով. * Վերա աներափրկչէն ի յանի ի մարերի ի ժե. յաւուր հինգշաբաթոջ։ Ասէ ի միջին օրինակի՝ որ և է ընտիր, չիք քառս յանի. յայր սակս ուչ կարեմք որոշել, արդեօք նոյն պարտ է համարիլ զայս ընդ աներափրկչէն եկեղեցւոյ երազգաւորաց՝ զոր ւիշէն այլք, թէ այլ եկեղեցի ի յանի քաղաքին, զորոյ ուչ գտանեմք ւիշատակութեան առ այլս։

Ձետ շինուածեց ա. սմբատայ՝ որոյ այս Այրարգաւորք համարեցաւ գլխաւոր քաղաք միւսէ ի ժամանակս ք. սմբատայ՝ որ զանի ընդարձակեաց. այսմ վկայէ վարդան յասելն, թէ Այրարգաւորք էր * Ասխագահ թագաւոր աշխարհ որ աբլաբասն կոչէր, ամն կաթուղիկոսութեն նորին յոյնն. սա շինէ գքաւարանն մեծա- նու, որ նստաւ ի 897։ պատճառ զարդու Այրարգաւորս, որ արդ Շէրակաւան կոչի։

(1) Ասյոսինքն էր ի ա. ամի աշխարհ որ աբլաբասն կոչէր, ամն կաթուղիկոսութեն նորին յոյնն. սա շինէ գքաւարանն մեծա- նու, որ նստաւ ի 897։ պատճառ զարդու Այրարգաւորս, որ արդ Շէրակաւան կոչի։

(2) Օնոյն կրկնէ և կէր. յա- սէն. * Ձետ նորա սմբատ որդի

բայն քաղրատունեաց, մինչդեռ չև էր ընդարձակ շինեալ քաղաքն սնի ։ Այս ստեփաննոս օրպելեան յոտանաւոր ողբան կաթուղիկէին վաղարշապատու՝ դնէ ՚ի կարգս արքայանիստ քաղաքացն բագրատունեաց զկնի անոյ՝ ասելով թէ արկին զաթոռ իւրեանոյ՝

* Յերազգաւոր մեծ աւանին,
նաև ՚ի կարսըն վանանդին ։

Ինչպէս և յայնմ ժամանակի թագաւորք ոչ միշտ նըստէին ՚ի միում քաղաքի, և ոչ միշտ Անդրազգաւորս, այլ աստ և անդ, որպէս տեսանեմք ՚ի պատմութիւնս ։

Ոդմանէ ։ Վեցօղ՝ յիշատակեալ ՚ի յովհաննէ կաթողիկոսէ, յասելէն վասն շահանշահ աշոտոյ. * Վնասք թագաւորն ՚ի գաւառն Շ իրակ ... և հանդիպեալ միմեանց ՚ի գեօղն Որմանի[1], մեծապատիւ զնոսա առնէ ըստ օրինի թագաւորաց ։

Նաւաց ֆոր ։ Վկուղ՝ յիշատակեալ յասողկայ ՟ք. 11։ յասելէն վասն կուրապաղատին տայոց գաւթի. * Վայ ինձանէ ՚ի Շ իրակ, ՚ի գիւղն՝ որում Նաւաց ձորն կոչեն ։

Ընդհանուր՝ Վկուղ՝ զորմէ ասողկէ ՟ք. 2։ * Վչխարք սուրբ (ասէ, այսինքն նոն թագաւոր, որ զմարտիրոսականն ընկալաւ պսակ յաւուրս յովհ՚՚. մանդակունւոյ, է) ՚ի Շ իրակ գաւառի, ՚ի գիւղն՝ որ Ընեռնաւս կոչի, յեկեղեցւոջ որ Տ՚ն թագ ասեն ։

Ոշտ ։ Ոտւի լինել յայս գաւառ՝ ՚ի քանից ստեփաննոսի օրպելեան գլ. ԺԷ. յասելէն վասն վահանայ. * Այտակեաց ՚ի պատերազմի զբուրդն ահագին զգդիհոն, ՚ի գաւառին Շ իրակայ, մերձ ՚ի գիւղն՝ որ Ոշտէ անուանի ։

Ոոռոմոսն, կամ Ոոռոմոց վանք ։ Շ լինէցաւ այս մենաստան յաւուրս աբասայ արքային ՚ի Ժ. դարուն, յորում առաւել քան զամենայն փայլէր գութ ողորմութեան։ * Ոակ ՚ի գաւառին շիրակայ (ասէ ասողկէ ՟ք. 7.) Ոոռոմոսին կոչեցեալ վանք՝ շինեցաւ ՚ի ձեռն յովհաննէսի՝ որ էր զարդարեալ յամենայն առաքինութիւնս, և առաւել յողորմածութիւնէ զարդս ... և անցաւորաց և ձանապարհորդաց հանգստարան պատրաստէր զտեղին, մինչև հանդիպել իբր յիւրեանց տան առենայն օտարաց. որ մինչև ցայսօր երևի նոյն նշան ողորմածութենէ ՚ի տանն յայնմ ։

Այնաբանք սորա էին ՚ի կրօնաւորացն հայոց, որք փա-

(1) ՚Ի կրկին օրինակս գրի Ուռմնի ։

խեան յաշխարհէն Հոռոմոց սակս հալածանաց յուսնաց, և ռոմանոս կայսեր. վասն այսորիկ կոչեցաւ Հոռոմոսին, որպէս գնեհ ասղնիկ. կամ Հոռոմոց վանք: * Որպէս թէ (ասէ վարդան) ի Հոռոմոց եկեին կազմանց ‖ : Կամ զի զերիցունս՝ Հոռոմոց երեց կոչեին, որպէս մեհենի կիրակոս, յասելն. * Եւ զի կոչեին զերիցունս՝ Հոռոմոց էրէց, անուանեցին զմի վանքն որ ի շիրակ՝ Հոռոմոց վանք, որ յարդ եւս Հոռոմոյ վանք ասի ‖ :

Իբր ի 982. ըստ գրելոյ ասողկայ էջ. 12. * Ո Հոռոմոսի վանքն այրեաց ‖ աբէղհանայ ամիրայ պարսից, զոր կոչեալ էր մուշեղայ եղբօր էջ. աշտոյ ողորմածին: Ընտ թաղեցաւ ա. սարգիս կաթողիկոս, ըստ վկայելոյ լաստիվերացոյն գլ. ը: * Վոխի յաշխարհէ աբ և արժանաւոր հայրապետն աբր սարգիս, և է գերեզմանն նորա ի Հոռոմոսի վանքն ‖ :

Գոպրեվանք: Եւ վարդանայ գրի Գոպրավանք, նոյնպէս և առ վարդանայ աշխարհագրի, որ և գնեհ յայս գաւառ. որպէս և ասղնիկ էջ. 7. յասելն՝ թէ ի նոյն ժամանակս յորում շինեցաւ վերոգրեալ մենաստանն և այլք, շինեցաւ * Եւ Գոպրեվանս ի Շ իրակ գաւառի ‖ : Յայս գաւառ գնեհ և կիրակոս: Հաստատեցին (ասէ վանն հալածեալ կրօնաւորացն ի ռոմանոս կայսերէ) * Եւ զՀոռոմոսին կոչեցեալ վանք, և զԳոպրեվանք ի շիրակ գաւառին ‖ : Ա արգան գնեհ ի գաւառին անոյ, որ է նոյն:

Ո շինուածին զոր պատմեն վերոգրեալ պատմագիրքը, պատ է հաճարիլ նորոգութեն, քանզի բազմօք յառաջ քան զհալածեալ կրօնաւորսն՝ որք եկին ի ձ. դարուն՝ առաջնորդ էր այսր վանացս բարեգ Հան որ էր ի է. դարուն. * Եւ արար (ասէ վարդ") ի ձեռն սմին բարեգ մեհանուն Հան կոչեցելոյ, որ էր առաջնորդ սբ ուխտին՝ որ Գոպրավանքն կոչի ի գաւառին Նոյ ‖ :

Եւ աստ խաչ հաչակաւոր՝ զորմէ գրէ նոյն վարդան. * ի Գոպրավանից տարան զնաչն որ յանուն սբ Ծածանն էին, որ արդ Ա արձիոյ կոչի, յայնժամ Ղոխեանց կոչիւր... և է ձեռն մեսրոպայ օրհնեալ, և կամ բարեգ մեհ Հանին. և ունի գիր հայերէն յայլ թիւն, և ծածկեալ են ոսկով ‖ : Ա քանչելեօք սորին բժշկեցաւ կին դեմոտրեայ արքային վրաց, վասն որոյ ի հայոց առեալ տարան ի վիրս:

Ա արմաշէն. կամ Ա՝արմաթաշէն, և Հաւհաճայ: Այն մենաստանք յայժմ գաւառի, ըստ վկայելոյ վարդանայ աշխար-

հագրի։ * Ը իրակ գաւառն (ասէ) ուր կան՝ որ ուխտին Յոռոմոս, և Ա՛արմաթաշէն, և Կարմիջաձոր, Դպրավանք, և Հառիճայ, և այլ բազումք ‖։ Ամուել կոչէ գառաջինն Ա՛արմաշէն՝ յիշելով և զվնասող նորա ի Թվին նլե. * Ակիզն շինուածոյ մեծանուն և վայելչաշէն զարմանակերտ և հոյակապ ուխտին Ա՛արմաշենոյ՝ ի քառասեր իշխանաց իշխանին վահրամայ ‖։ Յոր յաւելու ապա ընդարձակող սամուէլ. * Ակսեալ ի նլե. Թվին (այսինքն ի 986.) և աւարտեալ ի լոչին ‖, այսինքն ի նիկ, որ է ամ հն 994։ Դրէ վասն այսր և կիրակոս. * Յաւուրս սորա (այսինքն շահնշահ կամ սիեզեբակալ ամբաստայ) սկիզն եղև շինուածոյ հռչակաւոր ուխտին Ա՛արմաթաշէնն կոչեցեալ ի քառասեր իշխանին վահրամայ [1] ‖։

Յիշատակէ զայս մենաստան և գրիգոր մագիստրոս ի Թուղթս իւր, որպէս ի Թղթին առ եղբարս ուխտին սանահնի, և ի կրկին Թուղթս իւր որ առ սոսթենէսն հայր ուխտին Ա՛արմաշենոյ, յորոց ի միում կոչէ զնոյն մենաստան Ա՛ե ոխոր և մայրաքաղաք Ա՛արմաշենոյ։

ՎԱՆԱՆԴ։

Աբ Ոռմայ վանք: Յիշատակէ ասողիկ Ճ. 3. առանց որոշելոյ զգաւառն՝ յորում էր, քանզի գրէ. * Յայսմ ժամանակի սպայծաունայր առաքինութիբ հայր գագիկ՝ առաջնորդ ուխտին ըզ Ոռմայ՝ որ գիշատակ մնալոյ բոլոր սայն միայարեալ ի գիր՝ որ ատոմագիրն անուանի ||:

Ոբածանս: Գեօղ մերձ դուռատական գեղջ յաղուանս հայոց. որ յիշատակի ի պատմութեան գիւտի նշխարաց սբին գրիգորիսի. * Ձու արարեալ ալբային (վաչագանայ) ի դուռատականէ ... հասանէին ի գեօղ մի Ոբածանս ||: Ա՛ջ յայժ հեռի Թուխ Ա՛մարաս գեղջէ որ է յարցախ աշխարհի:

Ոբայիս: Նահապետք Ոբայիսեայ յիշատակին ի ժողովն վաչագանայ աղուանից ալբայի, եթէ չիցէ առանձին տան մանն ինչ ի բուն յաղուանս, թերևս մարթ է իմանալ Ոբցախ:

Ոբնեցանոս: Գաղաք՝ զոր Թէոփիլ յայսմաւուրքն գնէ լինել յաղբակ, այլ խորենացին Ճ. 31. ոչինչ սրոշակի գրէ, յասելն. * Այս բարդուղիմէոս առաքեալ՝ որ և կատարեցաւ առ մեզ Ա՛բեանոս (1) քաղաքի ||: Հեղինակին առաքելական վարուց որ յանուն տոմոթէոսի՝ կոչէ զսա Գօրնեցոյ ի Մեծին հայոց: Սուրբ նիկոս կոչէ Ոբնե-

(1) Օրինակ մի խոր. * Ա՛բեանոս անգղնացւոց. * Աբեբենոս ||: քոնոս ||. այլ օրէն. * Ա՛բեբեոս Ա՛լատ. * Ա՛բեանի քաղաքի|| նոս ||. խակ օրէն. վիսգոնեանց

Նօբօլիս. իսկ Նիկիետաս՝ Ալաւանօբօլիս, համաձայն խորհ-
նացւոյն որ ի պատմ. պատկերի տիրամօլն գրէ առ տա-
հակ արծրունի. * Այլ ինքն ՚ի առաքեալն եղեալ աւե-
տարանել ՚ի Հայս, և կատարեցաւ Աւգբարոս քաղաքի
՚ի Խարմ անուանեալ տեղւոջն յանուն առաքելոյն ||.
յորմէ առնու և ՚ի իսրայէլ հեղինակ յայսմաւուրս ՚ի
դեկտ. ժԹ. զի ասէ. * Աղաղեցին գնա Հուպ ՚ի քաղաքն
Աւգբարոս, որ կոչի Խարմ ||: Այս Խարմ լիշատակի և ՚ի
յեսայոց, որպէս և յառաքելէ, և գնի յաղբակ:

Աբգէնէ: Լիշատակի յուռհայեցւոյն՝ որ և կոչէ գնոյն,
Աեծ ամրոց, և Ամուր բերդ. * Տեսանէր (զօրավարն
յունաց) զամրուքին բերդին՝ հիանայր յոյժ, և ոչ կա-
րէր պատերազմել, վասն զի բարձր էր յոյժ և անառ ՚ի
Թշնամեաց ||: Աերձ գնէ գնոյն՝ Թլխուժ գաւառ, զորմէ
տես ՚ի Թլխուժ:

Աբգնէ: Լիշատակէ եղիշէ գլ. ե. Թղթ. 67. ընդ ա-
մուր տեղիս աշխարհին հայոց՝ զորս Թափէոյին նախարարքն
միաբանեալք ընդ մեծին վարդանայ ՚ի ձեռաց պարսից.
պերիոզդան, և Աբգնին և պատանս իւրեանց: Այլ օրինակ ե-
ղիշեի ունի՝ և Աբգինին, և պատանսն իւր:

Աբջ. կամ Աբջ: Լիշատակի ՚ի գլուս գնոյոջ ՚ի պատ-
մութիւ պատերազմին քրմայ: * Իսկ իշխանն Աբջայ փա-
խուցեալ.. ընդ անտառն՝ կտրեն փայտի հանդ ըստ սիրտ
նորա, և անդէն մեռաւ... և անուանեցաւ տեղին Աբ-
ջուց ձոր [1]||: Նոյնպէս և յովհան մամիկոնեան լիշէ գնշ-
խանն Աբջուց յաւուրս գայլ վահանայ և ամբատայ. որ-
պէս և ՚ի պատմ. ծիծառնեի խաչին գրի. * Իսկ իշխանն
Աբջուց կողմանն գործ շատախօս՝ որ կոչեաց զանուն
գաւառին իւրոյ Շ ատախ վասն մանկանուան իւրոյ ||:
Լիշատակի անդ և Եպիսկոպոս գաւառին Աբջուց՝ ուր
ասէ. * Իսկ վահան ետ գնհաչն ՚ի ձեռս եպիսկոպոսին Աբ-
ջուց ||: Ուր և պատմի թէ գնարդ գողանալ ետ իշխանն
Աբջուց զմանն խաչափայտին ՚ի ՚որ կարապետոյ, և տա-
րաւ եդ յերկրի արջուց իշխանին յաւանն ծիծառնեի:
Տես ՚ի ծիծառնէ:

Աբջևաւ, և Ապուտառու բերդ: Տեղիք՝ զորս յանուա-
նէ լիշատակէ ուռհայեցին ՚ի պատմիչն զպատերազմն գնշ-
պարտեայ ՚ի ժԱ. դարու. * Հասեալ նոցա ՚ի բերդն որ
կոչի Ապուտառու, ՚ի տեղին որ Աբջավէտ ասի ||: Ո՛ տե-

(1) Զտեղին Աբջուց ձոր տես՚ի գաւառն տարօնոյ:

դի պատերազմիս լսատիվ. ժէ. դնէ լինել 'ի ձեռ դաշտին Բաբելոնոյ, առանց յիշելոյ յանուանէ զնշանակեալ տեղիսդ։

Աբրահամեան դաշտ։ Յիշատակի բուզանդ. յասելն. Ե. 41. * Եւ հառ զկողմն մի զերկիրն հայոց, և բանակեալ էր Աբրահամեան դաշտին ||։

Աբէլ գիւղ։ Յիշատակի 'ի պատմութ. օրբել. գլ. 16. Թղթ. 51. * Այս ոճր սարգիսն (հպիսկոպոս նորա վանից)..'ի գիւղն Աբելոյ 'ի վերոյ գետոյն կանգնեաց զկամուրջս զարմանալիս տաշածոյ վիմաք, յոյժ բարձր ընդարձակ, և լայն հիացուցիչ տեսողաց բազում ճախիւք և անչափ աշխատութիւ՝ հրամանաւ.. տարաւէ իշխա նին ||։ Օձայս գիւղ առաքել պատմագիր Թղթ. 167. դնէ լինել 'ի վայոց ձոր։ * Աբէլ ոմն քրիստոնեայ՝ անուն գրիգոր որ էր նախկին նա 'ի վայոց ձորոյ՝ զոր Աղեկա ձոր ասեն, 'ի գեղջէն Աբերայու ||։ Յայս գիւղ էր դարպաս տարաւէճ իշխանին օրբելեանց, որպէս գրի 'ի պատմութ. օրբել. գլ. Թ. Թղթ. 52. * Տարաւէճն... լցեալ զիւէտ կենաց իւրոց՝ վախճանի յորում (այսինքն յիւրում) դարպասին Աբերայ ||։

Աբեղեալ։ Յիշատակի յեղիշէ է. Թղթ. 67. ընդ սմանս տեղիս աշխարհին հայոց, զորս առին հայք 'ի ձեռաց պարսից յաւուրս վարդանանց։

Աբագնայր։ Յիշէ կիրակոս 'ի պատմութ. սմբատայ մագիստրոսի. * Ե լինեաց և սմպատ մագիստրոսն զփախ ուստես վանքն որ Աբագնայրն կոչի ||։

Աբակոբակերպ։ Այ այսր տեղւոյ այսպէս ինչ ունիմք առ խորենացւոյն. է. 57. ուր ասի. * Չանդիսի արտաշիսի 'ի մարս (1) 'ի Աոհոնդ անուանեալ տեղւոջ. պատմ (2) և հիւանդանալ նմա 'ի մարընդի 'ի Աբակոբակերտ աւանի ||։ Աբնուն սորա հայկական վերջաւորութ՝ յուցանէ լինել 'ի հայս։ Աբ միւսմ ձեռագրի փոխանակ բառիս 'ի Աարքնդէ՝ գնի 'ի Աարանդէ, որ է 'ի վասպուրականն։ Բայց Թոմսն արծր. 'ի վարս նորին է. արտաշիսի զայս աւան գնէ 'ի մարս՝ յասելն. * Այդ գտանէ վախճան նեալ զթագաւորն արտաշէս 'ի Աարինդ, և մեռանի անդ ձամբ ընդ այլ շղամարարան յաշխարհին մարաց 'ի Բակուրակերտ աւանի ||։ Ամերևս յայնմ ժամանակի այն

(1) Օրինակ մի և տպ. 'ի մարս։ դրեալք ուղին այսպէս. Պոփմ և
(2) Երկու ձեռագիրք և տպա հիւանդանալ։

հողմանք գոլով ընդ տերութիւն մարաց՝ կոչին աշխարհ մարաց ։

Խաբէ՛ութ ։ Տեղի կամ գաւառ յիշատակեալ՝ի պատմ. օրբել. գլ. է. (տպ. Թղթ. 24. 25. և 28.) ուր և գրի երկիցս Խաբէ՛ութ, և զնի՝ի սիւնիս, կամ սահմանք նակից սիւնեաց ։ * Խաղում Քանիւ Թափեցին (զաքարէ և իւանէ եղբարքն) զաշխարհն՝ի պարսից, և առին յատուկ նոյ մինչև ցնեղքին բասէն, և՝ի Խարկուշատայ մինչ՝ի մծնկերտ ։ և ապա դրի. * Ըմբին և զսիւնիս, զորոտն, զերորոտայն, զզղէն, և զԽարգուշատ ։ Տես՝ի նոր հայաստան զՊարկուշատ Թղթ. 271. 272 ։

Խաբէ՛ջեղ ։ կամ (ըստ այլ օրինի. Խաբէ՛ջեղ ։) Յիշատակեալ եղիշ. ՚ր. Թղթ. 67. ըստ ամենայն տեղիս աշխարհին հայոց՝ զորս Թափեցին՝ի ձեռաց պարսից վարդանանաց ։

Խաբ ։ Տես Աբեղեան ։

Խաւսան, կամ Խաւս ։ Պիւղ՝ հայրենիք սիրոյն կաթուղիկոսի որ զնի ը. տրդատայ յաջորդեաց, զորմէ յովհաննէս կաթ. * Օ՛նի սորուն (այսինքն տրդատայ) սիրն՝ի գեղջէ Խաւսանից ։ Ամուսնել անեցի, և կիրա կոս պատմիչ զսիրոնէ գրէն լինել՝է Խափսանէ ։ Նոյն ինքն կիրակոս զտրդատ նախորդն սիրոյն գրէ լինել՝է Պասանա տրէց (յայլ օրինի. ՚է Պասանատրէց) և՝ի Խոսրովից ։ Իսկ՝ի գաւազանագրքի ինչ կաթուղիկոսաց գրի. * Տէր սիրոն յաբգածոնանէ՝ի գեղջէ Խղնայից ։ Ա՛յլ զգրուածէ Խաւսանից կամ Խաւճնից՝ի յովհաննէ կաթող. յաստղկայ, և՝ի վարդանեայ, հաստատագոյն համարեալ մեր՝ յանծաւ նօթս մեծին հայոց՝ի գէպ համարեցաք կարգել զնոսին ։

Խաչաւեր ։ Ռուզ. ՚ր. 13. * Ա՛շրակ (ասէ) երթայր ընդ առաջ նորա (այսինքն մեծին Ներսէսի) մինչև՝ի կողմանս Խաբասերոյն ։

Ներդակոր ։ Տեղի զոր յիշէ կիրակոս՝ի գրերն վասն յոհաննու ուրուայն կաթուղիկոսի աղաւանիից՝ի Թ. դարն. * Այս փոխեաց զկաթուղիկոսարանն՝ի Ներդակոր իբրեանց հովոցայ տեղի, յորժամ հանաւ՝ի պարտաւայ ։

Ղզէն ։ Տեղի յիշատակեալ՝ի տպագրեալ պատմութիւն օրբել. գլ. է. Թղթ. 25. * Ըմբին (զաքարէ և իւանէ իշխանքն) զսիւնիս, զորոտն, զերորոտայն, զՂզէն, և ըզբարգուշատ ։ և՝ի գլ. է. Թղթ. 39. * Խառ և Թափեաց զերկիրն որոտնայ բուլանդակ՝ մինչ՝ի սահմանն բզնդոնայ, և Խղենոյ, յորում և կայր ընդ առեր աթոռն սիւնեաց տաճև ։

Ռխբրախան : Ա՛մրոց՝ զոր յոհ. կաթ. կոչէ երբեմն Ա՛մրոյիկ՝ յասելն . * Ի վերայ Ա՛մրոցկանն Ռխբրախանու հասեալ ‖ : Այս թէ , * և զայլ բնակիչս Ա՛մրոցկանն սրա կոխ արարեալ ‖ : Յայտ է թէ վասն փոքրկութեանն ասելոյն : Ա՛յս Ռխբրախան ամրոց՝ զորոյ զգաւառն ոչ նշանակ կէ յովհաննէս կաթ. և ոչ այլք , սեպհական կալուած էր կաթուղիկոսին , որպէս ցուցանէ նա ինքն ի պատմել անգ զաւառումն ամրոցին ի նարայ հաղարացի ոսպիկանէն. * Ելին (ասէ) ամենք և հեթանոսք ի բնակչաց տեղւոյն հողագործ մշակութեանն պարապեալ , և հարկս մեզ հարկանէին ‖ :

Ռողն : Ա՛մրոց երևելի , զոր պրոկոպիոս գիրք ա՛ . պատերազմ պարսից գլ. 15 . գնէ ի պարսկահայս . * Հռոմայեցիք առնն զտեղիս պարսկական տերութենէն ի պարսկահայս՝ զՌողն ամրոց և զՎարանկան ‖ ևն : Պարսկահայք հայք ասելով իմանայ զսահմանս հայոց որ էր ընդ տերութեամբ պարսից , քանզի ի նոյն գլ. գնէ զսա մերձ յոյժ ի թէոդոսուպոլիս :

Վաղ Բերդ , կամ Վաճայ Բերդ : Ա՛ղուիկ ՟ք . 30 . երևի գնել ի սահմանին դուդարայ , կամ արցախոյ . քանզի յետ պատմելոյ վասն դաւթի որդւոյ գուրգենայ՝ թէ հառ * Ո՛ղջմանս տաղտկեալ և վրայ դարձեալ , զսահմանակեայ մեծ քաղաքանիստ դղեակն . . . տիրէ (և) քաղաքին դմանեաց , հնազանդեցուցանէ և զամիրային տիխեաց՝ քաղաքաւն իւրով ‖ : Ա՛ւ յետ պատմելոյ թէ զիարդ նկուն արար պատերազմաւ զամիրային գանձակայ , ի վերայ բերէ . * Յայնժամ մարզպանն դեմաւոր՝ որ էր իշխան ի Վաղ բերդի ի սահմանն յայնոսիկ ‖ , ևն : Ա՛ւ ի գլ. 45 . ի պատմելն զապստամբութենէ դաւթի եղբօրորդւոյ ՟ա. գագկայ ալբայի բագրատունւոյ՝ գրէ . * Յաստուածել գագկայ ալբայի գնաց զօրօք ի տաշիր՝ շրջան առեալ ընդ շահնուդէ , և ընդ վրայ դարձ քանդեալ աւերեաց զամենայն . . . և ընդ Վաղ բերդ անցանելով էլ նա ի գաւառն ազատաւ ‖ : Յայս դիրս ցուցանեն և բանք վարդանայ և կիրակոսի՝ որք ստէպ յիշատակին առ ժամանակօք ասպատակութենէ թաթարաց :

Ի ժ՟ք . դարու էառ զնոյն դաւիթ արքայ վրաց , ըստ գրելոյ վարդանայ . * Ընդարձակեալ դաւիթ զսահմանս իւր , զՎաղ , զտէրունականն , զտաւուշ , զկայեան , և զկայծոն , զլաւռէ , զթաշիր , զմանկանաբերդ , և զսոլոր իշխանութիւնն հայոց կիւրիկէի և աբասայ ‖ : Ա՛ւ այլուր . * Վայ ընդ կողմն դաշտավայրացն Վաղայ ի տփխիս ‖ :

Ա՛ռնն զնայն և՛ ի ժԵ. դարու զաքարէ և խանէ եղբարքն Հայկազունք, որպէս պատմէ կիրակոս։

Ի նմին դարու յիշէ վարդան և զԱշտան Վատայ, և զոր խայն որ յանուն սըրդսի. * Ի ցաւ Վաշտն դագայ անթիւ և անհամար հեծելօք յամենայն ազգաց յանօրինաց հաւաքեալ, որ կամէցան այրել զոր խայն որ յանուն զօրավարին սարդսի ։ Օ նոյն կամեցաւ առնել և էլտկուզ պարսից ըստ գրելոյ վարդանայ. * Գայ ի մրեան, և այրէ անդ զամրոցն ... և գառնայ ի դաշտն Վատայ, և այրել հրամայէ զնաւն հռչակաւոր. վասն որոյ ի բարկութենէն ետն պատժեալ լինելին ։

Ա՛յլ ընդարձակ եւս գրէ ի թուէն ղպատառս և զբերդս վահրամայ իշխանին խաչենոյ և շամքօրայ, յիշատակելով միանգամայն և զշինող բերդին գագայ։ * Ել զՎատ անուանի բերդ և գաւառ ի գագկայ Թագաւորէ շինեալ, որ կայր ըզ հռչակաւոր ուխտն յերևանի աշխարհի (յայլ օրին. յերևանի շինեալ) խաչ և եկեղեցի կազմեալ և օրհնեալ ի ՚ջին մեսրոպայ վարդապետէն և Թարգմանչէն հայոց՝ որ կայ ի գլուխս Վատայ, և հայի ի դաշտն լայնանիստ և երկայնատարած ։ Օ ասյն զայս ակնարկէ և վերջին տուն շարականի սըրգսի. * Խա՛ չայրարար ըզ դիտապետ նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի, առաւել պայծառ ի գլուխս Վատայ. ի գա գաթան տեղւոյն (1) օրհնեալ սըրբ մեսրովպայ ։ Յայս բերդ վերծաւ վանական վարդապետ գնեալ արծաթով քնակչաց ի ձեռաց Թաթարաց, զորմէ գրէն վարդան և կիրակոս։

Վայեձո՛ձ։ Տեղի՝ որոյ երեցն յիշատակի ի ժողովն տղուանից դումարելոյ հրամանաւ վաչագանայ արքայի, ուր և դնի ի սեռական հոլով՝ Վայեձոձոյ։ Լդաք առ առնօր, իբր զի մարթ է լինել Թէ այս տեղիք էին յայնմ սահմանի հայաստանեայց՝ որոց տիրէին տղուանք ։

Վեռակէդ։ Ա՛նք՝ զոր յիշատակէ կիրակոս ի գլ. ԺԶ

(1) Ջվերոյհշեալ բանս վարդանայ նոյն ևս շինողն բերդին՝ եթէ չեմք հիմնեալ ի հատատաուն ինչ վայրի, մարթ է համարիլ անհիմն ինչ կարծեաք ասացեալ. քանզի ի ժամանակս ե. գագկայ Թագաւորի յասողկայ ժամանակակից յիշատակի բերդ յայդ անուն. և կամ Թէ բանք վարդանայ նորոգեալ ինչ ի գագկայ արքայէ եղեալ ցուցանեն. ապա Թէ ոչ՝ առաւել հաւաստի կարծիք ի վեր եդանէ ի բանից ասոի շարակնոյն Գագ կոչիլ տեղւոյն՝ սակս գրիցն Գոգաթնաձև բարձրութեան ։

'ի դրեալն վասն աղաւթիանայ նոն մածնաբերդի (որ էր 'ի սերնդոց կիւրիկեի բագրատունւոց, նոն լօռէ քաղաքի.) * [ձ]ոկ կրօնաւորեցաւ 'ի վանքն որ կոչի Գետաւիկեաց ||։ Ա.յլ թէ նոյն իսկ ընդ դեռևայ վանիցն որ և կիսկ էր գետոյն աղատւոյ, կամ թէ այլ 'ի նմանէ՝ չունիմք ինչ առել հաւաստի. միայն յուշ առնեմք՝ եթէ սահմանն այսր վանացս ոչ հեռի թուի 'ի սահմանայ դետևայ վանիցս։

Գետաւայ, կամ Գետաւեայ դաշտ։ Յիշատակէ Թովմա արծր. կիրկիրոդ վարս գագկայ, յասելն. * Օ հետ մտեալ սակաւ ղօրօք հասանէ նոցա 'ի դաշտին Գետաւայ ||։ Ա.յլ 'ի պատմուԹէ հայկունեայց խաչին յաւելուածով լինի յիշատակի նոյն դաշտ. * Նկեալ (հերակլ կայսր) բնակեցաւ 'ի դաշտին Գետատայ [1] մերձ 'ի քաղաքն Սանատրուկ շաւարշայ ||։ Յորմէ մարթի և համարիլ զայս դաշտ լինել յարտազ գաւառի, կամ 'ի Շաւարշան գաւառի, և կամ զնոյն զայն դաշտ կոչեցեալ Սանատրուկ, տես յարտազ գաւառ։

Գեղեկաս։ Տես Նրեկաս։

Գէս, կամ Գէս։ Գիւղ՝ որ յիշատակի յայսմաւուրս ՚ի խորայելի սեպտ. իԹ. և յայլ յայսմաւուրս սեպտ. իԸ. 'ի վարս եղիշէի առաքելոյ աղաւանից. * Նկին (եղիշէ) յուսի գաւառ, և անտի գնաց 'ի գետնէն որ կոչի Գէս, շինեաց եկեղեցի ||։ Ա.ՀԹրձ յայս տեղի ասի անդաստնօր լինել և Գաշտաւին՝ ուր և նահատակեցաւն. * Նէ նա 'ի դաշտաւին Օ արփոնի (յայլ օրին. յայսմաւ. գրի Օ արդոնի. իսկ 'ի տպ. Օ արդոնի) ||։ Յիշատակէ զԳէս և հիւրակաս 'ի նմին պատմ. եղիշէի առաքելոյ 'ի գլ. իԸ։

Գիլոյ վանք։ [ձ]ուի լինել 'ի կողմանս աղաւանից, զորմէ վարդան 'ի պատմուԹեան. * Նէ եկեալ խոսրովէ (անն) հրամանաւ վարազգադատայ աղաւանից իշխանի, և խընդրեալ զնոսա լուսաւորվին՝ տարեալ եդ 'ի Գիլոյ վանս կոչեցեալ տեղւոջ ||։

Գոռոզ։ Տեղի՝ ուր վկայեաց մուկաՀել վանանդացի առ ժամանակաւք բուհայի կամ բուղայի 'ի իԹ. դարու։ * Նդին (ասէ Թովմ. արծր. էջ. 10.) 'ի վերայ 'ի տեղւոջ վկայուԹեան նորա Գոռոզու մերձ 'ի լեառն Վրէն՝ ուր էր բանակ այլազգեացն ||[2]։ Տես և զԳոռոզ։

(1) Օրինակք ինչ դրեն Գետաւ փէայ։

(2) Ի՛ լեառն Գոռոզ 'ի կողմանս տարօնոյ. այլ Թէ նոյն իսկ ընդ յիշատակեալն 'ի Թովմայէ՝ չունիմք ինչ առել հաւաստի։

Պատրեա սէ Նորս. Տես Պալատեան։

Պորոզ։ Յիշատակի առ վարդանայ՝ որ վասն փառաց ամիրային գանձակայ գրէ. * Օ օրացեալ տիրէ խաչէնայ, և Պորոզայ, և սևորդեացն ։ Սևորդիք կոչին Իւ տեացիք։ Յիշատակի առ Նորին վարդանայ և Խաչն Պոռ բոզայ կոչեցեալ. զոմէ տես ի Օտառաչոզ։

Պոռաքնէ գէաղ։ Յիշատակի ի պատմ. օրբէլ. գլ. Է. Թղթ. 36. ուր ասի. * Լսվև սմն (այսինքն գաւթի ու բուսին փոքրիկ Թագաւորի սիւնեաց) անցանել ընդ գլուխ գեղջն՝ որ Պոռաւենի կոչի. ազգ լինի և տեղջն որ Թանկրկեղաւ կոչեին .. և էր սա խազատացն սմպատայ ։ (կոչեցեալ օրբէլեան)։

Պոտէ վանդ։ Ա.յսպէս գրի առ կիրակոսի գլ. կէ. * Լ.ևն և Պադի վանից եպիսկոպոսն ևոր գրիգորիս, և վարդապետն վարդան .. բազում քահանայիւք ի գիւղն այն, ի սահմանս գիւղաքաղքենոյ ծովուն ի կողմն խաչէնոյ՝ հուպ ի բերդն Հանդաբերդ, ուր ջերմուկն է ծար անուն .. քանզի նոցա վիճակին էր ։ Լ.րևի ի բանից աստի կիրակոսի՝ Թէ այս մենաստան և եպիսկոպոսարան էր ի ծայրս սահմանաց սիւնեաց, և կամ արցախոյ։

Պոծթոնդ։ Տեղի՝ որոյ գաւառն Թէպէտ և անծանօթ, այլ գրիչս և զսահման տեղւոյն ստորագրէ խորենացին ու. 30. կամ ըստ ասլ. 29. * Օ բազում ի սերմանել ածդահակայ աղբիւրունս հանդերձ պատանեկօք, և այլ բազում գերեօք՝ որչափ Թէ աւելի քան զիւր մի՛ բնակեցուցանել յարևելեայ ուսոց մեծի լերինն (մասեաց), մինչև ի սահմանս գողթանն՝ որ էն տարմբատ, ասկի ողայ, Պաժգոյնք (ի տպ. Պժգոյնք), և որ՝ այլք առ եղերք գետոյն գաստակերտք ... մինչև հանդիպ ամրոցին նախ ջաւանու ։

Պոռին. Տես Պարան գաղ։

Պարձոճ։ Պէօղ՝ որ Թուխ լինել յաղուանս հայոց, և յիշատակի ի պատմ. գիւտի նշխարաց սրբին գրիգորիսի առ վաչագանաւ ի Ղ. դարու. * Ռևերեալ էր (գնչխարս ինչ սրբ լուսաւորչին) մնտԹիէի երիցու աշակերտի յոհան նու հայոց հայրապետի մանդակունւոյ, և էր ի գեօղն Պարահոճ ։ Լ.ր ի ստորև. * Ռնդ այն աւուրս առաքեր (վաչագան արքայ) զմնտԹիէ Պարահոճայ երէցն այլ և պաշտօնեիւք ի Սոհատ ։ Ա.յս մնտԹիէոս յիշատակի և ի կանոնիսս ի ժողովն վաչագանայ, ուր յորինակս լինէ գրի՝ * Պարահաճու ։

Ղարան դաշտ ։ Յիշատակի այս ՚ի յաւելուածն պատմ. վարդանայ՝ որ Թուի լինել նորին իսկ վարդանայ. * Ղարաձաւ (ասէ) հովտաւան յիջեանս ՚ի ձմերոցս ՚ի գաշտն մանազանայ, և ՚ի կայս ամարան ՚ի Ղառնին գաւառ կոչեցեալն, կամ ըստ այլոց ՚ի Ղարան դաշտ, զի այլք և զերկուք քարանց կան անդ շրջանակի առ լերամբքն, զոր սիրեաց և շինեաց անդ շինուածս ըստ սրտի իւրում. և խորհեցաւ շինել քաղաք՝ յորմէ պատճառէ տառապեցաւ երկիր մարդ և անասուն, փայտս ծանուցանս ՚ի հեռաստանէ բերելով ։ Ա.ԱԼ ԹԷ ՚ի ընկէ սահմանն հայոստան նեայց լցեն այս տեղիք՝ եթէ արտաքոյ, ոչինչ հաւատոյ աստանօր ունիմք գրել ։

Ղամանեայ փաղաք, կամ Ղամանիք, և կամ Ղոմանիք ։ Վաղաղաք ՚ի սահմանս տիխեաց և շամշուլտեայ՝ որք են ՚ի գաւառս. յիշատակի ուրեք ուրեք ՚ի գիրս, որպէս առ ա սոզկայ Ջ. 30. * Ղաւիթ (գուրգենեան)... ունի զկողմանս տաշրայ և վրաց դաշտի, զշամշուլտեայ մեծ քաղաքանիստ գեաղն նիստ արքունական պատրաստեալ ՚ի քեան՝ արագապէս տիրէ քաղաքին Ղամանեաց. հնազանդեցուցանէ և զամիրայն տիխեայ քաղաքաւն իւրով ։ Նոյնպէս և կիրակոս գԼ. ՚ն. գրէ վասն Թամթարայ, Թէ զկնի առնելոյ և աւերելոյ զլօռէ քաղաքն, նոյնպէս առ նէին * Նա ընդ այլ քաղաքս, և ընդ Ղումանիս, և (ընդ) շամշուլտէ, և ընդ մայրաքաղաքն տիխիս ։ Ետ վարդան յիշատակ գնոյն՝ կոչելով Ներդ. * Ետն երկոքեան (այսինքն իւանէ, և հայր նորա ապուլեթ) արջեւ լեալք ՚ի Ներդն Ղամանիս ։

Ի բանից առաւ հեղինակաց ըստ բաւականին մնալի և խնաստասիրել զդիրս և զսահմանն քաղաքիս. այլ ՚ի տպագրեալ պատմուԹեան օրբելեան. գլ. Ե. ԹղԹ. 17. ՚ի գրելն վասն ուրուն իւանէի օրբելեանց՝ Թէ * Ընտու.. և զՂամանիս ։, յաւելեալ ՚ի փակագծիս յումեքնէ ՚ի գրչաց կամ ՚ի տպագրողէն. * (Որ և կոչի Ղումանիս. և էր քաղաք ինչ մեծին հայոց՝ յաշխարհին գուգարաց-ոց, որ այժմ ասի Շ աքի) ։

Ղուղ գԼ՚ն ։ Յիշատակի յովհաննէս կաԹ. և երեւի դնել գնոյն մերձ յարագածոտն. քանզի յետ գրելոյ՝ Թէ * Ա.ըքայլ (ամիրասայ) զԹիկունս յամուր վայրս տուեալ ։ Նա Թէ՝ բազմաԹիւն զօրաց * Ա.կեալք ՚ի կոչունս սրքայլ.. ժողովէին ՚ի գեղն վճան՝ որ ՚ի տաղտուս ապաւայծ լերին ։ Ա.պա գրէ վասն ասիչին ոստիկանին. * Նա

ինքն խաղայ գնայ (՚ի կողմանէն դիմայ) ՚ի վերայ աբ քային սմբատայ՝ մուտ առ նա կալեալ իբրև բանակետղ ՚ի գեօղն Վողը ||։

Վռոտական։ Վեօղ սեփհական աբքային աղուանից. յիշատակի ՚ի պատմ. գիւտի նշխարաց սրբոյն գրիգորիսի. * Ընդ հասարակ հասանէին փութապէս ՚ի սեպհական գեօղն աբքունի Վռոտական ||։ և դարձեալ. * Վռայինն հասանէին (դարձեալք յամարաս գեղջէ) ՚ի սեպհական գեօղն Վռոտական, և անդ հանգուցանէն (գնչխարս սրբոյն).. մեծաւ զգուշութիւ՚ ՚ի ձը և յամնուական սենեկի՝ մինչև կատարեսցի հիմնարկութիւն մատրանն ՚ի Վռոտականն գեօղ յանուն պանդալէոնի ||։ Օգտառ առեղծայս թէպէտ և ոչ որոշակի՝ ՚ի պատմութիւ՚ անտի իմաստասիրեմք լինել յուտի գաւառի, որ և յանուանէ յիշատակի ՚ի պատմութիւ՚ անդ։

Վրթանականակերտ։ Յիշատակ խորենացւոյն ՚ը. 88. զոր և կոչէ մեծ դաստակերտ՝ յասելն. * Յայսմ ժամու և աղգայնն նոցա կամեալ մկրտի իբրայելն հանդերձ ՚ի ձեռն մեծին գրիգորի, արքայի ընդունելով ՚ի ջրոյն՝ տայ նմա ժառանգութիւ՚ զմեծ դաստակերտն արտաշիսի՝ որ այժմ ասի Վրթանականակերտ [1], և զգաւառն շիրակ ||։ Ընտի էր և յովհաննէս ՚ը. կաթ. պատմաբանն, որ ՚ի գաւազնապրի կաթուղիկոսաց գրի լինել * Հայրենեաք՚ ՚ի մեծ դաստակերտէն Վրթանականակերտէ ||։

Վրթոց աշխարհ։ Օգայս անուն յիշատակէ մատթէոս ՚ը. յասելն վասն աշոտոց եղբօր յովհաննու արքային բագրատունւոց. * Հայրապետն պետրոս և իշխանքն ելին առ աշոտ, և մեծաւ երդմամբ նստուցին զաշոտ Վրթոց աշխարհին թագաւոր ամենայն տանն հայոց, և յովհաննէս նստցի թագաւոր ՚ի քաղաքն անի ||։ Կոստանդիոս և վարդան. * Վտայ կրտսերն աշոտ առ կայսրն վասիլ, և առեալ ՚ի նմանէ զօր՝ գայ և հնազանդէ զամհնեսեան, և նստի թագաւոր Վրթոց աշխարհին ||։ Սովին անուամբ թերևս կամին սոքա իմանալ զգաւառսն որ արտաքոյ էին սահմանացն շիրակայ՝ յոր թագաւորէրն յովհաննէս. քանզի և լաստիվերտցին գլ. ՚ը. գրէ. * Սոքա ընդ միմեանս ան կեալք հակառակութիւ՚ վասն բաժնից երկրին, կարօտա

(1) ՚Ի տպ. խոր. գրի. Դուռ հռոմկերդն. ուր՚ի տպ. գրի. Վրթռհռոմկերդ։ Աւ էնչէի ՚ը. տպ. խռոմկերդն։ Յիշէ ընդ ձմերոցս արքունի՝ ուր կայեանք զօրացն էին։ Թղթ. 78. գրի ըստ ձեռ. Վրթռ.

յան իրաւանց և դատաստանի. որոց հակեալ Թագաւորն ափխազաց գերդ՝ ի խաղաղութեն համազեաց զնոսա։ Այս տայ բաժին երկանուանն ամբատայ զամուրն անի, և որ շուրջ զնովաւ գաւառք՝ վանն անդրանկութենն. իսկ աշտ տայ զնեբբեն կողմն՝ որ հայր ի վերայ պարսից և վրաց ||։

Այրաֆան։ Յիշատակի եղիշէ էջ. 78. ընդ ձմեռոյս արքունի ուր կայեանք զօրացն էին, զոր աւերեաց ուխտանէնդն վասակ առ վարդանամբք։ * Աւերեալ զաղաղամ տեղիս հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի որ կայեանք զօրացն էին, զդաւնին և զԱրտամանս (1) զդրսհանակերան ||։

Այրանգանի։ Կաւոյ փոքրիկ՝ զոր յիշատակէ Թովմ. արծր. էջ. 13. առանց յիշելոյ զդաւառն. որ Թերևս էր ի վասպուրական աշխարհի։ * Այս երթեալ հասանէ (գուրգէն իշխան արծրունի) ի գեօղակ մի Այրանգանի անուն, առ մնալոն մի՝ որ էր երկոց վանիցն ||։

Այրեվան։ Կիսոյ յիշատակեալ ի Թովմ. մեծոփ։ * Այս ի գեղն Այրիշատ (2) զձեռնաւորն միրուիչ անուն ը. մարդով ընտանեօք տան իւրոյ (իշխանն բերդին ամուր) ի հուրն այրեաց ||։ Այրևի դնել ի կողմանս արձիշու և արծկեփ։

Այրեայնորդք։ Յիշատակի առ եղիշէի էջ. Թղթ. 67. ը ամենը տեղիս աշխարհին հայոց զորս Թափեցին ի պարսից նախարարքն հայոց միաբանեալք ընդ վարդանայ։

Այօլնաղբէաբ գեաղ։ Յիշատակի առ միխիթարայ սպասբանցւոյ վարդապետ որն հայրապետ անուն յԱօլնաղբէաբ գեղջէ, ի ժէ, գարուն ի սկզբան անդ ծագման ունի։ Թօռաց։

Աովմայ գաւառ։ Յիշատակի ի մատենագրսն ուռհայեցւոյ, որ և մերձ գնէ զնոյն առ ամրոցն արկինի։ * Ուրկն զմեծ ամրոցն որ կոչի Աղբիւր, որ էր մերձ ի գաւառն Աովմայ ||։ Այրևի դնել զարկնի և զայս գաւառ կամ ի սահմանս գաւառին պաղնոյ, և կամ մերձ նմին։ Յիշէ նոյն մատթ. և ի Թուին շժգ. զԱերդն Աովմայ, յասելն վասն իշխանին սլար խորասանայ. * Վասայր ի վերայ բերդ դին Աովմայ, և մեծաւ պատերազմաւ ի նեզ արկեալ զգաղաղամ աւուրս, և ոչ կարաց առնուլ. և յարուցեալ բազում զօրօք գայր յերկիրն ուռհայոց, և հասանէր ի

(1) Ասլ օրին. եղիշ. ունի վերամանան. ապ. վերմայէ։ (2) Ասլ օրին. գրէ Եռշատ. միւս այլ օրին. Գեղիշատ։

քերդն՝ որ կոչեր Աւարայր, այն է Աւերակ։ Մերձ նոյն բերդ է՝ զոր այլոք Մեհեռուկ կոչէ մեռեալ. ի Թուին չԺԵ, ի գրելն վասն գօհչիկ պարսիկ ամիրային, ելեալ * Հասանէր .. ի վերայ գաւառին Մոկաց .. և մեծաւ պատերազմաւ էառ զբերդն որ կոչի Մոկաթուխ, և անդ ողջոյն զամենեսեան սրով կատարեցին ։

Մոկաց։ Տեղի ուր բնակեին Թոնդրակեցի աղանդաւորք ։ Յիշատակէ գրիգոր մագիստրոս ի Թուղթն ք. առ նոյն աղանդաւորս։ * Ասայց դուք յորում այժմ բնակիդդ՝ եթէ սատակաբանեսցի ոք ուղղակի, Մոսկալդ ցրուեալ անուանի, կամ Մոսկացեալ յանդամոց ։ Այս գլխոյս կիշեն կոչէ Մոսկալեցիք ի ս. Թղթ. առ կաթուղիկոսն աստուծոյ ։ * Իսկ Մոսկալեցիդդ հրաժարեն՝ եթէ մեք Թլփատեալ ած ոչ խոստովանիմք ։

Մոքին վանք։ Յիշէ ասող. գ. 17. առանց յիշատակելոյ զգաւառն ։ * Ասայր Թագաւորին աբասայ ... զվարս կրօնաւորութեանն յանձն առեալ՝ երթեալ բնակէ ի տեղին՝ որ Մոքին վանք անուանի. զի էն եկեղեցիք փորածոյ ի սպիտակ քարի ընդդէմ Հարաւոյ ։ Մոքին է նոյն՝ որ ի բաւէն տեսանի մինչև յայժմ։

Մաշտոց։ Հայրենիք արիստակիսի վարդապետի, յորոյ ի խորագրի պատմագրութեանն արձանագրեալ կայ. * Պատմագիրքդ արիստակիսի վարդապետի լսատիվերտացւոյ, վասն անցիցն անցելոց ի յայլասեռ ազգաց որք շուրջ զմեզ էն, անցք ընդ աշխարհս հայոց ։ ի կամելն գուշակել զգաւառ տեղւոյս, յաչն արկանելով ի նորին իսկ պատմագրին բանս, գտանեմք զվարչն գաւառ բարձր հայոց. քանզի տէպ զկոչին կարնոյ երևելեացանէ իւր հայրենիս, որպէս և զքաղաքն Կարնոյ ի նմին գաւառի՝ բազում անգամ կոչէ Վաղարշ ։

Մոզաստանայ դաշտ։ Տեղի մեծի պատերազմի հայոց ընդ պարսից առ ք. վարդանաւ մամիկոնէից ի գ. դարու. յիշատակի ի յովհ. կաթող. * Ի ժամանակի սատ խոսրով արքայ պարսից զօր բազում դրժմարեաւ առաքէ հրոսակս վարդանայ. և լինի պատերազմ սաստիկ ի դաշտին Մոզաստանայ [1] ։

Մոզաստոյր, կամ ըստ այլ օրինակի՝ Մոզաոյդ։ Յիշատակէ Թովմ. արծր. ք. 2։ * Վրէ (քրիստափոր կաթուղիկոս) և ի կողմանս դերջանու և Մոզաստաձորոյ բնա-

(1) Ընդ վարդանայ ի հրկին հնագոյն օրինակս գրի Մոզաստոյ։

կիւան, և աշխատակալ տեառս, և առ եպիսկոպոսունս ‖. (զդուշանալ յաղանդոյն բարծուժայի նեստորականի)։ Ճշտալ լինել սահմանակից դերջանու։

Խաղոյ առեաջ։ Ի մուր՝ զոր լատին. գլ. ք. յուցանէ լինել սահմանակից կարնոյ, զի ասէ. * Ի ձեալ մինչև յամուրն որ կոչի Խաղոյ առիճ՝ի սպառուածն կարնոյ. և հասեալ յագարակն՝ որ հայի ընդդէմ ամրոցին... հատին զգլուխս նոցա ‖։ Ո այս տեղի խոստացաւ վասիլ կայսեր տալ դաւթի կիւրապաղատի տոհմոյ՝ի լինել նորա նիզակակից կայսեր ընդդէմ սիկլաւոն վարդայ բռնաւորի։ * Խոստանայ (ասէ ասող. ք. 15.) տալ նմա զԽաղոյ առիճն կղէսուրաւն, զջոր մայրի, և զկարնի ‖։ Յիշէ նա ինքն ասող. և՝ի ք. 43. և յուցանէ լինել մերձ առ կարնի։ * Կարձաւ նա (այսինքն կայսրն վասիլ) ընդ Կարնի և ընդ Խաղոյ առիճ՝ի հոտատանդնուպօլիս ‖։

Խամղէ վանդ. Տես՝ի Աղեթոր։

Խաւարաչոր վանդ։ Յիշատակի՝ի գիրս ինչ մեհնութեան տոհմից տէրունականաց. ՝ի մեհն. առաջաւորաց պահոց։

Խծկոնդ, կամ ըստ այլ օրինի. Խծկնդ։ Ո անք չինեալ ՝ի ժայ. գարու՝ ՝ի վեսան սարգսի իշխանի, զորմէ գրէ սա մնուել՝ ՝ի նծա. Թուին. * Ի ձեռապատիւ վեսան սարգիս զինի բազում շինուածոց բերդից և եկեղեցեաց՝ զհրաշալի ի գաւառս Խծկունս (1) շինեաց, պայծառապէս զարդարեալ զոր քաւարանն՝ որ ձանապէն անուն ‖։

Խնապատ վանդ։ Ա յս վանք յիշատակի առ գրիգորի մա դիսարոսի՝ի խորապրի կ. և կե. Թղթոյ՝ որոյ առաջինն է, * Ա ղ հայրն սամուել առաջնորդ վանիցի Խնատոն ‖. և երկրորդն՝ * Ա ղ կրօնաւորսն Խնատոն ‖։ Յերկոսին խակ՝ի Թուղթս զամուել կոչ * Կրօնաւոր քահանայ, և ծայ բագոյն հարց ‖։ Ուրուք յայսմանէ ոչ լինել Խնատի վանիցն Խալիկոպոսարան, կամ Ի Թոռ եպիսկոպոսի։

՝ի վախճան թ. Թղթոյն ցուցանէ զանձն ունել իշխանութեան՝ի վերայ նոյն վանից. քանզի լուեալ զմահ ծերունւոյն սամուելի առաջնորդի վանացն՝ գրէ առ կրօնաւորսն։ * Ո գուշասջիք ժողովեալ բազմութիւնդ, և՝ի միասին ընտրեցէք առաջնորդն՝ զոր և կամի ած և դուք. և միաբանութիւնք գրեցէք առ իս, և փոյթ առ իս առաքե-

(1) Ա ղ կիրակոսի՝ի մէր օրի զԽծկաւանս (կամ Խծկնա) շինակա գրի Խոյնոնս, որ է վեր նեաց, պայծառ պահաւ զարդարակ։ Կակ կրկին օրինակք՝ սա բեալ զոր քաւարանն՝ որ է առաքմնելի ուներն. * Ջհրաշալի վանս առգիս ‖։

ցՀը ... և եկեսցեն առ մեզ յանուանէ և այսոքիկ յերկրացդ՝ զորոց և զանուանացն գրեալ եմ իմովս ձեռնագրովք. և այսոքիկ փոյթ՝ զի մի յապաղեսցին. վասն զի գրեցից նոցա վՀՅու ինչ հաստատական՝ զի մի երբեք յայլեսմ ժամանակի դղրդեսցին, և լիցի աւերումն այսպիսի Ա՝այրաքաղաքացեաց։ Ա երջին բառդ զՀռչակաւոր գոլն ենթատանկն յայտ առնէ, քանզի սովորեցան նախնիքն մեր զերեւելին՝ ի վանորէից՝ Ա՝այրաքաղաք վանս անուանել։

Խնձիկ։ Ա՝ատակերտ՝ ի սահմանս իշխանութեանն աղուանից, շինեալ՝ի վաչագանայ արքայէ յանուն դստերն իւրոյ, ըստ որում գրի՝ի պատմ. գիւտի նշխարաց սրբոյն գրիգորեւսի։ * Ա՝ն դաստար մի աղայական հաստակաւ խնձիկ անուն յոյժ սիրելի արքային՝ յորում՝ անուն շինեալ էր դաստակերտ, եւ մնաց նմա՝ի նշխարաց սրբոյն, և՝ի նորին դաստակերտի մեծապէս կատարի լիշատակ պէսպէս պատմով։ Ա՝ոտի լինել յօտի նահանգի։

Խոտն։ Յիշէ գրիգ. մագիստ. ՝ի Թղթ. ՚ա. առ կաթուղիկոսն ասորւոց։ * Ա՝ն ոմանք յանիծեալ ազգէդ Թանդրակեցեաց՝ որք անուանեն զինքեանս Ա՝աշեցիք, և այն են չարուքեն արմատ, և ... Թանդրակեցիքն որ՝ի խոտն էն, և գրեն վասն քրի՝ստոսի։ Ա՝ս՝ի ՚բ. Թուղթն առ Թուլայեցի Թանդրակեցիսն՝ ի ստուգաբանել զանուանս տեղեաց բնակութեանց նոցա. * զխոտն (ստուգաբանէ) իսկակեալ և խաւարեալ, և խորամուխն բնակեալ։ Ւսկ Թէ նոյն իսկ սա ընդ խոտս բերդաքաղաքի, (զորմէ ՝ի նոր հայաստ. Թղթ. 81.) չունիմք ինչ ասել հաստատ։

Խոտան։ Յիշատակի՝ի կիրակոսէ, զոր և ցուցանէ լինել՝ի կողմանս պարտաւայ և բէլուկոմայ։ * Օ օրաժողով լեալ Թագաւորն վրաց լաշան, և մեծ հաղարաւ պետն իւանէ՝ եկաց ընդդէմ նոցա մարտիւ պատերազմի, և իջեալ՝ի դաշտավայր տեղիս՝ զոր խոտանն անուանեն, քանզի անդ պատահեր Թշնամեաց՝, այսինքն Թաթարաց։ Ւսկ վարդան զտեղի պատերազմին դնէ լինել առ գետովն կոտմանայ մերձ՝ի գուգարս, յասելն. * Ա՝կին մտին (Թաթարք) յերկիրն գուգարացւոց առ դաշտավայրօքն՝ի կողմանցն աղուանից իբրև Թէ ինն. և կոտորէին զաշխարհն ընդ ամենայն կենդանի զորս գտանէին, և փութով դառնային. զորոց զՀետ մտեալ ամենայն ուժով լաշէ՝ հասանէ առ գետովն կոտմանայ՝։ Ա՝այն Թուի ընդ խոտանայ և խոտ

նան Ա՛ղաղաք՝ յիշատակեալ ՚ի վարդանայ, որ ՚ի գրելն զգեհեսրեայ վրայ արքայի՝ ասէ. * Պահեաց նոյնպէս զիշխանութեն Տօրն, և յաւել ևս զՅունիսիս, և զՅուն նան քաղաք առեալ ՚ի պարսից ||։

Խաչախոսիկ։ Յիշէ խորենացին ՚ի ա. 29։ ը. 6. 8. ընդ խրատայ, և ջուղայի։

Խորանիսպ։ Յիշատակէ եղիշէ ՚ի գլ. ը. Թղթ. 67. ընդ ամուր տեղիս աշխարհին Հայոց գրոս առնն վարդա նանք ՚ի ձեռաց պարսից։ * Ընդունին զանմատոյց ամուրսն՝ զդ առնի քաղաք, զանին, զարտագերս, .. զերկայսորդան, զարշնին, .. զբարձրաբերդն, զԽորանիսան, զձիանիսան, զանկասկածելի զողակասն ||։

Ծիծառնիկ։ Ասան յերկրին արջուց մերձ ՚ի տարօն, կոչեցեալ յանուն Ծիծառնիկի ուրուհն առն՝ որ գողաց ցաւ զմնան խաչափայտին՝ ի սբ կարապետիկ տարօնոյ հրաժմնաւ իշխանին արջուց յաւուրս ը. Ներսէսի կաթուղիկոսի, և վահանայ կամսարականի, զորմէ ընդարձակ գրի ՚ի պատմ. տարօնոյ։ * Իշխանն արջուց կողմն գորգ չատախօս ... եկն ՚ի դաշտն տարօնոյ առ այր մի որում անունն էր Ծիծառնիկ. աղաչեաց զնա իշխանն և ասէ, թէ երթ հնարեա զողացիր զխաչն .. և առ կինէն զը. գահեկան։ Ընդ նա ասէ. դրամն քեզ, զխաչն առնուր, և գամ յերկիրն քո, ընտրեմ ամուր տեղի, և շինեմ աւան, և զիմ անունն դնեմ նմա ||։ Ընդ ապա ասէ. * Ընդ տրեաց տեղի, և շինեաց եկեղեցի, և անդ եդ զիրուն նեան սբ նշանին, և անուանեաց զանուն տեղոյն Ծիծառնիկ ||։ Ընդ սակաւ ի միջի. * Ծայր տուր՝ զի երկիրն այն ամուր է, և ոչ կարեն զողանալ ||։ Ընդ ՚ի վախձան պատմուԹեն. * Ո այս պատմուԹիւն գրեալ եղեն յեկեղեցին Ծիծառնոյ ||։

Ծիմուբ։ Ամուր տեղի յաշխարհին Հայոց յիշատակեալ յեղիշէի. զորոյ զբանս տես ՚ի վերոյ ՚ի բառն Խոբանիսպ։

Ծղոտ։ Տես Ընդոտնէդ Բերդ։

Ծոռան։ Գիւղ՝ յիշատակեալ ՚ի Թղթի յովհաննու քռնեցւոյն, ուր ասի վասն յովհաննու ուրուհն վարդապետի լինել ՚ի Ծոռան գեղջէ։

Ալածան դիմա։ Տեղի՝ զոր յիշատակ պատմիչն ուռպելեան (տպ. Թղթ. 29.) և ցուցանէ լինել ՚ի սահմանս Հայաստանեայց։

Ալածրբեր։ Ալերակոս դասէ զսա ընդ ամուր բերդս աը-

յախոյ և գուգարաց . քանզի գրէ ՚ի գԼ . ժԽ . պատմու-
թէ իւրոյ վասն իշխանաց ամենից Հայոց ՚ի ժՔ . դարու յա-
ւուրս զաքարիայ և իւանէի եղբարցն . * Կ՚ուխն և նոքա
բազում գաւառս ՚ի պարսից , և բերդս ամուրս զգարդ-
ման , զքարհերձ , և զերգեվանք , զտաւուշ , զվաճա-
րկէթ , զտէրունականն , և զդապ , և զշամքոր քաղաք ‖ Լ֊ .
և զԿին ՚ի գԼ . ԼԲ . գրէ վասն Թաթարաց ՚ի ժՔ . դարու :
* Կ՚հնոքիկ որ առին զշամքոր՝ եկին ամենայն տխուն իւ-
րեանց ՚ի տաւուշ , և ՚ի վաճարկէթ , և ՚ի նոր բերդն , և
՚ի դապ , և որ շուրջ գնոքօք , և ՚ի նեղ արկեալ պաշարե-
ցին զնոսա ‖ :

Կայծան : Յիշատակէ զայս վարդան երկրիցս , և ցուցա-
նէ լինել ՚ի կողմանս գուգարաց՝ ըստ ասէ . * Կ՚ու կրտսեր
եղբայրն (Ք . սմբատայ) ժառանգէ զտաշիր սէորգուվքն
ձորոգետին , և զկայեան , և զկայծան ... ՚ի գաւառն
տաշրայ , և այլ բերդք անուանիք եհաս գուրգենայ՝ զոր
վիրք Սամխէթ կոչեն ‖ : Կ՚ու այլոյր գրէ վասն գրիգորի
մագխաբասի . * Տայ զքէնի ՚ի մոնոմախին , և զկայեան ,
և զկայծան՝ զոր ընդ ձեռամբ իւր ունէր ‖ : Կ՚ուռ բանիւ
Թէրևս սահմանակից կացուցանէ Կիպ գաւառն այրա-
րատոյ (յորում բջնին էր ,) զկայեան որ էր ՚ի գուգարս ,
և զկայծան՝ որ ոչ հեռի Թուի ՚ի կայեանէ :

Կուրյ ձոր : Յիշատակի առ Թովմայի մծնռի . ՚ի պատ-
մելն վասն աքանդարին . * Կ՚կեալ գնայր առաջի նոցա
սակաւ զօրօք ՚ե . ոգւով աւելի կամ պակաս՝ Ձանասպար
հասն կորոյ ձորոյ , յետ լերինն սբ ուխտին Կքանչելագործ
ծին ‖ : Կ՚րևի գնել ՚ի սահմանս արձէշ քաղաքի :

Կառաւէ : Կ՚ետ՝ յիշատակեալ ՚ի զաքարայ Թղթ . 213 :
* Կ՚ւ քանզ սեպուհն մամիկոնէից վասակ՝ քանզի առաջա-
պահ էր այն օր՝ գնայր յառաջ ՚ի գետոն որ անուանի
Կառաւակք ‖ : Կ՚ւ զԿին ասէ . * Կ՚ւ երթեալ ՚ի Կառաւակ
յօթ , յանկարծակի յառաւօտուն ծագել՝ հասեալ ՚ի
նոյն գետ և մարզպանն պարսից առավնասց ‖ : Կ՚ւ որ-
պէս յայտ է ՚ի բանից զաքարայ , այս տեղի չէր ինչ հեռի
՚ի նախնեացն :

Նամանշէն : Կ՚աղաք եպիսկոպոսանիստ , յառաջն կո-
չեցեալ Տամբուր , յարևմտեան կողմն Ձորոխ գետոյն , որ
պէս յայտ է ՚ի պատմելն յովհ . մամիկ . (ըստ ձեռ .
քանզի պակասի ՚ի տպ . այն գլուխ) ուր գրի վասն վաշ-
տեայ վրաց աղքայի . * Կ՚ասնց ընդ գետն Ձորոխ , և գնաց
՚ի քաղաքն Նամանայ՝ որ կոչի Տամբուր ‖ : Սա ինքն հա-

ժամ քանզի նորոգեաց զսա ՚ի Ե. դարուն, կոչեաց յիւր անուն զքաղաքն Համամաշէն. այլ ՚ի ժամանակս նորին Համամայ, և յետ մահուան նորա քաղում քանդմանըք գործեցան յայս քաղաք. քանզի նոյն ինքն արքայն վրաց սրով և հրով գերեաց զքաղաքն, և զքահանայս, և զեպիսկոպոս նորա զմանկունս սպան յեկեղեցւոջ քաղաքին կոչեցեալ Աբ սիոն. և յայնմանէ ըստ ասելոյ պատմագրին՝ զանէծս ընկալաւ քաղաքն յեպիսկոպոսէն, թէ՝ * Անիծեալ քաղաքս այս խոպան և աւերակ, և ոչ ոք եղիցի որ բնակիցի ՚ի սա յաւիտեանս յաւիտենից ‖: Այս փոքր ինչ զինի՝ երեք հազարք ՚ի միում գիշերի սատակեցան, և այլքն փախեան՝ Թափսր և աւերակ Թողեալ զքաղաքն: Այլ որպէս Թուխ՝ վերստին նորոգեցաւ քաղաքն, թէ և ոչ ըստ առաջնոյն: Տես զՀամէն ՚ի նոր Հայաստան. Թղթ. 395. 398:

Հերփ: Գաւառ՝ յիշատակեալ ՚ի կիրակոսէ, որ զրէ վասն ստեփ. կաթուղիկոսի աղուանից (՚ի ԺԳ. դարու,) Թէ * Այսր անդր կացեալ մինչև մեռաւ ՚ի Հերզ գաւառի ‖: Որ չէ մարթ որոշել արդեօք ՚ի Հայս, եթէ յաղուանս անկանիցի:

Հերան: Այս Թուխ. մեծոփ. յիշատակի Աղբուէ (ոմն) ՚ի Հերնայ. և այլուր յիշէ Ոչաղս Հերանին: Տես և ՚ի նոր Հայաստան. Թղթ. 231:

Հնարակերտ: Այսպէս զրի ՚ի ձեռագիրս օրինակս խորհ. նացւոյն. ԺԵ. 7. իսկ ՚ի տպ. որպէս և առ յովհ. կաթուղիկոսի ըստ միում օրինակի զրի Հռոնաբակերտ, ըստ այլում Յոռնաբակերտ: Լտրենացին Ամուր կոչէ զնոսին, և երևի գնել ուրեք կամ յաղուանս, և կամ ՚ի Հայս առ սահմանս նոքա աշխարհին աղուանից. զորօրինակ ՚ի Ը. 7. (ըստ ձեռ. 8.) յասելն վասն սիսակեան ցեղին՝ յորմէ էր առան հնահայեաց աղուանից. * Հառանգեաց զդաշտն աղուանից, և զլեռնականսն նոցին դաշտի՝ ՚ի գետոյն էրասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ ‖: Այս զինի զրէ վասն գուշարայ՝ որ յորդւոցն շարայի. * Հառանգեաց զլեառն Մեծին որ է Կանգաբք, և զկէս մասինն ջաւախայ, զկողբ, զՃոր, զՁոր, մինչև ցամուրն Հնարակերտ ‖: Ուր վերջին բանքն ցուցանեն զՀնարակերտ սահմանակից գուգարաց: Իսկ յովհ. կաթուղիկոս կոչէ զնոսին Վաղաք, և յուտի գաւառ ձգել երևի զդիրս նորա ՚ի գրեն զսահմանաց տերութեան ա. ամբատայ արքայի: * Զգեալ աձեցուցանէր զշաւիղ տերութե[ան] իւրոյ յարև-

մանից հիւսիսոյ մինչև ցկարնայ քաղաք, և անդր ևս քան զկղզիջս քերեալ... զկուր գետով մինչ ՚ի քաղաքն տրփ խիս, և զուտի գաւառ՝ մինչ ՚ի քաղաքն Հոնարակերա, և մինչ ՚ի տուս և ՚ի չամքոր ||։

Ձղէերտ։ Ուան յիշատակեալ յեղիշէից (գլ. ՟ը. Թղթ. 78.) ընդ արքունի ձմերոցս։ * Ուերեալ (ուրացեալն վասակ) զբազում տեղիս հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի՝ որ կայեանք զօրացն Իլին, զգառնին և զերամանս... զփառախոտն, զարդեանին, զՁողկերտն աւան, և զբերդն արմաւրի ||։

Ձորայոյ ճանապարհ։ Յիշատակի առ ղևոնդեայ պատմագրի գլ. ՟ը. ուր գրէ վասն Թէոդորոսի ուշտունւոյ՝ թէ ՚ի դիմել երկրորդ անգամ իսմայէլեան զօրուն ՚ի հայս ՚ի Ի. գարուն, * Ուբեալ զզօրս իւր կամէր ունել զկիրճն ձոր, նահապետին Ձորայոյ, այլ ոչ կարաց ժամանել յառաջս նոցա ||։

Ձոր աղբիւր։ Ուսողիկ ՟գ. 41. երևի դնել զնոյն ՚ի սահմանս քագրևանդ գաւառի՝ մերձ ՚ի լեառն Նպատ։

Ա՚ախթոյ վանք։ Յիշատակի յայտնութիւն յունիսի 19. ՚ի վարս յովսեփայ գնեցւոյ՝ որ նահատակեցաւ ՚ի Թուա կանիս ոճգ. յորում ժամանակի կային ՚ի նմա բազմաթիւք կրօնաւորաց։

Ա՚ահկանաբերդ։ Յիշատակէն զայս տեղի վարդան և կիւրեղոս, որոց երկոցունց իսկ բանք ոչինչ որոշակի նշանակ կէն զգաւառ տեղւոյն, այլ ընդհանրապէս ցուցանեն լինել ՚ի կողմանս գուգարաց, մերձ կայենոյ. վարդան այսպէս գրէ վասն դաւթի արքայի վրաց. * Ուբեալ... զկայեան, և զկայծոն, և զլոռէ, և զտաշիր, և զԱ՚ահկանաբերդ ||։ Ուստ այսմ՝ գրէ և կիրակոս վասն իշխանին ուրուսն. * Ուպա գարձ եղև իշխանին քրդի ՚ի հայրենիս իւր՝ գալ յաշխարհն կայենոյ և Ա՚ահկանաբերդոյ ||։ Ուր զԱ՚ահկանաբերդ որպէս ասացաք՝ սահմանակից Թուի կացուցանել կայենոյ։ Ուայլ զկնի Թերևս որոշել Թուի յասելն. * Ուրդիք քեռ բարեպաշտ իշխանին քրդին՝ որ ընդ այն ժամանակս իշխեր բերդին կայենոյ և գաւառ ոին. և ցուցին նմա ||։ Ույս ահա ՚ի բազդատել զվերջին բանս կիրակոսի ընդ առաջինն, զԱ՚ահկանաբերդ պարտ է դնել ՚ի գաւառին կայենոյ. զի յառաջնումն զաշխարհն կայենոյ և զԱ՚ահկանաբերդ Հայրենիք ասէ քուրդ իշխանին, իսկ ՚ի վերջինն բանսն Թէպէտ չլինի զԱ՚ահկանաբերդ, այլ զիշխանն տիրել ասէ կայենոյ և

գաւառին՝ յորում իմանայ և զԱհկանաբերդ ։

Աղեաւեանք տեղի ։ Յիշատակի ի բուզանդայ էջ. 30. ուր գրէ. * Կայսին հասանելին ի տեղին որ կոչի Աղեաւեանք ։ Յայլ օրինակի՝ Աղեաւեան կամ Աղաւեան ։ Կոչին պէս յիշէ և էջ. 47. ուր և գրի Աղեաւեան ։ Նոյնպէս և ի խորխոռունիս, ըստ որում Աղեաւորեաց պաշտօն՝ նոյնն տոհմին էր սեպհական ։

Աճառ, կամ Հաճառ առն ։ Պատմիչն օրբէլեան էջ. 64. Թղթ. 25. դնէ զսա ի նախնիսն գաւառի, այլ քանզի նաև զբերդն երկնակայ ի նոյն կարգ դասէ (ըստ վիճակի իւրոյ ժամանակին,) յայն սակս չէ մարթ որոշել՝ թէ արդարև ի նախնիսն անկանիցի Աճառ կամ Հաճառ առանն, եթէ ի սիւնիս ։ Օ բանս օրբէլեան պատմագրի տես ի նախնիսն գաւառի ։

Այրեաց ջուրք ։ Ի իմէական գանձակայ, նախնեան ժառանգութիւն օշնի իշխանի՝ զորմէ գրէ շարունակ կոչն սամուէլ. * ի շիր. ամն ի բունակալութիւն տաճկաց՝ եւ օշնի իշխանն ի ժառանգութենէ իւրմէ որ կոչի Այրեաց ջուրք հանդէպ գանձակայ ... և եկեալ յաշխարհն կիւլիկեցւոց ։

Աղաւնոյ գետ ։ Յիշատակէ Թովմա մեծոփ. յասելն. * Նա տաճն գերի (տարեալ էին) ի միում տանէ ի գեղն Աղաւնուց ։ Երևի դնել զնոյն ի կողմանս քաղբերունեաց ։

Ախնէրտ ։ Այս տեղի յայտնի է մեզ լինել ի ստորին բասէն. տես ի նոր հայաստան. Թղթ. 91 ։ Այլ զի ոչ ուրեք ի գիրս եղև մեզ գտանել թէ յո՞ր գաւառ անկանիցի Ախնէրտ, յայտ վայրի ի կարգ անծանօթից հարկ եղև դասել ։ Ի ստորագրութենէ եպիսկոպոսաց Ժողովոյն ասոյ ի ԺԷ. դարուն գտանի և ստորագրութենէ Կիրակոսի եպիսկոպոսին Ախնէրտոյ ։

Ախթոր ։ Գաւառ՝ որպէս Թուխ ի հիւսիսակողմն հայաստանեայց, զոր և յիշատակէ յովհաննէս կաթուղիկոս յասելն վասն հայկազունի իշխանացն սահակայ և վասակայ՝ որք ամբացեալ էին ի սևան կղզի յերեսաց աստուածակուրեաց յուսիայ՝ եթէ * ի մահ եղեալ ի միասին սիրելի եղբարցն՝ թէ գուցէ ... մանուկսյին ի ձեռս հեթանոսական բռնադատացն .. նաւեալ անկանէին հասցեալ յամուր գաւառն Աղիսորոյ ։ Գրէ զկնի, թէ յորժամ և անդ զհետ պնդեցան նոցա թշնամիք, * նոքա թեալ ... դադարէին յանձաւախիտ ամրոցս մայրեացն

զարդմանայ և արցախայ ‖ : Ո՛նոյն բանս ընդօրինակէ և ստեփ. օրպել. ի գլ. լԸ : Ա՛յդ՝ ի վերջին բանից յովհ. կաթուղիկոսի. յայտ է թէ Աիսփոր գաւառ էր ըստ ԱՋ արցախայ և զարդմանայ որ էր յարցախս, և սահմանացն ծովակին գեղանայ :

Յիշէ զայս գաւառ՝ Ղազարք անուամբ և կիրակոս ի պատմ. ի գրեղն վասն յովհաննու աղուանից կաթուղիկոսի, թէ դիմեաց նա գալ յերկիրս հայոց ի Արշմունից գանձակայ, և * Ընակեցոյց զնա իւանէ ի քաղաքն Աիսփոր՝ ի վանքն որ կոչի Խոշէ : Սա սկսաւ շինել անդ եկեղեցի մեծ և հրաշալի, և մինչև էր աւարտեալ՝ խա փանումն եղև, զի եկն սուլտանն խորասանայ Ջալալա դինն կոչեցեալ ‖ : Ա՛յլուր նա ինքն կիրակոս ի գրեղն կրկին անգամ զնոյն յովհ. կաթուղիկոսի՝ կոչէ զԱիսփոր՝ Գաւառ : * Ցո՛ յովհաննէս ամն իս, որ շինեաց եկեղեցի մի հրաշալի ի Գաւառն Աիսփոր, ի վանքն որ կոչի Խոշէ ‖ :

Ա՛ղուանք : Գէօղ անձամբ, յիշատակեալ ի Թովմայի արծր. էջ. 11. ուր գրէ վասն արշաւանացն գուրգենի եղբօր գագկայ արքայի արծրունւոյ, թէ * Հասին ի գոգ տեղի մի ի Ա՛ղունից գէօղ ‖ . և որպէս Թուխ ի նահանջն Թաց և ի հետևեալ բանից՝ էր ի կողմանս պարսկահայոց :

Ա՛ղաւնի : Յիշատակի ի վարդանայ ի ոճը. Թուխն : * Ելոյծ շարժ ահագին, և փլաւ պաձուձաղարդ եկեղեցին որ ի Ա՛ղաւնիս, ի մեռասանն յունուարի ի ժամ ձաշոյ, և էջ. պատարագող էր մեծ զենմանն նուիրեցան ‖ :

Ա՛ռաջ : Գաւշտ ի մեծն հայս, ուր ըստ գրելոյ խորէն. էջ. 10. յարշաւիր կամսարականէ ի պարտուիճ մանուեցան պարսիկք : * Գումարէ (շապուհ արքայ պարսից) զօրս բազումս ի ձեռն ներսեհի եղբօր իւրոյ .. և առաքէ յաշխարհն մեր ... որոց պատահեալ քաջին արշաւիր կամսարականի՝ հանդերձ ամենայն հայաստանեայցս զօրու, ձակատ տուեալ ի Գուգին անուանեալ դաշտի .. փախստական առնեն զզօրս պարսից ‖ :

Ա՛ղէն : Ղազարգաւօղ յիշատակեալ նախ ի ղազարայ Թղթ. 98. * Ել զերանելի երեցն խորէն ի Ա՛ղենոյ ‖ : (և Թղթ. 75.) ուր յետ յիշելոյ զեպիսկոպոսունս ժողովոյն արտաշատու առ ա՛. յովսէփ կաթողիկոսաւ, ի վերայ բերէ. * Ա՛յսոքիկ ամենեքեան եպիսկոպոսք, և ի պատուական երիցանց՝ աբէն վրդով, և խորէն ի Ա՛ղե-

նեայ ‖ : Ոչ ստ չինեցաւ մեծապայծառ եկեղեցին ի Հ. դա-
րու ի ժամանակս իշխանութեան դաւթի սահառունւոյ :
* Այլ ի հրամանէ նորուն չինելը խակ (ասէ յովհ. կաթ.)
եկեղեցին գեղեցկայարմարը որ ի քաղաքագեղն Արեն ‖ .
զոր տամուհէ՛ կաթուղիկէ անուանէ յաղխասակին առ
կէ . Թուականաւն հայոց , * Ը հինուած կաթուղիկէին
Արենոյ ‖ (1) : Այս աստղկայ է . 2՝ . գրի Ա՝էն՝ ուր ասէ
վասն դաւթի սահառունւոյ . * ի Ա՝ռէն զեկեղեցին սա
չինեաց ‖ : Խակ վարդան զնոյն կրկնէ յաւելն . * Սա չէ
հնեաց զեկեղեցին Արենոյ ‖ :

ի ժէ. դարուն առաւ յելկուզայ ամրոցն Արենոյ և
այրեցաւ, ըստ որում պատմէ վարդան : * ի ոժէ . Թէին
(իբրև առին վերջ զդուխն և այրեցին) . . . լուեալ եւտ
կուզն՝ գայ յայրեցեալ և ի քանդեաըն գէին, և խոցո-
տեալ սրտիւ և մխռեալ իբր զդազան գատաղի՝ գայ ի
Արեն, և այրէ անդ զամրոցն, ուր ողջակիզեցան վասն
քոյ ոգիք իբրև ե՛, և դառնայ ի դաշտն գագայ ‖ :
ի բանից աստի վարդանայ երևի եթէ Արեն անկանէր
ի հիւսիսոյ դունայ, որպէս թէ ընդ մէջ դունայ և գագայ :

Ալեխս : Պիտոյ յիշատակեալ ի տեփ. օրպել. գլ. Թ.
ուր գրէ վասն տարապայման որդւոյ լիպարտին . * Ա-
քսն ողորմած և գթած եղև առ ամենեսին, մինչ զի ի
Ալեխս գիւղ՝ որ է ի վերայ հուրաստան գետոյ՝ զնաչ
կանգնելին, և անուամբ նորա կոչելին զնա ‖ :

Ալր Բերդ : Յիշատակեն վարդան և կիրակոս ի կարգի
այլոց տեղեաց արցախոյ, գուգարաց, և ուտիոյ : * Օ՝ա
ւենային առեալ էին (Թաթարք, գրէ վարդան,) զնա-
ւուշ, զվաճարկեթ, զտեղրունականն, զերգեվանքն, զըզ-
մանճնաբերդն, որ էր կիւրիկեանց ասխարհանայ, զՀոր
բերդ, որ էր վասակայ Թագաւորազնեան, և զքաւազրկեա
անմարտնչելի ամրոցն ‖ : Խակ կիրակոս գրէ վասն դաւթի
հօր վասակայ . * Խաբեուեալ վարեցաւ (ընդ կիւրիկեանս)
դաւիթ իշխան Ալոր բերդին, զի էր և նա յազգէն բագ-
րատունեաց, հայրն վասակայ իշխանին՝ որ չինեաց զե-
կեղեցին հրաշագան ի վանքն որ Ոշնապատան կոչի, հուպ
ի Ալոր բերդն, առաքնորդութեք և ձեռնտուութեք արքե-
պիսկոպոսին յոհաննիսի տուեցոյ ‖ : Պատմէ զկնի և զսա-

(1) Կիրակոս զչինուածին կա- ինքն դաւթի) ի կէ. Թվականին
Թուղրկէս գնէ ի կէ. Թուին եղև չինուած կաթուղիկէին Արե-
յասէն. * Յաւուրս սորա (այս նոյ ‖ :

շարունն ՝Նոր բերդին՝ ի Թաթարայ։

՝Նոր ջերական։ Օ իշխան այսր սահմանի յիշեն նախնիք ընդ մեծամեծ իշխանս հայոցատանեայց, որք ի վնտռորու թեան կարգի էին առաջինք, և կոչէին բդեշիք, և սահ մանակալք։ Ագաթ. Թղթ. յհե. գրե. * ՝Ի վնտռորա կան կողմանէն (առնոյր տրդատ ի գնաչն ի հռոմ.) զերեսին գահերէցս իւրոյ տաճարին, որ բդեշխն կոչէին։ Օ առաջին սահմանակալն ի ՝Նոր շիրական կողմանէն. երկրորդ սահմանակալն յասորեստանեաց կողմանէն, երբ րորդն յարեւասատան կողմանէն, չորրորդն ի մաղթեայ կողմանէն ‖ ։ Այսպէս և բուզանդ գ. 50։ * Ասայ այժմ գնալոյ (ապստամբութե ի Թագաւորէն հայոց աբ շակայ) սկիզբն առնէին մեծամեծ աւագանին. նախ բդեշխն աղձնեաց. և ՝Նոր շիրականն բդեշխն, և մահկեր տանն, և նիհորականն ... և յետ սորա գոդորեաց բբ դեշխն ... և ամուր աշխարհն կորդեաց. և տր գաւառին կորդուաց ‖ ։

Ա՛րդ՝ թէպէտ այսպէս մեծ էր իշխան սորա, բայց թուի թէ այս իշխանութե չէր կարգեալ ի վաղարշակայ, այլ ի տրդատայ, զի ոչ յիշէ զայն մարկիբաս, ուստի և ոչ իսոր, այլ ագաթ, բուզանդ, և յետագայք։ Այ թէպէտ այսպէս երևելի ինն էր այս իշխանութե, բայց ոչ որշէն ինչ քնաւ պատմագիրք մեր զահմանն՝՝՝Նոր շէրական անուա նեալ, միայն յայտ առնեն թէ էր առ սահմանօքն ասորւոց։ Ագաթ. ի յիշելն զսահման քարոզութե սբին գրի գորի, և իշխանութեին տրդատայ, գրե. * Այ յամեցաւոց քաղաքին մինչև առ մծբին քաղաք, քերեր առ սահ մանօքն ասորւոց, առ ՝Նոր շիրական երկրաւն, և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն մարաց, մինչև առ տամբն մահբսեան [1] իշխանին, մինչև յատրպատական ձկաեր զբարոզութե իւր ‖ ։ ՝Ի նոյն կողմանս գնաց և Թո մա արծ. ք. 3. յասելն. * Այ յասորւոց կողմանէ զաշ սորեստան, և զմծուին, (որ է մծբին), և մինչ՝՝ ընդ ևան, մինչև ցսահմանս տաճկաց ‖ ։

Ա՛րդ՝ բանք պատմագրացս զայս ինչ քաջայայտ տան իմանալ։ ՝Նախ թէ ՝Նոր շիրական երկիրն ոչ էր ի հայս, այլ արտաքոյ մեծին հայոց ընդ տերութե մերոց Թագաւ որաց. յոյր սակս թէպէտ անկ էր յայնմ վայրի ձառել զայսմանէ, ուր ունիմք ձառել զաշխարհաց որք էին աբ

(1) Նոյն անուն է, զոր բուզանդ ի վերոյ կոչեաց Մահկերտանն։

տաբոյ Հայաստանեայց՝ այլ ընդ տէրութիւ՛ մերոց Թագաւորաց · բայց քանզի մինչեւ բանք պատմագրաց զկնի անցին սորա դասելով ընդ մեծամեծ իշխանս բնիկ Հայաստանեայց, հարկանիկ ընթերցողաց ցուցանեն լինել՛ի հայս, առ՛ի բաց բառնալ զչփոթութիւնն՝ յայսմ վայրի ձառ առեալ ։

Արկղորդ՝ այս երկիրը ոչ էր նորոգ ինչ յաւելեալ՛ի տրդատայ, որպէս թէ առաւել ընդարձակ տիրելով նո՛ա քան զվաղարշակ, այլ ընդ տէրութիւ՛ հայոց էր նաև յաւուրս վաղարշակայ · վասն որոյ մեզ Թուի գանունն միայն փոխեալ և զիշխանութիւնն, որպէս դեպ լինի բա՛զմ անգամ։ Ա՛րդ՝ ի՛ քննելն գտանեմք յաւուրս վաղարշակայ ատեպ յիշատակել զԱղէքսանդր, զոր ոչ գտա՛նեմք յիշատակեալ յայլ պատմագիրս յաւուրս տրդատայ ։

Ա՛յս Աղէքսա՛նդր էր ընդ տէրութիւ՛ մերոյ Թագաւորաց, որ յն. անուաներ Ալէքսէնդրէա, և լտ. Ալեքսէնդրիա ։ Այն այս անունս Ալէքս որ է Ա՛նորիք, ըստ գտանման իմոյ փոխեալ կարծեմ յաւուրս տրդատայ ի Շէրեան անուն, և առ նմին յաւելեալ ասպա զանունս Ա՛րդ · կոչելով Ա՛րդ Շէրեան ։ Նմանական համարիմք և՝ թէ նաև ընդ նոր անուանս՝ նոր սահմանք եղեն կղէսուրայ յաւուրս տրդատայ · իբր զի Ա՛րդ շիրականն ոչ բոլանդակէր զհա՛մբէն կղէսուրն՝ որպէս յաւուրս վաղարշակայ · և որպէս ինձ Թուի՝ էր խառնեալ ըստ մասին՛ի կղէսուրայ, ըստ մասին՛ի միջագետաց, և նմին յարակից, զի զայս Թուի աւելորդել վերոգրեալ բան Թովմ. արծ. զնու շիրականն ձգելով մինչև ցսահմանս տաճկաց, և ըստ մասին նաև՛ի հայաստանեայց · որով՛ի դեպ էր համարիլն կոչել զայս էր կիր ոչ գիւղսիրիա, այլ Ա՛րդ շէրէա, որ է Ա՛րդ շէրեան ։

Սահմ. օրպելեան, գլ. ՀԶ, ՚ի յիշելն զնիշանս տրդատայ ասէ այսպէս, ոչ յիշէ զնիշանն Ա՛րդ շիրական · զի այսպէս ունի բանն. * Խոկ զօրացն և աշխարհին՝ ՀԵ. միայն կացուցանէ իւրոյ Թագաւորութե՛ն երկրորդ հրամանատար՛ի վերայ ամենայնին ։ Ա՛րեւելեան կողմանն՝ իշխանն սիւնեաց էր. իշխանաւ ։ Հիւսիսային կողմանն՝ բդեշխն գուգարացւոց էր. իշխանաւ ։ Ա՛րեւմտեան կողմանն՝ կորդուացին էր. իշխանաւ ։ Հարաւային կողմանն՝ իշխանն անգեղ տանն էր. իշխանաւ ։ Ո՛այս այսպէս (գտաք) ՚ի ՚ի գահ նամակի իշխանացն Հայոց, զոր զևանդ գրեաց, և տակաւ մի ցուցանէ ագաթանգեղին, և ներսեհին ։ Ո՛ա

զաԹանգեղսին յիշելով, զվերոգրեալ նորին բանան ակն արկէ. բայց զարմանք են, զի ապաԹանգեղոս յիշէ զիշխանն նոր շերական, իսկ ստեփաննոս՝ ոչ։

Ա.ՀԼ որպէս երևի՝ զևոնդ ուստի առնու ստեփաննոս՝ զիշխանաւԹիւնս Հայաստանեայց կամեցաւ անուանել ոչ յանուանէ սահմանացն՝ այլ յանուանէ կոչմանցն Համառիկն աշխարհին, ի ցուցանել ԹէԹ որ իշխանք սիրելին ի հիւսիսայնն և ի հարաւայնն, յարևելեան և յարևմտեան կողմն հայոց. վասն որոյ և ի վերոգրեալ բանս ստեփանոսի՝ զիշխանն կորդուաց և անդեղտան՝ չէ պարտ առնուլ փոխանակ երկրին կորդուացւոց, և երկրին անդեղտան. զի երկիրն կորդուացւոց ոչ անկանի յարևմուտս հայոց, և ոչ երկիրն անդեղտան՝ ի հարաւակողմն հայոց։ Ա.ՀԼ պարտ է առնուլ փոխանակ անձանց. կամելով ասել՝ ԹէԹ տրդատ՝ ի վերայ արևմտեան կողման մեծին հայոց հրամանատար կացոյց զայն՝ որ էր իշխան ցեղին կորդուաց, և ի վերայ հարաւային կողման մեծին հայոց հրամանատար կացոյց զայն՝ որ էր իշխան ցեղին անդեղտան։

Ա.յս աշխարհնոր շերական՝ ԹէպԷտ ասպատմԷեալ էր յաւուրս արշակայ արքայի ըստ գրելոյ բուզանդայ, այլ յաւուրս պապայ արքայի՝ ի հնազանդումԷ նուաձեաց մուշեղ սպարապետ նորա, որպէս գրէ նոյն բուզանդ. Ե. 9. ուր նոր շերական աշխարհն՝ յօրինակս ինչ գրի Ա.ՐՔԵՔԱՆ։

Շ ահասպան բառնաՀէծ։ Տես զբանս զազարայ ի բառն Ա.ՐԾ։

Շ ամբոր։ Ա.ՂաղաՔ՝ զորոյ զառաջինն շինուԹիւն կիրակոս ընծայէ Շ աԹայ ուրուսն խաղալի որդւոյ Ջաւուխայ յաւուրս խոսրովու պարսից արքայի ի Ղ. դարու։ * Այս շինեաց (ասէ) քաղաքս Է. յանուն շաԹայ. զՇ աԹար, զՇ առքոր, զՇ աբէ, զՇ իրուան, զՇ ամախէ, զՇ ապօբան։ Յիշատակեալ քաղաքդ երևին լինել յաւուրս, բայց վասն շամքոր քաղաքի բանք չկ. կաԹուղիկոսի ցուցանեն գնել ի ծայր սահմանացն ուստի նահանգին (1). զնոյն ակնարկէն և բանք վարդանայ և կիրակոսի, որք և ստէպ յիշատակեն։

Ի. ԺՇ. դարու սիրեր այսմ քաղաքի վահրամ անի իշխան, որ և Տէրն էր ակռունականին, երզնկանից, և մածնա-

(1) Տես զբանս նորա ի բառն Հնաբակերտ։

բերդին. յորոյ ի ձեռաց առին Թաթարք, և անդրէն դարձուցին առ նա։ * Ի սմանէ յաւազայն (Թաթարաց, ասէ կիրակոս) որում անուն էր մելոր նուէին, որոյ հաւատալ էր բաժին կողմանքն ասիոքիկ ... առաքեաց (ի մուղան գաշտ աղաւանից՝ ուր բանակեալ էին,) սակաւ ջոր իբրև ասս հարիւրս, որ եկեալ հասին առ դրունս քաղաքին Շ աջորոյ ... Իսկ քաղաքն այն էր յայնժամ ընդ իշխանութիւն վահրամայ և որդւոյ իւրոյ աղբուղային՝ զոր առեալ էին յառաջագոյն ի պարսից ... Իսկ զօրք պշակղեանն օրըստօրէ յաւելուին ի թիւն, մինչև եկին դլխաւորն իւրեանց ... և ետ պատերազմ ընդ քաղաքին, և զիտն որ շուրջ զպարսպովն էր քաղաքին՝ ելից փայտիւ և յօղնով՝ մի դիւրաւ ելցեն ընդ պարիսպն, և նոքա ի ներքուստ հուր ընկեցեալ ի փէչերի այրեցին զնա։ Իսկ ի վաղիւն եռես զայն մելոր նուէինն՝ հրամայ եաց զօրացն բառնալ բեռն մի հող իւրաքանչիւրոյն, և արկանել ի փոս. և իբրև արկին, լցաւ հաւասար պարսպ սին. և դիմեաց զօրն իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւ րոյ ի քաղաքն, և առին զնա, և կատորեցին զամենեսեան բերանով սրոյ, և այրեցին զշինուածն որ ի նմա։ Ի քանից աստի կիրակոս յայտ է լինել այսր քաղաքի մերձ յոյժ մուղան գաշտի. քանզի և ըստ գրելոյ վարդանայ՝ Թաթարք զառաջինն բանակեալք ի գաշտն մուղան՝ նախ առին յարձակմամբ զայս քաղաք. * Ի նա նախ առնու (ասէ՝ մելոր նուէինն) զՇ ամբօր հնարիւք, և վահրամ (որ երկրին) փախչի ի աւերակ ի տեղիս ... և ապա և կեալ առնոյր զառաջին ի նոցանէ զդէեակս և զգաւառն որ սեպհական լեալ էր նոցա ի հայրենեաց, որ և զամենայնն առեալ էին։

Շ ապառանոյ ձոր։ Յիշատակէ Թովմա արծր. ե. 2. * Պատմեաց զայս մեծ քահանայն սամուէլ Կամսարական արտամէտ. նորա լուեալ էր ի պարսկէ ումանէ ի Զորոյն Շ ատռանոյ։ Կասէր պարտ է լինել Կատռանոյ ձոր, որ ցարդ գտանի նմանանուն տեղի առ ծովըն քվնունեաց՝ Կատռան կոչեցեալ։ Ցէս ի նոր հայաստան։

Շ ոէ։ Յիշատակի ի կիրակոսէ և յայլոց. և առ ոտեփ. օրսկէս գլ. ժբ. ի սեւասականն Շ աքոյ, որ և ակն արկէ լինել իբրև տեղի ի նահանգին սիւնեաց. տես զձմեռնոցա յանծանօթս սիւնեաց։ Ի կիրակոսի յիշատակի և Շրեն Շ աքոյ. ի գրելն վասն գաւթի աղուանից կաթուղիկոսի ի Թ. դարու. * Ա օրհնեաց զանօրէն

ամանաւորեին Ը աքոյ ՚ռն ‖ :

Ը ղէայ : Յիշէ՝ զսա լաստիվ. Ի. զոր և ցուցանէ լինել մեր՝ ի սալքորայ դիւղ բասէնոյ . * Յետ այսորիկ Թո- ղեալ Թագաւորին զբանակեալ ԻՋալանն ՚ի սալքորայ , իսաղայ զօրքն յառաջ ՚ի տեղւոջ որ կոչի Ը ղէայ ‖ :

Ղէն , որ կոչի ևս Ը ռէայ : Յիշատակի ՚ի ղազարայ Թղթ . 395 . * Լրթեալ Նախգէղը զինացեալ մնան ՚ի դի- շերոյն Ա՝ղէն գեղջն՝ զոր Ը տեայ անուանեն՝ ՚ի դամ տեղեացն , մինչև յառաւօտուն ծագել , և ՚ի ծագել լու- սոյն՝ երթեալ բնակեր ՚ի գիւղն Ը տեայ ‖ : Կարգ պատ- մութիւն զնոսազան յուցանէն լինել զՂղէն և զԸ տեայ , բայց այսպէս պարտ է զգուշութիւք խմնալ , որպէս՝ զի վահան զինացեալ մնան գիշերոյն հանդեաւ ուր ՚ի Ա՝ղէն , այլ ՚ի գոմն որ էին առ Ա՝ղէն կամ Ը տեայ գեղջն . ա- պա ՚ի ծագել լուսոյն՝ եմուտ ՚ի նոյն խոկ ՚ի գիւղն Ա՝ղէն, որ և Ը տեայ : Ա՝ՀրձՀ ցուցանէ լինել ՚ի հաշտեանս և յարշամՃիս՝ յորմէ՛ր գիւղն Ն՝րեզայ :

Ա՝ռՒ : Տեղին բնակութիւն տղայոյն արշակաւանի , զորս յետ աւերման քաղաքին մեծն Նեքսէս ըստ գրելոյ խորէն. ք . 27 : * Հրամայեաց կրել որթովք ՚ի գամ մի , և դար- մանս և մատակս նոցին կազդեալ , ոչք յետոյ Ա՝ստա- ցեալ (1) անուանեցան Ա՝րթք այնորիկ ազգաւ ‖ : Ո գա- ւառ տեղւոյն ձգին յիշատակէ , և Թէոդոս էր ՚ի նոյն սահմանս արշակաւանի :

